2004

24
Զ:85
957-ԱՀ

# ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ

# ՍՐԲԱԶԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ժողովեալ ի Գրոց Աստուածայնոց՝ և ի լուսաւոր բանից Սուրբ Վարդապետաց:

Աշխատասիրութեամբ Նոր Ջուղայու Սուրբ Ամենափրկչի գերահռչակ վանից միաբան՝ Յովհաննէս մեծիմաստ քաջ հռետորի և բանիբուն Աստուածաբան Վարդապետի:

Ի փառս Աստուծոյ և ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ:

Ի Հայրապետութեան լուսակառոյց և Քրիստոսահիմն Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ Տն Եփրեմ Սրբազնակատար և Աստուածընտրեալ Կաթուղիկոսին ամ Հայոց:

Յամի կենարարին Տեառն 1812.

Եւ ի Թուին Հայոց 1261.

Արդեամբ և ծախիւք Պարոն Սարգիս Ծատուր Աղայվալէն կոչեցելոյ. և ի նորին իսկ նորահաստատ

ՏՊԱՐԱՆԻ
ՈՐ
Ի ՄԱԴՐԱՍ

3537- ԿՌ.Հ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴ...
Гос. Библ...
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3022-55

## Առ վերծանօղ Խօսքէնի ։

Սրբազան յոյժ երախտապարտ զանձինս մեր պարտիմք խոստովանիլ առ Սրբ Հարս մեր, որք 'ի դարս դարըս փայլեցան աշխարհի, և գրեթէ անթիւ ոճապատում մատենիւք իւրեանց ոչ միայն ուսուցանեն մեզ զճշմարիտ հաւատս, և զուղիղ վարս առաքինութեան, այլ և զուղիս քաղցրութեան հոգւոյն Սրբոյ մեզ արբուցանեն, և տան մեզ ճաշակել զբանն կենաց ։

Յորոց միջի և ոչ նուազ տեսանի յիմաստութեան մատեանս անուանեալ Ճաշակեցէք, զոր շարագրեալ է ջուղայեցի գերիմաստ Յովհաննէս Վարդապետն Յամի փրկչին 1696 ։ Եւ այս մատենիս պատուականութեան անուանն միայն դեգերէր առ մեզ առ ժամանակ մի, մինչև տեսչութեամբն Ս. Յ յաներևութից իմն տեսաւ առ մեզ Յամի փրկչին 1788 ։ Եւ փոյթ մեծ էր առ մեզ 'ի լոյս ընծայել զայս պատուական մատեան տպագրութեամբ ։ Եւ որովհետև Ազնուազարմ Պարոն Սարգիս Օտտուրն Աղավալեան զնորոգ տպարան յօրինել տուեալ էր 'ի քաղաքիս Յամի փրկչին 1809 ։ և ցանկայր խիկ ընդ յօժարութեան սրտի, հանդերձ ծախիւք իւրովք, զի յիւրում տպարանի տպագրեսցին ընդ նորատիպ մատեանք առ 'ի հոգևոր վայելչութիւն ընդ հայկազեանս տոհմի ։ Նմին իրի և ես Տէր Յարութիւն Շմաւոնեան Աւագ Քահանայս եկեղեցւոյն հայոց որ 'ի Մադրաս, տեսեալ զամենաբարի փափաք սոյն Ազնուազարմ Պարոնիս, փութացայ յառաջ մատուցանել զսոյն մատեան առ 'ի լոյս ընծայել տպագրութեամբ ։

Եւ սոյն Ազնուազարմ Պարոնս ընդ յօժարական կամօք ընկալեալ փութովին ետ տպագրել զայս քաղցրաճաշակ մատեանս, որով յիրաւի կարեմք ասել թէ պատճառ եղև ըզ հարիւրամեայ կորուսեալ անուանն քաջիմաստ րաբունապետիս շարագրողի մատենիս, անդրէն յաշխարհ վերանորոգել,

որ

որ զվարձս իւր հաշտարարութեան ունի գտանել ՚ի փրկչէն մերմէ Յս̄է Քս̄է :

Զկնի համառօտիւ ծանուցանելոյ բարեսիրացդ զհանգամանս մատենիս, յոյժ կարեւոր համարիմ յիշատակել եւ զայս, թէ որք մտադիւրն ընթեռնուցուն զայս մատեանն՝ ունին գտանել ՚ի սմա զբազում հոգեւորական արգասիս, որք բաւականս լիցին՝ որոց կամք իցեն նկատել յեռանդն ա̄ծպաշտութե̄ն, որով կարող լինիցիմք հասանել երկնից արքայութե̄ն, որում արժանիս արասցէ ա̄ծ մեր Յս̄ Քս̄, որում՝ ը̄ հօր եւ ընդ Ս̄բյ հոգւոյն վայելէ փառք իշխանութի̄ եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս ամէն ։





Փառք ամենայն երրորդութեան հօրն անսկզբնականի. անեղի և անվախճան անզրի. գեր ա-
նի. պատճառ էին ինքնագոյի: Եւ որդւոյ նորին անժամանակելոյ. անհասի և անճառելոյ.
բանի էականի. նոյնագորի: Եւ հոգւոյն սրբոյ ան որոշելոյ մտնքենաւորի. փառակցի և
ցի եռահիւսեակ միութեան. և համապատիւ իշխանութեան. համանման և համահաւասար երր
նաւորութեան. պաշտելի և երկրպագելի մի աստուծոյ. այժմ և միշտ և անզրաւ յաւիտենիւ յաւիտե
Ա՛րդ՝ եղև գրաւ տպագրութեանց մատենիս: Թւին հայոց ՌՃԾԷ. 'ի յնորհազարդ Հայրապետ
կաթուղիկոսութե՛ն տր աթոռոյն Էջմիածնայ տմ հայոց տն: Աղէքսանդրի Ջուղայեցւոյ
նախս հնոյ ապեցեալ. լուսաւորեալ հոգի Ոսկան վարդապետի. յոր և նման. ոչ ասել և
սա կայն մանրգիրով: 'Ի տպարանս ազգականի նորին Ոսկանի վարդապետի Լուկինեցւոյ
'Ի մայրաքաղաքն Ստամպօլ. ղալաթիայ. 'ի թաղն պէկօղլի կոչեցեալ:



ՆՄԱՆ ԽՄԿԱՊԵՍ ՁԵՒ ԹՂ ՓՈՐԱԳՐՈՒ
ՏՈՒԺԻՐ ՄԱՂԱԼԱԿԵՆ ՍԱՐԳԻՍ ԾԱՏՐԻ
1809.




Գլուխ Ա։

# ԵՐՋԱՆԻԿՆ 'Ի ՋՈԿԱ, ԵՒ

'ի կամաւս մարգարէիցն, և առն աստուծոյ ըստ սրտի յեսսածինն դաւիթ՝ գրջէ, աւետարանելով որդոց նորոյ ուխտին, 'ի հրաւիրումն ճաշակման սուրբ խորհրդոյն, թէ ճաշակեցէք և տեսէք. զի քաղցր տէր։

Ամենայն որ ինչ էնն, ըստ բնութեան շարժին. և թարց բնութեան ոչինչ շարժի։ Ոչ ևս կարէ փայս կարող ումեք, ...ով բնութեին ճանաչել՝ քանզի նախուստ ևս բնութեան ճանաչ...ումն և խմայութեան՝ որոց ընկերքն և վաղճանն նկատելով, ...ութեան խմաստասիրեմք՝ ըստ ա... խոստանելի. բնութեանն է ...կերքն շարժման, և դադարման։ Յաղագս այնորիկ շար...ումն եղաւ՝ յոմ կասկս. ճանաչման բնութեան ընկերքն։ Ոչ ...ծութեանքն մինչև յետինն էութեան շարժմանս ևս կան ...ճանաչի, որպէսև տեսանել յանշունչս՝ 'ի տարերս ...

վաւ իմաստասիրին: Օդ մէմ և կամ ջուր շարժեալք, ան-
դուլ քեն. մինչև 'ի հասանել ուրեք: վասն զի մէմ 'ի բաղ-
ձանս ձգեալ՝ անհանգիստ, մինչ ոչէ հասեալ ուրեքն. նոյն-
պէս և ջուրք. բռնութեամբ 'ի վեր հանեալ: Այնպէս եւ խառ-
նալ օդ՝ և հուր, յորոց մինն եթէ շարժեսցի հակառակ
օրէն, անդուլ է՝ որպէս օդ՝ բռնութեամբ ածեալ 'ի խորս
ծովուն ստէպ՝ և կամ այլինչ նոյնպիսեաց, անհանգիստ է:
Իսկ հուր և լոյս ձիրագին՝ ցանկ և միշտ 'ի վեր ընթանալ,
ուրէ բոլոր կայանն: Օդ հրայինն երկին՝ թեպէտ ոչ սե-
ամնի, սակայն 'ի վեր ընթացմամբ սորին խմանի: Նոյնպէս
եկապուտակն երկին, որ կոչի երկինք երկնից՝ յոր ոչինչ
գոյ 'ի նմա՝ այլ է՝ ամենեին չէնդ՝ վճիռ՝ և պարզ. և ունի
շարժումն արագագոյն յարևելից յարևմուտս. և 'ի բաւն և
չորս ժամ կատարէ զընթացս իւր: Իսկ երկրորդն, երկինն
որ կոչի աստղալից, յորում հաստատեալք կենդանակերպքն,
որ ունի շարժումն յարևմտից յարևելս, այլ զիէ 'ի ծոց
կապուտակին, և 'ի նմանէ պարագրեալ՝ 'ի բռնութենէ
նորին քարշեալ լինի, յարևելից յարևմուտս: Նոյնպէս և
ընդ նմին եօթնեակքն մոլորակք, 'ի բռնութենէ նորին
շարժեալք. յարևելից յարևմուտս ընթանան: Այսպէս ամ-
ենչ. ըստ բնութեան շարժեալ՝ ընթանան զհետ հանգըս-
տեան իւրեանց, եթէ բռնութիւն շարժեալքն՝ և եթէ
ըստ բնութեան: Իսկ յորժամ շարժեսցին, առորեն
հաստատեալք՝ սոյա առնուն զդադարումն, և զկայ: Օդ
այսորիկ ամենեքեան, 'ի ծառայութեան կարգեալքն, և
կատարեն անդուլ շարժմունք զընթացս իւրեանց՝ մինչ 'ի
կատարած փոխմանի. և ապա ազատեալք 'ի ծառայութենէ,
իւրաքանչիւր յազատութիւն մտան, ըստ առաքելոյ: Իսկ
այսպէս յորս և հոգիք յեալս, անդադար զգործս բնութեն
իւրեանց կատարեն, և շարժմամբն իւրեանց ձանձրացեալ
լինին, և գրեթէ յանձն ութեանն մինչև յերևսն բաւեցն ունան՝
և յեռութիւնս որէ մարդկն՝ քանզի և ... թին. ևս ըստ
բնութեան շարժելոյ, հոգ յոգնութիւնս լինին և անցանելոյն:

Իսկ

Նա որդւոյ՝ լուսաւորելոյն. և ծնանելոյն. որպէս բան ՚ի մը-
տաց, անախտաբար: Նա հոգւոյ բղխմանն՝ և ելմանն, որպէս
յանձնէ խորհուրդ՝ ոչ հայր և ծնող նախկին՝ քան զծնեալն,
և բղխեալն՝ այլ համանգամայն՝ որպէս միտք, քանզի անկա-
րելի է մերոց մտաց. Թարց բանի՝ և անդրադարձապէս՝ և
հրոյ առանց ջերմութեան. և շուշանի առանց հոտոյ: Այսպէս
անհնարելի է մտաց Թարց խորհրդոյ, և մարդոյ Թարց կեն-
դանութեան՝ և արեգական. Թարց ջերմութեան, և շուշանի,
առանց գունոյ: Նա այսպէս խնամատարի, շարժումն ամ-
ենայնուրեք երրորդութեան՝ համանգամայն երրեակ. Թարց
նախկնութեան և հուսկութեան, միայնուն ըստ էութեան՝ և զա-
նազանն անձնաւորութեան. և միոյն սոցայն, դարձեալ յայլոցն
շարժումն շարժեալ անփոփոխաբար՝ կատարեալ անձն-
աւորութիւն՝ և համագոյ էութիւն՝ հար զգլխութիւն
նոր ըստեղծապէս՝ յանձն երանուհւոյ կուսէ. և միաւորեաց
ընդ անստեղծ աստուածայնոյ էութեան, զստեղծեալն իւր՝ և
եղև նոյն կատարեալն Ած մարդ կատարեալ՝ անշփոթապէս:
որ հոգի մարդոյ՝ ընդ մարմնոյ մարդոյ միաւորեալ՝ որ բան
ընդ դրոյ, որ հուր ընդ ոսկւոյ, որ հոտ շուշանի, և լոյս
արեգական՝ ընդ օդոյ միաւորեալ, անայլայլապէս, և ան-
փոփոխաբարս: Որ որպէս բնութիւնն բանին կարող գոլ
մարմնոյ, և այլոյն անկարելի, այսպէս բանին Այ միայն էր
կարելի մարմնանալ՝ և այլոյն անկարելի: որ միտք մարդոյ,
և բանն է տեսանելի, միոյն անկարելի. և միւսոյն կարելի:
Վասն այնորիկ որ կարելի էր, եղև և կատարեցաւ:

## Գլուխ Բ։

### Ցուցանէ թէ՝ բանն միայն մարմնացաւ։

Զի յերրորդաց բանն միայն մարմնացաւ՝ թանձրացաւ, և շօշափեցաւ՝ զի ըստ բանից մերոց է իմաստասիրե-լի՝ մինչ ոչ է արտադրեալ ՚ի ծնողէ մտաց՝ է անտեսանելի, ան-շօշափելի, անիմանալի, և անլսելի. այլ յորժամ արտա-բերի, լինի միայն իմանալի, անիմանալին՝ իսկ յորժամ գրի, լինի տեսանելի, շօշափելի. և ընթեռնելի։ Այսպէս և բանն ԱԾ մինչ էրն ՚ի միտս և ՚ի ծոց Հօր՝ որպէս բանն ՚ի միտս էր անտեսանելի, անշօշափելի, անիմանալի, և անլսելի։ Այլ յորժամ ծանուցաւ մարգարէիցն՝ անիմանալին եղև իմանալի, զի իմացան որ գոյ բան համագոյական՝ որպէս բանականութիւն մարդոյ՝ յորժամ բանիւ վարի։ Եւ յոր-ժամ թանձրացեալ մարմնացաւ յարգանդի յաւէտ երա-նուհւոյ կուսին՝ ոչ փոխադրութեամբ յայնմանէ որ էրն յայլ՝ այլ որպէս էր նա։ ոչ թողեալ զայն զոր ունէրն՝ այլ եւա-զորս ոչ ունէրն, ոչ թողեալ զստեղծչութիւն՝ զանմար-մին զանձութիւն՝ և համագոյ բնութիւն՝ որ ընդ Հօր և Սբ Հոգւոյն՝ և զայնոսիկ զորս բացատրեցաք՝ և կամ եղև փո-խադրապէս ըստեղծուած միայն, և մարդ միայն։ այլ առ-մամբն զայս՝ զայն ոչ եթող զորս ունէր՝ այլ որպէս նոյնա-կատարեալ՝ և առմամբն այսու, եղև կատարեալ։ ուր բանս այս՝ թէ մարդն է կենդանի՝ որ է մի նախադասութիւն. և բան, որ ՚ի մտաց ելեալ՝ որ թէպէտ ՚ի մտաց ելեալ, և իմացեալ և գրեալ, սակայն ոչ փոփոխեալ ՚ի բնութենէն. այլ նոյն իմացումն է ՚ի միտս, և ՚ի գրին. այսպէս և բանն ԱԾ՝ և վասնորոյ ասացաւ ԱԾն կատարեալ, մարդ կատարեալ, առանց փոփոխման՝ մի որդի, մի Տէր, և մի ՅՍ ՔՍ։ Զի նոյն բանն ծնեալ ՚ի Հօրէ՝ անմարմնաբար՝ ըստ բնութեան Հօր. նոյնն եղև ծնեալ ՚ի կուսէ. ըստ բնութեան կուսին։

ԱՅ

Ով մերս բան՝ ծնեալ 'ի մտաց ըստ նմին է անմարմին՝ և նոյնն ծնեալ 'ի գրչէ է մարմին՝ զի և գրեցն ըստ միոյն անմարմին, և ըստ միւսոյն մարմին՝ ըստ միոյն հաւասար ընդ Աստուածութեան՝ և ըստ միւսոյն հաւասար՝ ընդ մարդկութեան՝ որպէս մերս բանն՝ հաւասարէ ընդ մտացն ըստ անմարմնութեան. և նոյնն ընդ գրչոյն, հաւասարէ ըստ թանձրութեան՝ և երրորդին խորութեան: Եւ այսպէս բանն Աստուծոյ մարմնացեալ միացեալ նոյնութեան. եղև կատարեալ 'ի բանականութեան: Եւ նոյնն որ յանչափութեան եղև կատարեալ 'ի չափաւորութեան: Եւ այսպէս՝ սոսկ միայն անկաւորեցաւ երկրորդն շարժութիւն, և երիցագն ոչ: Զի թէ Հայր անկանիւր 'ի Հայրութենէն, և լինիւր երկու ծնեալ՝ և ծնողութին տարաբաժանեալ: և երկրորդ որպէս անկարելի է մերոցս մտաց՝ որ ծնողէ բանիս մերոյ. ծնեալ լինել, և կամ գրեցեալ լինել՝ այսպէս և Աստուածութին անկարելի էր թէ ծնօղն ծնեալ լինիւր՝ որ միշտն ծնող: Երրորդ՝ որպէս անկարելի է մերոցս մտաց թէ տեսանիցի՝ և կամ թէ երրակի խորութիւն գծագրիցի՝ և թանձրացեալ տեսանիցի և շօշափելով ըմբռնիցի, այլ ծնիցելոյն 'ի նմանէ բանին, զայս ամենայն մարթասցի. նոյնպէս Ճանաչելի է և Աստուածութին: Չորրորդ՝ որպէս մերս միտք, որ ծնողէ բանին՝ նովաւ իմացմամբ և իւր՝ մտօք տեսանի՝ այսպէս և Աստուածութիւնն իմանալի է, ըստ Տեառն ձայնի. որ ետես զիս՝ ետես զՀայր: Զի թէ և հօրն լինիւր դարձեալ երկու ծնեալ, և բղխումն որ է խորհուրդ՝ տարաբաժանեալ: զի որպէս մերս անկարելի է խորհրդոյն լինել բան, և անդրադարձապէս, և մտացն լինել բան՝ և խորհուրդ. և անդրադարձապէս: Նոյնպէս և յԱստուածութիւնն տեսանել, և սոսկ իմաստասիրել՝ փոխանակ որոյ որպէս ամ՝ շարժումն՝ նոյնպէս և այս՝, ըստ կարգի բնութեան ցուցաւ, և կատարեցաւ՝ և ոչ լուծմամբ և փոփոխմամբ՝ և այլայլմամբ: Նոյն որ ծնունդեր անդ՝ եղև և աստ՝ ոչ միայն Աստուածութիւն և էր, այլ և մարմնաւորութիւն և երկրորդութիւնն իսկ 'ի միում: քանզի և 'ի միում մարդկան. եւ

ծն

Մտ․ ծնեալ լինի, նոյն ինքն կատարեալ մարդկութեան․* ըստ ամենայնի
3․ 3․ իմ Հայր, և մայր։ Եւ այսպէս՝ նորա միայնոյ, մարթի երկու
մարմնով։ Եւ վասն այնորիկ երջանիկն 'ի դասս երջանկա-
Յօվ․ ցելոյն, ասաց․* բանն մարմին եղև։ Եւ ոչ նմա միայնոյ անկ
1․ 14․ և ընկան երկու մարմնով՝ թանձրանալ՝ և տեսանել, շօշափիլ,
և ըմբռնիլ, և ոչ միայն որ ծնողէ՝ ում 'ի մերս, և ոչ խոր-
հրդոյն որ բղխումնէ՝ ըստ կարգի բնութեան շարժեալ՝ կա-
տարեցաւ։ Նոյնպէս և երջանիկն բարբառեցաւ և խօսեցաւ
Կ-Բ․ թէ՝* տեսաք զնա, և ձեռք մեր շօշափեցին զբանն կենաց, և
1․ 2․ պատմեմք ձեզ զյաւիտենականն կենացն որէր առ Հայր, և
երևեցաւ մեզ՝ քանզի ըստ բնութենէ, յորժամ գիր տեսանի,
թարց բանի՝ ոչ տեսանի, այլ անքակ և անանջատաբէն ընդ
նմա միաւորեալ տեսանի, 'ի պատուութեան և յանարգութեան,
եթէ 'ի յարգութեան, և եթէ յանպատուութեան, նոյնպէս և յայլ՝
այսպէս և յամենայնն իմաստասիրի։ Եւ վասն այնորիկ ոչ
բարբառք՝ յորժամ այլ և այլ ասասցի անջատաբէն՝ այլ լի-
նումն իսկապէս մակբերի, թէ ըստ բնականին, և թէ ըստ
գրաւորականին, բանականին անկարելի է՝ թէ գիր թարց
բանի լիցի՝ և անմարմինն՝ անջատաբէն 'ի թանձրամարմնու-
թենէն իմաստասիրիցի՝ թէպէտ մարք անփոփոխութեան հաս-
տատեալ տեսանիցի, որ սա ոչէ 'ի նա փոխարկեալ, և ոչ նա
'ի սա՝ այլ՝ անկե․ մի և նոյն անփոփոխաբարպէս։ Եւ վասն
այնորիկ երջանիկն զբանն մարմին եղև ասաց, այսու զնոյ-
նութիւն ասաց և եցոյց յերկակաց բնութեանց միաւորութիւն,
ընդդէմ Նեստորիոսի, և առելովն բնակեցաւ, զմիութիւն և
տկարաց, և սխալումն տարաբարձեալց, որ զփոփոխումն և
այլայլումն ասացն, 'ի միաւորութիւն անձնաւորելի՝ յորոց յեր-
կակոյն խոյս տուեալ խորու զիմեք և քարոզ՝ խոստովանի
եկեղեցին ՔՆ միութիւն անշփոթելի։ Որ և մարգարէն եւս
զնոյնութիւն 'ի բնութեանց միաւորութիւն եցոյց ասելովն լի-
սոն ոյ լեառն մածեալ, նոյնպէս և զանփոփոխութիւն, լի-
սոն ընդ որ հաճեցաւ ինձ բնակել 'ի նմա․ զի որ բնակիցէ
'ի նմա խաղաղ՝։ Եւ այսպէս ըստ բնականին, յամենեցունց
իմ

խնամատարին, 'ի միաւորութիւն նոյնութեան՝ և զանխառ-
նութեան: Նոյնպէս զի անբաժ միաւորութեամբ և անանջատաբար՝
և այլ և այլ բառ ձայնի կերպի, զի անփոփոխելին, և անշփոթ՝
զի անճառելին. սա նա, և նա սա լինել, փոխադրութեամբ անց
հոգւոյ մարդոյ ընդ մարմնոյն՝ և հուր ընդ ոսկւոյ, և լոյս ընդ
օդոյ՝ և հոտ ընդ շուշանի, քաղցր, և կամ՝ որպէս, ընդ գոյա-
ցութեան, գոյն ընդ վարդի, շող ընդ գեղեցկութեան. կէտ ընդ գծի,
գիծ ընդ մակերևութի, մակերևոյթ ընդ մարմնոյ, որ միա-
բանեալ՝ անխառնապէս խմանի և ձայնաչի: Զի անց փոխա-
նակութիւն անճառելի՝ նոյնութիւն և թարց միմեանց սեռանեցն
անհնարին: Այսպէս զի այնքան միաւորութեամբ՝ որ ինչ ասի
անա ըստ * Ածաբանից՝ ասի նմա՝ և անբաժանաբար՝ ոչ *Ալէք․
փոխադրապէս, այլ միաւորապէս, ըստ Տեառն ձայնի․ * ոչ որ ել * Յոհ․
յերկինս՝ եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ, որ էն 3․ 13․
յերկինս: Զի որդին մարդոյ ոչէր յերկինս, ըստ հաւատոյ
նախ քան զմարմնանալն, և ոչ յերկնից էջ՝ այլ 'ի կուսէն
ընկալանաւորեալ ծնաւ․ ըստ երանելոյն գորգրիալի: Եւ
վասն անհաս միաւորութեան բանին՝ իջանելն յերկնից
մարմնոյն համարեցաւ Տեառն: Որպէս և զօրաձեւալ ասացի, * այսէ * Ղուկ․
հացն իջեալ յերկնից․ և եթէ հացն զոր ես տաց մարմին իմ է: 1․ 13․
Արդ՝ եթէ սոյնպէս խնացի մարմին կենդանարարին յերկնից
իջեալ․ կարի և յոյժ սխալումն լինի, և բաժանումն ամ՝ գրի-
ցելոց: Այլ թէ յաղագս միաւորութեան ասացի․ կարի
ուղղակի խմաստաւորիցի: * Զի և երանելոյն կիւրղոս, այս- *Պրոկ․
պէս խմաստասիրեաց ասելովն՝ եթէ որ ասացի զՏր մեր
Յս Քս նախքան զլինելն աշխարհի․ ոչ միայնէ ճշմար-
տութեան: Եւ առաքինութեանց յաւաղեաց ձեռն ասէ,
ուսանելի մարմնի՝ որէ ըստ էութեան մարդոյն․ և որք զայսո-
ւին, ոչ անզգուշացան որք բարբառեցանն՝ այլ ըստ Տն խ-
րեանց խոստովանեցան, և հաստատեցան թէ՝ յաղագս անբաժ,
և անբաժանելի միաւորութեան զայսոսիկ բարբառեցան:
Եւ ես միաւորութիւն այս, ընդդէմ երրորդութեան սեռանի,
և խմաստասիրի: * անդ երրեակ անձն, և մի բնութիւն, և *Աթա․

աստ

աստ միանձն. և երրեակ բնութեն միաւորութի ։ և այս-
պիսի երրակացս միաւորութի՝ մի որդի, մի Քս, և մի Տր
տեսանի, ՚ի հօրէ ծնեալ ըստ Այծութեն՝ Այ կատարեալ
և ՚ի մօրէ նոյն ծնունդն՝ ծնեալ ըստ մարդկութեն. մարդ
* Յոհ. կատարեալ։ և երկակաց ծննդեան * միածին ասացեալ,
Ա. 18. յաղագս միորդիութեն Այ և կուսին՝ և յայտնութի միոյ
բնութեն Այ. և մարդկութեն։ Ոչ ըստ երկակի ծննդեանցն,
ոչ ասի երկածին, ճշմարտ և հ. այլ միածին։ այսպէս և
որդւոյն Այ՝ և որդւոյ մարդոյ, ոչ ասի երկակի որդի՝
սոյնպէս և բնութին, յորժամ խոստովանիցի երկոքումբքն,
ոչ ես դադարեալ երկուս բնութիս բացերևոյթի, այլ ըստ
երկոքումբքն միածին, նոյնպէս երկոքումբքն մի որդի՝ և
մի բնութի՝ անշփոթապէս ճանաչի, և դաւանի ։

******************************

## Գլուխ Գ ։

Յաղագս թէ ոնց կարէ ասել՝ երրեակ բնութիւնս. այսինքն
Մարմնոյն, Հոգւոյն, և Աստուածոյն ։

Եւ ես ըստ անձն մարդոյ, ենթակայանայ երկուց բնու-
թեանց միաւորեալոյ, այսինքն՝ հոգւոյն, և մարմնոյն՝
այսպէս կարելի երևի խոստովանել, և ասել ՚ի Քս անձն
բանին, ենթակայացեալ երկուց բնութեանցն միաւորեցելոց՝
* Պրդղ. այսինքն՝ Այ, մարմնոյն, և հոգւոյն, ըստ ձայնին կիւրղի, *
քանզի անձնէ որ գործէ. և բնութիւնէ որով գործէ, քանզի
անկարելի է թէ անձն այն գործեսցէ ինչ՝ առանց բնու-
թեան՝ նոյնպէս և բնութիւն գործեսցէ. թարց անձին ։ վասն
այնորիկ անձն ենթակայանալ պարտի մարմնոյ և հոգւոյ
մարդոյ, զոր ինչ և գործիցէ, սմա և նմա ներերևեսցի՝ զի
մի խառն և խուռն և փնդորեալ և շփոթել երևիցի,
այլ յատկապար՝ որ ինչ խոկումն է, և զննութի մակացու-
թեանց, և յիմանալեաց գիտութի, և յանխմնալոյն ձա-
նա

նաչափումն՝ և ընդհանրականաց լուսոյն հարկանումն՝ և տա-
ցոյցն բացայայտութի, և զայլս նմանս սոցին՝ որ վերաբերի
՚ի հոգին, և քաղցնուլն, և ծարաւիլն, փափաքիլն, ննջիլն,
և յառնելն, և զայլս որ զ յառաջութիւ մարմնոյն ցուցանէ,
՚ի միոյ յանձնէ՝ և ՚ի բնութենէ մարդոյ. երևեալ ցուցանի:
Այսպէս՝ և ՚ի Ք͞ս խոստովանի՝ որ անձն ա͞ծային են-
թակայացեալ անասնի, երրակայն բնութեանց՝ միացելոյն
և միաւորեցելոյն՝ է ա͞մ գործ՝ ՚ի նա վերաբերեալ անու-
նեցի՝ եթէ Ա͞ծայնոյն, եթէ մարմնոյն՝ և եթէ հոգւոյն. և
ա͞մ ընդունի Ա͞ծառոցի՝ և Ա͞յ: Եւ թէպէտ քաղցնուլն, և
ծարաւիլն, փափաքիլն, և քրտնիլն, չարչարիլն, խաչիլն,
մեռանիլն, թաղիլն, մարմնոյնէ գործ՝ և կիրք. ոչ մարմնոյն
ասեն սասան՝ Ա͞ծարանքն եկեղեցւոյ, այլ Ա͞յ՝ որբեալքն
՚ի հոգւոյն: ով ասեն անձն նորա ՚ի մահ փարեցաւ, և թէ
մեռաւ անձն նորա, և թէ անձն նորա ոչ ետես զապակա-
նութի՝ և թէ մերձեցաւ անձն իմ՝ ՚ի հող՝ և զայլս սոյն-
պիսիս, որ ա͞մ մարմնոյնէ գործ՝ այլ յաղագս անձնաւ մի-
աւորութեն անձին, Ա͞յ ասի: քանզի մեր անձն Ք͞սի, և
այն Ա͞ծային՝ և թէ *մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ * Հռմ.
Ա͞յ. մահուամբ որդւոյ նորա: Եւ թէ Ա͞ծ որ յիւր որդին ոչ 5. 10.
խնայեաց, այլ վ͞ն մեր ամենեցուն մատնեաց: և զանքիթ
ասաց յարեան * ա͞ծ. զի յարուն մեռելոյն: և Ա͞ծարանն ասէ, * Սղմ.
Ա͞յ չարչարեցելոց, ընդդէմ մեղաց, և կիւրղոս ասէ, *յու- 67. 2.
ժամ լսէն զմարմն Ա͞յ, և զ չարչարանսն՝ ծիծաղին թշու- * Պրղ.
առականքն: և այլս բաղումենք այսպիսիք, յորոց զտական
ածաւ՝ որ մարմնոյն և բնութե նորին է բաղերեւութի,
բայց ա͞մ Ա͞յ ասացաւ. զի Ա͞ծային էր անձն: Նոյնպէս և
որ ինչ Ա͞յէ գործ, դարձեալ ՚ի նոյն էնթակայ յանձն
Ա͞ծային վերաբերի՝ զընալն ՚ի վ͞ր ջրոյն, և ձեռին ՚ի վ͞ր
ծովուն, մեռելոցն յարութի, կուրացն տեսութի, և խլիցն
լսողութի, և այլ ա͞մ բուժումն ախտակրութե. ըստ այսմ
թէ զուես որդի Ա͞յ, և թէ արդարև որդի Ա͞յես դու՝ և
թէ արդարև որդի Ա͞յէր դա: և ա͞մ այսպիսիք գործք՝

որ

որ Այ էր, և յանձն Այ վերաբերիւր, և ասի: Այնպէս և
գործք հոգւոյն, դարձեալ ՚ի նոյն յանձն վերաբերեալ սե-
փականի, և ասի՛ ոմ երկնչիլն, և յերկուղէ հատուածս քրտանց հե-
* Ղկ. ղեալ երկիր՝ *ոլոռն՛ ոլոռն, խնամատածութեամբն շնորհին Այ
2. 52. և ՚ի մարդկանէ: Խոկալն, տրտմիլն, հոգալն, ըստ այնմ՝
* Ղկ. *տրտում է անձն իմ մինչև ՚ի մահ: տագնապիլն, աղօթելն,
22. 43. ըստ այնմ՝ մտադիւրութեամբ կայր յաղօթս, և երևեցաւ
նմա հրեշտակ յերկնից, և զօրացուցանէր զնա, և էր ՚ի
տագնապի, և այլ ինչ որ սոյին նմանեն, հոգւոյն բանա-
կանին է գործ. բայց յանձն Ածային վերաբերի և ասի՝ և
տեսանի, ոչ զի այլ և այլ խոստովանիցի, այլ զհաստատութիւն
ցուցցի և երևեսցի, որք ոչէն փոփոխեալք և շփոթեալք,
երրեակ միաւորեալքն, այլ յատկութիւք ճանաչեալք, ՚ի
նոյնութեան անձինն, և ՚ի միակերպի բնութեան, երրակա-
գործով, զերրակաց միացելոց. յատկութիւ ցուցանելով. և
ամ Այ ասելով: զմիակերպութիւն անձինն յայտ առնելով՝
մի որոյ զոր ինչ գործ, և գործեալ լինիր, թէ յատկաց-
եալքն, և թէ միոյն, ամ անձն Ածայինէր որ գործէր,
յաղագս այնորիկ ամ Ածային ասի, և խոստովանի՝ թէ
* Սղմ. Ած գնայր ՚ի մէջ ջրոց, ըստ այնմ թէ՝ *՚ի ծովու են ճանապա-
7. 20. րհք քո, շաւիղք քո ՚ի ջուրս բազումս. և հետք քո ոչ
* Սղմ. երևին: Նոյնպէս և ՚ի մէջ յօդոյ չուելն, ըստ այնմ՝ *ո՞ դնէ
30. 3. յամպս զգնացս իւր՝ և շրջի նա ՚ի մէջ թևոց հողմոց: Այն-
* Եսայ. պէս և մարմնականն՝ ոմ ասէ՝ *անձն նր ՚ի մահ վարեցաւ,
52. 8. զի մարմինն մեռաւ՝ և մեռելութիւն, նմա է անկ և վայե-
լուչ՝ այլ զի մա անձն Ածայինէր որ գործէր, նմա միայն
* Մտ. ոյ ասի մեռանիլն: Այնպէս և հոգւոյն, ոմ ասէ՝ *տրտում է
26. 38. անձն իմ, և թէ՝ *անձն իմ խռովեալ է, զի տրտմիլն և խռո-
* Մրկ. վիլն, իւրպէս հոգւոյն բանականինէ գործ՝ այլ մէ ան-
14. 34. ձնական միաւորութեան բնութեանց երրակայն՝ և յաղագս
միոյ միայնոյ ենթակայի անձին ամ գործ Այ ասի, և
խոստովանի հոգեկրացն: և երրակաց միաւորեցելոց բնու-
թեանցն. մի խոստովանեալ բնութեան զամ կրէր. ըստ հարցն

աս-

աւանդութեանց. որ 'ի նիկիայն մի բնութիւն ասացաւ, և կրկնեցաւ թէ՝ մի է բնութիւն բանին մարմնացելոյ: և երանելին Ա̃թանաս ասաց՝ ոչ երկուս բնութիւնս զմի որդին՝ մինն երկրպագելի և միւսն աներկրպագելի, այլ մի բնութիւն, և երկրպագելի հանդերձ մարմնովն իւրով, միով երկրպագութեամբ: Եւ 'ի Սբ̃ ժողովին ասացաւ. 'ի Սրբոյն Կիւրղի* անճառելի, և անպատմելի միաւորութեամբն. մի եղ- * Պըղգ.
ուց զորդւոյ բնութիւնն. քանզի ոչ եթէ 'ի մէջ պարզիցն լոտ բնութեան՝ մինն ասի ճշմարտապէս, այլ 'ի մէջ այնոցիկ որք 'ի շարադրութեանցն ժողովեալք: և դարձեալ ասէ՝ ասեն ոմանք որք ընդ ուղղափառութեան մարտնչին, եթէ մի բնութիւն բոլորին, ապա զի արդ մարմնացաւ: Տեսանեմս ահա բոլորն Ք̃ի՝ մի բնութիւն խոստովանին, որ է ուղղափառութիւն և ընդ մի բնութիւն խոստովանողացն. որքէն ուղղափառք: Նեստորականքն մարտնչին՝ որքէն չարափառք: որք զերկուս բնութիւնս խոստովանին՝ որ է մարտնչումն ուղղափառութեան: Եւ այլ ևս բազումքն վկայութիւնք՝ յԱ̃ծակրացն զորս ոչ ածի. զի մի ձանձրութիւն լսողացն թուեսցի: Եւ այսպէս անձն բանին Ա̃յ ենթակայացեալ յերրակաց՝ միաւորեցելոյն բնութեանց՝ ոչ բնութիւն Ա̃յ թարց մարմնոյն գործէր անձամբ բանին Ա̃յ ենթակայացելոյ, և ոչ մարմնոյն առանց Ա̃յ: Նոյնպէս և հոգւոյն բանականին է խմ– աստարիելի, այլ երկակոցն միացելովք՝ զամ՝ զգործս մի՝ անձն բանին Ա̃յ, մի բնութեամբն գործէր՝ զոր ինչ և գործէր՝ եթէ Ա̃ծայինն, եթէ մարմնայինն, և եթէ հոգւոյ բանականին՝ և այսու հաւատոյս կենայ և զարգանայ եկեղեցին Ք̃ի և փառաց նորա հաղորդի:

## Գլուխ Դ։

Ցուցանէ թէ՝ բանն որ մարմնացաւ՝ բնութեամբ Աստուածութեան մարմնացաւ, և յատկութեամբ իւրով:

Եւ դարձեալ՝ զայս ես խոստովանիմ, զի բանն որ մարմնացաւ՝ ոչ յատկութեամբ բնութեամբ ինչ մարմնացաւ, այլ հաւասար բնութեամբ երրորդութեանն. և ըստ հաստատութեան անձն բանին Նոյ մարմնացաւ: Զի թէպէտ բնութիւն երրորդութեանն հաւասարապէս և համապատուարար, այլ սակայն անձինքն զանազանեալք են՝ և յատկացեալք, և այսու ոչ հարկաւորի, եթէ զոր ինչ գործեաց մինն, զնոյն գործեաց և միւսն, քանզի առ. հայր վերաբերի, զծնողութիւն միայն՝ և ոչ զծնելութիւն, և յորդին վերաբերի, զծնելութիւն, և ոչ զծնողութիւն: Նոյնպէս՝ և հոգւոյն վերաբերի ըզբղխումն՝ և ոչ զծնելութիւն, և կամ ծնողութիւն՝ քանզի՝ այսուքիւք զանազանին. երրեակքն անձինք: Զի ամենք ընդ այս մարտնչին թէ՝ ոչ բնութիւն մի, երկրպագելի երրորդութեանն՝ պարտէ և զգործսն: Եւ այս յոյժ կարի անմար՝ և արհամարհելի՝ քանզի, որ ինչ բնական հասարակայ է ասանելի՝ ոչ մարդոյ է խոստովանելի: զի բնութիւն որէ ըստորոգելի, հասարակաց է ասանելի՝ ոչ կենդանի՝ բանական՝ որ նամենեսեան նոյնապէս՝ խոստովանելի. քանզի որ ինչ գոյացական ըստորոգութիւն է, նոյնն անկարծողական բնութիւն՝ և որ ինչ բնութիւն, նոյնն և սահման էնթակային՝ և որ ինչ այլապէս՝ կամ յատկացուցիչ ասանելին՝ ոչ ծիծաղականութիւն մարդոյ, և խնչականութիւն ձիոյ. և կամ յատկացուցիչ անձնականին. ոչ խաժակնութիւն և ժոռոտութիւն: Այսպէս կարելի է խոստովանիլ՝ և յաղագս ամենասուրբ երրորդութեանն՝ զի համագոյութիւն կարէ ՚ի տեղի բնութեան ասանել, և այս ըստ հասարակին, և հաւասարութեան երեակին: Իսկ հայրութիւն,

ծն

ծնելութիւն՝ և բղխումն՝ կարէ՛ ըստ անձինն առանձնիլ և ասել՝ ոչ թէ այլաբար՝ զի որքան այլայլին անձինքն, երկրպագելիք՝ որ առընչաբար իմաստասիրելի : Զի Հայր ոչէ որդի, և անդրադարձաբար՝ և Հոգի ոչէ Հայր, և որդի՝ և անդրադարձաբար՝ այլ հակադարձաբար առընչօրէն միմեամբք ասի, զի Հայր որդւոյ է Հայր՝ և հակադարձաբար՝ և բղխողն՝ բղխեցելոյն, և անդրադարձաբար՝ և վասն այնորիկ որ ինչ յատկութիւն որդւոյն, ոչ կարէ վերաբերիլ առ Հայրութիւն՝ վասն այնորիկ որ նոյնանէր ըստ բնութեան՝ ընդ Հօր և Հոգւոյն մարմնացաւ՝ և որոշնէր նոյն ընդ Հօր և Հոգւոյն, ըստ ծնելութեան և ըստ անձին. մարդ եղև կատարեալ: Եւ այսու ոչ հարկաւորի, և ոչ մարթելի թէ՝ Հայր և Հոգին՝ կարասցին մարմնանալ, թէպէտ հաւասար բնութեամբ ծանուցեալ: Այլ նոյնն որ անդէր ծնունդ՝ ըստ յատկութեան անձին՝ և աստ ևս առանձնաբար ծնեալն. և ՚ի կուսէ յամէն երանուհւոյ ծնաւ: Նոյնն հաւասար ընդ Հօր՝ և ընդ Հոգւոյն ըստ բնութեան՝ և նոյնն ոչ հաւասար ըստ ծնելութեան, և առանձնականութեան ըստ յառաջնոյն՝ հաւասարապէս ծնաւ ՚ի կուսէ, որէ ըստ բնութեան, և նոյնն ոչ հաւասարապէս ըստ անձին և ըստ ծնելութեան, զի բանն միայն ծնաւ երանուհւոյն. և ոչ Հայր և Հոգին: Զոր օրինակ երրեակ դաշնական ոսկի, որք բնութեամբն հաւասարք, և ըստ յատկութեան այլ և այլ՝ և մինն արկցի ՚ի հուր՝ զի հրայութիւն սորա միայն անսանի, և այլոցն ոչ: Եւ ահա ըստ համարակին, որ երրակայնէ, և ոչ ըստ համարակին, որ յատկականնէ, ՚ի սա անսանի և խմանի՝ մինն ըստ բնութեան, և միւսն ըստ յատկութեան, երկոքումբք զ սա անսանի : Այսպէս իմաստասիրելիէ՝ և յԱծութիւն՝ և վասն այսորիկ ոչ հարկաւորի, թէ Հայր և Հոգին՝ որ մինն բնութեամբ՝ ընդ բանին մարմնասցին, այլ որոյ յատկութիւնէր և կար՝ նա միայն մարմնացաւ՝ զի սորա միայնէր յատկութիւն ծնանիլ, ծնեալ՝ և ոչ այլոցն. և վասն այնորիկ և անկարելի: Զի ոչ անկարելիէ մասունս, որ ծնողէ բանին,

է

լինել բան, և բանին լինել միտք, նոյնպէս և մնայն անկարելի է լինել խորհուրդ, և խորհրդոյն բան: և յերրակացս միայն միոյն կարելի գրելն, և ոչ մնայն՝ և խորհրդոյն՝ այսպէս և յԱ̃ծութիւն, միոյն միայն անխառնորեցաւ և մարմնացաւ մարմնանալն, և երկուսայն ոչ. որպէս և նախնումն բացատրեցաւ: Իսկ այսու լուծանին տարակուսանք՝ որք ասացին թէ բնութիւն երրորդութեան միէր՝ պարտէ և գործն մի լինել՝ և 'ի քննութիւն որ ըստ բանականին, տնտեսականորեցաւ, որպէս և ոչ գործեցաւ, և եղեալ կատարեցաւ. քանզի որ ինչ ըստ կարգին պարտ և պատշաճ՝ առնէ Ա̃ծ, և կատարէ՝ և որոյն ոչ՝ որպէս և ոչ հակառականն համանգամայն ճշմարտել՝ զի անկարելի է ըստ բնութեան, իբրու թէ՝ ամն մարդ, համանգամայն արդարիցէ և անիրաւ, բարի, և չար, բանական, և անբան, զի անկարելի է և անհնարին: Այսպէս և յամենայնը երրորդութեանն իմաստասիրելի՝ որ 'ի մարմնանալ բանին՝ թէ հայր և հոգին. զնոյն գործէին: Այլ որ հաճութեան միայն վերաբերիւր գործ հօր, հաճեցաւ՝ և կամակցութի հոգւոյն, եղև և կատարեցաւ. որպէս և մեր է տեսանելի: Յորժամ բանն 'ի սրտի մերումն, յորժամ հաճի միտքն գրել՝ նոյնպէս և խորհուրդն՝ յորժամ կամիցի: Այսպէս եղև և յամենայնը երրորդութեան, հաճութեա հօր, և կամակցութեա Ս̃բ հոգւոյն, մարմնացաւ բանն՝ և երրակաց կատարեցելոց բնութեանց միաւորեցաւ. ընթակայացեալ անձն բանն: քանզի յերրակացս այսոցիկ. նախքան զմիաւորութիւն երկեալն ոչէին. և մինն էր. և գոյր: Իսկ որէրն. ըստ յեջանիլ յարգանդ երանուհւոյն. անձն բանին՝ նոյն ըստ էրծապործութեան որ 'ի նախնումն 'ի նիւթն. և նոյն որ ընդութեան՝ որ 'ի տեսակաւորութեանն 'ի նիւթոյն՝ որոց երրորդորարբչութեա և ասա եցոյց: Զի 'ի զանկուածոյն ազգաց և յարենէ կուսին. ամենասհէրոյ՝ իբրու 'ի նիւթոյ առեալ. կազմեալ մարմին՝ և համանգամայն ըստ էզծ երանական հոգի՝ և միաւորեաց՝ մինն արարեալն. և միւսն ըստ էզծ [illegible] և եղև մարդ կատարեալ, և անձնաւորապար միացեալ ընդ [illegible]ութեան

և.

և այսու եղև նմին կատարեալ՝ մարդ կատարեալ՝ յարգանդէ
երանուհւոյն, և այսու ծանուցաւ թէ նոյն ըստեղծօղ և ար-
արիչն է, որ 'ի նիւթոյն զտեսակն բաժանեաց։ Որ և աստ
երկրորդի շարժմանս որ 'ի մարդ եղանելն, իսկոյն յիջա-
նելն յարգանդ երանուհւոյն, արարչագործեաց զմարմինն,
այսու զարարչագործութիւն եցոյց, որ նոյն արարիչն էր գո-
յացուցիչ նիւթոյն, և այս տեսակաւորեալ՝ ըստեղծա-
գործութիւն։ քանզի համանգամայն ոչ անդ զնիւթն տե-
սակաւորեաց, և աստ ընդ նիւթոյ մարմնոյն ըստեղծաւ և
բանական հոգին, և տեսակաւորեցաւ բնութիւն Ածայինն,
և անձամբ բանին, քանզի ոչ մարդոյ տեսակաւորութիւն է,
բանական հոգին՝ նոյնպէս և Քրիստոսի բնութիւն՝ և անձն
Այ բանին։ ոչ մարդոյ նիւթէ մարմինն, նոյնպէս և Քրի
նիւթէ մարմինն, և բանական հոգին, և տեսակաւորութիւն
անձն բանին, և բնութիւն Ածայինն՝ և այսպէս եղև այր
կատարեալ, և Ած կատարեալ. պարապրեալ յարգանդի
կուսին։ և կատարումն մարդեղութեան. որ արար զնա ըստ
նիւթոյ մարմնոյն, և ըստացաւ զնա և ըստեղծ՝ ըստ հո- 2.32.6.
գւոյն, ոչ և ասայն * յուշ լիցին քեզ աւուրքն յաւիտենից, *2.Օրէ.
այսինքն՝ ոչ յիսկզբանն, էակից բանին հօր, որ զնիւթն 32.7.
ըստեղծ, և զտեսակն արար 'ի նիւթոյն, նոյն և նա է, որ
կատարեալ մարդկութեան մարմինն արար, և զհոգին ըստ-
եղծ, և պատրաստեաց երկու զնիւթ. 'ի տեսակաւորութիւն
Այ բանին։ Իսկ ընդ այս՝ ոչ հարկաւորեցաւ անձն մարդ-
կութեան՝ թէպէտ էր կատարեալ մարդ՝ քանզի և բանական
հոգին որ առ մարդն՝ թէպէտ ևս է կատարեալ՝ և է տե-
սակաւորութիւն նմին, սակայն ոչ ասի անձն, այլ առ ան-
ձն՝ զի ենթակայութիւն է անձն իսկ սա ոչէ ենթակայ, այլ
առ ենթակայն եղեալ, այսինքն 'ի մարդն, որ է կատարեալ
անձն, նոյնպէս և ոչ մարմինն կարէ առնել անձն, այլ առ
անձն, որ է ենթակայն, այսինքն մարդն, որ է ենթակայ-
ացեալ յերկեակն։ զի երկեանքս այսորիկ, վերաբերին 'ի
մարդն՝ և ոչ մարդն առանձ 'ի սոցանէ՝ զի կարէ առնել
հո

Հոգի մարդոյ, կամ՝ մարմին մարդոյ, և ոչ անդրադարձա-
բար. այսինքն մարդ հոգւոյն. և կամ՝ մարդ մարմնոյն։
Զի թէպէտ երկոււն բաղադրամասնքն, այլ ոչ երկու են-
թակայք. այսինքն անձինք՝ այլ մի ենթակայութի. որ է մարդն
և երկեան գոյացական բաղադրութիւնք. որպէս հոգի և մարմին։
Եւ սոյն երկակաց բնութեանց՝ որպէս բաղադրելոյ քն. ոչ հար-
կաւորեցաւ երկեան ենթակայից՝ այսպէս խմբաւորելէն և ի Քն՝
զի թէպէտ երկեակ քէն բաղադրեալ քնն, այսինքն Ածայինն
բնութի. հոգւոյն և մարմնոյն՝ սակայն միանձն ենթակա-
յացեալ։ Եւ վասն այնորիկ յուղղափառացն դաւանեալ լի-
նի միանձն յերկուց բնութեանց, միաւորելոյն ենթակայից՝
այսինքն՝ անձն բանին՝ Ածութեան՝ հոգւոյն. և մարմնոյն։
Եւ վասն այնորիկ ոչ խառնի և հարկաւորի, կատարեալ անձն
մարդկայինն՝ զի ունի կատարեալ անձն բանին ենթակայ՝
յորմէ բաղադրի բնութիւնն մարդկային։ Եւ հարկաւոր է
բաղադրելոցն ենթակայ զօղ բաղադրեալն բաղադրելո-
լոյն՝ զի միայն բանին կատարեալ ենթակայ մարդկութեան՝ հար-
կաւորէր նեստորիոսի ասել կատարեալ ենթակայ մարդկութե.
Սակայն զի էր կատարեալ մարդ, ապա թէ ունի անձն բանին, են-
թակայ լինելոյն, ապա հնա՛ ուղղորդս բարբանջի, երկեակ ան-
ձինս ասելով, և երկեակ բնութի։ Քանզի ոչ է անվայելուչ,
յերկուց բնութեանց միաւորելոց, մի ասել մարդ. և ան-
ձին և բնութի։ Այնպէս ոչ անմարթի, և ոչ անվայելուչ,
թէ երրակաց բնութեանց միաւորելոց մի Քն ասել՝ մի ան-
ձին՝ և մի բնութի։ Զի սոյն մարդն յերկակաց կատարելոց,
և միաւորելոց՝ մի բնութիւն անուանելի, սոյնպէս և Քն յե-
րրակաց կատարելոց միաւորութեանց՝ միանձն և միբնութի
* Գրգ. կատարելոյ՝ բաց որպէս կիւրղի * ասէ, ի՞նչ մարդն իցէ՝ ի հո-
գւոյ՝ և ի մարմնոյ, քանզի այլասեռականքն այսոքիկ և միմե-
անց ոչ համագոյք. սակայն միաւորեալ միբնութի մարդոյն
կատարելոյ։ Այսպէս՝ և միաւորութիւն Քնի, քանզի յայլասե-
ռակաց միաւորութեանց. միբնութի ցուցան։ Որ և դարձեալ
* Գրգ. ասէ, * որդ այսուհետև յորոց են մի՝ և միայն որդի, և տէր Յս

Քն

Քս, ըստ միաւորութեան ընկալեալք. յերկուց բնութեանց միաւո-
րեալ ասեմք: Իսկ յետ միաւորութեան անգէն 'ի բաց բար-
ձեցելոյ յերկուս հատուածմանն, մի գոլ հաւատամք զորդւոյ
բնութիւն՝ որպէս մին. սակայն որպէս մարմնացելոյ և մարդա-
ցելոյ: Զի որպէս յերկակաց յէութեան այսինքն յէութեան
էն, հոտոյն և գունոյն մի շուշան երևի՝ այսպէս և Քս
յերկակաց բնութեանց միաւորեալ, մի անձն, և մի բնութիւն,
և մի Քս ճանաչի: Զի որպէս արեգական, լուսոյ, և ջերմութեան,
մի ենթակայ, և մի բնութիւն է՝ այսպէս և Քս արեգական
արդարութեան, յերկակաց միաւորեցելոցն բնութեանցն, մի ան-
ձին, և մի բնութիւն, և մի Քս ճանաչի: Զի որպէս երրորդու-
թիւնն ըստ մի ածութեան և տէրութեան ճանաչի, այսպէս և Քս
երրորդութեան բնութեանցն 'ի միաւորութիւն եկելոցն, մի բը-
նութիւն, և մի Քս ճանաչի: Զի որպէս անդ. զանազանութեամբ ան-
ձանցն, մի բնութիւն, սոյնպէս և աստ յատկութեամբ բնութեանցն
'ի միաւորութիւն եկելոցն, մի բնութիւն ճանաչի: Զի որպէս անդ.
զանազանութեամբ անձանցն, բնութիւնն ոչ զանազանի, սոյն-
պէս և աստ միաւորութեամբ երկակացն, անշփոթաբար և ան-
այլայլաբար, ոչ անջատին, ոչ բաժանին, և ոչ զանազա-
նին, ըստ ձայնին կիւրղի, * որ ասէ կարծեցին և առ այ- * Դըզ.
սորիք և արիոսի հայհոյութեանցն հեռանալ, վասն այսորիկ ոչ
կամիլն զանազանութիւն տեսանել ձայնիւն՝ քանզի ուղղա-
փառ կիւրղեանքն, ոչ զանազանէին զձայնսն, զի մի և բը-
նութեանցն: Իսկ նեստորականքն կամեցան բարուրանս դնել
սրբոյն կիւրղի, թէ ասեմք զի՝ ահա զարիոսին խորհի, ոչ
զանազանելով զբնութիւն արարչին, և արարածոյն, այլ մի-
աւորելով, զարարիչն արարած ասէ, ըստ արիոսի, զի նա
երկոցունցն, այսինքն Այ բնութեան, և մարդկութեան բը-
նութեան արարած ասէր, և վասն այնորիկ ոչ զանազանէր, զի
ասէր թէ երկեանքն արարածք: Իսկ երանելին կիւր-
ղոս, վասն այնորիկ ոչ զանազանէր, զի զանազանութեան բաժա-
նումն հետևիւր, և անջատումն: Նա յաղագս այնորիկ
խորամանգքն, երկրպագանք զնա կամէին որպէս՝ զի թէ ոչ

զա

ԳԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ЗУУП-Арм.ССР
3022-55

զանազանեսցէ, որպիսական զնա հրապարակեսցեն: Իսկ թէ զանազանութիւն ունիցի, Նեստորի հաղորդեցուսցեն, և յերկոցունցն խոյս տուեալ զզանազանութիւն բանին, և համագոյ ընդ հօր ասէ, ըստեղծիչ և արարիչ: Եւ վեհա-նորին ասէ, ոչ Երբէք զարիոսին խորհեցայ, ասել, արդ զայս զնոյն նշանակել կամիցեալ, զի եթէ ուսոյց զմիու-թեանն զանազանութի, և անջատել զհայրն, նոյնպէս և բնութեանցն: Իսկ այսպիսի բանիցս ոչէն իմ, այլ 'ի նմանէ ասացան: վ͞ս զի Նեստորիոսէ, որ զզանազանութիւն. դա-ժանումն և զանձնաւորումն դնէ: ոչէ յինէն ասացեալ զայսո-սիկ. և խորհեցեալ, այլ 'ի Նեստորէ, որ կամի զզանազա-նութիւն հաստատել, և նովաւ զբաժանումն, և զանջա-տումն: քանզի հանձնորեղէր 'ի չարիսն, կամէր արուեստա-բանելով, զբարիսն իւր հաստատել՝ նախ զզանազանութիւն, և այնու հաստատէ զի ասէր որ ոչ փոխի և այլայլի, ունի զզանազանութի: այլ բնութիւն Բ՟ն ոչ փոփոխեցաւ, 'ի բնութիւն մարդկային, ուրեմն ունի զզանազանութի, և յորժամ այսու հաւանեցար, յայնժամ զառաջնութիւս փի-լիսոփայիցն, 'ի մէջ բերցէ: Թէ զինչէ զանազանութի, որ զսահմանն խնդրէ, որով զբաժանումն 'ի մէջ բերցէ: զի զա-նազանութիւն որ զյոլովից, և զտարբերութի ունիցաց, 'ի ներումն որպիսի ինչէն, ըստ սորփիւրի, զի զանազա-նութիւն որ զտեսակսն որոշէ, և յասմանէ 'ի միմեանց, զի մարդ զԱ՟ծ ոչ, 'ի մարդ և յԱ՟ծ, 'ի բնութի մարդոյ և Ա՟յ, և յորժամ այդ, յայնժամ զկոյսն Մ՟ր, մարդածին, և ոչ Ա՟ծածին: Որ զամ որ ինչ մարդոյն էր վայելուչ մարդոյն ասէր, և որ ինչ Ա՟յ, Ա՟յ: և զի ասէր թէ կատարեալ մարդ էր Ք՟ս, և կոյսն զկատարեալ մարդկութիւն ծնաւ, և այսու ուրանայր զԱ՟ծածնողութիւնն: Եւ վասն այսորիկ երանելին կիւրղոս, զգժնեայ օձիս այսորիկ, զգլուխն ար-գելու, ոչ մնանել 'ի ծակ եկեղեցւոյ, զի մի և բոլոր ան-դամքն: Օձի սովորութի է օձին, յորժամ զգլուխն մուծցէ, զբոլորն եւ մուծանէ: Եւ զլուխ էր սորա զզանազանութին, և

ոչին կենդրոս Ընդդիմացաւ, և ոչ եթող մնալ՝ զի մի և այլքն ։ Այլ. զայս միայն է դաւանելի՝ թէ բանն Ա.ծ թարց զանազանութեան, ծնաւ ՚ի կուսէ, և երրորդի բնութեան միաւորութեան, և միով անձամբ Ա.ծութիւն յղացեալ եղև յարգանդի կուսին, ծնաւ, նոյնն Ա.ծ կատարեալ, և մարդ կատարեալ, յերկրի շրջեալ, վաստակեալ քաղցեալ, և ծարաւեալ ; և եկեալ կամաւ ՚ի չարչարանս՝ խաչեալ մեռեալ, թաղեալ, յարուցեալ, և նստեալ ընդ աջմէ Հօր, և նոյն ինքն գալոց է, ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս, և այսպիսի միացմամբ, և միաւորութեամբ, զերկեան էակքն ըստեղծեալք, ընդ ըստեղծողին միաւորութեամբ Ա.ծացան ։

## Գլուխ Ե ։

Ցուցանէ թէ կատարեալ մարդկութիւնն Ա.ծոյն, ոչ փոփոխմամբ, այլ միաւորութեամբ ։

Զի բնութիւն ստորոգեալն յորժամ մարդոյ ասասցի նոյնպէս ասի, և ոչ այլպէս, զոր օրինակ յորժամ մարդոյ ասասցի, կենդանի, բանական, յորոց մինն սեռական · և միւսն տարբերական, և երկեանքն տարբերական, և գոյացական · ոչ այլեւ յենթակայսն, յորմէ ստորոգին · այլ նոյն ։ Որպէս իմաստասիրեցին, և բնաւ ամենայն, երկեանց գոյացական բնութիւնքն · որք միաւորեցան ընդ ենթակայի անձին բանին, նոյնաբար ըստ միաւորութեան պարտէ ստորոգել, ոչ փոփոխմամբ, այլ միաւորութեամբ, որ կարելի էր ասել մարմինն Ա.ծացեալ, ընդ նմին և հոգին, վ.ն զի և ենթակային ։ Այդ և անդ ըստ բնականին ։ զի կարելի է ասել · կենդանիս այս մարդէ, և բանականս այս մարդէ, որպէս ստորոգութիւնս այսոքիկ ։ նոյնպէս և բնութիւն մարմնոյս, և բնութիւն հոգւոյն, որք անշըփո

փո

փոխապէս միացեալքն յանձն բանին, և ընդ բնութեան
Աստուածային. կարելի ասել թէ Աստուած, յԱստուած միացելոցն, ա-
ռանց այլայլութեան Աստուածացեալ, ո՛չ ուրուք ընդ հրոյ միա-
ցելոյ, զի թէպէտ միաւորութեան ոսկւոյն ասի հուր, սա-
կայն յատկութիւն ոչ ՚ի բաց թողեալ, զի ծանր է ոչ և երկն
այլ ՚ի միաւորութեան, այնքան միացեալ մինչ զի երկա-
կայն ասի այրեցող։ և այսպէս ունին հաստատութիւն, ու-
նին և յատկութիւն, և երկաքայն ոչ ինչ տարաբաժանեալ։
Այսպէս և Քրիստոսի մարդկութիւն, և հոգին միացեալ ՚ի բը-
նութիւն Աստուածային, թէպէտ և Աստուածային, սակայն զյատ-
կութիւնս ոչ կորուսին, ըստ երանելւոյն դիոնիսիոսի։ որ աս-
* Դիոն. տուածաթէոս յաղագս Աստուածային անուանցն ասէ * անփոփոխելի
* Յով. և անշփոթ զյատկութիւնս իւր պահելով այս ըստ բնութե-
Ե. 27. նէն։ Իսկ ըստ Աստուծոյ և Աստուածայնոցն, նախ զի տէրն ասաց, * եր-
թայք գործեցէք մի զկորստական կերակուրն. այլ զկերակուրն
որ մնայ ՚ի կեանսն յաւիտենականս զոր որդին մարդոյ տայ
ձեզ, զանզի զնա հայրն կնքեաց Աստուած։ ահա որդւոյ մարդոյ
ասէ Աստուած, և զնա կնքեալ յԱստուծոյ հօրէ, Աստուած։ և ոչ զբանն
որ մինչէր համագոյակից Աստուած ընդ հօր։ Իսկ երանելի միւռոնիչն
* Յով. ասէ, * որ հաւատայ վկայութեան նորա, կնքեաց թէ Աստուած ճըշ-
Գ. 33. մարիտ է։ ուսանեմ որդեօք, զի ճշմարիտ հաւատոյն ասէ
որ հաւատայցէ զմարդկութիւն Աստուածացեալ, և ոչ բանն որ
բնութեամբ էր Աստուած։ ընդ հօր և ընդ հոգւոյն։ Օր հայր ձայ-
նիւ կնքեաց ՚ի յորդանան, և ՚ի լերանն թաբօրական. և ըն-
ծիւրտնեայն և հաւատով պարտէ զնա կնքել Աստուած ոչ և եր-
ջանիկն թովմաս յորժամ շօշեաց զմարմինն, կնքեաց հա-
ւատով աղաղակեաց ասելով Տէր իմ և Աստուած իմ։ երանելին սղո-
գոս ասէ, զոր ըստ մարմնոյ ՚ի հրէից Աստուած անուանէ, և
նոյնն տէրեալ յաւիտենս ասէ, և թէ որ ՚ի կերպարանս
Աստուծոյ էր ոչ ինչ յափշտակութի համարեցաւ, զլինելն հաւա-
սար Աստուծոյ. զի թէպէտ ընդդէմ արիոսի է, որ ոչ հաւասար
հաւատայր որդի հօրն. այլ նոյնպէս և արարած և չէր հօր
կցեալ, և ասէ ընդդէմ նորին, ոչ յափշտակութիւն է Աստուած. իս-
ըն

րև զին յարարածոցս · որ բնութիւն , և ճշգրիտ աստուա-
ծութիւն Աստուածային , ըստ այնմ՝ ես ասացի թէ Աստուածք էք :
Այլ բնութիւն Աստուած ընդ հօր և հոգւոյն՝ ըստ էութեան և այլա-
րից էակիցս : Եւ ընդդէմ՝ նեստորի և ասողացն, որ ոչ
խոստովանէր զմարմինն Աստուածային : Այլ երանելին ըստ մար-
մնոյ 'ի հրեից ծնեցելոյն Աստուած է , և նոյն ասեմք : ոչ յա-
փշտակութիւն և ապականութիւն համարեալ , ըստ Տն , յա-
ւուրսն յաւիտենական մկրտչին : մինչև գայցէ արքայութիւն
երկնից · յախտական , և բոլորը յախտականէն զնա , Այլ
ընդ Այ միացելոյն Աստուածային , զի բանական հոգին Քրիստոսի
և մարդկային մարմինն , որ ընդ բնութիւն Աստուածութեան և ընդ
անձին միայան , և միաւորեցան , համանգամայն և Աստուածային,
վասն այսորիկ ասէ ; ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ , ըն-
ծայել հաւասար · ընդ անձին Այ բանին մարմին և հոգին
մարդկային : Ով և երանելին կիւրղոս ասէ , այլ Աստուածայնոց
խորհրդոց բազմանոյնագործօղն · յիւ · քնէ · եկեղեց ասէ, զնա
'ի գոյութիւն : Այդ Քրիստոս ծնեալ ասի · և ոչ նմ ծնելոյ, այլ
որ յայս և 'ի մարդկութեանն · զի մարդկութիւն էարարած իսկ
Աստուածութեան արարիչ: այլ յաղագս անճառ միաւորութեան ար-
արածոյն ընդ արարչին գոյացուցիչ նմ էակից ասէ : ով և փար-
դապետն * Փրանկաց ասէ · լինի 'ի սեռութենէ միաբանութեան *Ա. Կ. 2
Քրիստոսի. տեսանելով զմարդն · որէ ըստ էութեան մարմնոյն և հոգին Հ. Յ.
կիւրղոս ասէ թէ ևոք * ասիցէ Յն Քս նմանութեան զյա- * Պետ.
տեանն ոչ միաւորելոյ ճշմարտութեան : քանզի ոչ այլ ինչ է ճշմար-
տութիւն եթէ ոչ խոհականոյն ըմբռնումն հաւատոյն, և ոչ այլ
ինչ է ըմբռնումն հաւատոյն · եթէ ոչ հետևիլ աւանդութեան
Աստուածայնոց որք խոհականս խոստովանէին զմարմինն և զհոգին
Քրիստոսի Աստուածային միաւորութեամբ ընդ Այ : Ով և Աստուա-
բանն գրիգորիոս ասէ , Աստուածային * յաղագս Աստուածութեան : *Ա. Կոր.
Եւ դարձեալ ասէ՝ բայց Աստուածայի , զմարդն արդեօք · ոչ Դ. Ի. Ն. 1.
բանիւն, այլ երևեցելոյն : Եւ դարձեալ ասէ՝ վասն զի * երկու- *Ա. Կոր.
բեանն մի խառնելովն, Այ մարդանալոյն, և մարդոյն Աստուա- Դ. Ի. Ն. 2.
նալոյն : Եւ ալեքսանդրիոս ասէ՝ * այլ և 'ի հասուկն էին զար- *Ա. Կոր. Դ.
ման Գ. Ի. Ը. 8.

մանաւանդ զի խոնարհ է անդ բաժանումն արեան, նա և թանձ-
րանալն, ձեռանալն, հոգեւորին, և Աստուածանալն: Եւ դարձ-
եալ ասէ՝ այնչափ միաւորութիւն է անդ, զոր ինչ ասի որ-
դւոյն Աստուծոյ, ասի և որդւոյ մարդոյ, և անդրադարձաբար:
* Մեկ- Եւ մեկնիչն Գրիգորիսի վարդապետն Յոհաննէս ասէ, * ընդ-
նութիւ- մարմնոյն Բանին տեսանելի Աստուած ասէ և կոչէ Աստուած երևութիւն:
նս 4. Եւ այլ ևս բազումն այսպիսիք վկայութիւնք զորս ոչ ածի
Աւետա- յաղագս խոհեմութեան, և ձանձրութեան: Եւ փոյթ Աստուած-
րանին. ացեալ մարմնոյս միաւորութիւն Աստուածութեան, շնորհաց մեզ
կենդանարարն՝ զի ճաշակողքն արժանասցեն Աստուածայնին և ընդ
Աստուծոյ միաւորեսցին, ըստ այնմ թէ դու հայր յիս, և ես՝ ի նմա
զի եղիցին կատարեալք ՚ի մի: Քանզի այսէր կամք արար-
չին, զի զբնութիւնս մարդկայնին, որէր կերպարան և պատկեր
նորին, Աստուածայնացէ: և ընդ ինքեան միաւորեսցէ: Նախ բնու-
թեամբ ընդ բանին միաւորեցաւ, և միացաւ մարդկութիւնս, և ապա
ճաշակմամբ մարմնոյ և արեան բանին Աստուծոյ, ընդ նմա միաւո-
րեցին ամենեքեան: Ամենայն որդիք(?) գիտէ աւետարանիչն Աստուծոյ. և
նորայս սիրելի, երջանիկ մարգարէն, ճաշակեցէք և տեսէք
զի քաղցր է տէր:

---

ԳԼՈՒԽ Զ:

---

Ցուցանէ եթէ՝ ճաշակողքն Աստուածայնոյն յանհասական խորհրդոյն:

Քանզի բնութիւն է, զի ամ ներհակք յորժամ կամի-
ցին ոք. արտահանել հակառակն, որպէս ՚ի
բժշկական դեղոյ տեսանելի, զի ուր սաստկութիւն է ջերմու-
թեան, ցրտութեամբ արտահանի, և անդրադարձաբար: Եւ խա-
ւար լուսով, և սեաւ սպիտակաւ, և զայլս: Նմանապէս և
մահացուցիչն, որ եմուտ ՚ի բնութիւն ճաշակմամբ, ոչ այլով
իւիք հնարաւոր էր յելանել, եթէ ոչ հակառակ ճաշակմամբ:

Որ

Որ օրինակ բեւեռ 'ի վայրի ամրացեալ, այլ իւրն բեւեռա-
ցն դա որք սրտամփնել: Քրիստոսի նախատնքն պատու-
հիրեցան ոչ ուսել 'ի պարզն մահապարտեցէ, և ոչ հուալ նմա
լինել: Խոնարհն է յուսոյն, վարդապետին մահուցանէ: Սոյն
այսորին որոշ փոյթ հնար, յետ եկամուտ մահուն, չարչարակ-
ութեան ներհակին տուեալ, զի հանդերձ: Որ օրինակ չարչար
բժշկէ, գանսոս, և շղթայս զի՞նչ և իցէ, ներհակաւ արտա-
հանեն, բուժիչ դեղովք: Սորա հոգւով խնամելեաւ, եր-
ջանային դառնի, տեսեալ զբուժիչ դեղս այս պատրաստեալ
յամենահնար բժշկէն, 'ի թախծութեան թուանալից չարչարանացն,
գոյն կարկառ մեծք ձեռաց առ խոստացեալն, թէ չարչարե-
ցէք զինեսունակին իմ, զի բուղցեք: որով զդառնութեան
չարչարին, և զթոյնս մահաբերս, ժայթքեսցի 'ի սրտից մե-
րոց: և շնորհիւն մեզ, փոխանակ դառնութեան մահուն,
քաղցրութիւն կենացն, 'նախ մարդկութիւն Քրիստոսի չարչարակցաց,
զքաղցր իւրս այս, յորժամ միացաւ, և միաւորեցաւ ընդ
բանին, և ապա բոլոր բնութիւն չարչարակիցս, և միաւորու-
թիւն նմին, վասն այնորիկ երկուս չարչարաւն զայս, յայտ առ-
նէ իւրն ասելով, ես կենդանի եմ վասն հօր, այս առաջին
չարչարանաց նշանակէ, որ նախ միաւորեալ մարդկութիւն
ընդ Աստուածութեան բանին լինաց միջնորդի: Իսկ ասելովն թէ
որ ուտէն զիս, և նա կեցցէ վասն իմ: այս երկրորդ միաւո-
րութեան ցուցումն, որ բոլոր մարդկութիւն միաւորեսցեմք
ընդ նորա Աստուածութեան: հաղորդութեամբ չարչարանացն, միջնոր-
դութեամբ մարմնոյ և արեանն, որպէս ասացն, և որ ուտէն զիս,
և նա կեցցէ վասն իմ: Որ որպէս կատարեալ մարդկութիւն
Քրիստոսի, կենդանի է վասն հօր, զի հօր որդին միացոյց ընդ ին-
քեան, նոյնպէս և բոլոր բնութիւն մարդկային, կենդանի է
վասն Քրիստոսի, զի զնա ուտէ յինքեան: Որպէս ոչ ընդ կարելի եղև
կատարեալ մարդկութեան ասել զամենայնն, յինքեան միա-
ւորութեն. նոյնպէս և աստ կարելի եղև բոլորից մարդկու-
թեան ուտել յինքեան զամենայնն չարչարակցին: Որ ոչ
ընդ Աստուածացեալ բնութիւն միաւորութեան, Աստուածութեան, նոյն-
պէս

պէս և սէր, յորում մարդկութիւն Յ̃ճանան Ճաշակմանց մի-
աւորութեան. քանզի բնութիւն և շարժումն այս, զի զոր
ինչ և Ճաշակեմք փոխարկի ՚ի մարմին մեր: Այնպէս և
Ճաշակումն այս, մարմնոյ և արեան կենարարին, զօրացու-
թիւն միաւորի, ընդ մարմնոյ և ընդ արեան մերոյ: և այս-
պէս լինի մարմինս մեր, մարմին Ք̃ի, և արիւն մեր ա-
* Եփ. րիւն Ք̃ի, ըստ առաքելոյն * ուստի ամ՛ մարմինն յօդեալ և
4. 16. պատշաճեալ ամ՛ խաղալեօք տարբերութեան, ըստ ի-
րաքանչիւր մասին զաճումն մարմնոյ գործէ, ՚ի շինու-
* Եփ. ած անձին իւրոյ: Եւ դարձեալ ասէ * զի անդամք եմք
5. 30. մարմնոյ նորա, և յոսկերաց նորա: Եւ դարձեալ ասէ
* Կոր. * մի հաց, մի մարմին եմք բազումք: զի ամենեքեան, ՚ի մի-
10. 17. ոջէ հացէ անտի վայելեմք: Օր ոյր մարմինն այն միաւորեալ
* Մրկ. ամ ուրեք նստի ընդ աջմէ Հօր. ը̃ այնմ * համբարձաւ յերկինս,
16. 19. և նստաւ ընդ աջմէ Հօր. և Թէ * Նիստ ընդ աջմէ իմմէ, այն-
* Սղմ. պէս և Ճաշակողքն, մարմնոյ և արեան նստեալցին ընդ աջմէ
100. 1. Ա̃յ ը̃ այնմ կայցէ * դնիցեմ ընդ աջմէ քումմէ: Եւ ը̃ առա-
* Սղմ. քելոյ, * զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկե-
4. 41. ղեցի, զի մի ունիցի ինչ արատ, կամ աղտեղութիւն, կամ
* Եփ. յայլինչ յայնպիսեաց: այլ զի իցէ Ս̃ր և անարատ: Ք̃ան-
5. 27. զի նախկին Ճաշակմանն նախահարցն, թողին այն մահ ըղձե-
ցաւ ՚ի բնութեան, ուստի այնքան մահ ապա յաւն զհրա-
ցաւ ՚ի բնութիւն մեր, զի նախկինն ծնեբնն եղև, հարազատա-
բարար, և բարձաւ հոգին Ճ̃աշակման և ջրոց ջրհեղեղին ա-
մենեքեան սատակմամբ բարձան և զբաղդքս հրակիզեալ
բարձան, և աշխարհ ամ՛ ապականեալ կորեաւ: և՛ ի նորոյ ան-
կեալ, առաջնոյ, և երկրորդի մահուամբն, սակեալ վերծակե-
ցաւ: ուստի այնքան տառապանս բազմեցան, և բազմացան
* Եսայ. մինչ զի և որդին Աստ՛ ինքնին ապշեալ, * ոչ զիք որ օգնէր, և
9. 53. ոչ որ ՚ի Թիկունս հասանէր, և ամենազօր զօրութեամբ իւրով,
իբրու զօրծունի սկացաւ ՚ի բարձանց, ՚ի վերայ խորամանկ
և զառավանդակ օձին, և չախչախեաց շղթայս նորին: Եւ
ինքն ը̃ տէրունի հաւատոյ, եղեալ զերայ իւր, և եհեղ
՚ի

'ի մին մեռեալ ծննդոց իւրոց, զարիւնն իւր 'ի կենդանութի՜,
* և զ ջուրս 'ի լուացումն, և զ մարմինն 'ի ճաշակումն, ուստի * Ալքր •
մածանի կեանս, 'ի տարապարձումն մահուան: Ըստ այնմ
* որ ուտէ զմարմին իմ. և ըմպէ զարիւն իմ՝ կեցցէ յաւիտեան * Յհ •
և թէ այսէ հացն որ յերկնից իջեալ, և կեանս տայ աշխար- 6.55 •
հի: և թէ * որ ուտէ 'ի հացէ յայսմանէ կեցցէ յաւիտեան: Եւ յա- *Յհ.51
ղագս այսորիկ բարձրաբանն ևս գոչէ. թէ ճաշակեցէք զի՞ր
վ՛ն զի 'ի ճաշակման յայնմանէ մահ ողորմելի. և 'ի ճաշակմանէս
կեանք զուարճալի: Յայնմանէ մերժեցումն լուսեղէն պատ-
մուճանին, և յայսմանէ զգեցումն. ըստ այնմ * հանէք զպատմու- * Ղկ •
ճանն զառաջին և ագուցէք: Եւ ըստ մարգարէին * ցնծասցէ ան- 15.22 •
ձըն իմ 'ի տէր զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմու- * Եսյ •
ճան ուրախութեան: Նմանէ բարձումն եօթն արիւան շնոր- 6.10 •
հաց՝ և 'ի սմանէ դարձել վերստին զեկլումն, ըստ այնմ * լցու- * Եսյ •
ցէ զնա հոգւով այ և խորհրդոյ՝ հեզութեան և զօրութեան. իմ- 10.23 •
աստութեան. և գիտութեան՝ երկիւղի, և ածպաշտութեան: Նմանէ
անէծք՝ և 'ի սմանէ օհնութի՝ ըստ այնմ * օհնեալ էք դուք 'ի տէ, որ * Ծնն •
արար զերկինս և զերկիր: Եւ ըստ այնմ. * ոչ ևս ծնանիցին որ- 3.14 •
դիս յանէծս, զի պատակ օհնեալքն յայ. և ծնունդք նո- * Եսյ •
ցայ ընդ նմա՝ և եղիցի մինչև կարդասցեալ լիցի նոցա ես լու- 18.55 •
սոյց նոցա, և մինչ դեռ խօսիցին, ասասցես թէ զի՞նչ խնդ-
րէք: * Յայնժամ դայլք և գառինք 'ի միասին ճարակեսցին: * Եսյ •
և ըստ այնմ թէ * օհնեաց զմեզ, ամ հոգևոր օհնութի յերկնա- * Եփ •
ւորս 'ի քս. օհնութեամբն որոց անցանէ: Նմանէ արտա- 1 • 3 •
հանումն * փառաւորեցեալ դրախտէն, և 'ի սմանէ վերստին * Ծնն •
դարձումն, ըստ այնմ. * այսօր ընդ իս լինիս 'ի դրախտին: 3 • 23 •
Նմանէ զրկումն յանմահութենէ, և 'ի սմանէ ոչ մի- * Ղկ •
այն անմահութի՝ և էթ, այլ և ըստ այն միաւորութի, ըստ 23.43 •
այնմ * ես 'ի նմա, և դու յիս, զի եղիցին կատարեալք 'ի մի, *Յհ.17 •
և թէ * մեր հաղորդութիւն ընդ հօր, և ընդ որդւոյ իւրում 23 •
յս քսի: և թէ * որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն * Յհ •
իմ, յիս բնակիցի, և ես 'ի նմա: Նմանէ յորդեգրութեան *Ա Յհ.3 •
սատանայի ըստ այնմ դուք 'ի հօրէ, սատանայէ էք, և զ ցան- * Յհ.6 •
կու 57 •

կութեան հօրն ձերոյ կամիք կատարել, զի նա մարդասպան էր
ի սկզբանէ. և ՚ի ճշմարտութեան ոչ եկաց, զի ոչ գոյ ճշմարտութիւն
՚ի նմա. և ՚ի սմանէ յորդեգրութեան հօրն երկնաւորի. ըստ ՏՆ
* Յհ. * Երթամ առ հայր իմ, և առ հայր ձեր, լերն ՅՈ ընտանի և մեր
2. 17. շնորհօք. և ըստ առաքելոյն զի որք հոգւովն ԱՅ վարին՝ նոքա են
* Հռ. որդիք ԱՅ. զի ոչ առէք զհոգին ծառայութեան, միւսանգամ
8. 14. յերկիւղ, այլ առէք զհոգին յորդեգրութեան. որով աղաղա-
կեմք աբբայ հայր, նոյն, ինքն հոգին վկայէ հոգւոյս մե-
րոյ, եթէ եմք որդիք ԱՅ: և եթէ որդիք, ապա և ժա-
ռանգք ԱՅ. և ժառանգակից ՔՍի: Եւ Եսայի ասէ.
* Եսյ. * ՏՐ հայր մեր: և թէ հայր մեր որ յերկինս ես: Իմանա-
33. 22. նէ տաղաւարութեան սատանայի տուն և տեղի հանգստեան
նր. ըստ այնմ, առնու եօթն այլ այսս չարագոյնս, և եկ-
եալ բնակի անդ. և լինի մարդոյն այնորիկ չար: զի ընդ-
յունել՝ և ՚ի ճաշակել անիծեալ պտղոյն, եօթնեկի մա-
լութիւքն. հանդերձ չարագոյն պահապանօք դիւօքն, բնա-
կեցան ՚ի ծնունդս նր: Հպարտութիւն՝ և դեւք նորին: Նա-
խանձն՝ և դեւքն նորին: Բարկութիւն և դեւք նորին: Ծու-
լութիւն և դեւք նորին: Ագահութիւն և դեւք նորին: Որ-
կորամոլութիւն և դեւք նորին: Բղջախոհութիւն և դեւք նո-
րին: Զէ ոսկորդատութիւն թեթեւագոյնք, և դեւք նր
մեղմագոյն, բայց այլքն չարագոյնք, քան զինքն: Եւ յոր-
ժամ միոյ այսորիկ տեղի գտանի, չարագոյնքն քան զնա,
միահաղոյն բնակեցան անդ, որովք եկեալ ՚ի սմանէ. ՚ի
դերեզմանս և ՚ի լերինս բնակիւր: և ոչոք կարէր պարտել
զնա. զի ՏՐ բազում անգամ, ոտնակապիւք և շղթայիւք կա-
պելոյ, և խզելոյ ՚ի նմանէ զշղթայսն, և զոտնակապսն,
խորտակելոյ. և ոչոք կարէր պարտել զնա: քանզի հանա-
պազ զցայգ և զցերեկ ՚ի գերեզմանս և ՚ի լերինս, աղաղակէր.
և կոծէր զանձն ՚ի քարամբք: Դիւահարս այս նշանակէր,
զմարդկային բնութիւն, որ ճաշակմամբն այնու, այսու ՏՆ
չարեաց պատահեցաւ: որ ոչ հնազանդեաք, և ոչ մարգարէք
և ոչոք ՚ի սրբոցն կարաց պարտել զնա: Զի յորժամ զատան այ-
սինքն

սիրելն զիմաստն կատարելին, ՚նա խօսէր, որ ինչ և էրն, և ելեալ
՚ի տանէ դրախտին ՚ի լերինս ամբարտաւանութեան․ և ՚ի գերեզ-
մանս պարշահոտ որկրամոլութեան․ և բղջախոհութեան․ և յա-
նապատս նախանձու՝ բարկութեան, ծուլութեան, և ագահութեան,
որ յոյժ անապաստանելի էր․ բնակէր: և քարանձաւք մեղաց․ և ան-
օրէնութեան կրծէր զանձն իւր: Իսկ իբրև ետես զՅն, և ճա-
շակեաց զքաղցր ձայն․ առժամայն հալեալ իբրև զմոմ՝ հրոյ,
և կամ ծուխ ՚ի հողմոյ․ չարագոյն բնակեալքն ՚ի նմա: և եղև
սենեակ և տաճար, հոգւոյն սրբոյ: ըստ այնմ՝ * դուք տաճար * Կորն.
այ էք: եւ թէ հոգի այ բնակեալ է ՚ի ձեզ․ և * թէ բնակեցայց ՚ի նս 6.16.
և գնացից ՚ի նս, և եղէց նոցա այ, և նոքա եղիցին ինձ ժողով- * Կորն.
ուրդ: Եւ այսու ճաշակմամբ գայ ՚ի տուն ուր եղաւն նախկին 3.19.
և առէ * զզեցեալ և զզաստացեալ, այսինքն զփառսն զոր ըզ- * Ղկ.
մերկացաւ, ըստ այնմ * մերկքն և ամօթեցայ, զայն վերստին * զզե- 26.12.
ցաւ, և զզաստացաւ: Ոչ ի բնութենէ արտաքսեալն վայրենա- * Ծնն.
նալ: և յորժամ ճաշակեաց զքաղցր ձայն, յանձն ընծայե- 3.10.
ցաւ, և նստէր առ ոտսն Յսի: քանզի ճաշակողքն ար- * Ղկ.
ժանաւորս, այնքան զզաստացան, մինչ զի զամ՝ զորինչ և 8.35.
էրն, թողին, և զհետ փրկողին գնացին Յսի: այնքան
մինչ զի զմարմինս իւրեանց ՚ի խաչ հանեցին՝ կարեօք և ցան-
կութեամբ: ՚Ի սմանէ զրկութիւն, ՚ի պարակցութենէ հրեշտա-
կաց, և ՚ի հաղորդութենէ սպարակցութեն դիւաց: ըստ այնմ՝
յարեցաւ մի ՚ի քաղաքացեաց, և նա առաքեաց յագարակս
իւր․ արածել զխոզս: ՚ի սմանէ դարձեալ պարակցութիւն հրեշ-
տակաց: ըստ այնմ * լուաւ զձայն երգոց և պարուց զի ժառանգորդ * Ղկ.
եղև լուսաւորացն լուսեղինաց դասուց և ուրախութեան նոցին: 15.25.
ըստ այնմ՝ ուրախութիւն եղիցի յերկինս՝ և թէ * ուրախ եղե- * Ղկ.
րուք ընդ իս, զի ոչ միայն արժանաւորս ճաշակողն, ուրա- 15.32.
խանայ, այլ և լուսեղինացն դասք․ և հայրն փառաց, ըստ
այնմ՝ ուրախանալ պարտ է, զի որդիս իմ այս մեռեալ էր
եկեաց՝ կորուսեալ էր և գտաւ: որով արժանաւորս ճաշակողն
համախմբից լինի, ամենայն երրորդութեան: ըստ այնմ՝ ես
և հայր իմ եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք, և
թէ

* Յհ․ թէ * ուր ես եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի: և թէ
14·23 · * Հայր կամիմ զի ուր եսն եմ, և նոքա ընդ իս իցեն, և թէ ըզ
* Յհ․ փառսն զոր ետուր ինձ, ետու նոցա: Եւ համառօտագոյնս
12·26 · ասացից, ՚ի նմանէ անօրէնութիւն․ ՚ի սմանէ խաղաղութիւն:
՚Ի նմանէ մոլորութիւն․ և ՚ի սմանէ դարձումն: ՚Ի նմանէ
գայթակղութիւն, և ՚ի սմանէ վերականգնումն: ՚Ի նմանէ
աղքատութիւն, և ՚ի սմանէ մեծութիւն: Արդ որ հոգւոր
փառասիրանայ, ՚ի կենաց յայս, փութալ սպասի գնել ըզ
մարգարիտս զայս, եթէ ոչ ունիցի գծախսն, վաճառեսցէ
* Մտթ․ զամ * զորինչ և ունի, և զսա միայն գնեսցէ: քանզի բազում
13·45 · * մարգարէք, և արդարք ցանկացան տեսանել զսա ոչ կարա-
* Մտթ․ ցին, և ոչ հասին: Արդ մեք յորժամանեցաք, յայսմ
13·17 · յամենահամբաւ խորհրդոյս, պարտիմք * մերկանալ զհին մար-
* 2Կոր․ դն, զի զգեցցուք զնորս, և որբեսցուք զհոգիս, զմիտս, և
4·16 · զմարմնաւորդս: Ով ընտրելի․ յորժամ ոք կամիցի զպատուա-
կան ինչ հեղուլ յամանն, նախ սրբէ, և ապա հեղու ՚ի նմա
զպատուականն զայն նիւթ:

## Գլուխ Է:

Յաղագս Սրբութեան և Մաքրութեան Ճաշակողաց, ըմպողին և ճաշակողին կենդանարարին:

Սյապէս պարտ է ճաշակողացն, նախ սրբել, և մաքրել զհոգին և զմարմինն, որպէս նիւթ ստացաւորութեան մարմնոյ և արեան Տն, և ապա ճաշակել, զի ստացաւորեսցեն նմա: Ով ով մարմնոյ ստացաւորութիւն հոգին, ըստ կենդանութեան, և ըստ բանականութեան՝ զի նովաւ կայ և շարժի մարմինն, և յորժամ բաժանի, տարալուծանի: այսպէս և երկրայնոցն, ստացաւորութիւն կենսատու մարմին․ և արիւն կենարարին: Ով ով թարց հագւոյ բանականի, մեռեալ մարմինն բանական մարդոյն՝ սոյնպէս և թարց մարմնոյ և արեան կենարարին, մեռեալ մար

մարմին և հոգի մարդոյն։ Որ որպէս բանական հոգին, ոչ կարէ շարայարիլ, և շաղկապիլ ընդ անասնային և գազանային մարմնոյն, զի ոչ է նիւթ տեսակաւորութեան նորին՝ սոյնպէս և կենդանարար մարմին և արիւն կենարարին, ոչ շարակցի ընդ անասնաբարոյիցն, և գազանաբարոյիցն, զի անասնաբարոյքն եւեթ ագէտքն, որք ոչ իմանան զինչ ճաշակեն, և գազանաբարոյքն հերձուածողքն, որք գէշ գէշ պատառեն, զխորհրդաւոր մարմինն Քս՟ի, վասնորոյ անկարելիք են տեսակաւորիլ սովաւ։ Որ որ՟ նիւթն ընդ պատրաստիլ և ընդ պատշաճաւորիլն, խնդրոյն տեսակաւորի, որ՟ նիւթ մարդոյ, յորժամ պատրաստի, խնդրոյն և տեսակաւորի, հոգւով բանականաւ. և միով իմանալեաւ, սոյնպէս և մարդն յորժամ պատրաստեսցէ զնիւթն իւր, որ է մարմին, և հոգին, խնդրոյն ընդ ճաշակելոյն, յանմահական խորհրդոյն, Ա՟ծայնոյ, և նովաւ տեսակաւորի, և հոգւովն սրբով տնադրի, և յորդեգրութիւն հօրն երկնաւորի, և ի նմանութիւն և ի պատկեր նորին վերադարձի։ Որ որ՟ նիւթ հոգւոյն, բանականի որ է սաղմ մարդկային. ոչ ունի պատրաստութիւն, ոչ առնու զհոգին բանական. որ է տեսակաւորութիւն նորին, և լինի մարդ բանական, և պատկեր ածական, սիրոյ, և նորման՝ սոյնպէս և նիւթ տեսակաւորութեան մարմնոյ և արեան կենարարին, որ է մարմին, և հոգին մարդկային, որոց ունի պատրաստութիւն ոչ տեսակաւորի մարմնով և արեամբն Քս՟ի, և ոչ առնու զհոգին ածային, և նկարագրի ի պատկեր հօրն երկնաւորի. նմանութիւն և սիրոյ նորին։ Որ որ՟ է տեսակաւորիլ նիւթոյ հոգւոյ բանականի խնդրոյն շարժիլ բնական, աճել, զարգանալ, ծնանիլ, և ծնանել, իմաստանալ, շնորհօք լնանիլ, և զայլս, այսպէս և նիւթ տեսակաւորութեան մարմնոյ և արեան Քս՟ի, որ է մարմին և հոգի բանական, խնդրոյն է տեսակաւորիլն նովաւ, բնական շարժիլ ի յերկնային կեանսն, և աճել և զարգանալ յերկիւղն ա՟յ. և փոխել ի զօրութենէ ի զօրութիւն, ծնանիլ ընքեան ի կեանսն յաւիտենականս՝ և զայլս նորին կենդանա-

կա

վարուԹի ծնանի, 'ի կենաս և յանմահուԹի, իմաստնանայ
շնորհօքն՝ նոյ, և 'ի մարդկանէ: որ մարդկուԹիւն քո, ընդ-
միաւորուԹի և անտարակուսուԹե բանին, աճէր և զօրանայր ի
իմաստուԹե. և շնորհք այ էին 'ի վր նր ըստ ղուկասու: Թէ
*Ղկ.2. *յս զարգանայր, իմաստուԹի և շնորհօք յայ, և 'ի մարդ-
40.52. կանէ: այլև և մարդն յորժամ անտանկ որդւոյ, մարմնով և որ-
բումն կենդանարարին, զամ զներդործուԹիւն զայնոսիկ յաւյա-
նէ յինքեան, զի մարմնոյն քո անտարակուսուԹին, էր անծ-
ուԹին, նոյնպէս և ճշմարտին, անտարակուսուԹիւ մար-
մին, և որպէս կենդանարարին: նա նովաւ ըմբռնեցաւ, և սա
*1Կոր. սովաւ: Ամ այնորիկ առաջին * անծ աբանիքն, և սոյն մարմինն
10.17. քո, որ և նմա մարմին նոյ բանին: Եւ որ յետ միաւորու-
Թեն, անփոփոխելի է նմա առեալ մարմինն մարդկային: այլ
խոկացոյն տիրապէս, և մնացեալ Աստուծոյն: Նոյնպէս և
սմա յետ հաղորդուԹե և միաւորուԹե ճշմարիտ, ան-
փոփոխելի առեալ մարդկային: այլ տիրա Բանին: Եւ
որպէս յետ այնորիկ որդին մարդոյ, եղև որդի այ. այնպէս
և սա յետ ճշմարտին. յանձինս հաստատեալն, ոչ են որդիք մարդ-
*Յհ.1.12. կան, այլ Այ, ըստ այնմ * իսկ որք ընկալան զնա, ետ
1.13. նոցա իշխանուԹի, որդիս Այ լինել. որք ոչ յարենէ, և
*Յհ. ոչ 'ի կամաց առն, այլ յԱյ ծնան: ընդէր, * զի բանն մար-
1.14. մին եղև, և բնակեցաւ 'ի մեզ: Արդ նովուԹէ անտարակու-
սուԹե և բնակուԹե բանին մարմինն քո: այնպէս և մար-
մնոյն քո նովուԹէ անտարակուսուԹե և բնակուԹե մարդ-
կային մարմին և հոգի: Եւ որ մարմին և հոգին քո՝ անծ-
ացան՝ ըստ միաւորուԹե անծուԹեանն՝ անփոփոխապէս՝ այս-
պէս և մարդկային հոգի և մարմին, կարեն շնորհօք անծա-
նալ՝ ընդ միաւորուԹե մարմնոյ. և արեամբ քո շնորհօք:
*Ղև. զմարմինն ճշմարտեն յամ զօրուԹենէ. պարոն որպէս զին-
11.44. քեանս: որ առաց ինքն ճշմարտուԹին. * եսեմ Տր Այ ձեր:
*Ղև. և սրբեսջիք. և սրբք լինիջիք, զի սուրբ եմ ես Տր անծ ձեր՝ և դարձեալ
2.7. * սրբեսջիք. և եղիջիք սրբք, զի սուրբ եմ ես Տր անծ ձեր: և Թէ
*Ա պ. *ըստ այնմ սրբեցելոց ընկեցէք զ չարիս յանձանց ձերոց.
1.16. որ

ողջ զաւր ՚ի մէջ ամենեցուն: Եւ թէ * սրբեցէք զձեռս ձեր մեղաւորք * Յկ·
եղջերեալ՝ որով ՚ի բաց թողեալ է զամ՛ ապաշխարութեան, և զ յա 1·21·
մենայն չարեաց․ հեզութեամբ ընդունիցիք զբանն, որ կարո-
ղէ կեցուցանել զձեզ: Եւ թէ * ցօղեա զիս զոպայիւ, և սրբե- * Սղ·
ցէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց: և զի մտքն բոր- 5·9·
բեալ և կապեալ: ՚ի մի․ ՚ի բարձրոց՝ որով ըղ ապծեալն սրբէր
ըստ օրինացն որ նշանակէր զմարմինն ՔԻ ․ որ բորբոքեալ
և ժողովեալ ՚ի բազմախելութիւն, և կապեալ ՚ի միաւորու-
թիւ ընդդէմ ընդ բանին Այ: Եւ նոյն անձն բանին, բա-
ռամխութեան ընդ մարմնոյն, * որպէս զարիւնն իւր, կեն- * Եբ·
դանարար, ՚ի պղծեալ բնութիւն մեր, և սրբեալ մաքրէ ըստ 6·19·
առաքելոյն: Իբրև պատմեցան ամ՛ պատուիրանք օրինացն,
՚ի մովսէսէ ժողովրդեանն․ առեալ զարիւն ցլուցն, և նո-
խազացն, ջրով, և բրդով, կարմրով և զոպայիւ, և զամ՛ ժո-
ղովրդեանն սրսկեաց և ասէ, այս է արիւն կտակին․ զոր պա-
տուիրեաց ձեզ Այ: Արդ նշանակէր անձն բանին,
քառակի նիւթն զմի բնութիւն ՔԻ, բուրդն, զհողն: ջուրն,
զջուրն․ կարմիր՝ զհուրն, զոպայն՝ զ յօդն: զի քառիցս
յայսցանեաց, կազմեցաւ մարմին կենդանւոյն: և կապեցան
երրեակի բնութեան ՚ի մի․ այսինքն, Այ մարմնոյն, և հոգ-
ւոյն և սորօք սրսկեաց զարիւնն իւր կենդանարար՝ ամ՛ ժո-
ղովրդեանն առ ՚ի դառնալ զերկութիւն յաւիտենականս:
Որ և դարձեալ ասէ * զի թէ արիւն ցլուցն և նոխազացն, * Եբ·
և մոխիր երինջոցն, ցանեալ զպղծեալսն սրբէր, առ ՚ի մար- 6·13·
մնոյ սրբութեան․ որչափ ևս առաւել արիւնն ՔԻ որ ՚ի ձեռն
հոգւոյն յաւիտենականի․ մատոյց զանձն անարատ պատա-
րագ Այ, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց, ՚ի մեռելոտի գործոց
անտի պաշտել զԱծ կենդանի: Յաղագս այսորիկ նախ ըզ-
մկրտութիւն ետ ՚ի խորհուրդ, որ զսրբութին նշանակէր,
և ապա զկենդանարար մարմինն և զարիւնն իւր շնորհեաց,
որով ծանուցեալ լինի թէ ճաշակողքն այսմ խորհրդոյ,
պարտին նախ լուանիլ և սրբել, և ապա յայնմ հաղորդել:
ըստ առաքելոյն, լուացից սրբութեամբ ըզ ձեռս իմ, և ապա
շուրջ

* շուրջ եկեալ գանգատմամբ բոլոր։ յայնժամ և 'ի Տնուռն ԺԲ որդ-
* Մտթ. Նաւկին՝ նոյնպէս ցուցան։ * Զի յորժամ ընդ ծովն անցին, և
25. 6. ապա զհացն իջանել 'ի յերկնից կերակուր, և զհոգևոր ըմպե-
*1. Կոր. լին արբին։ Այնպէս և նորումս. նախ լուալ զոտս աշա-
10. 2. կերտացն, և սրբեալ, և ապա զկենդանարարն զայս առ-
* Յհ. անդեալ խորհուրդ՝ զի ցուցէ թէ նախ սրբել պարտ է, և
13. 5. ապա, ճաշակել. քանզի յՔս ծէ մաքրելոց։ Օր և 'ի Տնուռն,
Քրիստոսութեան, զնոյն սրբութիւն հրամայեաց, յոր ելոյն
* Ղկ. յեղկոտնոյ։ ով առաց զՍողոմոն, * եկ դեր վկայութիւն ժո-
19.10. ղովրդեանն, և սրբեա զնա այսօր, և վաղիւ և լուսոյն ըզ-
ծրջն իւրեանց և պատրաստեցէն զանձինս իւրեանց յա-
ւուրն երրորդի։ Երեքօրեա սրբութիւն, զերրորդի ամենա-
կայն ունի նշանակութիւն զմաքրութիւն, որ զերիս ամենայնս,
այսինքն զմտաց, զմարմնոյ, և զհանդերձեալն։ զնախկինն
զմտաց, զմարմնոյն խոստովանութիւն, և զհանդերձեալն
ապաշխարութիւն սրբեալ։ Եւ դարձեալ, զանցեալն միշտ
մոռանալ, և զներկայն միշտ պատրաստել, և զհանդերձեալն
և զապագայն զխորհուրդն հաստատել։ Զորս զմարմինն
նշանակէ, որ լուանալ պարտ է սրբութեամբ, առ 'ի սրբութիւն,
և 'ի մաքրութիւն ենթակայացեալ անձինն։ Զօր օրինակ սպո-
գովանիկ ինչ. որպէս ոչ է սրբեալ և մաքրեալ յաղտոյ 'ի
ժանկոյ, 'ի սեւութենէ, և այլ ինչ յայսպիսեաց, ոչ կարէ
յինքեան ներ երևեցուցանել. ըզբացախայլութիւն լուսոյ
արեգականն՝ այլ յորժամ սրբիցի, խեցոյն հանդոյնն, այն-
պէսէ և անձն բանականն բնութեան, յորժամ սրբիցի, լուսա-
ւորիցի, և մաքրիցի յամ աղտոյ, խեցոյն բացախայլ 'ի նա
անճառելի լուսաւորութիւն արեգականն արդարութեան։ Վս
այն ըստ ընթանալին հրամայեցաւ ժողովրդեանն, երեք
օրեայ մաքրութիւն, և լուացումն ծրջնոյն, և ապա մի-
սանել 'ի տեսութիւն երևմանն Տն։ Եւ թէ ընդէր լուա-
ցումն ծրջնոյ հրամայեցաւ, վս զի ծրջն պատեալ ունի
զմարմինն՝ զի ով նա զմարմինն, սոյնպէս մարմինն և հոգի
մարդկային, խոր ծրջն. 'ի ծածկոյթ Տնութեան. բնա-
ւթեամ.

այնմ զգեցայց զձեզ իբրեւ զձորձս: Օհ ո՜վ մարմինս մեր որ
պարագրեալ ունի զՀոգին բանական. ըստ այնմ * գիտեմ՝ զի * 2Պետ.
վաղվաղակի է լինելոց, մերկանալ յինէն մարմնոյս, ո՜վ եւ Տէր 1.14.
մեր Յս Քս եցոյց ինձ: Եւ առաքեալն ասէ, * ոչ կամիմ 2 * Կոր.
մերկանալ զայն, այլ ՚ի վ՟ր այսր զգենուլ: Նոյնպէս մար- 5.4.
մին եւ Հոգիս մեր, է ո՜վ ձորձ, ՚ի ծածկոյթ մարմնոյ եւ
արեանն որդւոյն Այ: Օհ ո՜վ մարմինն եւ բանական Հո-
գին Քսի է ծածկոյթ Ածութեանն, միաւորեալ ընդ նմին,
սոյնպէս մարմին եւ Հոգիս մեր է ծածկոյթ մարմնոյ եւ ար-
եանն Քսի: Սոյնպիսի Հրամայեցաւ, սրբել, մաքրել,
եւ լուանալ զզգեստս Քսի, որ է մարմին, եւ բանական
Հոգիս մեր: Քանզի յոյժ եւ կարի յանդգնութիւն եւ անզգաս-
տութիւն, յորժամ կամիցիս Թագաւորի ձորձ զգեցուցանել,
եւ նա խնդրեսցէ ի քէն, զի զգեցուցանես նմա, եւ դու ան-
մաքուր, եւ աղտեղեալ շնորհեսցես եւ մատուցես նմա, ՚ի
զգեցուածս, ոչ ապաքէն պատժապարտ լինիցի այնպիսին,
ծնուցի Թէ եւ ռամկաց, եւս պարսաւեսցի: Որքան եւս ա-
ռաւել, եթէ երկնաւոր Թագաւորին, մատուսցի ՚ի զգե-
նուլ զաղտեղեալն ձորձ: Սոյնպիսի յորժամ կամեցաւ Ածն
բան, զգենուլ զձորձն ծառայական, այսինքն զբնութիւն
մարդկութեան, ՚ի միաւորութիւն Ածութեան, նախ եկն Հոգին
Ած, եւ մաքրեաց զբնութիւն, զոր առանձնելոց էր ՚ի բան-
սրբուհւոյն. եւ ապա զգեցաւ զայն Ածն բան, եւ միացոյց
միութեամբ բնութեան, ըստ երանելոյն Ղուկասու, թէ * Հոգին * Ղուկ.
Սբ եկեսցէ ՚ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի 1.35.
՚ի վ՟ր քո: Եւ Թէ * որ ՚ի նմայն ծնեալ է, ՚ի Հոգւոյն սրբոյ է, * Մտթ.
զի Սբ Հոգին յառաջագոյն մաքրեաց, եւ ապա զսրբեալ ձորձն 1.28.
զայն, զգեցաւ բանն Ած. ըստ այնմ Թէ Տր Թագաւորեաց.
վայելչութիւն զգեցաւ: Տես զի Թագաւորն Թագաւորաց,
զմաքրեալ ձորձոյն զգեցուածս, վայելչութիւն համարեցաւ:
Սոյնպէս եւ ամ որ կամի, լինել ձորձ բանին Այ. նախ Հո-
գւովն սրբով մաքրեսցէ զձորձն զայն, որ է մարմին եւ Հո-
գին, եւ ապա Հաճութեամբ Հօր, զգեցուսցէ մարմնոյ եւ արեանն,

եր

երկնաւոր Թագաւորին յանժամ կատարեցի բանն Թէ վայ-
ելչութեան զգեցաւ: Իսկ որ ձործն այն տեսեալ, լուսեղէ-
նացն գունդ, հիացան, զարմացան, և բարբանջացեալ աղա-
* Եսյ. ղակէին, * ով է սա որ դիմեալ գայ յեդովմայ, կարմրութիւն
64. 1. ձործոց իւրոց 'ի բոսորայ. և իբրև լուան ըստ հարցմանցն,
* Եսյ. զպատասխանին, դարձեալ բարբանջացեալ աղաղակէին, * ընդ-
6. 2. էր կարմիր են ձործք քո, լուան Թէ հնձան հարի, և հե-
Թանոսաց ոչոք էր ընդ իս: Որպէս և ճաշակողացն, որք սր-
բեալ, և մաքրեալ ձործք եղեն, մարմնոյ և արեան կենա-
րարին 'ի նմանութեան ա՟յ՟ բանին, սլանալցեն յերկինս: ու-
սափ և 'ի վերայ նորա զարմացեալք և բարբանջացեալք, ընդ-
նոյնն յեղյեղեսցեն, և 'ի Թագաւորէն զնոյնն լուիցեն որ ընդ-
գեցեալ իցէ զնա: Իսկ զայս ևս Թէ կլԹեաց զբնութիւն, հան-
գերձ խնկովք իմովք, եկեր զհաց իմ՝ մեղու իմով, այսինքն
քաղցրութեամբ իմով, և եարբ զգինի իմ՝, կաԹամբ իմով:
այսինքն մարդկայնութեամբ իմով: Վ՟ն՟ այնորիկ փառաւորազ-
գեաց վերանան: Օր օրինակ եղև, 'ի վերայ կենդանի վե-
կային, և լուսատուին հոգւոյ, սրբոյն գրիգորի, 'ի մեծ քա-
ղաքին հռոմայ, յորժամ մատուցանէր զանմահ սրբազնա-
գործութիւն: Այսպէս հայրականն, կամարակապ ճառագայթ-
եցաւ զանձամբ նորին, և ամպ լուսաւորեալ պարապեաց ընդ-
նմա, յորս ոչ իշխէին ինքնակալքն, և սրբազան պապն, մեր-
ձենալ և հուպ լինել երանելւոյ նահատակին, յաղթոյն և
յերկրպագութի: այլ զձայնն միայն լսէին, և անշշունջ.
զարմացեալ և բարբանջացեալք կային: և լուսեղինացն ձայն,
ընդ արմնացուցանէր զամենեսեան: և որքան կամէին հայել
յանդիմանոյցն. ոչ Թուլացուցանէր ամպն, և այսպէս մինչև կա-
տարեաց զսրբազնագործութիւն և էջ 'ի խորանէն առանձնակն
և յամենայնի լուսոյն և ամպոյն զոր ամփոփեալ էր զնմին սր-
բազնագործողին, և այս համարձակեալ ոմն զ լանջսն, և
ինքնակալն զ ծունկսն ըստ կարգի օրինաց 'ի. զերկրպագու-
Թեան մատուցանէին. և զուղղափառութեան հաւատս, 'ի նը-
մանէ խնդրէին: Իսկ սա և նա զ հանապազատարած, և զան-

ա

ամբոխ զձեռսն , և զբազուկսն կարկառ 'ի վեր նոցա տարա-
ծանէր , և զշնորհս Աստուածայինս յոգիս նոցա ընծայէր . և
զհանգամանս հաւատոյն 'ի միտս նոցա սերմանէր : Եւ այս
զի՞ եղև և կամ հի՞մ , զի կցեաց զզմուռս , հանդերձ խըն-
կովք : Քանզի ծայրագոյն դառնութիւն ունի , զըմուռն , և
յորս մերձենայ անապականս պահէ : Արդ' զըմուռն նշանա-
կէ զչարչարանս , և դառնութիւն զկիրս չարչարանացն :
Աստի այնքան դառնագոյն զկիրս չարչարանաց կրեաց ,
յերկնային յանձն իւր , մինչ զի և անմարմինքն հիացեալ
զարմացան : Եւ կենդանին զայնոսիկ , խունկ անուշահոտու-
թեան բերկրութեան մատուցան յամենայն երրորդութիւն , ըստ
այնմ * որպէս խունկ առաջի քո տէր , և այսպէս եկեր զհացն , * Սղմ.
զիջեալն յերկնից , մեղեր քաղցրութիւն . այսինքն ըմբռնեալ ծա- 14. 2.
ռայութեան քահանայապետութեան , որ լուաւ 'ի տանէ իւր- 30.
մէ , թէ լուծ իմ քաղցր է : Եւ էառ զգինին , վարդապե-
տութիւն կենդարարին իւրոյ , թէ * որ ոչ առնու զխաչ իւր , և * Մտթ.
գայ զկնի իմ , ոչ կարէ իմ աշակերտ լինել : և այսպէս վար- 10.38.
դապետութեան աշակերտեալ ընծայեաց , զկնի վարդապե-
տին իւրոյ : և ապա էառ զգինին նոր ուրախարար : և 'ի
նոյին քաղցրացոյց զմեզ ինքեամբ ինքեան . և մեզ զանմա-
հական կերակուր'ս պատրաստելով , և ըմպելիս : ըստ այնմ
* ապաքէն քաղցրացուցեր ինձ և քեզ կերակուր : Օր առ- * Սղմ.
աջնորդս այս մեր , և ծանօթս Այ , կթեալ զըմուռն , շը- 54.15.
նորեաց մեզ զկերակուրն՝ որով ինքն զօրացեալ . և զմեզ
զօրացոյց , ինքն մերկացաւ զմարդն հին , զձորձն ադամային ,
և մեզ ուսոյց 'ի բաց ձգել՝ զխորհին վնասային : Օր ըստ
սարսափ ահի ընկալաւ զվարդապետութիւն Յսի , դառնու-
թիւ չարչարանաց , եմուտ 'ի ծակն նեղ , և անձուկ , և
• հանեալ յինքենէ զմորթ , և զխորհին հին , և զգեցաւ
զնորն , և նորոգեաց զմարդկութին 'ի կենանին յաւիտենականն
Աստուածապէս և մեզ պարգև . նախ զըմուռն կթել , դառ-
նագոյն զշքմամբ , դառնագոյն արտասուօք . և դառնագոյն
ապաշխարութեամբ , և դառնագոյն փոխարինին հատուցմամբ ,
և

և ապա 'ի նոյն քաղցրացուցանէք զկերակուրն, և սիրով քաղցրութեան կերիցուք, զՀացն Այ, և նոյն ինքն զԱծ: և արբցուք զգինին նր, որ է արիւն կենարարին. և միաբանութեամբ գնալ 'ի տանն Այ: Օհ խնդոյն ընդ հրաշալիսն, և ընդ հաղորդելն յանքննական խորհրդոյն, միաբանել յերրորդութեան, հաւատալ ընդ հրեշտակացն, զուգել ընդ երջանիկ մարտիրոսացն, նահատակացն, և պանծալի ճգնաւորացն և գնալ միաբանութեամբ 'ի տանն Այ, այսինքն յանճառելի խորանին: քանզի է բնութեամբ, ընդ որոյ ոք միաբանի, զնմանութիւն նորին յինքեան նէր երևեցուցանէ. զորօրինակ այն մարդոյ, եթէ ընդ լուսոյ, և եթէ ընդ խաւարի, յորոց մու 'ի սոցանէ հաղորդի, ընդ նմին և միաբանի, և զուգի: Այլ զի լոյս բնութենէ, այն մարդոյ յորժամ զուգեալ միաւորի ընդ լուսոյ, և ապա տեսանէ: Այսպէս և միտք մեր և հոգի, յորժամ զուգաւորեալ միաւորի, ընդ լուսոյ արեգականն արդարութեան, ապա կարէ տեսանել ըզ փառս անճառելիս: Եւ այս այլով իւիք ոչ գոյր հնար, զի նա անիմանալի բնութիւն է, իսկ սա իմանալի: Այնորիկ զմարմինն զայն. որ ընդ անճառելի Ածութեանն խառնելոց և միացելոց, զնա միջնորդելոց, և նովաւ հաղորդելոց: Որ օրինակ լոյս արեգականն որքան հեռի է յաչաց մերոց. այնքան անգոյգ, և անհաղորդ է աչաց մերոց: Բայց ըստեղծօղն Տիրաւորեաց. և զյօդն եդ 'ի միջի, որ նախ ընդ նմա միաւորի լոյս արեգականն, անընդմիջապէս, և զուգի միութենապէս: և ապա միջնորդութեամբ նորին, միաւորի ընդ աչաց մերոյ. և լուսաւորի ակն մեր: քանզի ոչէ ինքնակայս, այլ այլով, և ընդ այլոյ միացեալ. լուսաւորեալ տեսանէ. զի մի անհաղորդ մնասցէ 'ի լուսոյն: Օհ ոչ միջնորդութեամբ օդոյն՝ լուսաւորի ակն մեր, հաղորդելով ը զերապանցութեան լուսոյ արեգականն: Այսպէս հոգի և միտք մեր, թէպէտ անհունապէս հեռի է 'ի լուսոյ Ածութեան, և անգոյգ, և անհաղորդ, սակայն արարիչն յանմի միջնորդութիւն մարմնոյ և արեան իւրոյ, յորս նախ միաւորեցաւ

Ած

Ա՟ծութիւն, և լոյս արեգական արդարութեան, և նովաւ շը-
նորհեաց մեզ խաւարելոյս՝, զլոյսն իւր գերարփին՝, զի նո-
վաւ հաղորդեալ միաւորանիցուք, զի տեսցեն աչք մեր, ըստ
ասելոյն երջանկին Սիմէոնի, տեսին աչք իմ զփրկութիւնքո,
և թէ լոյս տուր ամ՟ ազգաց ելից: քանզի ով լոյս ընդ մի-
աւորութեան օդոյն լուսաւորէ, սոյնպէս և ստեղծօղն, ընդ
մարմնոյ և ընդ արեան իւրոյ, միաւորութեամբն լուսաւորէ
և տարրաւորանայ շնաւոր մեղոյն: Օհ ով լոյսն որ մի-
ացեալէ ընդ օդոյ անբաժանելիէ 'ի նմանէ, և նովաւ որ է
ակամ միաւորի, նոյնպէս անբաժանելիէ: այսպէս և Ա՟ծ որ
միացեալ և միաւորեալէ ընդ մարմնոյ և ընդ արեան իւրոյ,
անբաժանելիէ՝ և նովաւ որ ընդ մեզ միաւորի արժանապէս,
նոյնպէս անբաժանելի մնայ յաւիտեանս յաւիտենից՝: ըստ
այնմ՝ ես ընդ ձեզ եմ՝ մինչև 'ի կատարած աշխարհի: Օհ
ով լոյս արեգական միջնորդութե յօդոյն, յորս մերձենայ
ջերմացուցանէ, 'ի ծնունդս, և 'ի պտղաբերութիւս շարժէ,
սնուցանէ, աճեցուցանէ, զօրացուցանէ, և զայլս այսպի-
սիս ներգործէ: այսպէս և լոյս Ա՟ծութեան. միայնամբ է
մարդկութեան իւրոյ, նախ զնա զօրացոյց՝ զարգացոյց, և
աճեցոյց՝, ըստ ղուկայ, և ջերմացոյց առ 'ի ծնանել յորդիս
լուսոյ և 'ի տուընջեան՝, յերկիրն կենդանեաց, և 'ի պտ-
ղաբերութիւս շարժեաց. որք ամենեքեան զպտուղ Ա՟ծութե
նր ճաշակեն, և այս միջնորդութե նորին մարմնոյ և արեան
ճաշակմամբն ամ՟ ազգ մարդկային, ջերմանան 'ի սէրն Ա՟ծային,
սնուցեալքն 'ի բանաւորութեն, և շարժին 'ի ծնունդս ա-
ռաքինութե, և պտղաբերին 'ի գործս Ա՟ծպաշտութե ա-
ճին, և զօրանան, յերկնաւորն Ա՟ծային, և յայլ Ա՟ծամերձ
գործս, և 'ի բանս: Նմանեալ ով լոյս արեգական, միջ-
նորդութե յօդոյն 'ի նիւթոյ երկրի. զոմն ոսկի, և զոմն ար-
ծաթ յօրինէ. և ակունս պատուականս ազնախախիչս. և պաղ-
պաջուանս առնէ, չինէ և կազմէ: սոյնպէս և արեգակն արդարութե
և ճառագայթն Ա՟ծային 'ի ձեռն ամենահրաշեալ մարմնոյ և ա-
րեան միջնորդութե, զոմանս առաքեալս, զոմանս մար-

գա

գարշս, զոմանս մարդասպանս, անօրէնս, հայհոյս, մարտի-
րոսս, նահատակս, ճգնաւորս, և զայլս այսպիսիս, նաշե-
լիս, և սքանչելիս առնէ, և անօրինէ, և շինէ 'ի վերայ
* 1 Կոր. վիմին, ոսկի, արծաթ, և ականս պատուականս զի * յորում
3. 12. աւուր հրով փորձիցին, պայծառասցին, իբրև * զկայծակն
* Իմաստ. ընդ եղէգն ընթասցեն, ընդ յառաջ Տն իւրեանց, և ըն-
3. 7. կալցին զպսակն 'ի կենաց: և զհաղթանակն պարծանաց
* Եփ. * և այնպէս յամ ժամ ընդ Տն լինիցին: Պարծեալ ով լոյս
4. 16. արեգական, 'ի ձեռն միջնորդութե օդոյն, յերկիր վե-
րացուցանէ, և բարձրացուցանէ, յամ աղօթ մաքրեալն, և
'ի դառնութենէ որբեալն, քաղցրացեալ անձրև ածէ, 'ի
վր երկրի, յորմէ լինին ամ պտղաբերութիք, և բառնին
ամ երաշտութիք յերկրէ: Որպէս 'ի ձեռն միջնորդէ,
մարմնոյ և արեան խորոյ, յորս միացաւ բանն ծնեալ և ար-
արիչն, նոքօք ըզ հիւթս յերկրէ, վերացեալ բարձրացու-
ցանէ յամ պատիւ, և 'ի փառս իւր. և յայնցանէ զբանս
բարիս, և երանգ երանգ առաքինութիս, արտաքեղեալ
հոսէ, 'ի բանական երկիրս: Եւ նոքօք տարաբարձեալ լի-
* Յհ. 7. նին, երաշտութիք Ածային բանիցն, ըստ այնմ * գետք յոր-
37. ովայնէ նր բղխեսցեն ջրոց կենդանութեն, և թէ * ջուրն զոր
* Յհ. 4. ես տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ, կենդանւոյ, բղխե-
14. ցելոյ 'ի կեանսն յաւիտենականս: և լինի * աղբիւր պարտի-
* Երգ. զոյ ջրհոր, ջրոյ կենդանւոյ, հոսեցելոյ 'ի Լիբանանէ: Ա-
Եր. 4. զի կերայք մերձաւորք իմ, և արբիք, և արբեցարուք եղ-
15. բարք որդեակք իմ: Պարծեալ ով միջնորդութե օդոյն, լոյս
արեգական ջերմութիւն, զգոլորշիս վերացեալ յերկրէ, վե-
րացուցանէ և բարձրացուցանէ, մինչև 'ի չորրորդն յաստի-
ճան յօդոյն որ կապակցեալ է Է ասպէտ հրոյն՝ զի քառակի
են աստիճանք օդոյս՝ մինն կապակցեալ կայ ընդ երկրի,
որով վերանայ գոլորշին յերկրորդն յաստիճան, և անդէ խառ-
նաւ, և սառնամանիք, զի ոչ անդրադարձի 'ի նա լոյս և
ջերմութի արեգական, ով յառաջինն, և անդ առի թանձ-
րանալ գոլորշեացն, զորոլինակ ջուր պարզեալ, և սառն ե-
ղեալ

ղեամբ, որ յառաջնումն ոչ երեւէր, եւ յերկրորդումն երեւի,
եւ յորժամ 'ի սառնամանեայն ձիւնիցն, հալի ցօղ, եւ լինի ան-
ձրեւ: Իսկ յայնժամ վերացեալ յերրորդն աստիճան, եւ անդ
եւս է խաւար եւ սառնամանիք, Այլ ոչ ունի հաղորդութիւն
ընդ հրոյն, եւ յորժամ ուժգնակի ձիւնիցն, 'ի սառնամա-
նեաց օդոյն, հալէ զցօղ եւ 'ի ներքոյ, վասն զի է սառնամա-
նիք պաղի, եւ յայնժամ նոյն լինի: Իսկ անտի եւս յորժամ
վերանայ, 'ի չորրորդն, փառի հրովն, եւ ցոլացեալ թռչի,
իբրեւ զաստղ երեւեալ: Նոյնպէս եւ լոյս արեգական արդա-
րութեւ, 'ի ձեռն միջնորդութեան, մարմնոյ, եւ արեան խո-
րոյ, երկրպագելւոյ, զհողեղէն բնութիւս վերացուցանէ,
եւ բարձրացուցանէ յերկրէ, * եւ մերձեցուցանէ 'ի կամարս * Կո-
լուսեղէնս, յայնժամ ծայլին հրովն եւ լուսապայծառ լու- [illegible]
սովն փառի, եւ ամենեքին նման նմա լեալ, ցոլայնոյ լուսա- [illegible]
փայլեալ, որպէս * յայնժամ արդարքն ծագեսցին իբրեւ զա- * Մատ.
րեգակն յարքայութեան երկնից: Եւ թէ * 'ի ժամանակի այցե- 13.43.
լութեան իւրեանց, պայծառասցին: Եւ թէ * ով է սա որ եր- * Իմս.
եւալէ, իբրեւ զառաւօտ, գեղեցիկ իբրեւ զլուսին, ըն- 1.6.
տիր իբրեւ զարեգակն. իբրեւ զհիացումն կարգեալ. քանզի * Երգ.
բնութիւն հրոյն, յորս մերձենայ նման ինքեան առնէ, եւ Երգ.
եւ որք մերձենանն, նմանապէս լինին: Այսմ օրինակ ասաց 6.9.
Տէրն, * հուր եկի արկանել յերկիր, յաղագս այսպիսի ներ- * Ղկ.
գործութեան, որ ինքեան նմանեցուցանէ, ըստ այնմ թէ 12.49.
* նման նմա լինելոց եմք, եւ թէ * որ մերձենայ 'ի տէր մի հո- * Յհ. կթ.
գի է: Եւ թէ * հաղորդութիւն ունիմք ընդ նմա, եւ արիւնն Յիսի 3.2
որդւոյ նորա, սրբէ զմեզ յամ մեղաց: Զօրձեալ լոյս ա- * 1. Կոր.
րեգական միացեալ եւ միաւորեալ, ընդ օդոյն, միջնոր- 6.87.
դութեամբ նորին, կարէ տեսանել աչք մեր, զպայծա- * Յհ. կթ.
ռութիւնս էակին: Այնպէս եւ 'ի ձեռն միջնորդութեան 1.7.
մարմնոյ եւ արեան կենարարին, եւ լուսով ածութեան նո-
րա, որ անմիջաւորէն միացեալ եւ միաւորեալ ընդ նո-
սին, կարեմք տեսանել զակն էակին: Նմանապէս երրոր-
դութեան, եւ զամենապայծառ ածութիւնն, եւ զմիայնել նո-
վա՛

*Յհ.կթ. վաւ: Մնայ նմ* տեսանելոց եմք զնա, որպէս և էն: զոր օրինակ
3.2. եւ ես Երջանիկ նախավկայն, զփառս ամենափառին * ծնունն,
*Գործ. և լցաւ եօթնարփեան հոգւովն: Նմանապէս, և ամենատր-
7.55. բաղանն Պօղոս, յետ անձնաւ ծածկելմանն սլացաւ յամե-
*2.Կոր. նաս յանծութիւն և * լուաւ զբանս անճառս զոր ոչ լեզու
12.4. մարդոյ բաւէ ճառել, և կամ պատմել:

## Գլուխ Ը:

Ցուցք ԲԵ Սրբազան Հայրապետին, Խոյրյն Գրիգորեան 'ի Բոսոնից կուլին:

Եւ արդ՝ ամենազօրութ բարերարողն և արարիչն զամ
ենայնս զոր ինչ և գործեաց, ըստ կարգի բնութեան
եցոյց: և կատարեաց: Նոյն ամենագործ 'ի չարիս, ըստ
բնութեան շարժեցաւ, ընդ անմեղագործն նախաստեղծին: զի
զկամս թէ այլով իւիք ոչ հաղորդի և բնութեամբ միանայ ըստ
ինքեան, և զուգեալ միայն ընդ իւրոյ չարութեան՝ զմարմնոյ
զկերպարանութին արգելեալ: զի զկամս զոր ինչ և ուստ փո-
խարկի 'ի մարմինն: Նորոյ բազմապատիկ հայթայթանօք զոյն
գործեաց, չարութեան իւրով, և զամենայն նմա զուտեալսն,
և ճաշակելին, ուստի խոկոյն փոխարկեցաւ 'ի մարմին նը,
և զգայ զշարն, և զամսթալի մեղքն, և անօրէնութեան
տարածեցաւ 'ի բնութիւն՝ և ծնեցաւ յամ ծնունդս նր:
Նորոյ և արարիչն եւս, ըստ կարգի բնութեան շարժեցաւ,
'ի զութ. և յողորմութիւն, ըստ սաստի Ճշմարտութեան
բարձրին: Ոչ որ նա տեսանելով զգա խաբեալ, յօժն՝ և
առ սակաւ սակաւ 'ի սիրան հասանելով վարժապետի բնակա-
նանէ, վասնորոյ փութապէս ջերմագործ զկամն, և զայն
բուժիչս մատուցանելով ախտացելոյն, և թէպէտ ծամեալ
ազատէ: Նոյնպէս և Ճշմարտութեան բժիշկն Յս, տեսեալ
զբնութիւն, ծածկեալ ցաւիք օձին մարդեալ, Բնու-
թիւն միացաւ ընդ բնութիւն. և եղև կատարեալ, 'ի մար-

Բն

Միոյ և յարենէ, և զնոյնս փութեամբ 'ի մանկոյց, օձահար
բնութեան՝ յորմէ ճաշակեալ սթափեցաք 'ի սատանայականէն.
և եղև դեղ կենաց և անմահութեան: Օրինակ 'ի ճաշակմա-
նէն յայնմանէ, մահացուցանելով 'ի բնութիւն. ըստ այնմ
* յաւուր յորում ուտիցես մահու մեռանիցիս. և թէ * Նախա- * Ծնն.
ծու եմուտ մահ յաշխարհ: Որպէս և 'ի ճաշակմանէս 2. 17.
յայսմանէ, կեանս եմուտ 'ի բնութիւն, ըստ այնմ որ ուտէ * Իմ...
'ի հացէս յայսմանէ, կեցցէ յաւիտեան, և թէ * որ ուտէ 2. 24.
զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտե- * Յհ. 6.
նականս: Եւ յաղագս այսորիկ աղաղակէ մարգարէն, ճաշա- 52.
կեցէք զՏէր զի քաղցր է: Ահա զի ճաշակմամբն այնու,
մերկացաւ բնութիւն 'ի լուսոյ, և բնակեցաւ ընդ խաւար
ըստ այնմ * ասացի խաւար ուրեմն ծածկեաց զիս: և թէ * Նս- * Մտ.
տէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու, և զի բնակեցայ 15. 11.
ես 'ի վրանս կեդարու: Եւ այսու ճաշակմամբս, շնորհե- * Եփ.
ցաւ զերագանց լուսոյն աշխարհի՝ ըստ այնմ * էր լոյսն ճըշ- 5. 1.
մարիտ, որ լուսաւոր առնէ զամ մարդ եկեալ յաշխարհ, * Յհ.
և թէ ես լոյս յաշխարհ եկի, որ գայ զկնի իմ, 'ի խաւա- 1. 9.
րի մի մնասցէ, վասն որոյ և գոչէ մարգարէն, ճաշակեցէք ըզ-
Տէր զի ընդ լոյս փայլեցէք, որ և նա լոյս է: Յայսու ճաշակ-
մամբ, ծանեաք * զմեղս և զանօրէնութիւն ողբալիս, և ողոր- * Սղ.
մելիս, ըստ այնմ * լռեալ զձայն քո և երկեայ, քանզի մերկ էի, 118. 11.
և թաքեայ՝ և ծածկեցաւ տերևով. և թաքեաւ ընդ ծառով * Ծնն.
և յայ և հրեշտակաց նորին եղև ողորմելի. և զարշելի: 3. 10.
Իսկ այսու ճաշակմամբս, ծանեաք զՔս, լուսեղծող, էա-
ցուցիչ, և գոյացուցիչ ամի: Ըստ այնմ * ծանիրուք և տե- * Սղ.
սէք, զի ես եմ Տր, և թէ * ծանեայք զՏր, մանաւանդ 5. 1.
թէ ծանուցայք նոյ յայ, և զնոյն ինքն փրկիչ, բնութեամբ * 2 Օրէն
մարդկային, և ծածկեցաք ընդ թևովք նորայն, փոխանակ 32. 1.
ծառոյն, ըստ այնմ * տարածեաց զթևս իւր և ընկալաւ զնա, * 2 Օրէ-
'ի ծառոյ խաչին, նա է տերևովք ծածկեալ թշուառալի, նյ. 32.
և ճաշակողքն այսու հովանեաւ Ընծաշնորհի: Այսորիկ 11.
առէ ճաշակեցէք և տեսէք զՏր, զի քաղցր է և ամենաբարի:

Նայ

Նոյն չարչարանք վճռին մահու, և այսու չարչարանօք
* Յհ. կեանք հոգւոյ, յայնժամ * զբանսն զոր ես խօսեցայ յաղագս
6. 64. չարչարանաց այսորիկ, հոգի է, և կեանք, յաղագս այսորիկ
ասէ, Չարչարեցէք. վասն զի այնու չարչարանօքն, արտաքսումն
* Ծնն. փառաւորութեան վայելչութեանցն, յայնժամ * հանեալ արձակեաց
3. 23. զնա ՚ի դրախտէն, և այսու չարչարանօք, վերստին մուծու-
* Ղկ. մին, յայնժամ * այսօր ընդ իս լիցես ՚ի դրախտին. վասն որոյ ասէ
23. 43. Չարչարեցէք: Նոյն չարչարանք, մերկացումն լուսեղէն
* Ծնն. փառացն, յայնժամ * ով պատմեաց թէ մերկ ես, և այսու չար-
3. 11. չարանօք զգեցումն, յայնժամ * հանէք զպատմուճանն զառա-
* Ղկ. ջին, և ագուցէք նմա. և թէ, * ցնծասցէ անձն իմ ընդ զգե-
15. 22. ցոյց ինձ հանդերձ փրկութեան, և պատմուճանաւ ուրախու-
* Եսյ. թեան, Վասն այսորիկ ասէ, Չարչարեցէք և տեսէք, զի քաղցր:
61. 10. Նոյն չարչարանք զրկումն ժառանգութեան և արքունական
փառացն՝ և այսու չարչարանօք դարձեալ շնորհելով զնոյնն,
* Ղկ. յայնժամ * տուք մատանի ՚ի ձեռս նորա, և թէ * ինչ որ իմ քոյդ,
15. 22. զի եղանէ յառաջատուն, և ցնծայ որպէս հսկայ ընթանալ ըզ-
* Սղ. ճանապարհս իւր: Նոյն չարչարանք հարկանումն գարշա-
18. 6. պարին, և գայթակղութիւն ոտին, յայնժամ * նա բախեսցէ
* Ծնն. քում զգարշապարին, և այսու չարչարանօք կօշկաւորեալ յայ-
3. 15. նժամ թէ * տուք կօշիկ յոտս նորա. և թէ * զի գեղեցկացան
* Ղկ. գնացք քո, կօշկօք, դուստր Նադաբայ. և թէ * ետու ձեզ
15. 22. կոխել զօձս և զկարիճս. և զամ զօրութիւն թշնամւոյն. վասն
* Երգ. այսորիկ ասէ Չարչարեցէք: Նոյն չարչարանք, քերովբէից
7. 1. պատուիրեցաւ՝ պահել զճանապարհս ծառոյն կենաց, բայց
* Ղկ. այժմ, հրամայեաց քերովբէից, և բոցեղէն որոյ շուրջանա-
10. 19. կաւ, պահել զճանապարհս ծառոյն կենաց, և այսու չար-
չարանօք, շնորհեցաւ՝ ծառն կենաց, որ էր խաչն: և պտուղն
անմահացուցիչ, ուրախարար, զուարճարար, և զուարթարար:
որ ՚ի վերայ նորա կախեցաւ՝, և մատուցաւ մեզ ուտել: և
ըմպելի զկենսատուական մարմին, և արիւն պարարտական, բայց
* Ղկ. այնժամ * ածէք զենէք զեզն պարարակ. կերիցուք և ըմպեցուք,
15. 23. և ուրախ լիցուք. զի որդիս իմ կորուսեալ որ էր. բժշկութին
մարդ

մարդկային, ճաշակմամբն ՚ի դրախտին, մեռեալ էր, այսու
ճաշակմամբս. եկեալ, կորուսեալ էր, և գտաւ: և բացաւ
քրովբէական դուռն: ըստ այնմ* բացաւ ինձ զդրունս ար- *Սաղմ.
դարութեան, զի մտից ընդ այնոսիկ և խոստովան եղէց Տն: և 112.19.
լծէ *նոյն դուռն, ընդ իս եթէ ոք մտցէ, և կեցցէ, և յա- * Յհ.
ղագս այսքանեաց պարգևաց ասէ, ճաշակեցէք զՏր: Այնու 10.9.
ճաշակմամբ, խառնեցաւ հայրն երկնաւոր. և ոչ ևս յաւել
խօսել, ընդ մարդկութեանս զի ընդ ամենեսեան բանն խօսէր,
ընդ նահապետսն, և ընդ մարգարէս, առակաւ և օրինա-
կաւ, որպէս հիւր ընկալութիւն Աբրահամու, յոր ասաց
* եղէց որդի սառրայի, և * գտանի մարտին ընդ Յակոբայ, որ *Ծնն.
նշանակէր զբռունն հարկանումն, ՚ի բնութենէս ադամայ, 18.10.
և միացումն ընդ Այ, և երևումն ՚ի մարմնաւորն. զխոր- *Ծնն.
հուրդ մարդեղութեան եցոյց, * որպէս հուրն ընդ մորենւոյն 33.24.
միաւորեալ, ոչ այրէր, նոյնպէս և Բն ընդ մարդկութեան *Ծնն.
միացեալ ոչ ծախէր: նոյնպէս և ընդ * կուսութիւն, զեղեգնին, 3.2.
և զայլս: Իսկ մարգարէիցն բանիւ ցուցանէր, բանն զան- *Դւթ.
օրէնութիւն իւր, մինչև ՚ի յորդանան: Իսկ յորժամ սր- 6.37.
բեցաւ մարդկութիւս միացմամբ ընդ բանին Այ, լուաց-
մամբն յորդանանու, յայնժամ հաշտեցաւ, և փակեալ դը-
րունս ընդդէմ բնութեանս երկնից եբաց, ըստ այնմ * ահա բա- *Մտթ.
ցան երկինք, և աղաղակեաց դա է որդի իմ սիրելի: Զայս 3.16.
ձայն, ոչ միայն ՚ի վր էակից բանին էջ, որ յար և յաւէժ
էր որդի իւր սիրելի, այլ ՚ի վր մարդկութեան. որ անբա-
ժանապէս էր միացեալ, ընդ Ածութեան: Զի մին ՚ի դր-
ախտին խօսեցաւ, ուստի անէծս բարբառեցաւ: Իսկ եր-
կրորդ աստ, ուստի օրհնութի արտաբերեցաւ: և ընդ բը-
նութեան հրաշափառեցաւ: Իսկ այնու հետև, ոչ ևս ՚ի բա-
ցեայ եղեցուք ՚ի ձայնէն, անհնօրհնեալ: ըստ մարգարէու-
թեան, եղիցի ձեռն ՚ի վր առն, աջ քո ՚ի վր որդւոյ մարդոյ,
զոր զօրացուցեր զնա ՚ի քեզ: ոչ ևս ի բացայ եղիցուք մեք ՚ի
քէն, կեցուսցես դու զմեզ, և զանուն քո Տր կարդասցուք:
Արդ՝ այսու յայտ առնէ, թէ ՚ի բաց ընկեցեալ էաք, յոր

հօ

Հօրէ, և որպէս ընծեցեալք 'ի սիրոյ նորա։ այլ յորժամ ձեռն նորա, եղև շաղկապեալ, միացմամբ ընդ բնութեան, և միաւորեցաւ յարգանդին, անձն Աստուծոյն, և առեալ յարենէ, անարատուհւոյն, կազմեաց այր կատարեալ, և եղև աջն Հօր, միաւորեալ ընդ որդւոյ մարդոյ. և զօրացաւ որդին մարդոյ, միացմամբ ընդ որդւոյն նոյն ընդ բնութեան. Ա-այնու հետև, ոչ ևս 'ի բացեալ եղիցուք մեք 'ի նմանէ. նա զմեզ կեցուսցէ, և մեք զանուն նորա կարդասցուք՛։

---

Գլուխ Թ։

---

Յաղագս թէ ձեռնն էր՝ աջ Հօր էր ասացեալ 'ի սրբոց մնացն, և յետոյ և ձեռն շուրջ, և համբարձմամբն աջ և ձեռնն. և յետոյ՝ ձեռնն ուրոյ։

---

Զի աջէ Հօր, էակից որդին իւր էակցին որ ծնաւ 'ի կուսէն մարդկութեամբ, ըստ ասելոյն առաքելին և մայր կենաց, աջոյն ծնող Հօր միածին։ Զի որպէս աջ մարդոյ և ձեռն նոյն բնութեան ունի մարմնոյ, նոյնպէս և աջ և ձեռն Հօր, որդին իւր, նոյն բնութեան ունի Հօր, զի զամ զոր ինչ և առնիցէ 'ի նմանէ ընդ գոյացականին, առի և 'ի նմանէ, բայց 'ի յատկութենէն, զի այսու զանազանին, զի ձեռն ոչէ բոլոր մարմին, և բոլոր մարմինն ոչէ ձեռն. նոյնպէս և ծնութեան, զի որդին ոչէ Հայր, և Հայր ոչէ որդի։ այսու յատկութեամբ զանազանին, և այլու ամենայն համ և նոյն, հաւասար և համագոյ։ Զի թէպէտ որդիութեան, կարի և յոյժ, համբնութեան ցուցանէ ընդ Հօր, և նոյնութեան, սակայն ընդ գոյացականին, զի բնականէ որդ նմա, և կենդանի որդ և նմա, բայց աջ և ձեռն, ընդ պատահականին ևս առնանի. Զի ընդ քանակին իւրէ առել, զիծ, մակերևոյթ՝ և մարմին, որէ քանակ շարունակ, և ընդ որակին կարմիր, կամ ըսպիտակ, և ընդ ուրեն, թէ ուրէ ձեռն, թէ 'ի մարմնի իւրէ. և կոյն որէ տեղին, 'ի մարմնոջէ, և ընդ երբին. թէ երբէր ձեռն և աջ

առի

առ համանդամայն մարմնով. զի ոչ էր ժամ, յորժամ էր
մարմին թարց ձեռին, և անդրադարձաւլէս: և ըստ առնլոյն,
զոր ինչ առնէ ձեռն, անկարելի է թարց մարմնոյ առնասցէ,
և ըստ կրելոյն անչնարինէ առանց մարմնոյ կրեսցէ: զի համ-
անգամայն այսոքիկ. ըստ միաւորութեն, և ոչ միով ևեթ յետ
և յառաջ: Որպէս և յանձութին պարտ իմաստասիրել.
վասն այսորիկ երկանիկ մարգարէս, ծնիցելոյն այլ, և ձեռն ա-
սէ: թէպէտ այլ էր բան և որդի և այլ ինչ առեն: Իսկ յոր-
ժամ այս այս և ձեռս, միացաւ ըստ մարդկութեն, և համա-
բընութեանպէս մի որդի կոչեցաւ առացաւ և անուանեց-
աւ, յայնժամ հաստեցաւ հայր, և աղաղակեաց 'ի վս սըր-
բոցելոյն, դաւ որդի իմ սիրելի: Իսկ զի բնութիւն որ հաս-
տութեան ուրախութի հեռեխ. յնծութի և պարերգութի:
Մնորոյ և հաշտութեա այսորիկ, հեռեեցաւ զենուին պա-
րարակն. ուտել և ըմպել նմին. ըստ այնմ լուաւ զձայն
երգոյ և պարուց, և թէ կերիցուք և արբցուք: Իսկ յա-
ղագս այսպիսի ուրախութեա և պարուցս որ զենմամբ այն-
ու եղև, և ձայնակցեամբ պարարակին, զոյգ մարգարէն, առ-
ագգս և բնութիւնս. ձայնակին: Մարձեալ յաղագս այնո-
րիկ այլ և ձեռն առացաւ, յանծնիցելոյն, զի համագո-
յութին, և համաբնութին, յայտնեսցէ, և զանազանու-
թին գործոյն, զզանազանութի անձանցն, որպէս և մեր.
զի զոր ինչ այլ և ձեռն մեր գործէ, թարց մարմնոյ ոչ գոր-
ծէ, և զոր ինչ մարմինս մեր գործէ, թարց ձեռին, և ա-
ջոյն ոչ գործէ. ևեւս թարց միմեանց ոչինչ. սապէս իմաս-
տասիրելի է, և յանծութին: Զի զոր ինչ որդի գործէ, հա-
մանմանս հոր գործէ, ըստ այնմ * զի զորնայն առնէ, զնոյն և * Յհ.
որդին նմին նման գործէ. և թէ * հայրիմ մինչև ցայժմ 5.19.
գործէ, և ես գործեմ: Զի հանձութի մարմնանալոյն էր * Յհ.
հաւասար 'ի հայր և յորդի: Բայց մարդ. լինել միայն որ- 5.17.
դւոյն գործ, ըստ այնմ թէ * բանն մարմին եղև: Իսկ զոր ինչ * Յհ.
և գործէ որդի, հայր գործէ, ըստ այնմ * հայր որ յիս է, նա 1.14.
գործէ զգործսն, և այսպէս համաբնութի և զանազան ան- * Յհ.
ձամբ 14.10.

ճամփ իմաստասիրեն, և մեզ ընծեռեն: Վ՟ այնորիկ ով զնա-
տեսն Հօր, զի զոր ինչ Հայր գործէ որդւով գործէ, և զոր
ինչ որդին գործէ Հայրը: Իսկ արդ՝ որդին Համութը Հօր
միացաւ ընդ մարդկութիս և եղև կատարեալ 'ի մարմնոյ և
յարինէ, և ետ մեզ զայն կերպակուր և ըմպելի, որ է՟ միա-
թե՟ ա՟ծութեան էր միաւորեալ, զի նովաւ միաւորեսցէ ըզ-
մեզ, է՟ կենդանի ա՟ծութեան. վ՟ այնորիկ ասայ ճաշակեսցէք:
Օ՟ այնքանէ զօրութի ճաշակմանս այսորիկ, մինչ զի ըզ
խաւարեալս լուսաւորէ. քանզի սրբաշամն այն մարմին և
արիւն, է՟ լուսոյ արեգականն արդարութեան է միացեալ և
միաւորեալ, և ունի սաստկագոյն զլոյսն, զորօրինակ միա-
ցելոյ է՟ Հայելոյ, լուսոյն սաստկագին քան զարեգական ե-
րեփ տեսողացն: Օ՟ լոյս արեգական, առ սակաւ մի կարելի
լինի տեսողայն, այլ է՟ Հայելոյ միացելոյ անհնարին. և յոր
վայր ծկլիցի Հայելեաւ զլոյսն, ա՟մ նսեմութիւք, և խա-
ւար տարաբաժնի. և 'ի ձեռն միջնորդութեան Հայելւոյն լու-
սաւորի տեղին: Նոյնպէս և կենդանարար մարմին և արիւնն
որ միացեալ է՟ անկնաՀեալ ա՟ծութեան. և միացեալ է՟ ան-
ճառելի լուսոյ նո՟ր, և յորս Հասանի լուսաւորէ, զխաւար և
զնսեմութիս բառնայ. և այնքան ջերմացուցանէ, մինչ զի
և վառէ. ո՞րէ տեսանել յակնոլիկն, զի յորժամ լոյս ա-
րեգական է՟ նմա միաւորեալ, արկցի 'ի վերա աւեր, կամ
'ի վր՟ կտաւոյ, առ սակաւ սակաւ ջերմացմամբ վառէ. զի
լոյս արեգական, նախ ընդ ակնոլիկանն միացաւ Համան-
գամայն, և ապա վառեցաւ նիւթն: Նոյնպէս և ա՟ծն բանն,
նախ է՟ մարմնոյ և արեան միացաւ զոր առեալ յանարատա-
Հւոյն, և ապա է՟ նիւթս զորս վառեաց. քանզի յլինել յմ՟ջ
բանին, յարգանդ յամէն երանուհւոյն, խաղոյն առեալ յա-
րենէ նր, և բաղեղծեալ Հոգւոյն բանական Համանգամայն և
միայնոյ է՟ ա՟ծութեան, և ոչինչ առանձին եանց՝ է՟ միացման
երկուսոյն, այլ Համանգամայն եղև, և կատարեցաւ, որպէս
լոյս արեգականն ընդ ակնոլիկանն, և ապա յայնմանէ
եանց 'ի մեզ լուսաւորութիւն, և վառեաց լուսով ա՟ծութեան

'ի

՚ի ձեռն միջնորդի մարմնոյ և արեանն իւրոյ, և բուժելիցէ զմեզ յանցանս և զմեղս մեր, որպէս ճաշակմամբն․ վասն այնորիկ ասաց, ճաշակեցէք և տեսէք զի:

## Գլուխ Ժ:

Յաղագս եւ զանազանութեանց ՚ի ճաշակման, Սրբոյն Հաղորդութեան:

Եւ զի զանազանութիւն ՚ի ճաշակումն, զի են որք ճաշակեն, և պայծառանան, և են որք ճաշակեն և նըսեմանան․ զի որք մաքրութեամբ, լուսաւորին, և որք ոչ՝ խաւարին․ և այս եւս ը բնութենէ շարժումն․ քան զի ակն մարդոյ յորժամ մաքուր է յամ աղտոյ՝ ինքեան ընդ լուսոյ արեգական միաւորի, պայծառանայ, ախորժէ ՚ի տեսութիւն, լուսաւորի ընդ հայեցումն, և զամ զորինչ և տեսանէ, խնդայ ընդ՚նա, ցնծայ և զուարճանայ ընդ նայելն: Ապա եթէ բծոտեալ իցէ․ յորժամ հայիցի ՚ի լոյս արեգական, լոյս աչացն նուազի, ջուր յախանցն ՚ի վայր հոսի, ցաւն սաստկանայ․ և ուժգնակին նեղէ, մրմռեցուցանէ, զկծեցուցանէ, յորս և հայի, նեղի, և դառնանայ․ տրտմի, և տխրի, ծածկէ զաչսն, զի մի տեսցէ զլոյսն․ փախչի ՚ի լուսոյն, սիրէ զխաւարն, և նսեմութեամբ ծածկէ զլոյս աչացն, զի մի միաւորիցի ընդ լուսոյ արեգականն: այլ թէ յարկիցի յինքենէ․ և կամ յայլմէ յումեքէ, յանդիման լինիլ լուսոյ արեգականն․ ՚ի սակաւուն եւս վնասիցի: Այսպէս իմաստասիրելի է, և յաղագս մարմնոյ և արեան կենարարին, յորում միացեալ անճառելի լոյս արեգականն աստուածութեան: Եթէ ոք սրբութեամբ․ և մաքրութեամբ մերձենայ․ ՚ի հաղորդութիւն և ՚ի ճաշակումն, պայծառանայ ընդ նմա: շողշողի, փայլփայլի, վառվառի: ջեռանի, խնդայամիտ, ցնծայ, և զուարճանայ: վ՟ն զի պատկերն՝ տիպն, և նմանութիւն․ ընդ նախագաղափարին միաւորի, և միանայ: Եւ զամ զոր ինչ

և

և գործէ, և տեսանէ լուսովն այնորիկ. մաքրափայլապէս տեսանէ, և 'ի կիր արկանէ, և ընդ նմին ու բանիւմնայ, ընդ այն ուրախ արարեր զիս Տէր յարարածս քո. և 'ի գործս ձեռաց քոց ցնծացայց: Որ և եղև և կատարեցաւ առ սըրբազգն մետասան առաքելոյն: Ով որք ճաշակեցին սրբութեն և մաքրութեն ընդ նմս իւրեանց, 'ի նը վերնատունն, այնքան պայծառացան, և բացափայլեցան, մինչ զի և յինքեանց սրտափայլեցին զլոյսն անճառելի, 'ի նսեմացեալ հոգիս հեթանոսաց. և լուսաւորեցին բնաւ զտիեզերս նմ. և հուրն եւ 'ի վիմախոր տապանէն, ծածկեալ ձմռապայծառն հայրական, որք հուրն զլեառն բարձրացեալքին հոգւով, և մարմնով, և մօրք, նախ 'ի վն ինքեանց սրտափայլեցաւ ճաճանչ լուսոյ սրբոյ երրորդութեն, և ապա նոքօք զվայրսն նմ, որքէն հոգիք հաւատացելոցն. քանզի այնքան որքեալքէին, ճաշակմամբ կենարարին, մինչ զի յոյնժ ուսուր քանիցս այլանման զ յորդեալն տեսին, և լուսափայլ յարութեն նր արժանաւորեցան, և զուարթնոցն համախորհրդեցան. և զսուրբ քառասունն հաղորդէին ը՛նմա, 'ի բեկանել հացին. և ընդ այլ վայելչութիւս: Ով այս խորհուրդ սիրոյ խորհուրդ, որք սիրով ճաշակմամբ ը՛նմա միաւորեալ քէին, և ես տհեցան 'ի հանդիսանալն, և իշխան նծ հոգւոյն արժանաւորեցան զգեցման, և տեսլեան. մինչ զի և հրեղէն լեզուօք և անմահական բաժակաւ, մխիթարեցան, և տուն և տեղի ամենայն երրորդութեն յօրինեցան, և շինեցան: Իսկ յուդայ որ ը՛նմ ճաշակեաց, և հաղորդեցաւ 'ի կենդանարար մարմնոյ և յարենէ որդւոյն նյ. 'ի նը վերնատունն ը՛ քմի, խոյսն ը՛ հողորդէին, փոխարկեցաւ 'ի ներհակն կողս, և փախեաւ 'ի նա սատանայ, ոչ 'ի սրբազնան նը հոգւն նծ, ը՛ այնմ մերկացաւ յինքենէ ըզ նծայինն նը հոգին, և զգեցաւ զսատանայ որպէս հանդերձ արկանել զիւրեաւ, և որոշեցաւ 'ի դասուցն լուսեղինից. և ել արտաքս 'ի խմբիցն լուսաւորմից. ըստ այնմ, և յետ պատառոյն, ապա եմուտ 'ի նա սատանայ, և էլ արտաքս

վաղ

փողփողակի, և եղև մատնիչ տն Յսի։ և ընթացաւ առ-
քահանայապետսն փողփողակի՝ և առեալ շղթայս գլխո-
րացն պեղատոսի՝ և ժամանեալ փոյթ ընդ փոյթ, ՚ի ձորն
կեդրոնի, և ետ նենգութբ ողջոյն ընդ փարգայեսին, և
նց կալեալ մուծին ՚ի տուն քահանայապետին, և անդուր
ակամայից հայհոյէին, և այնպիսի ձաղանօք հալածէին,
մինչ ՚ի խաչն բարձրացուցանէին, և այս ինքն գինըն իւր-
ամէ խեղդամահ լեալ* փորն հերձեալ նշաւակ եղ աշխարհի։ *Գործ. 1. 18.
Եւ այս ևս ըստ բնութեն եղև շարժումն, որ միանոյն իր՝,
ոմանց լինել ախտից բուժումն, և ոմանց ՚ի ներ ածումն
ախտի, և երկնային ցողոյն խմտուասերի, զի սաղոմն ա-
ռեալ, պատուական մարգարիտ կազմէ յորմէ լինի ՚ի բժշկա-
կան արուեստից դեղ ցաւոց՝, զի պատուական մանձուն
նախա կազմի, և բուժիչ ցաւոց լինի, և հիւանդութեց։
Իսկ օձն առեալ զնոյն ցօղն, մահացուցիչ թոյն կազմէ,
՚ի վնաս եւ ողջութեց, և կենդանութեց։ ուստի լինի
դառնագոյն մահ, և մահացուցանէ ընդ որս և հաղորդի։
Այլ թէպէտ ցօղն այն, բնութբ է բարի, բայց ՚ի չարին
չարագոյն չար լինի։ Իսկ ՚ի բարինն բարեգոյն բարի։ Եւս
և լոյս արեգական, թէպէտ բնութբ է բարի, բայց սակայն
բժշտեալ աչացն, յոյժ ատելի է չար։ Իսկ մաքրագոյն
աչացն, յոյժ ցանկալի, և պանծալի։ Այսպէս և կենդանա-
րար մարմին և արիւնն Քի, թէպէտ բնութբ է բարի.
բայց ՚ի չարագոյնսն. և յանմաքուրսն լինի վնասելի։ Իսկ
՚ի բարեգոյնսն, բաղձալի, և պանծալի բարի։ Եւ այս ևս
ըստ բնութեան շարժումն։ քանզի անձրև հեղեալ յերկ-
նից. բնութբ է բարի, իսկ յարբեցեալսն զանազանի։ զի
ծառոց ոմանց արբեալ բաղցր պտուղ ՚ի նմանէ յարաբե-
րին։ Իսկ յոմանց արբեալ դառնագոյն պտուղ մեզ երև-
եցուցանեն։ ընտանի թզենի արբեալ քաղցրագոյն թուզ
բերէ։ Իսկ ժանտաթզենին դառնագոյն, և զայլս այսպէս՝։
ոմանք յեակայ ընկալեալ. բուժիչ ցաւոց. և մահաբեր
ախտից շնորհեն, և ոմանց ընկալեալ, մահու առիթ լինին։
Եւ

Եւ այսպէս զանաչառութիւն, յընդունողսն, և ոչ ընկա-
լեալն երևի: Այսպէս մարմին և արիւն կենարարին, ըստ
ինքեան բնութեն բարի, իսկ յընդունողսն զանազանի: ոմանց
լինի կենաց առիթ, ոմն որպիսազանիցն գնդից՝: և ոմանց մա-
հու ոմն յուդայ՚ին, և առաքեալ ես բացատրէ, ասելով.
վասն այնորիկ են ՚ի ձեզ բազում՝ հիւանդք. և ախտաժետք:
և շատ ես այնեն, որ ննջեցինն, և եթէ մաքրագործու-
թբ զմեզ քննէաք, ապա ոչ դատապարտէաք: Վասն այնորիկ
պարտիմք քննել զմեզ ամ զգուշութբ, և ապա զամենահա-
կանն զայն ճաշակս ճաշակել:

## Գլուխ ԺԱ:

Յաղագս թէ հաւատարմօք՝ պարտի ճաշակել. զսրբազանն խորհուրդս:

Իսկ թէ ոմն արասցէ ճաշակել, ԱԾ պատուէ զհանգա-
մանս երանելոյն Պօղոսի, մի ըստ միոջէ: Նախ ասէ
բաղարջ լիցի, և ոչ խմորուն, զի բաղարջ զամբծութին ան-
ձին նշանակէ, որ ամ առաքինութբ զարդարեալ լիցէ, և
ոչ լիցէ խմորեալ ՚ի բանսարկուէն զանազան ախտիւք: այլ
թէ յարկածից չարին խաբանմէ ինչ յանցեալ լիցէ ըստ
մարդկութեն տկարութեն, յետ այսր ասէ զայն ՚ի տանէ
իւրմէ: այսինքն յանձնէ իւրմէ: զղջմամբ, խոստովանու-
*Ելք. թբ, և ապաշխարութբ,* զի որ խմորեալ լիցէ ուտիցէ, սա-
12·15. տակեսցի անձն այն յիսրայէլէ: Որ ասէ բաղարջ ընդ եղեգի:
զի եղէգն զդառնութի ապաշխարութեն նշանակէ: զի
խորհրդաւոր մարմինն Քի զխնկագոյն մարմինն Քի
ճաշակէ: Որ ոմն խնկագոյն մարմինն Քի ՚ի բաղարջ
հացէ կազմի, որ նշանակէր զԱԾութեն նորին և զամբծու-
թին, որ անբիծ կուսէ յորենէ առեալ, կազմեաց բանն ԱԾ
զիւր մարմին, և զայն բաշխեաց անբծացեալ եկեղեցւոյ
իւրոյ, այսինքն ընտրեալ դասուց առաքելոցն իւրոյ: նոյն-
պէս

պէս և այժմ զնոյն ճաշակողացն զնոյն պատուիրէ. թէ մի խմորեալ ուտիցէք, զի խմորեալն ոչ է խմորեալ 'ի մեղաց. ըստ այնմ* որ յանդիմանեսցէ զիս վ‾ մեղաց, և թէ *անօրէ- * Յհ · նութիւն ինչ ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն 'ի բերան 8 · 48 · նորա, և թէ ոչ *մեղք իմ և ոչ յանցանք, առանց մեղաց ըն- * Եսայ · թացայ, և ուղիղ եղէ: Երկրորդ պատուիրեաց, զի զմիս 51 · 9 · *գառինն, 'ի գիշերի կերիցեն, որ նշանակէ զկենդանալս, որէ * Սղմ · խաւար: քանզի լոյս 'ի գիշերի, յոյժ և կարի է սքանչելի: 18 · 5 · զի ամ՝ յորդորութեանց, լուսով պատրաստի զերծանիլն: Եւ * Յէլ · զի կենդանարար մարմին և արիւնն Ք‾ի է վառեալ յա- 15 · 6 · րարչական լուսով Ա‾ծութեն. ըստ այնմ որ լուսով Ա‾ծու- թեն քո լուցեր զճրագ մարմնոյ'դ, և թէ վառեաց զճրագ մարմնոյ լոյս աշխարհի, որով գտեալ զպատկերն իւրական, զոր նորոգեաց յառաջին կերպարան: Եւ այսու յայտնի է, թէ ամ՝ նորոգութիւնք, շինութիւնք, և գործք, լուսով լի- նին, և ամ՝ թշնամութեանց զգուշութիւնք, և պատրանաց, և գայթակղութեանց, և որ'ածից չարեաց տարաբարձումն, նոյնպէս լուսով յարաբերի: յաղագս այսորիկ 'ի գիշերի կենդանոյս շնորհեաց կենարարն. լուսով վառեալ զմար- մինն իւր', զի որք ճաշակեն լուսով նորին լուսաւորեսցին: Եւ առանց սայթաքանաց, 'ի պողոտայ կենդանոյս ան- վնասելի ընթանայցեն: Ամենորդին ասաց. *ես լոյս յաշ- * Յհ · խարհ եկի, որ գայ զկնի իմ ընդ խաւար մի գնասցէ, և 12 · 46 · երջանիկն ասաց, *եթէ ընդ լոյս գնասցեմք ո՞պ և նա լոյս է, *Յհ · կթղ հաղորդութիւն ունիմք ընդ նմա, և արիւնն Յ‾ի որդւոյ նորա, 1 · 7 · սրբէ զմեզ յամ՝ մեղաց'մերոց': քանզի այնքան բազմագութ- բարեգործ է, ո՞պ զսրբազան մարմինն իւր խառնեաց ընդ լուսոյ Ա‾ծութեն իւրոյ, ո՞պ լոյս արեգական ընդ յօդոյ, և արտափայլեաց 'ի թաբօր, և տարաբարձեաց ամ՝ խաւար', և նսեմութիւնք, սնութիւնք. և ժանգք ապականացուցիչք, բնութեան, ո՞պ ընդ երկաթոյ որ միացեալ էցէ հուր: Նոյն- պէս կամ եղև և 'ի մերձ տարրաբանութեան ճաշակմանցուցիչ- քըս զայսոսիկ, Ա‾ծային մարմնոյն իւրով: հաղորդութիւն,

և

և արտափայլել, ո՛չ նորայն 'ի թաքոյ: Սմայնորիկ լուսա-
փայլութիւն զայս որ է հաղորդութիւն մարմնոյ և արեան
*1 Կոր. իւրոյ, 'ի գիշերի շնորհեաց: ըստայնմ թէ * 'ի գիշերին յո-
12.23. րում մատնիւր. էառ հաց գոհացաւ, և ետ նոցայ և ասէ,
առէք կերէք այսէ մարմին իմ, նոյնպէս և զգինին, այսէ
արիւն իմ, քանզի լոյսն 'ի գիշերի պխտոյանոյ, և ոչ 'ի
տուընջեան: Սանայնորիկ կենարարն զանձառելի զլոյս
մարմնոյ իւրոյ, յայսմ կենցաղոյս շնորհեաց, որէ գիշեր և
խաւար: և յայնմ կենցաղոյ, նովաւ բացափայլեցին, և լու-
*Մատ. թացին ընդ յառաջ ոն: ըստ այնմ * յայնժամ արդարքն
13.43. ծագեսցին իբրև զարեգակն յարքայութեան երկնից:
*Ելից. Երրորդ հրամայեաց զի * խորովեալ ուտիցեն, քանզի խո-
12.9. րովեալ սրբեալ և ցամաքեալ է յամ աղտոյ փտտականաց. և
յապականչաց ջրոց, վասն այնորիկ ասաց խորովեալ. զի ճա-
շակողքն այսմ խորհրդոյս 'ի բաց մաքրեսցեն յինքեանց,
զպղծութիւնսն ջուրին, որէ բղխմունական ցանկութիւն,
և ցամաքեցուսցեն զանձինս, և ապա կերիցեն: զի խորով-
եալ լիցի: Իսկ վասն այնորիկ խորովեալ հրամայեաց. ուտել,
զի յիշեսցես զչարչարանս ոն. և նովաւ խորովեսցին և ապա
մատչիցին 'ի ճաշակումն: քանզի այնքան խորովեցաւ, չար-
չարանօք զառնոյն, իմիք խաչին, մինչ զի յոտից մինչև
*Ողբ. ցգլուխ չէր 'ի նմա առողջութիւն, ըստ այնմ ոյլ * անցա-
Եր.1. որք ճանապարհի դարձարուք. հայեցարուք և տեսէք, թէ
12. իցէն երբէք ցաւք, ըստ ցաւոյս լեալ, որք 'ի վն իմ հասին,
*Սղմ. և թէ * լցաւ չարչարանօք անձին իմ և սաղես զչարչարանս
87.4. անմեղ գառինն, լոյս իւրով 'ի մէտ ածել, յիշել, և մըտա-
խոհ լինիլ, և 'ի սիրտ և 'ի միտ իւր տպաւորել, և խորովել
և ապա 'ի ճաշակումն մատչիլ, զի խորովեալ լիցի:

Եւ ոչ հում ասաց. զի հում գազանք և պատառօղք ու-
տեն: Որդ՝ որք գազանացեալքեն, պատառելով զորբս և
զայրիս, զրկելով, յափշտակելով, կողոպտելով, կեղեքելով
մի ուտիցեն, զի հում ուտէ. այլ թէ զնմանութիւն ուտե-
լոյն բերիցեն յանձինս, ապա մատչիցեն: քանզի ընութիւն է

ոչխարին և զատլին, զոր ինչ ունի այլոց շնորհէ: զայրն, զկամն, զմիտն և զայլսն: ամ և զաւանս այս Այ. շնորհեաց զմարմինն և զարիւնն իւր աշակերտացն, և զհանդերձս իւր, որ էր զօր խաչողացն: զմայրն Յոհաննու, զջուր կողին 'ի լուացումն մեղաց մերոց: զհոգին 'ի փըրկանս, և զանձն 'ի գին, և զայլս: Նոյնպէս և որք ճաշակելոցնեն, յամի նման լինիլ պարտին: զոր ինչ ունենն այլոց հաղորդեսցեն, ըստ պատուիրելոյն Յոհաննու: հանդերձից, կերակրոց, և այլոց կարեաց: և զկեղոցն զինչս դարձուսցեն, զի մի բողոք նր առ Ած հասցէ, և փաղփաղակի յարեցէ 'ի վրէժ խնդրութի, ըստ այնմ վն առականաց աղքատին, և հեծութե ոնանկին, այժմ յարեայց ասէ տր: Նա տրն * ասաց ասեմ ձեզ փաղփաղակի արասցէ * Ղկ.
վրէժ խնդրութի, որք աղաղակեն առնա 'ի տուէ և 'ի գիշերի: Այլ ըստ զաքէի նախ հատուցանել, և ապա մատչիլ: քանզի յորժամ փրկիչն եմուտ 'ի տուն նր, ոչ ետ ողջոյն; ոպ պատուիրեալէր աշակերտացն, թէ յոր տուն մըտանիցէք, ասասջիք ողջոյն տանս այսմիկ, և ինքն ոչ ետ, քանզի զամ զորինչ և պատուիրէր, նախ ինքն առնէր, և ընդէր ասա ոչ արար, զոր ինչ և պատուիրեալէր, զի Ածային նախատեսութի գիտէր զնա, այլ յորժամ եկաց զաքէոս առաջի տն և ասաց, * տր զկէս ընչից իմոց տաց աղ- * Ղկ.
քատաց, և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին, յայն- 19. 8.
ժամ լուաւ թէ այսօր եղև փրկութի տանս այսմիկ: Նոյնպէս և որք հում ճաշակեն զգառնս ոչ լսեն թէ ողջոյն տանս այսմիկ, թէպէտ ընդունի զՅս 'ի տուն իւր, ըստ զաքէի: այլ յորժամ հատուցանէ զրկելոյն, յայնժամ լուիցէ այսօր եղև փրկութի տանս այսմիկ: Քանզի այն որ զինչ'ս այլոց ունի յինքեան, արիւն նր ունի յինքեան, և նմանի նա յուդայի սիմոնեան, որ ունէր զգինս որդւոյն Այ արեամն, և ճաշակեաց զմարմին և զարիւնն տէրունեան: և ոչինչ օգտեցաւ ընդունելոյն զՅս 'ի հրաւիրմանն, այլ տուն և տեղի եղև բնել զերողեան: Սոյնպէս

և

և որք նմանապէս ճշմարտին նման լինին նմա: մի ասիցէ այնպիսին, թէ ողորմութիւն տալով աղքատաց, զերծանի յայնմանէ, և կամ խոստովանութեամբ մեղաց գոչելով, ազատի: զի և յուղղայ արար, բայց ոչ զերծաւ, վ̃ այնորիկ հրամա-յեցաւ հում ոչ ճշմարտել, քանզի գազա-նաբարոյութենէ:

Եւ յուսելն ասէ, ոսկրն մի բեկանիցէք, այսինքն հեր-ձուածողական միոք. կամ բանիւ և կամ գործով: զի ուղ-ղափառութիւն է հաստատութիւն, որպէս կենդանւոյ գառին ոսկր'ն, զի որքան ոսկրն ոչէ բեկեալ, առանց սայթաքա-նաց ընթանայ, նոյնպէս և ճշմարտողն այսմ խորհրդոյ; որ-քան ոչէ բեկեալ հերձուածողութեամբ, ուղղակի ընթանայ, այլ յորժամ հերձուածողութեամբ բեկանեն. թիւրին. սայ-թաքին. և գայթակղին:

Ընդդէմ սխալմանն Արիոսի:

Քանզի և Արիոս, թէպէտ էր ի կարգէ ճշմարտողայն, սակայն ոչինչ օգտեցաւ, քանզի ոչ հաւատայր զորդի, ի բնութենէ հօր, համաբնութիւն, և համագոյ: Եւ կարի զարմանամ՝, ընդ տգիտութիւ սորա. թէ հի՞մ արդեօք ծը-նեալն ոչ ունիցի զբնութիւն ծնողին, ո՞ր որդին ծնեալ ի մարդոյ, որ ոչէ մարդ՝ և կամ զի՞ որդ ծնեալն, ոչ ունիցի զբնութիւն ծնողին: զի բանական կենդանի է, որպէս և ծնողն. զի որդ ոչ համաբնութիւն: Նոյնպէս և գառն ունի կատա-րելապէս զբնութիւն ծնողին, նոյնպէս և զայլ կենդանիսն տեսանել: Որդ եթէ բանն ծնեալ է յԱ̃յ. զի որդ ոչ լի-նիցի Ա̃ծ, վ̃ ամ̃ ծնեալ նոյնէ ըստ բնութեան ընդ ծնողն: Վ̃ այնորիկ ասաց երջանիկն Ա̃ծ էր բանն, զի ըստ բնական-նին ասաց: զի մի ոք սխալիցի, թէ ամ̃ ծնեալ ոչ ունի զբ-նութիւն ծնողին:

Նոյնպէս և սխալումն Մակեդոնի:

Նոյնպէս և սխալումն Մակեդոնի, որ անբանաբար ասաց թէ ոչէ հոգին Ա̃ծ, այլ թէ օտար և սպասաւոր, և սա ևս յոյժ կուրացաւ: և ոչ իմացաւ թէ հի՞մ արդեօք ոչ ու-նի

նիցի · բղխեալն զբնութեն բղխողին: քանզի որպէս բանն ծը-
նեալ ՚ի մտաց ունի զնոյն բնութեն ծնողին, նմանապէս և
խորհուրդն բղխեալ ՚ի կամացն · ունի զբնութեն բղխողին,
որ ՚ի մտացն յառաջէ: Այնորինակ իրն, բարւոք ասաց Էբ
բնականին, յորժամ մտաւն Այ ասաց: քանզի որպէս ձեռն և
աջ Այ հօր է բանն, ըստ այնմ՝ թէ * առաքեա զձեռն քո * Սղմ.
՚ի բարձանց. և փրկեա զիս. և * թէ ծանիցեն. զի ձեռն քո 143.
է այս, և Մովսէս ասաց, աջ քո Տր փառաւորեալ է զօրու- * Սղմ.
թբ լսում, աջ քո Տր խորտակեաց զթշնամիս քո, և թէ 108.27
* եւս խրատէ, զձեռն մեծ, զոր արար Տր ընդ եգիպտա- * Ելք.
ցւոց, և թէ ձգեցեր զաջ քո, և եկուլ զնոսա երկիր: և 15.6.
թէ Տէր զոր պատրաստեցին ձեռք քո, Տէր թագաւոր
յաւիտեանս յաւիտենից և ևս: Իսկ արդ՝ որպէս որդին ձեռն
անուանեցաւ, այնպէս և հոգին մատն, ըստ այնմ՝ թէ * մա- * Ղկ.
տամբն Այ հանեմ՝ զդևս: Որպէս ձեռն ունի զբնութիւն 11.20.
մարմնոյն, նոյնպէս և մատն ունի զբնութիւն մարմնոյն, և
ձեռին: քանզի որպէս ձեռն և մատն, համագոյակիցք մար-
մնոյն, և բնութբ մի և հաւասար, նոյնպէս բանն և հոգին,
համագոյակիցեն ընդ հօր, և համաբնութիւն և հաւասար:
Որպէս մարմինն զորինչ և գործէ, թարց ձեռին և մատին
ոչ գործէ, այլ համաբնութբ գործէ, զորինչ և գործէ,
սոյնպէս և հայր թարց բանին և հոգւոյն ոչինչ գործէ: Որպէս
որպէս մարմինն ոչ է ձեռն, և մատն, և անդրադարձապէս, նոյն-
պէս և հայր ոչ է բան, և հոգի, և անդրադարձաբար: Որպէս
որքան հաւասարքեն, և համագոյ ըստ բնութեն. նոյնպէս
և զանազանեալքեն ըստ անձանց: վա այնորինակ մարգարէքն,
զորդին ձեռն ասացին և աջ, և տրն, զհոգին մատն աս-
ացին: զի ծանիցի և հաւատասցի, թէ միեն ըստ բնութեն,
· Տէրութեն և Ածութեն, և զանազանեալք ըստ անձանց:
Ապա ուրեմն ըստ այսմ բնականիս, բանականիս, և վկա-
յութբ տն, և Մովսէսի, և մարգարէից համահաւասար-
քեն երրորդութեն Սբ, բնութբ, և համագոյութբ, և
յոյժ կարացեալք արիոս, և մակեդոն, որք ոչ ըստ բը-
նա

նախանձին, և ոչ ըստ բնականին, և ոչ Աստուածային բացատրութեանց հետևեցան: այլ յոր և յաւէժ բեկանեն ըզոսկր գառինն, այսինքն զուղղափառ հաւատոյն Քի, զմ̃ն այնորիկ պատժապարտեալ կորեան, առաւ նշաւակի եղեալ յաշխարհի: զի ոչ խնայեցին 'ի բեկանել, զոսկր գառինն: զոր խնայեցին չարագոյն զինուորքն պիղատոսի:

Ընդդէմ Նեստորի հերձուածողի:

Որպէս և Նեստորիոս, որ զՄր̃ կոյսն Աստուածածին ոչ ասաց, և երկու անձն, և երկու բնութիւն, և ներգործութիւն և կամք ասաց, և հոգեկիրքն իբրև զխոտան 'ի բաց վարեցին, յեկեղեցւոյն Քի, և ընդդէմ նմին զայս ասացին, թէ մեք Աստուածայինքն կրկնակի ծնելոյն, միածին ասացին, նոյնպէս և երկուց բնութեանց, միաւորեցելոցն մի անձն, մի որդի, մի բնութիւն անշփոթ, մի դէմ, մի ներգործութիւն. և մի կամք ասացին: Զի նոյնէր որ ծնաւ 'ի կուսէ. որդին Այ. եղեալ որդի մարդոյ: նոյն էր որ մկրտեցաւ, և յԱծոյ հօրէ վկայեցաւ դաէ որդի իմ սիրելի: Նոյնէր որ փառաւորեցաւ, և զփառսն եբարձ: Նոյնէր որ 'ի վր̃ ծովուն և յօդոյն գնաց, և նոյն՝ որ 'ի ճանապարհի աշխատեցաւ: և 'ի նոյն կուսէ ծնեալն չարչարեցաւ, մեռաւ, և թաղեցաւ, յարեաւ, և համբարձաւ յերկինս, և նստաւ ընդաջմէ հօր. և նոյնն գալոց է 'ի դատել զկենդանիս և զմեռեալս:

## Գլուխ ԺԲ։

Յաղագս [illegible] քաղկեդոնի [illegible], որք [illegible] երկու բնութիւնն հաստատեցին, [illegible]:

Եւ հակառակ սմին ժողովն քաղկեդոնի եղեալ զերկուս բնութիւնս և զասացեալն 'ի Նեստորէ, երկրորդեալ, զերկուս բնութիւնս. զներգործութիւնս և զկամս հաստատեալ: քանզի յայժ հերձիք խոկումն այս. 'ի բնականն և 'ի գրաւորականսն: Ի բնականսն, զի անկարելի է 'ի միոյ անձնէ երկուս բնութիւնս բաժանել, այլ 'ի պետրոսէ, քանզի որպէս սահմանն մի է, և սահմանէ ստորոգեալ բնութեան՝ ուրեմն մի է և բնութիւնն: Որպէս և անձն Քսի մի ասեն, խոկ բնութիւնն երկու. եթէ զկատարեալ Ածութեան. և մարդկութեան ասեն, պետրոս ևս նոյնպէս յերկուց կատարելոց իմանի, 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ մի մարդ. որպէս և Քս յԱծութենէ, և 'ի մարդկութենէ, միմիայն Քս: Եւ թէ յաղագս անփոփոխութեան, անշփոթելի, և ան այլայլելի, միաւորութեան ասելն՝ բնականիւր ժամակին և [illegible] պատասխանի: Բայց հայաստանեայց եկեղեցի, զԷ խնդրոյ որոց լուսաւորչի. և Է բարբառոյ երկնայնոյն ձայնի միաց 'ի նոյնութեան ուղղութեան: Խոստովանի Քսն, համագոյ հօր և հոգւոյն ըստ բնութեանն. և ըստ անձանցն զանազանութեան, նոյնն ծնեալ 'ի հօրէ. հաւասար ըստ բնութեան, և հաւասար ըստ Ածութեան, և նոյնն ծնեալ 'ի մօրէ. հաւասար ըստ մարդկութեան, մի որդի, մի բնութիւն և մի ներգործութիւն և կամք անայլայլապէս միաւորութիւն. և անշփոթապէս միութիւն Ածն մարդացեալ. և մարդն Ածացեալ, և զյատկութիւնս ոչ կորուսեալ, ըստ երանելոյն դիոնեսիոսի որ ասէ. անփոփոխարկելի և անշփոթ զյատկութիւնս իւր պահելով: Եւ այսպիսի ուղղափառ հաւատով Ծնողն զմի քս

ալին, և ըմպել զարիւն նորին, և ոչ բեկանել զանօսրան հերձուածողք, քանզի նմին: Եւ զբաւորականին հետևելով զոր հոգեկիրքն ծանուցին և ուսուցին. նախ աստուածաբանա-
տայ, խոստովանիմ զնա որդի Այ, և Աճ ըստ հոգւոյ,
և որդի մարդոյ ըստ մարմնոյ, ոչ երկուս բնութիւնս զմի
որդին, մինն երկրպագելի, և միւսն աներկրպագելի, այլ
մի բնութիւն բանին Այ մարմնացելոյ. և երկրպագելի հանդերձ մարմնովն իւրով, միով երկրպագութեամբ: Եւ երանելին Կիւրղոս ասաց, անճառելի, և անապական միաւորութիւն, մի եցոյց մեզ զորդւոյ բնութիւն, զի ոչ եթէ 'ի վեր պարզին ըստ բնութեան մինն ասի ճշմարտապէս, այլ 'ի վեր այնոցիկ որք ըստ շարադրութեանն ժողովեալք, որպիսի ինչ լինի և մարդն, 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ, քանզի այլատեսակքն այսոքիկ, և միմեանց ոչ համագոյ, սակայն միաւորեալ. մի բնութիւն մարդոյն կատարեաց: Եւ այլ ևս բաշխումքն միութիւնք. զորս համառօտեցի, զի մի ձանձրութիւն ընթերցողացն լինիցի: Եւ այսպիսի ամփոփութեան հաւատով պարտիմք մերձենալ 'ի սոսկալին յայն խորհուրդ, զի մի բեկցի ոսկրն: Եւ յորժամ զայսպիսի ճաշակմանն հրաւիրէ ոք 'ի տուն Տեառն զմերձիցի, յայնժամ լուիցէ զերանական բարբառն այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ: Եւ զի որդիքն լուսանկելի յուսոյն զպառն, զելս ունիցին 'ի մտի յե-
* Ելից. գիպտոսէ. վասն այնորիկ ասէ * փութանակի ուտիցէք, նոյն-
12. 11. պէս և նորոյս խորանին պատուիրէ զաչս 'ի ճանապարհ ունել, այսինքն զելս յաշխարհէս 'ի վերինն երուսաղէմ; յայնմ
* Սաղմ. * յելս եդ 'ի մտի իւրում, 'ի հովտիս սրտմտութեան. 'ի սե-
83. 6. ղանոյն յորում ուխտեաց, քանզի ասաց Տէրն. Ես ուխտեմ ձեզ,
* Ղուկ. որպէս և Հայր իմ ուխտեաց զարքայութիւն, * զի ուտիցէք և
22. 29. ըմպիցէք 'ի սեղանն իմ, յարքայութեան իմում: Վասն այնորիկ պարտի ճաշակողն. զայս դնել հանապազ 'ի մտի, թէ ելանելոց եմ յեգիպտոսէ, այսինքն յաշխարհէս, և փութանակի ճաշակել. այսինքն բազում անգամ; և թէ ոչ լինի ձեռն հասանի յամի երկու անգամ՝ 'ի յայտնութեան՝ և 'ի զատկին՝ և թէ ոչ

ոչ հարկաւորաբար ՚ի քաղաքին, և թէ ՚ի քաղաքին ևս ոչ
ձանձրասցի, * ստահակեսցի անձն այն յերուսաղէմ ասէ: Փու- * Յեբ. 12.15.
թանակի ձանձրանայ որ յամ ժամ յերկս ունի եղեալ ՚ի մտի:
Իսկ որոց ունի յանկարծագոյնէ· վ̃ այնորիկ հրամայեցաւ,
՚ի կանոնս հարցն եթէ որք յամրանան զոմնեայ ՚ի տարաւքն
միանգամ՝ ձանձրալ անարժան համարեսցի քրիստոնէական
թաղմանն, նախատել ընկեցի արտաքոյ դրանն Երուսաղէ-
մի, և ՚ի դնել ՚ի գերեզմանս քրիստոնէից, մի ոք իշխեսցէ·
զի ոչ ունի հաղորդութիւն ընդ անդամոյն Քի՝ որք ու-
նին հաղորդութիւն ընդ Քի: Այ որոյ այնպիսին զաղձէ,
ըստ տեսլեանն, և փրկի ՚ի բերանոյն Այ:
Գօտի ընդ մէջ ասէ ածիցէք, նշան արիութեան· զատէ
վորձն կրկինէ; է որ յինքենէ ածէ ինքեան զօտի· և է որ
յայլմէ· զի որ յինքենէ ածէ, այսինքն յինքենէ արիանայ,
անհաճոյ է Այ, և դիւրաւ սխալեալ անկանի, որպէս պետն
առաքելոց երջանիկն պետրոս· զի թէպէտ գլուխ էր երա-
նելեայն դասուց· և փոխանակ արիութեան ընկալեալ, ընդ
կրկնակի իշխանութեան· մինն ընդ ընտրեալսն, յորժամ աս-
ացն, զոր միանգամ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յեր-
կինս· և միւսն յորժամ ելանէր ՚ի շէնս կեսարիայ, յորժամ
ասացն ես քեզ ասեմ, զի դու ես վէմ· և ՚ի վ̃ե այդմ վիմի
շինեցից զեկեղեցի իմ, և տաց քեզ զփականս արքայութեան
երկնից, զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ
յերկինս· և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ
յերկինս, սակայն յորժամ անձամբ էած զգօտին, ՚ի դառն
գիշերոյն, և ասաց թէպէտ ամենեքեան գայթակղեսցին, սա-
կայն ես ոչ գայթակղեցայց; և լուաւ մինչև հաւու խօ-
սեալ լիցի, դու որ ինքնին ածեր քեզ զօտի, երիցս ու-
րասցիս զիս· զի գրեալ է մի պարծեսցուք· վ̃ այսորիկ
ասաց ցնա Տր, մինչ մանուկ էիր անձամբ անձին զօտի ածէ-
իր, և երթայիր, յո և կամէիր· և այսպէս ամ որ անձին ա-
պաստան լինի և անձամբ ածցէ զօտի, և ոչ յԱծ մեծա-
նայցէ, վաղվաղակի գայթակղի և անկանի: Եւ որք խօսէն

որք

որք յայլմէ ածին, և այս երկակի, որ ածէ 'ի վր՟ սրտին բարիէ, և յԱ՟յ· զի Ա՟ծն Յ՟ս, որոյ ածէ, նախ զձեռան բարձրացուցանէ, և ապա զմիջոցն ածէ, ուրէ սիրտն զի և ինքն 'ի վր՟ սրտին և կրծիցն ածէր զգօտին, զի մեզ ուսուսցէ զգօտի արիութեան. 'ի վր՟ սրտին ածել. ոչ՟ և 'ի հիւսիսն զմիջոցն, զի մեջք մարդոյս սիրտն. զի 'ի սրտէ ելանեն ըստ՟ խորհուրդք չարք. վ՟ որոյ կապել զնա պարտիմք արիութ՟ք: Եւ որ խոնարհագոյն ածէ քան զերիկամունսն, 'ի սառամանէ. զի ոչ՟ որ՟ բարձրագոյն ածելոցն, 'ի բարձրագոյն յառաքինութիս հրաւիրէ, և 'ի վերին Երուսաղէմ, և հակ նմին սառամնայ խոնարհագոյն ածելոցն, 'ի վատթարին կոյս հրաւիրէ, և 'ի խոնարհագոյն դըժոխսն. քանզի որ խոնարհագոյն ածեալնէ, ընթանալ ոչ կարէ 'ի ճանապարհի, զի զոտսն պատանդէ, 'ի գնալն, և յընթանալն ընկճի, և յամենայնի յետնեալ պատնի, և զորինչ 'ի ծոցն անկանի, պայթակղի, և սատանի. և յաղագս այսորիկ հրամայեցաւ, զմիջով ունել, զխորհուրդ մեջ ածեալ իցէ, ըստ պաշտօնին Տ՟ն կատարելապէս կատարէ, ը՟ն այնմ գոտի ածեալ պաշտեմ, և թէ գօտիք ձեր ըն՛դեալ ընդ մէջս. վ՟ այսպիսոյս ածման, ասաց Տ՟րն ցՊետրոս, յորժամ ծերասցիս ձեռս 'ի վերկալցես, այլք ածեն քեզ գօտի, և տարցին ուր ոչն կամիցես, այսինքն բարձրացուցանել զձեռդ 'ի խաչիլ որ ոչ կամի բնութիւն, Ա՟յ զամ՟ գործս արիութե. յԱ՟ծ ապաստան լեր, համբառնալով ըզ ձեռս՛դ, այսինքն զգործութիւնդ, և նա փաղփաղակի օգ-

*Սաղմ. նեսցէ, ըստ այնմ՝ * ը՟դ արասցուք զօրութի՟, և նա յամօթ

107. 14. արասցէ զթշնամիս մեր, և այլ ոչ ես անկցիս, ոչ անկար 'ի դառնագոյն գիշերոյն:

*Ելից. * Եւ ասէ ցուպ 'ի ձեռին ունիցէք, այսինքն զխաչն տե-

12. 14. րունակի. զի ցուպ զխորհուրդ խաչին նշանակէր, քանզի որ արիանայ, ցպով և գաւազանաւ, հարկանէ զթշնամին, վ՟ այնորիկ որ՟ յորժամ առաքէր զաշակերտսն 'ի քարոզութի՟ Ա՟ռ աւետարանին, ասաց մի ինչ բարձցեն 'ի ճանապարհ

պարգևի, բայց միայն զաւազան. և ինքն ևս Տէրն, թէպէտ
արտաքոյ 'ի գործս, սակայն ոչ խոլաւ է հար զթշնամին,
այլ յորժամ 'ի խաչն բարձրացաւ, խոլաւ է հար ուժգին,
և վանեաց խաչիւն զմեքենայս, և զնոյն զզօրութիւն նր.
ուր և Մովսէս զնոյն զզօրութիւն փայտունի ցպովն եցոյց,
և զսքանչելին, և զնոյն զբնութիւն Ադամայն, առ որ է
առ, և յինքն գրաւեաց, ըստ այնմ * գերեաց զգերութիւն, ետ * Սաղմ.
առաւար, զոր ըմբռնեալ ունէր 'ի սատանայ, ըստ այնմ * յոր- 67. 19.
ժամ բարձրացայց յերկրէ, զամենեսեան ձգեցից առ իս. և * Յհ.
զի զցրուեալ որդիսն Ադ.ի, ժողովեսցէ առ մի. քանզի և 12. 32.
Մովսէս յորժամ եղ 'ի կատար լերինն, 'ի * պատերազմին * Ելից.
ամաղեկայ, զձեռսն խաչ ձևմամբ տարածեաց, և ապա յաղ- 17. 11.
թեաց յեսու. և խաչաւ կոտորեաց և վանեաց, և վ՟այ-
նորիկ հրամայեաց Տէրն. * որ կամի զկնի իմ գալ, ուրասցէ * Մտթ.
զանձն, և առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ, և վ՟այ- 16. 24.
նորիկ այսպիսի հեռացո՛, հետևեցաւ երանելի Նահապետն
Յակոբ որ ցպով էանց ընդ յորդանան որ նշանակէր զնորս
իսրայէլ, որ անցանելոց էին խաչիւ, կենարարին, ընդ հո- Ծննդ.
սանուտ գետ աշխարհիս. և Մովսէս ցպով անցոյց զիս-
րայէլ ընդ ծովն կարմիր, և * ընկղմեաց զփարաւոն, զզօրս, * Ելից.
և զկառս և զերիվարս, և զնոյն զզօրութիւն նր, որ նախագու- 14. 16.
շակէր նորոյս իսրայէլի, անցանելոյ ընդ ծով կենցաղոյս, և
սուզելոյ իմանալի փարաւոնի. նա * ցպով քաղցրացոյց զջուրն * Ելից.
մեռայ. և ծառն խաչի զդառնութիւն աշխարհիս. նա ցպով 15. 25.
է * հար զվէմն, և բղխեցին ջուրք. և գնացին գետք ընդ * Սղմ.
անջրդիս: Նա ծառն 'ի վր խաչին. եբաց զկողս իւր ուստի 104. 41
ելին կրկնավտակ աղբիւրք յանջրդիս հոգիս հեթանոսաց,
մինն լուացումն յաղտոյ. և միւսն յարբումն, ուրախու-
թեն. և 'ի զմայլումն. յաղագս այսորիկ ասաց մարգարէն.
* ցուպք և գաւազան նորա մխիթարեսցեն զիս. և սողոմոն * Սղմ.
ասաց. * փայտ կենաց ամենեցուն. որ պատսպարին 'ի նա և 22. 4.
որ յենուն 'ի նա. իբրև 'ի Տէր հաստատութիւն. և թէ օրհ- * Առակ.
նեալ է փայտն, որով լինի արդարութիւն: Նա առաքեալ ա- 3. 13.
սաց

տաց, այլ ինձ քաւ լիցի պարծիլ բայց միայն 'ի խաչն տն
մերոյ Յսի Քսի: Եւ վն այնորիկ զնմանութի պատու-
ական նշանիս այսորիկ, եդ յամ՛ էակս ըստեղծողն գոյից.
Նախ յերկինս, ոպ յայտնագոյն երևի յաստեղս. և 'ի բնե-
եալն հիւսիսային բազմախայլ նշանն որ անուանեն Կասսան-
դրիանոսի. և յայլ յաստեղս: Նոյնպէս և 'ի կենդանիսն
ձևացոյց, զնմանութի պատուական նշանիս. զի 'ի մարդն
յայտնապէս բաց երևի, քանզի յաջաց յոչ. և 'ի մէջ ըզգ-
քիմն, է ձև խաչին Քսի. նոյնպէս և 'ի թռչունս սա-
րածեալ թևոցն. և 'ի ձկունս խաչն Քսի, հաստատեալ
'ի փագալթմանն, տն տեսիլ. յորժամ ամփոփեցաւ 'ի լեառնն
մատեան Մովսէս և Եղիայն, և տեսին զաեղին ուրկայր
Քն յամի. Նաւաստ և ալիւք, և եօթանասուն ծերոցն
խորանին. ընդ տուփն Քյ, երբ զգործած ալեւոյ շամիւ-
ղոյ: Նոյնպէս և Եսայի. յորժամ եանես զտր նստեալ
'ի վր աթոռոյ բարձրութե և վերացելոյ. զի 'ի վր խաչին
եանես զնա, ոպ և ասէ, երանելի աւետարանիչն Յովհան-
նէս՛, տր ո՞ հաւատաց 'ի լուր մեր, և բազուկ տն ում
յայտնեցաւ՛, զայս յաղագս չարչարանաց, և խաչելութե
ասաց մարգարէն, և աւետարանիչն ասէ, զայս ասաց Ե-
սայի. յորժամ եանես զփառս նր, և խօսեցաւ վն նր, և
Եզեկիէլ, զչորեք կերպեան աթոռն. չորեք կերպեան
կենդանեօքն, զխաչին եցոյց խորհուրդ՛, յորոց վր նստէր
Քծ, զի ոպ նոքա չորք. սոյնպէս քառակուսի զխաչն. և
քառաթևի: Եւ այլ ես բազումքեն խորհուրդ. նշանիս
այսորիկ, տապանն Նոյի քառանկիւնի աշխարհս եղեալ քա-
ռանկուսի: Տապանակ ուխտին կազմեալ քառակուսի. և
այլ ես բազումքեն օրինակք՛. պատուական նշանիս. և վն
այսորիկ հրամայեցաւ ցուպ 'ի ձեռին ունել,
որ էր նշան անրուանական:

• Ցեւէյ 12. 11. Եւ կօշիկն յոտս. և կօշկաւորեալն յնթացք ոչ երբէք մե-
րասցի, ոչ 'ի յօձից, ոչ 'ի քարանց. ոչ 'ի կարձաց ոչ 'ի
փշոց, և ոչ այլ ինչ վիրաւորչաց. ոմն նշանակէ զմիտսն,

ըստ այնմ՝ ճրագ է բանք քո ոտից իմոց: Կօշիկն նշանակէ զլուսաւորութիւն հաւատոյն, ըստ այնմ՝ լոյս տայ շաւղաց իմոց՝ քանզի բանիւն Տ՟ն լուսաւորի զմիտս մեր, այսինքն զմիտս. լուսաւորութիւն հաւատոյն, յընթացս ճանապարհի կենցաղոյս. զի մի գայթակղեսցի, ըստ այնմ՝ թէ ոտն քո մի գայթակղեսցի. քանզի ոտք առաջաւ խոկացոյն մարմնոյն Ք՟ի. լուսաւորեալք բանիւն Տ՟ն որ միացեալ և միաւորեալ ը՟ նմա. Նոյնպէս և ճաշակողքն այսմ խորհրդոյ, միաւորին ը՟ նմա, և յայնժամ ոչ գայթակղին, միաւորութեամբն ընդ նմա. և վասն այնորիկ հրամայեաց, կօշկաւորել զոտսն. որ և անսասան ոտքսն, և ասէ ճաշակել, զի մի խառնարան ընկանիցի. զի որ գնայ ընդ խաւար, ոչ գիտէ յո՞ երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նր: Զի որ գնայ 'ի տուընջեան ասէ, ոչ գայթակղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ. և որ է լոյս աշխարհիս այսորիկ եթէ ոչ միածնորդւոյ մարմին և արիւն կենարարին, ըստ այնմ՝ եսեմ լոյս աշխարհի. և թէ ես լոյս յաշխարհ եկի. և թէ մինչ դեռ յաշխարհի եմ, լոյս եմ յաշխարհի. և թէ էր լոյսն ճշմարիտ. որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհ. և թէ ծագեսցէ ձեզ երկիւղածացդ իմոց արեգակն արդարութեան: Եւ այսու լուսով, այսինքն կենդանարար մարմնով և արեամբ կենարարին, ժառանգեսցուք 'ի խորանն լուսեղէն, և յարկն Տ՟ծեղէն, ըստ այնմ՝ առաքեա Տ՟ր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի նոքա առաջնորդեսցեն հանցեն զիս 'ի լեառն Ս՟ք, և 'ի յարկս քո. և թէ լուսով երեսաց քոց, տեսանեմք զլոյս: Եւ վ՟ այնորիկ նոյն խորանին հրամայեաց կօշկաւորեալ ճաշակել, որ էր օրինակ ճշմարտութեան, զի և ճշմարտութեան ճաշակողքն լուսով հաւատոյ, զմիտսն կօշկաւորել: Զի ոտք նոցա ճաշակմամբ ընթացան 'ի ճանապարհս որ տանէր յերկիրն աւետեաց, նոյնպէս և այսու ճաշակմամբ. ընթանամք 'ի վերին երկիրն աւետեաց: Զի ոտք նոցա ճաշակմամբ, եղեն յանապատն. ուր լինէր Տ՟ծախսութիւն և Տ՟ծանեաւութիւն. և զարմանալուրն ութիւք:

Նոյն

Նոյնպէս և այսու ճաշակմամբս ելանեմք յանապատն յեր-
կինս, ուր լինի դէմ յանդիման տեսութիւն ամենասուրբ Երրոր-
դութեան և լուր Աստուածախօսութեան: Օ՜հ անդ ամպով ճա-
շակմամբն այնու, և աստ մարմնով իւրով ճաշակմամբն,
այսու: Անդ որոտմամբ, և աստ խաղաղութեամբ: Անդ այ-
նու ճաշակմամբ, բոց հրոյ, և աստ այսու ճաշակմամբ,
լուսաւորութեամբ Աստուածայնոյ: Անդ այնու ճաշակմամբ մեր-
ձեցեալքն 'ի լեառն բարկած լինէին, և աստ այսու ճաշակ-
մամբ մերձեցեալքն առ Աստուած յորդեգրութեան հօրն երկնա-
ւորի, հրաւիրին, ժառանգ Աստուծոյ, և ժառանգակից Քրիստոսի
դրին, և ընդ հրեղինան հողեղէնքս խառնին: Օ՜ որպէս
նորա կօշկաւորեալք, ճաշակմամբ 'ի ճանապարհի կո-
խեքին զօձս, և զկարիճս. և զամ՛ զթշնամւոյ վնասակա-
րս. Նոյնպէս և սոքա ճաշակմամբս այսու մարմնոյ և արեան
կենարարին, 'ի ճանապարհի կենցաղոյս, որք պատրաս-
տեալքն ելանել յերկինս երկիրն աւետեաց, կոխեն
զօձս, կօշկաւորութեամբ, զգլուխ խմնալի օձին, և
կարիճին, յորոց մինն գլխովն խածանէ, այսինքն բարի
ձեռնարկութեամբ, և մահացուցանէ, և միւսն տտամբն՛
խածանէ, այսինքն ըսպասելով վախճանին, և մահացուցա-
նէ. զի չարն վախճանին առաւել ջանայ, և գուն գործէ,
զի թերևս յամ՛ աշխատութեանց, թափուր և տարագիրս ա-
րասցէ: Այնորիկ ճաշակմամբս այսու զօրացոյց զմեզ, և
ետ հողաթափ յոտս մեր. և իշխանութիւն կոխել զօձս, և
զկարիճս, և զամ՛ զօրութիւնս թշնամւոյն, և 'ի նոցանէ ոչ
ինչ վնասիլ. քանզի ո՞չ 'ի Զատիկն, կօշիկ հրամայեաց.
նոյնպէս և աստ 'ի նորումս, հողաթափս հրամայեաց ա-
գանել. զի մի 'ի քարանց, և 'ի փշոց. և այլ վիրաւորչաց
խոցոտիցի. քանզի ո՞չ նոյայն ապառաժուտէր. և փշալից
ճանապարհն, որ տանէր յերկիրն Աւետեաց. նոյնպէս և
նորոյս, ապառաժուտ և փշալից ճանապարհ կենցաղոյս, այս-
ինքն սիրտ աշխարհասիրաց, որ յար և յաւէժ, խոցոտէն
զոտս քաղոցչաց, այսինքն զմիտս, որք լսելով զբանն կե-
նաց,

նոյց, իբրեւ զապառաժ ունայնութեանցն, եւ փշալից, որ
մեծութք, եւ փարթամութք հեղձուցանեն, յուսացեալ 'ի
միայն մնոտին՝ եւ զփառս աշխարհի. եւ ոչ յիշեն, որ իբրեւ
ծաղկընկէց. եւ լուսնիկէ. որ 'ի տուան որդան, 'ի գիշերի,
իբրեւ զձիւնս վառի. յոր 'ի ծագել արեգականն, վաղվաղա-
կի անցանի՝ եւ այնքան մնոտի, եւ ընդունայն, փառք եւ
մեծութիւն նց, որ իբրեւ սակաւ մի երեւել, եւ ապա ապա-
կանեալ, ըստ այնմ* 'ի փառաւորիլն եւ 'ի բարձրանալ իւ- * Յ-կ.
րեանց. ապականեսցի, որպէս ծուխ զի ապականի, եւ երջանիկն 4 . 15.
Յակոբոս ասէ, * մեծութիւն ձեր ոչինչ է. ոսկի եւ արծաթ * Աշ.
ձեր, ժանգահար. որ իբրեւ զհուր կերիցէ զմարմինս ձեր. 36.20.
եւ թէ իբրեւ զմրրիկ էք, որ առ ժամանակ մի երեւեալ, եւ
ապա ապականեալ. եւ Եսայի ասէ, * ամ փառք մարդոյ, * Եսյ.
իբրեւ զծաղիկ խոտոյ է, ցամաքեցաւ խոտն, եւ թօթափեց- 4 . 6.
աւ ծաղիկն, եւ կործանեաւ վայելչութիւն յերեսաց նր: Վա̄յ
նորիկ. որք ճաշակելոյնեն, հրամայեցաւ ապանել հողա-
թափս, զի զհողս, եւ զփոշիս, որ կամիցի կառուցել յաւս,
հողաթափիւ թափ տալով, ան կառուցելի, եւ ան շարժելի,
անցանել ճանապարհ կենցաղոյս. եւ ժամանել յերկնային
գաւառն, ուր նոքա յերկրին աւետեաց, եւ յաղագս այնորիկ
հրամայեաց Տէրն՝ թօթափել զփոշին յոտից, 'ի տանս աշ-
խարհականացն. 'ի վկայութիւն նց, այսինքն թէ իբրեւ զփո-
շիէ մեծութի ձեր, որք վայելէք ձեզ, թօթափելոյ յոտից
մերոց. այսինքն 'ի միտս մերոց, 'ի մնոտի յոյսն ձեր. այ-
սինքն յաշխարհականութի եւ 'ի մեծութիւնս ձեր. եւ ուր կա-
պեհայ կոխեմք, եւ ընթանամք 'ի յոյսն կենաց: Քանզի
վ̄ այնորիկ յոյսն կենաց, մաքրեաց յոտից աշակերտաց.
փշալից կենցաղոյս, այսինքն 'ի միտս աշակերտաց զփառս
մնոտիս կենցաղոյս, եւ ապա շնորհեաց զհուրն կենդանարար
մարմնին եւ արեան, վ̄ զի ընդութէ. յորս հայելով՝ կը-
ռուեալ իցէ փոշի, ոչ զլոյս արեգականն կարէ ընդունել
ինքեան, եւ ոչ զպատկերս էակաց. երեւեցուցանել յին-
քեան: Նոյնպէս եւ միտք մարդոյ, որք իբրեւ աչք ոք ըն-

թա

Թանայ նովաւ ընթանայ. յորժամ կոտուեալ իցէ 'ի փոշի,
այսինքն 'ի մեծութենէ, 'ի փառաց, և 'ի փարթամութեանց
աշխարհիս, ոչ կարէ երևեցուցանել յինքեան զլոյս Ա̃ծ-
ութեան, և զպատկերս Տ̃րութեան, այլ յորժամ լուացի
և մաքրեսցի, ապա կրէ յինքն, զլոյսն և զպատկերն, վս̃
այնորիկ նախ զոտս նոցայ լուաց, որ նշանակէր զմիտս,
և ապա շնորհեաց զիւրն կենդանարար մարմին և զխոր-
հուրդն անմահութե. զի երևեսցի 'ի նոսայ մարմինն և
* Եբր. արիւնն իւր, * որ է լոյս փառաց. և նկարագիր էութե Ա̃ծու-
1. 3. թեան: Օհ ով խնկականն իւր յետ լուացմանն մկրտութեան,
Ա̃ծութե փառքն, որ արտափայլեցաւ 'ի Թաբոր, ուստի
ընդ արմացեալք թափեցան հոգէկերքն, այսպէս և խորհր-
դաւոր մարմինն իւր, որ սոսք անուանեցան 'ի գլխոյն կե-
նաց. յետ լուացման 'ի վերնատանն, ապա կերակրեցան և
արտափայլեցան յաշխարհի. ըստ այնմ դուքէք լոյս աշխար-
հի: Օհ խնկական մարմինն, Ա̃ծութեն արտափայլեցաւ,
և խորհրդաւոր մարմինն, ճաշակմամբ մարմնոյ և արեանն,
Նա միաւորութեն բնութեան. և սա շնորհօք ճաշակմանն;
Այնորիկ հրամայեցաւ Տ̃ռւմն կոշկաւորել 'ի ճաշա-
* Ղկ. կումն: Եւ հայրն երկնաւոր ևս հրամայեաց, * անառակ որ-
15. 23. դւոյն կոշկաւորել. և ապա մատչել 'ի ճաշակումն պարարա-
* Մրկ. կին: Նոյնպէս և որդին, 'ի նորումն հրամայեաց, * ագանել
6. 8. հողաթափս, և ապա զմարմին և զարիւնն իւր ճաշակել.
զի մի դարձեալ աղտեղասցի, լուացեալն 'ի բանէն կենաց,
զի որպէս նոքա կոշկաւորեալ ճաշակմամբն ելանէին յեր-
կրէն ծառայութե. նոյնպէս և նորայս յորժամ հողաթա-
* Յհ. փիւ շնորհեաց. զճաշակումն անմահարար, ասաց * ոն արիք
12. 3. զնարդոսս ասափ, և եղին 'ի լեառն ձիթենեաց, 'ի տանէ ծա-
ռայութե աշխարհիս. 'ի բարձրութիւն Ա̃ծութեան, զի լեառն
զԱ̃ծութիւն նշանակէր. և ձիթենին լոյս ողորմութեան, ըզ
շնորհս նր̃, որ նշանակէ թէ յետ ճաշակմանն, հրաւիրե-
լոցեմք 'ի Ք̃սէ 'ի բարձրութիւն գերագոյն Ա̃ծութեն նր̃, և
լուսաւորիլ 'ի շնորհաց նորա:

Այսպ

Դարձեալ հրամայեաց զնոյն խրատել, 'ի տասն երրորդ-
ումն ամսոյն, առնուլ զգառն, և տանել 'ի տու'ն, ամիսն
նշանակէ զկենցաղս', տասն նշանակէ զտասն բանեան ըզ
պատգամսն, որ պարտէ ճաշակողացն, զանմահական խոր-
հուրդն, 'ի կենցաղումս այս, կատարել, և պահել, ըզ
տասնեկի պատուիրանսն, և ապա մատչել 'ի խորհուրդն
սոսկալի. և առնուլ զգառն. և մուծանել 'ի տուն իւր,
և դարձեալ տասն նշանակէր զտասնաղի քնարն Դաւթի,
որով օրհնեալէր զԱ͞Ծ. և յետ տասնաղեաւ սաղմոսարանա-
օրհնութեն, ապա առնումք զգառ'ն, և տանեմք 'ի տունս
մեր: Եւ դարձեալ տասն նշանակէ, զտասն զգայութիս
որ յետ սրբութեց տասն զգայութեց, ապա տանել 'ի
տուն զգառ'ն: Նախ աչայն, յորժամ զգուշանայ, յամ
չարակնութենէ. և արտասուօք լուացեալ մաքրէ. և ապա
սրբեալ ճաշակէ, զոր օրինակ իրն աղօթեղեալ լուացի, ը͞ս
այնմ *'ի մեղաց իմոց Ս͞Բ արա զիս. լուա և քան զձիւն լու- *Սղ͞. 4.
սպիտակ եղէց: Երկրորդ ականջացն, յորժամ, յամ անմա- * Սղ͞. .
քուր ձայնից պահպանիցի, և յունկն դրութե Ա͞Ծային 50. 9.
բանիցն մատչիցի, և սրբեալ ճաշակիցէ: Երրորդ բերա-
նոյն, յորժամ յամ աղօթեղութեց բանից հեռացեալ մե-
կուսասցի, *զբերանն և զլեզու'ն, և'ի բանս բարիս պարա- * Յկ.
պիցի, նոյնա սրբի և ճաշակեսցէ, ըստ այնմ * լուեցո զլե- 1. 19.
զու քո 'ի չարութենէ, և շնորհիւ շրթունս քո մի խօսիցի * Սղ͞. .
զնենգութի: Չորրորդ 'ի հոտոտելեացն յորժամ յամ ան- 33. 14.
մաքու'ր վէր երևեալ հեռասցի 'ի հոտոյ, և անարատ վա-
րուք, հոտ անոյշ Ք͞Սի լինիցի, ըստ այնմ հոտ անոյշեմք
Ք͞Սիւ առ Ա͞Ծ, և այսպիսի անուշահոտ վարուք, սըր-
բեալ ճաշակեսցէ: Հինգերորդ հասարակ զգայութի'ն,
յորժամ զձեռս պահեսցէ յամ անիրաւութեց. և 'ի վեր
համբառնայցէ սրբութի, առանց բարկութե և երկմտու-
թե, և զոտս յամ անօրէն գնացից, և պատրաստել աւետա-
րանին խաղաղութի, յայնժամ սրբեալ մատչիցի 'ի ճաշա-
կումն: Իսկ 'ի ներքին հինգ՝ Նախ զհասարակ զգայու-

թե

թենոյն սրբութի, յորժամ զըսպեալ սպահեսցէ, ընդունելոյ զչարագոյն գործսն, արտաքոյ ջնջելի զդյութեցյն, և ընդունելոյ զբարեգոյն գործսն, որ յանցանէ յառաջ եկեսցէն. քանզի հասարակ զդյութին, ունի զգործուածս ջնջելի, որ գործով արտաքնոյն, ջնջելի զդյութենց ընանի. եթէ չարի, և եթէ բարւոյ: Որդ՝ եթէ բարեաւ՝, որպէս մարդի, և յայնժամ զգառն հրաւիրէ ՚ի տուն իւր: Երկրորդ երեւակայութեան սրբութի. յորժամ զերեւելի բարիսն արհամարհեսցէ, ըստ այնմ՝ անարգեսցէ զչարն, և ընտրեսցէ զբարին, և յաներեւութին, և յիմանալոյն բանն հարկանիցէ, որպէս մարդի, և յայնժամ հրաւիրէ զգառն ՚ի տուն իւր: Երրորդ տրամախոհութեան սրբութի, յորժամ ՚ի տարագրեցելոց չարաց, ՚ի բաց հեռա-

* Սղմ. 72. 28. սցի և յԱծ մերձեսցի, ըստ այնմ՝ * Ինձ մերձենալ առ Ած բարի է, որպէս մարդի, յայնժամ հրաւիրէ զգառն ՚ի տուն իւր, զի տրամախոհութին. ուղղն զմիջինսն ունի զվորփած, և լուսաւորեալ է քան զմիտսն. ըստ նմանութեան արեգական, և ՚ի վերայ միտն ենթակայացեալ ունի. զեւեղութի բանականութեան ըստ ումեմն, վն այնորիկ զաս առաւել պարտ է սրբել, զի հրաւիրեսցէ զգառն ՚ի տուն: Չորրորդ զկարծողականսն, յորժամ զկարծեցեալ չարիսն, որ բարի երեւեցուցանէ սատանայ ըն մեզ տարաբարձել. և ունկարծիք զիմ՝ զհոգեւոր բարիս. հաստատեալ դէմ յանդիման աչաց իւրոց տեսանիցէ, զոր ընդունելոց իցէ յանտուստ բանէն, և որպէս մարդի, և հրաւիրէ ՚ի տուն իւր զգառն, զի զյուսացեալ իրսն հաստատութբ տեսանէ, և յանդիման որոյ ոչն երեւին, աչացս այսոցիկ. և ախմնչացս այսոցիկ ըսէլի լինիցին: Հինգերորդ վերջասին յիշողութին, յորժամ յիշեսցէ զայն զոր կորուսեալ իցէ, վերջասին առնուլ, և յորմէ անկեալ իցէ, վերջասին ժառանգել, ըստ այնմ՝ յիշեսցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամն գործս քո և զգուշացի, ՚ի չարաջւար յորոգայթից, և ՚ի թշկարդաց բանսարկուին, յիշելով թէ ո՞չ անկան նախնիքն ՚ի ձեռն

ձա

ծնշակման, և վերականգնեցան որբաչրանքն, 'ի ձեռն ճնաշակման մարմնոյ, և արեան բանին Տ՛ն, և այսպէս յիշատակմամբ. չարին և բարեացն, տանելի զպայութիւն, առաջ պարտի առնուլ զզգաստն 'ի տուն իւր, որով լինի ազատութիւն, յեգիպտական ծառայութենէն և զերծանիլ յանդրանկածախ սատակմանէն, և 'ի սանձահարութենէ հրեշտակէն, յոր իբրև հայեցեալ տեսանէ 'ի բարաւորի սեմոց դրանց, մերձ, նկարեալ, և մածեալ, զարիւն անբիծ գառինն ազատեալք լիցուք, յամ՛ եգիպտական պատուհասից և չարեաց. և ելցուք ցնծութիւ և ուրախութիւ, յանապատն յերկինս, պատուամբ ծովուն, և ընկղմամբն փարաւոնի, և ամ՛ զօրացն իւրոյ, երգեսցուք զերգս նորա։

## Գլուխ ԺԳ։

Ցուցանէ թէ զիա՞րդ հերձուածք պղծեն բնութիւն՝ որբոցն խորհրդոց և այլ խորհրդոց. նշանակ Արիոսի հերձուածոյն։

Բարձեալ հրամայեցաւ, * անթլփատք, այլ ազգիք, եկամուտք, ծառայք, և վարձկանք մի՛ ուտիցեն։ * Յիւ. 12.44.
Անթլփատք նախ նշանակեն զհերձուածողս. որք ինքնագլուխք՝ չարեօքն լցեալք, և նորագոյն հերձուածողութիւ մոլորեալ և ծռեալ. տաճկանեն, և խմորեն, զանբիծ եկեղեցին Քի՛, և ոչ թլփատեն յինքեանց զչար կարծիսն, զոր առեալ և նիւթաորեալ քեն 'ի սատանայէ, և խոտորեալք. քանզի նոմ մեղք ունի երբեմն և թլփատութիւն, յորժամ ծանիցի ըզ գինքն, ինքեամբ, և կամ այլով. քանզի հղպարտն, և անհնարսուանն, յորժամ մոռանաս լինել ինքեամբ 'ի ընկերն, որէ յառաջ եկեալ 'ի զարշ ցանկութեանց, յորժ թէ կոխեն մի անկցի 'ի վե հանդերձի ուրուք, կամ 'ի վե երեսաց, և կամ 'ի վե ձեռաց, անպատմելի զզուէ, և տագնապաւ վառեցի. մինչև որքէ սըի և մաքրիցի։ Նաև

յոր

յօրէնս պիղծ համարեալ լինիւր այնպիսին, և գարշելի
յամենեցունց: Դի ներկայն զի է լցեալ փորն աղբիւ, Տր
այնմ խոնարհութիւն քո, 'ի մէջի քուակ': Իսկ 'ի վաղճանն նը-
կատելով զի յետ սակաւ միոյ յորդունս համանկելոցէ. գար-
շագոյն յամենեցունց 'ի մնկամտածէն, թող թէ 'ի տե-
սութենէն: զարդ և սիրել դառնալոյ. յորոց խոկմանց,
դառնայ 'ի խոնարհութիւն. նոյնպէս և զայլ միզոյ տեսա-
նելի. յորոց թէ ոք իսկապոյն և ճշգրտագոյն մտախոհ լի-
նիցի և վաղճանն հայեցի, փոփոխականի յետոս դարձցի: Իսկ
հերձուածողն որքան յառաջանայ, 'ի մնկամտածութիւն.
այնքան խոնարհի, և ժպրհի. որսուոր ըմբռնիցի բաց-
երեւեսցի՝ նոյնագոյն բանս, թէ 'ի բնականաց, և թէ 'ի
բանականաց, և թէ 'ի գրոց սրբազնականաց, զօրավիգ ին-
քեան պատրաստել, ով արիստ, որ զբան սրբազանին Պօ-
* Կ-ղոս ղոսի, առեալ ինքեան զօրավիգ, * անդրանիկ ամ արարածոց,
1 . 15. և այսու խստագոյն մոլեալ, թէ՝ է արարած որդին, և ա-
րարածն օտար է 'ի բնութենէ արարչին, ուրեմն, որդին
օտար է 'ի բնութենէն Հ.յ:

Ընդդէմ Արիոսի և Նեստորեայ հերձուածողաց:

Եւ ոչ իմացաւ թէ Ք.Ս յերկուց էութեանց, յանեղէ, և
յեղականէ: Զի Ք.ծային գիրք, յերկակայ էութենէ, միաւո-
րութիւն մեզ բացայայտեն: Զի որ ասէ խոնարհագոյն էր բանն,
և բանն էր առ Ա.ծ, և Ա.ծ էր բանն, զանըստեղծ բնու-
թիւն և ընդ հօր համագոյութիւն, համաբնութիւն, էակ-
* Յ-հ . ցութիւն, և արարչականութիւն, մեզ բացատրէ. ով և յե-
1 . 3 . տագայն հաստատէ, թէ * ամ ինչ նովաւ եղև, և թէ * բա-
* Սղ- . նիւ տն երկինք հաստատեցան: Իսկ որ ասէ * տր ըստացաւ
12 . 1 . զիս, ըսկիզբն ճանապարհաց իւրոց, 'ի գործս իւր, որ է
* Յ-հ . մարդկութիւն, որ ըստացեալ եղև 'ի տնէ, այսինքն 'ի բա-
8 . 22 . նէն, 'ի գործս տնօրէնութեան, որով կատարեաց զամ ըզ
* Յ-հ . փրկագործութիւն, և թէ * ոչ կարէ որդի մարդոյ առնել
5 . 19. յանձնէ և ոչինչ. և թէ ոչ ոք գիտէ ոչ հրեշտակ յերկնից,
* Մ-տ . և ոչ որդի, բայց միայն հայր, և թէ * զփառսն զոր ետուր
24 . 39.

յիս

յիս, ետու նոցա, և թէ * փառաւորեա զիս Հայր, և թէ * Յհ.
ապրեցո զիս 'ի ժամէ աստի յայսմանէ, և թէ * եկն բարբառ 17. 22.
յերկնից, և փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր արա- * Յհ.
րից, և այլ ինչ նման սոյին, զոր Ա՟ծային գիրք մեզ ծանու- 27. 5.
ցանեն, է արարածական բնութեան, արտայայտութի, որպէս և
ինքն իսկ արարիչն ասաց, և զի որդի մարդոյ ընդ այն զի
զարմանայք. Նոյնպէս և բան երանելոյն Պօղոսի, որ ասէ
անդրանիկ ամ՟ արարածոց, արարածական բնութեան Ք՟նի
է բացերևութի: Արդ տես թէ որքան թշուառալի կու-
րութի է, և ծայրագոյն մեղանչութի. որ ինչ յատկութի է
արարածական բնութեան, դնէ Արիոս Ա՟ծային բնութին,
անդրանիկ ասելով. և հակ՟ սմին որ ինչ Ա՟ծութեան է
յատկութի, դնէ Եւտիքէս, 'ի վ՟ր արարածական յատկութե,
բովանդակն Ա՟ծլեալ: Եւ յատկութի, կատարելոցն, յորոց
եղև միաւորութի, ոչ 'ի մէջ մնացեալ, այսինքն կատարեալ
Ա՟ծութեան. և կատարեալ մարդկութեան: Եւ վ՟ս այնորիկ
երկոքեան փոխանակեցան, 'ի վէճս կորստական. քանզի
Արիոս արարչական յատկութին 'ի Ք՟ի եբարձ, և զամ՟
ինչ արարածական ասաց, և ոչ իմացան թէ 'ի Ք՟ի են
երկու յատկութիք, արարչական, և արարածական. զի թէ-
պէտ երկու բնութիքն, 'ի Ք՟ի միաւորեցան, սակայն յատ-
կութիքն ոչ բարձան. որպէս մարդոյն, թէպէտ երկուք բն-
նութիք միաւորեցան, և մի մարդ յերկուց կատարելոց երև-
եցաւ, սակայն յատկութի հոգւոյն և մարմնոյն ոչ բար-
ձան. քանզի ուրեք իցէ այնքան ամբարշտագոյն, որ անմարմ-
նութի 'ի հոգւոյն բարձցէ, և մարմնաւորութի ասասցէ,
նոյնպէս և մարմնաւորութի 'ի մարմնոյն տարաբարձցէ, և
անմարմնութի նմին ասասցէ. և թէ կարի յանդգնագոյն
ոք իցէ, զայսպիսի անմտութիս ոչ բացերևեսցէ. այլ որ
ինչ վայելուչ է մարմնոյն Պետրոսի բան բացերևեսցէ. և
որ ինչ հոգւոյն հոգւոյն: Նոյնպէս և Ք՟նի կարի յանդըգ-
նութի է, եթէ որ ինչ մարդկութին է՝ դիցէ 'ի վ՟ր Ա՟ծու-
թեան, որպէս Արիոս, որ անդրանկութի արարածականութեան

եգ

եղ յԱստուածութիւն, արարած զորդին առնելով. և որ ինչ Աստուածն դիցէ ՚ի մարդկութեան, բովանդակն Ած առնլով, ոչ առայն ժամուն նուիրէս. թէ որդին մարդոյ յերկնից էջ. ըստ այնմ թէ ոչոք ել յերկինս եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ որ էն յերկինս. զի յերկնից էջ, և իբրև զխողովակ էանց ընդ կուսն, և կամ՝ իբրև ընդ գաղափար. քանզի յաղագս անհասանելի միաւորութեան՝ ասաց մին զբանս զայս, և ոչ թէ յերկնից եբեր զմարմինն, և ոչ փոխարկեցաւ յԱստուածութեան բնութիւ մարմինն, ըստ այնմ սեւեռք զիս զի ես նոյն եմ, և զայս ասաց, եցոյց նոցա զձեռս և զոտս: Որդ՝ զձեռս և զոտս ցուցանելով յայտնէ թէ կատարեալ մարդ է, ոմ և էրն, և ոչ փոփոխեալս. ոմ երկաթ ընդ հրոյ միացեալ, և միաւորեալ. թէպէտ երկաթն հրացեալ տեսանի, սակայն ծանրութի, որ է յատկութի նորին, ոչ բարձեալ լինի: Նոյնպէս և թեթևութի հրոյն, որ յատկութիւն նորուն, ոչ տարաբարձեալ լինի, ՚ի միաւորութի երկաթոյն: Այլ տես զկուրութի Արիոսի, և նուիրէս, զի Արիոս զյատկութին երկաթոյն դնէ ՚ի վե՛ հրոյն, այսինքն արարածականութիւն ՚ի վե՛ պարզին, որ ասաց արարչին, անդրանիկ ամ՝ արարածոց: Իսկ նուիրէս զյատկութի հրոյն դնէ ՚ի վե երկաթոյն, որ արարածն յարարչին փոխադրեաց: Եւ առ այս ով իցէ ՚ի տխմարայն ոք, որ ոչ յանդիմանիցէ զսոսա. և ըմբերանեսցէ յաղագս տխմարութեան. քանզի յորժամ ՚ի ձեռս առեալ տեսանէ զի ծանրէ. թէպէտ հրացեալ է. և թեթևէ, թէպէտ է երկաթոյն միաւորեալ է. և ոչ հակառակութեն վէճ ոք առ այս բերէ. թէ և կարի յիմար ոք իցէ. մեր թէ իմաստուն ոք իցէ: Այսպէս և ՚ի ՔՍ թէպէտ մարդկութիւն և Աստուածութիւն, միացան և միաւորեցան, սակայն յատկութիւն ոչ տարաբարձան, վասն այսորիկ ընդդէմ երկոցունցս, յարեան հօլովքն եկեղեցւոյ, զմիաւորութիւն խոստովանեցան, և հաստատուն եղին, իբրև զհիմն զմի բնութիւն, և առա զյատկութիւն կատարեալ Աստուածութեան, և կատարեալ մարդկու

կութեան պահեցին․ ուղղ հրոյն թեթեւութիւն, եւ երկաթոյն
ծանրութիւն, զի երկուց ծայրագոյն հերձուածողացս պա-
տասխանի լինիցի, Որդւոյ, որ ինչ մարդկութեանն է, անկ
եւ ըմբռն, արարածականութի 'ի նա վերաբերիցի, եւ որ ինչ
Ածութեանն է արարչութեանն եւ Ած ասասցի: Իսկ եւ տխբեայ
զշփոթութիւն եւ զփոփոխումն զոր ասաց, ծն անդր տարա-
բարձցի: Եւ մի ներգործութի երկուց միացելոց, կատա-
րեալ էութեանցն խոստովանեցին․ քանզի հուրն որ ընդ եր-
կաթոյն միացեալ է, եւ միաւորեալ սակայն ներգործութիւն
մի երեւի, որ է այրելն, զի յայրելն համանգամայն հրոյն, եւ
երկաթոյնէ: Նոյնպէս եւ Ածութիւն, որ ընդ մարդկութեան,
միացեալ է եւ միաւորեալ, յատկութիւքն մնացեալ: Իսկ բը-
նութիւն եւ ներգործութիւն մի լեալ, ըստ օրինակին ուղղ եւ
ասացաւ․ մի բնութի միաւորութեան հաստատեցին, եւ ըզ
յատկութիս յաղագս անշփոթութեան պահեցին․ ըստ աւ-
անդութեան երանելոյն Դիոնէսիոսի․ որ ասէ անշփոթ ըզ
յատկութիս իւր պահելով․ ուղղ եւ երանելի Մկրտիչն եւ
բաց երեւոյթ ասելովն․ վն՟ որոյ եան ասէի որ զկնի իմ գա-
լոցէ, որ առաջի իմ եղեւ, զի նախքան զիս էր՛, արդ որ ըզ
կնի իմ ասէ, զկատարեալ մարդկութիւն յայտնէ․ որ փոքր
էր վեց ամսեաւ քան զՅովհաննէս: Իսկ որ ասէ առաջի իմ
եղեւ, զի նախքան զիս էր՛, Ածութեան յատկութի յայտ առ-
նէ, որ նախքան զՅմ՛ է ակս էր, ընդ հօր եւ ընդ հոգւոյն, ըս̃
այնմ թէ * ելք նորա, ի սկզբանէ աշխարհի, եւ թէ * յառաջ *Միքեայ
քան զարուսեակ ծնայ զքեզ: Որդ եթէ այսպիսի յատ- 2 ·
կութիս երկուց կատարելոց կան եւ մնացին, այսինքն Ած- *Յով ·
ութեան եւ մարդկութեանն, ապա ընդէ՞ր սխալեալ պարտէին, 8 · 25 ·
երկրքեանս այսօրիկ, եւ անիրաւաբար յանել 'ի վը Հաւ-
ատացելոյն Քի: Օ՜ այնքան աւերեաց Որիոս, մինչ
զոր ինչ մարդկութե յատկութիւն, եդ յԱծիսկութիւն
արարած ասելով զնա, եւ ստոր 'ի բնութեանէ ածութեան:
Իսկ եւտիքէս այնքան սխալեցաւ, եւ անիրաւեցաւ, մինչ զի
զմարդկութիւն ամենեւին եբարձ, եւ զՅմ՛ Ածութեան ասաց,

զսնանիլն, զքաղցնուլն, զծարաւելն, զվաստակելն, ըզ-
ննջելն, զքրտնելն, զչարչարանս, զխաչն, զխոցուածն,
զմահն, զթաղումն, և զայլս որ մարդկութեան էր յատ-
կութիւն, զամ՝ յԱ՟ծութիւն վերաբերէր, այլայլութեամբ և փո-
խատրութեամբ, վ՟ն որոյ եկեղեցին Ք՟սի, զերկոսեանս զայ-
սոսիկ, լեգէոնիւ, ընդ խոզս՝ն հեղձամղձուկ արարին, և
առաքեցին արտաքս քան զաշխարհ, և դաւանեցին զնոյն
Ք՟ս համաբուն. և համագոյ հօր ըստ Ա՟ծութեան. և հա-
մաբուն և համագոյ մեզ ըստ մարդկութեան, մի բնութեամբ
կատարեալ, և զյատկութիւն ոչ տարաբաժանեալ. և նոյն ինքն
մին Ք՟ս, մի որդի, և մի տ՟ր խոստովանեալ: Եւ նոյն ինքն
զԱ՟ծային և զմարդկայինս կատարելապէս կատարեալ. ոչ
Ա՟ծայինն ՚ի մարդկայինն փոփոխեալ՝ և ոչ մարդկայինն
յԱ՟ծային, և ոչ թաքուց միմեանց գործ գործեալ: զոր ինչ
Ա՟ծայինէր, ոչէր առանց մարդկութեան. և զոր ինչ մարդ-
կութեան, ոչէր առանց Ա՟ծութեան, վ՟ն զի միաւորեալէր. այլ
համ, և մի, և նոյնութեամբ զամ՝ զԱ՟ծայինսն, և զմարդկայ-
ինսն գործէր, անշփոթ մնալով, և զյատկութիւն ոչ տա-
րաբաժանելով: Եւ այսպիսի թլփատութեամբ վիմաւ բանին,
թլփատեցին զեկեղեցին Ք՟սի. զորօրինակ որդիքն Իսրայէլի,
վիմաւ գայլախազիւ՝: Եւ ապա ծանուցեցին զկենդանարար
մարմին և արիւն կենարարին, որ և հրամայեցաւ՝, թէ
անթլփատ մի ուտիցէ:

ԸՆԴ ԴԷՄ ՄԱԿԵԴՈՆԻ՝:

Արդ յետ այսորիկ ել և յարեաւ Մակեդոն, որ ևս չա-
* Յոհ. 4.24. րագոյն քան զԱրիոս, զազրալուր բանիւք երևեցեալ. զի
* Ծնն. 1.2. որդին արարած ասաց, և զհոգին օտար, և պաշտօնատար:
Ո՜վ թէպէտ գայլախազ բազումքեին, այլ ոչ ինչ օգտեաց
* Սղմ. 32.6. սուր բանին, որ հատու է քան զամ՝ սուր երկսայրի, որ ա-
սացաւ * Հոգի է Ա՟ծ, և թէ * Հոգի Ա՟յ շրջէր ՚ի վ՟ն ջուրց.
* Սղմ. 118. 8.9. և թէ * Հոգւով բերանոյ ն՟ր, ամ՝ զօրութիւնք ն՟ր. որ զարարչա-
գործութիւն, ընդ հօր, և ընդ որդւոյ յայտնէ, նոյնպէս և
յաւիտենականութիւն որ և ասէ * յաւիտեան տ՟ր բանն քո կայ
յեր

յերկինս, յազգէ մինչեւ յազգէ ճշմարտութիւն քո, զի ճշմար-
տութիւն Հոգւոյն ասէ, ըստ այնմ՝ թէ * Հոգին ճշմարտութեան * Յով.
որ 'ի Հօրէ ելանէ. եւ * Հոգին ասաց որոշեցէք ինձ, զԲառ- 15.26.
նաբաս, եւ զՍօղոս, 'ի գործ առաքելութեան յոր կոչեցեալ է *Գործ.
իմ զդոսա: Ահա ինքն իշխանութիւն որոշել, Այն գործ, 13.2.
եւ յառաքելութիւն հրաւիրել, եւ ոչ ըստեղծուածոյ: Նա եւ ե-
րանելին վէմն Պետրոս, ասաց ցԱնանիա, * ընդէր ելից սա- *Գործ.
տանայ զսիրտ քո, ստել քեզ Հոգւոյն սրբոյ, ոչ ստեցեր 5.3.
մարդկան, այլ Այ: Նա այլ եւ բազումն են այսպիսիք
վէմք, որ կարօղքեն, թլփատել զհերձուածս սոցին, յան
թլփատից հերձուածողաց, այլ ինքեանք ոչ մատուան. եւ ոչ
յանձն առին թլփատել զանձինս: Մորոյ հոգեկիրքն զու-
մարեալք, զնա եւ զբանս իւրեանց, թլփատեցին յանդա-
մոյն Քսի եւ ապա ճաշակեցին զերկնային զճաշակն, եւ
զհոգւոր ըմպելին արբին:

Ընդդէմ Նեստորի:

Յետ այսորիկ յարեաւ միւսումն անթլփատ նեստորիոս
անուն, որ ուրացաւ զԱծածնութիւն երանուհւոյն, եւ եդ
'ի Քսի երկու անձն երկու բնութիւն, երկու դէմք, երկու
ներգործութիւն, եւ երկու կամք. եւ վէմ՝ բանին զսա եւս ոչ
կարաց թլփատել, վն զի ոչ մատոյց զանձն: Զի ձայնն հայ-
րական, գոչեաց 'ի վերայ միոյ որդւոյ, 'ի յորդանան եւ 'ի
թաբօր, ասելով դա է որդին իմ սիրելի, դմա լուարուք:
Արդ՝ ով նեստորէ, դա է ասել, եւ դմա լուարուք՝ եզա-
կան անուն է, եւ ոչ բազմաւորական, միոյ որդւոյ, միոյ
անձին, եւ միոյ բնութենէ բացերեւութի, եւ դու զի մրդ-
երկանկի խմաստակիրեա մի թէ դու քան զՀայր իմաստնա-
գոյն երեւեցար. որ նա եզակի ասէ, եւ դու բազմաւորակի:
Նոյնպէս եւ որդին. վն իւր ինքեան մի անձն, մի որդի,
մի բնութիւն, եւ մի ներգործութիւն բացերեւեցոյց, ասելով
ցկծշկեալ կոյրն. դու հաւատաս յորդին Այ. եւ նա ասէ,
ո՞ր ով է զի հաւատացից, եւ Յս ասաց, եւ * տեսեր զնա, եւ * Յով.
որ խօսի ընդ քեզ նա է. եւ նա իբրու միոյ երկիրպագ: 9.35.

Արդ

Որդ ասա ինձ, որոյ երկրպագու՝, որդւոյն Ա՟յ, ան-
ձին, և բնութեն, և ներգործութեն. եթէ ներգործութեն,
բնութեն, անձին, և որդւոյ մարդոյ: Որդ՝ եթէ Ա՟յ ասես,
*Օրէն՟ք. ճշմարիտ ասես, զի գրեալ է * Տ՟ն Ա՟յ քում երկիր պագցես,
6 · 13 · և զնա միայն պաշտեսցես. և թէ դու այսու առաւել ի-
մաստուն երևիս քան զՀ՟Ր՟Ս. վ՟ս զի նա ասաց և տեսեր
զնա, և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է: Որդ՝ ասա ինձ ով նեստո-
րիկ, տեսեալն և խօսեցեալն, որդին մարդոյն, եթէ ած-
ոյն, եթէ Ա՟յն՝ ասես յոյժ սխալիս, զի ամենեքին Ա՟Ծ՝ ոչ
*Յով՟հ. տեսանի, զի անկարելի է, զի գրեալ է, *զԱ՟Ծ ոչ ոք ետես 'ի
1 · 18 · մարդկանէ, և ոչ տեսանել կարող է, և եթէ ասես մար-
դոյն, կոյրն սխալեցաւ, զի մարդոյն երկրպագութի մա-
տոյց. նոյնպէս և Հ՟Ր՟Ս սխալեցաւ՝, զի ոչ յանդիմանեաց
զնա, արարածոյն երկրպագութեն, և մանաւանդ թէ ինք-
նին իսկ հրամայեաց, ով նեստորիկ անկարելի, թէ Հ՟Ր՟Ս
սխալի, որ Ա՟յ զօրութիւն է, և Ա՟յ իմաստութիւն. այլ
դու որ երկեակս զՔ՟Ս՝ ինչ իմանաս: Նոյնպէս և աշակերտ-
քըն 'ի նաւին, միոյն երկիրպագին և ասացին, արդար, և
*Մատ՟թ. որդի Ա՟յ ես դու՝, և թուի թէ ասասցես դու թէ և սոքա
14 · 33. եւ սխալեցան. դու ասելոյն. որ եզաբար միոյ որդւոյն է
յայտնութի, միոյ անձին, միոյ բնութեն, և ներգործու-
թեն, և ոչ բազմաւորակի: Նոյնպէս և վէմն հաւատոյ, եր-
ջանիկն Պետրոս, ազդմամբ հօր ասաց, դուես որդի Ա՟յ
կենդանւոյ: Ահա յայտ եղև, թէ անիմաստութիս, այն-
քան կարի, և սաստկագինէ, որ ոչինչ սուր կարէ զսա թլ-
փատել. ոչ ձայնն և վկայութին հայրական. ոչ հրամանն
որդւոյն կենդանական. ոչ աշակերտացն բան դաւանական,
և ոչ բերան Պետրու առաստուական. և տինա, և ոչ այ-
սոցն չորաքնայականն՝, որք զեզականն բան բարբառէին զա-
րհուրական, եթէ դուես որդի Ա՟յ եզակի անճառական: Ն՟ու-
յալագս այսորիկ, սրբազանն գրէ աշակերտոյն իւրոյ, թէ
*Տիտ՟. *յառնէ հերձուածողէ հրաժարեա, գիտասջիր զի այնպիսին
3 · 10. թիւրեալ է, և անձամբ զանձն իւր մեղանչէ. զի եթէ ան-
ձին

ձին խորոյ մեզանչէ, ում խնայէ: Եւ վն այնորիկ հրաւիր-մամբ հոգւոյն, հանդիսացան հարքն հոգի ընկալեալք, և առաքս հանին, զանթլփատսն սրտիւք, և ինքեանք դաւանե-ցին ըստ նմանութե ձայնի հօրն երկնաւորի, և որդւոյ նորին, և ընտրելոյն գնդին, մի որդի, մի անձն, և մի բը-նութիւն, ան փոփոխելի, և մի ներգործութիւն և կամք անճա-ռելի: Եւ վն այնորիկ Ածածին զՍբ կոյսն: Զի նոյն անձն բանին, որ ՚ի հօրէ ծնաւ անմարմնաբար նոյնն եր-ջանուհւոյն ծնաւ մարմնով: Զի ոչ հայր ՚ի ծնանել բա-նին Այ, Ածածնող ասի, և անուանի, սոյնպէս և երա-նուհին, որ զնոյն անձն ծնաւ, Ածածին և զնա ասի. և վն այնորիկ ասի մի ներգործութիւն, հոգի ընկալ հարցն, զի զգործն մի է, որ է Ածածնողութին: Եւ յաղագս այնորիկ եդ Նեստորիոս երկակի ներգործութիւս զի յերանուհւոյն Ածածնողութե ներգործութիւն, յետ մի վերաբերեսցէ, այլ ՚ի մարդ, ոչ և ասէրն, մարդածին, Քսածին և ոչ Ածածին: Նոյնպէս չարափառութե երկու բնութիւն եդ, զի մարդկային բնութեն լեցի ծնօղ. և ոչ Ածային ան-ձինն և բնութե, զի մի Ածածին անուանիցի. ոչ և եր-բեմն ետեսեալ զպատկեր կուսին, և զմարմնացեալն Ած ՚ի գիրկս նորին, աղաղակեաց ո՛վ Մարիամ, մի պարծիր թէ Ած ծնար, զի դու մարդես, և յաւէտ զմարդ ծնար. և նոյն ժամայն հարեալ ՚ի դիւաց, բախմամբ մեծաւ հարեալ ՚ի գետնի, ՚ի սալն մարմարինեայ. և հազիւ ուշաբերեալ զնոյնն երկրորդէր: Տեսէք ահա ոչինչ թլփատեաց զինքն, թէպէտ և ՚ի չարչարանս ըլկեցաւ. յաղագս այսորիկ եկե-ղեցին Քսի, և ամենահրճեալ ածածնին, յանդամոյն Քսի զնա թլփատեցին, և ապա զքաղցր Տրն ճաշակեցին ըստ հրամանին թէ անթլփատ մի կերիցէ. վն այնորիկ ասաց

երջանիկն մարգարէն, ճաշակեցէք և տեսէք զի՛՛:

## Գլուխ ԾԴ.

Ցուցանէ թէ որպէս Դրախտին Նոր աշխարհին, և որ ՚ի Սրբոցն հաւատոցն խորհին՛:

Դարձեալ անթիւրատէ, անապաշխար մեղաւորն, որ
ոչ ունի դարձումն յամ՝ մեղաց իւրոց, զի ասաց
*Մար. տէրն ընկիզքն աւետարանին իւրոյ, թէ * ապաշխարեցէք, զի
1.15. մերձեալ է արքայութիւն երկնից: Արդ՝ արքայութիւն եր-
կնից. ոչ այլ ինչ է, եթէ ոչ ճաշակումն այս, որէ անմա-
հական խորհուրդ. յաղագս այնորիկ որ կամիցի ճաշակ-
մամբս մեծարել և հրաւիրել արքայն երկնից ՚ի տուն իւր,
և հաղորդ լինիլ սոսկալի և քաղցրագոյն խորհրդոյս մա-
քրել զինքն յերրակաւ տեսակաւ ապաշխարութեան, և ապա
մտանիլ ՚ի լոյսն կենաց յո̅յ հրամանին թէ մատիք առ տէր,
և առէք զ լոյս. զի ըստ օրինակիւ անձն մարդոյ, որ որ-
քան ոչէ մաքրեալ, ոչ ընդունակէ լուսոյն կենաց, որպէս ոչ
սա յերկիս տեսակս մաքրի, և ապա պայծառապէս ընկա-
լեալ լինի զլոյսն, այսպէս և անձն մարդոյ, երրակաւ տե-
սակաւ ապաշխարութեան, զի պղծաւորին նախ հրով սրբի
որ ամ՝ ժանգ և աղտեղութիւն որ ՚ի մէջ իւր ունիցի, մաք-
րեսցի, և այրիցի, և ապա խարտեսցի սրբի, և ըսպիտակի,
և ապա ընդունակ լուսոյն լինի: Այնպէս և անձն մար-
դոյ, պարտէ երրակի տեսակաւ ապաշխարութեան մաքրել և
սրբել. և ապա երկնային լուսոյն ընդունակ լինիլ: Նախ
սրտիւն զղջանալ. զի զղջումն սրտին է, յորժամ ելանեն ամ՝
չարիք, ըստ ա̅ն թէ ՚ի սրտէ ելանեն ամ՝ խորհուրդք չարք,
զի նախ արմատ. յորժէ ամ մեղք արմատանան, և վ̅ն այ-
նորիկ պարտէ փոյթ ընդ փոյթ, զղջմամբ արմատաքի խլ-
ել. զի մի արմատացեալ աճեսցի, և զօրասցի, վ̅ն այսորիկ
ասաց Ա̅ծ ցԱ̅դամ; դու ըսպասեսցես ն̅ր զլխոյն, զի կը-
լուխէ յիշումն մեղաց, որ ՚ի սիրան ձգէ սատանայ, վ̅ն որոյ
ըստ

ըստ հրամանիս այսորիկ, ընդպահել պարտիմք յիսկզբանն. և փութով զղջանալ, զի խորտակիցի գլուխ'ն, և այսէ զոր ասէ. կալարուք զաղուեսունս փոքունս, զապականիչս այգեաց. զի այգիք մեր ծաղկեցին. քանզի մինչդեռ մեղ՛ք, սակաւք, և՛ փոքունք երևին, քան զբերանդոյն և զործոյն, որ արդար և այնպիսիք, այլ ոչ պարտէ զանց առնել զնովա՛, զի ընկլզնէ, և գլուխ զի ո՛մ կենդանոյ գլուխնէ շարժիչ, զի յորժամ հատոյի անդամքն, ոչ ևս գործեսցին՝ վ̅ որոյ ոչ է պարտ սակաւ համարել զմեղս մանրացն, այլ ըստ հրամանին ա̅յ ընդպահել գլխոյն, և ընկզբանն փութով զղջանա՛լ, զի խորտակիցի գլուխն: Զի եթէ ոչ արգելցի գլուխն օձին, ՚ի ծակ մտին, նոյն ժամայն է̅ գլխոյն, ողջ մարմինն մուծանի, և մահացուցանէ՛ ը̅ այնմ՝ յղացաւ զցաւս, և ծնաւ զմահ՛: Նա յետ այնորիկ պարտէ զխոստովանութենէ բուռն հարկանել. քանզի ով զղջումն, մտաց մեղացնէ քաւութիւն, նոյնպէս խոստովանութիւն բերանոյն մեղացնէ քաւութիւն :

## ԳԼՈՒԽ ԺԵ :

### Թէ պարտ է խոստովանութիւն առնել · ի Սրբազան Հայրերուն :

Պախ պարտէ, ո՛յ խոստովանիլ և զանգատել և մերկապարանոց յայտնել զյանցանս՛, և զմեղս իւր՛, զսրտին, և զխորհրդոյն. ըստ այնմ՝ խոստովանեա նմա՛, վրէժխնդիր երեսաց քոց ա̅ծ է. և եթէ խոստովան եղէց քեզ տ̅ր, զի բարիէ. և եթէ խոստովան եղէց քեզ ը̅ հութեամբ ա̅ծ ա̅ծ իմ̅ և աւետարանիչն ասէ, ապա եթէ խոստովան լինիցիմք զը մեղս մեր հաւատարիմ՝ նա և արդար, առնել թողուլ զմեղս մե՛ր: Նա ապա յետայնորիկ յաւրդաց եկեղեցւոյ, կատարեալ քահանայի՛ որ իմաստութեամբ և հաւատով իցէ կատարեա՛լ. ըստ նմանութեան՝ հմտարարագոյն բժշկի. քանզի ով ՚ի

հի

հիւանդութիւնս մարմնականս որքան ձեռնտուագոյն լիցէ բժշկելն այնքան բաղձագոյն ողջանալ խօթացեալն, զի որդեակքն ողջացուցիչք են ցաւոց․ քան փարատիչք: Վ̃ այնորիկ եկեղեցին քո, ոչ ամենեցուն հրամայէ զայն գործ․ այլ որք կրթեն․ զի որ ոչ է կրթեալ, մահացուցանէ, քան թէ փարատէ: Նոյ դարձեալ կարգեցաւ․ զի խոստովանահայրն բանականութեամբ բանականագոյն խոհեմագոյն և կորովամիտ լիցի, և մանաւանդ առաքինութեամբ յղփացեալ․ քանզի երանելին Բասիլիոս, որ եօթնալոյս անուանիւր․ թէ մեղօք մեղուցեալ կնոջն բուժիչ ցաւոց դեղն շնորհեաց, բայց 'ի մինն ոչխարաշաւ․ և առ աբբայն եփրեմ առաքեաց, և նա ևս զնոյն ոչխարութիւն խոստովանեցաւ, մինչև բարձրեալն ետես երկոցունց սեանցն եկեղեցւոյ զխոնարհութիւն, և զայն սքանչելեօք ընծեաց․ և վ̃ այնորիկ ըստ իմաստութեան, պարտ է բանականութեամբ կատարեալ, և առաքինութեամբ․ քանզի բազումք գոն իմաստունք, այլ ոչ առաքինագոյն, և բանականագոյն, այլ որ յամի կատարեալ իցէ, նըմա հրամայէ եկեղեցին Ք̃ի, զգործ խոստովանութեան կատարել, քանզի խոստովանողքն նմանեն ճանապարհորդի, որ կամի յերկրէ յերկիրս երթալ․ վ̃ որոյ խոստովանահայրն, այնքան պարտ է քաջագոյն լինիլ յուղևորութիւն, մինչ զի և նա անսխալապէս ուղևորեսցէ․ զի որ զինքն ոչ, զի՞ արդ զայլս․ դարձեալ խոստովանողն է անգէտ իւրոց բանից, և գործոց, զի ո՞վ անգէտ որ, յորժամ կամիցի գործել ինչ, հարցանէ զճարտարագոյնսն, զի թէ ոչ, սխալի 'ի գործսն, ուրեմն հարկաւորէ խոստովանութեան հարցումն․ դարձեալ խոստովանութիւնն է հոգևորական բժշկականութիւն, ո՞վ և ասացաւ, արդ ո՞վ մարմնոյն ճարտարագոյն, սոյնպէս և հոգւոյն կրթնապատկագոյն․ զի յիմարացն և տխմարացն զիասս բազում ծնանին, մինչ զի և մահ ևս գլխովին, ո՞վ ամն 'ի հարանցն, չոգաւ 'ի խոստովանութիւն, ուսեալ անհմտի, և նա այնքան վիրաւորեաց զնա, մինչև ուղևորեցաւ դառնալ յաշխարհ, որոյ դիպեալ երանելի հայրն Մովսէս, փարատեաց

տեաց զվէրս նր, և հաստատեաց բանիւք մխիթարութեն, և զխոստովանահայրն պատժապարտեաց. արդ՝ ոպ մար-մնաւոր հիւանդին, ճարտարագոյնս պարտէ լինել բժիշկ, սոյնպէս և հոգևորին: Որ ոպ մարմնաւոր վիրացն հարկաւ-որ է դեղ, և ըսպեղանիք, սոյնպէս և հոգևորին կրկնապա-տիկ: Որ ոպ նաւորդացն հարկաւոր է նաւապետ, սոյնպէս և ուղևորացն ծովու կենցաղոյս. խոստովանահայր կառա-րելագոյն, զի առաջնորդել կարասցէ անսխալապէս: Որ ոպ հարկաւոր է պատկերագրացն, գորակս գունազան դեղոց, այսպէս և խոստովանութեն, զանազան իմաստութիւս, զի զապականեալ պատկերն Այ նորոգիցէ: Որ ոպ հարկաւոր է քարտուղարի գրիչ, սոյնպէս և մեղաւորի խոստովանութին: Որ ոպ հարկաւոր է աշակերտի վարդապետն, տղայոյ ու-սուցիչն, ճանապարհորդաց առաջնորդ՝ն, ոչխարաց հովիւն, պարսպաց պահապանն, դիտանոցի դէտն, աղտեղացելոց ջուրն, սոյնպէս և ամ հաւատացելոց, խոստովանութին: յաղագս այսքանեաց պատճառաց, եկեղեցին Քի հաս-տատեաց զխոստովանութին, զի բարձի մեղաց արատու-թին. դարձեալ պարտէ խոստովանողացն զի զնորագոյն մեղ-սին պատմեսցեն, և զխոստովանեալսն մի ևս կրկնեսցեն, զի մի անամօթասցի բազում կրկնելովն, թէպէտ ոմանք բարի համարին, յորժամ պատկառանօք լիցի կրկնալն, այլ ինձ անառակ որդւոյն զմիանգամն առաւել քաղցրագոյն երևի, յորժամ միանգամն ոչ կրկնեաց, թէ մեղայ յերկինս և առաջի քո. նոյնպէս և Մագդաղենացւոյն յորժամ լուա-աւ թողեալ լինին քեզ մեղք քո. սոյնպէս և մաքսաւորին, զի ոչ երբէք կրկնեցին: Արդ՝ մեղաւորն եթէ հաւատայ, ընդ խոստովանութեն կատարեալ թողութի, զինչ ևս պի-տոյն կրկնելն: Որ ՚ի հարցն սրբոց, ոչ զկրկնելն աւան-դեցաւ՝, այլ միշտ զայն ՚ի մտի ունել, և վս նր արտասու-ել. և առն Այ ցուցանելովն, ներումն խնդրել. և զինքն ընդ խոնարհս զիջուցանել. դարձեալ խոստովանահայրն այնքան պարտէ գթութագոյն լինել, և ցաւակից, մինչ զի

զամ

զնոյն յանցանս խոստովանողին ինքեան համարեալ, իբրու թէ
ինքն իցէ արարեալ, և գործեալ, որպէս և Տէրն առնէր, որ
զկէս մեղացն ինքեանք ՚ի վերայ ինքեանց բառնայցեն, որպէս և
՚ի պատմ. երանելին Բասիլիոս, ընդ երիտասարդին, և Տէ-
հայրն մեղուցեալ և ուրացեալ եղբօրն, յորմէ հոգին իբ-
րու զաղաւնի թռեաւ ՚ի բերանոյն, և ել յերկինս: Նո-
յորին ինքնին խոկ գլխովին ՚ի վերայ ինքեան եբարձ զանէծս
*Օրէն. Նզովեալն. որպէս այնմ թէ * անիծեալ ամ՚ որ կախեալ կայցէ
21.23. զփայտէ. և թէ * նա վս մեղաց մատնեցաւ, և * որ մատնեաց
*Հռմ. զնա առ մեղս մե՛ր, և սրբաչափն առաքեալ ասէ, * ունիմք
4.25. քահանայապետ որ կարող է չարչարակից լինել տկարութեանս
*Եսայ. մերոյ. և թէ * ողորմած լինի, և հաւատարիմ քահանայա-
53.6. պետ, յԱծանկոյս կողմանէ անալ, առ ՚ի քաւել զմեղս ժո-
*Եբր. ղովրդեանն. քանզի ոչ եթէ ունիմք քահանայապետ որ չէ-
4.2. ցէ կարող չարչարակից լինել տկարութեան մերոյ, այլ փորձե-
*Եբր. ալ ըստ նմանութեան առանց մեղաց: Եւ երանելի Մա-
4.15. կրակիշն ասաց, * ահաւասիկ Գառն Այ որ բառնայ զմ
*Յով. մեղս աշխարհի. և վս այնորիկ խոստովանահայրն պարտի ը
1.28. մեղուցելոյն չարչարակից լինել, և մի դնել ծանրագոյն բեռն
՚ի վերայ ուսոց մեղուցելոյն, այն ծանրագոյնն այն լիցի, որ
ոչ եւս արասցէ զայն, և չաւելով ինչ բեռն, զի պատասխանի
լիցի հեշտութեան մեղացն, և այնու եւս չարչարակից լիցի,
զի տն նմանիցի, և որոց նր. զի և Տէրն ոչ զծանրութիւն
բեռանց յաւելուլն, այլ ցաւակցութիւն: դարձեալ պարտէ
խոստովանահօրն, այնպէս հաստատել զմեղուցեալն, քաւ-
ցրաբանութբ զի մի եւս զնոյնս գործեսցէ, զի մի նմանիցի
*2 Պետ. շան, և խոզի. յորոց մինն դառնայ ՚ի փսխած իւր, և մինն
22. լուացեալ ընդ տիղմ թաւալի. որպէս * առաքելոյն և Սողոմոնի,
*Առակ. և յորժամ հաստատիցի առ այս ապա զոր ինչ տանել կա-
26.11. րող իցէ, զայն ՚ի վերայ ուսոց նր բարձցէ. և զայն զոր ինչ
*Սղմ. ինքն հաւանիցի. զի մի լիցի զեղծալն ոչ կարասցէ տանել,
600. ՚ի ներքոյ մնասցէ, և լինիցի ՚ի ներքոյ բեռինն, և ոչ հա-
28. տուսցէ զհատուցումն, և կատարի բանն, թէ * դիր զմեղս
՚ի

'ի վ̄ր մեղաց նոց, զի մի մնացեն յարդարութեան. այլ հաւանու-
թե̄ նորին, զոր ինչ տանել կարօղ իցէ, զքաղցր լուծն
Ք̄ի. 'ի վ̄ր դիցէ, որպէս և գրեալ է, ոմն իշխան եմուտ 'ի
պարտէզ իւր, և կին որ եկն 'ի գանգատ նմա, յոսկեղէ
խուրձ, և զի առ անձինն էին, յաղթեաց զնոսա սատանայ, և
իբրև կատարեցաւ գործն պոռնկութեան, յայնմ գիշերի մինչ
դեռ ննջէր իշխանն ընդ կնոջ իւրոյ 'ի մահճին, յանկարծա-
կի պարհուրեալ կինն աղաղակեաց, և իբրև զարթուցեալ
եղև յառնէն, և հարցեալ եղև զպատճառն, ասէ. 'ի պարտի-
զի մերում, 'ի ներքոյ ծառոյ եկն սևագէմ ոմն, և է հար
սուսերաւ, զսիրտ քո, ըսպան և զնա, և ծանեաւ իշխանն,
և փութապէս ընդ առաւօտն, կոչեաց զխոստովանահայրն,
'ի նոյն տեղւոջ, յորում գործեալ էր զմեղս, խոստովանե-
ցաւ, և ընկալաւ զապաշխարութիւն հինգ հայր մեր որ յերկ-
կինս ասել. և յորժամ 'ի միւս գիշերոյ, դարձեալ Է կնոջ
իւրում ննջէր, դարձեալ լուաւ խնդալից աղաղակ, և իբրև
զարթոյց, ասէ դարձեալ տեսի զքեզ, 'ի նոյն տեղւոջ, ուր
մեռեալ դնեիր 'ի խոցմանէն, եկն քահանայ ոմն և մատոյց
'ի վ̄ր վիրաց քոց, հինգ վարդ, և առ ժամայն յարեար: Եւ
եկեալ 'ի միտս իշխանն, և ծանեաւ զքաղցր լուծն Ք̄ի,
և փառաւոր առնէր զՏ̄ր. վ̄ն այսորիկ տ̄մ խոստովանա-
հայր, պարտի այսպիսի, խնամակալութեամբ, զմեղու-
ցեալն որ մեռեալ իցէ 'ի մեղս քաղցր լծովն Ք̄ի յարու-
ցանել. և մանաւանդ ցաւակից և չարչարակից լինել, յա-
ղօթս, պաղատանս, յարտասուս. և այլ ևս յօժարս առա-
քինութեան. դարձեալ այն բան յօժարեցուցէ, 'ի բառնալ,
լծոյն մինչ զի դառնութիւն, քաղցրութիւն երևիցի, և քաղ-
ցրաբար ճաշակեսցէ զդառն դեղն յիշեցուցանելով, ըզ-
փառս արդարոյն. և զանպատմելի զչարչարանս դժոխայն-
ոցն և մեղաւորացն. ով բժիշկք որք յորժամ խօթացելոյն
մատուցանէին զդառն դեղն. յուշ առնեն զփարատումն
ցաւոյ, և զյանդորրական զկեանսն, և զերծումն յամենե-
ցուցեց, և կեցութեան անախտաբար, վ̄ն որոյ հիւանդն,

յօ

յօժարութիւ ըմպէ զդառնութիւն դեղոյն. դարձեալ պարտ է խոստովանահօրն, մեծատանց և ազգաց, ողորմութեն լուծ դնել և խոնարհութեն, ըսպասաւորութեն որբոց և այրեաց, 'ի պէտս կարեաց աղքատաց և տնանկաց: Իսկ աղքատաց զանտրտունջ վարս, ծնրադրութիւնս, գոհացողութիւնս, և յանդժգոհութիւնս 'ի յաղքատութիւն և 'ի տնանկութիւն, յարտասուս, և 'ի վտանգս, և 'ի ձեռագործ յաշխատութիւս, ատել զծուլութիւս և զձանձրութիւս. բայց հմտաբար ուսուցանել, և քաղցրաբար և աղէրսաբար, և ոչ իշխանաբար. քանզի տկարէ, զի մի երբեք դարձուսցէ, և ընդվզիցի:

## ԳԼՈՒԽ ԺԶ.

### ՑՈՒՑԱՆԷ ԹԷ ՅԵՏ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ՝ ՊԱՐՏ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ Ի ՆՈՅՆ ՄԵՂԱՑ:

Եւ յետ խոստովանութեն, որ զմեղս բերանոյն քաւեաց, ապա պարտ է գործոյն քաւիլն հոգալ մեղացն. քանզի ոմն ասացաւ, երրակի է մեղքն, մտացն, բերանոյն և գործոյն. մտացն զղջմամբ քաւեցաւ, բանին և բերանոյն խոստովանութբ: Իսկ գործոյն պարտի փոխարէն հատուցմամբ. քանզի թէ ոմն մեղք, կամ է խորհեցեալ, կամ է ասացեալ, կամ է գործեցեալ, վասն որոյ երրակայն դեղ կարգեալ պատրաստեցաւ յեկեղեցւոյն Քի, երրեակն այն, զի կատարեալ բժշկիցի. յորժամ դէմ յանդիման լիցի փեսային Քի, արատութի ինչ ոչ ունիցի, ըստ առաքելոյն,
Եփե. *զի կացուսցէ ինքն իւր յանդիման, փառաւոր զեկեղեցի. զի
5. 27. մի ունիցի ինչ զարատ, կամ զաղտեղութի, կամ զայլ ինչ յայսպիսեաց, զի իցէ սբ և անարատ: Սբ զի մեղքն է վիրաւորիչ Ածային մեծութեն, և վնասակար եկեղեցւոյ. և տգեղացուցիչ Ածային պատկերին որ 'ի մեզ: Արդ

ու

առաջին վերաբերի առ սիրտն. քանզի սրտիւ տեսանէ
զԱծ, ըստ այնմ * Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք, զի նո- * Մտթ.
քա զԱծ տեսցեն՛, և մարգարէն ասաց, * սիրտ սբ հաստա- 5 . 8.
տեա յիս Ած. և այսպէս յորժամ միտք 'ի չարիս ինչ ըն- * Սղ.
թանան, վերացուցէ զԱծ, ըստ այնմ * այս վէրքեն, զորս վի- 5 . 12.
րաւորեցայ 'ի տան սիրելոյ իմոյ. զի տուն է Քսի հոգի * Զաք.
հաւատացելոցն, և Քս 'ի նմա բնակեալ, հայր, և հոգ- 13 . 6.
ւոյ, ըստ այնմ * Ես և հայր իմ առ նա եկեսցուք, և օթև- * Յով.
անս առ նմա արասցուք. և յորժամ 'ի տանէն յայնմանէ, 14 . 23.
այսինքն 'ի սրտէն գրգռեան մեղք յանձն իշխան կամացն
իբրև զսուներ վերացուցէ զնա, և զինք'ն. բայց յորժամ
դառնայ զղջմամբ, և արտասուօք դուզնաքեայ, վաղվաղակի
բժշկէն. զի Ած յաւէժ հզօր է, միայն դիմիլն առ նա զղջ-
մամբ սրտիւ, որպէս մանուկ ընտանեայ 'ի գիրկս իւր առնու,
յորժամ տեսանէ արտասուաթոր զաչս մեր սրբէ, ըստ այնմ
* Ես եմ որ ջնջեմ զամ՛ արտասուս, յամ՛ աչաց, և համբուրէ փար- * Եսյ.
մամբ՛, որպէս զանառակ որդւոյն, և բժշկէ, զլուծեալ անդամս 25 . 8.
մեր, որպէս զանդամալուծին, և բորոտին, և կուրացն, որք
դիմեցին առ անհուն զօրութիւն և կարողութիւն նր։ Եւ
փրկական եկեղեցւոյ, և այս վերաբերի 'ի բանն. քանզի
ուղղութիւն ամենեցունց լինի գայթակղութիւն, որպէս սրբոյն
Պետրոսի, զոր ասաց ցնա Տրն, դու երբեմն դարձցիս և
հաստատեսցես զեղբարս քո. այսու երևի թէ գայթակղե-
ցան ամենեքեան, ուրացմամբ նորին, վասն այսորիկ ասաց յոր-
ժամ դարձցիս յայնժամ հաստատեսցես զգայթակղեալսն
քև։ Ոչ թէ պէտս այլ մեղքն փրկական եկեղեցւոյ, բայց
ոչ որպէս ուրացութիւն։ քանզի և Յուդայ ևս էր 'ի թիւս
երկոտասանիցն, այլ զմեղս մատնութեան նր, ինքեան և եթ
վնասեաց, և եկեղեցւոյն Քսի ոչ ինչ, զի ոչ ոք յանկա-
նին նր գայթակղեցաւ. բայց Պետրոսին ամէն. վասն այնո-
րիկ ասաց Տրն, որպէս քև ամենեքին գայթակղեցին, նոյնպէս
քև ամէն հաստատեսցին։ Եւ ևս փրկական եկեղեցւոյ,
զի ուրացմամբ հաստանի յանդամոցն Քսի, զի ամ՛ անդամք
ցաւ-

ցաւակից լինին միմեանց, ըստ բնականին, և ըստ վերնա-
* 1Կր. յուն առաքելոյ. եթէ * չարչարի ինչ մի անդամ, չարչարին
12. 26. ամ՟ անդամքն ընդ նմա. արդ եթէ յամբողջական բոլորէ,
մարմնոյն հասցի ձեռն, ոչ ապաքէն ձեռքն ցաւին, նոյն-
պէս և զայլսն է իմանալի: Սոյն փոխաբերէ եկեղեցւոյ,
մեղք բերանոյն, որ է ուրացութիւն, զի յԱ՟ծութենէն մին-
չև ցյետին գոյական, որք Ա՟ծայնովքն յամենեցունց հա-
տեալ լինի, զի 'ի հատանելն ընդ գլխոյն ամենեքեան ցաւ-
լին, զի գլուխն բոլորին, հայրն երկնաւոր, ըստ առաքելոյ,
* 1Կր. * գլուխ կնոջ այր. և գլուխ առն Ք՟Ս, և գլուխ Ք՟Սի Ա՟Ծ
12. 3. ըստ մարդկութեան. և այսպէս յորժամ հասցի մի անդամն,
սոքա ամենեքեան ցաւին ընդ նմա, քանզի ուրացեալ լինի
* Ղկ. առաջի Ա՟Յ, և ամ՟ սրբոց նր՟, ըստ այնմ թէ * որ ուրացի
12. 8. զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց
Ա՟Յ: Զի ոչ ինչ մեղք ունի այսպէս հատուածս յանդամոյն,
ոչ ուրացութիւն: Վ՟Ս այնորիկ մեղքս այսք փոխաբերէ ե-
կեղեցւոյ, զի յամի փոխ բերէ, այսինքն ցաւ, 'ի գլխոյ
մինչև ցյետինն անդամ: Սա է տգեղացուցիչ, Ա՟ծային
պատկերին որ 'ի մեզ, և այս գործոյն է յայտնութիւն, զի
խորհեցեալ մեղքն, յորժամ գործով կատարեսցի, տգեղա-
ցուցանէ զԱ՟ծային պատկերն որ 'ի մեզ. այսինքն հոգին
բանական: քանզի ամ՟ հոգի ունի զնմանութիւն Ա՟Յ, ըստ
* Ծնն. այնմ * արասցուք մարդ ըստ պատկերի մերում, և ը՟ նմա-
1. 16. նութեան. այլ մեղքն գործոյն տգեղացուցանէ զնա և որ պա-
հէ 'ի նմանութեան, Ա՟ծանման բացախայլի, ոչ երանուհւոյ
կուսին արտախայլեցաւ ճաճանճաշարդ, Ա՟ծանմանութ՟, ուսու-
տի Ա՟ծազանքն, հիացեալ զարմացան, և զմայլեցան, և ը՟
հարցանելն Պետրոսի բարբաջացմանք, ասաց ո՞վ ն, ամենե-
ցոյն հոգի այսպէս ըստեղծի, ոչ զմարդ իմ զոր ցուցի,
բայց մեղքն տգեղացուցանէ և նսեմացուցանէ. քանզի հո-
գի մարդոյն է ոչ արեգակն, որ լուսափայլեալ երևի յաշ-
խարհի, այլ յորժամ գոլորշի յերկրէ գոյացեալ, որոյ մասն
մի է յօդոյ, և մասն մի 'ի ջրոյ, և կամ մէգ, որոյ մասն մի

է

է 'ի Հողոյ , և մասն մի 'ի յօդոյ , առ սակաւ սակաւ վերա-
ցեալ , բարձրանայ , և արգելու զճառագայթս արեգական :
Արդ գոլորշին և մէգն նշանակէ զմեղս , որ 'ի մարմնոյն և
յանձն իշխան կամացն գոյանայ , 'ի միտսն , որ իբրև ըզ
գոլորշի երկրի և կամ մէգ անմարմին ցուցանի յելանելն , զի
մեղք մտացն է անմարմին , այլ յորժամ բարձրանայ , այսին-
քն գործով կատարի , արգելու զգեղեցկագոյն լոյս արեգա-
կան , որ է պայծառագոյն լուսաճաճանչ լոյս Հոգւոյն , և
նսեմացուցանէ զերկիր մարմնոյն , և զպայծառանալն , և այս-
պէս անգեղացուցանէ զԱծոյին զպատկերն որ 'ի մեզ . յա-
ղագս այսորիկ կարգեցաւ փոխարէնն , զի պատառեսցի մէգն
և ամպն , և զխաւար , և լուսաւորեսցէ զաշխարհ անձինն :
Արդ ով բերանոյն խոստովանութիւն կարգեցաւ , մեղաց
փարատումն , ըստ այնմ որ խոստովանեսցի յիս առաջի մարդ-
կան , խոստովանեցից և ես զնա առաջի Հօր իմոյ որ յեր-
կինսն է . Նոյնպէս և մտացն զղջումն : Այսպէս և գործոյն
զփոխարէնն , զոր ինչ մեղք և գործով կատարեալ իցէ ոք ,
փոխարէն առն , որպէս և մարթիցի . ով արարն Զաքէոս ,
զի զկրկնութեան փոխարէն զչորեքկինն Հատուցց , և աղա
լուաւ * այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ : Եւ Պետրոսի * Ղկ.
ուրացութեան , երրեակ սէրն , դառնագոյն արտասուքն : 19. 8.
Նոյնպէս և Մանկաղինացւոյն արտասուքն : Եւ Դաւթի
պահքն , աղօթքն , և արտասուքն , ըստ այնմ թէ * ծունկք * Սղ.
իմ տկարացան 'ի պահոց , և մարմին իմ այլագունեցաւ յիւ- 108. 24
ղոյ . և վն արտասուացն , և աղօթիցն ասէ , վաստակեցայ
ես 'ի Հեծութեան իմում , լուացի զամ գիշեր զմահիճս իմ և
արտասուօք իմովք զանկողինս իմ թացի : Եւ թէ 'ի մէջ
գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ վն իրաւանց և
արդարութեան քոյ : Եւ այսպէս ամ ոք յաղագս գործոյ մե-
ղացն , Հատուցց զփոխարէնն , և թլփատեսցի զինքն յամ
ախտից չարաց . և ապա Համարձակեցաւ 'ի Հաղորդութիւն
Ճաշակման , կենդանարար մարմնոյ և արեան , կենսատուին ,
յաղագս Հրամանին թէ անիծեալ փառս ոք կերիցէ մի :

## Գլուխ ԺԴ ։

Յաղագս թէ՝ ՚ի սրբազնագործութեանն պատարագին հացին և գինւոյն, փոխարկին ՚ի պատարագին՝ մարմին և արիւնն Քսի ։

Դարձեալ անթլփատէ որ անհաւատութեամբ մատչիցի, ՚ի սոսկալի խորհրդոյն. քանզի որ կամի հաղորդակից լինիլ յանմահական խորհրդոյն, պարտի թլփատել զինքն յանհաւատութենէ, և լուսով հաւատոյն լուսաւորիլ. դէմ յանդիման տեսցէ զհայն, փրկական մարմին Քսի, միաւորեալ ընդ Աստուածութեան, բանական հոգւով. և ՚ի մէջ երկակաց տեսակաց նոյն ինքն Քս կատարեալ, Աստուածութեամբ, մարմնով, և հոգւով, ըստ առաքելոյ յանդիմանութեան որոց ոչն երևին, այսինքն Քս յանդիման ՚ի ներքոյ տեսակի հացի, և գինւոյն տեսանիցէ. զի յորժամ առնու քահանայն ՚ի ձեռս զնշխարն, և ասասցէ այսէ մարմին իմ, և զգինին այսէ արիւն իմ, նոյն ժամայն փոխարկեալ զնա տեսանիցէ, ոչ ևս հաց և գինի, այլ նոյն ինքն Քս, Ած կատարեալ, և մարդ կատարեալ. որպ և է այժմ ընդ աջմէ Հօր նստեալ. և ասա տեսանիցէ զնա պատարագեալ. քանզի բարբառելն զայն, բան քահանային, նոյն ժամայն փոխարկի գոյացութիւն, և մնայ պատահումն, այսինքն քանակութիւն, և որակութիւն. քանզի մինչև ցայժմ, որ զխորհուրդն կատարէ քահանայն, է աղօթք, և մաղթանք առ Հայրն երկնաւոր, և չև ևսէ փոխարկեալ. գոյացուի կենդանի մարմնոյն Քսի, և գոյացուի գինւոյն արեան քսի, այլ յորժամ ասասցէ առէք կերէք այսէ մարմին իմ, և արբէք ՚ի սմանէ այսէ արիւն իմ, համանգամայն փոխարկի, հացն ՚ի գոյացութի կենդանի մարմնոյն Քսի, նոյնպէս և գինին արիւն, և լինի նոյն ինքն Քս պարածածկեալ ՚ի ներքոյ պատահմանց քանակութե, և որակութե, զի ՚ի բոլորակութի նշխարին, և ՚ի գոյն հացին, և գինւոյն, նոյն

ինք

ինքն տեսանէ զՔ՟ս, կատարեալ Ա՟ծութեան, և կատարեալ մարդկութեան, որ և է ընդաբոյս Հօր նմանեալ, և սոսա ըզ նոյնն տեսանիցէ պատարագեալ, և առաջի աչաց իւրոց երկրպագելի քահանայութեան կախեալ, և Ա՟ծացեալ արիւնն 'ի Սկիհի հեղեալ, փշոք 'ի զինուորացն պսակեալ, թքեալ, ապտակեալ, բևեռօք և պեղարդեամբ խոցեալ: Եւ նոյն ինքն 'ի յաթոռ փառաց ընդ Հօր և Հոգւոյն նստեալ, 'ի հրեշտակաց փառաւորեալ ահիւ պակուցմամբ երկրպագեալ. և զերեք սրբեանն դրուատեալ, թևաւորողմամբ, 'ի սարաւբէլի յահեղ փառայն պակուցմամբ: Այսպէս զնմ՝ ըն յանդիման որոց աչն երևին, տեսանիցէ. և ինքն մատուցողն, և եթէ պատարագօղն, և թէ հաղորդօղն հաւատալ պարտէ եթէ բանիւ Տն փոխարկի խորհուրդս 'ի մարմին և յարիւն Ք՟ի. քանզի որ բանիւ Տն երկինք և երկիր հաստատեցան, որ ոչ անցանեն, և ոչ այլայլին, և ոչ փոփոխին դարձեալ յոչ էութի, այսպէս բանիւ Տն որ ասաց, առէք կերէք, այս է մարմին իմ, և արբէք այս է արիւն իմ. համանգամայն փոխարկի, հացն 'ի կենդանի և 'ի կենդանարար, մարմին. և գինին 'ի կենդանի և 'ի կենդանարար արիւն. և ոչ մնայ անդ այնուհետև տեսակութիւն, և գոյացութիւն հացին և գինւոյն, բայց միայն պատահմունքն: Եւ նոյն ինքն Ք՟ս է խոկալէս անդ, կատարեալն յերկրաւոր էութեանց, յԱ՟ծութենէ, 'ի մարմնոյ և 'ի հոգւոյ, որ և էն կենդանի, և կենդանարար, և սոսա խորհրդով անմահ, և անմահ արար, ըստ այնմ՝ թէ * ծագեսցի Ա՟ծ խորհրդով իւրով յերկինս. * Եսայ. 4. 2.
զի այսու խորհրդով, էջանէ միածինն, և ենվթակայանայ 'ի ներքոյ պատահման հացին, և գինւոյն: Եւ 'ի սոսկալի խորհուրդն երբեակ անձանց ներգործութիւն, բացափայլապէս յայտնեալ երևի, որ և 'ի անօրէնութիւն. որ նախքան զմարմնալն հաճութիւն հօր, և սոսա եւ նախքան զմարմին ընկալ հայրն: Եւ որ ներգործութիւն որդւոյն, երևեցաւ 'ի մարմնանալն, այսպէս և 'ի խորհուրդս յայս ներգործութիւն որդւոյն, յասելն քահանային բանիւն իւրով, այս է

մարմ

մարմին իմ, և այս է արիւն իմ: Նաև որպէս անդ երևեցաւ
ներգործութիւն հոգւոյն, յորում՝ էջ աղաւնակերպ, և նո-
վաւ վարեցաւ յանապատն, և արար զսքանչելիսն. ըստ այնմ՝
թէ հոգւովն Այ, կատարէ խորհուրդն, յայնժամ՝ ասասցէ
քահանայն, որով զհացս օրհնեալ. յայնժամ՝ ներգործու-
թիւն հոգւոյն կատարի 'ի բժշկութիւն հոգւոց: Որ ոչ անդ
'ի անօրէնութիւն կատարեալ մարմին և արիւն էր Ածութեան
միացեալ, և միաւորեալ, մինչև 'ի յորդանան, յոր երևե-
ցաւ ներգործութիւն հոգւոյն, և նովաւ կատարումն եղև
անօրէնութեան: Նոյնպէս և աստ կատարեալ մարմին և ար-
իւնէ, Ածութեան միացեալ, և միաւորեալ բանիւ որդւոյն,
* Յոհ. · որ ասացն * առէք կերէք, մինչև 'ի ներգործութիւն հոգւոյն
7 · 39 · որ ասէ, որով զհացն օրհնեալ. քանզի աստ հոգւովն կա-
* Յոհ. · տարումն առնու; Ածային խորհուրդ, ըստ այնմ * չև էր
12 · 31 · հոգի, քանզի Յս չև էր փառաւորեալ. զի փառաւորութիւն
որդւոյն խորհրդովս այսու երևի, ըստ այնմ՝ այժմ փառաւ-
որեցաւ որդի մարդոյ, և Ած փառաւորեցաւ 'ի նմա, զի
եթէ Ած փառաւորեցաւ 'ի նմա, և Ած փառաւորեսցէ
զնա յանձն իւր. քանզի գրեալ թէ ամենայն երրորդութեան,
փառաւորութիւն, կատարմամբ մարմնոյ և արեանն լինի.
յորժամ՝ մբ հոգին Ած ևս զներգործութիւն իւր կատար-
եսցէ, ոչ ասէ կնքելով, փոխարկելով հոգւովդ քով սրբով.
որ փոխարկէ 'ի հոգևոր կերակուր, առ 'ի կենդանացուցա-
նել զհոգին, որ մեռեալ էր ճաշակմամբն 'ի դրախտին, ըստ
* 1 Կոր. · այնմ թէ * զհոգևոր կերակուրն կերին, և զհոգևոր ըմպելին
10 · 2 · արբին: Որ ըմպեալ լինի այժմ, և կերեալ 'ի հոգևոր վի-
մէն, որ երթայր ընդ մեզ. ըստ հաւատոյ առաքելոյ, թէ
* 1 Կոր. · * վէմն էր նոքա Քս: Որ թէպէտ մինչև 'ի ներգործութիւն
10 · 4 · հոգւոյն, որ է, որով զհացս օրհնեալ, ճշմարիտ կենդանի.
և կենդանարար մարմինն է. բայց ներգործութիւն հոգւոյն,
ևս կատարէ 'ի նա, զի գործ ամենայն երրորդութեան կա-
տարեալ լիցի: Որ նախ բանն զյորդանան կատարեալ մար-
մինէր բանն, այլ ներգործութիւն հոգւոյն չև ևս էր. այլ

յորժամ մկրտեցաւն եկն Հոգին, և զներգործութիւն իւր
կատարեաց ըստ այնմ թէ * վարեցաւ Յս Հոգւովն յանա- *Մտ.
պատ՛, և ինքն Տէրն ասաց, Հոգւովն Այ հանեմ զդևս: 4.1.
Եւ ասեմ ես 'ի սոսկալի խորհուրդս Հոգւովն փոխարկի.
զի մի կարծեսցի յամանց մի թիւսուր. այլ զայն որ նըւ-
աւետէ ընդունելի Հօր. քանզի խորհուրդս այս յայտարարու-
թիւ է տնօրէնութեանն Քսի. որպէս յիսկզբանն յիշէ քա-
հանայն, 'ի դնել բաղարջն, զբանս հրեշտակապետին, թէ
Հոգին Սբ եկեսցէ 'ի քեզ, և յետ այնորիկ խմանէ 'ի սե-
ղանոյն, անուշահոտ բուրմամբ. որ նշանակէ զփչումն նոյ
բանին 'ի Սրբոյ սեղանոյ Ածութեանն, և կատարել Ած-
ութիւն և մարդկութիւն յերկիրն երևեալ և շրջեալ. ըստ
այնմ 'ի * յերկրի երևեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ. և բու- *Բարուք
րեաց աշխարհի, զանուշահոտ բուրումն Ածութեան: 3.38.
Եւ այսպէս կատարեաց զտնօրէնութիւնն. մինչև 'ի չար-
չարանս. և յորժամ ժամանեաց կամաւ 'ի խաչն, յայնժամ
աւանդեաց զվերջական խորհուրդն, որ է յիշատակ կամա-
ւոր չարչարանաց և խաչին: Վասն այսորիկ ասէ խորհուրդն,
եկեալ կամաւ 'ի խաչն, առեալ զհացն, 'ի Սբ յԱծայ-
ին յանմահ, յանարատ և յարարչագործ 'ի ձեռս իւր, օրհնեաց
և ասէ, * առէք կերէք, այս է մարմին իմ, և յետ այնորիկ *Մտթ.
ոչ ևս կերից մինչև 'ի փառաւորութիւն կենարարին, որ էր 26.26
խաչն և յարութիւն. և յետ այնորիկ յորժամ փչեաց 'ի նս
յառաքեալսն և ասաց * առէք Հոգին Սբ. յայնժամ ներ- *Յհ.
գործութիւն Հոգւոյն կատարեցաւ: Վասն այնորիկ ասաց Սըր- 2.22.
բազանն աւետարանիչ չևէր, Հոգի քանզի Յս չևէր փա-
ռաւորեալ: Եւ յորժամ զՀոգին ընկալան, յայնժամ ակն
երև տեսին զՀոգին Ած 'ի վերայ խորհրդոյն: Եւ յայս մի-
տըս, զխորհրդոյն արարողութիւն աւանդեցին Հոգէկիրքն,
որ նախ և առաջին զհաճութիւն Հօր յայտնեն, որ է ներ-
գործութիւն Որդին, և ապա զմարմնանալ բանին, որ էր ա-
ռէք կերէք, և ապա զներգործութիւն Հոգւոյն. որ է որով
զհացս նշխարս: Եւ ապա յայնմ հետէ լինի կատարեալ,
մաք

մարմին և արեանն այն որ ընդ աջմէ հօր նստեալ է: Զի այն
որ նախ քան զչարչարանս էր, ունէր զանապականութիւն ինչ,
նորին ազգաւն որ է այժմն, զի նախ քան զյարութիւն ունէր
կարօտութիւն, զի քաղցնոյր և ծարաւիւր, քրտնիւր, և վաստակիւր, չարչարիւր, և բեւեռեալն, և գեղարդեամբ խոցիւր, մեռանիւր, և թաղիւր: Այլ որ այժմն է, որ է ընդ
աջմէ հօր, թէպէտ իսկագոյն նոյն մարմինն է, որպէս ինքն իսկ
• Ղկ. • ասաց, *տեսէք զի ես նոյն եմ, բայց ոչ կարեօք անկեալ, զի
24.39 • այնմ ոչ ևս մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ: Եւ դարձեալ առաքեալն և մեք, ոչ զոք գիտեմք մարմնով, այլ արդ
ոչ ևս նոյնպէս գիտեմք, զի հոգևորն է, որ նախ ասացելոցն,
ոչ իւիք մին ՚ի նա տեսանիցի: Զի թէպէտ նոյն մարմինն է,
շօշափելի, այլ ոչ ընդ կարեօք անկեալ, քանզի և մերս
նոյնպէս լինելոց է, ՚ի փառաւոր յարութեան, ըստ այնմ
• 2Կր. • *սերմանի մարմին շնչաւոր, և յառնէ մարմին հոգևոր: Եւ
5.16 • այսպէս որ, զհոգևորս ընդ հոգևորս համեմատեմք, ըստ
առաքելոյ. զի հոգևորայն է զհոգևոր կերպս ունել. զի սուկալի խորհուրդս այս, յայնժամ լինի հոգևոր մարմին, յորժամ վառաւորի որպէս, կատարելապէս ներգործութեամբ հոգւոյն, յորժամ ասասցէ քահանայն փոխարկելով հոգւովդ
քով սրբով: Եւ յետայնորիկ ոչ ևս այնպէս գիտելով որպէս
յառաջ քան զչարչարանս, այլ այն որ նստեալ կայ ընդ
աջմէ Այ, այնպէս տեսանիցէ, որպէս ասացն առաքեալն, ոչ
ևս նոյնպէս գիտեմք, այլ նոր. այսինքն ոչ ևս այնպէս գիտեմք, որպէս յայնժամ որ ունէր զկարիս, որ քաղցնոյր և
ծարաւիւր, և զայլս այսպիսիս, այլ նոր, այսինքն յամէ
յայսցանեաց զատեալ. և մեկնեալ, ընդ աջմէ հօր նստեալ.
հոգևորեալ, և փառաւորեալ: Զի թէպէտ զխորհուրդ
խաչին կատարէ սրբազանագործութիւն զայս, սակայն մինչև յառէք կերէք, բայց յետայնորիկ յորժամ ներգործութիւն հոգւոյն կատարի. որ և զմեզ ըստ նմին օրինակի է
• Փլ. • ցուցանելոց ըստ առաքելոյ, *քանզի և մեք անցանելոց յայսմ
3.21 • մարմնոյ, և փոխարկեմք յայն մարմին. զի նորոգեսցէ ըզ
մար

մարմին խոնարհութեն մերոյ, ըստ մարմնոյ փառաց իւրոյ, Ա՟
ծացելոյ, որ է ամենևին հոգևոր, ո՟պ և աստ կենդանա-
րարն, փոխեցաւ հոգւով, հոգևոր մարմին, և ճաշակմամ-
բըն այնու, հոգևորին, ընդ հոգևորին միանոյ, և լինի կա-
տարեալ, ըստ այնմ՝ թէ * եղիցին կատարեալք 'ի մի: Իսկ որ * Յ-հ.
մատչելոցն է այսպիսի լուսաւորութե՟ հաւատոյ պարտ է 17.23.
լուսաւորել զմիտս, և ապա համարձակել, յանմահարարն
յայն խորհուրդ: Որ ո՟պ խորհուրդս այս ներգործութե՟
երրորդութեն կատարելագործի, նոյնպէս և մատչօղն, եթէ
պատարագօղն, եթէ հաղորդօղն, երրակի ներգործութե՟
երրորդութեն իւր պարտ է կատարեալ ունել, հոգին, ըզ
միտս, և զմարմինն, զի երրակաց իւրոց կատարելութի շը-
նորհիցն· էութեն էութե՟ն հօր, բանականութեն բանա-
կանութեն հօր, կենդանութեն կենդանութե՟ն հօր· և
երրորդութեն ընդ երրորդութեն միաւորիցի, և միասցի:
Իսկ այսու լուսաւորութե՟ հաւատոյ, լուսաւորիցի, և ա-
պա մատչիցի· և նախ մտօք անհաւատութեն յինքենէ թօ-
թափեսցէ· և ապա ճաշակեսցէ, վ՟ այնորիկ ասաց, ճաշա-
կեցէք զ՟Տր զի քաղցր է· վ՟ զի ա՟մ՝ նահապետք, մարգա-
րէք և թագաւորք, և արդարք ճաշակմանս այսորիկ ըղձա-
ցէին բաղձման ըղձիւ, այլ ոչ հասին, ո՟պ ասաց Տ՟րն, * բա- * Մտթ.
զում մարգարէք և թագաւորք ցանկացան տեսանել, զոր 13.17.
տեսանէքդ, և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան·
քանզի բնութե՟է որ նըստի 'ի խաւարի, տենչայ փափագ-
մամբ լուսոյ· և որ ծարաւի ցանկայ ջրոյ, և որ քաղցեալ
հացի: Նոյնպէս և մարդկայինս բնութի, որ նըստեալէր 'ի
խաւարի, յոր և յաւէժ ցանկայր լուսոյ, ո՟պ և ասէր լոյս
տուր Տ՟ր աչաց իմոց և թէ լոյս արա ինձ 'ի խաւարի· նոյն-
պէս հացի և ջրոյ, և ոչ հասանէին· հայցէին խնդրէին,
փափագէին՝ և ոչ հասանէին, վ՟ զի ոչ էր հասեալ ժամ,
ո՟պ ծառոյ պտուղ, քանզի ոչ միայն նոքա, այլ և գերաշ-
խարհիկ զինուորութեանցն դասապետութիք, փափագէին և
ցանկանային, լսել զբարբառն զայն, թէ առէք կերէք այ-

սէ

սէ մարմին իմ, և արբէք 'ի սմանէ այսէ արեան իմ. զոր
յաղագս բազմաց տուեալ ; 'ի քաւութի և 'ի թողութի մե-
ղաց: Արդ յորժամ այժմս լուան, և որք լուանն երանե-
*Մտթ. ցան, ոչ և ասացն, *երանի աչաց ձերոց, զոր տեսանենն,
13.16. և ականջաց ձերոց զոր լսենն: Ո՛ աչք ձեր տեսանեն, ըզ
բանն մարմին եղեալ, և ականջք ձեր լսեն զքաւութի, և
զթողութի մեղաց. քան զի մինչև ցայժմ, ոչ ոք լուաւ թո-
ղութի մեղաց, զոր 'ի ձեռնասնմանէն Ադամայ, մանրդեալ և
մնծեալէր ընդ բնութիս, այլ այժմս երանեցան, տեսա-
նողքն, և լսողքն: Ո՛ յոր և յաւէժ տեսանեն զցանկա-
լին հրեշտակաց, մարգարէից, նահապետաց, և թագաւորաց,
զի տեսանեն զկուսածինն, Ածն էմմանուէլ, ենթակայա-
ցեալ 'ի ներքոյ պատահման հացին և գինւոյն, գոյացու-
թին փոխարկեալ, և պատահմունքն միայն մնացեալ, հու-
րըն իջեալ 'ի մորենին, վառեալ միաւորութի, և միայ-
նամբ, և ոչ այրեալ. ցօղն գետնոյն իջեալ 'ի կզակն, մի-
ացեալ, և միաւորեալ, ընդ սորին [illegible]: Օրանայ զօրու [illegible]
իջեալ յերկնից 'ի յերկիր, առ 'ի զօրացուցանել ընդ պա-
տերազմ այլ ազգեաց, այսինքն այսականաց: Արարիչն
արարածոց ահա մնեալ մարմնով և արեամբ ; 'ի սաղաւարտն
Աբրահամեան, այսինքն յեկեղեցին սրբազանագործական.
դուռն երկնից բացեալէ, և սանդուխտն կանգնեալ այ-
սինքն զխաչն, և արարիչն 'ի վերն բազմեալ. և զբաղու-
մն տարածեալ, և ըսպանեալ, զենեալ, և արիւնն հեղեալ,
և փրկութի արարածոց խրոց մատուցեալ: Արդ ահա [illegible]
Յակոբայ գօտէ մարմնի, և յաղթի 'ի սիրոյ, և կարացու-
ցանէ 'ի դառն ձեռնայն որ 'ի դրախտին, և առաջնորդէ
յերկիրն աւետեաց 'ի վերինն երուսաղէմ: Ահա աստ
տեսանի, տապանն կազմեալ և նոյա [illegible] արարածական բը-
նութի. 'ի սուզմանէ, և 'ի բարկութենէն այ ապրեալ. զի
տապանէ մարմինն տէրունական, որով ապրիմք 'ի հեղեղէ
մեղաց և 'ի դժոխայնոյն կործանմանց: Աստ տեսանի տապա-
նակն ոսկի կազմեալ, այսինքն մարմինն տէրունական, և իջեալ
սա

սափորն ոսկի լցեալ մանանայիւ. այսինքն * հոգին Ք՟նի լըր- *Կող.
մամբ Ա՟ծութե՟ն մարմնապէս: Ասա գաւազանն ահարոնի 2. 9.
ծաղկեալ տեսանի, որ նշանակէր ահարոն զԱ՟ծըն և բան,
զգաւազանն զբնութիւնս մարդկան, որ չորացեալէր բը-
նութեամբ 'ի դրախտին ճաշակման: Ասա բուրվառն պը-
ղընձի 'ի ձեռն ահարոնի դառնոյ յոսկի, այսինքն 'ի ձե-
ռըն բանին, զբնութիւս մարդկային 'ի պղնձոյն այսինքն 'ի
ժանգահարութենէ մեղայն դառնայ ոսկի անապական, այ-
սինքն Ա՟ծ, ըստ այնմ՝ Ես ասացի թէ Ա՟ծքիցէք: Աստանօր
կեանք կախեալ 'ի փայտին տեսանի, օձն պղընձի, 'ի ձո-
ղոյն բարձրացեալ տեսանի, թունաւորեալքն ապրեալք, և
խածանողքն սատակեալք: Աստանօր Ա՟ծ իջեալ 'ի լեառն
տեսանի, և հուրբ վառեալ տեսանի, պատգամս կենդա-
նիս 'ի մէջ բաշխի, որ նշանակէ լեառն զմարմինն տէրու-
նեան, հուրն որ որիչ Ա՟ծն բան. Մովսէս քահանայն, ա-
հարոն, Նաւատ, և այլոք պաշտօնեայքն Ա՟ծային, և
որք 'ի սորա լերինն, և ժողովուրդքն բազմաքն, քրիս-
տոնեայքն հաղորդականն: Երկու տախտակն մարմին և
արեան Ք՟նի, պատգամքն բանն Ա՟ծ, յորս տեսանի. մի-
ացմամբ, և միաւորութբ: Ասա գաւազանն Մովսէսի 'ի
ջուրն մեռայ անկանի, և զդառնութիւն քաղցրացեալ տե-
սանի, Մովսէս Ա՟ծ հայրն նշանակեալ, գաւազանն Ա՟ծըն
բան, ըստ այնմ՝ գաւազան ուղղութե, գաւազան արքայ-
ութե քո, և ջուրն մեռայ, զդառնացեալ բնութիւս ադա-
մայ, յոր միաւորեցաւ բանն Ա՟ծ, և քաղցրացաւ, և ասա
հրամայէ մարգարէն, և ասէ ճաշակեցէք զի քաղցրէ տէր:
Աստանօր լուսեղինաւ ամպով առաջնորդեալ լինի նորս
իսրայէլ, յերկիրն աւետեաց ամպն, զմարմինն տէրունա-
կան, որ յերկրէ բուսեալ, և գոյացեալ, այսինքն 'ի կու-
սէ առեալ, և լցեալ յերկնէ բանն Ա՟ծ. որ 'ի ծոցոյ հօր
իջեալ ընդ ամպոյ մարմնոյն միացեալ, և միաւորեալ, որ
ժողովուրդն նորոյս իսրայելի առաջնորդի յերկիր յերկնոր-
դուին աւետեաց: Ասա ձեռք Մովսէսի, բարձրացեալ տե-

սա

սանի, և նմ անարգէլ կործանեալ. որ նշանակէր զձեռն Յ՟ծի, որ առաջնոր բարձրացեալ է, 'ի բարութեանն, և երկրորդ անարգէլ առա կործանեալ տեսանի, այսինքն այսուցն հօյլս, որք սպառեցաւ ընդ նորայս խարանելը: Առաջնոր ծնեալն անխնկզնաւար 'ի հօրէ Ա՟Յ, և ընկղմանէ մարդկայնով 'ի Մարիամայ, 'ի մէջ սեղանս բաշխեալ տեսանի. ըստ այնմ մր ասէ ցնա որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ: Առաջնոր անձրևն 'ի սկզբն տեսանի, և տարափն 'ի խոռոյ, որ նշանակէր անձրևն և տարափն, զբանն Ա՟Ծ սէզն, և խառն զմարմինն տէրունականն, յորոց միաւորութիւն ճաշակէն: Առաջնոր անձրևն իջեալ 'ի վր գեղմանն, և ցօղն ցօղեալ յերկիր, որ նշանակէ անձրևն և ցօղն, Ա՟ծն բանն, գեղմն և երկիր զմարմինն տ̄րունականն, որ 'ի կուսէն, ըստ այնմ իջցէ որպ անձրև 'ի վր գեղմանն, որպ ցօղ ցօղեալ յերկիր: Արդ Ա՟Ծ մեր յայտնապէս եկեալ տեսանի բաշխեալ` 'ի վր սրբոյ սեղանոյս. և պատարագեալ: Առաջնոր Ա՟Ծ 'ի տաճարի խորուն յայտնի, որպ առայժմ Ա՟Ծ 'ի տաճարի խորուն յայտնի, քանզի յայտնութիւ տեսանելւոյնէ, զի Ա՟Ծ որ անտեսանելին էր, 'ի տաճարի խորուն 'ի վր սրբոյ սեղանոյն յայտնեալ երևի մարմնով, որ յամենեցունց ճաշակի: Արդ եկեալ տեսանի Ա՟Ծըն բան մարմնով, որպ առաջին աշխարհին զամ ես, որպ 'ի գլուխ գրոց գր՟ է վն իմ, զի գլուխ գրոց մատենաներն Մովսէսի, յոր ընդ խորհրդս մարմնութեան գրեցան. հիւր ընկալութիւն Աբրահամու յոր առայ, 'ի ժամանակի յայտնին, եկին, և եղէց որդի Սառայի, 'ի պատարագիլն խոյին Ա՟Յ, փոխանակ որդւոյն Աբրահամ: Ի սանդուխտն Յակոբայ, և 'ի գօտէ մարտին, որչափութին Յուդայի, մորենին Մովսէսի, գաւազն զատկին, և ոչ բեկումն ոսկերին, ել քն յեգիպտոսէ, որ նշանակէր դժոխոյն, ընկլմին փարաւոնի զօրքն իւրովք որ նշանակէր զսատանայ և զզօրս իւր: Անդանին խարանէլը, և կերակրին մանանայիւ, նշանակ մարմնոյն Ք՟ի, տարածումն բազկացն Մովսէսի, և վմնումն սա-

մա

մաղեկայ, ասողն Յակոբայ, յառնել առն խորանելի, և յա-
ար առնուլն սեղանայ զօրագլխին. մանաւանդ լուսնի ՚ի սարոյն,
այսինքն Ա̃ծութեն ՚ի մարմինն, և նկատումն յօձն պղն-
ձի, որով խածանողն մեռանէին. և կախումն կենացն, որ
՚ի փայտին, և ապրեցուցչութեն նոցա բանին. և թէ
* Լուր Տր ձայնի Յուդայի, և ՚ի ժողովուրդ նր եկեսցես: *Օրն.
Եւ թէ * տուք Ղևեայ զ. յայտնութի նր, և զճշմարտութի առն 33·7·
անարատի, զոր փորձեցին փորձանօք, և բամբասեցին ՚ի *Օրն.
վր ջուրցն հակառակութեն, որ ասէ ցհայր և ցմայր իւր թէ 33·8·
ոչ ծանեաւ: Այս ամ՝ և առաւել քան զսոսա, գրեալ կայ
՚ի գիրս Մովսէսի: Օհ հինգ գիրք գրեաց. վն այնորիկ ըզ-
բաշխումն օրինացն տնէ, զորոց ասելոյն, ահա եկեալ սեա-
նի ՚ի վր սրբոյ սեղանոյն, առնել զկամս Այ:

Որպէս ասացն առնել զկամս քո Ա̃Ծ: Օհ կամքեր Այ
որ զպատկերն իւր նորոգել, և ընդ ինքեան հաղորդե-
ցուցանել և միացուցանել. և այս ոչ իւիք լինիւր, միաւո-
րել ընդ Այ, եթէ ոչ միաւորիւր ընդ բնութեա: Վն այ-
նորիկ Ա̃Ծըն բան, միացաւ, և միաւորեցաւ նախ ընդ բը-
նութեա. և ապա ինքեամբ ճաշակմամբս, միաւորեաց ընդ
իւրում Ա̃Ծութեն, որովք ճաշակմամբ, ամենեքեան Ա̃Ծա-
նան: Եւ թուի թէ գիտէք սատանայ որ մարդն Ա̃Ծանա-
լոցէր, վասն այնորիկ առարկեաց առ նա թէ գիտէր Ա̃Ծ
յորում՝ ուտիցէք բանայցին աչք ձեր, և լինի-
ցիք Ա̃Ծք: Օհ ով քահանայապետն խորամանկաւար ասաց
զժողովուրդն, թէ լաւ է մեզ առն միոյ մեռանել ՚ի վր ժո-
ղովրդեանս, և մի ամ՝ ազգս կորիցէ. զոր սրբազան աւե-
տարանիչն, մարգարէաբար զբանն մեկնէ. նոյնպէս և սատ-
թուի ինձ, թէ չարն խորամանկաբար ասաց, առ ՚ի սպա-
ռել. բայց զկամս Այ յայտնեաց առ ՚ի Ա̃Ծացուցանել.
ով և ասացն, ես ասացի թէ Ա̃Ծք էք, կամ որդիք բա-
ձրելոյ, ամենեքեան. և ոչ իւիք կատարիւր կամս այս՝, ե-
թէ ոչ ճաշակմամբ այսու: Օհ ով ճաշակմամբ կերակրոյն
գոյացութեն նր փոխարկի ՚ի գոյացութի մարմնոյ մերոյ,

այս

այսպէս ճաշակմամբ մարմնոյ և արեան կենարարին, փոխար-
Եփե. կի գոյացութիւն մեր, 'ի գոյացութիւն նր. ոպ ասացն. մար-
5. 30. մինեմք 'ի մարմնոյ նր, և յոսկերաց նր, և այսու լինիմք
ԱԾ, ոպ և ՔՍ ԱԾ է, և լինիմք որդիք ԱՅ ոպ և ՔՍ
որդի ԱՅ, նա բնութբ, և մեք շնորհօք. ոպ հացն որ փո-
խարկեցաւ մարմին ՔՍի, նոյնպէս որ զնոյն ճաշակէ, լի-
նի մարմին ՔՍի. նա իսկագոյն մարմին, և ճաշակօղն խոր-
հրդաւոր մարմին: Նա անմիջնորդաբար մարմին ԱՅ բանին,
և սա միջնորդաբար մարմին ԱՅ բանին, և այսպէս լինին ամ
'ի մի. ոպ և ասացն դու հայր յիս, և ես 'ի քեզ, զի և նո-
քա 'ի մեզ իցեն, զի եղիցին կատարեալք 'ի մի. և այսպէս
եղև լրումն կամացն ԱՅ, ոպ ասացն, եկի առնել զկամս
քո ԱԾ. որ նախ մարդկութիւն ՔՍի ԱԾացաւ՝, միաւո-
րութբ ընդ բանին, և երկրորդաբար ճաշակօղքն. որք մի-
աւորին ընդ մարմնոյն նր, ճաշակմամբ նր, նա իսկագոյն
մարմին բանին, և նոքա խորհրդաւոր մարմին բանին: Այլ
վայ և եղուկ ինձ, որ զմարմին նր առնեմ՝ միշտ, զանդամս
պոռնիկ. և թէ ո՛ր զեհեան ընկալցի զիս, ոչ գիտեմ. բայց
յուսով զինեալ յողորմութին ՔՍի, զի այց արասցէ ինձ.
զի եկն յաշխարհ փրկել զմեղաւորս որոց զլուխն ես իսկ եմ,
քանզի որ գրեացն ոչ վն իւր ինչ գրեաց, այլ վն իմ, մար-
գարէական հոգւովն, բայց յուսով զինեալ յողորմութին
ՔՍի, այցելուն յանձն, ոպ և ինքն ասաց, քանզի յիս
յուսացաւ և փրկեցից զնա հովանի եղէց նմա զի ծանեաւ
զանուն իմ, ըստ այսմ՝ յուսամ՝ զի յամի կարող է, և հզօր՝,
զինեալ բազմաւ խոցուածով, և վէրօք, հաւատամ՝ ըստ բա-
րութին ոչ կորուսանել, զի կամք առաքչին հօր կեցչութին,
Մտթ. և ոչ կործանումն ոպ և եցոյց առ բորոտն, * թէ կամիս՝ զիս
8. 3. սրբելս, զի մի և նոյն է կամք ամենասուրբ երրորդութեն,
վն այնորիկ ասաց, եկի առնել զկամս քո ԱԾ: Աստ տե-
սանի զձեռս և զոտս ծակեալ, և արիւնն հեղեալ, 'ի փր-
կութն ազգի մարդկան, ոպ ասացն ծակեցին զձեռս իմ և
զոտս, և թուեցին զամ ոսկերս իմ, նոքա հայեցան և տե-
սին

սին գլխ, բաժանեցին զհանդերձս իմ 'ի մէջ իւրեանց, և 'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին: Աստ տեսանի սուեալ կերակուր քացախ և լեղի, 'ի ծարաւութեան նորին, ըստ այնմ՝ ետուն 'ի կերակուր ինձ լեղի, և 'ի ծարաւիմ արբուցին ինձ քացախ: Աստ կացեալ տեսանի ոտք նր, 'ի մարմնաւորաց և յանմարմնոց ահիւ պաշտուցմամբ երկրպագեալ, ըստ այնմ՝ մտցուք 'ի յարկս նր երկիրպագցուք 'ի տեղւոջ ուր կացեալեն ոտք նր: Աստանօր շինեալ տեսանի, յիմաստութենէ տուն նր, այսինքն զմարդկութիւն որէ տաճար բանին Այ. ող և աստուն զայս ասէր վս տաճարի մարմնոյ իւրոյ, և կանգնեալ զսիւնս եօթն, այսինքն, ըզ եօթն արփեան շնորհսն, զորս ունկեալ կործանեցաւ ճաշակմամբն Ադամայ և Եւայի. զենեալ զզենլին, այսինքն գառն Այ, որ զենաւ 'ի խաչին, և խառնեալ 'ի խառնարանն զգինին, զինին Ածն բան, խառնարան 'ի յորգանդերանհւոյն Ածածնին, ուր եղև խառնումն Ածութեան ընդ բնութեան մարդկային, և առաքեալ բարձր քարոզութբ, 'ի կոչել զհրաւիրեալսն, առաջօղ բանն Ած, առաքեալ առաքեալսն, քարոզ զԱծակոչ աւետարանն, հրաւիրեալքն զԱրքանունդ, և զԱրքածնունդ քրիստոնէայսն, և ասէ թէ եկայք կերէք 'ի հացէ իմմէ, այսինքն զ սրբակնագոյն մարմինն իմ, և արբէք զգինին իմ, այսինքն արիւն իմ, զոր խառնեցի ձեզ, այսինքն զոր խառնեցաւ ընդ Ածութեան, որով ճաշակմամբ թողեալ լինին մեղք և յանցանք, որ եմուտ 'ի բնութիւն ճաշակմամբ նախաստեղծիցն: Աստանօր ըստացեալն 'ի տնէ այսինքն ըզ մարդկութիւն յԱծութենէն, ընկիզըն լինի փրկութե ճանապարհին, որ տանի ճաշակմամբն 'ի կեանս, որով ուրախ լինի տր մեօք, և մեք ցնծամք տէրամբ, զոր հանապազ, և զուարճանայ տր հոգին Ած զտիեզերս բովանդակելով, 'ի մի մարմնի զորդիս մարդկան. ճաշակմամբ խորհրդոյս 'ի Քս տր: Աստ յայտնապէս իջեալ տեսանի ճաճանչ Այ զօրութեն, և ծագումն ճշմարիտ փառաց անմատչելին, և նշոյլն մշտն-

ջե

՝տենաւոր լուսոյն, և հայելի անարատ Այ ազդեցութեան,
և պատկեր առատութեան նր, որ մէկ Ածութիւն և մարդ-
կութիւն, և յանձի կարօղ, ՅՔ բարօտին հաւատոյ, կայ յին-
քեան, ըստ այնմ, ո՞չ հայր ունի կեանս յանձին իւրում,
Նոյնպէս և որդւոյ ետ ունել կեանս յանձին իւրում, ըստ
մարդկութեն. և զնա՝ նորոգէ ճաշակմամբ անմահականաւ,
և ըստ աշխարհ հոգիս մեր փոփոխէ. բարեկամք Այ և մար-
գարէս առնէ. ոչ զոք սիրէ, Ած բայց զայն որ ընդ ճա-
շակմանս այսու կցեցէ, որ իմաստութիւն հօր ընդ մարդ-
կութեան խառնեցաւ միացաւ և միաւորեցաւ՝, և ասա բաշ-
խի 'ի մեզ, որ գեղեցկագոյնէ քան զարեգակն, և քան զամ՝
դասս աստեղաց. ընդ լուսոյ համեմատեալ առաւել գտանի,
քանզի զնա գիշեր փոխարինէ, բայց իմաստութիւն հօր, որ
ընդ մարդկութեան է միաւորեալ, ոչ յաղթէ չարութիւն:
Զի 'ի ծագաց մինչև 'ի ծագս զի ընդ ամ՝ տիեզերս պա-
տարածեալ, օգտակար առողջութիւն, զի զամ՝ հիւանդութիւս
բառնայ, ըստ այնմ՝ նա զհիւանդութիւս մեր եբարձ, և
զարմանէ, այսինքն, կերակրէ յանմահական սեղանոյն, զա-
մենեսեան քաղցրութիւ: Ո՛ անբաւականութիւն նր փառաւ-
որէ, զի կենաց հաղորդութիւն ունի ընդ Այ, քան զոր պէ-
տանողոյն ինչ չէր 'ի կեանս մարդկան: Արդ եդի 'ի մտի
զնա ածել ինձ կենաց կցորդ: Տեսանես ով սիրելի ըն-
թերցող, թէ ո՞րչ յանկոյ մարգարէս և թագաւորս ճաշակ-
մանս այսորիկ. զի կենաց կցորդ լինելոյ խնդրեաւն անմահա-
կան. ո՞րչ և յետագայիւս առէ, ծանուցեալ թէ է ինձ
խորհրդակից բարեաց, և մխիթար հոգւոց, և տրտմութեանց:
Վայելց վն նր փառք 'ի մէջ ժողովրդոց, և զպատիւ 'ի ծե-
րոց, ժողովուրդս զգաստութիւս հրեշտակաց, և նոյնք
ծերք, որ նախ քան զամ՝ ստեղծան, յորոց պատուին և մե-
ծարին ճաշակողք արժանապէս այսմ խորհրդոյ 'ի կեանս
յայս, և 'ի հանդերձելումն. Ամէն:

*********************

Զի է բուռն կենսատու, ըմբռնել քանզի Աստուածոյ. զոր Եսայի
Նշանակէ:

Ասա մեկնիր զ՚որն նստեալ ՚ի վե՛ր աթոռոյ, այսինքն, ըզ
Որդի՛ ՚ի վե՛ր խաչին, վերացելոյ և բարձրացելոյ. և տունն
Այ բանին, այսինքն զմարմինն իւր լի փառօք Աստուածութեան.
զի ՚ի նմա է բնակեալ ամ՝ լրումն Աստուածութեան մարմնապէս.
և սերովբէքն մեծաւ ահիւ պաշտօնեալ, լուրջ զխորհր-
դով սքանչելագործութեան. վեցնաւ թևօք, երկոքումբք
ծածկեալ զերեսս, այսինքն զանբովանդակութիւն, և զբարձ-
րութիւն փառս Աստուածութեան, որ անհասանելի է յիմանալու-
ածոցս. և երկոքումբք ծածկէին զոտս, այսինքն, զթաք-
նութիւն խորութեան նր. և երկոքումբք թռուցեալ աղաղակէ-
ին, այսինքն զներկայօրէն խորհուրդն տեսանելով, ծափս
ծափս հարկանելով, և պարելով ՚ի վե՛ր խորհրդոյն, աղա-
ղակէին մեծաւ զուարճութեամբ, * Սբ Սբ Սբ Տր՝ զօրութեանց. * Եսայ. 6. 3.
լի են երկինք և երկիր փառօք քո: Եւ թէպէտ թէ ոչ ինչ
այլ ուրախութիւն գոյ յերկինս առաջի Այ և հրեշտակաց նր,
քան կատարումն խորհրդոյս, որ և գրեալ է, քանզի այս ամն
սքանչելագործ, յորժամ՝ սքանչելագործութիւն զայս կա-
տարէր, յանկարծակի եւս անհասանելի լոյս փայլատակեալ
խորհրդեանն, և պարէին հրեշտակք խորհրդեանն ան-
պատմելի զուարճութեամբ, և ուրախութեամբ, և առեալ զսք-
անչելագործութիւն, թռեան յերկինս, և մատուցին Հօր, և
ամենայն Հոգւոյն, ուստի եղև անպատմելի խնդութիւն և
ուրախութիւն, Հօր և ամենայն Հոգւոյն, և ՚ի դասուորու-
թիւն հրեշտակաց, սքանչելութիւն, և անհասանելի խնդութիւն,
և յորժամ դարձեալ բերաւ սրբազան խորհուրդն, ՚ի Սբ սե-
ղանն, անդ ևս անհասանելի ուրախութիւն եղև ՚ի պարս անդ-
րամարտէլոյն հրեշտակաց, Եւ այսպէս աղաղակէին ասե-
լով սրբազան սերովբէքն, զՍբ Սբ յորոց միոյն ՚ի նոցանէ,
առաքեալ կայծակամբ, ՚ի սրբել զմարգարէն. միոյն նշանակէ
զմատուցանողն, կայծակն զբանն Այ ունելին զմարմին և
զարիւն կենարարին՝. որովք ճաշակի Այն երկնի. մարգա-
րէն

րէն Ա՟ծային ժողովուրդն, զոր առեալ քահանային, ու-
նելեօք զԱ՟ծըն բանն, այսինքն մարմնով և արեամբ մատու-
ցանէ 'ի բերան ժողովրդեանն ասելով. այդ մերձեցաւ 'ի
շրթունս քո, և հանցէ 'ի քէն զանօրէնութիւնս քո. զի ըն-
նութիւնք, ուր համանէ և մերձենայ կայծակն, անուի 'ի բաց
մերժի խաւարն, Աստ տեսանի բղխեալ, գաւազանն որ 'ի
ձեռին հօր, գաւազան ուղղութեան յարմատոյն Յեսեայ,
այսինքն մարդկութիւն երևեալ, բանն Ա՟ծ և հանգուցեալ
'ի վերայ նորա հոգի Ա՟յ, իմաստութեան, հանճարոյ, խորհրդոյ.
զօրութեան, գիտութեան և Ա՟ծ պաշտութեան: Նա և նմ՝ հաւա-
տացեալք ճաշակեն, զմարմինն և զարիւնն տէրունական,
գայլ ընդ գառին, և ինձ առուլու, և որթ, և ցուլ, և
առիւծ, որք 'ի միասին ճարակեն, և եզն, և արջ, և որ-
դեակք նց խառն շրջին: Աստանօր տեսանի, զՏ՟ր նստեալ
'ի վերայ թեթև ամպոյ, այսինքն Ա՟ծն բան, 'ի վերայ մարմնոյ,
և արեան, որ թեթևացեալէ յամ՝ մեղաց, և միաւորեալ
Ա՟ծութեան. ոտ օդ է ջրոյ, յորոյ լինի ամպ, եկեալ յե-
գիպտոս, այսինքն յեկեղեցիս հեթանոսաց, և շարժեալ
ձեռագործքն եգիպտոսի այսինքն մեղքն, որով բարձեալ
* Եսայ. լինի, ըստ այնմ * նա զմեղս մեր բառնայ, և պակասեալ գե-
53. 4. տոյն, և ջրադարձք գետոյն, այսինքն յանցանքն և անօրէ-
նութիւնքն, որ իբրև զգետ հոսին, և ցամաքեալ ամ՝ ժո-
ղով ջուրցն, այսինքն, ամ՝ չարիք, 'ի ճաշակմանէ կենա-
րարին: Աստանօր նորոգեալ տեսանի կղզիք 'ի ճաշակմանէն
Ա՟յ, այսինքն աշխարհս, որ փտացեալէր մեղօքն Ադամայ,
և մաշեալ ոտ զձորձ, ըստ այնմ մաշեցաւ երկիր, և ամ՝ բը-
նակիչք նր, և մարմնոյ և արեան ճաշակմամբն, հաստա-
տեալ սիւն նր, որէր մարդկայինս բնութիւն, ըստ այնմ՝ թէ
ես հաստատեցի զսիւնս նր: Աստ տեսանի Յակոբ ծա-
ռայն Ա՟յ, այսինքն, մարդկութիւն Ք՟ի օծեալ յԱ՟յ.
այսինքն միաւորեալ ընդ Ա՟յ. և թէ ընդէր մարդկութեան
Ք՟ի, Յակոբ ասէ և նոյնն ծառայ, զի Յակոբ խաբող
լսի, և կատարեալ մարդկութիւն, որ միացեալէր ընդ Ա՟յ,
մինչ

միշտ խաբէր զսատանայ, երբեմն զգործս Այ գործէր ոչ
'ի կուսէ ծնանիլ, և հօր 'ի վերուստ վկայելն, 'ի վր ծո-
վուն չուելն, զնմ՝ սքանչելագործութիւս կատարելն, ին-
քն իշխանութեամբ, և երբեմն զգործս ծառայականս և արա-
րածականս կատարել, ոչ փախուստ Հերովդէէ, քաղց-
նուլն ծարաւելն, վաստակելն, քրտնելն, յերկիւղէն, ար-
իւնն իբրև զկայլակն իջանել, Թքանելն՝ ապտակելն՛, ձա-
ղելն, փշոց պսակելն, բևեռելն, և զայլս մարդկայինս, խա-
բէր սատանայ, զի յորժամ տեսանէր 'ի գործսն Այ զՅս,
սարսափէր և սատանիւք, վայ և եղուկ անձին մատուցա-
նէր Թէ ահա վանէ զզօրութիւն իմ, և աւար առնէ զզե-
րութիւս իմ. և յորժամ զկատարեալ մարդկութեան տեսա-
նէր զգործ յանձն կարօտեալ և նուաղեալ, դարձեալ քաջա-
լերէր զինքն, և հաստահիմն սրտապնդէր. զինքն և զիւրսն.
այլ յորժամ վառեաց զհրէայսն, և հանին զնա 'ի խաչ
մեծաւ պատրաստութեամբ կայր և ըսպասէր 'ի կլանել զհո-
գի նորա, որպէս այլոցն. այլ յորժամ մեծաձայն գոչեաց
հայր 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. յայնժամ բացափայ-
լեցաւ յայտնապէս Աստծութի նր, զի հայր ահագին որոտ-
մամբ, և ահեղագոյն Թնդմամբ մատուցաւ ահա յաւանդումն
հոգւոյ որդւոյն: Եւ յայնժամ անճառելի լոյս Աստծութեն,
մերկապարանոց երևեցաւ յայտնապէս նմա, սատանայի և
մահու. յորմէ զարհուրեալ ահագին զեկուցմամբ, չոգան-
յորջս դժոխոյն, և կապեցան 'ի հզօրէն անլուծ կապանօք,
և ազատեցան զերեալքն 'ի գերչէն: Եւ յաղագս այսորիկ
Յակոբ անուանեցաւ մարդկութիւն Քսի, և տուեալ 'ի
վր նորա հոգի, զոր բարձեալ էր յիսկզբանն, զեղէգն որ է
բնութիւս մարդկային, ոչ բեկանէ, և զպատրոյկն առկայ-
ծեալ ոչ շիջուցանէ, այլ վառեաց լուսով Աստծութեն, և
'ի տնէ Այ կոչեցեալ արդարութեամբ, այսինքն 'ի բանէն
Այ, զբնութիւս մարդկան, 'ի միաւորութիւն, և կալեալ ըզ
աջոյ ձեռանէ. այսինքն յանմեղութենէ բնութեան, զի զնմ
ջեր ինչ էր, 'ի մարդ կատարելապէս է առ՛, բայց 'ի մեղաց,
և

և 'ի զազրութենց, և զնոյնն տուեալ 'ի բանէն Տ̃ն, յուխտ
ազգիս, այսինքն զմարմինն և զարիւնն, իւր, որ՝ ասացն
* Մտթ. այսէ * արիւն իմ՝ նոր ուխտ տուեալ, ազգի մարդկան. և
26.28. նոյնս զայս հեթանոսաց, որ բանոյ զայս կուռոց այսինքն
զմիտս հեթանոսաց. որք կուրացեալք էին յՏ̃ծ պաշտու-
թեց. և հանէ զկապեալս 'ի բանդէ, և 'ի տանէ կապա-
նաց. քանզի ճշմարտութեան կենարարին թէ որք կայ 'ի բանդ-
մեղաց, և 'ի կապանս անօրէնութե, ելանէ և արձակի, և
նստեալ 'ի խաւարի լոյս ծագի նոցա, և առաջնորդէ կու-
րաց, 'ի ճանապարհ որ տանի 'ի կեանս, զորս ոչ գիտէին
ինքեանք, ընդ շաւիղս զորս ոչ ճանաչէին, և համանգամայն
* Եսյ. լինի ճշմարտողացն, խաւարին 'ի լոյս. և * ծուարձացին իբրև
44.3. զխոտ ջրարբին, և իբրև զուռ 'ի մէջ ջրոց փնացեմ. մինն
ասիցէ Տ̃էր եմ ես, և միւսն իբրախոյս բարձցէ յանուն Տ̃ն
Յակոբայ, և միւսն ևս գիր հանցէ, ձեռամբ իւրով թէ
Տ̃էր եմ ես: Տ̃ես տեսանել զ՞որն տէրանց, անարգեալ 'ի
մարդկանէ, և զարմացեալ 'ի բազմաց. զի խնկապէս տեսա-
նել պարտէ զնա իբրև զարմատ, 'ի ծարաւուտ երկրի, և
խորամիլ սրտիւ՝, որ ոչ գոյ տեսիլ, և ոչ փառք, փառա-
որեալն 'ի հրեշտակաց, որք թեւատարողեալ ծածկէին զերեսս
իւր ն̃ց, աչիւ մեծաւ պախուցմամբ, և սաստ փառաւորէին,
* Եսյ. և օրհնէին. * տեսիլն նր̃ անարգ նուաստ, քան զամ̃ որ-
53.3. դւոց մարդկան. որ զմեղս բառնայ, և վս̃ մեր չարչարի.
և վիրաւորեալ վս̃ մեղաց մերոց. և պատժեալ վս̃ մերոց
անօրէնութեանց, և մեք նր̃ վիրօքն բժշկեցաք. և մատնեալ
առ մեղս մեր, իբրև զոչխար խոպանդ վարեալ, իբրև ըզ
որոջ առաջի կտրչի, անմռունչ կացեալ: Տ̃ն խոնարհութե
նր̃ դատաստան նր̃ բարձեալ տեսանի. և բարձեալ յերկրէ
կեանք նր̃, յանօրինաց 'ի մահ վարեալ, և տուեալ զչարս
փոխանակ գերեզմանի նր̃. չարէր մեղքն, չարէր անօրէնու-
թիւն. չարէր յանցուածս պատուիրանին, յորս ամ̃ ներհակք
գոյացան և էական: Օ՜ այս ամ̃ յիշանիլն մարմնոյն, 'ի գե-
րեզման; որ ինչ մարմնականէր, ինքն է̃ մարմնոյն 'ի հող.
և

և որ խնչ հոգևոր, ընդ հոգւոյն 'ի դժոխս, մարմնականն
մեղք, 'ի հող ծածկեաց, և ետ հողոյ, զի հողոյեր արար-
եալ: Իսկ հոգւոյն, հոգոյն 'ի դժոխս, և այսպէս յեղա-
նելն նո՛ր, 'ի գերեզման, մարմնական մեղք հողով ծածկե-
ցաւ, իսկ հոգևորն 'ի դժոխս. և վ՟ն այնորիկ եմուտ 'ի գե-
րեզման, զի իւրաքանչիւրն բարձցի, մարմնաւորն և հո-
գևորն: Նա զ մեծամեծս փոխանակ մահու նո՛ր, զի յորժամ
մահացաւ, մեծամեծս պարգևեաց, զի մինչև ցայնժամ,
ա՟մ հոգի մնայ աւանդէր, և կլանէր թէ արդարոց, և թէ
մեղաւորաց, այլ յորժամ աւանդեաց տ՟ր՟ն 'ի քաւութեւին
առ հայր, 'ի ձեռս քո աւանդեմ զ հոգի իմ, ա՟մ մարդկան
նոյնպէս ընծայեաց. այսէր մեծամեծսն, որ մահուամբ նո՛ր
առեաւ, ա՟մ հաւատացելոց, որ 'ի ձեռս հօր աւանդելով
լինի հոգի, ըստ այնմ * հոգիք արդարոց 'ի ձեռսին Այ՟ն, և * Իմաստ.
ոչ մերձենայ 'ի նո՛ մահ: Նա այսու տուաւ չարս փոխանակ 3 . 1.
գերեզմանի նո՛ր, զի չարն որ էր դժոխքն և մահն, տուաւ
'ի կապ[illegible]. և ոչ մերձենայ դարձեալ 'ի մ՟րդն, և այնու-
հետև կամեցաւ տ՟ր [illegible] զնա 'ի վերայ անուի, որ յաղագս
մեղացն և անօրէնութեանցն Ադամայ կրեաց. այսինքն բանն
Այ՟ 'ի մարմինն իւ՛ր. զի իշխանութի՟ ունէր տալ զնա, և
առնուլ զնա, ըստ այնմ * իշխանութի ունիմ դնել զնա, և * Յով.
իշխանութի ունիմ միւսանգամ առնուլ զնա. և թէ * քա- 2 . 19.
կեցէք զտաճարս զայս, և զերիս աւուրս կանգնեցից զսա. * Յով.
և թէ զայս ասէր վ՟ն տաճարի մարմնոյ իւրոյ: Ոչ որպէս 33 . 3.
իւրով 'ի իշխանութեան զհոգին հօր աւանդեաց, նոյնպէս և
զմարմինն կամի դնել 'ի վերայ անուի, այսինքն զխորհր-
դաւոր մարմինն, 'ի ձեռն ճաշակման յանմահական խորհր-
դոյն, և ցուցանել նմա լոյս, որ խաւարեալ և նսեմացեալ
էր զանազան չարեօք և անօրէնութեամբ, ըստ այնմ զի հոյլք
յես, զի եսեմ նսեմացեալ, և թէ նստէին 'ի խաւարի, և
'ի ստուերս մահու լոյս ծագեցի, ևն: Նա թէ երևեցաւ-
մեղ արեգակն 'ի բարձանց, լուսաւոր առնել զխաւար մեր,
և ծագել լոյս 'ի վ՟ն այնոցիկ, որք նստէաք 'ի խաւարի, և
'ի

՚ի ստուերս մահու, ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան. և թէ լոյս յայտնեցար հեթանոսաց. և Նշաւ-ւթ առէ մարդիք առ Քր, և առէք զլոյս, և այսպէս եցոյց նմա լոյս, և ըստեղծեաց իմաստութիւն. զի ոչ հայր բանիւ ըստեղծեաց զերկին, և զերկիր, ըստ այնմ՝ բանիւ Տն երկինք հաստատեցան, և թէ Տմ ինչ նովաւ եղև, և թէ զՏմ ինչ իմաստութիւն արարեր. այսպէս և երկրորդիւս արարչութիւն զՏմ բանիւ լարով արար, շինեաց, և ըստեղծեաց զմարդկայինս բնութիւն, զոր քակեալ և աւերեալ էր մեղօք, ըստ այնմ՝ զյառաջագոյն աւերեալսն կանգնեացէ: Եւ այսպէս ճաշակմամբ անմահականաւն խորհրդով, նորոգեաց ՚ի ձեռն մարմնոյ և արեան իւրոյ, ըստ այնմ՝ նորոգեսցի որպէս արծուոյ զմանկութիւն քո: Զի նախ զիւրն խակոյն մարմին, որ եղեալ էր ՚ի գբի ներքնումն ՚ի խաւարի. և ՚ի ստուերս մահու մեղօք, զխորհրդաւորն մարմին, յարոյց և կենդանացոյց, և կենդանացուցանէ, ըստ այնմ՝ նախ Քս, և ապա Քսեանք: Եւ արդարացոյց [illegible], որ մարդիկն ծառայեաց բազմաց, [illegible] և առաջն, եսեմ ՚ի միջի ձեռում՝ լիրև ըստ[illegible]ր մի: Եւ այսպիսի խոնարհութիւն զմեղս բազմաց վերացուցէ. վս զի բնութիւնէ, յորժամ կշռոյն [illegible] ծառայ[illegible], և խոնարհիցի՝ միւսն բարձրացի առանց կարծեաց: Որպէս բանն Որ խոնարհեցաւ մինչև ՚ի մահ, և ՚ի դժոխս, և մահացեալքն և դժոխայինքն, յայնժամ՝ բարձրացան, վս այսորիկ ասաց նա ժառանգեսցէ զբազումս, որ ժառանգեալ էր սատանայ, յանցանօք մեղաց, և անօրէնութիւն, և զաւարս հզօրաց բաշխեսցէ, փոխանակ զի ՚ի մահ մատնեցաւ անձն նր, և ընդ անօրէնս համարեցաւ՛. և նա զմեղս բազմաց վերացոյց, և վս անօրէնութեանց նց մատնեցաւ: Զի Տրէ առէ, որ առնէ զայս Տմ Տր սպասաւորդ անուանէ նր, որ փրկեաց զմեզ ճաշակմամբ մարմնոյ և արեան իւրոյ. զի որ առժամանակ մի եթող զմեզ, վս ճաշակման որ ՚ի դառնութեան պտղոյն, այլ ողորմութիւն մեծաւ ողորմեցաւ և ետ մեզ զդեղն կենաց,

թա

թափիչ դառնութեան, և անմահական կենդանարար մարմնոյ և արեանն: Որ փոքր մի սրտմտութեամբ դարձոյց զերեսս իւր 'ի մէնջ, յաղագս լսելոյ ձայնի բանսարկուին, այլ ողորմութեամբ յաւիտենից. ողորմեցաւ մեզ, և Ածացոյց, և որդիացոյց ճաշակմամբս անմահականաւ: Եւ այսու ուխտիւս որ խոստովանեալքս հաշտեցաք. ընդ սատանայեալս և ը̄ խափանեալս: Այսուհետև պատրաստին կարկեհան զքարինս, և զհիմունս տանց մերոց շափիւղայ, և կանգնի ըզ աշտարակս մեր յասպիս. և զդրունս մեր յականց վանակնոյ: Եւ ածեալ շուրջ զմեօք, պարիսպ յընտիր, յընտիր յականց պատուականաց, և զամ՛ որդիս մեր խրատեալս յԱյ, և 'ի բազում խաղաղութի զմանկունս մեր, և արդարութի շինեալ: Աստանօր լուսաւորեալ տեսանեմք զերուսաղէմ, այսինքն խաղաղացեալ, և ամբողջեալ անձինք մեր լուսաւորեամբ. ճաշակման լուսոյն անմահականաւ. և փառք տն ծագեալ, 'ի վե մարմնոյ և արեան կենարարին, և 'ի սմա տրն յայտնեալ, միաւորութբ ընդ Ածութեն: Այսուհետև զնոսն հաւատացեալք, և թագաւորեալք 'ի լոյս նր, և 'ի հեթանոսաց քրիստոնեայք, 'ի ծագել լուսոյ նր: Այժմ տեսանեմք դէմ՛ յանդիման, զԱծ միացեալ ընդ մարմնոյ և ընդ արեան, զոր ցանկային տեսանել ընդ աղօտ հրեշտակք. այժմ տեսանեմք և խնդամք, զՏրն տերանց միացեալ, ընդ անմահական խորհրդոյն, և բազմեալ 'ի վե սրբոյ սեղանոյն. որոյ բազմաւ ըղձիւ, ցանկայր տեսանել մեծ նահապետն Աբրահամ՛ եւտես 'ի Սահակայ և ուրախ եղև: Եւ մեծն 'ի մարգարէս Մովսէս, 'ի մորենւոջն, զի նշանակէր այսմ՛ խորհրդոյ, զի ոչ յայնժամ՛ մորենին վառեալ Ածութեն, այժմ՛ առ նշխար և գինիս վառեալ Ածութբն, որ միաւորեալէ ընդ բանին Այ: Օհ որ յայնժամ՛ զօրինակն եւտես և ուրախ եղև, կամէր և զճշմարտութիւն եւս տեսանել, և ոչ եհաս բարձանելայն, այլ լուաւ թէ զյետոյսն իմ՛ տեսցես. և յորժամ՛ եկն ճշմարտութին, և կոչեցաւ 'ի Թաբոր, յայնժամ՛ եւտես, և ընդ Եղիայի ուրախ եղև, զի Թաբոր նշա-

նա

նակէր զիւր եկեղեցի, և զմարմինն փայլեալ Ա֊ծութեամբն,
զիւր խորհուրդ՚ն: Եւ այսուհետև ոչ ևս եղեցի արեգակն
՚ի լոյս տուընջեան, և ոչ լուսինն ՚ի ծագումն, այլ եղիցի
Տ֊ր լոյս յաւիտեան, որ միացեալ և միաւորեալ ընդ խոր-
հրդոյս անմահութեան: Այսուհետև ոչ ևս մտանէ արեգակս
այս որ է մարմին կենարարին, և լուսինն որ է արիւն նը-
մին, և եղիցի սա լոյս յաւիտենական: Սա տեսանի հոգին
Ա֊ծ, իջեալ Ա֊ծութեամբն ՚ի վ֊ր մարմնոյ և արեան կենարա-
րին, առ ՚ի յօծումն, այսինքն ՚ի միաւորութիւն հացին և
գինւոյն, ըստ Ա֊ծութեան բանին. զի որ ՚ի նախնումն օծա-
մարդկութիւն ըստ Ա֊ծութեան հոգւով և եղև կատարեալ
* Եսայ. Ք֊ս, որ ասացաւ, * Հոգի Տ֊ն ՚ի վ֊ր իմ, վ֊ս որոյ և եօծ
61. 1. իսկ զիս: Նոյնպէս և այժմ ասա իջանէ նոյն հոգին Ա֊ծ
զի արասցէ զայս խորհուրդ կատարեալ Ք֊ս, առ ՚ի յաւե-
տարանել աղքատաց, այսինքն բնութիւն Ադամայ, որ
յամի աղքատացաւ, ճաշակմամբն ՚ի դրախտին: Սա տե-
սանի բժշկութիւն որոց, անմահական խորհրդովս, որով
բեկեալ հայմամբն ՚ի դրախտէն անկոյն ապիմնականին, ըստ
* Սղմ. այնմ * բժշկէ զբեկեալ սիրտս. և պատէ զամ զվէրս: Սա
146. 3. տեսանի քարոզս բարձրաձայն, ՚ի քարոզչաց, ամ գերեաց
որ ՚ի մեղաց և յանօրէնութեանց զթողութիւն: Սա տեսանի
* Սղմ. ամ կուրաց զթողութիւն, և զտեսութիւն, ըստ այնմ * Տ֊ր բա-
146. 8. նայ զաչս կուրաց, զի բնութիւնք ապառաւուց, որ կամի ըզ
կենդանիս հեղձուցանել. և կերակուր ինքեան առնել,
չանայ զաչսն փակել, և խաւարեցուցանել, և ապա դահա-
մէժել, և ուտել. այսպէս արար և սատանայ, որ կուրացոյց
զբնութիւն Ադամայ, և արար կերակուր ինքեան. վ֊ս որոյ
ճաշակումն այս վ֊որոյ ճաշ տուաւ Ք֊ծ նմա: Սա տե-
սանի ամ Տ֊ն ընդունելի, և օր հատուցման, զի այսու ճա-
շակմամբս հատուցումն եղև յամի, փոխա մահ, և փոխա
կեանք. փոխա դառնութեան, և փոխա քաղցրութեան. փոխա
անէծք, և փոխա օրհնութիւն. փոխա մերկութեան, և փոխա
զգեցումն. փոխա տրտմութեան, և փոխա զուարճութիւն,
ու-

ուրախութիւն, և ցնծութիւն, և պարերգութիւն. Նովաւ արտաքսումն 'ի փառաւորեալ վայելչութենէն, և նովաւ դարձեալ հրաւիրումն. Նովաւ գրկումն եօթն արփեան շնորհաց, և նովաւ պարգևումն. Նովաւ աղքատութիւն, դառնութիւն, վտանգ, չար., և ախտակրութիւն, և նովաւ մեծութիւն, քաղցրութիւն, յապահովութիւն, ողջութիւն, և առողջութիւն: Եւ այսպէս համառօտաբար յամի հատուցումն. վն այսորիկ որ ցայնժամ՝ ամէն ոչ ընդունելիք էր Տն, և նովաւ Ած՝ Տն, կատարի 'ի հաճոյն ՆՅ, և զայն ընդունելի, և մխիթարեալ 'ի հոգւոյ, տուեալ որ փառաւորսցու, օծումն ուրախութե, և ըստ որում հանդերձ փառաց փոխանակ անձին 'ի գժոխայն: Եւ կոչեալ ազգ արդարուն, և շինեալ նովաւ քաղաքական յաւիտենից և նորոգեալ զքաղաքս աւերեալս, ազգաց յազգս: Փոխանակ ամօթոյն որ 'ի դրախտին ստերկալ ծածկեցաւ և ընդ ծառով թզենւոյ, կրկին ուրախութիւն, ժառանգեմք այսու: Եւ փոխանակ անարգանացն որ 'ի դրախտին լուեալ էին, և անիծանացն որ 'ի ժառանգմանէն աղետականին սորայն, այսու ժառանգեմք ցնծութիւն և ուրախութիւն 'ի մէջ գլխոց մերոց. վն զի ահա մերձ է մեր, հասեալ է, և ունի վարձս ընդ իւր. զի ընդ ժառանգելն վարձին ընդ նմա, որ համանգամայն լինի ՆԾ և որդի ՆՅ, ընդ այնմ՝ եւ նոցա իշխանութիւն որդի ՆՅ լինել. և յայնմ՝ հետէ կոչեցելին նոքա ժողովուրդ Տր փրկեալ 'ի Տնէ. և կոչեցուք խնդրեալ քաղաք, և ոչ լքեալ: Նա տեսանի ցանկալին Երեմիայի, հոգի երեսաց մերոց զՏր ՔՍ բաղմեալ 'ի մէջ սրբոյ սեղանոյ, հարբ և հոգւով սրբով, և ձայն քաղցր՝ արձակելով, եկայք, կերէք զմարմին իմ, և արբէք զարիւն իմ, որ վն ձեր և բազմաց, հեղանի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց: Օր սա ոչէ այնպիսի կերակուր, որք կերլին յանապատին, 'ի ձեռն Մովսէսի, և մեռան, և կամ Ադամայ, և Եւային, և մեռան. երկրորդական մահուամբ. այլ որ ուտէ 'ի սմանէ կեցցէ յաւիտեան. որոյ ժառանգմանք ոչ կարէ մերձենալ երկրորդն մահ: Եւ վն այնորիկ կց-

եաց Երեմիայ Հոգի երեսաց մերոց, այսինքն Հոգի Հոգւոց
մերոց. զի ո՟վ մարմինն հոգւովն կենդանի, նոյնպէս և հո-
գին նովաւ. այսինքն քեւ, զի ո՟վ մարմնոյն մահն է բաժանումն
հոգւոյն ըստ արիստոտէլի. այսպէս և հոգւոյն մահն է բա-
ժանումն Ա՟յ 'ի հոգւոյն: Եւ վ՟ն այնորիկ ասաց Հոգի ե-
րեսաց մերոց, այսինքն Հոգի Հոգւոց մերոց. որոյ ճաշակ-
մամբն, նոյնինքն Ք՟ս միաւորի ընդ հոգւոյս մերոյ. ո՟վ
հոգին բանական, ըստ մարմնոյ բանականի, և նա իբրև
հոգի ընդ հոգւոց մերոց. և նովաւ մնայ անմահ յաւիտեանս
յաւիտենից, և ոչ եւս կարէ ճաշակել զմահ երկրորդ ըզ-
մահ մի ճաշակեսցէ յաւիտեան: Եւ թէ որ ուտէ զմարմին
իմ, և ըմպէ զարիւն իմ կեցցէ յաւիտեան: Ո՜վ ո՟վ երկրորդ
մահէ որ մահացուցանէ, ո՟վ ճաշակմամբն դրախտին, որ-
ով ամենեքեան հոգւով մահացան, ո՟վ և ասայն մահու մե-
ռանիցիս, ոչ յաղագս մարմնոյն էր ասացեալն, այլ յաղագս
երկրորդին էր բանն, որ էր հոգին. զի համանգամայն ընդ
ճաշակելն, հոգւով մեռան: Ո՜վ թէ յաղագս մարմնոյն էր
ասացեալ բանն, համանգամայն մեռանէին, և ոչ մնային
ինն հարիւր, և երեսուն ամ կենդանի. վ՟ն զի անշուշտ
բանն, որ ասաց յաւուր յորում ուտիցէք մահու մեռանի-
ջիք, զի թէ յաղագս մարմնոյ էր պարտէր 'ի նոյն աւուր
*Մրկ․ մեռանիլ. զի ասաց * երկինք և երկիր անցցեն, և բանք իմ
13․31․ ոչ անցանիցեն. և 'ի ժամուն յորում եկեր, պարտէր մե-
ռանիլ. այլ վ՟ն հոգւորին և երկրորդ մահուանն էր բանն,
ո՟վ վկայէ որ ասացն, օրէնքն հոգեւորեն: Ո՜վ ո՟վ նորա որք
ճաշակմամբ պտղոյն և մեղացն հոգւով մեռան, զի բաժանե-
ցաւ Ա՟ծ 'ի նոցունց հոգւոց, և այսպիսի մահուամբ մե-
ռաւ հոգւով մարդկայինս ազգ, և նորին Ա՟ծն բանն, միաւո-
րեալ ընդ բնութիւն Ա՟դամայ և ոճ մահի Ա՟ծութեան, եղև Ք՟ս.
զի երկակայ միացելոց, ասի Ք՟ս, այսինքն Ա՟ծութեն և
մարդկութեն: Ո՜վ թէպէտ բազումք են միաւորութիւնք, ո՟վ
մարմին ընդ մարմնոյ, զոր օրինակ ամուսնոց, յորոց լինի
զաւակաց մարմին. և հոգի մարմնոյ ընդ յանմարմնոյ, ո՟վ
հո

հոգին բանական, ընդ մարմնոյ բանականի․ այլ ոչ սոսկ
Քրիստոս, այլ որ յԱստուծոյ և ՚ի մարդկութեանն է, և այսպիսի միաւո-
րութեամբ, նոյն ինքն էր Քրիստոս․ եթէ հոգի, հոգւոց մերոց,
ճաշակմամբն զնա։ Ով յորժամ, ճաշակեսցուք կեցցուք,
յաւիտեան։ Եւ յաղագս այսորիկ ասաց ճաշակեցէք և
տեսէք զի քաղցր է տէր, վասն զի սա կենաց հոգւոց
մերոց, փրկելով յերրորդական մահուանէն․ և այնու հե-
տև ոչ ևս մեռանի և երկրորդն մահ նմա ոչ ևս տիրէ․
զի թէպէտ և մեռանի մարմնով, որպէս ասաց, * այլ կեն- * Յոհ.
դանի հոգւով։ * Ով բանն զոր խօսեցայ ընդ ձեզ, հոգի է 11.26.
և կեանք ասաց տէրն, այսինքն զճառաւոր ճաշակման * Յոհ.
խորհրդոյս, որ կեանք է հոգւոց մերոց, միանալ ընդ մեզ։ 6.64.
Աստ տեսանի Աստուածն Աստուծոյ, ըստեղծող և գոյացուցիչն
յամի բազմեալ ՚ի վերայ սրբոյ սեղանոյս, ընդ որոյ ոչ համա-
րիցի ոչ, որ զիտէ զճանապարհս իմաստութեան, վասն զի է
Քրիստոս Աստուած զօրութիւն և իմաստութիւն, և սա Յակոբայ ծա-
ռայի իւրոյ, այսինքն մարդկութեանն իւրոյ, յոր միացեալ է
բանն Աստուած․ ըստ այնմ՝ լցցէ զնա հոգւով Աստուծոյ․ զի մարդկու-
թիւն յորս միաւորեցաւ բանն, էր ՚ի զանձատանոյն Ադա-
մայ, և ըստեղծեալ ծառայ, և բանն Աստուած էր և ըստեղծող,
նորին, և միաւորութեամբ յերկոցուն, Աստուած մարմնով յերկրի
երեւեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ։ Եւ տեսանելի փառաց, նոր
նոր խորանել անուանեցաք և կոչեցաք։ Ով տեսաք զփառս
նորա զփառս իբրև զմիածնի առ ՚ի Հօրէ լի շնորհօք, և ճշմ-
մարտութեամբ։ Ով տէր մարմինն այն միաւորութեամբ էր բանին,
լի եղև շնորհօք և ճշմարտութեամբ, ըստ այնմ՝ թէ * մանուկն * Ղուկ.
աճէր լի իմաստութեամբ և շնորհօք, ըստ մարդկութեանն, այն- 2.41.
պէս և մեք ճաշակմամբ նորին, լինիմք շնորհօք և ճշմար-
տութեամբ։ Եւ վասն այնորիկ ասէ յետագայ բանիւն, զորմէ
Յակոբ և բուռն հար զնմանէ, այսու զի կեցուցանէ ըզ
մեզ զխորհրդաւոր մարմինն․ վասն զի կրկնակի մարմինն Քրիստոսի,
բնական և խորհրդաւոր, բնականն, նոյնինքն, զոր է առ
՚ի կուսէ միացոյց և միաւորեաց ընդ իւրում Աստուածութեան,
բան

բան անեղն միջարար և խորհրդաւո՛րն, յոր միջնորդարար, միաւորի Ա՛ծըն բա՛ն, այսինքն, մարմնոյ, և արեան Իւրոյ, ճաշակման՛, ըստ այնմ՛, մի միջնորդն ԱՅ, և մարդկան, մարդն Յս:

## Գլուխ ԺԸ:

Յաղագս թէ ոչէ պարտ՝ յամել ՚ի ճաշակմանէն արհամարհանագործութեամբ:

Եւ վն այս խորհրդաւոր մարմնոյս ասէ դարձ Յակոբ, և բուռն հար զնմանէ, ճաշակմամբ կենարարին, զի մի թողեալ լիցիս ՚ի նմանէ. քանզի ճաշակումն այս, է դաշն ընդ ԱՅ, և ուխտ փրկութեան: Եւ վն այնորիկ պարտ է հաւատացելոյն որ խորհրդաւոր մարմնն անուանեցան բանին կենաց. յամ կիւրակէ յիշել զդաշն ճաշակմամբ յանմահական խորհրդոյն, ուր յաւուրս առաքելոցն, ՚ի բեկանել հացին, հաղորդեին, և դառնային յաշխարհաբուծ կենցաղոյս, և բուռն հարկանէին ճաշակմամբ կենարարին, ուր և հրամայեցաւ թէ դարձ Յակոբ, և բուռն հար ըզ նմանէ: Եւ թէ ոչ կարելի իցէ յամ կիւրակէ, պարտ է յամ՝ ամսոյ գլխոյ, ըստ այնմ՝ փող հարէք ՚ի գլուխ ամսոյ, փողէ խոստովանութեան, որ հարկանէ խորհրդաւոր մարմնն Քսի, առաջի քահանային, յայտնելով նմա զյանցանս իւր, առ ՚ի բուժելոյ և ՚ի թողլոյ զմեղս, և ՚ի ճաշակելոյ զանմահական խորհուրդն: Եւ թէ այս ևս ոչ կարելի իցէ, յամ՝ տաղաւարացն երրակաց պարտ է հաղորդիլ, խորհրդաւոր մարմնն զխնկաղոյն մարմնն Քսի. և թէ այս ևս ոչ կարելի իցէ, գոնեայ ՚ի զատկին, դառնալ պարտի և բուռն հարկանել յերևելոյն ԱՅ ճաշակմամբ. և թէ այս ևս ո՛չ. և վն այնորիկ ասէ, և որք թողուն զնա մեռանին: Զի որ ՚ի տարւոջն միանգամ ոչ ճաշակեսցէ, և ոչ յիշեսցէ ըզ դաշն, և զուխտ նր, սատակեսցի անձն այն յիւրմէ.

յա

յանէծս և 'ի տառութիս մահնիցի, 'ի ներկայումս կենցա-
ղոյս, և 'ի կատարածին ասէ բարկութե̄ ըմպանիցին, և մի
գտցին. խնդրեսցեն մեղք նը̄, և նա մի գտցի, վ̄ այնորիկ
ասաց մի տար այլում՝ զփառս քո, այսինքն աշխարհի, որ
ծուլէ հեղձուցեալ և դառնութե̄ որակացեալ, պատրող և
խաբօղ, և մի փոգուսն քո ասէ տար ազգի օտարոտոյ. այ-
սինքն կենցաղոյս, որէ օտարոտի. զի աշխարհս այս յորս
եմք, ոչ է մեր, այլ անասնոց և անբանից. և նմանեալ նո-
ցին: Իսկ մեր այնէ յորս էն, բանականք անմարմինք. վ̄
զի որք թողուն զսա, և ընդունին զնա, ասէ 'ի կեանս.
վ̄ զի ո̄ղ նա կեանքէ, և կենաց տուօղ, նոյնպէս և լինե-
լոցէն որք զնա ճաշակեն. վ̄ այնորիկ ասաց, այսէ հացն
կենդանի որ յերկնից իջեալ, և կեանս տայ աշխարհի. և
այսէ որ ասացն որ ընդունին 'ի կեանս. վ̄ զի է յարութի
և կեանք, ո̄ղ ասացն, եսեմ՝ յարութի և կեանք, և յորժամ
ընդունիմք զկեանս զայս 'ի յարկս մեր, լինիմք կենդանա-
ցեալք 'ի մեղաց, և յարուցեալ 'ի մեռելութեանց: Իսկ յա-
ղագս այսորիկ ասէ ծագեսցին աստեղք յիւրաքանչիւր պահ-
պանութե ծագեսցին ուրախութե̄ յարարչին իւրեանց. վ̄
զի ճաշակօղք յանմահական խորհրդոյս, են որք իբրև զա-
րեգակն պայծառափայլս, ո̄ղ սրբազան առաքեալքն, որք
ճաշակմամբ արտափայլեցին, զլոյսն ընդ ոլորտս տիեզերաց,
և լուսաւորեցին զաշխարհս հեթանոսաց. և են որք իբրև
զլուսին, և զաստեղս, որք առնուն զլոյս յարեգականէ, ին-
քեանք լուսաւորին և զայլս լուսաւորեն, ո̄ղ հայրապետք,
մարտիրոսք, ճգնաւորք, և այլք: Իսկ ո̄ղ 'ի մէջ աստեղաց,
առաւել, և նուազէն լուսով՝ սոյնպէս և 'ի մէջ սոցա. զի
ո̄ղ սոքա ոչ են ինքնալոյսք, այլ յինքնալուսոյն առեալ,
զլոյս լուսաւորեն. այսպէս և ճաշակօղքն յայսմ յանմա-
հական խորհրդոյս, ոչ են ինքնալոյսք, այլ 'ի ճաշակմանէ
խորհրդոյս լուսաւորին: Օր ո̄ղ աստեղք, եթէ ոչ առցեն
զլոյս, ինքնալոյս յարեգականէ միայն խաւար և նսեմացեալ,
այսպէս և քրիստոնեայք որք աստեղք անուանեցան, յա-

ռա

ռաքելոց և լուսին, եթէ ոչ առցեն լոյս Ճառագայթմամբ յան-
մահական խորհրդոյ Տեառն խաւար, և նսեմացեալ: Նոյ-
յորժամ Ճառագայթմամբ լուսաւորեսցուք, ծագին իւրաքանչիւր
* Մտ. որք պահպանողք յարարչին իւրեանց, յորժամ ասասցէ * Ե-
24. 34. կայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ
զարքայութիւն յսկզբանէ աշխարհի: Զի որպէս և Ա՛ծ-
ային խորհուրդս այս է արեգակն արդարութեան, ծագեալ 'ի
Հօրէ, առ 'ի լուսաւորել զխաւար մեղաց մերոց. ըստ այնմ
* Մղ. * ծագեսցի ձեզ երկիւղածացդ իմոց, արեգակն արդարու-
254. թեան. և թէ է * լոյս Ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զա՛մ մարդ
342. որ գալոցէ յաշխարհ. որ լուսաւորէ Ճառագայթմամբ մարմնոյ և
* Յհ. արեան իւրոյ, իսկ 'ի հանդերձելումն պայծառացին, ի-
1. 9. բրև զարեգակն ծագեսցեն յարարչին իւրեանց, ըստ այնմ
* Մտ. * յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն, յարքայու-
13. 43. թեան երկնից: Աստ տեսանի բազմեալ զարմանալին և լու-
քանչելին Եզեկիէլի, գեղգեղեալ գոհաբանութիւ, քառա-
կերպին դասուց, ութաթևեանն հրեղինաց, ուր էակս
մարգարէին որպէս, զաթոռն չորեք կերպեան. զԱ՛ծն
անբաւել, և ըստեղծիչն ա՛մ էակի. և գոյի, որք անդադար
օրհնութիւ, և անհանգիստ բարբառով, եղանակէին 'ի վե՛ր
* Եզկ. յանմահական խորհրդոյս թէ * օրհնեալ են փառք տ՛ն, 'ի
1. տեղւոջէ իւրմէ: Որդ՛ Ա՛ծն յամի, ոչ տեղի ունի, և ոչ
տեղեաւ հունաւորի, ոչ ընդ վայր ինչ պարփակի, ոչ սահ-
մանաւ պարագրի, և ոչ ուրուք երբէք ըմբռնի. այլ յա՛մ
տեղիս տեսանի ըստ մարգարէականն բարբառոյ. վե՛ր 'ի վայր
յա՛մ եղանակի. յաջ և հայեակ, յա՛մ գոյականի, յառաջ և
յետոյ, ա՛մ էակի, ասա զի՛ արդ գեղգեղէն, սրբազանիցն
կանոնք, թէ օրհնեալ են փառք տ՛ն, 'ի տեղւոջէ իւրմէ:
Նոյ զայս խորհրդաբար վերածի, առ Ա՛ծայինս խորհուրդ-
ուր բազմեալ կայ ակն բազմագունի, մարմնոյ և արեանն
Տ՛ռունի, որ 'ի բազմաց ժողովեալ տեսանի, Ա՛ծութենէ
'ի տարերց քառից, յորմէ մարմին բաղադրի, և 'ի յերրա-
կաց, յորոց հոգին բանական տեսանի: Նոյ պէս յԱ՛ծու-
թենէ

թենէ, և 'ի կատարեալ մարդկութենէ. Քս̃ սա բաշ-
խեալ և անեղի առեալ անտանի. և յորժամ այսպիսի անդա-
ւորեալ յանհասանելին անձանեն, աղաղակեն բարձրագոչ
ձայնիւ, որչափ ուրեմն փառք տն̃ 'ի անեղծէ իւրմէ', որ ան-
պարունակելէ բանն Ած, և միաւորեալ ընդ հացիս և գին-
ւոյս, և անեղի առեալ հանդչի 'ի խորհուրդս յանմահական.
և անսահմանաւորեալ Քս̃ հացիւս և գինւոյս, Ածային,
զի յայնժամ ժամու անձնեալ անձն, Նշանակէր մարմնոյ և ար-
եան տն̃: Օի որ յայնժամ ժամու, անկեալ ծածկիւր բանն,
այժմ մարմնով և արեամբ ծածկի բանն: Օի որ յայնժամ
հոգւով փրկէր, այժմ հոգւովս սրբով. զի մէ հոգին Ածէ
որ կատարէ զԱծային խորհուրդս, և մարէ շնչմամբ իւ-
րով, 'ի մարմին և յարիւն կենարարին, և իւրոյ էակցին', և
ինքեամբ օծանէ, և առնէ կատարեալ Քս̃, զհացն և ըզ
գինին. ով և տրն վկայեաց, զմարգարէութի մարգարէին,
թէ հոգի տն̃ 'ի վր̃ իմ, վն̃ որոյ և օծայ ես, այսու յայտ
առնէ, թէ Ած հոգինէ կատարիչ խորհրդոյս, այսինքն 'ի
միաւորութի Այ, ընդ հացին, և գինւոյն, ով 'ի նախկին
օծումն, որ յԱծութենէ և 'ի մարդկութենէ Քս̃: Այս-
պէս և երկրորդ օծումն, որ 'ի հացէ, և 'ի գինւոյն, և
յԱծութենէ վն̃ զի նոյն օծեալ Քս̃է, Ածային խոր-
հուրդս: Օի որ յայնժամ հուր փայլատակեալ, այժմ հայր
թևարգօղեալ, 'ի վր̃ յանմահական խորհրդոյս: Եւ որ յայն-
ժամ ձևան մարդոյ, 'ի ներքոյ թևոց չորեցունց կենդան-
եացն, և այժմ նոյն ձևան, որ էր բանն Ած, 'ի ներքոյ
խորհրդոյս, որ լինի կենդանի և կենդանարար Ած կատար-
եալ և մարդ կատարեալ:

Թէ որչափ խորհուրդն՝ քառակի կատարի, եւ մինն պակասիցէ՝ ոչ կատարի։

Զի չորեք կերպեան կենդանիքն, և քառակի դէմք կենդանեացն, զքառակի խորհուրդ սրբազանագործութեան նշանակէ յորոց Ս. ճաշան խորհուրդն կատարի։

## Գլուխ ԺԹ։

Ցուցանել նիւթոյ որ ՚ի հացն՝ և ՚ի գինւոյն կատարի։

Նախ պարտ է ՚ի սրբազանագործութեան խորհրդս նիւթ լինել հաց ցորենոյ, և գինի ՚ի խաղողոյ, զի յայլոց նիւթոց ոչ կատարի. որպէս ասաց Տէրն եսեմ՝ որթն, և թէ ոչ ես արբից ՚ի բերոյ որթոյ՝ յայսմհետէ գինւոյ լինի արիւնն Քրիստոսի, որով վէրք մեր ողջացեալք, ըստ այնմ՝ թէ արկ ՚ի վէր ձէթ և գինի. և մարգարէն ասէ, ՚ի պտղոյ ցորենոյ գինւոյ և իւղոյ ասէ հաց հաստատէ զսիրտ մարդոյ, այսինքն ՚ի հացէ ցորենոյ, յորմէ պարտ է պատրաստել զնիւթ մարմնոյն տէրունական, որոյ ճաշակմամբն հաստատի սիրտ մարդոյ. քանզի յորժամ յայնմանէ, յորմէ ճաշակեցին նախնիքն մեր, արգելեալ պտղոյն որ ՚ի դրախտին, ամբոխումն մեծագին առ ընկալաւ մարդկայինս սիրտ, և ոչ մնաց յայնմ՝ հետէ, յանդորրութեան ինչ. այլ տերևով ծածկեցաւ, ՚ի ներքոյ ծառոյն թաքեաւ. և ՚ի ձայնէ Տեառն սարսափմամբ սասանեցաւ. և անիծիւք պատժեցաւ. և [illegible] լուսեղէն պատմուճանէն մերկացաւ. և ՚ի փառաւորենցն, փայլելութենէն տարագրեցաւ. և յերկիր անանոց անկաւ, և նոցունց նմանեցաւ և հաւասարեցաւ. և այսպէս երերեալ և տատանեալ, զեղծեցաւ. մինչև մահուամբ մարմինն ՚ի հող դարձաւ ուստի առաւ, և հոգին էջ ՚ի դժոխս, և ՚ի ներքոյ երկրորդ մահուանն գրաւեցաւ։ Իսկ փայտակին ծառ-[illegible]գոյն աղէտս տեսեալ արարչին, և նա հաստատէ սիրտ մարդ

մարդկային, եա մեզ զհացն երկնային, և զմարմինն իւր կուսածին, զի հաստատեսցի սէրս մարդկային, միացեալ ընդ երկնաւորին, ո՜վ սուրբ Օգոստինոս, արարեր զմեզ վ՟ քո, անհանգիստ սիրտ մեր, մինչև հանգիցէ 'ի քեզ, քանզի ա՟մ ո՟ք այսու հանդերձ յորժամ ճաշակեսցին զան-մահականս զայս հաց, որ յերկնից իջեալ, ըստ այնմ՝ այսէ հացն որ յերկնից իջեալէ, և կեանս տայ աշխարհի: Եւ հացս այս բազմաւ զղձիւ փափաքեաց մեծ մարգարէս ճաշակման, և ոչ է հաս ըղձից իւրոց. վ՟ որոյ յապագայիցն ալերսիւ հրամայէ, ճաշակեցէք զի քաղցր է: Ոչ միայն սա, այլ և բազում մարգարէք, և թագաւորք. քանզի նախնի-ճաշակմամբ մահ, և երկրորդիւ ճաշակմամբս կենդանութի, ըստ այնմ՝ թէ կեանս տայ աշխարհի. առաջ նոյն Ադամայ տարագրութի ա՟մ փառաց, և երկրորդիւս Ադամաւ, ճաշակմամբ, վերըստին ըստացումն լուսեղէն պատմուճանին, ըստ այնմ՝ հանէք զպատմուճանն զառաջին և զգեցուցէք, և տուք մատանին 'ի ձեռս նո՟, և կօշիկն յոտս: Եւ մածուցն դրախտին. ը՟ այնմ՝ առ զմահճս քո և երթ 'ի տուն քո. և զայլս այսպիսիս. զորս թողում բանասիրաց: Առաջնոյն այսմ ճաշակմամբն, տարաժամ սատանայի և բնակարան այսոյ չարաց, ըստ այնմ՝ խեղդէր զնա այս չար 'ի մ՟նէ, և թէ վերացաւ հոգին 'ի սաւուղայ. զի սաւուղ նշանակէր զառաջինն Ադամ, իսկ Դաւիթ զերկրորդն Ադամ, Եկաւ բարձաւ հոգին 'ի մարդկանէ, ըստ այնմ մի մնասցէ հոգի 'ի մարդիկդ, վ՟ լինելոյ դոցա մարմին: Իսկ Դաւիթ որէր օծեալ թագաւոր տանն իսրայելի, որ նշանակէր զօծեալն Ք՟ս՟, որոյ ճաշակմամբն, զառաջին մնեալն հալաւ, և Ա՟ծ բնակեցաւ, ըստ այնմ՝ բաց զբերան քո, և լըցից զդա, և թէ զբերան իմ բացի, և առի զհոգի. և ոչ միայն զհոգի առաք, այլ և Ա՟ծացաք, և որդի Ա՟յ կոչեցաք. և մարմին Ա՟յ եղաք, անդամք և ոսկերք, և այսպիսեօք հաստատեցաւ սիրտ մեր, ո՜վ սուրբ հայրն հաստատեալ զսիրտ մե՛ր քան զի ընութեամբ, որ ինչ և իցէ յիրաց,

յոր

յորժամ շարժիցի 'ի անդունդս խորին, անհաստատ է, մինչև դարձցի 'ի ամենայն հուր, և 'ի բոլորն, ոչ քան ծանր 'ի բոր-ձուն, նոյնպէս և ջուր, և օդ բնութեամբ անխառն տարերա-յատակի ծոցոյ, և այլ սոյնպիսիք, անհաստատ և անհաս-տատ մնան: Նոյնպէս և մարդկային ազգ, յորժամ շար-ժեալ եղև 'ի անդունդս խորին անհաստատէր, երերեալ և տատանեալ, յաղագս որոյ բազմաբուռն ըղձիւ, անընդհատ հառա-չէին, վասն որոյ էին, և հանգչէին 'ի անդունդս խորում, յաղագս որոյ առեալ զհայր զայս կենաց, զի հաւատք յօժարանս, ունին անկարծ, և միաւորեցուք ընդ բոլորին մերոյ, և նա-խաշաւղաւորին, յորմէ առաջնորդեցաւ, ոչ առաջին որ ունէ զմարմին իմ, և ընդ էզ զոգին իմ յիս բնակեցի: Նոյնպէս անդի և օթևան մի, յորս գտանէր մեզ հանգչել, և հաս-տատել ոտից. վասն այսորիկ սաստ ձանձրացեալք զհայս զայս կենաց, զի սաստ հաստատուն ոտից մարդկան:

Որ ջուր 'ի կեր [illegible], այլ գինի [illegible] 'ի կեր տանուլ:

Նոյնպէս և գինի ուրախ առնէ սիրտ: Օի բնութիւն և այս են. զի որք ըմպեն, ուրախ լինին բերկրին, և զսուգ ձանձն. բառնի տրտմութիւն, առաքինի սիրութիւն. մո-ռանայ զցաւս. զի այսորիկ իմքն ըմբռնեցին զմարդկայ-նոյ բնութիւն, ձանձրանալքն Նոյեմի, 'ի պտղոյն այգւոյն, ոչ միայն որ առաջն, այլ զկնի 'ի ցաւս, այլ սիրտ տրտմութիւն, յոյնից մինչև ցզուխ չեք առողջութիւն, և ... առայ ձանապարհորդեայն, որ անկաւ 'ի ձեռս աւազակ... որք մերկացուցին, և վէրս 'ի վերայ եդին թողին կիսամահ գնացին: Իսկ յորժամ սամարացին Քս. ընդ նոյն ճանապա... հորդէր, եհաս զորովեցին, յոյնպիսի վտանգս, մատու... ցեալ պատեաց զվէրս նր., արկեալ 'ի վր ձէթ և գին... Ս. Թէ ընդէր վս ինչեան սամարացի առէ, թէպէտ Հրե... այքն առէին, յաղագս չարութեն սորին խորհրդոց, բարերա... րն, այսպէս մարդկային բնութիւն, յանդգամն ընտեղծ... մանն, ըստ պատկերի Այ արարաւ, և եդաւ 'ի դրախտ...

վայ

վախճան է բժշկութեան, որ անկեալն յերկրէ մ. և յանուանէ Տեառն պտուղն ճաշակելով, այսինքն կատարելութեան, գիտաւորք եղեն. և անկան ի կատարելութենէ, ի ձեռն առաքինեաց, որ մարդկայինս ազգ, ի ձեռն ճաշակմանն Ադամայ, որ եղ ի խոտորութենէն, և եկն յաշխարհս, որ խրատէր, յԱստ-ուածայինն, ի սատանայի, և անկան ի դիւապաշտութիւն, և Աստուածամօրն, սատանայցին հնչեցան, և դիւաշուքք անասնեցան: Եւ բանն Ած, եկն յաշխարհս յայս, և էառ զսա ի մարմին, և կատարեալ մարդկութիւն, վասն որոյ և այսու անուամբ կատարեալ մարդկութիւն իւր յառաջացու-ցանէ: Զի որպէս Ադամ յանկանելն յերկրէս անասնոց նմա-նեցաւ, յառաջն թէ հաստատեցաւ անասնոց անբանից, և նմանեցաւ նոցա. և որպէս Աստուածայինն յերկնից ի սանդա-րամետս, սատանայցի անասնեցան, զի նոյն հաստատեցան, և նմանեցան, այսպէս և բանն Ած իջանէ յերկնէ, և յառ-նուլ մարմին յերկրայնոց, երկրային անասնեցաւ, մարդ, և որդի մարդոյ, այնպէս և սատանայի: Թէպէտ սատանա-ցի զինքն անասնեաց, որ նշանակէր զերկիրս, յորմէ առ զմարմինն, այլ ոչ դիւահար, որ անուանի ազգն հրէից, բար-բառէին: Եւ սատանայացն եկեալ ընդ նոյն ճանապարհա-ի նոյն անդր. այսինքն մարդկային բնութիւն եսես զԱդամ անկեալ ի ձեռս աւազակաց, կողոպտեալ, խոցոտեալ, և վիրաւորեալ, ի ձեռն ճաշակմանն, մատուցեալ պատեաց զվէրս նր, արկեալ ի վր գինի, զի զխարոխ մեղացն լու-ացէ. զսուգ, և զարատաւորութիւն փարատեսցէ, և ուրա-խութբ և զուարճութբ բերկրեցուսցէ: Եւ վն այսորիկ ասաց, գինի ուրախ առնէ. և ձէթն նովին նիւթով զորինն իւր բաշխեաց ի փրկութի աշխարհի. քանզի բնութիւն նո-րին, որ զսառուցեալն ջերմացուցանէ, և մեք որ պաղեալ սառուցեալ էաք ի սէրն Ածոյին, ամենայն ջերմանամք, ի սէրն նորին, ըստ այնմ՝ ջեռաւ սիրտ իմ ի փորի իմում, և ի խորհուրդս իմ վառեցաւ հուր: Եւ այսու խորհրդով մատուցաւ մարգարէիցն զկայծակն ունելեօք, այսինքն ար-

իւնն

իւնն և բանն մարմնով. Նոյնպէս և Եզեկիէլի, զբաժակն Օոլի թէպէտ և հրով երևեցաւ 'ի սմնա՛յ; այլ ոչ վառեցան զի տեսակն ոչ միանայ, ընդ մարմնոյ, և արեան, այլ ըզ նմանութիւն առեալ, միջնորդութեամբ օդոյն, և փայլփայլկի թօղա՛ւ: Բայց կերակուրն, և ճաշակեալն միանայ ընդ մարմնոյ, և ընդ արեանն, մահացուցիչն մահացուցանէ, որպէս Ադամայն և Եւային, նոյնպէս և այլ մահաբերիքն, և կեցուցիչն կեցուցանէ, որպէս այս ճաշակումս, որպէս ասացն որ ուտէ յայսմանէ կեցցէ յաւիտեան, քանզի զինքն տեսեալ լինէր պտուղն 'ի դրախտին, ոչ ինչ վնասէր, նոյնպէս և մահաբերք: Նոյնպէս որքան տեսեալ լինէր հացըն Աստուծոյն, և լսեալ ոչ ինչ բարի ցուցանէ՛ր, թէպէտ և առժամանակ մի. բայց որ ճաշակեալն եղև, և այնուհետև ոչ ևս մեռանի, և ոչ պակասի. որպէս և ասացաւ այդ մերձեցաւ 'ի շրթունս քո, և հանգէ զանօրէնութիւնս քո, այլ մի ևս մեղանչիցես. Նոյնպէս և Տէրն թէպէտ հուր Աստուածութեան էարկ յերկիր. ըստ այնմ՝ Հուր եկի արկանել յերկիր, այլ սակս օգտակարի, և ջերմացոյց. զի բազումք յաշակերտացն ասէ չոգան յետս, և այլ ոչ ևս շրջէին ընդ նմա, այլ յորժամ՝ ջերմացուցիչս զայս՛, ասացին պատրաստեմք ընդ քեզ 'ի բանդ և 'ի մահ. որպէս և գործով ցուցին. ըստ պնդմամբ, նահատակութեամբ, ճըգնաւորական հանդիսիւ. և կատարեալ բարեպաշտութեամբ. քանզի ջերմացուցիչ, Աստուածային խորհուրդս միաւորեցեանս ճաշակմամբն: Եւ յաղագս այնորիկ ասաց ճաշակեցէք զի քաղցր է. և զի ջերմէ բնութեամբ, և ջերմացուցանէ, մաղձն արտահանէ, կեանս մուծանէ, ըստ այնմ՝ թէ կեանս տայ աշխարհի, և թէ ճաշակողն կեցցէ, և թէ բանս զոր ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի է և կեանք՛, այսինքն զճանաչումն և զճաշակումն, մարմնոյ և արեան: Դարձեալ գինին աղքատաց զսատակայանս բանից սատակելոցն, յապահովութեան շնորհէ, ցաւագնեցելոցն մխիթարութիւն շնորհէ, և վիրացն լուացումն, զորդանց եռացման սատակումն, և այլոցն, որպէս բանաւորացդ քաջայայտ է. և վասն այսորիկ Տէրն զա

եա

ետ նիւթ պատուական արեանն իւրոյ, զի զամենեսեան ըզճաշակողսն, ջերմացուսցէ 'ի սէր Աստուածութեան իւրոյ: Որ օրինակ, յորժամ Աբրահամ կոտորեաց զթշնամիսն, և դարձաւ. զի Աբրահամ նշանակէր զնայելի Աստուածային քրիստոնեայսն. և մեղքն և յանցանքն, և անօրէնութիւն զթըշնամիս մեր. յորժամ նուաճեցուցանելով զմեզ ըսպանանեմք. յայնժամ քահանայապետն մեր, որ մեր Քրիստոս, մատուցանէ մեզ զկենդանարար մարմին, և զարիւնն իւր, ընծայ յաղթութեան մերոյ. ով արարն Մելքիսեդէկ, յորժամ դարձաւ 'ի կոտորածէն, և 'ի յաղթութենէ Աբրահամու; որոյ ուտելն, զխորհրդական հացն, և 'ի յըմպելն զջերմացուցիչ գինին, օրինակ արեանն Քրիստոսի, այնքան ջեռաւ 'ի սէրն Աստուածային, և իւրոյ արարչին. մինչ զի հրամանաւ Աստուծոյ պատարագել կամեցաւ զորդին: Նոյնպէս և Տէրն, օրինակի ճշմարտութիւն, ետ մեզ կերակուր և ըմպելի, զի միաւորեսցի ընդ գոյացութեան մարմնոյ և արեան մերոյ, զի չընեսցուք հաւատով, և հանիցուք պատարագ Աստուծոյ, զամ՛ զսիրելի և զպանծալի որդին մեր, 'ի պատարագ Աստուծոյ, այսինքն զամ՛ զցանկութիւս և զանձինս մեր, և այնքան փառեսցուք 'ի սէրն Նորա, որ ոչինչ խնայեսցուք 'ի հրամայացելոյն Նորա: Եւ վասն այսոյ պատճառաց զնիւթ մարմնոյ և արեան իւրոյ, զգինի, և զհաց ետ Տէրն. և մեզ զնոյնս հեռաւորաց Նորին սպասէ կատարել. հաց ցորենոյ, և զգինին խաղողոյ. զոր օրինակ, և 'ի Հինումն, զօրինակ ճշմարտութեան կատարէին, 'ի Մելքիսեդէկ քահանայապետէ մինչև 'ի Քրիստոս, որ ճշմարտութիւն էր, և Քրիստոս ևս ճշմարտութիւն նախաւանդեաց, բայց են ոմանք սրբազան անդամք Քրիստոսի, որք ջուր ևս 'ի կիր առնուն 'ի նիւթ յանմահական խորհրդոյս. այլ ըստ համեմատութեան օրինակին, և ճշմարտութեան ոչ ուղղակի, նոյնպէս և ըստ բնականին: Զի բնութիւն ուսանիմք հացն նիւթ մարմնոյն գոլ, գինին նիւթ արեանն Քրիստոսի [...] Իսկ ջուրն որոյ, ուրեմն աւելորդ է: Իսկ ըստ օրին[...] 'ի Հինումն մատուցանէր, նոյնպէս և գինի առ[...]

մելքիսեդեկ, գինի մատոյց, և ջուր ոչ երբեք՝ և օրէնքն ուր զգինին յիշեն, և ջուր ոչ յուշ առնեն, և ըստ մարգարէիցն, նոյնպէս և զգինին յուշ առնեն, և զայն անապակ, ըստ սաղմոսին, բաժակ քո անապակ արբեցուցց զիս. և թէ բաժակ 'ի ձեռին Տն գինի լի անապակ արկեալ. և Տրն եւս զանապականութիւն յայտ առնելով ասէ, ոչ եւս յաւելից արբել 'ի բերոյ որթոյ, յաղագս այսորիկ; թէ ըստ բնականին, և թէ ըստ օրինակին, և թէ ըստ վկայութեն, և թէ ըստ կատարման ճշմարտութեն, սրբազան և նազելի անդամք Քի, զերկակի սեղանն 'ի կիր առնուն, 'ի կատարումն յանմահական խորհրդոյս, զհացն ցորենոյ, և զգինին խաղողոյ. այս էր մինն 'ի քառից, որ նիւթ էր յանմահական խորհրդոյս:

---

## Գլուխ Ի:

### Յաղագս զի պարտէ մատուցանողն քահանայ լինել:

Երկրորդ զի մատուցանողն պարտէ լինել քահանայ. որպէս Աբրահամ, ոչ այլոք մատուց զնծայն, այլ քահանայապետն մելքիսեդեկ. քանզի քահանայն է միջնորդ Այ և մարդկան. և ունի իշխանութիւն 'ի հոգւոյն, 'ի կապել և 'ի միաւորել, և միացուցանել զբանն հօր, ընդ հացին, և ընդ գինւոյն, և առնել Քս կատարեալ, որպէս ասաց ինքն ճշմարտութիւն, զոր միանգամ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս: Արդ՝ այնքան միացուցանէ և կապէ ընդ միմեանս բանն քահանային, իշխանութեն Ածային զԱծ Բն հացին և ընդ գինւոյն, մինչ զի թէ և յանդգնագոյն եւս իցէ յասելս, Ած իւրով անհուն զօրութեամբ ոչ կարասցէ լուծանել, զի թէ կարելի իցէ միաւորութիւն Քի, որ յԱծ-[illegible]ւէ, 'ի մարմնոյ և 'ի հոգւոյ, որ միաւորեալ և միա-[illegible]. և սա եւս լուծցի. ապա թէ այն անկարելի, և

և այս սոսկալի խորհուրդ , երկնաւորի անկարելի : Եւ նոյնս նոյն Քս որ յերկինս նստեալ է ընդ աջմէ հօր . զի սա է եղիցի կատարեալ յերկինս , զի այնքան կատարեալ տեսանի , անմահական խորհուրդս յերկինս , ընդ Ածութեան . մինչ զի ոչ ինչ միջոց ներքուստ , յԱծ , ՚ի հացս և ՚ի գինիս , այլ որ կամիցի զԱծ տեսանել , զսոսկալի , և զահաւոր խորհուրդս պարտ է տեսանել . և ՚ի խորհուրդս զԱծ : Այսքան է իշխանութիւն քահանային , որ ինքն յերկրի զարարողութիւն կատարելով այսինքն միաւորելով , և կապակցելով , զԱծ ընդ հացին , և ընդ գինւոյն , նոյնն կապակցեալ լինի յերկինս , որ ասացն անշուշտ բան եղիցի կապեալ յերկինս , այսինքն ընդ ամենայն երրորդութեան . զի բարւոք ասաց կապեալ յերկինս , և ոչ միաւորեալ յերկինս , զի միաւորութիւն միայն բանինն է , իսկ կապակցութիւն երրորդութեան , զոր աստ միաւորէ քահանայն , զարտաքին խորհուրդս , ընդ բանին Այ և կապակցէ , նոյնն կապակցի յերկինս ընդ երրորդութեան : Զի ով ՚ի Քսի տեսանիւր երրորդութիւն , բայց ՚ի մի անձն զմիաւորութիւն . այսպէս և ՚ի խորհուրդս Ածայինս , տեսանի երրորդութիւն , և միաւորութիւն ընդ հացիս և ընդ գինւոյս , միայն զմի անձն , ոչ իւրաքանչիւրն , այլ միայն զբանին : Զի ով յառաջին միաւորութիւն , հապոյն օրինօք , նոյնպէս և այս հոգւոյն օրինօք . ով աստ փչեաց ՚ի նա , և ասէ առէք հոգին սբ , և այսու հոգւով կատարէ խորհուրդս քահանայն , և իշխանութիւն բանին Այ . որ ՚ի ձեռս քահանայիցն կատարիւր , զնոյն խորհուրդ , որ օրինակէր Ճշմարտութեամբ . այսպէս և ՚ի ճշմարտութեան ՚ի ձեռս քահանայիցն պարտէր կատարել , զնոյն խորհուրդ . Ճշմարիտ անկատարարար , թէպէտ մարմնոյ Աստուածային , և գինի , այլ ոչ մարմին և արիւն Քսի : Եւսհարինանցն , նոյնպէս թէպէտ հաց զառաջաւորեալ դնէին , այլ ոչ էր մարմին Քսի : Զի թէպէտ ՚ի ձեռն զենմանց խոյոց և զուարակաց զմեղս քաւէին , ինքեանց , և ժողովրդոց . այլ ոչ իսկապէս արդարի նոյին այլ երկրորդական

մա

մահուամբ՝, մեռանելին, և ՚ի դժոխս իջանելին, ըստ այնմ ոլէ մարդ, որ կեցցէ, և ոչ տեսցէ զմահ; կամ՝ փրկեսցէ զանձն իւր ՚ի ձեռաց դժոխոց, նոյնպէս և յայլ յիրագործութիւնս իւր այս քահանայագործութիւն, զնոյն կատարելապէս իրագործէ. զհեթանոսս որ որդիք են սատանայի, հօրն երկնաւորի առնէ. զմեղս թողու՝, ըստ այնմ՝ թէ ումեք թողուցուք զմեղս թողեալ լիցի ՚նց. յերկրորդ մահուանէն փրկէ, ՚ի դժոխոց ազատէ. տինա զՔս է հացին և ընդ գինւոյն միացուցանէ, և զճաշակողս Քսիւ միացուցանէ, և զայլս որ թողուլ ամենազանցիցդ՝, խնամատարէ: Յաղագս այսորիկ մեծ է իշխանութիւն նորայս քահանայութեան. սակս որոյ պարտ է մատուցանողն, խորհրդոյս լինել քահանայ, որ ՚ի ՏՆԷ առնիցի իշխանութիւն կատարելոյ զխորհուրդս: Ոչ այնոքիկ զոր ինչ և գործեսցեն, ոչ են Քսի մատոյցք, այլ նորա քահանայութեան Քսի մատուցութեան անուանք, և կոչի. ապա ուրեմն պարտ է մատուցանող խորհրդոյս լինել քահանայ, զի որպէս նիւթ խորհրդոյս ոչ այլ ինչ կարէ լինել, բաց յասացելոցն. այսպէս և կատարողն ոչ այլ ոք կարէ լինել բաց ՚ի քահանայէ, և ՚ի քահանայապետէ:

## Գլուխ ԻԱ:

Յաղագս Իէ ՚ի սրբազնագործութեան պարտ բանն փրկութեան, ասածն որոյ ոչ կարէ՛:

Երրորդ պարտ է լինել բանն տէրունական, զոր ասացն առէք կերէք այս է մարմին իմ, և արբէք ՚ի սմանէ ամէն այս է արիւն իմ՝, զայս յորժամ բարբառի սրբազնագործող հրաշազան քահանայն, յայնժամ բանին երկինք, բանալեօք այսու, և շարժին համանգամայն զօրութիւնք երկնից, և ամ իջանէ բանն Քս յահեղապերց յաթոռս բազմեալ, քերովբէիւք, և սերովբէիւք պարառեալ, քաղ-

ցր

ցրամայնեամբ, երգովք փառաւորեալ զՏէրն բոլոր, և բա-
րեբանեամբ․ սրբասացական ձայնիւ․ և այլ իմն փառաւորու-
թիւ․ և յայնժամ ըստ անշուշտ բանին իւրոյ, թէ երկինք
և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցցեն․ և միանայ ընդ
հացին և ընդ գինւոյն, և լինի կատարեալ մի Տր, մի Քս,
մի Յս, հաց երկնային, և հաց երկրային, որպէս ասացն այ-
սէ հացն որ յերկնից, իջեալ է և կենաց տայ աշխարհի․ և
այնուհետև որ հացէր երկրային, ոչ ևս երկրային: Զի
որպէս մարմինն որ էառ Տէրն, երկրածին էր և քառանիւթեանց,
յերանուհւոյ կուսէ առեալ, և կազմեալ, և յետոյ կարեաց
ընդունակ լեալ, բաց ՚ի մեղաց, և նոյնն ընդ միաւորութի
բանին Այ, ոչ ևս ասի երկրային այլ երկնային: Այս զի
ընդ երկնայնոյն և ընդ Այէ միացեալ, և միաւորեալ Քս
Տն, թէ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից որ-
դին մարդոյ որ էն յերկինս: Այսպէս և յանմահական խոր-
հրդոյս, հացիս և գինւոյս, յետ միաւորութեն ընդ բանին
Այ, յորժամ ասասցէ սրբազնագործողն, ՚ի դիմաց Քի,
առէք կերէք այսէ մարմին իմ, և արբէք ՚ի սմանէ այսէ
արիւն իմ. ոչ ևս մնայ յետ այնորիկ, երկրաւոր հաց, այլ
երկնային, ըստ Տն, այսէ հացն որ յերկնից իջեալ է, և լի-
նի հացն անմահից, անբանից և մարդկան, հաց Այ ըստ
այնմ հացն Այէ, որ իջանէ յերկնից, և կենաց տայ աշ-
խարհի: Զի թէպէտ ՚ի Ցուամն հաց հրեշտակաց կերին մար-
դիկք, բայց ոչ էր զարմանալի, թէպէտ զարմանայր մարդա-
րէն, զի և նորա ըստեղծուածքեն, որպէս և մերս, զի ըստեղ-
ծուածք ըստեղծուածոց հաց կերին: Այլ այսէ զարմանա-
լի, ըսքանչելի, և հիանալի, զի զհաց Այ ուտէ և ճաշա-
կէ․ որպէս և ասացն, հաց Այէ որ իջանէ յերկնից, և կենաց
տայ աշխարհի, և թէ որ ուտէ ՚ի հացէս յայսմանէ կեցցէ
յաւիտեան: Այսպէս ուրեմն, ըստ այսմ յետ միաւորութեն ընդ
բանին, ոչ է մարդկային հաց․ և ոչ է հրեշտակաց հաց, այլ
Այ հաց․ որպէս Այծ է կենդանի և կենդանարար նոյնպէս և
հացս Այ է կենդանի, և կենդանարար․ զի որ ուտէ յայս-

մա

մանէ, և նա կեցցէ սովաւ: Արդ՝ որպէս կեցցէ որդեօք մարդս, թէ իբրև Հրեշտակ. ոչ իբրև զմարդ՝, կամ՝ իբրև Հրեշտակ՝, այլ իբրև Ա̄ծ, քանզի ինքն իսկ սոյն ճշմարտութին, թէ ոչ առաքեաց զիս կենդանին Հայր, և ես կենդանի եմ վ̄ Հօր, և, որ ուտէն զիս, և նա կեցցէ վ̄ իմ՝, աՀա որոշեաց զճաշակողս խորՀրդոյս, թէ ոչ իբրև զմարդ կեցցէ, ոչ Ենովք և Եղիայ, որ կեան կեցութե իբրև զմարդ, նոյնպէս և ՚ի Հրեշտակաց, զեր աշխարՀիկ զինորութեց որոշեալ, զի նոքա ևս կեան, ըստ սաՀմանաց իւրեանց, և ոչ կարեն փոփոխիլ, որպէս և ենն, այլ միայն մարդկայինս բնութի, որք ճաշակեն զանմաՀականս խորՀուրդ: Ով զննելին թէ ոչ կեայ ինքն վ̄ Հօր, մարդ որդեօք, թէ Ա̄ծ. ոչ մարդ այլ Ա̄ծ. զի յամենեցունց դաւանի, զՈ̄ Ա̄ծ. ՚ի Հօրէ, յինքենէ, ոչ սոսոյն, երթայք գործեցէք՝ մի զկորստական կերակուրն, այլ զկերակուրըն, որ մնայ ՚ի կեանսն յաւիտենականս, զոր որդին մարդոյ տացէ ձեզ, քանզի զնա Հայրն կնքեաց Ա̄ծ, և ՚ի Հոգւոյն սրբոյ, որպէս ասաց բերանով աւետարանչին, Ա̄ծ էր բանն: Նաև ՚ի մարգարէից, կոչեսցեն զանուն նր՛ Էմմանուէլ, որ է ընդ մեզ Ա̄ծ. և թէ սա է Ա̄ծ Ա̄ծէր, և թէ Ա̄ծ մեր յայտնապէս եկեսցէ. և թէ Ա̄ծ մեր, ընդ որում՝ ոչ Համարեցի այլ, յետ այսորիկ ՚ի յերկրի երևեցի, և ընդ մարդկան շրջեցի. և թէ ՚ի մերձենալ աւուրն յայտնեցելս, և ՚ի Հասանել ժամանակին երևեցելս: Նաև թէ Ա̄ծ ՚ի թեմանայ եկեսցէ. նոյնպէս և յառաքելոցն ասացաւ. որք յաւետարանին, և ՚ի գիրս իւրեանց վկայեն, ոչ և սոսոյն յայտնապէս ո̄ն Թովմաս, տ̄ր իմ և Ա̄ծ իմ, և պաւղոս այսպիսիս, զոր յաղագս ծննդրութե ոչ յայտնապանեցի: Նա այսպէս ամէն զՈ̄ Ա̄ծ խոստովանեն և վկայեն՝. Համասար Հօր, և Համագոյ ը̄ն Հոգւոյն, և կեայ վ̄ Հօր ՚ի մարդկութին: Ով ոչ նա Ա̄ծ և որդի Ա̄յ կեայ վ̄ Հօր. նոյնպէս և սոքա ճաշակողայն սուր, և նա կեցցէ վ̄ իմ: Արդ ոչ՞ կեցցէ որդեօք, ոչ իբրև զմարդ Համասարեալ անասնոց, ան-

բա

բանից և նմանեալ ՚նց. այլ իբրև Ած, շնորհիւ Լցեալ. ժա-
ռանգ Այ, և ժառանգակից Քի, տուն և տաղաւար ա-
մենասուրբ ՚Հգ Հոգւոյն, նորոգմամբն ՚ի ծնութենէն, նմա-
նեալ Այ. վն այսորիկ պարտ է ՚ի սրբազնագործութիւնս
յայս, զբանն ՚Տրն նորին, որ գոյացութեամբ զ հացն և զ
գինին, մարմին Ածային. քանզի ՚ի բարբառ քահանային,
զբանս Ածային, այնպէս փոխարկեալ լինի, հացն և գի-
նին, ՚ի մարմին և յարիւն Ածային, մինչ զի եւ մնայ գո-
յացուն նմին. այլ փոխարկեալ որ ինչ գոյաշաւորէ ՚ի մար-
մին և յարիւն կենդանութեան. քանզի նոյն բանն է, որ յոչ-
ընչէ ինչ էացոյց, որ ասի ՚ի վն սորա, արդ նա որ զնոյն
նոյնէ որ զսա կատարէ, և հրաշագործէ. ո՞պ նմանաւ երկինք
և երկիր, ըստեղծան, էացան, և գոյացան, նոյնպէս սո-
նիւ, հացս և զ գինիս, էանայ և գոյանայ, մարմին, և ար-
իւն փրկական: Ոչ ո՞պ նմանաւ նախ նիւթն ըստեղծաւ, և
ապա ՚ի ներգործութիւն ածաւ, ըստ այնմ՝ խոկմանէ Ած ա-
րար զերկին և զերկիր. արար վն նիւթոյն ասէ, որ նախ
ըստեղծեալ էր, և յայնմանէ ՚ի ներգործութիւն եկն. վն այ-
նորիկ զներգործութիւն յայտ առնելով զ առաջին յիշէ, ո՞պ
և յետագայն ասէ, շրջէր ՚ի վն ջրոց, այսինքն ՚ի վն
նիւթոյն որ անպատրաստ էր, և ոչ եկեալ ՚ի ներգործու-
թիւն, այլ յորժամ ասացն երկինք և երկիր յայնժամ զներ-
գործութիւն, և զ տեսակաւորութիւն գոյացոյց, երկնից և
երկրի: Այսպէս նոյն բանն, որ զնիւթ հացին և գինւոյն
ըստեղծ, այժմ՝ յայնմ՝ նիւթոյ, ՚ի տեսակաւորութիւն, և ՚ի
ներգործութիւն մարմնոյ և արեան իւրոյ ածէ, ասելով այս է
մարմին իմ՝, և այս է արիւն իմ՝, ըստ այնմ՝ թէ ամ ինչ նո-
րաւ եղև. զի առանց նր ոչինչ ներգործի, ըստեղծանի, և
առնի, ըստ այնմ՝ թէ առանց իմ՝ ոչինչ կարէք առնել. այ-
սինքն, զ հացն որ նիւթ էառ ձեզ մարմնոյ իմոյ, և զ գի-
նին արեան իմոյ, ոչ կարէ լինել մարմին և արիւն առանց
իմ, վն այսորիկ եդաւ ՚ի յԱծ աշխատագործութիւնս, զբանն
Տրունական, զի ՚ի ներգործութիւն մարմնոյ և արեան ի-

րոյ

րոյ ածցէ։ Որդ՝ ոմ բանիւ Տն երկինք հաստատեցան. և այժմ խորհուրդս այս, նովին բանիւ հաստատի, մարմին և արեան կենարարին. և յետ այնորիկ ասէ, և հոգւով բերանոյ նր, ամ զօրութիւնք նց կատարի։ Եւ վա այնորիկ ասէ քահանայն, զ կատարումն հոգւոյն սրբոյ, զի զօրութիւնքն կատարեսցին։ Օր ով անձինքն յատկացեալ քեն, ամենայն երրորդութեան, նոյնպէս և զգործսն յատկացուցանին, Ածային գիրք, որպ և յայս ասէ սաղմն, ողորմութբ Տն լի եղև երկիր, և բանիւ Տն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նր, ամ զօրութիւնք նց։ Օր ով յարաբերութեամբ անձնաւորեալ սրբոյ երրորդութեան, զգործսն յատկացուցանեն ամ աշխնքն. զի և անձինքն յատկացեն, այսպէս և յայս սոսկալի խորհուրդս, զներգործութի երրորդական անձանցն յատկացուցանեն Ածաբանքն եկեղեցւոյ։ Նախ ողորմութիւն Հօր, մինչև առէք կերէքն, որ զներգործութիւն յուշ առնեն։ Եւ յաւելն առէք կերէք, այսէ մարմին իմ, և այսէ արիւն իմ; զներգործութի բանին։ Իսկ յաւելն որով զհայս օրհնեալ զներգործուի հոգւոյն սրբոյ զի երևեցի յիրագործութիս յայս զներգործութի ամենայն երրորդութեան. որ անբաժանաբար, համակամաբր, և համազօրութենաբար ՚ի կատարումն ածի խորհուրդս այս. և ներգործի ՚ի մարմին և յարիւն Տրունական, քանզի այնքան համաբնութիւ յատկացեալ յանձինսն. յանձնորջնեալ ամենայն երրորդութեան, մինչ զի միոյն գործ, թարց միւսոյն ոչ լինի. ով յայտ ՚ի մարմնացելոյ սնորհնութին զի հայր հաճեցաւ, հոգին հանգեաւ, և բանն մարմնացաւ, նոյնպէս և ասէ սնունդքն, համաբնութիբ, և համահաւանութբ, և համակամութիւ երրորդութեան, կատարի խորհուրդս. զարմանահրաշական, և Ածայնական։

## ԳԼՈՒԽ ԻԲ.

### Յաղագս թէ սրբազանագործութեան դիտաւորութիւն հարկէ, առանց որոյ կատարի չիրագործութիւն

Չորրորդ՝ պարտ է լինել խորհրդոյս այս սոսկալի, և դիտաւորութիւն մատուցողին. զի թէ այլոյ իցէ. ոչ կատարի սրբազնագործութիւն խորհրդոյս. քանզի յայտ է, զի ամ՝ արուեստաւորք, որք կամիցին զնիւթ ինչ, 'ի ներգործութիւն ածել, եթէ դիտաւորութիւնն ոչ իցէ կատարեալ 'ի կատարումն գործոյն, անհնարին է, եթէ զկատարումն տացէ, յորինելի և անորինելի. այսպէս և յարարողութ՟ սոսկալի խորհրդոյս: Որ օրինակ ումէ գործ, յորժամ կամիցի մատանի յօրինել, եթէ դիտաւորութիւն առ այն ոչ իցէ հաստատեալ, և կերպարան իրագործութեան, 'ի միտս կերպացեալ, փաղփաղանի իւր ապականի, և 'ի ներգործութիւ ոչ հասանի: Այսպէս և մատուցանող խորհրդոյս, եթէ դիտաւորութիւնն ոչ իցէ հաստատեալ յիրագործութիւն զօրս կատարէ, ոչ երբէք առնու զկատարումն: Դարձեալ ամ՝ տանն առնող, եթէ ոչ ունիցի դիտաւորութիւն կատարեալ յիրագործութիւս նորուն, և զամ՝ զձևս շինութեան, հաստատեալ 'ի միտս, ոչ կարէ 'ի կատարումն ածել ըզ տունն: Այսպէս և սրբազնագործող քահանայն, պարտէ յանձն, զմիտս և զդիտաւորութիւն կատարեալ ունել առ 'ի կատարումն. յանմահական խորհրդոյն, որ շինէ զտուն և զտաճար, 'ի բնակութիւն, և 'ի միաւորութիւն, բանին Ա̃յ. որով բանն մարմին լինի, և բնակի 'ի մեզ: Դարձեալ ամ՝ պատերազմող յորժամ կամիցի զպատերազմ ումեմն, նկարել ընդ նոյնութեան ամ՝ և է, պատրաստի յամ՝ զօրութենէ, ահօք, մարօք, խորհրդովք, և յամենայն ներքին ճիգեկի զպատրանօք, և մանաւանդ՝, ամ՝ դիտաւորութեամբ, 'ի նախագաղափարն հայել, որոյ հանդէպ կայցեալ կայ, զի զնոյնու-

թիւն

թեան մտածեալ ածանցեացէ, ապա թէ այլ ընդ այլ շրջե-
ցուցէ զամէն, յայս և յայն կապեսցէ զմիտսն, և զգիտա-
ւորութիւն, և զկերպարանս սմա և նմա, 'ի տրամախոհու-
թեան և յիշողութեան հաստատեսցէ, անձնարէ եթէ զձեռ-
նարկեալն գործ նոյնպէս 'ի կատարումն ածցէ, զի անպար-
ժանս ինչ գիտեմ զարուեստս զայս, որ յորժամ կամիցեմ
զպատկեր ինչ նկարել, եթէ դոյզն ինչ գիտութիւն
որոյ հաստատեալէ, աստ և անդ անկցի փայլփլակի զնոյ-
նութի նախադաղափարին յեղաշրջի, և ոչ կատարի զիրագոր-
ծութեան: Ա̃ որոյ յորժամ կամիցիմ. զգործս զայս կա-
տարել, այնպէս առանձնանամ, մինչ զի և զշունչս իմ,
յիս ամփոփեմ, և ապա կատարելապէս 'ի կատարումն զիրն
ածել: Նոյնպէս և կատարիչ անմահական խորհրդոյս, պար-
տէ յամ զօրութենէ, զգիտութեան իւր հաստատել,
և կատարել ունել, մտախոհ լինել, և իմանալ, թէ զինչ
գործէ. և միշտ հայել 'ի նախադաղափարն, որ նստեալ կայ
ընդդէմ հօրն, և ամ̃ բաղմութի զօրացն հրեշտակաց մեծա-
զարդարմանք, և պակուցեալ երկիւղիւ, և ահիւ սար-
սափմամբ կան առաջի նր̃ որոյ կերպարանն կամի յօրինել,
և զնոյն Յ̃Ս Ք̃Ս և տր̃ր յամի իրագործել. ոչ այլ և այլ
այլ զնոյն որ կայ ընդդէմ հօր. ամ̃ ասացաւ որ հրեշտակայն
օրհնաբանի, և զսա օրհնաբանեսցեն, գովեսցեն, և բարե-
բանեսցեն: Ապա թէ այլ իցէ յայնմանէ, ոչ ապաքէն պար-
սաւեսցի. ամ̃ պատկերագիրն, որ խառնագեալ իցէ, զնոյ-
նութի նմանութեան գործեսցէ և ոչ իցէ մասուցեալն նոյն,
խոկապէս պարսաւիցի յամենեցունց, 'ի թագաւորէն զլխո-
վին. և 'ի պաշտօնէիցն: Նոյնպէս պարտէ և քահանային,
այնպէս սարսափմամբ զգիտութեան իւր կապել յերա-
գործութեան յայն, մինչ զի ոչինչ յեղաշրջեսցի, առնելայն
զսա կատարեալ տր̃, և կատարեալ Ք̃Ս, և կատարեալ միջ-
նորդ Նա] և մարդկան. և նոյնն նստեալ կայ ընդդէմ հօր,
և յանմահկիցն օրհնաբանի: Պարծեալ ամ̃ արամաբան որէ
յորժամ հարցաքանի յայլմէ, թէ աշխարհս եղեալէ; եթէ,

յա

յախոնականէ, եթէ ասասցէ այո, և կամ ոչ, ծաղր լինի յամենեցունց, և պարսաւելի, այլ պարտ միայն առնել ըզպատասխանին՝, այնոյն, և կամ՝ զ'ոչն, եթէ յախոնականին, և եթէ լինելուն. եթէ յախոնական ասասցէ; և փեղելուին տարաբարձցէ, յայնժամ՝ պարտ տրամաբանին մեծագոյն զգուշութի, դիտաւորութի առ 'ի կազմել զնախադասութի, որով կարասցէ առնել զպատասխանին, և հաստատել զխելն դիտաւորութի, նոյնպէս և դիտաւորութի նախադասութեն զի լինիցի կազմեալ յերրակայ պարզաւութեց. յորոց լիցի կատարեալ շարամանու, և այն լիցի նախադասութի, յորոց լիցի յերրակացութի, որով հաստատի բանն, և կատարի դիտաւորութին, և մերժասցի բանն, առ 'ի յընդունել բողացն: Որ եթէ ոչ էր կատարեալ թէ ենթաւորութին, կատարել 'ի կազմու, նախադասութեն, այլ ընդ այլ իցէ. անճարինէ, եթէ խոկադոյն նախադասութի կազմիցի, և պատասխանի լիցի առարկողին և խնդրողին զպատասխանին: Այս ուրեմն պարտէ; դիտաւորութի երրակաց պարզաւորութեցն ունել. Նախ զենթակայն որէ աշխարհս, երկրորդ բաղադրելոյն. որ փոփոխականութեն, Երրորդ է. որէ միջնորդ ենթակայն, և բաղադրելոյն, և ասասցէ յերակաց պարզաւուեցս կազմեալ նախադասութիս թէ աշխարհս փոփոխականէ, նա՛ փոփոխական եղեալէ. ապա ուրեմն աշխարհս եղեալէ, աչս խնկագոյն և բաց կանոնի հաւաքաբնու. և բաց կարգի տրամաբանու պատասխանի, յորժամ՝ զմիտն. և զխորհուրդն կայեցաւ, 'ի դիտաւորու նախադասութեցն: Ապա եթէ խաւուն այլ ընդ այլ լիցի, նոյնպէս զմիտս և զդիտաւորութիս, ոչ ապաքէն սխալի, և զնախադասութիս ոչ կարասցէ շինել, և անօրինել, որ է առաջի կայ գործ, բանականութեն իւրոյ: Այսպէս և մատուցանող անմահական խորհրդոյս, ոչ է պարտ այլ Է այլ յեղաշրջել զմիտս, և զխորհուրդս, զի մի և դիտաւորութիս, և սխալումն լիցի Ածայնոյն խորհուրդն. այլ պարտ զամ զգուշութ

զա

զբաղել զմիտս եւ զխորհուրդ'ս, զի զդիտաւորութիւն կա-տարիցի. զի շարամանութիւն Քսի, որ ի պարզութեանց ժողովեալ անօրինիցի: Նախ ի խոկումն առաջի միաւորութեանց. յորոց Քս եւս, վասն զի Քս յերրակաց պարզութեանց եղեն ի լրումն: Առաջին պարզութիւն, Ածութիւն: Երկրորդ մարմինն: Երրորդ հոգին բանական, յորոց շարամանութեանց, եղեւ Քս, եւ ի սոցունց մինն ըստեղծող, մինն արարած, եւ մինն ըստեղծուած: Նոյնպէս խոկասցի եւ ի խորհուրդս յայս սոսկալի, յերից պարզութեանց, շարամանութիւն, որով լինի Քս կատարեալ, յԱծութենէ, ի հացէ ցորենոյ, եւ ի գինւոյ խաղողոյ: Արդ ով յառաջ-նոյն, եթէ լինիւր պակաս մինն, ոչ կարէր լինել Քս, նոյնպէս եւ յանմահական խորհրդոյս. եթէ մինն իցէ պակաս յերրակացն, ոչ կատարի, եւ ոչ լինի կատարեալ Քս: Եւ յորժամ սոքա երրեակք'ս, շարայարին ընդ միմեանս եւ միանան, յայնժամ լինի կատարեալ խորհուրդն Ածային, եւ նոյն Քս որ ի հօրէ ծնեալ: Եւ եթէ ոչ ունիցի այսպիսի դիտաւորութիւն, մատուցեալն ոչ կատարի. յաղագս որոյ բազում զգուշութիւ պիտոյ մատուցանողին, զի մի այլ ինչ այլ արկանիցէ զմիտ'ն, եւ զդիտաւորութիւն: Զի ով ի վր չորեք կերպեան կենդանեացն հանդիսի ամենօրհնեալ Սբ երրորդութիւն, այսպէս եւ ի քառակի յանիցելոյս. եւ եթէ մինն պակաս լիցի ի քառիցս աւիցելոց, խորհուրդն ոչ կատարի: Զի ով քառակերպեան էին կենդանիքն, յորս նստէր բանն Ած, նոյնպէս եւ ի վերայ չորեցուն'ցս, բազմի բանն Ած. եւ քառակուսի. խաչիւն, իջանէ ի խորհուրդս, եւ միաւորի ընդ սմա, զի խաչն է աթոռ Տէրունեան, եւ չորեք կերպեանքն, որքապանն աւետարան, որով կատարի խորհուրդս Ածային: Եւ որպէս չորեքեան մարգարէքն, գրեալ մատեանն, այսպէս նոյն խորհրդովս չորից ժողովրդեանն զբանն Ած մարմնով եւ արեամբն: Զի պատգամքն նշանակեն զբանն Ած, եւ քարտէզ զմարմին'ն, եւ զգինին, յորս միաւորի Ածըն բան,

եւ

և մատուցանի ՚ի բերան ճաշակողացն, որբաշխանական ։ Ա̃ծ անեանն՝ վէմն առանց ձեռին հատեալ, ըստ գուշակելոյն Դանիէլի, մեծացեալ բարձրացեալ, և խորտակեալ զպատկերն, և ինքն զխառնացեալ, և զամենայնս ն̃մ լցուցեալ ։ Ով լեառն նշանակէ զԱ̃ծութիւն ք̃ի այնմ՝ համբարձի զաչս իմ՝ ՚ի լերինս · բազմաւորակի յաղագս երից անձանցն ասէ · ուստի եկեսցէ ինձ օգնութիւն, եզակի, զմի բնութիւն, զմի կամս, և զմի Ա̃ծութիւն բաց երեւոյթ ։ Եւ թէ ընդէր լեառն ասի Ա̃ծութիւն · նախ զբարձրութիւն Ա̃ծութեան անհասութիւն, որ անհասանելի է ՚ի միտս արարածականաց, ըստ այնմ՝ բարձր է տ̃ր, և մեծութեան ն̃ր ոչ գոյ հուն, և բաւ ։ Երկրորդ զի է անշարժ ՚ի չարէ, և ՚ի բանսարկուէն, որ ունի ՚ի վ̃ր վիմի ընակելոց, որ ոչ կարէ սասանել ուժգին, յոր զնոյն, ըստ առակելումն ։ Երրորդ զի հեղեղոյ ոչ ուտանի ։ Չորրորդ ՚ի սաստկութենէ հողմոյ ոչ այլայլի ։ Հինգերորդ ՚ի տեղալոյ ոչ փոփոխի · և յաղագս այսորիկ, և այլ պատճառաց լեառն ասի Ա̃ծ · և հատեալ ՚ի նմանէ ասէ, վէմն առանց ձեռին ։ Վէմն բանն Ա̃ծ որ միանձնոյ երրորդութեան կամաւ հօր, և հաճութեամբ ս̃բ հոգւոյն, էջ յԱ̃ծութենէն ՚ի մարդեղութիւն, և զգեցաւ ըզ ծառայի կերպարանս, որ Ա̃ծ էր կերպարան, ըստ այնմ * Նըկարագիր էութե ն̃ր, որոյ ինքնանմն ոչ ունոյնալ յերրորդութենէ Ա̃ծութիւն · այլ նոյն բանն որ էր ընդ հ̃ր, լծակից ընդ ծնողին իւրոյ, և նոյն էր լրման ՚ի մարմինն է · նոյնն ՚ի յաթոռ փառաց ը̃ հօր, և նոյնն ՚ի յարգանդ կուսին, ընդ մօր · նոյնն անմարմնաբար ընդ հօր, և նոյնն մարմնաւոր ընդ մօր, ըստ այնմ՝ անպատելին երկնի և երկրի ՚ի խանձարուր պատեցաւ, ոչ մեկնելով ՚ի հօրէ ՚ի ս̃բ յայրին բազմեցաւ ։ և թէ և կերպարան և կնիք հօր առեալ վ̃ս մեր, կերպ ՚ի կուսէն · որէն ՚ի յաթոռ փառաց անտես վերնոց ՚ի յայրին իջեանի, և ՚ի մսուր յանբանից բազմեալ ։ Եւ թէ այսօր բանն ՚ի հօրէ, անմեկնելի, և անճառելի խորհրդով, ՚ի ձեռն կուսական յորովայնի, անօրինաբար յերկրի

* Եբր · 1 · 3 ·

կրի երեւեալ: Նոյն այլ բաղուածքն այսպիսիք յԱծայնից, զոր վկայեն նոյն բանն անմեկնելի մնալով, եւ յերկիր եւ մարմնով երեւեալ եւ շրջեալ: Օր օրինակ եւ բանս մեր, 'ի միտս ելեալ եւ 'ի բարբառ թանձրացեալ, եւ գրեալ, եւ 'ի միտս ոչ բաժանեալ, նոյնն որ 'ի բարբառի գրեալ, նոյնն եւ 'ի միտս մեր կացեալ. զի թէպէտ գրեալ, եւ անմարմինն մարմնացեալ, սակայն 'ի միտսն ոչ ունայնացեալ. եւ այս-պէս անհատաբար էջ վէմն բանն, 'ի լեառնէ Աստուածութեան, անմեկնելի, եւ մարմնացաւ յանէներանհեւոյ, կուսէ, եւ լե-առնացեալ եկեց զտիեզերս. խորտակեաց զպատկերն, որ կանգնեալ էր 'ի դաշտին, այսինքն յաշխարհի. եւ ինքնամբ լցեալ զտիեզերս, մատուցմամբ անմահ պատարագաւ:

Ընդդէմ Արիոսի որ զՈրդի հաւատայր ոչ հաւասար:

Այսու ամաչեսցի Արիոս եւ իւրքն նմ՝ որ ասեն զՈրդի ոչ գոլ 'ի բնութենէ Հօր, եւ ոչ համակամ՝, եւ ոչ համաբը-նութի, եւ հաւասար ածութի, եւ արարչագործութի, այլ սար եւ արարած. քանզի յայտնութի մարգարէիս ը բը-նութն նշանակութիք եւ ըստ բանականութե, որոյ ոչք կա-էր հակառակութե վէմն առ այս մակբերել, թէ եւ կարի տգիտագոյն եւս ոք իցէ. եւ անհաւատագոյն: Օհ մրդ կա-րասցէ ուրանալ, թէ վէմն այս որ հատեալ է 'ի լեառնէ, ոչէ ընդ նմն համբնութի: Զանզի թէ ըստ գոյացակա-նին, եւ թէ ըստ յատկականին, եւ օրինակ թէ ըստ պատա-հականին, նոյնէ որ հատեալնէ, եւ ոչ ունի բնաւ ինչ այլ-այլութի, զի կարծրէ, որպ նա, է կ, որպ նա գոյացութիւ որպ նա թարծրէ որպ նա, ծանրէ, որպ նա, անդծագայլելի յօծէ, որպ նա, եւ անլանելի հողմոյ որպ նա, եւ այլով նմա-նութ որպ նա. եւ ոչ իւիք զանազանեալ. բայց սա ոչէ նա. եւ ան-դրադարձապէս. զի սա հատեալ. եւ նա ոչ, սա 'ի նմանէ յառաջ եկեալ, եւ ոչ անդրադարձեալ, Նոյնպէս եւ բանն Աստծ որ 'ի Հօրէ, զի մրդ ոչ իցէ համահաւասար, ը ծնող մարդն, յորմէ ել, եւ համբնութի, որպ ծնեալ որդի որ ծնանի. զի՞ արդ՝ ոչ համանմանութի ընդ ծնողին. զի նա

մարդ

մարդ և սա, նա կենդանի և բանական և սա, նա ծիծաղական և սա, նա երկոտանի և սա. և զի մարդ ոչ համաբնութի ընդ նմա. և հաւասար մարդկութ է նմա, այլ ունի զանազանութի ըստ անձին, զի ոչ է նա, սա, և անդրադարձապէս, նա ծնօղ, և սա ծնեալ. նա հայր, և սա որդի: Այսպէս և բանն Այ, բնութ., Ածութ., արարչագործութ. և հաւասարութ., նոյն է ընդ հօր, և ընդ հոգւոյն, բայց անձնաւորութ. ոչ նոյն. զի հայր ոչ է որդի, և անդրադարձապէս, և ծնօղն ոչ է ծնեալ, և անդրադարձապէս. և զայսոսիկ պարտէր խմաստասիրել Արիոս, և արիոսականքն, և ապա թէ հաւանելի լինէր, բանականութեն և հաւանելի արձանացուցանէր: Մայարիկ գուշակութի մարգարէին, ըստ բնականին յայտնեցաւ, զի մի երբէք որ, երկբայութի ունիցի, զհամաբնութենէ որդւոյ ընդ հօր, և համահաւասարութենէ, և յարարչագործութենէ, և յԱծութենէ այլ նոյն տն որ և է, թէպէտ յանձնաւորութենէ, որ ոչ է սա, նա, և անդրադարձապէս, որ ցուցանէ վիմին, է վիմին լերին, և նոյն վէմ այս, տծն յամի, լեռանացեալ է, և ընդ զմտ՛ աստուածս. Տծութի լեռով և յմտ՛ ռեղիս պատարագեալ, բաշխի 'ի ճաշակօղս, 'ի քաւութի և 'ի թողութն մեղաց, որ 'ի ճաշակմանէ մեղաց նախնեացն, և յանձն խղճման կամաց. գործեցեալ մեղացն: Մ̄ պարիկ ասաց ճաշակեցէք և տեսէք զի քաղցր տր: Եւ այս ևս յանդիմ արիոսի, զի ասէ զտր, որ է արարիչ, և ոչ արարած. զի որ ճաշակէ զտր ասէ ճաշակէ, և ոչ ծառայ, զի տր է ըստեղծօղ, և ծառայ ըստեղծուածն, որպ ասացն զգեստ զծառայի կերպարանս: Այսու յայտէ զգեցօղն Այ. և ըստեղծօղ գոլ, և զգեցեալն ծառայ և ըստեղծուած: Եւ մարգարէն հրամայէ, ոչ ըստեղծուած, այլ ըստեղծօղն ճաշակել. յասելն ճաշակեցէք զտէր:

Որդ եթէ տէր է և ըստեղծօղ ճաշակեալս ապա զի մրդ եղէ արարած, և ոչ համաբնութի ընդ հօր, քանզի միշտ հնչէր յականջս նորա բանն տէրունական, եթէ ես և հայր իմ

մի

մի եմք, և որով է մին, մի իմաստութն, ոչ աչաքէն բնութ,
և էութիւ, կամ պարագայք ամս, բնաւորին հետևէր. որպ
ասացն զանձինքն, վէմ հաստատել ՚ի լեռնէ որ յամի համաբնու-
թեան, վէմն և լեառն, որպ և յառաջն ասացաւ. և կամ
վկայութի մարգարէից, որք հոգւով սրբով խօսեցան, որպ
զմի զոյս ՚ի բազմաց որ ասէ, ճաշակեցէք զտէր. և կամք
տն զոր ասացն, ես և Հայր իմ մի եմք հաւանեցի. այլ
զի խաւարին անմտութե հերձուածողութե կուրացոյց զաչս
նորա, և հետևողացն իւրոց, որպ հրէիցն նախանձուն, և
անհաւատութե որ յամ շաբաթս, ընթերցանութիւն զգիրս
մարգարէիցն, և օրինացն, որք պատմէին և գուշակէին ըզ
գալուստ կենարարին: Այլ մեք ուղղափառքս հաւատամք
զբանն ենթակայացեալ հացին և գինւոյն մինչ զի ճանա-
չողքն, զնոյն անձն բանին, որ միացեալ և միաւորեալէ
ընդ հացին և գինւոյն, և նոյն ինքն Քս էացեալ ճանա-
չեն, զի խնդրոյն լիցի բան մարգարէին, թէ ճաշակեցէք
զտէր, որէ բացերևութի ըստեղծողէ, և ոչ ըստեղծու-
ածոյ, վասնորոյ որպէս սերովբէքն, որպ ՚ի բարձունս
զերէք սրբեանն ՚ի դէմս հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ եր-
գէին, նոյնպէս և աստ, ՚ի դէմս երրակի խորհրդոյս եր-
գեն, զմի Տր ՚ի դէմս բանին Այ, և զմինն ՚ի դէմս մար-
մնոյն, և զմինն ՚ի դէմս արեանն. և զմի տէրն զերրակեցա
միութին, որք միացեալէն անբաժանապէս. այսինքն, Ած
հացն և գինին. և վասնորոյ հրամայեաց մարգարէն, ճա-
շակեցէք և տեսէք զի քաղցրէ տէր:

## Գլուխ ԻԳ.

Թէ հինաւուրց բանն է Ա͞ծ, և որպէս մարդոյ մարմինն՝ միաւորեալ ընդ բանին, եղանի պատարագ. ՚ի վ͞ր սրբոյ սեղանոյն:

Սա տեսանէր զՀինաւուրցն, բազմեալ ՚ի վ͞ր սրբոյ սեղանոյս. և ընդ ամպս եկեալ որդի մարդոյ, և եհաս Հինաւուրցն, և մատուցաւ առաջի նր̅. և նմա տուաւ իշխանութի և պատիւ, և արքայութի, և ամ ազգք և ազինք. և լեզուք նմա ծառայեսցեն. իշխանութի նր̅ իշխանութի յաւիտենական որ ոչ անցանէ, և թագաւորութի նր̅ ոչ եղծանիցի: Որդ՝ Հինաւուրցն է բանն Ա͞ծ, և որդին մարդոյ մարդկութիս, որ եհաս մինչև Հինաւուրցն միաւորմամբ և միաւորութբն, և մատուցաւ առաջի նր̅. վ͞ս զի յորժամ էջ բանն ՚ի յարգանդ ամենօրհնեալ երանուհւոյն, կուսին և համանգամայն, բաներծ և արար կատարեալ մարդ: Եւ նոյն մարդկութին մատուցաւ առաջի նր̅, յորոց միացայ Ա͞ծն բանն, բնութբ ինքեամն. և եղև նոյն Հինաւուրց Ա͞ծըն բան կատարեալ, մարդ կատարեալ, հոգւով, և մտօք, և մարմնով, և մի անձն, և այն Ա͞ծային. և այս կատարեալ, մարդկութեամբ որ ըստեղծաւ և արարաւ յարգանդի երանուհւոյն, տուաւ իշխանութիւն և պատիւ, և արքայութիւն, վասն զի մերկացեալն էր կլ-կեալ, և կոլոպատեալ, ՚ի նախնումն, ՚ի ձեռն զանցմանութեն: Եւ այսպիսի միաւորութբս, յորժամ եկն ՚ի վերնատունն. և նոյն բանն որ ենթակայացեալ էր, Ա͞ծայնոյն և մարդկայնոյն բնութբ, և օծեալ, և Ք͞ս անուանեալ: Եւ նոյն օծեալ Ք͞սն, միացեալ ընդ հացին և գինւոյն, որ եղև կատարեալ մարմին և արիւն, ետ ազգի մարդկան ՚ի կերակուր. զի որպէս մարդկութին այն որ ածաւ միացմամբ, և միաւորութբ առ Հինաւուրցն, և Ա͞ծացաւ, ոչ փոփոխմամբ, այլ միաւորութբ: Նոյնպէս և նոյն մարմին և

և արիւնն եւս ազգի մարդկան, ՚ի կերակուր, զի միմիայն մարդկութիւն այն զոր էառ՛ն, և զգեցաւ, լինիցի միաւորեալ, ընդ Աստուածութեան, այլ և խորհրդաւորին: Ա̃ այսօրիկ ձեր ազգք և ազինք, և լեզուք նման ծառայեն. քանզի ձեր աշխարհ և ազանց, և այլալեզուաց, մատուցանել սրբազան պատարագն ՚ի փրկութիւն, և ամենեքեան նման ծառայեն, ըսպասու մեծաւ և իշխանութիւն այս իշխանութիւն յաւիտենական. քանզի որ յանասնոց մատուցանիւր, ոչ մնայ յաւիտենական, այլ փոփոխակի է անց. և գնաց: Բայց իշխանութիւն այս, որ սմա է, և խմանէ ՚ի խորհուրդս իջանէ է յաւիտենական, և մշտնջենաւոր, որ ոչ անցանէ, և թագաւորութիւն նորա, ոչ եղծանիցի, մինչև գայ երկրորդ գալստեանն հինաւուրս այս, և տայ իրաւունս որբոց բարձրելոյն: Օի որք ճաշակեալք իցեն, յայսմ խորհրդոյ իրաւունք թագաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից, և պսակ փայլելութեան շնորհեսցի: Իսկ մեղաւորացն մեղաց և յանցանացն, քաւութիւն, և թողութիւն, շնորհեսցի: Եւ այսպէս եղիցի Աստուած ձեր յամէն: Իսկ զայն զոր ասէ, հանդերձ նորա ըսպիտակ, և հերք գլխոյ նորա իբրև զասր Ա̃է. հանդերձ նորա, խորհրդաւոր մարմինն, զոր սրբեալ զգենու, ըստ այնմ զգեցայց զձեզ իբրև զհանդերձ: Եւ հեր գլխոյն նորա, նշանակէ զառաքինութիւն, զի գլուխ Քրիստոսի է Աստուած, յորմէ իջանեն ձեր առաքինութիւնք Աստուածայինք, և մարդկայինք, ըստ այնմ ձեր ասելք բարիք, և ձեր պարգևք կատարեալք ՚ի վերուստ իջեալ առ ՚ի հօրէն լուսոյ: Աթոռ նորա ասէ, բոց հրոյ, այսինքն զկենդանատու խաչն, որ փառեալ է հրով Աստուածութեան, և կիզու զմեղս մարդկան, մերձեցելոցն ՚ի նա, և սրբէ ոյք զանձն, ՚ի բոլոր չարչարանաց իւրոց. գետ հրոյ հոսեալ ելանէր առաջի նորա, այսինքն զաւետարանական քարոզութիւն, որ սրբազանիւք առաքելովք հոսեալ ել, ընդ ձեր ոլորտս տիեզերաց ըստ այնմ հուր եկի արկանել յերկիր, և կամիմ զի արդեն իսկ բորբոքիւր: Հազարք հազարաց պաշտէին զնա, և բիւրք բիւրուց կային առաջի նորա.

այս

այսինքն բազմութիւք զօրաց երկնաւորաց, և երկրաւորաց, ահիւ պակուցմամբ, կամ առաջի Ածայնոյ, և սոսկալի խորհրդոյս: Յաղագս նորա ասէ, այսինքն 'ի վերայ սըրբոյ սեղանոյս, որ յաւիտեան սոսկալի, զուարթուն նոր, և գպրութիւք բանին, առաջի յայսմ յանմահական խորհըրդոյս, այսինքն սմ՝ գործք արդարոց, և մեղաւորաց. և 'ի հրեշտակաց խորեանց ածեալ առաջի բեմիս, և բացեալ առաջի դատաւորիս, ըստ այնմ՝ հրեշտակք նոց, տեսանեն հանապազ զերեսս Հօր իմոյ որ յերկինս է. այսինքն մատուցանեն զգործս մարդկան առաջի Այ. ցուցիչ ասաց Ռափայէլ յորժամ կայեր դու յաղօթս, և Նուն քո սառայ, ես մատուցի զյիշատակ աղօթիցն ձերոց առաջի սրբոյն: Դարձեալ ասէ, Ես եմ Ռափայէլ յեօթնեանց մնացի, 'ի սրբոյն հրեշտակաց, որք հանեն և մատուցանեն զաղօթս սրբոցն, և մտանեն առաջի սրբոյն: Արդ՝ այսպէս ամենեցունց ըզ գործսն, հրեշտակք խորեանց մատուցանեն առաջի բազմեալ անմահ Թագաւորիս, և գործոց սրբազանից պսակ պատրաստի, և մեղաւորացն քաւութի և թողութի շնորհիցի. Զ այնմ՝ արբէք 'ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ՝ նոր ուխտի, որ վն բազմաց առեալ, 'ի քաւութի և 'ի թողութի մեղաց:

## Գլուխ ԻԴ:

ՅԱՂԱԳՍ ԸՍՏ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՍԲ՝ 'Ի ՍԲ ՍԵՂԱՆՆ ԴՆԵԼ ՓԵՏԱՆԵԼ՝ և [illegible]

Սա սեղանի պատրաստեալ սեղան անմահութեան, յորս խնկաւէս բազմեալ ամենասուրբ երրորդութիւն, Հայր, և Որդի, և Սբ Հոգին ըստ այնմ՝ պատրաստ արարեր առաջի իմ զսեղան. յորոց մինն անձանց, Հայրն. և Հայրաբար կոչէ 'ի սեղանս, և գթութիւն. և մինն եղբայր մեր սիրելի, և զառն. և դառնապէս հրաւիրէ 'ի սեղանս, 'ի զենումն իւր: Իսկ երրորդն է աղաւնի. և աղաւնանման վա

փառելով, և գրգալով կոչէ, 'ի սեղանս Ածային · առ 'ի ճաշակել յամենայն խորհրդոյս: Երրեակ անձն սուրբ, և երրեակն ըղձալի, և բաղձալի: Որդ՝ ով հաստատեցեալ ճաշակող, եթէ նեղեալես 'ի հալածչաց, և 'ի դառնագոյն չարչարանաց, յերևելեաց և յաներևութից, յաստեաց, առիւծուց, որ գոչէ աներևութաբար, և խնդրէ թէ զո՞ կլանիցէ, փարիր և Թռչիր, 'ի գիրկս Հօր քոյ, և գորովագութ ծնողի քոյ, որ գրկախառն համբուրիւ ըսպասէ քեզ, և գիրկս բացեալ քաղցրութբ կոչէ զքեզ · ով՜ հայր գորովութ, որ քաղցրութբ կոչէ յինքն, ըմպելիս և նորաստ, զորդին, ցուցանելով նմա զհայցելին նր, և նա, զԹևս տարածանելով խորհ զձայն աղաւնոյ, և տատրակի · թռչի գիրկս Հօր: Այսպէս և գութ սորա, որ բազմեալէ 'ի մէջ սրբոյ սեղանոյս, և գրեթէ հաղորդական և բնակակից, և տիեզերականին և անհասանելի: Ով սա սեղծող, և նա ոչ: Սա զօրացուցիչ հոգւոց, և նա ոչ, սա քաջացուցիչ, և նա ոչ, սա արարիչ, և նա ոչ, սա կեցուցիչ, և նա ոչ, սա յամի կայող, և նա ոչ, սա յամ մըտանգից ազատիչ, հոգւոյ և մարմնոյ, և նա ոչ: Սա որդի սա առեալ հայր, գորովագոյթ, և խնամարկող, և սպասանիչ, և գթածական է. և յորժամ արկանիս 'ի գիրկ սորա · որ 'ի մէջ սեղանոյս բազմեալէ, գիրկս արկանէ քեզ · փարէ զարտօսր աչացդ սրբէ, համբուրէ, զմիս իւրինն քեզ կերակուր մատուցանէ և զարիւնն նր ուխտիս քեզ ըմպելի, անապակ · ուրախարար, զուարթարար, և զուարճարար, մարմինն ընդ մարմնոյ միաւորելով, և զարիւնն ընդ արեանդ, և Ածութին ընդ անձին · զի խնկապէս և կատարելապէս որդիս մարդոյ, իբր, այսինքն հօրն երկնաւորի որդի լինիցիս: Եւ յետայնորիկ համբերձիւք սրբավայելչելովք, պայծառապէս զարդարէ, և պսակ ոսկի, 'ի գլուխ քո մատուցանէ, ըստ այնմ եդիր 'ի գլուխ նր պսակ 'ի քարէ պատուականէ, և յամիւ ընկալիէ, զի յամի կայողէ, քան զհայր մարմնականն: Ով մարմնական հայրն, զոր ունիս, ոչ կարէ

ըստ

բաւ նմա շնորհել, զոր ինչ և պիտոյ իցէ քեզ, զի տէր ինչ առաջի նորա, անհնարաւորէ. ում սմա ինչ հնարաւոր, եթէ կամիցի նա 'ի ձեռաց այդոց ազատել, ոչ կարէ. իսկ սա կարէ և անդնդոցաց կորուսանէ, եթէ կամիցի նա 'ի հիւանդութենէ, և յախտաժետութենէ, 'ի տաժանմանէ, 'ի տառապանաց, 'ի վտանգէ, և մինա 'ի մահուանէ, 'ի մեղաց, և յանօրէնութեց, և 'ի չարութեց, և այլոց, ոչ կարէ, զի անհնարինէ: Իսկ սմա զայս տէր հնարաւոր: Մ՟որոյ սա առաւել հայր, և սա առաւել գթած, զոր ինչ կամիս և հայցեսցես և խնդրեսցես տալն կարօղէ. զի ողորմութին գնայ առաջի նորա, իբրև զգետ յորդեալ հոսանուն. և ուրախ առնէ զամ՝ աշխարհս. առ նա մերձեցեալն, որոք անմահականոք բաւ այնմ՝ գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքս Ա՟յ. քաղաքէ Ա՟յ Մ՟ր եկեղեցի, և անձն մարդկային: Իսկ գետն ողորմութիւն և քաղցրութի նորին, որոյ քաղցրագոյն յողորմութենէն, ուրախ լինին սուրբ, և ոչինչ անհնարին ոչ 'ի հոգևորացն, և ոչ 'ի մարմնաւորացն: Իսկ յորժամ՝ 'ի միւս անձն հայիս նաև զառն խարսխեալ, 'ի մի խաչին, չարչարանոք անհնարին, և եդեալ յԱ՟ծայնոյն սեղանին. և դու որ քաղցեալդ ես 'ի կենաց հացէդ, և յԱ՟ծայնոյդ մոյ զառինդ, մատիր 'ի սեղանս յայս, ուրէ զենեալ զառն Ա՟յ, որ առյ կերակուր քեզ զմարմին իւր, և ըմպելի զարիւն իւր: Ով ով զառն ոչ ունի զեղջիւր, եթէ զմատուցեալն առ նայ որք և իցէ հարկանիցէ. ոչ ունի պատուասիրական զասումն եթէ զոք խածանիցէ, և պատասխեցէ ոչ ունի ձիրանս եթէ զոք, միրաորեսցէ. այլ նոյնքանէ անմեղ, և անմենոյ, մինչ զի և հարկանողացն ոչ հատուցանէ չար, փոխանակ չարի, այլ մանաւանդ հեղառաւ նմին, ով սրբոյն 'ի մի խաչին, հայր թող սոցա զործողացն չարիս: Եւ դու յորժամ կարաւցես 'ի նմա, ճաշակեսցես զնա, և զանգիտասցես նմա, 'ի խոզախողէն և 'ի հալած չարացն և 'ի տառապեցուցչացն յայնժամ՝ լինիս նա առիւծ, և անմաւէլի, և անպարտելի բարկութի և

սրտ

սրտմտութք զլխէ 'ի մ՟ն չարագոյն գազանին. և գէշ գէշ սպառնալ է զոտոխտ, ըստ այնմ՝ առիւծն գոչեսցէ, և ով իցէ որ ոչ զարհուրիցի: Նա. այսպէս քեզ գառն, և առ. ոտխտ առիւծ երևի, այնչափ լիցի զի, մռնչեսցես առ սեղանդ առ նա որ բազմեալ է. 'ի Հասուցանել խորքանչիւր կողման, առ. քեզ գառնաբար մնանելով, խոկ առ. ոտխտ գազանաբար. մ՟ն այսուրիկ առիւծ և գառն, անուանեցաւ սա: Օգ աղագս մոյն աւէ, աՀաւասիկ Ք՟ն գառն Ա՟ծ, որ բառնայ զմեղս աշխարհի, և յաղագս միւսոյն աւէ, եկեր բազմեցաւ իբրև զառիւծ, իբրև զկորիւն առիւծու, և ով իցէ որ զարթուցանիցէ զնա. եթէ ոչ բազում գիկիցելոյն, և զոչողացն առ նա. որ ինքնին բազմեալ կայ 'ի մ՟ն սրբոյ սեղանոյս, և մատուցանի պատարագ, 'ի փրկութ՟ի ամ՝ արարածոց: Նա. ասա յորժամ գոչեսցես առ սա, յամ՝ զօրութենէ յաղթեղ քումմէ, և ասասցես ուր գառնասր արդարութ՟ե գառ արա ինձ յաւիտեա լիմէ, և զարթիր, ընդէր ննջես, 'ի խնամոցդ՝ որ բառեղծեր և գոյացուցեր զիս, նայեաց յիս, և օգնեա ինձ, զի յամի ննջեալ եմ ես, ոչ ունիմ զօգնական որ բաց 'ի քէն: Նա իբրև զգառն անմեղ լռելով լսէ քեզ, և զանձն մատուցանէ 'ի շնորհս քո. և ապա բարկութ՟ե և լի սրտմտութք յառնէ յաթոռոյ փառաց իւրոց. 'ի սրբոյ սեղանոյն յոր բազմեալ է, ըստ այնմ՝ մ՟ն առաւաւտուց աղքատին և Հեծութ՟ե տնանկին, այժմ յարեայց ասէ տէր, իբրև զառիւծ 'ի մ՟ն ոտխին բոյ, և յայնժամ կոխէ և ձմլէ, բարկութ՟ե և սրտմտութ՟ե իւրով, և զքեզ աղաւոէ յամ՝ Հնարից, և յորոգայթից ն՟ր, և սա քեզ կերակուր գառնս այս զմարմին իւր, և զարիւն խորՀրդեալ, զոր 'ի մ՟ն խաչին խողխողեցաւ չարչարանօք, և մատուցանէ Ն՟ նմին զարմանալի բաժակն, որ ձմլեցաւ 'ի մ՟ն քաղաքելին, յորթոյն ողկոյզաբերէ, որ կոխեցաւ 'ի կենդանութ՟ի մեռելութ՟ե մերոյ, և յարութ՟ե սրտմտութ՟ե և ցնծութ՟ե և զուարճութ՟ե, սիրոյ մերոյ: Խոկ յորժամ Հայեսցիս յերբորդ յանձն, և նաև աղաւնի, որ յամենեցունց վարէ, ըղ-

ձա

ձայնից փափագմանց սիրոյ. աչօքն գեղեցիկ, ձեռօքն պար-
երգակ, որ է Թովչին ծափս ծափ հարկանէ, վաշվաշ կարդայ
է ընկերաւն, գգուելով փարէ, է սիրելեաւն իւր. անմենենգ,
և անխարդախ. որոյ ոչ գոյ լեղի դառնութեան ամենևին, իբր
փիլիսոփայից խնամատարութե. յորժամ բողոքով սրտիւ դառ-
նաս առաս, որ թեւաբաղխելով բազմաւ կայ, 'ի վր սրբոյ
սեղանոյս, 'ի կատարումն Ծննդոյ խորհրդոյս, որպէս և
յայտնեալ է յանձինս որոց. զէջումն սորա ունին երեւ, 'ի վր
յանմահական խորհրդոյս, յորժամ և նա դարձուցանէ ըզ
ցանկալի զաչս իւր 'ի քեզ, և հայի քաղցրութե, և զան-
կն մատուցանէ 'ի մաղթանս. հեզաբար իբրև զաղաւնի.
և յնդունելն զաղաչանս, հատուցանէ քեզ զքաղցրութի
իւր՝ և յածէ 'ի վր սոսկից, իբրև զարծիւ 'ի վր ջրջի-
կանի, և գէշ գէշ պատառէ, և տայ կերակուր զորայն
ձագկանց, այսինքն այսոցն չարաց. զի վն այսորիկ առի զորս
ձագկաց, վն սևաթոր գոլոյն: Եւ յորժամ դառնայ առ
քեզ, անմեղութեամբ, և բաշխէ զշնորհս իւր, իբրև զա-
ղաւնի հեզաբար: Եւ արդ՝ որ այսպիսաբար, քաղցր, և
գթած բարերարօղ ունես, մի՛ հոգի հաւատացեալ, և յորս
և հայիս բաց 'ի քաղցրութենէ ոչինչ տեսանես բաց այնմ՝
քաղցրէ տր, և թէ քաղցրես դու. տր, և թէ զի դու տր
քաղցր և ուղիղես: Եւ այսպէս երանելի անձինքն, քաղց-
րութե բազմաւքեն 'ի վր սրբոյ սեղանոյս, յորայ մինն
հայրէ, և հայրաբար անսայ քեզ, և մինն գառն, որ զմիս
իւր խորովեալ մատուցանէ քեզ. ընդ նմին և զբաժակն
անմահարար մատուցանէ քեզ. և միւսն աղաւնի, որ անհուն
քաղցրութե հայի 'ի քեզ: Սա ընդէր պարտիս հեզգա-
նալ 'ի մատչելդ. զի երրեակին բազմաւ 'ի սեղանս, և
երրեակին քաղցր և ցանկալի յամի, սրբեա պարտիս և դու
քաղցրութե մատչիլ յանմահական սեղանս, և աներկիւղա-
բար սրբութեամբ ճաշակել, և յաղագս այսորիկ առաջ պատ-
րաստեցեր առաջի իմ՝ զսեղան, և հրամայեաց թէ ճա-
շակեցէք և տեսէք, զի քաղցր է տր:

Սա

Աստ տեսանել լուսոյն յոլովելոյ մարգարէութեան, զոր տեսին ՚ի դիմաց ԱՅ, հեղից հոգւոյ իմմէ, ՚ի վ͞ր ամ՛ մարմնոյ, և մարգարէասցին ուստերք և դստերք ձեր, և ծերք ձեր երազովք երազեսցին, և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն: Եւ ՚ի վ͞ր ծառայից իմոց և ՚ի վ͞ր աղախնեայ իմոց, յաւուրսն յայնոսիկ, հեղից հոգւոյ իմմէ և մարգարէասցին, և տաց նշանս յերկինս ՚ի վեր, և յերկիր ՚ի խոնարհ, արիւն և հուր, և մրրիկ ծխոյ. արեգակն դարձցի ՚ի խաւար, և լուսինն յարիւն, մինչև եկեալ իցէ օր Տ͞ն, մծ և երևելի, և ամ՛ որ կարդասցէ զանուն Տ͞ն կեցցէ. քանզի ՚ի սեղանս և ՚ի խորհուրդս սոսկալիս ժողովեալ տեսանի ամ՛ խորհրդաւոր մարմինք Ք͞ի, և ամ՛ զօրքն հրեղինաց երկնի եթէ ծառայք, և եթէ ազատք, եթէ աղախնեայք, և եթէ տիկնայք, եթէ հրեայք, և եթէ հեթանոսք, խուժ, դուժ, սկիւթացի և բարբարոսք, և այլք այլազգիք, այլալեզուք, և միալեզուք, ՚ի ձայնակումն յանմահական խորհրդոյս, յորոց ոչինչ խտիր, զի յամենեսեան բաշխի, և բաշխմամբ ձայնակի: Եւ յետ այնորիկ հեղանի ՚ի վ͞ր ամենեցունց, հոգին ԱԾ. և տայ շնորհս խրախանձելոյ. Ը իւրում կայի, և զօրութեան, ոմանց մարգարէութեան, ոմանց առաքելութեան, վարդապետութեան, լեզուաց թարգմանութեան, բժշկութեան, տեսլեան, երազոց երևման, խնայէ: Որ ընդ ձայնակել, զանմահական խորհուրդս, Տ͞ն այսոցիկ, ընդունակ լինի: Եւ յայնժամ լինի նշանագործութեան որ ասա՛յն տաց նշանս, յերկինս ՚ի վեր, և յերկիր ՚ի խոնարհ, արիւն, հուր, և մրրիկ ծխոյ, որ նախկին միաւորութեան. քանզի ԱՅ ընդ մարդկութեան նշան տայց, այսինքն ըսքանչելիք, զի անսահմանելին տարեալ եղև, և անբովանդակելին, և անպարագրելին պարագրեալ, և բովանդակեալ, որ և ասացն, տայց ձեզ Տ͞ր ինքնին նշան, աՀա կոյս յղասցի, և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն ն͞ր Էմմանուէլ: Նոյնպէս և աստ, ՚ի յայս սոսկալի խորհրդոյ միաւորութիւս ԱԾութեան ընդ հացին և ընդ գինւոյն, նշանս ըսքանչել

Յովէլեայ ասէ, որպ ասայն տաց նշանս յերկինս ՚ի վեր, և յերկիր ՚ի խոնարհ, արիւն և հուր, և մրրիկ ծխոյ: Արիւն նոյնինքն արիւն՝ ուխտին կենաց, հուր՝ զԱծութին, ըստ այնմ Ած մեր հուր ծախիչ է, և թէ հուր եկի արկանել յերկիր, և թէ մորենին վառեալէր, հրով, և թէ լեառն վառեալէր հրով: Իսկ որ ասէ մրրիկ ծխոյ, զմարմին կենդարարին նշանակէ, զի ծուխն և մրրիկն ՚ի յօդոյ, և ՚ի ջերմութենէ գոյանայ, թարց խոնաւութե, նոյնպէս և մարմինն Տրունականն, ՚ի հողոյ, ՚ի յօդոյ, ՚ի հրոյ, և ՚ի ջրոյ գոյացեալ, թարց խոնաւութե, այսինքն առանց մեղաց, և հսամնուտ փագրութեց:

## Գլուխ ԻԵ:

Յաղագս ԲՆ սոսկալի խորհրդոյ պատուէ իբրակաց դէմանիւ:

Արդ որպ Քս յերրակաց միացեալ տեսանի, այսինքն յԱծութենէ. ՚ի հոգւոյ բանականէ, և ՚ի մարմնոյ քառանիւթոյ՝ նոյնպէս և սոսկալի խորհուրդս յերրակաց միաւորեալ նոյն Քս տեսանի, այսինքն յԱծութենէ, որպ ասայն, հուր, և յարենէ որ ՚ի մարմնոյ որ ՚ի հացէ, որպ ասայն մրրիկ ծխոյ, ահա այսորիկ նշանք խորհրդոյս, որպ և ասայն, տաց նշանս յերկինս ՚ի վեր, և յերկիր ՚ի խոնարհ: Ահա զարմանալի, և հրաշալի նշան, որ յերկինս և յերկրի երևի. զի հայելով յերկինս ՚ի վեր, տեսանեմք զնոյն Քս, յաջմէ Հօր յաթոռ փառաց բազմեալ, և ՚ի հրեշտակաց սպասաւորեալ. և հայիմք յերկիր ՚ի խոնարհ զնոյն նշանն տեսանեմք՝ ինքնին նոյն Քսն, ՚ի վե՛մ սրբոյ սեղանոյս, զենեալ և պատարագեալ, վն փրկութե մերոյ, ըստ այնմ որ ընդ Հօր նստիս, և աստ պատարագիս: Եւ յայնժամ յետ նշանիս այսորիկ, որ խառնի Ած ընդ սրբազան խորհրդոյս, և հեղման շնորհաց սրբոյ Հոգւոյն, և արբման

որ

որբաշրջան ժողովրդոց, ասէ արեգակն դարձցի 'ի խաւար, և լուսինն յարիւն, արեգակն նշանակէ բէեղ զեբուղ, գլուխ և իշխան դիւաց, որ իբրև զարեգակն բոցակիզէր և ցամաքեցուցանէր զազգս մարդկան, և զսերմանեալ բան պատուիրանացն ԱՅ, ոմ արար Ադամայ և զաւակի նր, ըստ այնմ՝ զի՞ հայիք յիս, զի ես եմ սևացեալ, քանզի խէթիւ հայեցաւ յիս արեգակն. և տրն ասաց ծագեաց արև, և ցամաքեցաւ, և արեգակս այս յետ ճաշակման մեծի խորհրդոյս, դառնայ 'ի խաւար, և լուսինն յարիւն, և լուսինն նշանակէ զհաւատացեալս և զհալածեալս դիւաց, որք առնուն իշխանութիւն, և զհրամանս 'ի գլխաւորէն բէեղ զեբուղայ, ոմ լուսինն որ առնու զլոյս յարեգակնէ, և հրամանաւ նր, յայնժամ մարտնչին ընդ ըստեղծուածս ԱՅ, և ընդ ծառայսն. և յետայնորիկ ասէ դարձցի յարիւն: Զի մինչև ցայնժամ, առնուր լոյս յիշխանէն խաւարաւորէ, այսինքն 'ի բէեղ զեբուղէ. ոմ լուսինն որ առնու զլոյս յարեգակնէ, և յետ յայսմ յանմահական խորհրդոյս ճաշակման, այլ ոչ ևս առնուն լոյս յիշխանէն իւրեանց բէեղ զեբուղայ, զի խաւարեալ է ասէ արեգակն, այլ դառնայ զօրս նր յարիւն, որ ոչ ներգործի լոյս յարիւն: Յաղագս այսորիկ փոխարկեցաւ գետն յեգիպտոսի յարիւն, զի մինչ դեռ ջուրքն, երևէր լոյս արեգական 'ի նմա, և նոյն ինքն արեգակն ևս. այլ յորժամ դարձաւ յարիւն, ոչ ևս. այլ ամ որ էր 'ի նմա կենդանի սատակեցան, ըստ այնմ՝ դարձոյց յարիւն զգետս նց, և եսպան զամ ձկունս նց: Գետն և լուսինս որ դարձան յարիւն, ոմ առաջաւ, հաւատացեալք, և հալածեալք էին դիւաց, իսկ ձկունքն որ 'ի նմա, ամ զօրքն նց. ծովն և բէեղ զեբուղ, որ դարձաւ 'ի խաւար և ցամաքեցաւ, ըստ այնմ՝ զի դարձոյց ըզ ծովն 'ի ցամաք. զի ընդ ճաշակել յանմահական խորհրդոյս խափանին ամենեքեան սոքա, և այլ ևս ոչ կարեն ներգործել ինչ. ըստ այնմ՝ արեգակն 'ի տուէ քեզ մի մեղիցէ, և մի լուսինն 'ի գիշերի: Աէ զի արեգակս այս, որ էր բէեղ

ջերմուղ, մարտեաւ ընդ Ադամայ, խորշակաւն իւրով, և ցամաքեցոյց, և չորացոյց զնա, և էարկ 'ի հուրն անշէջ, ըստ տ՟ն ձայնի, և յովհաննու, թէ կտրեն զնա զչորացեալն, և արկանեն 'ի հուր՝ և այրի: Իսկ յետ Ադամայ որ գը-րէին ընդ գլխոյն մարտեաւ, և զօսացոյց, ապա լուսինն, որքէն հազարապետք, և հարիւրապետք իշխանին, առին լոյս, այսինքն իշխանութի 'ի նմանէ 'ի վ՟ր որդւոյն Ադամայ, նման նմին, չորացուցեալ զօսացուցին, զազգս մարդկան, և արկին 'ի հուրն. վ՟ր զի ամենեքեան մեղան, և ոչ ոքէր որ առնէր զ բարի, ըստ ասացելումն: Եւ յորժամ նըշանս այս որէր Ա՟ծայինն և սոսկալի, խորհուրդս ձնշակեալ լինի, դառնոյ արեգակն այն 'ի խաւար, որ՟ք ք՟րիւ յաղթահարեցաւ, 'ի փրկութեն և խաւարեցաւ: Ով Ադամու պայծառացաւ յորժամ յաղթեաց, և ք՟րիւ խաւարեցաւ, յորժամ յաղթահարեցաւ. որ՟ք ասացն քաջալերեցարուք, զի ես յաղթեցի. նմանապէս յ՟ս տ՟ն ձնշակողք այսմ՝ խորհրդոյս, յարիւն դարձուցանեն զլուսինն, որ՟ք և ասացաւ. զոր օրինակ գեան եպիսկոպոսի, որ 'ի ձեռն Սոլեմոնի, ծառային Ա՟յ, դարձաւ յարիւն, և մեռան որք 'ի նմա: Եւ արդ այսպիսի նշանէ, ոչ միայն խաւարին, և նսեմանան, այլ և յանդնդասույզ կործանին. որ՟ք ամ՟ն հերետիկոս դիւաշունչք կամէր զամ՟ն սրբակրօն ածել 'ի հերձուածս իւր, ասէր ընա ես յամ՝ առուքս, յորժամ կամեցեալ զՔ՟ս տեսանել՝, և զմայրն իւր լուսածածանչ, փառօք, արդ եթէ կամիս եկ և քեզ ցուցից, և երկիրպագ նմա, և լեր ուղղափառ. և քահանային ծածկապար, է առ ընդ իւր զսոսկալի խորհուրդն, և իբրև չոգան, ետեսին զամ՟ն թագաւոր, անպատմելի փառօք լուսաւոր յաթոռ բազմեալ, և ամ՟ն կոյս գեղեցիկ յաջմէ անձառական փառօք նստեալ, և անմարմնոց բազմութիւնք, լուսաւոր առաջեամբ կանգնեալ ահիւ մեծաւ 'ի սպաս. և յորժամ ետես հիացեալ զարմացաւ. և իբրև լափայեցաւ յերկրպագութի թագաւորին և մօրն նորին. յայնժամ նա է հան զկենդանարար մարմինն կենա-

րա

բարին, և մատոյց և ասէ․ արդ եթէ դու ես երանուհի մայրն կենաց․ առ զմարմինն որդւոյդ քո կենաց․ և նոյն ժամայն ընդ յասելն և ՚ի մատուցանելն, անկեալ կործանեցաւ, և անդնդասոյզն աղաղակաւ մեծաւ կորեան, և սեղին այնքան նահանգաւ, մինչ զի խաւար շօշափելի երևեցաւ․ և խորք պերծան, անկաւ հերկիտիկոսն, յասս քահանայից, մեծաւ դղրդմամբ, և եղև ուղղափառ։ Եւ զարմանագործութիս զայս կատարի, ՚ի ճաշակողսն, մինչև գալ օր տն, մեծ և երևելի, որ է գալուստն երկրորդ։ Եւ որ յայսպիսի սքանչելագործութիս, և յանմահական խորհուրդս ճաշակմամբ կարդասցէ զանունն տն կեցցէ։

Աստ տեսանի բերկրեալ յոյժ դուստր սիոնի, զի ահա թագաւորն թագաւորաց, բազմեալ է, նոյնն հեզ ՚ի վր սրբոյ սեղանոյս, արդար և փրկիչ, և սատակեսցէ զկառս յեփրեմէ, և զերիվարս յԵրուսաղեմէ․ ոչ զկառս փարաւոնի, և զերիվարս նր; որք ելեալ իցեն ՚ի վր Երուսաղեմի, այլ ինքն ՚ի վր խաղաղութեն։ Օր սատանայ յար և յաւէժ, յառնէ ՚ի վր խաղաղութեն, ոչ ՚ի վր Ադամայ ՚ի դրախտին, որք խաղաղացեալեմք ՚ի Քնիւ, ըստ այնմ՝ նա է խաղաղութի մեր։ Եւ յորժամ՝ նա կառօք և երիվարօք, յառնէ ՚ի վերայ խաղաղութեն մերոյ, յայնժամ՝ մեք ճաշակմամբ մարմնոյ և արեան կենարարին յոր միանայ ընդ մեզ, սատակէ զնմ՝ յարուցեալսն ՚ի վր խաղաղութեն մերոյ․ և խորտակէ զաղեղն պատերազմողին ընդ մեզ․ ըստ այնմ՝ զաղեղունս փշրեաց, զզէնս խորտակեաց, և զասպարս այրեաց հրով։ Յայնժամ՝ խաղաղութի ազգաց լիցի․ և տիրէ ինքնին տր ջուրց, ՚ի ծովէ մինչև ՚ի ծով, ՚ի գետոյ մինչև ՚ի ծագս երկրի․ ծով նշանակէ զմարգարէս, և գետ զառաքեալսն, և տիրէ նոքօք մինչև ՚ի ծագս աշխարհի։ Եւ յայնժամ՝ արեամբ ուխտի նր արձակեալք լիցուք, կապեալք ՚ի մեղաց և յանջրդին գբոյ, և նստցուք յամուրս, կապեալք ժողովրդեան․ ամուրն երկնայինն զաւառ, և վերինն Երուսաղէմ և ժողովուրդ․ երկնայինն դասաւորութի, յորս կապեալք

պէտք լինիմք ընդ նոսա յանմահ, և անփոփոխ կեանսն։ Եւ փոխանակ միոյ աւուր պանդխտութեան մերոյ, որ յայսմ կենցաղոյս, յոր պանդխտեցաք, ընդ այնմ պանդուխտ եմ ես առաջի քո Դշդեհ և անցաւոր, ոչ ում հայրն իմ, և թէ խոստովան եղեն, թէ օտարք և պանդուխտք են ՚ի վ͞ր երկրի, ճաշակմամբն որ ՚ի դրախտին, տարադրեցաք և պանդխտեցաք յերկրի. անասնոց, և անբանից, կրկին լցի հաղորդութեամբն ճաշակմանս այսու, քանզի սակս պատասխանի նմա, և տր եղիցի յայսմ հետէ վերադարձու։ Եւ եղեւ իբրև զփայլակն, նետ նր, ընդդէմ թշնամեաց մերոց. Հարկանել զսիրտս թշնամեաց թագաւորի, ընդ այնմ նետք քո սրեալք են հզօր, և ժողովուրդք ՚ի ներքոյ քո անկցին ՚ի սիրտս թշնամեաց թագաւորի. և թէ նետք նր մխեալ են կայծակամբք կայծոյ։ Եւ յետայնորիկ լինիցին տր ամենակալ, պաշտպանեսցէ և վերակացու լիցի։ Եւ աստ անանի կացեալ ոտք նր, որք իբրև լեառն ձիթենեաց, այսինքն ողորմութեան լեառն. զի լեառն նշանակէ զԱ̃ծութիւն, ոչ առասպել, խոկ ձիթենին ողորմութիւն նր. զի լուսեղծողն երկնի և երկրի, աստ կացեալ տեսանի, առ ՚ի յողորմել լուսեղծուածոց իւրոց։ Եւ յաւուրս յայնմիկ, յոր պատարագի Ք̃ս. բղխի ջուր կենդանի, այսինքն շնորհս եօթն արփեան, յորդուցանի իմաստութեն, ընդ այնմ յարուցանէ նր բղխեցին ջրոց կենդանութեն, զայս ասէր վ͞ս հոգւոյն, զոր ընդունելոց էին. և թէ ջուրն զոր ես տաց նմա, մի ծարաւեսցի, այլ եղիցի նմա աղբիւր ջրոյ, բղխեցելոյ ՚ի կեանսն յաւիտենից։ Եւ թէ ով ծարաւի իցէ եկեսցէ առ իս և արբցէ։ Եւ թագաւորէ տր յամ երկրի. և եղիցի տր մի, և անուն նր մի, պատեալ զամ երկիր. քանզի արարչագործութիւն զայս յամ երկիր մատուցանի, բաշխի և ճաշակի. պատեալ զամ զտիեզերս. և զորդիսն Ա̃յ զյուսալին ժողովէ ՚ի մի հաղորդութեամբ յանմահական խորհրդոյս։

## Գլուխ ԺԶ:

### Վասն ոչ անիծանելոյ զոք, և ծանուցելոյ:

Եւ նզովք սաստ ոչ են լինելի, քանզի նզովքն է հատուած յանդամոց, 'ի գլխոյն, և սուրբ որ համանգամայն, որոշէ յիւմ անդամոց և գլխոյն. բայց վ՜ն մարդոյն այնմիկ, որ զսուրս զայս շարժեաց անօրէնաբար 'ի վե՛ր անդամոյն Ք՛ի, և հասանէ: Արդ եթէ դու շարժէր 'ի վե՛ր քո սուր, մարմնական առ 'ի հատանել զմի անդամդ, ո՞հ, ո՞լ, և կամ որքան սարսափէիր; միայն 'ի շարժումն, թողթէ 'ի հատանումն: Եւ դու քեւ ոչ մտախոհեալ ես սաստկութեամբ Ք՛ի, որ շարժես զսուրդ 'ի վե՛ր անդամոց նր, առ 'ի հատանել. և վ՜ս այսորիկ սարսափէր սրբազան առաքելոյ, թէ իշխանութիւն այս, այսինքն զսուրս զոր ետ ինձ տր, 'ի շինել, և ոչ 'ի քակել: Որ թէպէտ զհրամանթայլին արգել 'ի հաղորդութենէ, յանդամոցն Ք՛ի, սակայն նզովք ոչ էր տանոյ, այլ փափկագոյն մխիթարութեան գրեաց. թէ այսու հեռեւ նմին հակառակ, մանաւանդ շնորհել նմա, և մխիթարել, զի մի առաւել տրտմութեամբ ընկղմեսցի, վ՜ն որոյ աղաչեմ զձեզ, հաստատել 'ի նա զսէրն. սովորեա արդեօք թէ որքան սարսափէր, և սաստնէր հոգեկերն, 'ի մերձենալ յանդամս կենդանութեան 'ի հատանել, որ ոչէր հատեալ, այլ սակաւ մի խրատել. զի եթէ խրատելոյն այնչափ դողայր նա, արդ դու զի՞նչ պատասխանի տացես, որ անողորմ սրով կամիս հատանել զանդամս նր, ո՞չ խնայես 'ի արիւն Ք՛ի, որոյ զի մարդ եղեւ ծառայ, և ընտելացուած նր. զի չարագոյն անօրէնքն, թէպէտ այնքան կառափնատեսլին զերին մինչև բազմոցին ես, բայց յանդամոյն նր, և ոչ մի ինչ հասին. այլ դու սիրելի, մեծարեա՛լ, և հաւատարիմ ծառայ Տ՛ն որ ոչ իշխես զայդ գործել, և ոչ սարսափեալ սասանիս: Աղաչեմ արտասուաթոր

աչօք

աչօք, և պատուական կողկողագին դիմօք, խնդրեա յորդի
հոսմն, և հօրն երկնաւորի, և մի անողորմ դիմեր, 'ի հա-
տուցն յանդիմանաց նր. այլ և երանելին Գրիգորիոս Նարե-
կացին, աղաղակմամբ գոչէ առ Տր պաղելով, եթէ որչու-
թե բանիւք մատեայ առ որ, լուիցես, ապա թէ անիծա-
նաց, մի լուիցես աղօթից: Նոյնպէս ասէ և սրբազանն
Կիւրղոս, գրելով առ Նեստորիոս, Մէ և սրբազան մերա-
կացելոյն. վն զի էր անդամ Յնի: Նաև յորժամ 'ի հօրէ
և յորդւոյ, և յամենայնի հոգւոյն յայտնութիւ, վճռեա հա-
ստա, 'ի սրբազան ժողովոյն, յայնժամ զասացեր հոգւոյն,
որ հաստատէ զան զեմ՝ սուրբ եկեղեցի, շարժեցին 'ի վն նր.
և հանին 'ի գլխոյն կենաց, և զբաժին նր ընդ կեղծա-
ւորս եդին. անդ եղիցի լալ, և կրճել ատամանց. զի այս-
պիսի էր աւանդեալ 'ի սրբազանէն Գրիմէսիոսէ, թէ յոր-
ժամ Աէ հոգին Սբ մարգարէակիանա հոգւով, յայտնեա-
ցէ, և հայրն երկնաւոր աշէ արասցէ, և ինքնին որդին վը-
կայեսցէ, զոր օրինակ գուանութեն պետրոսի, նոյնպէս և
հասման անդամոյն Յնի, յերրորդութենէն վկայեալ լի-
ցի, և յամ հոգեւորացն. յայնժամ ասէ շարժեսցեն, զա-
մերս, ապա թէ ոչ լռեսցէ, և յանձնեսցէ Նա ամենակա-
րողի. ապա թէ յանդգնիցի, սուրբ նոցա մատուցեն 'ի սիրտս
իւրեանց: Նոյն թէ առասցէ ոք զն հրաման եա, պատա-
խանեմ սրբութեան Տրն երրորդի դեմօք, յետ խրատելոյն ա-
սրն, և ինձ ոնարժանիս թուի թէ զերրորդի դէմն, զեր-
րորդ անձնաւորացն, ուանիցի յայտնարանութեն, զանցելոյն,
զներկայն, և զապագայինսն, որ զանցեալ չարիսն, յոր և
յաւէժ յիշեցուցանելով: Նու յորժամ դու և նա միայն
իցէս, այսինքն յորժամ զմինն զոյն, միայն յիշեցուսցես.
որէ անցեալն. և յորժամ ոչ լուիցէ առ ընդ քեզ միւս եա.
այսինքն զներկայ մեղսն, որ ընդ անցելոյն երկրորդէ. և
յորժմ ասցա եա ոչ լուիցէ, ասասցիր յեկեղեցւոյն, որէ զա-
պագանսն. այսպէս ասար և երանելին Կիւրղոս, Նախ միով,
այսինքն անցելովն չարեօք յանդիմանեաց զՆեստորիոս.

Մէ

Մե կոչելով զնա. և յորժամ միայն ոչ լուաւ, այսինքն ներ-
կային, զերկնաւորին էԱծ, այսինքն զներկայն ընդ անձե-
լոյն : Եւ յորժամ և նոյ ես ոչ լուաւ ապա յիշեցոյց զապա-
ռնյն, այսինքն զհանդերձեալն. որէր հասաւին, թերևս
սարսափեցի, և ոչ լուաւ, յայնժամ նա խրրև զհեթանոս
եղև, շարժեցին եկեղեցին, միանգամայն զսուրն նծայրն,
և հատին ՚ի գլխոյն կենդանականին : Այսպէս արար և հոգե-
կէտն, Պետրոս ը Անանիայ և Սափիրայի. զի այսպիսեացս
միայն էպատրաստեալ սուրն, ըստ պատճառեցեալ. որք խրրև ըզ-
հեթանոս եղեն : Օի այսպիսեացս միայն սաստ տրն, զըս-
պառնալիսն, զոր միանգամ կապեսջիք յերկրի եղիցի կապեալ
յերկինս, զի հեթանոսէ որ ոչ հաւատայ զերրորդութի ն
ար, հեթանոսէ որ ոչ հաւատայ զորդի և զհոգի հաւասար
հօր, բնութե և Աստուածութե. հեթանոսէ որ ոչ հաւատայ զե-
րանուհին Աստուածածին գոլ. վասնորոյ սոքա որք զինքեանս հեթա-
նոս բաժանեցեցին, յաղագս այնորիկ և յանդգնոյն Քի
հաւան, յայտնութե ամենասրբ երրորդութեն. որք երևե-
ցաւ տրն սրբազանին Պետրոսի, և խոստացաւ վն Արիոսի. և
վն այսորիկ առաց նզովք ոչ ես լինիցի : Օի որ հանդգնիցի
և սարապարտուց զոք նզովեսցէ, և անիծեսցէ, սարապար-
տուց ասեմ, որ ոչ իցէ հերձուածող, նզովքն և անէծքն
թուի թէ յետս դարձցի, որպ Հնձխունի ՚ի բոյն իւր, ըստ
սիրաքայ, և դարձցին ցաւք ՚ի գլուխ նր, ըստ մարգարէին.
վասնորոյ աղաչեմ, զի որպ տրն երաշխ զնզովս, և զանէծս
զալասնեալ իւրով, նոյնպէս և արարչանօք, նախանեալիք տն
ձեռամբ, որպիսութի անդամոյն Յսի, քան թէ անէծք ցու-
ցիք. զի ասաց ոյք օրհնեն զտր ժառանգեսցեն զերկիր, և
ոյք անիծանեն սատակեսցին ՚ի նմանէ. քանզի օրհնութի
և անէծք անդամոց, առ գլուխ վերաբերի, ըստ այնմ զոր-
ինչ արարիք, միում ՚ի փոքրկանց ինձ արարիք. և թէ որ
զձեզ անարգէ զիս անարգէ : Օի որ բազում չարչարանօք,
երաշխ տրն, դու մի կրկնակի մուծանէր յաշխարհ. մա-
նաւանդ առ քերովբէից և սերովբէից սոսկալին, Քի, այլ

որք

որք մեղանչէինն քաղցրութեամբ խրատեա զնա, ով տէրն քո և գլուխ, զի թէ նա ոչ ընդունելիք փորձեցաւ այսպիսի բանիւք, ապա դու յանձն լիցիս ունել. զի ասաց մեզ ուսուցիչ ձեր Ք՜ս, զի թքին ՚ի նա ապտակեսցին, հայհոյեսցին, նմ ձաղանօք ձաղեսցին, մինչև իբրև զչարագործ, ՚ի խաչ բարձրացուցին, այլ նա ներէր, և թողութիւն խնդրէր, ըստ մարդկութեան, ըսպանողաց իւրոց. Իսկ դու սրբազանդ որ անիծանես, որոյ աշակերտսն. վ՞ա որոյ աղաչեմ մի լինիր այդպէս աշակերտ, այլ միայնոյ Ք՜ի, որ եբարձ զանէծս, և նզովս յաշխարհի. քանզի որ ասաց տէրն ընդ պատասխանեալն թէ են աստ երկու սուր, այսինքն կապելոյ և արձակելոյ բաւական ունելն, այլ ոչ հրամայեաց առժամ ՚ի գործ ածել: Օրինակ առնեաց Պետրոսի, թէ արկ զսուրդ ՚ի պատեան իւր, զի ամ որ սուր առնու սրով անկցի, ով զինուորք արքայի միշտ ածեալ ունին զսուսեր ընդ մէջ, այլ ոչ հանապազորդ ածեն ՚ի գործ, այլ յորժամ հրամայէ արքայ որոյ և իցէ, ՚ի գործ արկանէ: Նոյնպէս և արքայն երկնի ետ սուր զինուորաց իւրոց, այլ ոչ հրամայեաց ինքն իշխանութեամբ ածել ՚ի գործ, և վ՞ա ախտի իւրոյ հատանէ զանդամս, ընդ այսպիսոյս ոչ երբէք համաձայնի Ք՜ս, այլ մերժեսցէ և բժշկէ, որպէս հարեալ ՚ի Պետրոսէ, և հատանողին ասաց, թէ դարձո զսուրդ անդէն ՚ի պատեան իւր, և թէ [illegible] իցես, որ սուր առնու սրով անկցի, դու որքան խոցոտեցես զանդամս, ես բժշկեմ, բայց սուրդ քո մտցէ ՚ի սիրտ քո, ըստ այնմ թէ սուրք նց մտցեն ՚ի սիրտս նց: Բայց յորժամ ըստ զինուորաց, երկրաւորաց հրամանաւ արքայի. շարժեսցես զսուրդ սրտակիցես, զի առեր վրէժս թշնամեաց թագաւորին, ով և օրինադրեաց երանելին Գրիգորիոս, թէ յորժամ տր հոգին Ք՜ս մարդասիրական հոգւով յայտնեսցէ, և հայր ըստ Պետրոսի ազդեսցէ, և որդին առասցէ, մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ հայր իմ որ յերկինս, յայնժամ ըզ սպառազինել սուրն, պարտէ շարժել, որպէս և երանելոյն

Պետ

Պետրոսի հայրապետին հրամայեաց շարժել ՚ի վր Ալիոսի, որով և ծնն Կիւրղոս, և ծնմ սիւնհոդոսքն, նոքին հոգւով վառեալ, վարեցան։ Ապա թէ յԱՅ բարձեալ սուրս այս գու առանց արքային քոյ, շարժեսցես, նա ողորմութբ բը- ժշկէ, և քեզ սաստէ, ոՊ քահանայապետին Պետրոսի։ Այլ աստ զօրմիմամ յոյժ, ողորմած բնութեան ՅՍԻ, զի նա ոչէր անդամ, վաղվաղակի բըժշկեաց, և Պետրոսի սաստեաց, թէ որ սուր առնու սրով անկցի. ապա անդամոց իւրոց խաղխողմունն զինչ ասասցէ. այլ թէ թէ ասասցէ, ծառայ չէր, եթէ ես գլուխ բարի, ընդէ՞ր զանդամն իմ հարկանես, ապա թէ ես գլուխ չէր, վկայեմ վն չարին; և ապա հատ զանդամն իմ՝, զի երկրաւորք թագաւորք և դատաւորք, յորժամ գողոց, և այլոց չարագործաց, զանդամն հատանեն իրաւամբք առնեն, իբրև ձեռնարկուցի, և ինքն գլուխն խոստովանիցի, զյանցուածս անդամոյն, և ինքն իրաւամբք հատու լինիցի, պատուհասակոծ ութեան, որ արժանէր կրել զայն, յայնժամ ոչ ես լինիցի, անիրաւութի. զի ինքն խոկ վկայեցից, յանցուածս անդամոց իւրոց, այսպէս պարտէ և զինուորաց, երկնաւորին, և զինուորաց նորին, և դատաւորաց առնուլ վկայութի, յաղագս հատման անդամոց նորին, և ապա լիցի իրաւամբք գործին. ոՊ ուսուց ցուէ, յորժամ անկցի ՚ի մի անդամ գլխոյն, վկայէ գլուխ հատման նորին. քանզի ի զայլսն ևս նոյնպէս առնէ, տարածմամբն իւրոյ, թէպէտ հատանողնէ, է սուրն պատ- րաստեալ, բայց ոչ կատարի թուրց հաւանութե գլխոյն, և ընտանեաց և աշխարհաց։ Այսպէսէ և հոգևորն, զի յորժամ կամիցիս հատանել, զմի անդամն ՔՍԻ, պարտիս հաւանութե գլխոյն առնել, որ է ՔՍ, և ընտանեաց և բարեկամաց նորին, որքեն առաքեալքն, և ծէք ժմ։ Ես արդ այսպէս հատին ծէքն զանդամն զայն, որ ոսնէր զա- ռնչ ցուն, զի մի և յայլսն տարածիցի. վն այնորիկ ասաց մարգարէն ՚ի բերանոյն ԱՅ, թէ նզովեալ ոչ ես լինիցի, զի ծայքն անդամք լինիցին ՅՍԻ ձեռնակմամբ յանձնահանքն խար-

հր

հրդոյ՛ : Ըստ տեսանի, յաղագս երկիւղածաց իւրոց, ծա-
գեալ արեգակն արդարութեան, և բժշկութիւն 'ի թեւս նորա.
և ամ՛ հաւատացեալք ճշմարտիմամբ այսու, ելեալք, և խայ-
տացեալ ք, իբրև որթ արձակեալք, 'ի կապոյ, և կոխես-
ցեն զանօրէնս, և եղիցին մոխիր, 'ի ներքոյ ոտից ճշմարտո-
ղացն զորբաղան խորհրդոյս: Ո՜վ յաւիտենիւ է արեգա-
կանն արդարութեան, զորինչ ասնէ արդարութիւն ասնէ, ոչ
արեգակն մեղանչականն անիրաւութիւ. և նա ջերմացուցա-
նէ, և պտղաբերէ զամենայն առաքինութիւս յերկրի 'ի հո-
գիս հաւատացելոց, խոկ սա չորացուցանէ, զամ՛ զսերմա-
նեացն: Նա լուսաւորէ զխաւարեալսն, և սա խաւարե-
ցուցանէ զլուսաւորեալսն: Նա 'ի վեր հանէ զգոլորշիս, և
ամպով ցօղ իջուցանէ յերկիր ռաւպէ և պտղաբերէ, խոկ
սա ցամաքեցուցանէ երկիր: Նա ծնունդ շնորհէ եախանայ,
և սա ամուլ առնէ զեախս, 'ի պտղաբերութենէ առաքի-
նութեան, որ ոչ ծնանին զմանկունս, բարեգործութեան, և
զայլս այսպիսիս: Նւ վՐ այնորիկ ասէ, բժշկութիւն 'ի թեւս
նՐ, զի տարածմամբ թեւոյ նՐ, որ 'ի վՐ քառաթեւին, ըն-
դունի զմեզ, և բառնայ 'ի վՐ միջնորդաց իւրոց, ըստ այնմ
տարածեալ զթեւս իւր, և ընկալաւ զնա, և բարձեալ բե-
րէր 'ի վՐ միջնորդաց իւրոց, և արձակեալ լինիմք, 'ի կապոյ
մեղաց, և խայտամք իբրև զորթ. վՐ զի բնութիւն է որթոյ,
յորժամ՛ արձակեալ լինի 'ի կապոյ, խայտայ և զուարճա-
ցեալ ցնծայ, ընթանալով 'ի դաշտս, և 'ի դալարուոջ տե-
ղիս. զի յոր վայր և դատանէ զօձս, կճկլակաւ լապանանէ,
նմանապէս և զամ՛ զթունաւորս, այսինքն զսատանայ. ոչ
և առայն կոխեսցէս զանօրէնս. և ինքն Տրն ասաց, ետու
ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս և զամ՛ զօրութիւս
թշնամւոյն. և եղիցին սաՀ մոխիր 'ի ներքոյ ոտից ձերոց.
զի մոխիր ըստ ինքեան է անպտղաբեր, և սեւոր. նոյնպէս
և սատանայ յետ ճշմարտիմանէ, խորհրդոյս, լինի 'ի ներքոյ
ոտից ճշմարտողացն, իբրև զմոխիր անպտղաբեր, և զարշե-
լի սեւաթոր, նսեմատեսակ, և կապտախաւար:

Ըստ

Աստ տեսանի հարսանիք որդւոյն Ա̄Յ, պատրաստեալ, 'ի հօրէն լուսոյ, և կազմեալ 'ի հոգւոյն սրբոյ, և որդիս մարդկայնով բընութ̄ք, թագաւորեալ, և վայելչութի̄ զգեցեալ, ըստ այնմ՝ տ̄ր թագաւորեաց վայելչութի̄ զգեցաւ, զգեցաւ տ̄ր զօրութի̄ ընդ մէջ իւր էած, և հրաւիրեալ զբազումս, կոչմամբ Ա̄ծայնոյն, ըստ տ̄ն թէ արար թագաւորն հարսանիս, որդւոյ իւրոյ, և հրաւիրեաց զբազումս, այսինքն յա̄մ՝ ազգաց, գալ 'ի հարսանիսս յայս, ուր զենեալ է պարարակն և զուարակըն, և ա̄մ՝ ինչ պատրաստեալ, և բազմեալ թագաւորն թագաւորաց, և տ̄րն տերանց, հայրն փառաց, և հոգին Ա̄Ծ թևաքողեալ, և անմահից բազմութի̄ք խմբաս պաշտաման կացեալ, և հոյլ սրբոցն, գումարեալք, ահիւ մեծաւ պակուցմամբ, զարմացեալք:

Արդ այսպիսի հաւատով, պարտի ճաշակողն, թլփատել զինքն յանհաւատութենէ, և մտանել 'ի սուրբ խորհուրդըն, և վ̄ա այսորիկ ասաց անթլփատ որք մի կերիցէ: Եւ յետ այնորիկ ասէ, այլ ազգի ևս մի կերիցէ: Այլ ազգի է որ ոչ ունի, զնշան քրիստոնէութ̄ն. որ ոչ ինքն զՔ̄Ս ճանաչէ, և ոչ Ք̄Ս զինքն. ո̄պ և ասելոցէ տ̄րն 'ի կատարածին թէ ոչ ճանաչեմ զձեզ. զի ա̄մ ճանաչումն նշանաւ լինի. բայց որ ոչ իցէ ճանաչումն, աննշանաւն լինի: Վ̄ա այսորիկ 'ի հնումն զթլփատութիւն ետ նշան, հաւատացելոց: Իսկ նորումս զմկրտութիւն, և զդրոշումն կնիք Ա̄ծպաշտութեան, և այսու ճանաչեալ լինի: Դարձեալ այլ ազգի է, որ զքրիստոնէութ̄ն նշանն ունիցի, և զկնիք, բայց գործովն օտարացեալ մեկուսի իցէ, նա ևս անուանի այլ ազգի. քանզի ա̄մ ծառ, պտղով ճանաչի, այլ թէ ընկուզի մանկ երևի, և խնծոր պտղաբերի, զի մրգ ընկուզի իցէ, այլ պտուղն՝ այսպէս. և թէ որք քրիստոնեայ անուանեալ իցէ, և գործ ոչ իցէ, զի մրգ քրիստոնեայ համարիցի. վ̄ա որոյ երկրորդումքս այսորիկ, նշանիւք, յայլ ազգութենէ 'ի բաց լինի. զի բնութենէ յորժամ 'ի հօտից որք զիւր զոչխարսն որոշել կամիցի, նշան դնէ, զի նովաւ որո-

շի

չիցէ, եւ այնու զխորն, եւ զայլոցն ճանաչիցի, որպէս ասացն, ետուր երկիւղածաց քոց նշան, եւ թէ նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց: Եւ յորժամ այսու նշանաւ ճանաչեալ լինի, ապա ճաշակեսցէ առ է զօրութիւնն խորհրդոյ: Եւ եկամուտ առէ մի ճաշակեսցէ, քանզի ոչէ կրթեալ յօրէնս, եւ յաւանդութիւն պատուիրանացն Տ̃Ն. այլ պարտ է ի բազում ժամանակս, կրթել յօրէնս տն, եւ յաւանդութիւն պատուիրանացն Տ̃Ն, եւ հաստատել զինքն ի պատուիրանս Տ̃Ն, իբրեւ զծառս անկեալս եւ արմատացեալս, եւ պտղոցն ճանաչեալ, եթէ բարի է, եւ եթէ չար. եւ ապա յայնժամ հեռէ, յորժամ բարութեն պտուղ ցուցեալ լիցի, յայնժամ հաղորդակից լիցի ի ճաշակումն, սուրբ խորհրդոյս: Զի եկամուտն իբրեւ նորատունկ ծառ է. եւ ոչ ոք գիտէ պտուղ նր, եթէ բարի է, եւ եթէ չար: Վ̃ այնորիկ որ ի կարծիս է, ոչէ պարտ ճաշակել. զի մի գուցէ դարձեալ յետս դարձցի, որպէս աշակերտակալքն Ք̃ի, որք յորժամ լուան զճառս հաղորդութեն, յետս չոգան, եւ այլ ոչ եւս շրջէին ընդ նմա. այլ յորժամ հաստատելոցն եհարց տրն, մի թէ եւ դուք կամիք երթալ, պատասխանի ետուն՝ բերանով երանելոյն Պետրոսի, տր առ ով երթիցուք զբանս յաւիտենականս ունիս, եւ մեք հաւատացաք եւ ծանեաք, եթէ դու ես Ք̃Ն որդի Ա̃Յ. եւ վ̃ս այսորիկ հրամայեցաւ յօրէնս, ի նշան նորոյս խորհրդոյ, թէ եկամուտ մի ճաշակեսցէ. զի լոկ փիլիսոփայից դիւրըմբռնելին դիւրաւ արհամարհելի է: Զի որ ոչն գիտէ զգին պատուականութե, քարին պատուականին, եւ բոլորն ապակեղէն, ապակենականն, միապէս տեսանէ, եւ միապէս պատուէ եւ ընդունի. այլ որ կիրթն է, յորժամ ըզքարն տեսանէ, զորօրինակ ալմաս փայլփլական ընկենու ըզշէշոյն, եւ ընդունի զալմասն, վ̃ս զի է կրթեալ յարուեստն, եւ ոչէ եկամուտ, ընդունելով զպատուականն, թողլով զանպիտանն, ըստ ձայնի տն, երթայ վաճառէ զամ, եւ գնէ զայն, վ̃ս զի շահս բազում է նեւ նոցայ: Վ̃ այնորիկ թողին առաքեալքն զամ, եւ գնեցին զայնս որպէս եւ ասաց սրբազանն

Պետ

Պետրոս, ահաւասիկ մեք թողաք զամ, և եկաք զկնի քո։ Յիսուսի. և նոյն ցանկալի մարտիրոսք, և բազմաջան նահատակք, և ըղձալի ճգնաւորք, թողին զամ և չոգան զկնի հաւատարմութեան այսորիկ յորում շարժն բարութեան, որ անտանելիքն մարմնոյն ճաշակողին, լինի մարմին Քի, և ընդհարանն այսոյն չափ լինի բնակարան Տն Յի, և տաճարք հոգւոյն ճշմարտի, և տուն հօրն երկնաւորի, ըստ այնմ. Ես և Հայր իմ առ նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք։ Պատարագին դիւաց, լինի առ բանիւ հրեշտակաց. արա՝ ոչ խոցից, արածի ՚ի շուշանս հովտաց, յարգայութեն յարագայելին. ճաշակողն լեզերաւոր իշխից, զոր ցանկայր Նաբովթ, ըստ Լ զարմանալի իւր, լինի ճաշակող մարմնոյ անմահին Այ, որ Այ ծառայս լինու զամ զբարդ ցանն, որ ոչ երբէք այսուհետև յաւ ցնոր. ըստ այնմ՝ Հայրն իմ տայ ձեզ զհացն կենաց, որ ուտէ ոչ քաղցեսցէ, և որ ըմպէ ոչ երբէք ծարաւեսցէ, այսպէս ունի ծայրագոյն շահ՝, զի անապական-

ացն է արքայութեան մայր, և յաւիտենականին։

Եւ փառաւորագոյնքն որք յառաջ հաստատեալքն, ՚ի սէր խորհրդոյս այսորիկ և ոչ են եկամուտք, այլ բնակչութեանք որքոց, ոչ հրամայէ ճաշակել, և ոչ եկամտիցն, զի եկամուտն առ ժամանակ մի է. զի ոչ նա ունի ՚ի միտս և ՚ի խորհուրդս իւր հաստատել զէր անոր, նոյնպէս և եկամուտ ճաշակօղն, որ ոչէ կրթեալ հաստատութեամբ ՚ի հաւատոյս. զի որպէս նա ունի զէր անոր, այնպէս և սա, որ այսօր է և վաղին եղանի, զի պանդխտանէ և երթայ, որ յէր ունի ՚ի մին, և փառաւորեալ առէ նա մի ճաշակեսցէ։ Իսկ որ հաստատեալն է և քաղաքացի սրբոյն, որ ոչ ունի ՚ի մին, յայլ փոխելով, նմա հրամայէ ճաշակել. զի յայն ՚ի տուն իւրէ, և ՚ի քաղաք, ՚ի սիրելին և յազգայինս, որոյ տանն է ճաշակողին, այսմ խորհրդոյս, երկնային պատառ. և սիրելի զհրեշտակաց կաճառք. որ ոչ ունին զփոփոխումն ինչ, ըստ առաքելոյն, յայս տունն ճաշակողք, թէ պատուակիցս լինիցուք, և փառաւորեալ առաց եկամուտ մի ճաշակեսցէ։

Եւ

Եւ քաւ յորժամ եկեալ ոք մի ճաշակեսցէ, և ընդ նմին ծառայն, և ևս մի ճաշակեսցէ. քանզի ոչ եկեալ ա՛ն միշտ ուտի ՚ի մօրէ, յետ անոր, նոյնպէս և ծառայն, ոչ ուտի ՚ի մեր աշխատութեն, եթէ աշխատին հացորդ էր. զի աշխատն որդին է և ժառանգ, և ծառայն ոչ այնպիսի. աշխատն տէր, և որ ինչ նորա է։ Իսկ ծառայն ոչ այնպէս։ Այս յաւիտեան կայ ՚ի տան։ Իսկ նա ոչ յաւիտեան կայ ՚ի տան, ըստ Տեառն ձայնի, ծառայն ոչ յաւիտեան կայ ՚ի տան։ Իսկ որդին յաւիտեան կայ ՚ի տան։ Իսկ որդին եթէ ազատեսցուցէ, ճշմարիտ ազատք լինիցիք ասաց։ Արդ՝ ով է ծառայն, և ով աշխատն. ծառայէ որ լծոյ պարտուցն իւր, և ախտից իւրոց ծառայէ, ըստ այնմ՝ որ առնէ զմեղս ծառայէ մեղաց։ Ոյք են որ հպարտութեն և ամբարտաւանութեն, փառասիրութեն և մարդահաճութեն և աչառութեն ծառայեն։ Եւ որք նենգութեն ատելութեն, և ոխակալութեն, և նախանձու և այլոց նմանեաց ախտին, ծառայեն։ Եւ են որ բարկութեն սրտմտութեն զրպարտութենց, դատողութենց, բամբասանաց, և այլոց այնպիսեաց, ծառայեն։ Եւ են որք մարմնապաշտութեն, թուլութեն փափկութեն ծուլութեն, պղերգութեն։ Եւ են որք ագահութեն, կողոպտութեն, գողութեն, շրկանաց, յափշտակութեն, և այլոց այնպիսեաց, ծառայեն։ Եւ են որք որովայնապաշտութեն պարարտութեն մարմնոյ, ձայնապնդութեն փորոյ, և լման ազգոյ, ուտելոյ, և ըմպելոյ, և պարապելոյ զանասնապարտ մարմնոյն։ Եւ են որք փորձ ցանկութեն, պղծութեն գիջութեն, շնութեն, պոռնկութեն, և այլոց այնպիսեաց ծառայեն. որ ոչ Թողուանիրաւ ախտիցն որոց ծառայեն ժամ մի հանգչել. այլ յար և յաւէժ, անդադարաբար ՚ի ծառայութեն փորէ, խլուտալոյն ՚ի գործ մեղանաց։ Զարչարէ և ոչ միոյ ակն քթթելոյ Թողու հանգչել, և ոչ խառն մի դադարել։ Սա այսպիսի յայսպիսեացս ծառայից ոչէ հրաման ճաշակել ըզ աշխատն Քրիստ. զի աշխատն ընդ աշխատին ուտի հացորդութեն, և ոչ ընդ ծառային ՚ի միք։ Ոյր ոչ աշխատէ Քս յայսմ

յամէ

յանձն, նոյնպէս և ճաշակողն պարտէ ազատ լինել յայսմ յանձն. և ապա ազատին համեմատութիւն առ ընկալցի. քանզի կարի հեռի է, լոյսն 'ի խաւարէ. զի որ սրբեալ է ո՟պ ակն, և կամ հայելի, կարէ ընդունել զլոյսն Ա՟ծային, զի ո՟պ նա Ա՟ծ է, և սա ևս սրբեալ է, ունին համեմատութի՟. և վ՟ս այսորիկ ընդունակ լինի լուսոյն, և ոչ կարէ ընդունել զխաւար. Թէպէտ և բազում անգամ, շուրջ պատեսցի ըզ նովաւ: Օր բնութենէ, որ 'ի հայելւոջ, և կամ յադամաս, 'ի զմրուխտ, և յայլ սոյնպիսիս, համարձակապէս լոյս երևի, բայց խաւարն և ոչ 'ի միտ: Նոյնպէս յազատն և 'ի սրբեալսն, լոյս այս երևի, բացարձակապէս, բայց խաւարն 'ի նոսա, անկարելի թէ 'ի նոսա երևիցի. ո՟պ 'ի նմին աւելւոջ, զքարինս զայսոսիկ զոր ասացի անկարելի է թէ խաւարն, 'ի նոսա երևիցի. Թէպէտ շրջապատեալ զնոքօք լիցի: Նոյնպէս և 'ի սրբոյն, և 'ի սրբազնաբար ճաշակողն, անկարելի է թէ խաւար մեղաց, 'ի նմ՟ երևիցի. որք են ազատք յա՟մ ախտից. որոց հրամայի ճաշակելն: Իսկ այնոցիկ որք 'ի խաւարի, և 'ի ծառայութեան ոչ հրամայի ճաշակել. զի ասաց Տ՟րն, ծառայն ոչ յաւիտեան կայ 'ի տան, այլ ազատն և որդին, յաւիտեան կայ 'ի տան: Իսկ արդ եթէ որդին զձեզ ազատեցուսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք:

Նմանապէս և վարձկանն ասէ, ևս մի ճաշակեսցէ, զի դիտաւորութիւն նր՟, ագահութիւն է. զի զոր ինչ և գործէ, յաղագս ագահութեան գործէ, զի վարձս ընկալցի. այլ թէ լինիցի, որ արգելցի վարձն, ոչ ևս գործէ, ո՟պ և Տ՟րն առակաւ հովուի հաստատեաց, ո՟պ և ասացի, իսկ վարձկանն որ ոչէ հովիւ, որոյ ոչխարքն ոչ են իւրն, երբ տեսանէ ըզ գայլն զի գայ թողու զոչխարսն և փախչի, և գայլն յափշտակէ զն՟ս և ցրուէ, քանզի վարձկանէ, և չէ փոյթ նմա, ապա թէ իւրն լիցի, զանձն իւր դնէ 'ի վ՟ր ըստ այնմ՝ զանձն իւր դնէ 'ի վ՟ր ոչխարաց. ոչ եթէ հովիւն միայն, թէպէտ Տ՟րն միայն, հովիւն առակեաց, այլ և ա՟մ իրաց, առաքելոյ արծաթոյ, ակնանց, քարանց, մարգարտաց, հանդեր-

ձից

ձից, ընդելուզեալ, շողշողենեաց. և այլոց սոյնպիսեաց, յորժամ աւազակք և դողք հասցեն, առ 'ի յափշտակել, ըսպանանել և կողոպտել, վաղվաղակի վարձկանն թողու-զամ և փախչի: Իսկ որ տէրն է այնքան մարտնչի, մինչ զի և զանձն դնէ 'ի վ̅ր և կռուի, մարտնչի, սուսերամբք պատե-րազմի, և զարիւն և զանձն դնէ 'ի վ̅ր մինչև 'ի մահ: Այնպէս և Ածայինն պարտ է իմաստասիրել, զի որ վարձ-կաննէ, զայսպիսի զԱծայինս զանձ ոչ կարէ պահել, յոր-ժամ յանձնեցի 'ի նա, զի 'ի ժամանակի փորձութե̅ 'ի բաց ընկենու վաղվաղակի, թողու և փախչի. զի ոչ երբէք պա-տերազմի՛, ընդ դևս, ընդ աշխարհս, և ընդ մարմինն: Զի ուր առաւելէ զանձ, ոսկւոյ և արծաթոյ, մարգարտաց և ականց պատուականաց, անդ ևս առաւելէ պատերազմօղն: Արդ ո՞ր զանձ գերազանցական քանզայս իցէ, որ ըստեղծօղն ամի, զորդին իւր միածին դնէ յագարակի մարմնոյ մար-դոյ. ըստ այնմ' դնէ 'ի խոր զգանձ իւր, և առաքեալ ասէ ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս, և երանելին յոբ ասէ, զի՞նչ այն երկիր իցէ, յորում լոյսն ազանիցի, և թէ ծածկեաց զերկինս ամպովք, և թէ ո՞ զգեցոյց զերկինս ամ-պովք, զի անկարելի է թէ ամպս այս որ 'ի գոլորշեաց եր-կրէ գոյացեալ հասանիցի մինչև յերկինս, այլ մարգարէա-կանաւ հոգւով, յաղագս ճաշակողացն, զանմահական խոր-հուրդս բարբառի բանն, որ հողանիւթեայ բնութիւն, իբրև զգոլորշին, գոյացեալ յերկրէ, ծածկէ զերկինս, այսինքն զվերանձօղն երկնից, և լոյսն գերազանցագոյն, յերկրի ա-զանիցի, և յագարակի մարմնոյ, տարեալ լինի զանձն Ածային: Արդ՝ որ վարձկան իցէ այսմ' խորհրդոյս, ո՞ր ա-սացաւ, յորժամ' պատերազմունք դիւաց, աշխարհի և մարմնոյ, սակաւ ինչ հուպ լինիցի, և մերձեսցի, վաղվաղ-ակի 'ի բաց թողու և փախչի. վ̅ս զի վարձկանէ, յաղագս ագահութե̅ իւրոյ գործէ, զոր ինչ և գործէ. և ոչ վ̅ս զանձուն որ ունի յինքեան, յանձնելէ ինքեան, և տարեալ ունի յինքեան. այլ յաղագս պատուոյ և կամ փառաց, կամ

առ

արքայութեն, և կամ հատուցման գործոյ իւրոյ, զոր ինչ և իցէ վարձս ընկալցի, ապա այնպիսոյն հրամայէ և ասէ, մի՛ ճաշակել։ Ով թէպէտ այժմ՝ յաղագս ապահովութե իւրոյ գործէ, բայց սակայն ՚ի ժամանակի փորձութեն, և հալածանաց վտանգաւորի գայթակղի, և ՚ի բաց ընկենու և փախչի, և ոչ դնէ զանձն, զի ասաց Տէրն զամ՛ զոր ինչ ունի վաճառէ, և գնէ զագարակն յորում թաքուցեալ գանձն, այսինքն յորս թաքուցեալ իցէ զանմահական խորհուրդ՚ն, պարտէ ճաշակողին զամ՛ զոր ինչ ունի վաճառէ և գնէ զագարակ մարմնոյն ՔՍի, ուր թաքուցեալ է գանձն, այսինքն զԱծութիւն։ Ով սոսկալի խորհուրդս այս սիրոյ է նշան, և ոչ վարձատրութե, որ պարտէ ճաշակողն, մինչև ՚ի մահ մտանելի, ոխ ասացն որ ճաշակեսցէ, ոչ մահ, և ոչ կեանք, և ոչ հրեշտակք, և ոչ իշխանութիւնք, և ոչ զօրութիւնք, և ոչ արկածք, և ոչ հանդերձեալն, ոչ կարողութի և ոչ բարձրութի, և ոչ խորութի, և ոչ այլ ինչ կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյ անտի Աճ, որ ՚ի ՔՍ ՅՍ ՚ի Տր մեր. զի ճաշակմամբ հաստատեալէր ՚ի վէմս կենդանի. վՍ այնորիկ ոչինչ հեղեղ կարէր զնա շարժել։

## Գլուխ ԻԸ։

Յաղագս ճաշակողացն թէ պարտի զերկիւղական և ծառայական սէրն ՚ի բաց հանել և զորդիականն նոր երևեցուցանել։

Քանզի զգործողս բարիս յերիս ազգս բաժանել է. որ յաղագս երկիւղի գործէ, զոր ինչ և գործէ ըզ բարիս. և այս կոչի երկիւղական. և է որ վՍ վարձու գործէ, և այս կոչի ագահական. և է որ յաղագս սիրոյ գործէ, և այս կոչի որդիական, և ժառանգական։ Ով անմահական ճաշակս այս սիրոյ խորհուրդ. վՍ այնորիկ որ որդեգիրն Աճ, ոչ միայն հրամայէ ճաշակել, և երկոցունցն այնոցիկ

ոչ. զի որ վն՜ երկիւղին է, ծառայութե՛ն է, քանզի երկնչի ծառայն, առ 'ի չգործել, զուցէ պատուհասակոծ արասցէ զնա տ՜րն, խոշտանգեսցէ, և 'ի մահ իսկ զլխովին մատնեսցէ, ո՜պ ասացն տ՜ր, հանէք զծառայդ անպիտան, 'ի խաւարն արտաքին անդ եղիցի լալ և կրճել ատամանց: Իսկ որ յաղագս հարկաւորութե գործէ, զծառայական զգործն, ըստ հաճոյից տեառն իւրոյ. և ըստ կամաց, և զծառայութե զգործն վճարեսցէ. ըստ ծառայի վարձս առցէ, ըստ այնմ՝ ծառայ բարի և հաւատարիմ, որով 'ի սակաւուդ հաւատարիմ՝ եղեր, մուտ յուրախութի տ՜ն քո: Եւ այս ո՜պ ասացաւ, կոչի երկիւղական, որ յաղագս երկիւղի գործեսցի, և զվարձս ընկալցի, ըստ ծառայութե՛ն: Իսկ վարձկանն յաղագս ագահութե՛ն իւրոյ գործէ, զի վարձս ընկալցի. ապա թէ ոչ վաղվաղակի թողու և փախչի, ո՜պ և ճառեցաւ. և այս երկակացս հրամայեցաւ մի ճանաչել, զի ագահքն, որքէն, վարձկանքն, նմանեն տզրկի, որ զարիւնն ծծէ կենդանւոյ, և ուռի, և յորժամ՝ սակաւ ինչ աղ ցանիցի 'ի վ՜ր, կսկծողական, վաղվաղակի ժայթքէ, և ինքն սատակի: Նմանապէս և Իծայնոյն վարձկանն, յորժամ ճաշակէ զանմահական զխորհուրդն, և փափկանայ նովաւ, և թէ աղ ինչ կսկծողական, այսինքն փորձութիք և կամ՝ հալածականութիք և կամ՝ մարտիրոսական մահ, 'ի վ՜ր եկեալ վաղվաղակի դայթակղի, ո՜պ և եղև առ Յուդայ, թէպէտ ճաշակեաց զարտաշնադոյն խորհուրդն, ընդ սրբազանիցն գնդից. սակայն այնքան տարամերժեաց զտ՜րն, մինչ զի 'ի մահ մատնեաց զարարիչն, յաղագս ագահութե՛ն իւրոյ, և ծծեաց ըստ նմանութե տզրկի, զգինս արեան ըստեղծողին, և ուռաւ փորն նո՛ր, և ժայթքեաց զարծաթն 'ի տաճարին, մինչև զարշութե հոտն նորայ, յայտնի երևեցաւ գեղջն տմի: Այնպէսէ և ծառայն, որ յաղագս երկիւղի կատարէ զգործս իւր. այլ յորժամ երկիւղն ոչ լիցէ, վաղվաղակի զնամ զգործս իւր, անփոյթ արարեալ 'ի բաց ընկենու, քանզի ոչ կայ 'ի միջի, երկիւղ ինչ, և այնու հե-

տև

տև ըսկսանիցի հարկանել զծառայս, և զաղախնայս ուտել,
ըմպել և արբենալ, և յորժամ՝ եկեսցէ տր̅ ծառային այնո-
րիկ, յաւուր ոչ ակն ունիցի, և ՚ի ժամու յորում՝ ոչ գի-
տիցէ, ընդ մէջ կտրեսցէ զնա, և զմասն նր̅ ընդ անհա-
ւատս դիցէ: Արդ՝ եթէ անհաւատս և ընդ կեղծաւորս,
լինիցի մասն այսպիսոյս ծառայի, ապա հիմ՝ արդեօք կարէ
զԱ̅Ծ ճաշակել. զի ըստ նմանութե̅ վարձկանին, եղև վաս-
ճան սորա՝ զի ՚ի բաց ընկեցին զգործս իւրեանց՝. յաղագս
այսորիկ հրամայեցաւ երկոցունցս այսոցիկ ոչ ճաշակել և
ոչ հաւալ լինիլ սոսկալի խորհրդոյս: Իսկ որ որդիականն է,
սիրոյ է գործ, յաղագս սիրոյ հօր իւրոյ գործէ առանց պատ-
ճառանաց իմիք. քանզի հաստատեալ է ամ̅իւ թէ ինքն է
ժառանգ հօրն, և յամ̅ ըստացուածոց նր̅, և զոր ինչ և
գործէ, վս̅ սիրոյ հօր, և վս̅ ինքեան գործէ, վս̅ զի որդի
է, և զոր ինչ հօր է, որդւոյ է, և զոր ինչ որդւոյ՝ հօր է, և
վս̅ այնորիկ երկիւղականն ոչ մտանէ ընդ գործ, և ոչ ծա-
ռայականն, ըստ սրբազանին աւետարանչի, որ ասէ սիրելիք
այժմ՝ որդիք Ա̅Յ եմք, չև ևս է յայտ զինչ լինելոց եմք, այլ
գիտեմք յորժամ՝ նա յայտնիցի, նման նմա լինելոց եմք և
այնու հետև աղաղակէ աբբայ հայր, և ոչ տր̅ որ զծառային
և վարձկանինէ յայտնութի̅, այլ որդիութեան, և ժառան-
գութեան. ըստ այնմ՝ եթէ որդիք, ապա և ժառանգք,
Ա̅Յ, և ժառանգակիցք Ք̅սի: Արդ այսպիսի ոքէր առա-
քեալ, և այսպէս գործեաց: Եւ վս̅ այնորիկ ասաց, զամ̅
ինչ վս̅ մերոյ շինութենէ, և թէ շինուած յԱ̅Յ ունիմք, և
ընդունին այսպիսիքս զգանձս զայս յամանս խեցեղէնս, առ̅
գոսք զօրութի̅, յորդեգրութե̅. քանզի անճառելի գան-
ձէ, գանձս այս, այսինքն ճաշակումն այս. զի յերկնաւորացն
յայնցանէ մեկնէ, այսինքն ծառայականէն, որէր երկիւ-
ղականն, և վարձկանականէն որ էր ապահականն, յորդեգ-
րականն. առ̅ և ասաց տր̅ն յետ ճաշակման այս խորհրդոյ,
դուք բարեկամք իմէք՝. և ոչ ևս կոչեմ՝ զձեզ ծառայս, զի
ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տր̅ն. այլ ճաշակմամբս այ-

սու.

սու կոչեցի զձեզ բարեկամս. զի զամ զոր լուայ 'ի Հօրէ իմմէ, պատմեցի ձեզ: Որչափ և այս այսպէս է, զի մինչև ցայժմ՝ ոչ ինչ յանձնառելեայն պատմեաց նց. այլ յորժամ ճաշակեցին զանձնառելն զխորհուրդն, յայնժամ՝ պատմեաց նց զանձնառելիսն. ընդէ՞ր. վս զի որդիք եղեն, Հօրն երկնաւորի, և ժառանգ նմին. վս զի ոչ բնութբ որդի. նոյնպէս և սոքա շնորհօք որդիք, վն այնորիկ ասաց, ցնոսա ելանեմ՝ ես առ Հայր իմ, և առ Հայր ձեր. և թէ երթայք ասայէք եղբարցն իմոց, զի երթիցեն 'ի Գալիլեայ, և անդ տեսցեն զիս: Տեսանես զի Հայրն իւր բնութբ, նց Հայր կոչեաց շնորհօք, և իւր եղբայր ժառանգակցութբ. քանզի մինչև 'ի ճաշակումն յայս՝, ծառայ զնս կոչէր, և զինքըն տր նց, ոչ և ասացն, իսկ արդ եթէ տէրս և վարդապետս լուայի զոտս ձեր, և թէ ոչէ ծառայ մեծ, քան զտէր իւր, և այլս սոյնպիսիս: Բայց յետ ճաշակմանն, այնքան բարձրացան, վերացան, և 'ի գերագրական փառսն ճոխացան, մինչ զի բարեկամք անմահին Այ, և որդի նորին անուանեցան, ոչ և ասայն դուք բարեկամքէք իմ. և թէ ընտրեցի զձեզ, և եդի զձեզ, զի դուք երթիցէք, և պտղաբերք լինիցիք և պտուղն ձեր կայցէ. այսէ որդեգրութեն գործ, զի ոչ ինչ խոստացաւ սոցա 'ի գործել. ոչ ըզ ծառայականն, և ոչ զվարձկանականն՝. այլ բարեկամականն, որ էր որդիականն՝. քանզի զամ ինչ իւր ետ նց. զինչ զոյր արարածոյ որ ոչ էր նց, որ խոստանայր նց, զի ժառանգէին Այ, ոչ և ասացաւն, և ժառանգակից Քսի, ոչ և խոստացաւն: Արդ՝ եթէ այսէր բաժին նց, զինչ ևս խոստանայր նց, զի ինքն որ բնութբ որդի էր Հօր, զինքն ծառայ նց կոչեաց, և անուանեաց ըսպասաւոր, և պաշտպան, ոչ և ասացն, բազմեցուցից զձեզ 'ի սեղան Հօր իմոյ, և անցեալ պաշտեցից. արդ եթէ ինքն զինքն, նց ճաշակմամբն ծառայ կոչեաց, և ըսպասաւոր, ոչ ասացն, ես եմ 'ի միջի ձերում իբրև ըսպասաւոր մի, զինչ այլ ևս խնայեսցէ 'ի նոցանէ. և թուի թէ այլ ոչ ինչ. զի պատուականն իշխա-

նու

նութիւն զոր ետ Հայր որդւոյ իւրում, ըստ այնմ, զի զամենայն
դատաստան ետ որդւոյ իւրում, և զի ոչ դատէ Հայր, և
թէ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել, ըստ կատա-
րեալ մարդկութեանն, որպէս և ասացն թէ և զի որդի մարդոյ է,
ընդ այն զի՞ զարմանայք, զի որդւոյ մարդոյ է տալն զիշխա-
նութիւնս զայս. և ոչ ըստ Աստուածութեանն. որպէս և դարձեալ ա-
սացն, տուաւ ինձ զամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի,
և Դանիէլ ասէ, նման որդւոյ մարդոյ, գայր և հասանէր
մինչև Հինաւուրցն. և նմա տուաւ իշխանութիւն, զի ամենայն
ազգք և ազինք և լեզուորք նմա ծառայեսցեն. տեսանես
զի որդւոյ մարդոյ ասէ, այսինքն ըստ մարդկութեանն տու-
աւ նմա, և ոչ ըստ Աստուածութեանն, և զայս ամենայն տուեալ
իշխանութիւնս յետ ճաշակման սրբազնագոյն խորհրդոյս, ետ
իւրոց սրբազանից ճաշակողացն, որպէս և ասացն, յորժամ
նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք և դուք
յերկոտասան յաթոռ դատել զերկոտասան ազգն իսրայէլի.
ահա յետին և ծայրագոյն գերագրականութիւն. զի լցա-
զասացեալն իւր, և խառնացեալն զոր ասացն Հօր, Հայր զամենայն
զոր ետուրն ինձ, ետու նոցա: Ո՛վ ազատականութիւն ճաշակման,
զանձառելիս զայսպիսիս փառս շնորհեաց: Եւ այսպէս
ճաշակեցին, ամենայն սուրբք, որպէս և երանելին և ընտրանիս,
յորժամ էին 'ի բանդին, յաղագս անուանն Քրիստոսի ետ բե-
րել զկենդանարարն խորհուրդ, և 'ի հաղորդիլն լոյս կամա-
րաձև կապեցաւ և ձայն քաղցրերգութեան լսելի եղև, 'ի հը-
րաւիրումն յանձառ փառսն, յաղագս ընթացմանն կատար-
մանն. և զորդիական գործոյն կատարման, յոր հանդերձեալ-
նէր, դնել զանձն իւր, հուրբ կատարմանն: Նոյնպէս և 'ի
վերայ կենդանանի վկային, և լուսաւորին հոգւոյ. յեկեղեցին
ամենահրաշ հռովմայեցւոց զոր ակներևին տեսին գումա-
րեալ բազմութիւնքն, եօթնակամար լուսեղէն կառուցեալ 'ի
վերայ կենդանի նահատակին, յորս թագաւորքն և հայրա-
պետն, ոչ կարացին մերձենալ 'ի նա, այլ յորժամ առանձ-
նացաւ; Այսպէս և ամենայն սրբազանք, յորժամ զծառայա-

կանն

կանն գործ, և վարձկանականն 'ի բաց դնէին, և զորդիականն 'ի մէջ բերէին. յորժամ զստակալին զայն ճաշակէին, և զայն ըմբանելեօք, ո՞չ և յամ որքաչափն ցուցաւ, վճ այնորիկ և մեզ պարտ է, զամ զծառայական գործսն, որ է այսուն չարի, 'ի բաց մերժանել, և ապա մերձենալ 'ի ճաշակումն զի հանդիսակից նոցին լիցուք:

## Գլուխ ԻԲ

Ցուցանէ թէ հպարտութիւն դարձէ 'ի բաց [illegible] ծառայական [illegible] [illegible]:

Սա ծառայական գործոյն գլուխն հպարտութիւն, յաղագս որոյ ամ չանիւք, զնա պարտիմք օն անդր տարամերժել, և խորտակել ամ զգլուխ օձին. քանզի որն իսկ և իսկ պատուիրեաց թէ ըպահեա գլխոյն: Նախ զի բնութիւն օձին, յորժամ գլուխն մտանէ 'ի ծակ ինչ, ընդ նմին և զամ անդամսն: Նոյնպէս և ստնյ, յորժամ կամիցի զոք ծառայեցուցանել, գլուխ իւր մտանէ 'ի յոգի նր, որ է հպարտութիւն, որով և ինքն մահացաւ, փորձ առեալ նախ, և նովիմբ 'ի կարթ գործութեան իւրոյ էարկ զԱդամ, և զԵւայ, որոց [illegible] ն, յորժամ ասացն, բանայցին աչք ձեր, [illegible] վճ որոյ այսմ թիւրապոյն, զերախտացուլս [illegible], 'ի պտողոյն, զի եմուտ 'ի հոգիս նց, գլուխ [illegible] տութիւն. և կինն յառաջեաց և նախկնագոյն պատ[illegible]ոց, օթեւան և տեղի, գլխոյս այսորիկ. զի ինքն նախ լսեաց Ա.ծ, և տիրեաց առն իւրոյ Ա.ծացայրս. և իշխեաց իբրև զգլուխ, տան, գլխոյն; Սա իբրև գործով կատարեցաւ, և գլուխ օձին, այսինքն հպարտութիւն, եմուտ 'ի հոգիս նց, ընդ նմին մտին և ամ անդամքն, այսինքն ամ մեղք: Երկրորդ բնութիւն օձին, զի ամ թոյնք մահացուցիչք, բովան-

դանեալ ունի ՚ի գլուխն, և յորժամ գլխոյն տեղի է առ, թոյնքն ամ՛ մահացուցիչք, անդէնուբոլանդակեամբ, մնանեն ընդ գլխոյն: Այսպէս և մարդ յորժամ տեղի տայցէ գլխոյն, այսինքն Հայրութեն, մնանեն ընդ նմա, ամ՛ մահացուցիչք մեղք, և անօրէնութիք. վ՜ն այնորիկ պատուիրեաց տր Ադամայ, նախաստեղծին, դու սպասեսցես նր գլխոյն, այսինքն Հայրութեն, զի մի մնացէ ՚ի Հողին. վ՜ն զի նա է առ ընկէցն ամ՛ ՚ի կորուստ: Օն ՚ի քերովբէից դասուցն ընկաւ, որք առաջին կարգ, երկնաւորացն ստեղծուածոց, մինչև վախճան ստեղծուածոց, որ էր մարդն, յանհասանելի բարձրութեցն և փառացն, զամենեսեան ՚ի վայրթափեաց. ը՜ այնմ տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրև զփայլակն, եւ եսայի ասէ, զի արդ անկաւ յերկնից արուսեակն՛, որ ը՜ առաւօտն ծագէր, անկաւ յերկիր, և խորտակեցաւ, որ ասէր ՚ի միտ իւրում, ելից յերկինս ՚ի վերոյ քան զաստեղս երկնից, արկից զաթոռ իմ նստայց ՚ի լերինն բարձու, ՚ի վր լերանց բարձանց, հիւսիսոյ, ելից ՚ի վեր քանզամպս եղէց նման բարձրելոյն:
Որդ՛ աւաղիկ ՚ի դժոխս իջցես, և ՚ի հիմունս երկրի. որք տեսանիցեն զքեզ զարմասցեն, ՚ի վր քո և ասասցեն, այս այնէ որ զայրացուցանէր զերկիր, քանզի յորժամ ՚ի դասաւորութիս քերովբէիցն եմուտ, որքեն վերին պետութիք յանմարմնոցն գլուխ [illegible] ժեցին զամ՛ երկիր, անմահիցն պետ [illegible] ա՛ հաւանեցան, և խորհրդակրեցա [illegible] ը՜ սոսին անկան, ը՜ տեսլեանն երանելոյն [illegible], զոր ասէ, և երևեցաւ այլ նշան յերկինս, և ա [illegible] վիշապ մի մեծ՛, հրեղէն, որոյ էին գլուխ, եօթն, և եղջիւրք տասն, և ՚ի վր գլխոց նր, եօթն խոյրքն և տուտ նր քարշէր զերրորդ մասն աստեղաց երկնից, և էարկ զնս յերկիր, վիշապն մեծ հրեղէն, նշանակէ բէեղզերուղ, եօթն գլուխն զեօթն գլխաւոր մեղքն, տասն եղջիւրքն ը՜դէմ տասն բանեան օրինացն Ա՜յ մեղքն. տուտք նր, տուտն նր ամբարտաւանութիւն, գլուխն հպարտութիւն

նշա

նշանակէ, և տուտն ամբարտաւանութիւն, զի ամբարտաւա-
նութիւն ևս չարագոյնէ, քան զհպարտութիւն. զի հպար-
տութիւն առ ընկերսն վերաբերի, զի անխելաբար. և թաք-
նաբար գործի. իսկ ամբարտաւանութիւն խրոխտալով մե-
ծաբարբառ բանիւ, ընդվզելով, և վերամբարձ պարանո-
ցաւ, խոտանալով, և խստագոյն բանս և գործս արձակելով,
որ ևս չարագոյնէ քան զհպարտութիւն զի սա ոչ վերանայ
առ արարիչն, այլ նա վերանայ, ըստ այնմ՝ ամբարտաւա-
նութիւն անելեաց քոց վերանայ հանապազ: Ա՟ որոյ և հա-
կառակի ընդ այ՟, և ած՟ ընդ նմա, ըստ այնմ՝ տր՟ ամբարտա-
ւանից հակառակեալ և յորժամ՝ հակառակեցաւ, և տր՟ ընդ
նմա, յայնժամ՝ ահեղ որոտմամբ, և թնդմամբ, անկաւ իբ-
րև զփայլակն, հրեղէն վիշապն, և քարշեաց տաւսն նորա,
զերրորդ մասն աստեղաց, աստեղքն դասաւորութիւնք հը-
րեշտակաց, զի կային դասաւորութեցն, երկս բաժինս, որք
ընդ նմա միաբանեցան, ըղձամբ նր՟, այսինքն ամբարտաւա-
նութեն անկան. ոմանք 'ի ներքոյ երկնից, մնացին յաղջա-
մղջի, ըստ առաքելոյն ոչ է մեզ մարտ պատերազմի, ընդ մար-
մնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս. և
ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս չարութեան որեն
'ի ներքոյ երկնից, քանզի տապալումն նոցա վեր 'ի վայր
եղև. քանզի վերինքն ներքին եղեն, [illegible] և աւդ պետութիւն,
զի անդ 'ի դասաւորութիւս ներքին երրակայքն պետութեց
դասքն, իշխանութիքն միջնոց, քերովբէիցն վերնոց, և յան-
կանելն, վերնագոյնքն ներքնագոյնք եղեն, և անդրադարձ-
աբէս, պետութենցն դասուց, որ են և անկան, բարձրա-
գոյն մնացին. այսինքն 'ի ներքոյ երկնից. վա՟ այսորիկ ա-
սաց առաքեալն, ընդ իշխանութիս և ընդ պետութիս. նոյնպէս
և յիշխանութենցն որքեն միջին յերրակացն, 'ի մէջ վերնոցն,
և ներքնոցն, մնացին, այսինքն, յաշխարհակալս այսորիկ, քանզի
իւրաքանչիւր յերրորդաց յերրակաց անկան, որք ընդ վերնոցն
անկան հաւաքեալք, վա՟ այնորիկ երրակաց, երկիւղ են մնա-
ցին, 'ի ներքոյ երկնից. յոլով մինն, այսինքն վերինն, պա-
տե

տերաշխին ընդ հոգւոյն վերացելոց: Իսկ որ յաշխարհս է մարդկան: Իսկ երրորդն բնեռացեալ ՚ի դժոխս, որք չարչարեն զհոգիս, և չարչարին. վն այսորիկ և այսպիսի եւ կարէ խմանասիրել, որ ասէ տեսան նոր քարշէր զերրորդ մասն աստեղաց, այսինքն յերրորդաց ; յերրակայն դասուց. քանզի դասաւորութիւքն երեք երրակքեն, որ լինի բովանդակն ինն դասք. և այսպէս յիւրաքանչիւր դասուցն, այսինքն յերրորդացն, մասն մի քարշեաց, տեսս վիշապին, այսինքն ամբարտաւանութին, որք համարձին ՚ի բարձունս զեղչիւրս իւրեանց, և խոստացան զԱյ անխրաւութի ա ժամային սաստիկ որոտմամբ, և թնթմամբ մեծաւ անկան, ուստի յահագին ձայնէն, սարսեցան ամ՛ նահապետութիք, յանմահից հրեղինաց. ոմն ասացն Եսայի, որք տեսանիցեն զքեզ, զարմասցին, և ասասցեն, այս այն այրէ որ զարհուրեցուցանէր զերկիր: Արդ եթէ հպարտութին որ գլուխէր չարագոյն գազան վիշապին. և տեսն որ ամբարտաւանութին, զհրեղէն նահապետութիս յանմահից դասապետութենց ոչ խնայեաց, այլ խաւարային կապանօք արկեալ ՚ի տարտարոսն, ըստ որբաշանին Պետրոսի. եա պահել ՚ի դատաստան, և ըստ Յուդայի որ ասէ, և զհրեշտակս որք ոչ պահեցին, զիւրեանց իշխանութին ; այլ թողին զիւրեանց բնակութին, ՚ի դատաստան մեծի աւուրն, մշտնջենաւոր կապանօք, պահեաց ՚ի խաւարի. ՚ի նմ ոչ խնայեաց արարիչն, որ անդրանիկք էին յարարածոց, և լուսեղէնք. և զի՞ արդ զմեզ խնայեսցէ: Որպէս և նախաստեղծն, որ ընդ նմա հաւանեցաւ, և ցանկացաւ Ած-անալոյն, յամ փառաց մերկացաւ. և յորժամ տեղի ետ մեծ մասն գլխոյն, ընդ նմին մոլին և անդամքն ամ. և ընդ անդամոցն և տեսան, այսինքն ամբարտաւանութին որովք խոստէին զանխրաւութի զԱյ, ըստ այնմ հսկայք էին, որք յաւիտենից արք անուանիք: Եւ եթէ ետես Տր Ած եթէ չարիք բազմացան մարդկան, ՚ի վն երկրի, և ամ ոք խորհէր ՚ի սրտի իւրում խնամով չարիս, զամ աւուրս, և

ըս

բարկացաւ Ռ.Ճ, այսինքն զայրացաւ զի արար զմարդն 'ի վ̅
երկրի. և ասաց Տ̅ր Ա̅ծ ջնջեցից զմարդն զոր արարի յերե-
սաց երկրի. 'ի մարդոյ մինչև յանասուն, և 'ի սողնոց մին-
չև 'ի թռչունս երկնից. քանզի բնութիւն յորժամ գլուխն
անկանի, թագաւորն և իշխանն անկանին, և անդամքն և
զօրքն և որք ընդ ձեռամբ են: Որպէս յորժամ պատու-
հասեալ եղև մարդն, որ գլուխ, իշխան և թագաւոր էր,
պատուհասեալ եղեն, և զօրս ընդ նմա. և վ̅ այնորիկ
առէ, զանասունս, զսողունս, զթռչունս և զամ՛ որ 'ի նմ̅:
Տեսանեմս արդեօք, թէ ուր տարեալ կացոյց գլուխն, և
տունն, զամ՛ զկենդանիս ընդ գլխոյն. զի անճառելի
ցաւօք պաշարեցան, յորժամ գլուխն ընդ տունն, եմուտ
յոգիս մարդկան. մինչ զի սահմանաբաց, և անդնդերամաց ջր-
հեղեղաւ բարձան. Նոյնպէս և հոգին Ռ.Ճ 'ի մէջ ն̅ց, բայց
այնմ մի մնասցէ հոգի իմ 'ի մարդիկդ յաւիտեան, վ̅ լի-
նելոյ դոցա մարմին. քանզի այնքան բազմացան, անիրաւ-
ութիւնք ամբարտաւանից հսկայիցն, մինչ զի որք յաւիտե-
նից զինքեանս համարէին. որ ոչ մահ, և ոչ փոփոխումն 'ի
մահ ունէին, այլ անիրաւաբար խրոխտ զխոզս, 'ի տեղի
թառուրէին, քանզի գլուխ էին, որ մնեալ էր 'ի սիրտս նո-
ցին, թոյնն տարածանէր, յամ՛ մասունս հոգւոց նոցին,
մինչև ջուր ջրհեղեղին եբարձ զնոսին: Որպէս և 'ի ժա-
մանակս ջրհեղեղին, և աշտարակին, որք այնքան բարձրա-
ցան, անմտութ̅ սիրտք ն̅ց, մինչ զի ելկան ընդ Ռ.Յ մար-
տնչիլ, բայց երանելոյ առաքելոյն Յուդայի, երթեալ ը̅
խորեանց ցանկութեն, և բերանք ն̅ց զամբարտաւանս բար-
բառին: Նմանապէս և սոդոմայեցիքն, թէ որքան չարիս
բազմացուցին, յորս թափէր թոյն գլխոյն, յոր մնեալ էր 'ի
ծակ հոգւոյն. մինչ զի բոցակիզեալ բարձան 'ի միջոյ:
Որպէս և փարաւոն, որ ասէր յամբարտաւանելն խրոխտ,
ով է նա, որ լուայց ձայնի ն̅ր արձակել զորդիսն իսրայէլի.
ոչ գիտեմ զտէր և զիսրայէլ ոչ արձակեմ. յաղագս
որոյ տասնեքումբք հարուածովք պատուհասեալ ջ̅ր ջնա,
և

և ապա ծովահեղձ կորոյս, կառօք և երիվարօք և ընտիր հեծելովք, ըստ այնմ՝ Տէր խորտակէ զպատերազմունս, որք և ինքեանք եւս խոստովան եղեն, թէ փախիցուք յերեսաց Իսրաէլի, զի Տէր պատերազմի վասն նոցա. իրաւամբք, և արդարութեամբ, և որք նոքա ընդ Տեառն պատերազմեցան, ամբարտաւանութեամբ, նոյնպէս և Տէր ընդ նոսա իրաւամբք, և արդարութեամբ: Զի նոքա պատերազմեցան, ընդ Տեառն յորժամ զմանկունս նոցա, գետահեղձ առնէին, անիրաւութեամբ, և Տէր ընդ նոսա պատերազմեցաւ իրաւամբք, ծովահեղձ առնելով զնոսա. Նոքա պատերազմեցան ընդ նոսա զմանկունս նոցա բռնանանելով, անիրաւաբար, և Տէր պատերազմեցաւ ընդ նոսա, իրաւամբք, զանդրանիկս նոցա բնաջնջելով. Նոքա պատերազմեցան ընդ Տեառն աշխատարկութեամբ Իսրաէլի, և զքաղաքայն շինմամբք, և Տէր պատերազմեցաւ ընդ նոսա ի կործանումն ընչից նոցա. զի մի մնասցէ վերծս գործոց նոցա, ի տունս նոցա. քանզի յաղագս բոլոր աշխարհին Եգիպտացւոց շինեցին, զերկս քաղաքսն, ըզՓիթոմն, ըզՌամսէս, և զՕն: Եւ վասն այնորիկ զամ Եգիպտացիսն կոտորեացին արդար իրաւամբք, զի զվրէժս հատուսցի: Եւ յաղագս այնորիկ, ինքեանք եւս խոստովան եղեն, զարդար իրաւանց դատաստանին Տեառն, թէ Տէր պատերազմի, յաղագս Իսրաէլի, ընդ Եգիպտացիս: Նոյնպէս և Սենեքարիմ, արքայն Ասորեստանեայց, յորժամ բարձրապարանոց, և ամբարտաւանութեամբ, եկն ի վերայ Երուսաղեմի, և առաքեաց պատգամս, առ Եզեկիա և ասաց, այսպէս ասէ Սենեքարիմ, արքայ Ասորեստանեայց, յո՞ դուք յուսացեալք, նստիք յամրոցին Երուսաղեմի. զի ո՞րդ կարասցէ Տէր ձեր, փրկել զձեզ ի ձեռաց իմոց, այլ մի խաբեսցէ զձեզ Եզեկիայ, և մի յուսացուսցէ զձեզ յայդ, մի հաւատայք դմա, վասն զի ոչ կարացին աստուածք ազգաց, և թագաւորութեանց ապրեցուցանել զժողովուրդս իւրեանց ի ձեռաց իմոց: Եւ ի բանս յայս ամբարտաւանութեան, առաքեաց Տէր զհրեշտակ, և սատակեաց զամ զօրաւոր, և զպատերազմօղ զինչան, և զօրավարս, ի բանակի արքային

ին ասորեստանեայց. և դարձոյց զերեսս իւր ամօթով, յերկիրն իւր. և չոգաւ 'ի տուն Այ իւրոյ, և որք ելեալ էին յորովայնէ նր̃ ընկեցին զնա անդ սրով: Այսպէս և երանելին Եզեկիայ ; յորժամ բարձրացոյց զսիրտ իւր, եղև 'ի վր̃ նր̃ բարկութիւն, և 'ի վր̃ Յուդայ, և յԵրուսաղէմ, այլ և Դաւթի հօր նր̃ յետ թուելոյ զԻսրայէլ. քանզի գը-լուխս այս անձնեալ օձիս, ոչ զոք խնայէ, ոչ պորդարս, և ոչ զմեղաւորս, ոչ զկռապաշտս, և ոչ զԱծապաշտս. այլ յոր և մտանէ, զթոյնս թափէ, և թափելովն մահացուցանէ. զի ոմն սա ընդ կենդանութեան մարմնոյն, առ 'ի բառնալ զնա, այսպէս և ամբարտաւանութիւն ընդ արարչին հակառակի և պատերազմի. առ 'ի բառնալ զնա, վս̃ որոյ և Տր̃ ընդ նմա հակառակի, և զնա բառնայ. վս̃ այնորիկ ասաց Տր̃ ամբարտաւանից հակառակ կայ: Նոյնպէս գործեաց և առ Ռափսակ, յորժամ ասաց ցԵղիակիմ որդի Քեղկեայ, և Սոմնաս դպրապետ, և Յովաք, որդի Ասափայ, 'ի վր̃ յիշատակաց, և ասէ ցնս̃ Ռափսակ, ասացէք ցԵզեկիայ այսպէս՝ արքայ մեծ, արքայ ասորեստանեայց, զի՞նչ իցէ յոյսն յորդուն յուսացեալ իցես. և զի ասաց երդիս, թէ 'ի Տր̃ յուսացեալ եմք, ոչ դա այնէ, զոր մերժեաց Եզեկիայ, զբարձունս նր̃, և զսեղանս նր̃, և ասէ ցՅուդայ, և ցԵրուսաղէմ, առաջի սեղանոյս այսորիկ, երկիրպագէք յԵրուսաղէմ: Եւ մի յուսացուսցէ զձեզ, Եզեկիայ 'ի տէր և ասասցէ թէ փրկելով փրկէ զմեզ տէր, և ոչ մատնեսցի քաղաքդ, 'ի ձեռս արքային ասորեստանեայց. ո՞ր յԱծոց աշխարհաց, որք փրկեցին զաշխարհս իւրեանց, 'ի ձեռաց իմոց, զի փրկեսցէ տէր զԵմ՝ 'ի ձեռաց իմոց: Եւ 'ի հասանիլ գիշերոյն, ել հրեշտակ Տն̃, և էհար 'ի բանակէն ասորեստանեայց, հարիւր ութսուն և հինգ հազար, և կանխեցին ընդ առաւօտն, և ահա ամ̃ մարմինք մեռեալք, և չոգեալ գնաց, և արքայն ասորեստանեայց, մինչդեռ 'ի տան Այ իւրում, զոհէր անդրամելէք և սարասար, որդիք նորա, հարին զնա սրով, և սատակեցին:

Նմա

Նմանապէս և արքայն բաբելացւոց, Նաբուգոդոնոսոր, այն-քան բարձրացոյց զսիրտ իւր, և ամբարտաւանեցաւ, և ասաց, ո՞վ է Ա͞ծ որ փրկեսցէ զձեզ ՚ի ձեռաց իմոց · յոր երբեւ եւս զարմանչելիսն, եհան հրաման թէ ամ՝ ազգք և ազինք · և լեզուք որք խօսիցին հայհոյութիւն զԱ͞յ, սեդրաքայ, միսաքայ, և աբեդնագովի ՚ի կորուստ մատնեսցին, և տունք նոց յափշտակութիւն, զի ոչ գոյ այլ Ա͞ծ, որ կարող իցէ այնպէս փրկել · և յետոյնորիկ այնքան բարկացաւ Ա͞ծ ՚ի վ͞ր ամբարտաւանութեան նր՝, մինչ դեռ ՚ի վ͞ր տաճարի թագաւորութեան իւրոյ, ճեմէր ՚ի բաբիլոնի խօսել ընդ նմա թագաւորին և ասէ, ոչ այս մեծ, բաբիլոնէ, զոր ես շինեցի ՚ի տուն թագաւորութեան հաստատութեան զօրութեան ՚ի պատիւ փառաց իմոց և մինչ դեռ բանն ՚ի բերան էին թագաւորին, ձայն եղև յերկնից, քեզ ասի Նաբուգոդոնոսոր արքայ, թագաւորութիւն քո անցեալ է ՚ի քէն, և ՚ի մարդկանէ հալածեսցեն զքեզ, և ընդ գազանս անապատի բնակութիւն քո · և խոտ իբրև արջառոյ, ճարակեսցեն զքեզ · և եօթն ժամանակք փոփոխեսցին ՚ի վ͞ր քո · մինչև ծանիցես թէ տէր է բարձրեալն թագաւորութեան մարդկան, և ում կամի տացէ զնա · նոյն ժամու կատարեցաւ ասէ բանն ՚ի վ͞ր Նաբուգոդոնոսորա, և ՚ի մարդկանէ հալածեցաւ, և խոտ իբրև արջառ ուտէր, և ՚ի ցօղ երկնից մարմին նորա, ներկաւ, մինչև վարսք նր՝ իբրև զառիւծուց մեծացան, և եղնգունք նր՝ իբրև թռչնոց: Ահա այսէ, ամբարտաւանութեան պտուղն, որ էր տուս մեծապլին, և հպարտութեան որ էր դլուխ օձին, յորս մատնէ, ոչ ումեք խնայէ անձին: Նոյնպէս եմուս և յորդի նր՝, Բաղդասար, յորժամ բարձրացաւ սիրտն նր՝, և ընթրիս արար, մեծամեծաց իւրոյ, և իբրև ՚ի գինիս եմուտ, հրամայեաց բերել զըսպասս արծաթոյ և ոսկւոյ, զոր եհան Նաբուգոդոնոսոր, հայրն նր՝, ՚ի տաճարէն որ յԵրուսաղէմ, զի արբցեն նոքօք, թագաւորն և մեծամեծք իւր, և հարճք, և կանայք իւր · ըմպէին զգինի, և օրհնէին զԱ͞ծս, զոսկեղէնս, և զպղնձիս, և զերկաթիս, և ըզ

փայ

փայտեղէնս, և զքարեղէնս, և զԱ՟ծս յաւխանից ոչ օր-
հնեցին, որքանէր իշխանութի հօգւոց նց: Ի նմին ժա-
մու ելին մատունք, ձեռին մարդոյ, և գրէին հանդէպ ջն-
գին, 'ի վր բռոելոյ որմոյ տաճարի թագաւորին, և թա-
գաւորն տեսանէր զթաթ ձեռինն, որ գրէր, մանէ, թե-
կեղ, փարէս, և ընդ այս զարհուրեալ թագաւորին, հաստան
գոյնք նր, և խորհուրդք նր խռովէին զնա, և օդք միջոյ
նր լուծանէին, և ծունկք նր զմիմեանս բախէին: Եւ իբրև
եհարց զԴանիէլ, և նա ասէ, արքայ Ա՟ծ բարձրեալ, ըզ
մեծութի և զթագաւորութի, և զպատիւ, և զփառս, ետ
Նաբուգոդոնոսորայ հօր քում, և 'ի մեծութենէն զոր ետ
նմա, ամ ազգք և ազինք և լեզուք զարհուրեալք դողա-
յին յերեսաց նր, զորս կամէր հարկանէր, զորս կամէր ըս-
պանանէր, և զորս կամէր ինքն բարձրացուցանէր, և զորս
կամէր ինքն խոնարհեցուցանէր. և յորժամ բարձրացաւ սիր-
տն նր, և ոգի նր զօրացաւ յամբարտաւանութիւն անկաւ յա-
թոռոյ թագաւորութե իւրոյ, և պատիւն բարձաւ 'ի նր-
մանէ. և 'ի մարդկանէ հալածեցաւ, և սիրտ ընդ գազանս
տուաւ նմա, և ընդ ցիռս բնակութի նր, և խոտ իբրև ար-
ջառոյ ջամբէին նմա, և 'ի ցօղոյ երկնից ներկաւ մարմին
նր, մինչև ծանեաւ թէ տէր բարձրեալն, թագաւորութե
մարդկան, և ում կամի տացէ զնա: Եւ արդ դու որդի նր
Բաղտասար ոչ խոնարհեցուցեր զսիրտ քո առաջի Ա՟յ.
ուստի զայդ ամ գիտէիր, և ընդդէմ Ա՟յ երկնից հպարտա-
ցար. վն այնորիկ յերեսաց նր առաքեցաւ թաթ ձեռինն
և զգիրդ զայդ գրեաց: Եւ այս է մեկնութի բանիդ մա-
նէ, չափեաց Ա՟ծ զթագաւորութի քո և վախճանեաց զնա.
թեկեղ, կշռեցաւ 'ի կշիռս, և գտաւ պակասեալ. փարէս
բաժանեցաւ թագաւորութի քո, և տուաւ մարաց, և պար-
սից: Նոյնպէս և արքայն Նաբուգոդոնոսոր, նինվէի մեծի
այնքան հպարտացաւ և ամբարտաւանեցաւ, 'ի սրտի իւ-
րում, մինչ զի հրաման եհան, 'ի ձեռն հողեփեռնեայ,
պաշտել զԱ՟ծըս յամ երկրի. զի միայն Նաբուգոդոնոսոր,

պաշ

պաշտօն տալոյն, որ ազգք և ազինք և կարդասցեն զնա Աճ: Եւ տուոց հոգեմփեռնէս յամբարշտութեանն ՚ի սրտի իւրում, ոչ է Աճ բայց ՚ի Նաբուգոդոնոսորայ, նա առաքէ զզօրութիւն իւր, և տապալէ զնա յերեսաց յերկրէ, և ոչ փրկէ զնա Աճն նց: Այլ մեք ծառայք նր փրկեմք զնա իբրև զայր մի, և ոչ կարասցեն կեալ, ընդդէմ հեծելազօր երիվարաց մերոց, և ջնջեսցուք զնա նոքօք և զլերինս նց արբուցանեմք յարենէ նց, և դաշտք նց լցցին դիակամբք նց, և ոչ ևս կարիցեն կեալ առաջի մր, այլ կորընչելով կորիցեն: Եւ այլ ևս բանիւք բազմօք զամբարտաւանս բարբառէին, հոլեմփեռնէս, և ամ՝ զօրք իւր, և Աճն տառածոյ, այնքան սրտմտութեամբ բարկացաւ, զօրաւորին, և ամ՝ զօրաց նր, մինչ զի ՚ի ձեռն միոյ անզօրի կնոջ, իշխանին երանելւոյ, յուդիթայի, հատաւ գլուխ նր. և ամ՝ զօրք նր մնզապարտ զամ՝ զկահս իւրեանց ՚ի բաց թողեալ փախեան ընդ զարմացման երանելւոյն մկալեւի, թէ զի արդ՝ մին զհազարս հալածեսցէ, և կամ՝ երկուք զբիւրս շարժեսցեն, Արդ՝ զարմացումս այս, թուի թէ յաղագս արուայնէ, և ոչ իգականայն. այլ զարմանագործութես որ ՚ի ձեռն թալտոյն և անարգ կնոջ միոյ, գործեցաւ այրւոյ, խորտակելն հպարտագոյն զամբարտաւանն, այս ոչքան զարմանալագոյն ոմ և առ հաւանն ամբարիշտ, նոյնպէս գործեցաւ, յորժամ բարձրացոյց զինքն քան զամ՝ նախարարս իւր և հրամայեաց երկրպագանել ամենեցուն, այլ մուրթէ վճռի հրեայէր, և Աճ ապաշտ, ոչ եպարտ նմա երկիր, իբրև լուծազայն համան բարկացեալ պատրաստեաց մահ ամ՝ հրեից ՚ի միում՝ աւուր և զմուրթէ կախել զիայուն. այլ այնքան բարկացեալ սրտմտութեամբ ուէր ՚ի վերայ ամբարտաւանութե նր, մինչ զի թակարդն զոր յաղագս մուրթէի պատրաստեալ էր, հանդերձ իւրեամբ և անձամբ իւրով լցաւ, և ազգաւ, և ազգատոհմաւ իւրով, ոմ և պատուի եղծերաւ: Այսպէս և անախորժս, այնքան հպարտացեալ ամբարտաւանեցաւ, մինչ զի իբրև զԱճ երևիւր յաչս իւր, զոր իբրև զգազան

կա

կառաղի դիմեալ յԵրուսաղէմ՝ քակեաց զնա, և զտաճարն Այ̄, և զնոյն՝ ըսպասս սրբութեանց, պղծոց հրամայեաց տալ. և այնքան հպարտացեալ էր, մինչ զի 'ի միտս իւր համարէր զծով 'ի ցամաք փոխարկել, զոր և երանելի քահանայն Եղիազարոս, ընդ ոչ հաւանիլ անօրէն հրամանին, նահատակութեամբ եբարձ յերկրէ զբարոք անուն ժառանգեալ. նոյնպէս մայրն շամոնէ ըսքանչելի, եօթնեքումբ որդւովք ըսքանչելի, յաղագս օրինացն Այ̄, չարաչար տանջեալ զրաւեաց 'ի կենաց, որոց յիշատակն օրհնութբ̄ եղիցի: Իսկ ամենակալ բարձրեալ Տր̄ Ա̄ծն իսրաէլի, եհար զնա աներևոյթ հարուածովք. այն ինչ նր̄ բանք 'ի բերան լինէին, ցաւք սաստիկք և անճարինք ըսկերաց 'ի վր̄ հասանէին, և դառնութն խիթք 'ի փորն անկանէին: Այլ յիրաւունս զի որ բազում նորանոր չարաչար ցաւս յայլոց մարմինս տանջանօք հասուցանէր, նոյնք սաստկութն զնովաւ անկեալ պաշարեալ պահէին. սակայն և այնպէս ոչ կասէր 'ի հպարտութենէ անտի, այլ առաւել բորբոք իւր, յամբարտաւանութն բարկութբ̄, մինչ դէպ եղև նմա անկանիլ 'ի կառաց անտի, մինչ դեռ դայր նա տագնապաւ, անդ անկանէր 'ի չարաչար տանջանս, զի ա̄մ ոսկերքն առ հասարակ, խորտակէին, և այն որ այն ինչ կամէր 'ի վր̄ ալեաց ծովու սաստել, վս̄ անօրէն հպարտութե̄ն. և զվերին լերանցն, ներքին առնել, և զներքինն վերին առնել, զնա ինքն յերկիր հեղեալ շալակաւ, շրջեցուցանէին. յայտնապէս Այ̄ զօրութեն̄ց, երևելոց մինչև յաչաց անտի անօրինին եռանդն որդանց բղխեալ սպառբէլ, և կենդանութբ̄ իւրով, ախտից ցաւոց, զանգամն 'ի միսեանց յօշել, և 'ի նեխոյ հոտոյ, զօրացն ա̄մ նեղիլ տագնապաւ: Եւ որ յառաջն հպարտացեալ մտօք զաստեղս երկնից ամփոփել համարէր, այր անդր շրջշրջել ոչ ոք կարէր, վս̄ նեխութե հոտոյն, տագնապի. յայսմ վայրի ըսկսաւ բեկանիլ հպարտ, և յամբարտաւան խստութենէ անտի և 'ի միտս իւր իջանիլ առ տանջանացն Այ̄, միով միով ցաւովք

'ի

՚ի վ՛ր հալեալ մարմնոցն զպղրացելոց։ Օ՜ ինքն իսկ ոչ կա-
րէր ժոյժ ունել ՚ի ներքոյ հոտոյ անտի, բուկաւ այսպէս
խօսել, պարտ և պատշաճ է, հնազանդ լինել ա՛ն Ա՛յ, և
մի ՚ի մարմինս մահկանացուս Ա՛ծայերալ օրինակ բարձրա-
նալ։ Եւ մարդախողողն անօրէն և հայհոյիչն զայս օրինակ
անկեալ կործանեալ սատակամահ լինիւր, ստար լերինս չա-
րաչար տանջանօք, զոր ընդ այլս անցոյց, կարծ՛իւր ՚ի կե-
նաց անտի։ Տեսանես ով աշնուականն մարդ պատուական,
թէ ո՛ւր տարեալ եհան, զհպարտն զայս ամբարտաւանն, քան-
զի արդար դատաստանաւն Ա՛յ, այնքան ընկղմեցաւ, մինչ
զի անտանելի թագաւորութիւն իւր, ոչ ինքեան օգնեաց,
որ էբրև Ա՛ծս երևիւր յաչս իւր, և այնպէս ցուցանէր սե-
սոլոյն զանձն իւր, այնչափ ամբարտաւանութիւն, այնքան
տառապանս և թշուառութի անկաւ, մինչ զի ոչինչ ու-
նէր օգնութիւն գտաւ, քանզի ՚ի ձեռս Ա՛յ անկաւ. որ ամ-
բարտաւանից հակառակն կայ. ըստ առաքելոյ, ահ մեծ է
անկանել ՚ի ձեռս Ա՛յ կենդանւոյ, զի ոչ ումեք խնայէ,
ոչ ՚ի Ս՛բս, և ոչ ՚ի մեղաւորս, ոչ ՚ի հրեղէն, և ոչ ՚ի հո-
ղէնս. զի բնութիւնք, թոյն օձին, յորս հասանէ, մահացու-
ցանէ, ոչ ՚ի մարդ խնայէ, ոչ ՚ի գազանս ոչ յանասունս, և
ոչ ՚ի թռչունս, թոյնէ հպարտութիւն, զի ոչ խնայեաց ՚ի
թռչունս որ ՚ի բարձրութենէն ՚ի վայր թափեաց, և մահա-
ցոյց, այսինքն զարմանալի ձայն, որք լթռուցեալ աղաղակէին,
և ասէին քաղցրաձայն եղանակաւ, ոմանք աթոռ քո Ա՛ծ
յաւիտեանս յաւիտենից, ոմանք օրհնեալ է փառք տ՛ն,
ոմանք Ս՛բ Ս՛բ, Ս՛բ տ՛ր զօրութեանց. ոմանք արքայութիւն քո
արքայութի յաւիտենից, և ոմանք զփառս ՚ի բարձունս։
Եւ այլք զայս ինչ զոր ինչ անկնէ. և այսպէս անպատմե-
լի, ուրախութք, և յարաշուարձ բերկրութք թռչելով
գոչէին, և զօրհնութիւն տ՛ն երգէին։ Ա՛յլ յորժամ մահա-
բերս ն՛յս, թոյն ժամանեցաւ առ նս, յիւրաքանչիւր դասս,
նոյն ժամայն թօթափեաց զնս, և անկան մեռեալք հող-
ւով։ Նոյնպէս և ՚ի մարդն ոչ խնայեաց, այլ երկրորդական

մա

մահուամբ մահացոյց զնա, և ձգեաց 'ի փառաւէնցաղ վայելչութեանցն, և զորդիսն իւր ընդ նմա ուսանի տարածանէ մինչև 'ի վաղճան. սոյնպէս և անաստուծք և գազանք, որ նոքօք 'ի ջուրս ջրհեղեղին կորեան. և զայս թոյնս տրին և ըստեղծիչն թափեաց, 'ի բնութենէս, և ապա ապրեցան թունաւորեալքն. զի Է չարչարիլ գլխոյն խոնարհութիւն իւրով, յորժամ անկաւ 'ի ծունկս աշակերտացն և լուաց զոտս նոց, որ ծայրագոյն խոնարհութի, ընդդէմ հպարտութեան եզոյց. ապա ապրեցան, որք նր վիճակաց սակի էին. զի ներհակաւն զներհակն արտահանեաց, և ապա ընդդէմ աստեղայն կնքեաց, ըստ հոգայ, զի մի ևս անկցին, թունաւն մահացուցչաւ, քանզի մինչև ցայնժամ սորեալ անկանէին. այլ յորժամ անձառելի խոնարհութի, 'ի խաչն բարձրացաւ, կնքեաց, և զ կասկած անկմանն եբարձ, զի ոչ ինքն 'ի խաչին, նոյնպէս և նոքա յաստիճանս իւրեանց բեռացին. սոյնպէս և զմարդն ապրեցոյց, 'ի թունէս յայսմանէ, որ գլուխ եղև բոլորեցունց. այսուհետև որքան գլլուխն այն մահացուցանէ, գլուխս այս կեցուցանէ, զի ներհակաւն զներհակն արտահանէ. զի ներհակնէ ապականիչ ներհակին, ըստ արիստոտէլի, որ 'ի մէթաֆիզիկայն:

Ով թէպէտ զօրաւորագոյնէ գլուխս այս, թունիւն մահեցուցչաւ, սակայն թուլագոյն ևս է, խոնարհութի ջախջախումն, զի սակաւ մի խոնարհութի ուժգնակի ջախջաղէ. խոնարհութիւն այնու, որ 'ի ներքս ինքեանէ, ըստ այնմ' խոնարհութի քո 'ի միջի քումէ', քանզի յորժամ ոք հայի յինքն, և մտայխոհ լինի, յանցելոյն 'ի ներկայէն, և յապառնոյն, որ 'ի գարշագոյն սերմանէ է, և 'ի փորն որ զի է յաղբիւսի, և յապառնին կերակուր լինիլ որդանց. և լինիլն շարաւ, և գարշատեղմ, և համանիլ ընդ յուդաւն և զայլս այսպիսիս, դիւրաւ և վաղվաղակի, խորտակի գլլուխն այն թունալիր, վա այնորիկ և Ածն յամի պատուիրեաց Մովսեսի, հայեաց 'ի քեզ զուցէ մոռանայցես զՔ քեզ, և քև Տր Ածն քո քանզի զոր օրինակ նմ իմաստայ-

եզ

եղցք հայելով յարարածս, 'ի խոկումն փութացն արարչին, նոյնպէս և մարդ յորժամ հայիցի յինքն, և մանրամասնաբար քննեսցէ զինքն, ոչ զարարիչն իւր մոռանայ հպարտութբ, և ոչ զխոնարհութիւն իւր, ամբարտաւանութբ, այլ որքան յաւելու 'ի խոկումն, այնքան յաւելու 'ի խոնարհութիւն. քանզի հպարտութիւն ըստ խնամս տեսութեն ցանկալ յանհասանելոյն, և մոռանալոյն նուաստութեան իւրոյ. և այսպէս ցանկացան երկրորդեան զլուխքն, երկնայնոցն և երկրայնոցս, և ոչ հայեցան յինքեանս նուաստութիւս, վա որոյ և փայլփայլակի անկան, և ոչ հայեցան 'ի բարձունս, 'ի վեր քան զինքեանս, որպ և մարգարէն յար և յաւէժ հայէր, ըստ այնմ՝ աչք իմ՝ յամ՝ ժամ՝ առ Տր են, և ելանէր յորոգայթէս յայսմանէ, ըստ այնմ՝ և նա հանէ յորոգայթէ զոտս իմ, քանզի և վէմն հաւատոյ այսպիսեաւ յորոգայթիւ ըմբռնեցաւ, յորժամ ոչ հայեցաւ 'ի նուաստութիւս իւր, այլ ապաստանաբար ասաց, թէպէտ ամենեքեան, սակայն ես ոչ գայթակղեցայց. և արագարագ յանդիմանեցաւ, թէ ոչ ամենեքին, այլ դու միայն և եթ գայթակղիցիս, և երիցս զիս ուրասցիս, մինչ 'ի հաւու խօսիլն: Բայց տես զփութ արարչին. զի որպ նա 'ի զօրութի սիրոյ արարչին կապեցաւ, նոյնպէս և Տրն, 'ի զօրութենէն սիրոյ ոչ խզեցաւ. զի թէպէտ հպարտութեան բանս բարբառեցաւ, այլ սիրոյ վարդապետին կապակցութն խօսեցաւ. վա որոյ 'ի Տնէ 'ի խօսս հաւուն ժամադրեցաւ, որպ յիշմամբն զանօրէնութիս ծանեաւ, զերիս ուրացութիս նշանամբ; և փայլփայլակի զտկարութիս իւր ծանեաւ, և զանկարութիս և զնուաստութիս ոչ մոռացաւ. այլ յօժարութբ առ Տր առժամայն հայեցաւ. զի որպ սա ժամադրեցաւ 'ի նա, նոյնպէս և զթածն 'ի սա հայեցաւ; և առժամայն աղաղակեաց օգնեա ինձ Տր Յս, որպ 'ի սուզմանէ ծովուն, որ կամէր ընկղմիլ. և նոյն Տրն որպ 'ի ծովուն, և աստ ես ձգեաց զձեռս, նախախնամութբ իւրոյ և կալաւ զնա, 'ի սաստիկ ալէկոծութենէն, զի մի ընկղմի

մեղի, և նա եղեւ յալեաց ծովուն յայնմանէ, ելաց դառնապէս, յիշելով զիւր նուաստութիւն, և զանկարութիւն, և զարարչին իւրոյ զնախախնամութիւն, և զձեռնկալութիւն։ Նոյնպէս և երջանիկն ՚ի մարգարէս, յորժամ ոչ հայեցաւ ՚ի նուաստութիւն իւր, և նայեաց ՚ի գերազանցութիւն արարչին իւր, և պահպանութիւն նորա, այլ ասաց ես ասացի ՚ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան։ Իսկ և իբր հեռացեալ բարձաւ նախախնամութիւն արարչին, և անկաւ ՚ի թակարդս փորձչին, և աղաղակեաց հանդոյն Պետրոսի, դարձուցեր զերեսս քո յինէն և ես եղէ խռովեալ, զինչ օգուտ քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութիւն, մի թէ խոստովան եղիցի առ քեզ, և կամ պատմեսցէ զճշմարտութիւն քո, քանզի որդն եմ, և ոչ եմ մարդ, և այսպիսի խոստովանութեամբ լուաց զամ գիշեր ըզ մահիճս իւր, և արտասուօք զանկողինս իւր ելթաց. և ապա ըստ Պետրոսի, հայեցաւ տր ՚ի նա, և ողորմեցաւ, և եղև նմա օգնական, և է հան ՚ի գբոյ տառապանաց. քանզի որպէս երջանիկն գլուխ առաքելոց եմուտ ՚ի խոր գուբ, և ելաց դառնապէս, մինչև ողորմեցաւ նմա տր, և ե հան ՚ի գբոյն, յորժամ եւ ՚ի գբոյ գերեզմանէն, կալեալ ձեռանէն, ձեռն, աջն, և բազուկն հօր, որպէս ՚ի ծովակին, նոյնպէս և զնա ե հան, ՚ի գբոյն տառապանաց, ուր եկեր ըզ մոխիր որպէս զհաց, և զարտասուս իւր էարբ իբրև զմպելի։ Տես որ բաղձալի, թէ որպէս դառնագոյն, թանօք լցեալ գլուխս այս. որ առժամայն մահացուցանէ զհոգիս ը հարկանէլն։ Օ՜ի եթէ զերջանիկս զայսոսիկ, որք յԱՅ էին մեծարեալք, և բարդաւաճեալք, ընտրեալ և մեծարեալ, ոչ խնայեաց մահաբեր թոյնս այս, ապա մեք զի՞ արդ կարասցուք, զերծանել. վս որոյ որպէս նոքա աղաղակաւ փրկեցան, նոյնպէս և մեք արտասուօք պաշեսցուք, զի աղաղակաւ փրկեսցուք. յաղագս այսորիկ պարտիմք, ցանկ, հայել ՚ի նուաստութիւն մեր, և նայել ՚ի գերազանցութիւնն ԱՅ, ըստ Ածարանից, որքան յառաջանամ ՚ի ճանաչումն քո, այնքան

յա

յառաջանաս 'ի ճանաչումն Այ, և յորժամ այսպիսի ճանաչմամբ ճանաչեսցուք զնուաստութիւս մեր, և զգերազանցութիւն Այ, անկարծաբար խոնարհիմք, և տարագրեալ լինի հպարտութիւն, ըստ այնմ՝ յիրաւի խոնարհեցուցիր զիս: Քանզի և սա ևս սահմանի այսպէս, խոնարհութիւնէ 'ի նկատմանէ իւրոյ տկարութեան, և գերազանցութեան և անճառ փառացն Այ, կամաւ խոնարհումն առաջի բարերարողին իւրոյ, մտօք իւրովք, քանզի բնութիւն յորժամ կամիցի ոք հայել 'ի լոյս արեգական, չափէ զտկարութիւն տեսութեան իւրոյ, և անյաղթելի գերազանց լոյս արեգական, որքան կարող իցէ տանել. այնքան մերձենայ 'ի տեսութիւն, և խոնարհի 'ի չափաւորութիւն, ապա թէ յանդգնի ապարասանաբար, և ձգանի յանչափն, 'ի տեսականն ևս զրկեալ անկանի: Արդ ասա ինձ ով սիրելի, որո՞յ արդեօք մեղադրեսցուք, արեգակն. եթէ նայեցողին, և թուի թէ բանականագոյնդ. ոչ արեգականն, այլ նայեցողին մեղադրեսցես, զի միտք ոչ նկատեաց զնորայն գերազանցութիւն և զկանն իւրոյ տկարութեան, վ͞ն այնորիկ յանչափն ձգեացաւ, և խաւարեցաւ: Այսպէս գոգցես և ինձ զանիմանալին զարեգակն, և զանճառելին գերազանցութիւն և իմանալի հոգի և միտք, եթէ հրեղինացն, և եթէ հոգեղինաց, յորժամ զինքն ոչ քննեսցէ, և կշռեսցէ և խոնարհեցուսցէ զինքն առաջի բարերարողին, իւրոյ, և զչափ նուաստութեան իւրոյ պահեսցէ, այլ ապարասանաբար ընդվզեսցէ, ընդդէմ գերազանց և անճառելի լուսոյն, փաղփաղակի խաւարի և կուրանայ, միտքն և հոգին, և զայնմանէ զոր ունէրն, զրկի, և պակասի, և խաւարեալ ոչ 'ի մէջ հասու լինի նմա. վ͞ն այնմ թէ խաւարն ոչ եղև հասու: Այսպէս եղև 'ի հրեղէնսն, որք ոչ միայն բովանդակութեան ն͞ր, ցանկացան տեսութիւն, այլ և յափշտակել ևս կամեցան, արդ՝ կարի զարմանամ անմտութեան այնմիկ, որ կամիցի յափշտակել զլոյս արեգական 'ի նուաստագոյն յակն իւր. ո՞վ դու՝ եթէ հայելդ միայն, կուրութիւն և խաւարն ածէ քեզ, և

դու

դաւանեցեալ լուսոյդ զօրէն։ Իսկ բովանդակն 'ի քեզ սա-
նել զի միով արդեօք կարողասցես․ յաղագս այսորիկ ազգն
լուսոյ, այնքան անմատչելի կորեան խաւարեալք․ ԶԻ այնմ
խաւարեցան անմտութեամբ սրտիք նոցա, զանձինս առ իմաս-
տունս ունէին յիմարեցան․ և կատարի բանն ԱՆ 'ի ՆԱ, թէ
որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են․ քան զորդիս
լուսոյ յաղագս ուրեանց․ Հիմ; և կամ ԸԷր, զի ուրա միշտ և
յաւէտ կշռեն զչափս ուրեանց և ըստ չափ բաւականին 'ի սե-
սուն լուսոյ արեգականն և յանչափոյն ծն անդր 'ի բաց հեռա-
նան․ քանզի գիտեն իսկապէս թէ կուրանան 'ի տեսանելն զնմա
այլ որդիքն լուսոյ, զայս ոչ յիշեցին, և ոչ մտախոհ եղեն, թէ
կամելն մեր յափշտակել զգերագանցութեն ԱՅ կուրանամք և
խաւարիմք․ զի թէ ցանկանային տեսանել Զ աչօք ՅՆ տես-
ցելումն, և ոչ կարէին հասանել ցանկութեանն իւրեանց։ Իսկ
բովանդակին՝ Հիմ արդեօք և ոչնա լինիլ իբրև զնա, ԱԾ,
բարեգծից, արարիչ, եացուցիչ և գոյացուցիչ։ Ո՞ր որի-
նակ մարդ ոք կամիցի լինիլ արեգակն, որդ՝ որքան յիմարա-
գոյն գոգցես պոյապխուխս, հայել միայն բովանդակ զլոյս իւր
կարոյս, իսկ թէ կամիցի լինիլ իբրև զԱԾ որքան անկարելի։
Այսպիսի անմտութեամբ զարծեցաւ յաղագս լուսոյ, որք Է
աչօք տեսութեանն, ոչ հանդուրժէին, կամեցան լինել իբրև
զԱՆ, վՆ որոյ և անկան խաւարեալք։ Այնպէս և Նախա-
տեղծքն, յորժամ բանսարկուն խաբէութ պատրեաց ոչ
հայեցան յինքեանս և յարարածական բնութիւն իւրեանց,
այլ կամեցան Ածանալ, վԱ որոյ և 'ի գերագոյնէն կործա-
նեալք խաւարեցան։ Նոյնպէս և Հերովդէս, յորժամ բարձ-
րացոյց զսիրտ իւր, 'ի վԱ գիտութեան ԱՅ, և յանձն իւր
իբրև զԱծս երևիւր․ յաւուր միում յերևելւոջ, հեր-
ովդէս զգեցեալէր զհանդերձ թագաւորութեն, և նստէր
յատենի, և խօսէր ընդ ՆԱ հրապարակաւ, և ամբոխն աղա-
ղակէր․ ԱՅ բարբառ է և ոչ մարդոյ․ և անդէն էհար զնա
հրեշտակ ՏՆ փոխանակ զի ոչ ետ փառս ԱՅ, և եղեալ որդ-
նալից։ Այլ որ միտս ունի պարտի յԱմ ժամ, մանաւանդ

յական քթթել, յինքն և յանձն իւր հայել, և յամենա-
կէս իւր, յանցեալն, 'ի ներկայն և յապառնին, թէ ուստի
եկեալ է, և ուր է, և զինչ գտանիցէ, զի հողէ, և 'ի
հողոյ յառաջ եկեալ, ըստ այնմ՝ հող էիր և հող դարձցիս.
և թէ ստեղծ Տր Ա.ծ զմարդն հող յերկրէ, և Աբրա-
համ՝ ասաց, այլ ես հողեմ և մոխիր. և մարգարէն ասաց.
մի թէ հող խոստովան առնի առ քեզ, և դարձեալ յիշեաց
թէ հողեմք. և թէ և մեք ես յիշեսցուք թէ հողեմք և
'ի հողոյ գոյացեալ, պարտիմք այնքան խոնարհիլ մտօք մե-
րովք մինչ զի լինիլ կոխան յոտի զի այսէ բնութիւն հողոյ,
որ լինի կոխան յոտի, և ոչ բարձրանալ մտօք, զի մի անկ-
ցի, որպէս յիշեցեալքն, որք բարձրացան և անկան յան-
դունդս խորս իբրև զկապարս 'ի ջուրս սաստիկս: Իսկ զներկայն
ես պարտիմք մտախոհ լինիլ թէ ուրեմք, զի հպարտութբ̃
և ամբարտաւանութբ̃, զգեցաք զպատկեր սատանայի, 'ի
բաց մերկանալով զպատկերս արարչին. որ հեղնէ յոտի, ո̃ղ
բարբառեցին երջանիկքն 'ի Տ̃ոցին, արա առ մեզ ո̃ր ըստ
հեզութեն քում, քանզի հաստատութբ̃ զխոտէին որ մարդ-
կութիս հպարտութբ̃ և ամբարտաւանութբ̃ մերկացեալ էր,
զկերպարանս արարչին, և զհակինն զգեցեալ. վ̃ա այնորիկ
երանելիքն, ոչ այլ ինչ, այլ նորին զկերպարանաց, զգե-
ցութն խնդրէին. քանզի բնութբ̃է որոյ ոք կամակատար
լինի նմին և հետևի ծառայութբ̃, և 'ի նմանէ ճանաչի,
և զկերպարանս նր̃ զգենու. վ̃ա այնորիկ ասաց բանսար-
կուն տ̃ն, թէ այս տ̃մ ինչ ունեալ է, քանզի տ̃մքն հպար-
տութբ̃, և ամբարտաւանութբ̃ նուաճեցուցեալ էր զթա-
գաւորութիս, և զամենեսեան զորս ընդ ձեռամբ էին, ո̃ղ
աւէ թէ եցոյց զո̃մ թագաւորութիս 'ի վայր կեան ժամա-
նակիս այսինքն 'ի Տ̃ոյն մինչև ցայնժամ, որք ամենեքեան
զկերպարանս նր̃ էին զգեցեալ, և զնմանութիս նր̃ ու-
նէին, մերկացեալք հեզոյն. յաղագս այսորիկ, յիշեցին
երջանիկքն և զնորուն կերպարանաց զգեցութն խնդրեցին.
զի թուի թէ զայն զոր ասացն, արասցուք մարդ ըստ պատ-
կե-

կերի , և ըստ նմանութեան մերոյ յաղագս հեզութեն անէ , քանզի ոչինչ առաքինութի այնքան Ա՟Յ նմանեցուցանէ , որպէս խոնարհութին և հեզութին ։ Եւ ոչինչ չարուն այնքան բանսարկուին նմանեցուցանէ , որպէս հպարտութին և ամբարտաւանութին . և թուի ՚ի կատարածին սոցա անէ ոչ ձանաչեմ զձեզ ՚ի բաց կացէք յինէն տէրն , որք ունիք զկնիք գաղանին , և զդրոշմ , և զնշանն սատանայի . քանզի բնութիւ , տէր իր նշանաւ ձանաչի , որպէս և երանելի կամաւոր աղքատն Յովաննէս , յորժամ եցոյց մօր իւրոյ , զաւետարանն Ա՟Ծունակ , և ասաց ես եմ որդին քո , և նա նկատեալ ՚ի նշանն , զոր ունէր ծանեաւ , և աղէկիզութենէ զթոյն , անկաւ իբրև զմեռեալ ։ Այնպէս և ՚ի կատարածին և մանաւանդ ՚ի կենցաղումն , տէրն նշանաւ իւրով ձանաչէ զիւրսն , որպէս և առաց իւրոյն ընտրելոց , որպէս ես ձեզ արարի , որ անհասանելի խոնարհութի ցուցի , ընտրելիչս տէր , լուանալով զոտս ընտեղծուածի , ևս դուք նոյնպէս միմեանց առնիջիք , զի այսէ նշանն իմ , որ ետու ձեզ անձառելի խոնարհութիս , որ ունիցիք ՚ի ձեզ , զի սուրաւ ձանաչեցից զձեզ . զի և սոնոյ իւրովն . զի որպէս նա հըպարտութին դնէ կնիք հետևեցելոյն իւրոց , որով ձանաչէ զիւրսն և ինքն ձանաչի յիւրոցն , նոյնպէս և հեզն Ա՟Ծ խոնարհութէ կնքաւէն , և դրոշմամբն իւրով . ձանաչէ ըզ իւրսն , և ձանաչի , իւրոցն , ըստ այնմ ձանաչեմ զիմսն , և ձանաչիմ յիմոցն ։ Զի որպէս գիտէ զիս հայր , զի ՚ի բարձրութենէ յանձնա Ա՟Ծութենէ այնքան խոնարհեալ , որ ոչ գոյ տեսիլ , և ոչ ՚ի միք փառք , այլ ՚ի տեսիլս նուաղեալ քանզան որդւոց մարդկան , նոյնպէս և ես գիտեմ զհայր , որ այնքան խոնարհութի հեզացեալ , մինչ զի մարդիկ ըզ նա անարգեն , և արհամարհեն , զկուռս պաշտելով , մեղաց յանի ըստպսս տանելով խոնարհաբար տէր վրեժ առնէ . և դարձեալ հեզաբար , զհայհոյիչս քաղցրութի յինքն կոչէ թէ ոչ կամիմ զմահ մեղաւորին , արդ՝ սոքա երկոքին անձինքս զմիմեանս այսու գիտէն , նոյնպէս և որ զնոյնն ու-

նի

նի 'ի նոցանէ ծննդոցի և գրգախառն համբուրիւ, ողջագու-
րէ, որ զմանուկ որդին լուսեղինաւ պատմուճանաւ զար-
դարի, և մատանեաւ և կօշկօք, մեծ պարգև լինի, և յա-
ռաջասամն հրաւիրէ, և անձնառելի փառօք պճնազարդէ, և
իբրև զերանելի զմաքսաւորին գովեալ լինի. որ այնքան խո-
նարհութեն յաղօթսն ոչ կամէր զաչս 'ի վեր համբառնալ.
այլ կոծէր զկուրծս իւր, և լալով դառնապէս ասէր, Ա՟Ծ
քաւեա՛ զիս զմեղաւորս: Եւ թուի թէ զհակս փարիսե-
ցւոյն, և դնէր 'ի սրտի իւրում՝, որով և այնքան գովեցաւ
'ի տ՟նէ, զի փարիսեցին ամբարձեղջիւր ասէր զոհանամ՝
զքեզ, իսկ երանելին վայ ասէր անձինն. նա ասէր ոչեմ
իբրև զայլս 'ի մարդկանէ, զզօղս զյափշտակօղս, և զանիրաւս,
և զշունս, և կամ՝ իբրև զայս մաքսաւոր՝ և երջանիկն այն ա-
սէր, ոչեմ՝ իբրև զայլս 'ի մարդկանէ, զարդարս, զխոհեմս,
և զիրաւադատս, և զողջախոհս, և կամ՝ իբրև զայս փարի-
սեցի: Նա ասէր պահեմ՝ երկիցս 'ի շաբաթու, և տամ՝ տա-
սանորդս ա՟մ՝ ըստացուածոց իմոց, և երջանիկն ասէր, ոչ
երբէք պահեցի զպատուիրանս քո, և կամ՝ ետու զոր ինչ
արժանն պատուիրեալ էիր ինձ: Եւ այսպէս երկաքեանս,
զոր ինչ ամբարտաւանութ՟ե և խոնարհութ՟ե խոստովանե-
ցին, և յայտնեցին, զամէն կորուսին, մինն ամբարտաւա-
նութ՟ե զառաքինութիս, իսկ միւսյն խոնարհութ՟ե զյան-
ցանս, և երկաքեանս այսոքիկ, զոր ինչ ունէին կորուսին,
և մերկ և թափուր 'ի տաճարէ անտի ելին, մինն յառաքի-
նութենէն մերկացեալ, իսկ միւսն 'ի մեղացն, և յանցա-
նացն մինն սևաթոյր, և զարշատեսակ իբրև զագռաւ մը-
տեալ, իբրև զձիւն փառաւորագեղեաց բոլորակայեալ գե-
ղեցկութ՟ե եղեալ: Իսկ միւսն իբրև զաղաւնի բոլորակ, և
ցանկալի մնեալ, իբրև զագռաւ սևաթոյր, և զարշատեսակ
նսեմութ՟ե պարաւանդեալ եղեալ, մինն բարձրացեալ ա-
ռաքինութ՟ե, անկեալ և փշրեալ: Իսկ միւսն յանդունդս
դժոխոյն, իբրև զվէմ 'ի ծովու ընկղմեալ, և շրջանք գե-
տոց զնա պաշարեալ, այսինքն մեղաց և յանօրէնութ՟եց,
'ի

՚ի տեղի նո՟ ՚ի բարձունս բնակեալ, և վերացեալ և բարձ-րացեալ. մինն ասպնջական, և օթևան և տեղի, և բնա-կարան, մերկ և թափուր լեալ, իսկ միւսն սատանայի և դիւաց նո՟, տեղի, և օթարան և բնակարան յայնմանէ մեր-կացեալ. սա զնորայն, և նա զսորայն, հակառակ ըն-կալեալ. ամբարտաւանութիւն, և խոնարհութիւն, վ՟ա այսո-րիկ ոչ սխալեցաւ որ սատան, մի ամբարտաւանիք, այլ ե՟ խոնարհս զիջանիցիք, և թէ մի համբառնայք ՚ի բարձունս զեղջիւրս ձեր. զի ա՟ծ է որ հակառակ կայ ամբարտաւանից և տայ շնորհս խոնարհաց, քանզի և բնութիւն ևս զայս ուսուցանէ, զի հովիտք, ջրալից լինին, և բարձունքն ցա-մաքին, ցօղն իջեալ ՚ի հովիտս դաշտաց: Իսկ բարձրացեալն անխնայ ջրանան, հովիտք պտղաբերին, ըստ այնմ՝ հո-վիտք բազում արասցեն ցորեան: Իսկ բարձունքն չորանան և գօսանան հովտաց ջուրք աղբիւրանան, իսկ ՚ի բարձանց ջուրք ցամաքանան, ըստ այնմ՝ հարաւ ո՟չ խառ և ցամաքե-ցաւ սիրտ իմ. և ամ՟ բոլոր բնութիւն ՚ի բարձանց հոսի, և ՚ի հովիտս զետեղի: Նա ա՟ծ որ բոլոր է բնութիւն որ ըստեղ-ծուածովք. իմաստասէրն, որք բոլորեն ըստ բնութիւն. զի յերկնից մինչ ՚ի կէտ երկրի, ամ՟ ինչ բոլորով պարագակի. զի աստեղայնք երկինք ՚ի կապուտակէն. և եօթն մոլորակք ՚ի նոյունց և ՚ի միմեանց, և օդ ՚ի հրոյ, և ջուր ՚ի օդոյ, և հող ՚ի ջրոյ, և այսպէս ամ՟ ինչ միմեանք բոլորեալք և պարագրեալք, նոյնպէս և յայնմ՝ կողմ՝ դասաւորութիւնք հրեշտակաց միմեանց բոլորեալք, և պարագրեալք, և ամ՟ էութիւնք յԱ՟ծական պետականէն. վ՟ա այսորիկ ամենեքեան ՚ի նմանէ բոլորեալ և պարագրեալ, և ինքն ոչ ՚ի մէք, յու-մեքէ: Նա արդ բոլորս այս ՚ի խոնարհս սլանայ, ըստ այնմ՝ ես և հայր իմ, առ նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք, և թէ ես յո՞ հանգեայց, եթէ ոչ ՚ի հեզս և ՚ի խոնարհս, ո՟չ ասացաւ, թէ բնութիւնք բոլորի, զի ՚ի բար-ձունս ոչ հանգչի, նոյնպէս և բնութիւնք Ա՟ծութեան զի հպարտս և յամբարտաւանս որք բարձրացուցանեն զս

և զմիտս իւրեանց, ոչ հանգչի 'ի նոսա, և ոչ 'ի պատարագս, և ոչ 'ի զոհս նց, վն զի պատարագ Ի.Ճ. հոգի խոնարհ ասաց, որ ասացն վն այսորիկ ասաց, մինչ Ի.Ճ պատարագ օրհնութե, զի հատուցի, 'ի հաս անուշութե որոյ մատուցանես զպատարագդ օրհնութեան: Իրդ պատարագ անմահ զենումն այսպէս յորմէ հաղորդիմք 'ի պատուական մարմնոյ և յարենէ որդւոյն Ի.Ճ. որ մեծատունն էր վն մեր աղքատացաւ: Իրդ աղքատս այս, յորժամ մեծարես 'ի տուն քո հպարտութբ, և ամբարտաւանութբ, այնպէս գոգցես զի ըստ նմանութե նախագոգոնոսրայ արկանես զորդին Ի.Ճ, 'ի ծնոց հրոյն առ 'ի այրել. զի աղքատս այս, յորժամ 'ի միջի քում բնակելով, ճնշակմամբ յանմահական խորհրդոյս, սնեանիցէ զքեզ ոչ ըստ նմանութե խոնարհութե իւրոյ այլ ամբարտաւանութբ ըն նմանութե բանսարկութն զգեցեալ, այլ և խորամի 'ի միջի քում, ըստ այնմ յամբարտաւանիլ ամբարշտին, այլ աղքատն, զի աղքատըս այս է ինքն Բն, որ զկերպարանս ծառայի զգեցաւ, և վն մեր աղքատացաւ որդ և ասէ 'ի գլխոյս տն, ես աղքատ և տնանկեմ ես, և թէ աղքատացաւ 'ի տկարութենէ զօրութե իմ. զօրութիւն Ի.Ճ, է բանն Ի.Ծ, ըստ առաքելոյ, զԲն Ի.Ճ զօրութի, և Ի.Ճ իմաստութի: Զայս 'ի գլխոյս հօր ասէ աղքատացաւ 'ի տկարութենէ զօրութի իմ. և ինքն մարգարէն յիւրոց գլխոց ասէ, երանի որ խորհի զաղքատն և զտնանկն, և զայս ինքն յաղագս Բնի ասէ, զի թէ վն այլոյեր բարբառս այս, զբազմաւորական ասէր և ոչ զեզական, որդ տրն ասաց երանի աղքատաց հոգւով. այլ եզակար ասելս յայս առնէ թէ յաղքատս այս Բնէ, բացատրութիւս, և յորժամ ճնշակոյս, յանմահականս խորհրդոյ հպարտութբ և ամբարտաւանութբ, այլէ զաղքատս, զայս 'ի ծնոցի իւրում. բարկութբ բորբոքացուցանէ զհայր սորա 'ի վր ինքեան, ըստ այնմ բարկա[illegible]ց ամբարիշտն զՏ.Ծ. յայնժամ խոկ և խոկ խորաւէ ըզ[illegible]կ այսպիսույ, ըստ այնմ խորտակեցի բազուկ մեղաւորի

որի, և չարի, խնդրեսցեն մեղք նր՟ և նա մի գտցի, և կո-
րիցէ յերկրէ զայսպիսի մեղաւոր, ըստ այնմ՝ պահանջեսցին
յերկրէ մեղաւոր, ամբարիշտ, մի ևս գտցի ՚ի նմա. ընդէ՞ր՝
զի բարձեալ են առէ խրատունք յերեսաց նր՟. զի տեսանէ ըզ
ըստեղծօղն իւր. այնքան խոնարհեալ, մինչ զի զոտս աշա-
կերտացն լուացեալ, և սպաս և պաշտօնն ից տարեալ. ը՟ այնմ
ո՞վ է մեծ, բազմականն, եթէ ըսպասաւորն, ոչ ապաքէն բազմականն.
այլ եսեմ ՚ի միջի ձերում, իբրև ըսպասաւոր մի, և թէ
ուսարուք յինէն, զի ես հեզ եմ, և խոնարհ սրտիւք: Արդ՝
եթէ արարիչն քո և ըստեղծիչ այսպէս, և դու հողդ և ա-
րարած, ո՞չ իրաւունս վարկանես լինել նման նմա, հեզ,
և խոնարհ սրտիւք: Նաև որոյ յորժամ դու զայսպիսի իր-
աւունս բարձցես ՚ի սրտէ քումմէ. նոյնպէս և այնպի-
սին. բարձեալ լինի յերկրէ, զի մի տեսցէ զփառս Տ՟ն, ը՟
այնմ՝ բարձցի ամբարիշտն յերկրէ, և մի տեսցէ զփառս
Տ՟ն. քանզի երեսք տ՟ն հաստատեսցին ՚ի վերայ նորայ, առ
՚ի բառնալ զնա յերկրէ. ըստ այնմ՝ երեսք տ՟ն ՚ի վ՟ր չարա-
գործաց սատակել յերկրէ զյիշատակս նց՟: Օ՜ն ով նա զի-
րաւունս եբարձ, և ինքն ևս բարձեալ եղև, վ՟ն այսորիկ
ասաց երջանիկն. դու զժողովուրդս խոնարհս կեցուցանես,
և զաչս ամբարտաւանից դու խոնարհեցուցանես: Դու տես
զայս. ՚ի հրեղէնս, և ՚ի հողեղէնս, զի հրեղէնքն որ ՚ի ծայրս
և ՚ի գլուխ ըստեղծուածոց կային ամբարտաւանութ՟բ այն-
քան անկան. և սատանայ գլորեցան. մինչ զի սանդարամետք
եղեն և ՚ի միւս ծայրն զետեղեցան: Իսկ միւս ծայրիցն,
որ յետինքն էր, ՚ի ըստեղծուածոյս մարդն այնքան բարձրա-
ցաւ մինչ զի անճառելի ած՟ութեն հաղորդեցաւ և ընդ աջմէ ամէն
որչեալ ա՟բ երրորդութեն նստաւ. ը՟ այնմ՝ կացցէ դշխոյ ըն-
դաջմէ քումմէ. զերանուհին ասեմ, և զսրբուհի մայրն Տ՟ն.
երիցս երանեալն Մարիամ, զի սա ասէր յերգս իւր կուսա-
կան, զխոնարհս բարձրացոյց, որ ասէր զի հայեցաւ ՚ի խո-
նարհութի աղախնոյ իւրոյ, և միւսն ասէր, յամբարտաւա-
նիլ իւրում, եղից զաթոռ իմ յամպս, և եղէց նման

բար

բարձրելոյն: Սա այսպէս բարբառելովն, խոնարհեցաւ և սանդարամետս անուանեցաւ: Իսկ նա այնպէս բարբառելովն, մայր Ա̃Յ կոչեցաւ, և անտանելին յելս, յորովայնի ստացաւ, և ընդ աջմէ Ա̃Յ նստաւ: և յորմէ եղականաց երկրպագեցաւ. և ընդ ամենայնիւ երրորդութենն փառաւորեցաւ: Եւ վ̃ այսօրիկ աւեր գործեալ, յերգս իւր երանուհին թէ զխոնարհս բարձրացոյց. և զմեծամեծս արձակեաց ունայնս. և թէ այց արար 'ի վ̃ խոնարհութեան աղախնոյ իւրոյ: Տեսանես արդեօք երկնայնոցս խոնարհութիւն, զի որդին ըստ մարդկութեան աւեր որդին մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել, և թէ ես որդն եմ՝ և ոչ եմ մարդ՝ և մայրն աղախին զինքն ասէր. և մինն ըստ մարդկութեան, այնքան բարձրացաւ, մինչ զի յանուն Յ̃ի Ք̃ի ամ՝ ծունր կրկնել, երկնաւորաց, և երկրաւորաց, և սանդարամետականաց, և ամ լեզու խոստովան լիցի, թէ տէր Յ̃ Ք̃ որ 'ի փառս հօր, և այս վ̃ էր, վ̃ խոնարհութեն, զի խոնարհեցոյց զինքն լինել հնազանդ մահու չափ, ը̃ մարդկութեն մահու խաչի, վ̃ որոյ և Ա̃Ծ զնա, առաւել բարձրացոյց, զի ընդ աջմէ հօր նստաւ և հրեղինացն երկրպագեցաւ, կործանեալ և կախեալ լեալ, բնութիւն 'ի դիմաց: Նոյնպէս և երանուհի մայրն կենաց, զինքն աղախին ասաց, և յորմէ ազգաց երանեցաւ և զայլս ո̃ղ և առագաւ. Վ̃ այսորիկ ասեմ դու զժողովուրդս խոնարհս կեցուցանես, և զաչս ամբարտաւանից դու խոնարհեցուցանես. զի խոնարհութիւն ամբարտաւանին, ոչ լինի յԹարց, յաւելուածոյ, այլ մանաւանդ յաւելուածով, այսինքն վիրաւորութիւ, ըստ այնմ՝ դու խոնարհեցուցանես որպէս զվիրաւորս զամբարտաւանս. քանզի որքան բարձրացեալէ, այնքան յանկանիլն բեկանի, առաւելապէս, ո̃ղ խեցեղէն ինչ անօթ, որ որքան առաւել բարձրագոյն տեղւոջէ հոսի, այնքան սաստկագոյն բեկանի, և խորտակի, ո̃ղ և ասեն Ա̃ծայինք, կամիս չերկնչիլ յանկմանէ, զգոյշ լեր 'ի բարձրութենէ. զի բարձրացեալն 'ի մեծամեծ վտանգս կայ, սարսափ, սա-

տանի, գողոյ յանկանիլն՝ և երկնչել. այլ որ խոնարհն է, յայտնեալ և ոչ մի ինչ, ՚ի նմա տեսանելի. վ՟ այնորին՝ ասէր մարգարէն, բարին ինձ զի խոնարհ արարեր զիս, որ ոչ տեսանի ՚ի նմա անկումն, գլորումն և խորտակումն ինչ. այլ որ բարձրացեալն է, ՚ի հողմոյ, և յայլ ինչ հատահչակենաց, յոր և յաւէժ տասանի, զոր օրինակ ծուանախալմյք, որ ՚ի բարձրագոյն տեղիս ելանեն, այնքան վտանգս շրջին, մինչ զի ՚ի կենդանութենց, ունայն զինքեանս վարկանեն, իսկ որք ՚ի խոնարհս, ոչ մի ինչ յայնցանեաց, կրակելոց լինին. վ՟ այնորիկ բարին խոնարհութե՟ն, ըստ խրատուն էութե, զի յամի ան վտանգելի պահի. վ՟ այնորիկ ամենացանկալի Յս՟ն, որքան բարձրանայրն, այնքան խոնարհս զիջանէրն. որպէս երանելի և երջանիկն Յովհաննէս. որ զինքն այնքան անարժան համարէր, և յետնեալ յամի բազասաւորեալն ՚ի հրեշտակաց, մինչ զի ոչ իշխէր լուծանել զխրացս կօշկացն Յս՟ի. և Պետրոս մեծն հաւատոյ, և փականաւորն արքայութե՟ն ասէր ՚ի բաց գնա յինէն զի այր մեղաւորեմ՝ ես. և անօթն ընտրութե՟ն, որոյ կոչումն առաքելութե՟ն յերկնուստ եղև, և յանճառելի փառսն վերացեալ, բարձրացաւ, և լուաւ զբանս անճառս զոր ոչէ օրէն մարդոյ խօսել, այնքան խոնարհեցուցանէր զինքն, մինչ զի ոչ ումեք նմանեցուցանէր, այլ և ասէր, Յս՟ Քս՟, եկն յաշխարհ, փրկել զմեղաւորս որոց զլուխն ես իսկ եմ. վ՟ որոյ այնքան բարգաւաճեալ բարձրացաւ, մինչ զի բերան Քս՟ի անուանեցաւ, որով խօսէր ՚ի նմ, այլ և ինքն իսկ ասէր, եթէ զփորձ ինչ խնդրէք զՔս՟ի, որ խօսի ընդ ձեզ խօսի: Եւ այսպիսիք որք խոնարհութե՟ զինքեանս առն արարին, և տեղի, և օծեան, ամենայնի երրորդութե՟ն, և ապա զանմահական ճաշակս զայս ճաշակեցին. և տաղաւար հանգստեան, Ա՟ծութեան գործեցին, յորս գնայ ՚ի նս Ա՟ծ ըստ այնմ՝ եթէ բնակեցայց ՚ի նս, և գնացից ՚ի նս, և եղէց նց Ա՟ծ, և նոքա եղիցին իմ ժողովուրդ: Այլ ընդ ամբարտաւանս և հպարտս, որք թու-

նաւ

նաւորեալ քեն յօձէն, և ոչ ՚ի միջ ՚ի բաց հերուն զայն, և արտահանեն յինքեանց. Թէպէտ մերձենան և ճաշակեն, սակայն զատապարտին, զի ոչ խառնեն, զՔս հրաւիրելով, յօթևանն յայն, ուր է բազմեալ լեզեհանն, ինքն թունաւորեալ ՚ի թունից նր, և մարմինն Քի կամի խառնել ընդ թունալից մարմինն իւր: Արդ ընդ այնպիսոյն, ոչէ պարտ փոյթապիսի ճաշակս ճաշակել. զի մարգարէն և առաքեալ գրջեն թէ այնպիսիքնեն թունաւորեալք, ոչէ պարտ հաղորդիլ ընդ այնպիսոյն, զի մի թոյնն հասցէ ՚ի միւսն, զի մինն ասէ որ ամբարտաւանէր աչօք, ընդ նմա հաց ոչ ուտէի, իսկ միւսն ասէ ընդ այնպիսոյն և հաց մի ուտէր. քանզի է իբրև զկատաղի գազան, որոյ բնութիւնէ յորս և մերձենայ խածանէ, և ընդ խածանելն իբրև զինքըն կատաղեցուցանէ. և յետ քառասուն աւուր մահանայ. ոմ և ես տեսի աչօք իմովք, որ քահանայ ոմն պանծալի, մանուկ տիօք խածեալ եղև, յետ քառասուն աւուր, անկեալ մեռաւ. այսպիսին որ ամբարտաւանութե̃ հոգւով վարի, ինքն իբրև զգազան կատաղի, և յորս և հաղորդի կատաղեցուցանէ: Վասն այսորիկ պատուիրէ մարգարէ և առաքեալ ընդ այնպիսոյն զհացս զայս իջեալ յերկնից մի ուտել, զի ոչ ՚ի միջէ միաբանութե̃ Քի, ընդ բելիարայ, ասաց առաքեալ, և ոչ լուսոյ է̃ խաւարի. և ոչ ՚ի մէջ բաժին ինչ մահացուցչի, և կենդանատուի. քանզի սա կենացն հաց, ըստ այնմ՝ այսէ հացն կենաց, իջեալ ՚ի յերկնից, որ կեանս տայ աշխարհի: Վասն այսորիկ որ զսա կամի ճաշակել. պարտէ յայնմանէ ՚ի տար անդր ՚ի բաց հրաժարել զի ոչ հաղորդեսցի ՚ի սեղանոյ տն, կամիցի ՚ի սեղանոյ դիւացն, քանզի այսոքիկ հակք, և ներհակքեն, յորոց ոչինչ գոն համաշետեղութիւնք, և որ կամիցի ընդ միոյն հաղորդիլ, պարտի ՚ի միւսոյն ՚ի բաց փախչիլ, զի ասաց իմաստունն, ՚ի մեթեփիզիկայն, ներհակնէ տպականիչ ներհակին: Զի ասէ առաքեալ լինորեցէք ձեզէն զոր ասեմ. բաժակն օրհնութեան զոր օրհնեմք, ոչ ապաքէն հաղորդութիւնէ արեանն Քի.

Քրիստոսի. հացն զոր բեկանեմք, ոչ ապաքէն հաղորդութիւն մարմնոյն Քրիստոսի զի մի հաց մի մարմին եմք, բազումքս, զի ամենքն ՚ի միոջէ հացէ անտի վայելեմք: Արդ՝ ով սիրելի, եթէ յայսմանէ հաղորդմանս վայելես, ոչէ պարտ, դարձեալ ընդ բաժակն դիւաց ըմպել, զի ասաց նոյն առաքեալն, ոչ կարէք զբաժակ Տն ըմպել, և զբաժակն դիւաց. և ոչ կարէք ՚ի սեղանոյ Տն վայելել, և ՚ի սեղանոյ դիւաց, վս զի ՚ի սեղանս յայս, եդեալ կայ զբաժակն Տն, զի արեանն Քի, և խոնարհութիւն նորին, որ կամի արբենալ, երկեակքն ՚ի միասին, պարտէ արբենալ, արեանն կենարարին, և զխոնարհութիւն նորին: Իսկ որ ոչն կամիցի զայս, այլ ՚ի սեղանոյ դիւաց զբաժակն հպարտութեան և ամբարտաւանութեան կամիցի ըմպել. յայնմանէ պարտէ ՚ի բաց հրաժարել. զի մի նախանձ ինչ արկցուք զԱծ, զի Ած նախանձոտ է, ով ինքն վկայեաց, յորժամ ինքեան, թէ ես Ած նախանձոտեմ, և Մովսէս ասաց, Ած քո որ ՚ի միջի քում է, Ած նախանձոտ է. և առաքեալ ասաց, եթէ զնախանձ ինչ արկանիցեմք Տն, մի թէ զօրագոյնք իցեմք քան զնա. վս այսորիկ որք կամիցին, ՚ի սեղանոյ Տն ճաշակել, պարտին զտիպ և զնմանութիւն հեզոյն Յսի յինքեանս ներ երևեցուցանել. զի սովաւ ծանիցի թէ աշակերտք նր են. և այսէ զոր ասացաւն, թէ խոկացի թէ ուրէ, զի նախնոյն Ադամայ, և հպարտութիւն անկաւ. և նորուն վերականգնեցաւ, խոնարհութիւն նորին. մի դարձեալ ՚ի նոյնս դարձցուք: Եւ դարձեալ տես թէ ուրես, զի քահես աղբալիր, յորժամ հայիս յորովայն քո, ոչ ՚ի միջէ լի զաղխոդ քո, եթէ ոչ աղբիւսի, և նոյնն յար և յաւէժ ծորի իբէն, յորմէ թէ սակաւ ինչ անկանի ՚ի վր հանդերձիդ, և կամ շաղախի ՚ի վր ձեռացդ, և ոտիցդ, և երեսացդ, ըռընկացդ, հոտոտելեացդ յականցդ, և ականջացդ. և կամ թէ յայլ ինչ մասանց անդամոցդ փաղփաղանի փութաս ՚ի լուանալ, և ՚ի սրբել: Նոյնպէս և ծորումն սաղմի, որ ՚ի ներքուստ անտի հոսի. եթէ նմանապէս անկցի, ՚ի վր հանդերձիցդ, և կամ

մի

միոյ յանդամոցդ ամենեցունց, նոյնպէս արտաքնոց. ըստ Ած-
ային պատուիրանաց, որզ ասայն Պօղոսի, պղծեալ է ան-
պիտին, եթէ քահանայից ոք լիցի մի մերձեսցի ՚ի սրբու-
թեան, այլ արտաքոյ կացցէ, նոյնպէս և այլքն հրամայէ,
զոր ինչ և հրամայէ ՚ի ղևտացւոցն. և ըստ աւանդութե
մարդկան, նոյնպէս որպ արարիչն հրամայեաց. քանզի բնու-
թե Աստուածոյն հետևի, որ պիղծ համարի: Իսկ ՚ի նորու-
մս օրինադրեցաւ զի թէ քահանայ լիցէ մի պատարագեսցէ:
Իսկ յաշխարհականաց ամենեքին մի հաղեսցի ՚ի Ճաշակումն,
և զինչն մեղայի, և խոստովանութե սրբեսցէ, արտասու-
օք լուասցէ, և ապա յետ երից աւուրց, եթէ հարկն պա-
հանջեսցէ, սոսկալաչար մերձեսցի: Նոյնպէս և յամ զգայ-
արանացդ, արտաքոյին աղտեղութիք, յականջացդ. յըռն-
գացդ, բերանոյդ, շրթանցդ, յաչացդ, և ՚ի բոլոր մարմնոյդ,
կեղտ, և այլ վատթարութիք, և յայսոսիկ պարուանդեալ
բոլորդ, ապա որոշ հպարտանաս, և ամբարտաւանիս, ոչ
հայիս յայսոսիկ, որ միշտ ծորին ՚ի քէն և նուաստ խոնարհիս,
մի թէ անբան լիցես: Արդ եթէ այսոքիկն ՚ի միջի քում.
և թուի թէ և դու ես պայծառ ՚ի հոտելեացդ ՚ի քէն, ապա
թէ լինէիր իբրև զաաղաֆ, և փոքրիկ մարգարիտ, և
զինչ յայնժամ լինէիր և խորհէիր ՚ի սիրտ քում. և թէ դու-
նեայ լինէիր ես պարտէիր ՚ի խոր խոնարհութիս իջանել.
քանզի և նա ՚ի խորին խոնարհութիւն իջանելով, զմար-
գարիտն շինէ, և ոչ բարձրանալով, հպարտանալով, և
ամբարտաւանելով ՚ի մէջ. արդ եթէ այսպէս արասցէ, ոչ
զոյանայ մարգարիտ, վն այնորիկ յառաջ ծովուն իջանէ, զի
յօրինեսցէ. և յայս հայելով առաքեալ ասէ, մի բարձրա-
մտութե ամբարտաւանիք, այլ ընդ խոնարհս գնասջիք,
զի զմարգարիտս առաքինութե յօրինեսջիք, քանզի թէպէտ
խոնարհութիւն ոչ ինչ առաքինութիւն անունի, քանզի սահ-
հին, յորոյ վերայ շինին ամ առաքինութիք: Որ թէ
կոյս լիցէ թարց խոնարհութե, ան օգուտ է, որպ սմն կոյս,
յորժամ պարծիցէ ՚ի կուսութիւն, և ոչ կամիցի ամբար-

տաւ-

տովանութիւն, նմանիլ Մագդաղինացւոյն, վաղվաղակի ե-
տես զինքն անկեալ, իսկ Մագդաղինացին խոնարհութեամբ
իւրով, ոչ կամէր զինքն հաւասարել ընդ մարդոյ, այլ ան-
կեալ առ ոտս Յ͞ի, լայր դառնապէս, 'ի վեր քան զամե-
նեսեան բարձրացաւ. մինչ զի յարութեան իւրոյ Տ͞րն քա-
ռաջս նմա երևեցաւ. որոց մի՛ մի՛, ով պատուեն երանելի
աւետարանիչքն, որ 'ի ցնծութեան գիշերոյն. նոյնպէս և
խոհեմութիւն, յորմէ բղխին իմաստութիւնք, և կորովագոյն
գիտութիւնքն ոչ ինչէ լթարց հեզութեան ; և խոնարհութեան,
ըստ առխոստանելի. վ͞ս այնորիկ գովեցաւ Ա͞ծայինն Սողո-
մոն, որ իմաստնացեալ էր, և լցեալ իմաստութեամբ ե-
գիպտացւոց. ունելով և խառնելով ընդ հեզութեան, ով և
վկայեցաւ յԱ͞յ, թէ ծառայն իմ Սողոմոն հեզէ քան զա͞մ՝
մարդիկ. քանզի հաւրն իւրոյ նմանեալ. ասէր ցՏ͞ր, ո՛վ-
եմ ես զի երթայցեմ առաջի փառաւորին արքային եգիպտա-
ցւոց, և հանիցեմ զորդիսն իսրայէլի, յերկրէն եգիպտացւ-
ոց: Եւ դարձեալ աղաչեմ զքեզ Տ͞ր չեմ բաւական ով թէ
յերեկէ, և յեռանդէ. և ոչ յորմէ հետէ ընկեար խօսել
ընդ ծառայի քում, զի նրբաձայն, և ծանրալեզու եմ ես:
Տես աստ իմաստութիւն միայն ոչ ինչ օգտեաց, որ եգիպ-
տացւոց բազմագունիւ էր պերճացեալ, այլ յորժամ ընդ
խոհեմագոյն կրթութիւն, և հեզութի, համահաւաքեցան,
ապա Ա͞յ հաճոյացաւ, և փրկիչ իսրայէլի վերակացեցաւ,
և զԱ͞ծ դէմ հանդիման ծանեաւ: Իսկ որ արհեստին էր ոչ
ինչ օգտեաց, այլ ընդդէմ Ա͞յ մղեաց, որ և խորխորատ
կորստեան անկաւ. սոյնպէս գոգցես, և զայլ առաքինու-
թիւքն, որք առանց խոնարհութեան անօգուտք են: Իսկ ինքն
միայն օգուտ, և յա͞մ յաղթող. քանզի յա͞մ սա բարձրա-
ցուցանէ, և նա յամենայնի խոնարհեցուցանէ, ըստ այնմ՝
որ խոնարհեցուցանէ զանձն բարձրասցի, և որ բարձրա-
ցուցանէ խոնարհեսցի: Եւ արդ զի՞ արդ՝ պարտէ մարդոյ,
որ այնքան խոնարհութեան պատճառս ունի յինքեան, զանձն
իւր բարձրացուցանել, զի առաց խոնարհութեանս 'ի միջի
քու

քում, և ոչ ՚ի միք արտաքոյ, և բացեայ ՚ի քէն, այլ ընդէ՞ր մոռանաս զքեզ. և ոչ յիշես զքեզ, ՚ի ներկայական կեանսդ քո, որ յար և յաւէժ ծորին ՚ի քէն, և յորդախառն վտակաւ, բղխին ՚ի քէն, իբրև զվտակս յորդախաղաց. զարշուԹիւքն, եԹէ դու ոչ խոնարհիս, պարտիս պատճառաւդ խոնարհել. քանզի նոքա միշտ ըստիպեն զքեզ. ոչ ամբարտաւանիլ, և մի զեղջիւր բարձրացուցանել. ըստ այնմ՝ մի համբառնայք ՚ի բարձունս զեղջիւրս ձեր, քանզի խորամանկէ, ոմ՟ կռանն հարեալ ընդ քարի. զի բնուԹբէ որ խորտակի ՚ի հզօրագունէն, քանզի խստացեալ է. և վ՟ այնորիկ խորտակի. զի ոչ ունի տեղի ինչ տեղի տալոյ, այլ յորժամ՝ ընդ ամեր հարցի կռանն, ոչ ՚ի միք խորտակի, զի խոնարհուԹին ՚ի միջի իւրում, որ տայ տեղի իբրատագունին, և վ՟ այնորիկ հեռագայ բանիւն, ասէ մի խօսիք զԱ՟Յ անիրաւուԹիւն. զի ոչ անիրաւ ինչէ, որ ածէ զը բարկուԹիւնն որպէս ասէ սրբազանն:

Իսկ արդ եԹէ ապիրատուԹին մեր, զԱ՟Ծ արդարուԹին յանդիմանս կացուցանէ, զի՞նչ ասեմք առ այս մի Թէ անիրաւ ինչէ Ա՟Ծ որ ածէ զբարկուԹին, ըստ մարդկուԹեան ասեմ, քաւ լիցի. քանզի և մարդկայինն դատաստան, եւս զայս ծանուցանէ և ուսուցանէ, զի մարդ ոք որքան անմեղագոյնէ, անկասկած յամի, այլ Թէ միով իւիք ինչ մեղիցէ, նոյն ժամայն, պատժապարտի, զոր օրինակ մարդ ոք որ ոչէ ըմպանեալ զօք պարզ երեսօք շըջի, և ոչ ոք ասէ ինչ ընդ նմա, այլ յորժամ՝ զօք էհար, և մեռաւ, յա՟մ կողմանց շըջապատեալ ըմբռնեն զնա, և անձն ընդ անձին պահանջեն. և արդ՝ զի՞նչ ասիցես առ այս, արդարուԹի, եԹէ անիրաւուԹի, զի անիրաւուԹին ն՟ր, նախկինագոյնէր որ եսպան, քան զարդարուԹին որ ըմբռնումն, յանդիման կացուցաւ. նոյնպէս և որ ոչնէ գող, ոչ երբէք յումեքէ երկնչի, այլ բարձրագլուխ պարծի, և պարզ շըջի: Իսկ յորժամ՝ նովիմբ մեղ լիցէ, յամենեցունց շըջապատեալ ըմբռնի, և դառնագոյն մահուամբ, ՚ի կենաց բառնի: Տես

ահա

ուհա ազատութիւն, զՏեառն որդւոց իրաւունքն, յանդիմանն կայցէ. որ նախ ի նա, և ապա ի սա ներբերեցաւ: Այնորիկ ասաց նոյն սրբազանն կամիս չերկնչիլ զբարիս գործեա. սոյնպէս և զայս յորժամ խորատակէ Տր զամբարտաւանն ոչ ի մէջ ինչէ անիրաւութի, այլ իրաւունք արդարու. ուր և բնականա ինքն իսկ յայտնեաց սրբազանին. թէ զի՞նչ քեզ ընդդէմ իշխանի ասացեալ. քանզի բնութիւ. որ զայս առնէ, իշխանին ոչինչ վնասէ այլ ձեռին. սոյնպէս և որ ամբարտաւանի, ընդդէմ նմ, նմ ոչինչ վնասէ. այլ անձինն իւրում, Օ ի առէ նոյն սրբազան թէ ճշմարտուին նմ, յիմում ղղութէ առաւել ի փառս նորա, քանզի ճշմարտութին է խոնարհութի, և հեզէուն նորին. և առութի է ամբարտաւանութի և հպարտութի, զնոյն գործոցն: Որդ որ լուսեղծ ուածէ, սուտ է, որ վզի ընդդէմ լուսեղծողին, կամելով լինել իբրև զնա. և կամ յանձնառակել զփառս նր. զի նաէ հուր ծախիչ, և սա խոտ. անճշմարին և անկարելի է, թէ սա իբրև զնա հուր լիցի, և ոչ ծախիցի, և կամ ամփոփեսցէ. և յանձնառակեսցէ զհրայրութին, և ոչ ոչինչասցի: Սոյնպէս, ներգործութի ճշմարտութեանն նմ ի սրտութիւ լուսեղծայնոյն. զի յամբարտաւանիլ միոյն. որ կամի յանձնառակել զփառս Այ. մ զխաղաղի ծախի անյարթելոյն, և երևի ճշմարտութին ի սոյն. այլ թէ կամիս նմանիլ նմայ լինր նմ նա. և ոչ սատր, նմ նոյն, զի սուրբ է ի նմանէ; ամբարտաւանութեան ախտ. քանզի այս ես լուսբնութե իմաստութի, զի ճշմարտութի ընդ ճշմարտութե, միաբանի, և ոչ ընդ հակին հաղորդի: Որդ նա հեզ, հեմ է ամբարտաւանի հաղորդի. վն այնորիկ ասաց ճշմարտութին, եթէ ուսարուք յինէն, ոք կամիք ընդիս հաղորդիլ, զի ես հեզեմ, և խոնարհ սրտիւք. և ինձ թուի թէ սատանայ ևս զայսու հանդերձ ևս բարբառէ, թէ որ կամի ընդիս հաղորդիլ ուսցի յինէն, զի ես հպարտեմ, և ամբարտաւան հոգւով, ուրեմն որ ընդ նմա հաղորդի, ընդ նմա և միաբանի; լուս առաքելոյ, և որ ընդ սմա, ընդ սմա: Վն այնո-

րիկ

րեն, յորժամ սա կամեցաւ միաբանիլ ընդ նմա, փաղփաղէր անկատ, զի ոչ ՚ի մէջ է հաղորդութի. Հեզոյն ընդ հպարտին, և խոնարհին ընդ ամբարտաւանին. վասն այսորիկ ճշմարտութեան Քն, խոստովանի առաւելեալ ՚ի փառս նոր, խորտակելով զուլն նոր. ըստ այնմ որ ասացաւ, և խորտակէ զուլն ամբարտաւանից, և յաղագս այսորիկ մարգարէն սաղմոսէ ասէ, որ ոչ բարձրացաւ սիրտ իմ, վասն զի նա որ բարձրացոյց. անկեալ փշրեցաւ, անբժշկելի խորտակմամբ. որ արտաքոյն ըստ յօժից, գլխաւոր ամբարտաւանից, խորտակեցեր. և դարձեալ ասէ հիւանդացեալ մի՛ ամէն կալցի ոգւոյս, այլ անկցի սխալ, զի զբազում չարչարեաց, բարձրութի նոր, թարշամեցի իբրև զբանջար ՚ի սաստից, կամ իբրև զհասկ, ինքնին անկեալ ՚ի ցօղոյ։

Դարձեալ ասէ այնպիսին որ բարձրամտեանց զի՞նչ շահ է, զի ծառայեցուցէք նմա, և զի՞նչ օգուտ, զի հանդիպեցուցէք նմա, սակայն ձրիպ ամբարշտաց զինքն, եկեալ ՚ի վերայ նոց կործանմամբ, երկրանք կալցին զնոսա, ՚ի բարկութենէ, եղիցին իբրև զյարդ առաջի հողմոյ, տեսցեն աչք նոր զսատանութիւն իւր. և ՚ի տանէ մի՛ ապրեսցի, այնպիսին մեացի, ՚ի սատակութի, անըմբռնելութեան իւրում. նա փաղձանեսցի, ՚ի դառնութենէ անձին, և ոչինչ կրեալ ՚ի բարութենէ։ Ոչ այս և ըստ բնութեան, զի թուենք օձին, այնքան դառնագոյնք, որոց ոչ գոյ ինչ նմանութի ՚ի դառնագունից իրաց. այլ արեան մարդոյն կարի քաղցրագոյն, և յորժամ հարցի յօձէ անհաւան դառնութի նոր, մերձի ընդ քաղցր արեանն, և մնացեալ դառնացուցանէ և նոյն ժամայն ածէ ՚ի մահ. և վասն որոյ ասաց, նա փաղձանեսցի, ՚ի դառնութենէ անձին, այսպիսի է դառնութի հպարտութեան, և ճշմարտութեան ոչ թոյնն այն օձին յորժամ խածանէ անձրեւոյթն ոճ. և շարախեալ մնայ ի. ընդ արեան հոգւոյն, այսինքն ՚ի քաղցրագոյն յառաքինութեան հոգւոյն, ՚ի խոնարհութեան յորմէ բղխի խոնարհութիւն ՚ի խորադիտութիւն յորմէ հոսի յորդառատ հեզութիւն ընդ ողորմութեան, և ողջախոհու-

հութեան, ընդ ժուժկալութեան, որքան նորակի մասանց հագոյն առաքինութիւնք ըստ արժանաւորին, և բոլորին անձին յարդարութեան, ազատականութեան, և մեծահոգութեան. յորոց յառաջնոյն, այսինքն յարդարութենէն, բըղխի բաշխողականն գոլ, որոյ որ ինչ արժանն իցէ, ողջութք պահել զհայրենաւանդ զառաքինութիւնս, զԱծ՟այինն, այսինքն զհաւատս ճշմարիտ, և զյոյս հաստատուն, և զսէր անեղծանելի. նոյնպէս և զմարդկայինս բարութիս, և զօրէնս գրեալս, ճշմարտութեամբ. պահել զխոստմունս, ըստ այնմ՝ ուխտս դիր և կատարեսցես, իբրու ոն ա. ածային. յես այնորիկ առ հայրենիս, ըստ պատուիրելոյ Մովսէսի. որ ասացաւ յԱծ՟յ. Եւ եմ Տր՟ Ած՟ քո. մի արասցես քեզ կուռս. և մի կոչեսցես զանուն տն՟ Ած՟յ քոյ, ՚ի վր՟ սնոտեաց, այս Ած՟այինքն: Իսկ հայրենիքն, որ ասացն պատուեա զհայր քո և զմայր, և որ անարգէ զհայր իւր և ըզմայր, մահու վախճանեսցի. նոյնպէս և որ առ ընկերսն, որովք լինի բարեպաշտութի յորոց հետևին հոգւոյն, հետևի արդարութե, և Ածպաշտութե, և հաւատոյ, և չոր առեցութե: Եւ յազատականութենէն, յորմէ հասի յօժարարականն գոլ ընչիցն, յիւրս զօղէլիս, և յառատանալն ՚ի ծախս պատշաճաւորս ըստ տն՟, երբեմն վճարել զմ՟ զոր ինչ ունի և զնէ զայն մարդկորիս, և օգնական գոլ ՚ի զանազանութիւս զրկելոյն, և ոչ առնուլ ինչ ուստի ոչէ պարտ, և հանդերձիւք մաքուր, այսինքն մաքրով, որք հանդերձ հոգւոյն, և բնաւորութք և կազմով: Օի յերրեակս որամասի առաքինութին, բարոյական, տնտեսական, և քաղաքական. յորոց առաջինն ուսուցանէ, զբարս ուղղել: Երկրորդն զտունս, և ապա երկոցունց ուղղութք զքաղաքս. որ կայմ պահէ զերրեակս, և գեղեցկագունիցն խորաց, ընչից պահպանողագոյն գոլ որ իբրուոնս զայս պահանջէ. քանզի իրաւունք բնութե, անիրաւս պահել զպատուիրանս պատշաճականս, որ կենդանութե կենդանուոյն, զի ոչ ինչ պատուականագոյն գոյ քան զնա. վը որոյ

ամ

ամենեքեան մեծաւ ջանիւն, պահել զնա. և կենդանեաց մնացելոց, ըստ առաւելոյ ; այլ արդար օրինի գրաւակարգ ; յառաջ ինչ ունելով բազմանալ, բարեբարոյ և մարդասէր, ողորմած, և բաշխողասէր, և սատարասէր, և գթեցեալսէր : Նոյնպէս և մեծահոգութիւնք, առատաձեռնի, բարւոք բերել բարեբախտութեան, և վատաբախտութեան, և ոչ սիրունալ ի փափկութիւն և ի հեշտութիւն ունելովն խորութիւն անձին և մեծուի, և պարզեցէ բարութիւն և նաւահանգիստ, կարօղ անիրաւել և ոչ պատուհասող : Նոյնպէս և ի խոհեմութիւնք, որ ծորել լինորել զլոյն, և զբարին. և զոր ինչ ի կենցաղումն հաճելիք, և պատշաճելիք, և բարւոք արկանելն ի կիր. զնոյն նէլքոյ բարութի. և կանխելն ուղղագէս. զխոհել զժամանակն, հնարութիւն փարելն բանիւ և գործով. յիշելն ի ժամու հնարութիւն ընդդիմանալեաւ. և արիութիւն հեղգանալ, զի կարօղ լիցի համբերել, ամբառնութեանց, և արհամարհանաց. և ոչ արագոյնս արշաւել առ ի պատահեալս, և ոչ դիւրաշարժ գոլ առ ի բարկութիւն. այլ առանց դառնութեան բարուց, և առանց վրիպմանց, զօրութեամբ ունել անձին, և հաստատութեան. և հեզք գոլ առ զարհուրանս, երկիւղին որ մահ բերանոյ, և փութահասեալ առ դժուարին, և քաջագոյն առ վիշտսն, և յօժարելն ի մեռանել բարւոք, քան թէ կեալ անթիւթով, և փառաւորել և ժուժկալել, և յօժարել և կարել, և բարի յանդգնութիւն, և բարեհոգութիւն, և փառահեռութիւն առ բարութիւն, և աշխատութիւն, և ժրութիւն : Եւ ողջախոհութիւն ոչ սիրանալ ընդ վայելչութիւն մարմնական հեշտութիւն, և անարժանլի համարել, զնոյն զգայելի հեշտութիւնս և զվայելչութիւն նորին, և երկնչիլ յիրաւի ի վատախաւութենէ, ի վտարեաց, և ի մեծամեծաց, որոյ և հեանեալ լինել, բարեկարգութիւն, պարկեշտութիւն, և խորշումն : Եւ ժուժկալութիւն արգելուլ, բանականաւն զցանկութիւն, զիմեալ առ ի վայելչութիւն, փառաւորագոյն հեշտութեանց, և ժուժկալ յուղի և համբերել բնական պիտոյից :

Եւ

Եւ այսպիսի ամենեքեան են քաղցր արիւն հոգւոյն, որով կեայ կենդանին. և յորժամ լծոյն դառնութեան օծին, որք ամբարտաւանութիւն և հպարտութիւն, մածեալ միանայ ընդ սոսա, խեղդին ամենայն դառնանայ, և տան մահ հոգւոյն: Վ՟ս այնորիկ նա փաղձանի 'ի դառնութենէ անձինն. և ոչ ինչ կրեալ 'ի բարութեցս յայսցանեաց. զոր ունէր առէ. վ՟ս այնորիկ պարտ է, որ խնդրոյն բանականնէ. Ճշգրտիւ պարտ քննել, թէ զի՛նչ շահ ունի. որ զդառնութիւս զայ 'ի գլխոյ օծին առնուցու, և զնա՛ զքաղցրագոյն արիւնն իւր, որ առաքինութիւք հոգւոյն. որով կեայ կենդանի, դառնացուցանէ և տայ մահ հոգւոյս, ըստ իմաստութեան, զի՛նչ շահ եղև մեզ հպարտութիւն. և զի՛նչ մեծութիւն ամբարտաւանութեանցն, իցէ մեզ նըպաստաւոր: Ա՛նցին այն ամենայն իբրև զըստուեր, և իբրև զհամբաւ առն ընթացեալ, և իբրև զնաւ սահեալ 'ի վ՟ր ջուրց, կուտակելոյ. զորոյ իբրև անցանիցէ, ոչ գոյ զհետոյն գտանել, և ոչ շաւիղս գնացից ն՟ր, 'ի մէջ ալեաց. կամ իբրև զհաւու թռուցելոյ, յօդս, որոյ ոչ գտանիցին նշմարանք գնացից. բախելով մաղձայն, պատառեաց զհողմն թեթևս. և հերձեալ բռնութ՟ե, ընդ ոլորտս մտեալ, յածեալ թևոցն, յառաջադէմ սլանայ, և յետ այնորիկ ոչ գտանի, նշանակ բանալոյ ն՟ր. կամ իբրև 'ի նետէ ձգեցելոյ 'ի նպատակ կտրեալ զօդն վաղվաղակի յինքն կարկատեալ, առ 'ի չգիտելոյ զանցքս ն՟ր. նոյնպէս և մեք եղեալք պակասեցաք, և առաքինութեան զնշանակ ոչ կարացաք ցուցանել. բայց 'ի չարիս մեր մաշեցաք: Զայսպիսիս ասասցեն 'ի դժոխս, այնոքիկ որք մեղան, քանզի ըստ բնութենէ որ՛քան ծուխն բարձրանայ, այնքան փութով պակասի, ըստ սաղմոսին 'ի փառաւորելն, և 'ի բարձրանալն իւրեանց, պակասիցեն, ո՟պ ծուխ զի պակասի: Զի հպարտն և ամբարտաւանն թէպէտ իբրև զծուխ մրրկալից, ընդ յօդոյ միացեալ ըմբռնէ զլոյս արեգականն և արգելու, և թէպէտ զաչս մարդկան կծեցուցանէ, ցաւեցուցանէ, և մրմռեցուցանէ. բայց սակայն

փաղ

վաղվաղակի անցեալ, ոչընչանայ, որ և զտեղին եւթէ խընդրեսցես սակայն ոչ գտցես. ո՞րդ բարբառեցաւ այժմիկ, Իծայինն Սողոմոն: Նոյնպէս և ամբարտաւանն, թէպէտ սնացեալ հոգւով, և մրրկեալ մտօք, և ծխասարաս խորհրդով, ընդ սատանայի հօր իւրոյ միացեալ բարձրանայ, որոտալով. զկծեցուցանելով, մրմռքեցուցանելով, սարսռեցուցանելով, մաշեցուցանելով, և խորովեցուցանելով, զտեսողսն, և տինա զճառագայթ, արեգակնն արդարութեն բարձրանալովն, արգելուլ յերկրէ. և զտունկս զսնդակսնրս, և զծննդականս 'ի ջերմութենէն նուազեցուցանէ, և 'ի բարձունս ուր վերացեալնէ մրրկացուցանէ. Ճայթմունս, որոտմունս կայծակունս, և այլս, սոյնպիսիս յարուցանէ, բայց սակայն 'ի քթթելական, պակասի լապառի, և զտեղին բնաւ ոչ երևի, և ոչ յիշատակ նորին, ըստ Իծայոյն Սողոմոնի որ ասէ, զի յոյս ամբարշտի, իբրև զփոշի յարուցեալ 'ի հողմոյ, իբրև զեղամն 'ի մրրկէ, հալածեալ մանր, իբրև զծուխ մաշեալ, 'ի հողմոյ, 'ի դիմի հարցի նոյ հողմ բռնութե, և իբրև զմրրիկ հոսեսցէ զնս. վս որոյ որ խանականագոյննէ, յայսպիսեացս, 'ի բաց անդր հեռանայ, հայելով, և նկատելով 'ի ներկայական զկեանս իւր, որ իբրև զմրրիկ, և զծուխ անցանէ. և զտեղի նր ոչ ևս երևի. որ մանաւանդ թէ ամ գարշութբք լի. որ նուաստ պարտի խոնարհիլ:

Նոյնպէս և հանդերձեալ, ապագայիւն պարտ է կորիխմանանալ, զի թէպէտ, զներկայական զգայշութիս լուացմամբ որբելով մաքրէ, կամ զգարշահոտութիս զանազան անուշահոտութբ և օծանելեօք, նազելեօք բուրեցուցանէ յինքենէ, և կամ զդարշատեսակ մեղսամածեալ զանդամն պայծառագունիւք զգեստիւք ակնախտեղ պայծառացուցանէ, և հայթայթէ զամ զգարշունակն աղնոյական առնել և ցանկալիս, որքան կենդանիէ: Ի.յէ. յորժամ մեռանիցի, իսկոյն ընդ յելանել հոգւոյն, ըսկսանեն ամփածածկեալքն 'ի յայտ գալ, զգարշահոտութիս արձակել, ժահա

հաճոյութիւնս ներ երևեցուցանել, նեխել, որդւոց եռա-
ցուցանել, և 'ի նմ համակիլ, այսինքն, որ յայնժամ հայ-
թաթանօք, ցանկալի զինքն ներերևեցուցանէր տեսողացն,
յայնժամ յետ մահուանն ամէն գարշելի ներերևի մինչ զի
և դարշելի և սարսափելի, և արհամարհելի, յորմէ ամենե-
քեան 'ի տար անդի 'ի քոյց փախչեն. յոր թէ ոք, դուզնա-
քեայ ինչ յամեսցի, 'ի հոտոտումն, առ ժամայն տաղտ-
կացեալ հիւանդանայ, որոյ հիւանդութիւն անբուժելի և
անվանելի մնայ: Իսկ 'ի սեռութենէն, նոյնպէս ամ' զգայ-
արանքն ամբողջին, և միտքն վատթարանան, և խորհուրդ-
քըն տաղտկանան, մինչ զի 'ի ճաշակս ազնուականագունի-
ցըն իրաց, ըստ ամօքոն ոչ ախորժի: Եւ մանաւանդ թէ ոք
բանութը ճաշակեսցէ ինչ, բազում անգամ զփսխելն զոր-
ծէ: Այլ և առէն որք վՄ այսորիկ իմաստասիրեն թէ բա-
զում անգամ մահ ևս ածէ. արդ եթէ այսպիսի և այս
գունակ իցէ, անցեալդ, և ներկայդ, և ապառնիդ, ապա
ո՞չ վասն այդքան հպարտանաս և ամբարտաւանիս:
Եւ վՄ այնորիկ ասացին Իմաստունքն, հայեաց 'ի քեզ, և
տես, ուստի գաս, և ո՞ւր ես, և հանդերձեալ ես գնալ:
Ո՛հ հող էիր և 'ի հող դառնալոցես, տիղմ էիր գարշեցու-
ցիչ և 'ի տիղմ դառնալոցես գարշելի, և սարսռելի, որդն
էիր յարգանդի մօր քոյ, և յորդունս համակելոցես. արիւ-
նաշարաւ էակ էիր, և արիւնաշարաւ զաղրալիր դառնալո-
ցես: Կերակուր քո յարգանդի մօր, տհաստեսութեան արիւն
մօր քոյ էր, որ այնքան գարշագոյն է, յորոյ ըղխմանէն նա-
մանաւանդ յոյժ արգիլեալ լինի մտանել 'ի տաճարն, և
կամ մերձիլ 'ի սրբութեան տեղիս, և կամ ձեռնամուխ լինել
յուտելիս և յըմպելիս, ևս այնքան գարշագոյն է, որոյ ըն-
ացմանէն, թէ արկցի յարմատ ինչ, փողփողուկի զօսացու-
ցանէ, և 'ի հայելին յերեսս գեղեցկատեսիլ երիտասարդի
տգեղացուցանէ, և 'ի հայելւոյն շամանդաղ դրոշմէ. և այլ
ևս վնասակարութիւնս զորս մի ըստ միոջէ պատմաբանել ա-
մօթ ներածէ, յայսցանեացս կերակրեիր. և դարձեալ 'ի
նոյն

նոյն դառնագոյն շարաւն դառնալոցես. և ապա հիմ, և կամ ընդէ՞ր հպարտանաս և ամբարտաւանիս: Այսքանիկ կատարումն և ըսկիզբն մարմնոյ քո: Իսկ յետ վախճանիդ, թէ զոր ինչ լինելոց է հոգւոյդ զայն ես մարթէ քննել քեզ, զի հոգիք հպարտից և ամբարտաւանից մաշելոցեն 'ի գժոխս. դատապարտելոցեն ընդ սատանայի, և ը՞ն կամարարացն նորա, և լսելոց թէ երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենից, և թէ արկէք 'ի խաւարն արտաքին, անդ եղիցի, լալ և կրճել ատամանց, ուր որդն ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի, զի ամ՛ ինչ հրով յաղեցի, յայնժամ լըկանիցեն ասել լերանց. թէ անկերուք 'ի վ՞ր մեր, և բըլրոց թէ ծածկեցէք զմեզ, և զայլս սոյնպիսի նեղութիւն որ հասանելոց իցեն, անչափելին տաժանմամբ: Վ՞ս որոյ պարտէ յար և յաւէտ զայսոսիկ մակամտածել, և սանձահարել զամբարտաւան զգայս. և ոչ յաղթիլ, քանզի զայսպիսի մակամտածութիւն է ո՞չ աղ որ պահէ զմիս 'ի հոտելոյ, և ըսպեղանիք այտուցելոյ. զի ուր որ այտուցեալ իցէ հըպարտութբ և ամբարտաւանութբ ոչ կարէ գործել ինչ բարի. զոր օրինակ երէս մարմնոյ յորժամ ուռուցեալ իցէ, վէրացեալ և բարձրացեալ, ծածկէ զլոյս աչացն, և ոչինչ կարէ նկատել և տեսանել, յոր՛ բարութեանց ոք իցեն, ուրեմն պարտէ բարձրացեալ երեսն, խոնարհեցուցանել, և զայտուցմունսն 'ի բաց փարատել, և զվէրացեալսն իջուցանել, և ապա բանալ աչացն, և զգոյս տեսանել զոր ինչ եդեալ կայ առաջի աչաց իւրոց: Որդ երէս մարդոյն է հոգին, և աչն միտքն և թէ հոգին ուռուցեալ իցէ, և այտուցեալ ամբարտաւանութբ, ծածկէ ակն մտաց, և ոչինչ կարէ տեսանել 'ի հոգևորացն, ըստ իմաստասիրաց, փքացումն մտաց է արգել ճշմարտութեան. ճշմարտութիւն է մարմին և արիւն կենարարին, ո՞չ ինքն ասաց եսեմ ճշմարտութիւն, և թէ մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի: Եւ յորժամ զերեսս, այսինքն հոգին ուռուցեալ իցէ հպարտութբ, և ամբարտաւանութբ և

ծած

ծածկեալ ունիցի զաչս մտացն, ոչինչ կարէ տեսանել 'ի ցանկալեացս. վասն որոյ պարտ է փքացումն այս և ուռուցմունս տարաբատնալ, և ապա թէ խոնարհութեամբ մատչիլ 'ի սոսկալի խորհուրդս, զի մի ուռեսցէ և պայթուսցէ զտիկ մարմնոյդ, քանզի կարծրագոյն վէմ, զի յորժամ հարցի, ընդ հողմով լցեալ բշտոյթ փաղփաղակի պատառէ, և ցրուէ զփուքն, որ 'ի նմա: Եւ դարձեալ է ուղ խթման, որ ծակէ զտիկս ուռուցեալս. վասն այսորիկ ասաց մարգարէն, 'ի դիմաց Ադամայ, եղէ ես ուղ տիկ 'ի պարզի, լցեալ հողմով հպարտութեան, յորժամ պարտեցայ 'ի բանտարկութեն, ամբարտաւանութեամբ Աստուածանալոյն, և իբրև հարցայ յԱստուծոյ, փաղփաղակի պատառեցայ ընդ հարկանելն: Այլ յորժամ հեղեալ իցէ հողմն, ոչինչ կարէ զնա պատառել, զի պատճառ պատառմանէ ուռուցումն և փքացումն: Օր օրինակ 'ի մարմնի, ուրուք արգիլեալ իցէ յոդ, այնքան պայթուցանէ մինչ զի և զոսկերս բեկանէ, այսպէս և որոյ հոգւոյ արգելեալ իցէ ամբարտաւանութիւն, զճմ՛ զհաստատութիւն առաքինութեանց, խորտակէ: Այլ յորժամ կամիցի ոք զայն արտահանել, ոչ այլ իւիք լինի, եթէ ոչ խոնարհութեամբն Քրիստոսի. զի նա է հակ նորին, որպէս հրոյ ջուր, և խաւարի լոյս, և ոչ եթէ զնա միայն արտահանէ, այլ և ամենայն առաքինութիւնք յանձն իւր հրաւիրէ, և ամենայն մասունք անձինն ամրացուցանէ, և պտղաբերէ: Նախ զբանականն 'ի խոհեմութիւն ընդ խորագիտութեան կապէ, և զանզգամութիւն ընդ խորամանկութեան որք են չարութիւնք 'ի բաց նահանջէ: Եւ արիութիւն ընդ հեզութեան կապէ, որք են առաքինութիւնք ցասմնականին: Իսկ բարկութիւն ընդ յանդգնութեան, որք են չարութիւնք ոն անդր հալածէ: Եւ ողջախոհութիւն ընդ ժուժկալութեան կապակցէ, որք են առաքինութիւնք ցանկականին, իսկ բղջախոհութիւն, և անժուժկալութիւն զեղխութեամբ հանդերձ, որք են չարութիւնք ոն անդր 'ի բաց տարադրէ: Եւ բոլորից անձինն առաքինութիւնք որէ արդարութիւն, զգաստականութիւն, և մեծահոգութիւն 'ի ներ-

քըս

քրս հրաւիրէ։ Նախ հակն, և ներհակն ՚ի բաց դնէ. վ̅ն զի բնութիւն ուր ցածագոյնէ տեղի, անդր ժողովին և կուտակին ջուրք երկնային, այսպէս յոր հոգիէ, խոնարհութեն և ցածութեն անդր ժողովին ամ շնորհք, Սբ հոգւոյն, ըստ այնմ հոլովոյ բաշխում արասցեն ցորեան. յաղագս այսորիկ որք կամիցին բազմապատիկ շնորհսն ներյանձինս ընդունել և ճաշակել զաղբիւրն, յորմէ բղխին գետորէն զատացեալս՝ պարտին ամ ապաշխարութեամբ ՚ի բաց խլել, և ապա որ ինչ պիտանագոյնքնեն ածեսցին, որպէս ՚ի ցորենոյ, զորոմն: Որ ուր հոգի ամբարտաւանութեն ներքեւեն հոգի խոնարհութեն անդ ոչ գտանելի. վն այնորիկ որք կամիցին, հրաւիրել զպարգևն երկնից, ճաշակմամբ հաղորդութեն մարմնոյ և արեան կենարարին, պարտին նախ արտահանել զամբարտաւան հոգին, զի հանգիցէ յինքեան զհեզին խոնարհութեն: Որ այս եւ ոչ բնութենէ, զի նիւթ ինչ որ լցեալ իցէ, իրօք ինչ, ոչ կարէ առնել յինքեան այլ ինչ. այլ սափոր որ հողով և կամ ջրով լցեալ իցէ, ոչ կարէ ընուլ ՚ի նա գինի, և կամ այլ ինչ, այլ թէ կամիս ընուլ միով, հեղ և զմիւսն: Նոյնպէս թէ կամիս ընուլ զքեզ Ածութեն, հեղ զհակառակն, ըստ պրոկղի, զի հաղորդութիւն նմանեցուցանէ զհաղորդեալն հաղորդելոյն, և բնակից նմա առնէ: Եւ դարձեալ ասէ ամ վասնզի ՚ի գալուստ Ածայնոյն արգելցի, զի յաջողակ լիցի հաղորդութեն. և ամ օտար Ածայնոյն լուսոյն աներեւոյթ եղիցի. և լուսաւոր եղիցի ամ համանգամայն, զի մշտնջենաւորքն Ածայինք և հզօրագոյնք և պահպանողագոյնք: Տեսանես թէ որքան ճշգրիտ բնախանա ենթադրատէ իմաստասէրս. զի անկարէ ուր իցէ խոնարհութի, եթէ գտանիցի անդ ամբարտաւանութի, և հակադարձապէս. եթէ կամիս ըզ խոնարհն բնութե հրաւիրել ՚ի քեզ, ՚ի բաց հան զամբարտաւանութին, զի յաջողակ լիցի ասէ զհաղորդութիւնդ, քանզի և առաքեալ ասէ, զինչ հաղորդութիւն արդարութեան, ընդ անօրէնութեան. և կամ զինչ հաւասարութիւն լու-

սոյ

սոյ ընդ խաւարի. և կամ զի՞նչ միաբանութիւն Քի̄ ընդ Բելիարայ. և կամ զի՞նչ նմանութիւն տաճարի Ա̄յ մեհենից. քանզի որ ամբարտաւանութիւն, և այսուցեալ հոգով, մատչի 'ի հաղորդիլ՝ խնկապէս զՔի̄ հրաւիրէ 'ի մեհեանս դիւական, և այսու Թշուառականագոյն լինի, քան զԱ̄ծասպանսն, զի նոքա Թէպէտ ծաղրեցին, կառափնատեցին, խաչեցին և արկին 'ի բանդ, այլ ոչ 'ի մեհեան դիւաց. գարշագոյն տեղի. այլ ոչ ընդ դիւաց, և սատանայի. քանզի բնութիւն նր̄, ուր և իցէ արքայութիւն, ուր և իցէ սրբասացութիւն փառաւորեալ, և քրովբէիւք բարեբանեալ. բայց ընդ ամբարտաւանութեան Բելիարայ, ոչինչ հաղորդութիւն, զի բնութիւն հակք, և հակառակք. վա̄ որոյ ը̄դէմ բնութեան Ա̄ծութեան մեղանչէ ամբարտաւան հոգին, որ ոչ նախ զնա արտահանէ, և ապա զսա հրաւիրէ, և ընդ Բելիարայ զՔի̄ կաճառէ. և 'ի մեհենին արգելու:

Եւ արդ մի՛ սիրելի լաւ է ըստ նմանութեան հրէից 'ի բանդի արգելուլ, քան 'ի մեհեանս դիւաց. քանզի յամ՛ տեղիս կարէ գտանիլ Քի̄, բայց 'ի հոգիս և 'ի սիրտս ամբարտաւանից, և ոչ 'ի միք. քանզի խոնարհն և ամբարտաւանն, հակքեն միմեանց, և հակառակքն ոչ համաձայնքն 'ի մի կայան, որպէս հուր և ջուր, համանգամայն, ուրում Քի̄ և Բելիարայ անկարելի է 'ի միասին գտանիլ: Զի ամբարտաւանութիւնն է ծայրագոյն մեղք, և խոնարհութիւն ծայրագոյն առաքինութիւն. յորոց մինն զմինն քարշէաց, 'ի վերուստ, և արար անդնդային քան սանդղամետական յորժամ առաջն եղէց նման բարձրելոյն, այնքան աշագնացաքար անկաւ, մինչ զի յանկանիլն սատանեցան, նահապետութիւք վերին զօրացն, զի 'ի միւս ծայրէ, 'ի միւսն դաղարեցաւ, ըստ այնմ՝ Թէ զի որդ՝ անկաւ արուսեակն. ըստ այնմ՝ Ա̄ծ ես զարմացաւ, ընդ սատակագոյն անկումն նր̄, և ո̄րն ասէ, տեսանէի զսատանայ անկեալ յերկնից, իբրև զփայլակն:

Նոյն միւսն զմիւսն այնքան բարձրացոյց մինչև եհան 'ի ծայրագոյն յԱ̄ծութիւն, և նմայն ընդդէմ Ա̄ծութեան,

ըստ

ըստ այնմ համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր. և թէ նիստ ընդ աջմէ իմմէ, և թէ ահա որդի մարդոյ կայ ընդ աջմէ Աստուծոյ, և թէ տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեան այ, և եկեալ ընդ ամպս երկնից, և թէ որդի մարդոյ գայր և հասանէր մինչև հինաւուրցն, և նմա տուաւ իշխանութիւն, զի ամենայն ազգք և ազինք, և լեզուք նմա ծառայեսցեն: Տեսանես արդեօք, զի ահա ամենայն այսոքիւք վասն որդւոյ մարդոյ ասէ. որ այնքան խոնարհեցաւ, մինչև լուաց զոտս աշակերտացն և ասաց պարծելով, ո՞վ է մեծ՝ բազմեալն եթէ սպասաւորն, և ես եմ ՚ի միջի ձերում իբրև սպասաւոր մի: Եւ այսպիսի խոնարհութեամբ այնքան բարձրացոյց զանկեալ և զկործանեալ բնութիւն, որպէս և ասացաւ: Եւ թուի թէ էութիւնս այս, այնքան թանձրացուցիչ է մինչ զի թէ և սատանայ ևս միասցի ընդ սմա, և զնա ևս բարձրացուցէ, ուստի անկաւն: Որպէս և գրեալ է, քահանայ ոմն սրբազան, յորժամ խոստովանութեամբ զամենեցունց զմեղս թողոյր, սատանայ ևս զնոյն արար զի և զիւրն ևս թողցի. պատասխանի ետ քահանայն, եթէ զոր ինչ ասեմ արասցես, ես երաշխաւոր քեզ զի ՚ի նոյնն ելցես, և յորժամ յանձն էառ, ասէ քահանայն, անկիր ՚ի վերայ երեսաց քոց, և ասա ըստեղծողիդ մեղայ, զի ընդդէմ Աստուածութեանդ յանցեայ, յայնժամ աղաղակեաց մեծաձայն, զի է զի այդքան մեծագոյն բեռանց մատնեցեր. ասէ քահանայն զի՞նչ ծանրութիւն. և նա ասէ վասն զի ոչ է, բնութիւն իմ այդքան խոնարհիլ: Եւ նա ասէ սաստեսցէ ՚ի քեզ տէր, և նա իբրև ըզ ծուխ կորեաւ: Եւ ահա այսպիսի զօրութիւն խոնարհութեան, և ամբարտաւանութեան, յորոց մինն բարձրացուցանէ, և միւսն խոնարհեցուցանէ, վասն որոյ որ ընդ միոյն միաւորի, ընդ Քրիստոսի և հաղորդի, և ուր նա բարձրացաւ, և նա ընդ նմին բարձրանալոց է. յաղագս այսորիկ միաւորի ընդ Քրիստոսի, յորժամ զմարմին նորա ճաշակեսցէ: Իսկ որ ընդ միւսայն, ընդ միւսոյն և անկցի, զի ընդ նմա հաղորդի. և երկոքեանս այսոքիւ, ընդ որոյ միաւորի, ընդ նմին և միասցի. եթէ ընդ

խո

խոնարհութեն, զկերպարանս Քի առնու. և սմա ևս պարտ է նմանել, որ ասացն նմանեցարուք: Իսկ եթէ ընդ միայոյն միասցի. և զկերպարանս նը զգեցցի, պարտ է և Յսէ ի բաց կալ, զի ոչ գոյ տեղի, ուր դիցէ զգլուխ իւր ի քեզ. զի նա ի հեզս և ի խոնարհս հանգչի. զի ընդու-թիէ որ ընդ մարս միաւորի, սեռանց, և որ ընդ ալեր ըն-դիմանի, որ ընդ լուսոյ լուսաւորի, և որ ընդ խաւարի խաւարանայ: Ով զան երանելին Պօղոսիս, վս հաղոր-դութեան այսորիկ. ոչ միացուցիչ զօրութեան որ ի վերին կոյս ձկտեցուցանէ, և դարձուցանէ առ ժողովն հօր մի-աւորութի և Ածաբար պարզութի. քանզի այնքան զօրու-թի ունի, խոնարհաբար նմանումն այս, մինչ զի ընդ հօր միաւորութին հրաւիրէ, և Ածայնոյն պարզութի, ըստ այնմ՝ բնակեցայց ի նս, և գնացից ի նս: Եւ հակ սմին բանսարկուն, ևս կարէ առնել զայս, բնակեցայց ի նս, և գնացից ի նս, այսինքն յամբարտաւան հոգւոջ. և այս ևս ըստ բնութենէ, որ ինչ և իցէ, ընդ համբնութենակիցին, կցորդի, ոչ հուր ընդ հրոյ, և ջուր ը ջրոյ, և ոչ հուր ընդ ջրոյ, և անդրադարձապէս, և ոչ խաւար ընդ լուսոյ, և անդրադարձապէս: Այսպէս և Քս որ խոնարհնէ սր-տիւ ընդ խոնարհս, և բելիար որ ամբարտաւաննէ, ընդ ամ-բարտաւանս. վս զի երկուեն տեղիք, և երկու բնակիչք, զի որ զմինն ընդունի, պարտի զմիւսն արտահանել:

Ով նմանեցող, եթէ կամիս զխոնարհին բնութե և սրտիւ, կոչել ի քեզ, հան զհակն, զի նա ի հեզս և ի խոնարհս հանգչի և զնա հոգւով կեցուցանէ. ըստ այնմ՝ զխոնարհս հոգւով կեցուցանէ. և թէ պատարագ Այ հոգի խոնարհ, զսիրտ Աէ և զհոգի խոնարհ Ած ոչ արհամարհէ:

Այլ այն որ ոչ կամի արտահանել զնա, մի հրաւիրեսցէ զմիւսն, զի հակքեն և հակառակք, ըստ այնմ՝ որ ամ-բարտաւանից հակառակ կայ. վս զի ոչ ինչ մեղք այնքան հակառակի և ընդ դիմանոյ Այ. ոչ ամբարտաւան հոգին, և Ած ամբարտաւան հոգւոյն. վս որոյ պարտ է տեսանել,

թէ

թէ հի՞մ արդեօք հակառակի, ո՛վ հողմ ուժգին որ ընդ լոյս ճրագին. զի ամբարտաւանութիւն, է ո՛վ հողմ, յորժամ ոք ունիցի ներ հոգւոյ խռովիլ. շիջուցանէ զլոյս Ածային տմ շնորհաց, ո՛վ նախաստեղծին, արուսեկին, Դաւթի յետ թռուելոյն զժողովուրդսն, և վիմին հաւատոյ որ ամբարտաւանեցաւ ՚ի դառն երեկոյին, որք երկեակքս այսոքիկ յետ պատուհասակոծութեան և զիջման լուսոյն, բազմաւ զղջմամբ և արտասուօք և անպատմելի խոնարհութեամբ, ապա հազիւ կարացին, վառել դարձեալ զլոյս մարգարէութեան, և առաքելութեան. քանզի ծանուցանելս այս խոնարհութիւն է լոյս Ածեղէն, որ լինու զարժանաւորս, եօթն արփեան շնորհօք, ըստ այնմ՝ մատիք առ տր, և առէք ըզ լոյս, զի ոչ ինչ պակասութիւն. քանզի այնպէս լուսաւորէ ո՛վ տրն ՚ի Թաբօր, քանզի սա է լոյս ճշմարիտ, որ լուսաւորէ զամ՟ մարդ որ եկեալ յաշխարհ: Եւ մարգարէն յաղագս լուսոյս այսորիկ ասէ, առաքեա տր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեալ հանցեն զիս ՚ի լեառն Սբ՟, և ՚ի յարկս քո. վա՟ զի լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Եւ երանելին Զաքարիաս ասաց երեւեցան մեզ արեգակն ՚ի բարձանց, լուսաւոր առնել զխաւար մեր:

Եւ դարձեալ յաղագս Ածայնոյն, և անմահական ծանուցմանս այսորիկ, ասէ դու լուսաւոր առնես զճրագ իմ. և թէ ոյք նստէին ՚ի խաւարի, և ՚ի ստուերս մահու լոյս ծագեաց նց: Եւ զայս տմ շնորհաց լոյս և փառաց՝ խաւարեցուցանէ հողմն հպարտութեան և նսեմացուցանէ. և ցամաքեցուցանէ զցօղս շնորհաց. վա՟ զի է զերագանց խորշակ արեգակնակէզ, որ ոչ միայն ցամաքեցուցանէ, այլ և ապառաժս գործէ, զերկիր բանական, ըստ տրունական ձայնին որ սերմն անկեալ յապառաժի, այսինքն կենարար մարմին անմահին, յերկիր կորդացեալ ամբարտաւանին. ՚ի ծագել արեւու ամբարտաւանութեան, ոյր ոչ գոյր հող բազում, այսինքն խոնարհութիւն, ըստ օրինակին Աբրահամու, որ ասաց հող եմ. և Դաւիթ նոյնպէս զինքն ծանուցանէր, մի

թէ

թէ հող խոստովան եղիցի ասաց։ Եւ յորս ոչ եղիցի այս֊
պիսի հող բաշխուած խոնարհութեն, յորս անկցի մարմինն
Թրունակեանն, արդար և արեգակն խորշակաւ, ծագմանցն
խուռն, այսինքն բեեղ գեբուղ ամբարտաւանական ծագման֊
քն խուռն ցամաքեցուցանէ զ ցօղս շնորհաց ԱԾայնոյն. 'ի
բանական յերկրէն, և լինի անպտուղ, այսինքն ոչ միանայ
ընդ ԱՅ, և լինի ԱԾ, որպէս անշուշտն ասաց, լինիք ԱԾք,
կամ որդիք բարձրելոյ. քանզի երրանկի արեգակն իմաստասի֊
րի, երկեակն յաւելուածով, և մինն ոչ։ Ա՛ արեգակն որ
արդարութենէ, յաւուր այնմ ծագեցից ձեզ երկիւղածացդ իմոց,
արեգակն արդարութեն։ Եւ է որ անիրաւութեն, և մեղաց.
բաց այնմ արեգակն 'ի տուէ քեզ մի մեղիցէ. և թէ խէթիւ
հայեցաւ յիս արեգակն, և է որ զգալի, որպէս այս որ լուսա֊
ւորէ, որ ոչ ունի յաւելուածս բանի։ Եւ ճնշախող այսմ
խորհրդոյ զառաջինն առնու 'ի կիր, յանմահական խորհր֊
դոյն, այսինքն մարմնով և արեամբն։ Զ՟Ե որոյ սերմն այս,
որ էր անմահական խորհուրդն, ծածկել պտղոյ ճնշախողն
բազմաւ հողով, այսինքն բազմաւ խոնարհութեամբն զի աճե֊
ցեալ երևեցի յահագին աւուր դատաստանին, ուռճացեալ,
և աղարթափիտ պտղալից. և ոստարձակ. և յար և յաւէ֊
ժ յայսմ կենցաղոյս, ցօղեսցի զ ցօղ շնորհաց յօգի նորին.
զի մի կիզեալ չեռնուցու, և ցամաքեցի զբանն կենաց, որ
մարմնով և արեամբ ճնշախեաց և ցամաքեցի զ ցօղ շնոր֊
հաց. քանզի այնքան խորշակ հողմ յարուցանէ ամբարտա֊
ւան հողին, մինչ զի ոչ 'ի մի ժամ զովացուցիչ ցօղ, ի
եղեկեկլի, հողմն հարաւոյ խորտակեաց զ քեզ։ Եւ դար֊
ձեալ ասէ փոխանակ զի հպարտացաւ սիրտ քո և ասացեր թէ
ԱԾ եմ ես, և 'ի բնակութեան ԱՅ բնակեցայ այլ մարդես դու,
և ոչ ԱԾ, և ետուր զսիրտ քո, իբրև զսիրտ ԱՅ։ Եւ վասն
այսորիկ այսպէս ասէ տէր տէր, վ՟ն զի ետուր զսիրտ քո
իբրև զսիրտ ԱՅ, փոխանակ այնորիկ, ահաւասիկ ես ածից
'ի վ՟ր քո օտարս ժանտագործս յազգաց, և թափեսցեն ըզ
սուրս իւրեանց 'ի քեզ. և 'ի վ՟ր գլխոյ իմաստութե քո.
և

և տարածեսցեն զգեղեցկութիւն քո և կործանեսցեն զքեզ , և մի յաւնիցիս , մի թէ ասելով ասիցես, ա̄ծ եմ ես առաջի վիրաւորչացն քոց , բայց դու մարդ ես և ոչ ա̄ծ , և մեռանիցիս 'ի ձեռաց օտարաց: Եւ գործեալ ասէ բարձրացաւ սիրտ քո. և վ̄ս այնորիկ հանից հուր 'ի միջոյ քումմէ, և նոյն կերիցէ զքեզ. և տաց զքեզ մոխիր առաջի ա̄մ տեսանաց քոց. զի եղեր 'ի կորուստ և ոչ ես լիցես յաւիտեան: Արդ խորշակ հողմն , հպարտութիւն և ամբարտաւանութիւն այսպէս ցամաքեցուցանէ՝ ապականէ , և 'ի մոխիր դարձուցանէ , եթէ ոչ յօղն երկնային ներգործեսցէ. ը̄ս երեմիայի, սուգաւ երկիր, և խոտ ա̄մ երկրէ ցամաքեցաւ 'ի չարեաց բնակչաց երկրի. ապականեցան, անասուն և թռչուն, զի ասացին թէ ոչ տեսցէ ա̄ծ զճանապարհս մեր քանզի այնքան գարշագոյն է մեղքս այս, զի ա̄մ էակք տուժէ, և ա̄մ գալար որ իցէ , յանձն իւր այսինքն առաքինութիւն 'ի հոգի բանական , զա̄մ ցամաքեցուցանէ , և գօսացուցանէ : Այլ այն որ խոնարհացուցանէ , զանձն իւր ճնշակմամբս այսու ցօղ 'ի վ̄ր հոգւոյ նորա. և ծաղկի իբրև զշուշան բազմագոյն անուշահոտութե̄ , ը̄ս ասէ , եղէց իբրև ըզ ցօղ իսրայէլի , և ծաղկեսցի իբրև զշուշան , քանզի արդարև իբրև զշուշան ծաղկի. վ̄ս զի ը̄ Ա̄յ հաղորդի , ը̄ այնմ՝ հաղորդութիւն մեր իցէ ը̄ հօր , և ը̄ որդւոյ իւրում՝ յ̄սի ք̄սի և ը̄ բանին ա̄յ միաւորի. ը̄ այնմ՝ ես 'ի նմ̄ և դու յիս , զի իցեն կատարեալք 'ի մի: Իսկ որ ճնշակմամբ առցէ զսերմն զայս յերկիր իւր , բանական , և ոչ ծածկեսցէ հողով խոնարհութեան. այլ 'ի վերոյ կացցէ քան զհողն , և ոչ 'ի ներքոյ: Իսկ և իսկ կորուսանէ , կամ արեգակնակէզ լինի, ո̄ղ և ասացաւ , և կամ թռչնոց երկնից կերեալ լինի. որպէս և տ̄րն ասաց , և հպարտանան սիրտք իւրեանց. և մոռանան զնա , և վ̄ս այնորիկ լինին , իբրև զամպս առաւօտու , և իբրև զ ցօղ վաղորդայնոյ , որ անցանէ իբրև զփոշի , հոսեալ 'ի կալոյ , և իբրև զծուխ 'ի պատուհանից. ածցէ 'ի վ̄ր նորա տ̄ր հողմ՝ խորշակի , յանապատէ , և ցամաքեցուցէ

զե

գերակս նր՟, և աւերեսցէ զպարիսպս նր՟. և սաղմոս ասէ, զի ո՞չ իսկ փղփղակի ցամաքեցին, և ո՞չ զգալարի խոտոյ փղփղակի անցցեն: Ո՜վ անապատ երկակի իմաստասէրք, է որ անապատացեալ է ՚ի բարեաց, ո՞չ դժոխք, ո՞ր ոչ գոյ բարի ամենևին անդ, բայց միայն մեղք. վ՟ զի է տեղիք մեղաց. և է որ անապատացեալ է ՚ի չարեաց և հաւ յառաջնոյն, որոյ վ՟ ասէ մարգարէն, ո՞չ անապատ և անջուր, որ ոչ գոյ ՚ի նմա ճանապարհ. այսպէս ՚ի Ս՟բս երևեցայց քեզ. զի սրբոյք տեսլիք. և տ՟րն եթող զիննսունն և զինն յանապատին, և եկն ՚ի խնդիր կորուսելոյն: Արդ՝ խորշակ հողմին, որ ասացն եղեալ յանապատէ, դժոխոց վ՟ ասէ, այսինքն հպարտութիւն եղեալ ՚ի նմանէ. ցամաքեցուցանէ զերակս նր՟, և աւերէ զպարիսպս նր՟. պղծէ սիրտ մարդոյ, յոր կայեալք կան ամ՟ երակք. յայնժամ ցամաքին սոքա, յորժամ ապականի սիրտն, որ է աղբիւր նր՟, զի կենդանին նովաւ է կենդանի, ո՞չ մարդոյս տեսանել, զի որքան ՚ի շարժմանէ կենդանին է, և յորժամ ցամաքի և դադարի, իսկոյն մեռանի: Եւ այսպիսի իսկ է ճաշակող կենաց հացին. զի որքան խոնարհագոյնէ, ծաղկի երանգ երանգ գունով. և յորժամ հանէ յինքենէ, այսինքն յանձն իշխան կամայն, ամբարտաւանութեան հողմն, իսկոյն ցամաքի ՚ի շնորհաց հոգւոյն: Ո՜վ բնութիւնէ, հողմոյն, որ զթեթևս բարձրացուցանէ, և ո՞չ զծանրագոյնս. վ՟ այնորիկ տ՟րն զիւր խոկական, և վիմական անուՆն ՚ի վ՟ր երանելոյն Պետրոսի եդ՝ և զնա վէմ կոչեաց, և ասաց ՚ի վ՟ր վիմիդ շինեցից զեկեղեցի իմ. զի այնքան ծանրացոյց զնա, խոնարհութիւն իւր, յորժամ ասաց տ՟ր ՚ի բաց գնայ յինէն, զի այր մեղաւոր եմ ես, որ ոչ գծեաց և ոչ շարժեաց զնա հողմն, ամբարտաւանութեան, թէպէտ ահագնապէս բախեաց զնա սատանայ. ուրացութ՟ ՚ի տան քահանայապետին. այլ ոչ կարաց շարժել զնա յառաքելութենէ ծանր խոնարհութիւն. այլ իսկոյն հայեցաւ տ՟ր ՚ի խոնարհութի՟ նր՟, որ ՚ի դառն երեկալին ցուցեալէր յապաշխարութեան, որ յորժամ տ՟րն սե-

րանց

բանց, կամիր մերձել, նա զարհուրեալ սասանիւր, և հը-
րաժարիւր, և յորժամ՝ տ՟րն ասէր, եթէ ոչ լուացից ոչ ու-
նիս ընդ իս մասն, նա առաւել սարսափէր, յաղագս առա-
ւել ջաղանդութեան, ոչ միայն զոտս ասէր, այլ և զձեռս
և զգլուխ, և 'ի բազմիլն յընթրիս, յորժամ՝ զհանգամանս
մատնութեան և չարչարանացն ճառէր, նա որ վէմն էր. և
փականն արքայութեան փոխանորդ նորին, և գլուխ սրբազա-
նիցն դասուց, որոյ էր ամ՟ բանք, և հարցումն, և պատաս-
խանատուութիւնք, առաւել խոնարհութեան վ՟ն, ոչ իշխէր
ինքնին հարցանել, թէ ով է. այլ ակն արկեր առ սիրելին,
զի հարցանիցէ թէ ո՞վ է. մի թէ ոչ կարէր ինքնին հարցա-
նել, որ իւր էր անկն, այլ յաղագս անչափ խոնարհութեան
իւրոյ զայն արար. վ՟ն որոյ առաւել ծանրացաւ, առաւել
հաստատեցաւ, և ամ՟ հօտն, գառինքն որք են առաքեալքն,
ոչխարքն որք են հաւատացեալքն, ամենեքեան նմա յանձ-
նեցան, և ասացաւ արածեա զգառինս և զոչխարս իմ, և
դու հաստատեա զեղբարս քո: Եւ յաղագս այնքան խոնար-
հութեան 'ի դառնագոյն երեկոյին, յորժամ՝ երրակի ուրա-
ցութեան բախմունքն անձրևի, գետոյն և հողմոյն, ուժգը-
նակի բախեցին զտուն նր, ոչ 'ի մի կարացին շարժել
զտուն նր, զի վէմն 'ի վ՟ր վիմի էր հաստատեալ. վ՟ն որոյ
ընդ անցանելն, երրակայ ուժգնակի բախմանցն, անձրևին
գետոյն, և հողմոյն, հայեցաւ տ՟ր 'ի Պետրոս, և 'ի խո-
նարհութիւն նր, և ել արտաքս ելաց դառնապէս. և կրկնա-
կի հաստատեցաւ 'ի վէմն կենդանի: Այլ ընդդէմ այսմ
որ թեթևացեալն է, և հպարտութի՟, և ամբարտաւանու-
թի՟ բարձրացեալ հողմով, շրջի յոր կոյս, և միտք շարժողին
կամիցի, այսինքն սատանայի. քանզի յեռանդեան ջրոյ նը-
մանի ամբարտաւան հոգին, որ որքան բարձրանայ նուազի,
և մինչ դեռ երևի ա՛նցեալ յամի պակասեալ գնանի, ըստ
այնմ՝ տեսի զամբարիշտն վերացեալ բարձրացեալ, որպէս ըզ
մայրսն լիբանանու՝ անցի, և ահա ոչ էր, խնդրեցի և ոչ
գտաւ տեղի նր: Եւ երանելին Յակոբոս ասէ, իբրև մը-
րրիկ

ընկնէք, որ առ սակաւ մի երևեալ և ապա ապականեալ:
Զի թէպէտ մրրիկն մխիթարեցուցանէ սակաւիկ մի, և տրտ-
մեցուցանէ զանձնաւորսն, սակայն փութով կորնչի, և տե-
ղի նր ոչ ևս երևի. այսպէս ամբարտաւանն, թէպէտ տրտ-
մեցուցանէ սակաւիկ մի, և երկիծուցանէ, և տառապե-
ցուցանէ զմարդիկ ք. սակայն հուպ ընդ հուպ կորնչի. վս
այնմ յամբարտաւանութե ամբարշտին այրի աղքատն, այլ խո-
նարհեալ անկանի, իբրև վիրաւորեալ, ըստ այնմ՝ դու խո-
նարհեցուցաներ ոն զվիրաւորս զամբարտաւանս: Զի թէ-
պէտ հրով գեհենոյն. տանջորէ, զոր առեալ է ՚ի համեմա-
նէն խոզէ, զի ոն հուր տանջորէ. և այրէ զորս գտանէ հուպ
ինքեան, ըստ օրինակի դժնկին, ոն ասէ դատաւորաց,
ելցէ հուր ՚ի դժնկէ, և կերիցէ զեղևնափայտն. լիբանա-
նու. զի ոն սատանայ հպարտն ամբարտաւանութե զդասս
հրեշտակաց, նոյնպէս և որդին նր, զդասս սրբոցն հրակի-
զու. ոն ասացն սկրայք, որ հաղորդի ընդ ամբարտաւանին
զգեցցի զամբարտաւանութի. այլ սակայն վաղվաղակի կո-
րընչի, ինքն և հաղորդեալքն. ըստ այնմ՝ բարձցի ամբա-
րիշտն յերկրէ, և մի տեսցէ զդառս [Տ̃ն]. վս այնորիկ սաղ-
մոս երգուն զգուշացուցանէ ընդ այնպիսոյն և հաց ոչ
ուտել. ըստ այնմ՝ որ ամբարտաւանէր աչօք ընդ նմա և հաց
ոչ ուտէի, և առաքեալ զնոյն նմանապէս բարբառելոց, զգու-
շացուցանելով. թէ ընդ այնպիսոյն և հաց մի ուտէր ըն-
դէր վասն զի բնաւութեէ, մարդ որ ընկեցեալ ՚ի գետ, ՚ի սա-
նել զնա գետոյն, զոր ինչ և գտանէ, ընդ ինքեան և զնա
քարշէ, ըստ առակեանն, առաւել նր քարշէր զերկրորդ մասն,
պատեղաց երկնից. և դարձեալ ասէ, և ոչ կարացին կեալ
ընդդէմ, և տեղի ոչ գտաւ նց յերկինս. քանզի այնքան
ահագնապէս բախեաց ՚ի նա, բարկութենն [Տ̃ն] և սրտմ-
տութե հողմն մինչ զի ոչինչ կարացին ընդդէմ կալ, այլ
խոկոյն փայլակն, հրաբորբոք թօթափեալ զնս. և ոչ գը-
տաւ նց տեղի յերկինս. զի տեղին այն խոնարհայնէր վս
այնմ՝ որ խոնարհեցանէ զանձն բարձրացի. որպէս դահաւէ-
ժու

խութի, հեզացուցիչն է Տ՟ր ամ՟ էակաց, որ նա միայն գը-
լուխ ամ՟ հեզոց. ըստ այնմ՝ թէ ես հեզեմ՝ և խոնարհ սր-
տիւք: Եւ թէ արա առ մեզ ըստ հեզութեն քում, նոյն-
պէս և տեղին այն բարձրագոյն նոյնպիսեացնէ, խոնարհու-
թեն բարձրացուցանէ, ը՟ երանուհւոյն, զխոնարհս բարձ-
րացոյց. վ՟ն այնորիկ ասաց թէ ոչ գտաւ ն՟ց տեղի յերկինս.
զի տեղին այն խոնարհայնէ, զի ծայրագոյն խոնարհ, ամե-
նայն երրորդութեն, 'ի բարձունս բնակի, նոյնպէս և ամ՟
խոնարհ սրտիւք ես ընդ նմա, ըստ այնմ՝ ես 'ի խոնարհս և
'ի հեզս հանգչիմ՝ քանզի այս ես ըստ բնութենէ. զի լոյս
'ի խաւարի ոչ հանգչի, և ոչ գոյ տեղի. նոյնպէս և ոչ
հուր 'ի ձեան, և ոչ անապականութի յապականութեն. և
յաղագս այնորիկ ասաց, ոչ գոյ տեղի ամբարտաւանին յեր-
կինս: Եւ դարձեալ ասաց, և անկաւ վիշապն մեծ. օձն
առաջին, որ անուանեալ կոչի, բեեղզեբուղ, քանզի ո՟մ
ասացաւ, յանկանիլն նորա, առաջնոյ ամբարտաւանին, և
հաւանեալքն ընդ նմին անկան. յեւրաքանչիւր դասուց,
և անկելոցն ոմանք յօդս արգելան, ոմանք յերեսս երկրի,
և ոմանք 'ի դժոխս: Յաղագս օդականացն ասէ, ոչ է մեզ
մարտ, պատերազմի, ընդ մարմնոյ, և ընդ արեան, այլ ը՟
իշխանութիւս և ընդ պետութիւս, և ընդ աշխարհակալս,
խաւարիս, ընդ յայսս չարութեն որ 'ի ներքոյ երկնից:
Եւ վ՟ն այնորիկ որք են յերես երկրի. աղաչէին զՏ՟ր, զի
մի հրաման տացէ ն՟ց երթալ յանդունդս, զի այն կայր
տանջանք էր ն՟ց. վ՟ն որոյ աղաչէին մի յառաջ քան զժամա-
նակն տանջել զմեզ. զի յամի արդարեւ. այլ թէ հանես
զմեզ աստի, առաքեա զմեզ 'ի խոզսն և հրամայեաց՝ և գը-
նացին: Եւ վ՟ն դժոխոցն ասէ երանելին, զի եթէ 'ի հը-
րեշտակս յանցուցեալս Տ՟ծ ոչ խնայեաց, այլ խաւարային
կապանօք, արկեալ 'ի տարտարոսն, ետ պահել 'ի դատաս-
տան: Եւ յուդայ ասէ, 'ի դատաստան մեծի աւուրն, մըշ-
տնջենաւոր կապանօք պահեաց 'ի խաւարի. և յոբ ասէ, և
զտարտարոսն անդնդոց իբրև զգերի մի համարեցաւ զան-
դուն

գունդս իւր Յեմենի , Եւ զի՞նչ նշանակէր , որ յինն դա-
սաւորութեանց յիւրաքանչիւրոյն անկան , օրինակ մեզ բա-
ցայտեցաւ զի զգուշասցուք 'ի մեծագոյն մեղաց :
Զի առաջին երրեակքն , երրակից կարգաց եկեղեցւոյ ազդ-
առնեն , զի դասք աթոռոց նշանակեն զկաթողիկոսացն
դասք և կարգք · քերովբէիցն եպիսկոպոսաց , սերովբէիցն
քահանայից : Եւ ըստ այսմ' կաթողիկոսք , անթարթ աչօք
հայել պարտին 'ի դասս աթոռոցն · վ՟ զի նոքաեն առա-
ջինք , յեկեղեցիս անդրանկաց , ոպ՟ և նոքա յեկեղեցիս եր-
կրաւորաց · զի ոպ՟ նոքա Թարց մեծարանութե , և անխար-
տասանութե հային 'ի ներքնագոյնսն 'ի վերնագոյնս և
յինքեանս · քանզի 'ի ներքնագոյնս հայելով , Թարց անխար-
տասանութե և մեծարանութե , և արգելման , հեղուն ըզ
շնորհս , զնկալեալն յԱ՟Ծ պետականէն , այնքան խոնարհա-
բար , մինչ զի ոչինչ յինքեանց համարին , զոտեալն նո-
ցունց , այլ իբրև մատակարարք իմն , և միջնորդք , և ըն-
պասաւորք , զտուեալն յԱ՟Յ , տան :
Նոյնպէս և ներքինքն առեալ , զառեալն յԱ՟Յ , պարգե-
եալ 'ի նմանէ փոհանն · և իւրաքանչիւրն տուոյն և առո-
ղըն , միապէս յԱ՟Ծ պետականին հային տուրք , և պարգևք ,
'ի վերնագոյնս հայելով , յամենայնի երրորդութի՟ն , այն-
քան դողան և սարսափին , և զգէմս իւրեանց խոնարհե-
ցուցանեն , մինչ զի ոչինչ , և յոչ ընչէ զինքեանս համա-
րին , առ բարձրագոյն նո՟ փառսն : Եւ այսպէս անդադար
և անդուլ փառաբանութե՟ զօրհներգութիւս իբրև ընծայս ,
և պարգև , խոնարհաբար նմա մատուցանեն ասելով , աթոռ
քո յաւիտեանս յաւիտենից · և սբ՟ , սբ՟ , սբ՟ , տր՟ զօրութեց ,
և զայլ օրհնաբանութիւս զորս ինքեանք միայն գիտեն , և
որ ըստ էութեն զնմ՟ : Եւ յինքեանս հային , յոչ ընչէ եղեալ ,
զէութիւս իւրեանց տեսանեն , և խոնարհեցանելով զանձինս
իւրեանց , ոչինչ համարին · առ նո՟ բարձրագահ , և անհա-
սանելի փառսն : Եւ այս այնուէ յայտնի , զոր եսաեան եզե-
կիէլ , զդասս աթոռոյն , քառակերպեան · զի մարդն նշա-
նա

նախէր զխոհեմութիւն որ է առաքինութիւն բանականին ընդ խորագիտութեան ըստ Արիստոտէլի, զի ցանկ աթոռոյն դասք խոհեմութեամբ վարին, և նովաւ զանզգամութիւն սանձահարեն. որ ոչ կարաց բանաւորն, այլ զանզգամութիւն յառաջեցոյց, և զխոհեմութիւն 'ի ներքոյ ձգեաց, վասն որոյ և անկաւ: Նաև առիւծն նշանակէր զցասմնականութիւն. որ նորա յոր և յաւէժ, արիանան հեզութեամբ, և ծուլութիւն, և անբան բարկութիւն յետս նշանակէն, զոր ոչ կարաց բանաւորն, այլ բարկութիւն հրաւիրեաց յինքն, յորժամ եսես քան զինքն զաՀագոյն էակ. վասն զի հաստատեալ յանբարտաւանութեան է յառաջեալ լինի անբան բարկութիւն և սրտմտութիւն. քանզի բարկութիւն յորժամ. ընդ հեզութեան խառնի, և խոհեմութեամբ վարի, է բարի, և լուռ նմանութեան Այ. և յորժամ ընդ արիութեան խառնի, և անզգամութեամբ վարի, է չար. որպէս Մովսէսին որ եհար զվէմն և ոչ ել ջուր, յորոյ արգելաւ մտանել, յերկիրն աւետեաց, և Պետրոսին յոր ասաց Տրն, դարձո զսուրդ 'ի պատեան իւր զի ամ՛ որ սուր առնու. սրով անկցի. քանզի այնքան դառնագոյն լինի բարկութիւն թափց հեզութեան, մինչ զի ածէ յանդգնութիւն, յայնժամ վրիժս խնդրէ զայրահար, և կրձտէ զատամունս իբրև զգիշահար, և յոյժ հայթհայթէ զանկումն պերձնացելոցն և վերացելոցն քան զինքն, զոր օրինակ եսեմն երանելին Անտոնիոս, և յորժամ ձեռնարկութեան ոչ հասանի, լքանի և թուլանայ, և ծուլացեալ վհատի. այսպէս արար և բանաւորն, վասն որոյ և անկաւ: Նաև եզն նշանակէ զցանկականն, որ դասք աթոռոյն մշտաշարժ ցանկան, անհատանելի քաղցրագոյն Ածութեան. վասն որոյ զողջախոհութիւն, խառնեն ընդ կուսութեան, և վարին ընդ հեզութեան և ընդ արիութեան, և առաքինեան, խոհեմութեամբ, և յանմահական Ածութիւն հայելով, ոչ յագին սիրով բաղձանաց նոյ. այլ միշտ զցանկութիւն իւրեանց ողջախոհութեամբ առ նա վերաբերեն, և կուսութեամբ 'ի նոյնս մենան անսայթաքելի, և ոչ թուլանան առ վաւթարագոյնս

այլ

այլ բանաւորկուն ոչ այսպէս. վ՟ որոյ և իջոյց զինքն առ
ներքնագոյնն, և բղխահոսութ՟բ ապականեաց զինքն, ող
խառնել ընդ քարս, և նա ընդ ախտս: Օր ող զն՟
Ա՟ծ, մատնեաց 'ի չարս, սոյնպէս և զոսա, զի ցանկութիւք
նց, ոչ 'ի վերնագոյնս վերաբերեցաւ, այլ 'ի ներքոագոյնս,
այլ բանաւորկուն ոչ այսպէս վ՟ որոյ և անկան: Իսկ ար-
ծիւն նշանակէր, զմիտս նոցունց, զի առաքինութի մի-
տայն է արդարութի, հաւասարաբաշխութ՟, զի այնքան ա-
ռաքինանան, դասք սրբազանիցն աթոռոց, մինչ զի արդա-
րութին բնութի արարեալեն ինքեանց, և յամի հաւասա-
րաբաշխ լինին, Ա՟յն Ա՟յ, և ներքնոցն ներքնոց, մատու-
ցանեն անխարդախապէս, և ինքեանցն՝ ինքեանց. զի Ա՟յն
Ա՟յ մատուցանեն, զփառս և զպատիւս, և զօրհներգու-
թիւս: Ինքեանց որ ինչ յԱ՟ծ պետականէն ընդունին, և
ներքնոյն որ ինչ մարթէ, և ոչինչ յափշտակելով. և հրա-
ցուցանելով. ոչ վերնոյն հեղումն, առատաբուխ շնորհացն,
և ոչ ներքնոց զգոհացողական օրհնաբանութիւս. Այլ ներք-
նոյն վերնոյն մատուցանելով. ամենահոգի ազատականու-
թիւ, վերնոյն ներքնոյն, արդարաբար մատուցմամբ:
Իսկ արծիւն ունի, զբարձրաթռչութի, և սրագոյն տե-
սութի, որ նշանակէ զբարձրագոյն խոկումն կաթողիկոսաց,
և զտեսութի նց, որ պարտէ նց միշտ, 'ի հեզութի և 'ի
խոնարհութիւն Ք՟ի հայել, և նորօք յեկեղեցի նորին
շրջել. և ոչ 'ի վայր հայել այսինքն 'ի գործս բանաւորկու-
ին, որ էր հպարտութիւն, և ամբարտաւանութիւն, քանզի
այսու պատճառաւ էր թօթափումն, և անկումն նոցին, որ
ոչ 'ի վեր հայեցան 'ի հեզութիւն և 'ի խոնարհութիւն Ա՟յ,
ող Երեք մանկունքն 'ի հնոցին, որք զայն միայն հայեցան,
և խնդրեցին և ստացին, այլ արա առ մեզ ըստ հեզութե
քում, այլ 'ի ներքնագոյնն, այսինքն 'ի հպարտութիւն, և
յամբարտաւանութիւն, յաղագս որոյ և անկան. քանզի բը-
նութեամբ է, որոյ ոք և ցանկայ, նմին և հաղորդի: Այդ՝ ո-
րով ներքնագունին ցանկացաւ, նմին և հաղորդեցաւ, և վ՟
այ

այնորիկ եղև սանդարամետականն. քանզի այս ևս ըստ ըն-
նութեն ենթադասի, զի՛ իր որքան ծանրասցի խոնար, և
իջանի. և հակ նորին որքան թեթևասցի 'ի բարձունս սը-
լասցի: Օր օրինակ մէգ և ամպ, զի մէգն բաղադրի 'ի հո-
ղոյ, և յօդոյ, և յաղագս թեթևութեն սլանայ 'ի բարձունս.
զի թէպէտ 'ի մասանց հողոյ է, այլ սակայն թեթևացեալ է և
ընդ յօդոյ միաւորեալ. վ՟ այնորիկ և բարձրանայ. այնքան
մինչ զի և 'ի չորրորդեան հասանի յաստիճան, որ կապակցեալ է
ընդ բոլորակս հրոյն, և իբրև հասեալ անդ, թեթևագու-
նութե՟ն լըրով, մերձեցեալ հպի 'ի հրային, առ ժամայն
լուսաւորեալ 'ի նմանէ վառի, և զկերպարանս նո՟ զգենու,
և լինի ոչ՟ նա հուր, խոնարհ գոլով բնութե՟ն, և թեթև-
ացաւ 'ի ծանրութենէն, և բարձրացաւ, վ՟ որոյ և վառե-
ցաւ: Նոյնպէս և ամպն, որ սա ևս յերկուց մասանցէ բա-
ղադրեալ, 'ի ջրոյ և յօդոյ. և յաղագս յոյժ թեթևութեն,
և ընդ յօդոյն միաւորութեն, սլացեալ բարձրանայ:
Այսպէս իմաստասիրելի է, մարդկութե՟ բնութի՟, թէպէտ
ընդ վայրաքարշութենէ միաւորեալ, բայց սակայն թէ և
ընդ խոնարհութե՟ ևս միասցի, և միաւորիցի, թեթևասցի
'ի ծանրութենէ ամբարտաւանութենէ և հպարտութենէ,
բարձրասցի, ըստ այնմ՛ բարձր առնէ զտառապեալս, և թէ
բարձր առնէ զհեզս 'ի փրկութի. և թէ զխոնարհս բարձ-
րացոյց. այնքան մինչև զորդին մարդոյ, առնէ որդի Այ՟
և զմարդն Ած՟ ըստ ասացելոյ մարգարէին. և առնէ զհո-
ղեղէնն, հրեղէն, ոչ՟ ըստ բնականին օրինակ բացատրե-
ցաւ, որ մէգն և ամպն, թեթևացեալ բարձրացաւ. և ըզ
տեսակաւորութի՟ հրոյն զգեցաւ, և լուսաւորեալ պայծա-
ռացաւ: Որդ՝ եթէ հրեղինայն դասաւորութիք, ևս այս-
պիսեօք էին, վարեցեալք 'ի խոնարհագունութենէն, որ
էր ըստեղծական բնութին, վերանային 'ի փառս ըստեղ-
ծողին, զտիպ, և զնմանութի՟ նորին զգենուին. այլ յոր-
ժամ՛ 'ի ստորինագոյնն, զկերպ և զտիպ դժոխայնոյն, ըն-
կալան. վ՟ որոյ և 'ի ստորինն անկան. ըստ այնմ՛ խոնարհ

առ

առնէ զամբարտաւանս մինչև յերկիր, և եթէ դու խոնար-
հեցուցանես իբր զվիրաւորս զամբարտաւանս, և Յոբ ասէ
զա՛մ ամբարտաւանս խոնարհեցո, և շիջո զամբարտաւանս,
և դարձեալ ասէ զբազուկս ամբարտաւանից խորտակեցէր,
և Սողոմոն ասէ, Տէր ամբարտաւանից հակառակ կայ. և
սաղմոս ասէ, հատուցանէ այնոցիկ որք առաւել առնեն
զամբարտաւանութիւն: Եւ յերգս իւր երանուհին ասէ, ցրու-
եաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց, և քակեաց
զհզօրս յաթոռոց. և Տէրն ասաց, մի մինչև յերկինս բարձ-
րասցիս, այլ մինչև ՚ի դժոխս իջցես. և սաղմոսն ասէ,
հատո զհատուցումն մեղաւորաց և ամբարտաւանից:
Եւ այս էր հատուցումն որ արդար իրաւամբք, իւրաքան-
չիւր հատուցանէ, ամբարտաւանից անկումն, և խոնարհաց
զբարձրացումն. ըստ այնմ՝ խոնարհ առնէ զամբարտաւանս
մինչև յերկիր, և բարձր առնէ զտառապեալս յաղբիւսից:
Ով բարձրութիւն որ միայնոյ Այ վայել է, և ոչ արարա-
ծական բնութեան. վա՛ որոյ որ ձգտի յայն, փութով և վաղ-
վաղակի անկանի. քանզի ըստ բնութեան, յորժամ յարիցէ
ոք ՚ի թագաւորութիւն, և կամիցի թագաւորել, հակառակէ,
և ամբոխումն կամի, յաղագս որոյ յամենեցունց կործանի.
վա՛ս այսորիկ ասէր մարգարէն, թէ ոչ բարձրացաւ սիրտ
իմ, և եթէ խոնարհեցո զսիրտ իմ: Եւ վասն այնորիկ ա-
սացին Իմաստունք, հպարտութեան մի երբէք տայցես թոյլ
տիրել զգայութեանց քոց, զի նա էառ ընկեցն զմ՛
՚ի կորուստ:

## Գլուխ ԻԹ.

Յաղագս թէ որպէս Կաթողիկոսն, զարդին տեսանէ խոնարհել որպէս տեսանել գոհագոյնութեան, և յօրինակ հայեցողութեան լինել, չէ ձերոյն առաջին խոնարհագոյնեն :

Եւ յաղագս այսորիկ նոյն որպէս Կաթողիկոսք որք քահանայապետք անուանեցան երկրայնոցս, ոչ աթոռոյն ջոկք երկնայնոյ՝ պայծառն ցանկ հայել ՚ի տուժանս նոց, և ՚ի խոնարհս ունել զանձինս, զի մի զանգս նոց կրեսցեն պատիժ. այլ խոնարհութեամբ զդէմս ցուցանել, խոնարհազանութիւն, զի ոչ ՚ի նմ հանդէպ Ած, այսպէս և յերկինս, ըստ Եսայեայ. վն զի թէ խոնարհին քահանայապետք եկեղեցւոյ, նմանեալ ևս բեռանց խոնարհին, զի ըստ ծնրեանց մարդկն, և մարդոյ խոնարհեալ ոչինչ են զարմանալիք, զի համառետաւքեն և համարձակութի : Այլ այնք զարմանալիք, որ գերադրականնէ. վն որոյ ոչ որքազան, եթէ ոչ հայիս ՚ի վեր համաստիճանութեան և համակարգն քո, յաթոռոյն դասք, գտնեալ պարտիս հայիլ յառաջին քո Յն. որ այնքան խոնարհեցաւ զինքն որ ոչինչ էր փառաց, մինչ զի եղեւ նմ մարդկան յետին, որոյ խոնարհութեն ըմբռնչելոյն մարգարէք, և առաքեալք ոչ և ասէ, խոնարհեցոյց զանձն լինել հնազանդ, մահու չափ, և մահու խաչի, և հանգոյն ամէն Ածաբանք զարմանան, զի՛նչ տաւել զարմանալի, զի՛նչ աւելի պարծելի, զի՛նչ ծայրագոյն պատուելի, քան տեսանել զորդին Այ զվերադոյն որքայն հրեշտակաց, եղեալ մարդկայն յետին, յաւելուցամեծարանել ՚ի վն երկրի: Եւ զարմեալ ասեն թէ որպէս պատկերն ապեղանս, ծխով, փոշով, և ախտութբ. այսպէս, և պատկերն Այ հպարտութբ ագահութբ, և գէճ ցանկութբ: Եւ այսու թուի թէ յայն հայի բանն, զոր ասաց առացուք մարդ ըստ պատկերի մերում, և ըստ նմանութեն,

յա

յաղագս խոնարհութեան և հեզութեան ասէ. զի որ ունի զայսոսիկ ունի զնմանութիւն և զպատկերն Այ. քանզի աստ գիր, որպէս զմարդն ըստ պատկերի Այ: Արդ պատկեր է Այ և նկարագիր էութեան նր, որ կրէ զամ բանիւ զօրութեան իւրոյ, ըստ առաքելոյն տրն մեր Յս Քս, և սա ինքն ասաց, եւ հեզ եմ և խոնարհ սրտիւ. և որ զսոսա ունի, յայնժամ նմա նմանիցի, և որ ոչն ունի բանսարկուին նմանիցի, զի նա ոչ ունի զպատկերս զայս, և նմանութիւ. վն որոյ ելցէ արտաքս իբրև զուռ և ժողովեն զնա, և ՚ի հուր արկանեն և այրի. քանզի այս ես ըստ բնութեան որքան ունին հաստատեալ յորթն, ՚ի դալարութէ, և ՚ի պղաբերութե. այլ յորժամ հասցի, խելօքն և խոնարհութիւն բանին, և չորանայ: Այսպէս Ածէ որթ, ըստ տն ձայնի, որքան որք խոնարհութբ ՚ի նմա է հաստատեալ և հեզութբ, որթի և առատ եւ պտղաբերի, այդ երանուհի կայն, որ խոնարհութբ և հեզութբ, կապակցեցաւ ընդ յարմանոյ որթոյն, և սրբեցաւ, ըստ իւրոյն երգոյ, թէ հայեցաւ ՚ի խոնարհութիւ աղախնոյ իւրոյ, և յայնժամ պտղաբերեաց, զպտուղն կենաց, զորոյ զմարմինն ճաշակեալ անմահացաք, և յորթն պատուաստեցաք. և յարմատն կապակցեցաք. քանզի Յս Քս է որթ, և հայրն արմատ, և մեք ուռ, յորժամ կապակցեցուք յորթոյն, և նովաւ յարմատոյն, յայնժամ և ՚ի մեզ, ըստ նմանութե երանուհւոյն պտղաբերի զպտուղն կենաց, տրն մեր Յս Քս. քանզի երբեմն իմաստակք, ծնունդ երանելի պտղոյս: Նախ ՚ի հօրէ անմարմնաբար, և ՚ի մօրէ մարմնով, ժամանակաբար, և ՚ի խոնարհագոյն մերս մեր, հոգեորաբար: Յաղագս յառաջնոյն ասէ, նախ քան զարուսեակ ծնայ զքեզ. և թէ յառաջ քան զամ լերինս ծնաւ զիս: Յաղագս երկրորդին ասէ, այսօր ծնայ զքեզ. և թէ այսօր ծնաւ ձեզ փրկիչ. և թէ ահա կոյս յղասցի և ծնցի որդի, և յաղագս երրորդին ասէ նա է իմ մայր որ առնէ զկամս Այ, ամ խոնարհութբ: Տեսէք արդեօք, թէ յոր ծայրագոյն փառս վերածեալ խո-

նա

նարհութիւն. զի ծնեալն 'ի հօրէ, ամենօրհնեալ պտուղն, և յերկանուհւոյ կուսէն, և ինքն ծնանի, այսէր նմանութիւն Ս. Յ., որ ընդ նմանութեան իւրոյ ծնանի զնոյն ծնեալն. և այսպէս ամ՛ բարութիւնք գեղօրէն 'ի հեզագոյն, խոնարհագոյն բոլորին. վ՛ս զի ընդ նուաղին բարութեան հաղորդեցաւ խոնարհութեան, որք կեանք ամ՛ էակաց, ըստ պրոկղի իմաստասիրի, ամ՛ էակք նմա ըղձան, յայտէ զի նախկին բարութիւն, է կեանք էակաց, և 'ի վեր քան զամ՛ բարութիւնս: Նու դարձեալ 'ի 10, ասէ, ամ՛ էակք բնութ՛բ սրտին բարութեան, և առաւել մերձէ բարութիւն. քանզի արդարև այսպէսէ, ոչ Ս. Ծ. որ առաջին բարութիւնէ ցանկալիէ ամենեցունց, ոչ և արիստոտէլ 'ի մէտաֆիզիկայն, զանուն նո՛ ցանկալի կոչեաց, 'ի գիրս յերկոտասանս, և 'ի պլանկս, եօթն, ոչ և ասացն, և ըստ այսմ՛ ցանկալին և իմանալին, շարժէ զոչ շարժեալն, նոյնպէս և հաղորդեալքն ընդ նմա խոնարհութ՛բ մօտաւորքն են ցանկալիք, և ըղձալիք ամենեցունց. վ՛ս այսորիկ ասաց իմաստունն, ըստ բնականին, և առաւել մերձէ բարութիւն, նմա և ոչ նախկին բարւոյն, ցանկան և ըղձան քանզի ընդ նմա ունի զհաղորդութիւն, և զկերպարանս նո՛ է զգեցեալ, որ շարակարգի ը՛ նմա. ոչ և դարձեալ 'ի 14, ասէ, իւր կեցուցանող և ըմբռնող գոյութեան իւրաքանչիւրոյն է միակ, զի միակով կեցցէ, և յորժամ անջատի 'ի միաւորութենէն, յայնժամ և 'ի բարութենէն պակասի: Ահա տես ով սրբազան, և ըսքանչացեալ զարմացիր թէ ոչ ը՛ բնականին բարբառելով, 'համահետևի ասացելոյ ա՛ն. զի նա ասաց որ հաստատեալէ յորթն նա բերէ պտուղ յոյժ, իսկ իմաստասէրս ասէ, կեցուցանող, և ըմբռնող, գոյութեան իւրաքանչիւրոյն է միակ. զի նովաւ կեցցի, որ քան 'ի խոնարհութեան է կապակցեալ. Իսկ յորժամ ամբարտաւանութ՛բ անջատի 'ի միութենէն, յորժամ և 'ի բարութենէն պակասի, այսինքն 'ի հաղորդութենէ կենդանարար մարմնոյ և արեանն:

Ոչ և դարձեալ 'ի 28 ասէ, որդ առաւել միաւորեալն ա-

ռա

ռաւել նմանէ նմա, և որքան անջատեալ, այնքան առա-
ւել աննման. զի որ զխոնարհութիւն միայն ունի, նուազ
միաւորի ընդ ամենօրհնեալ Ածութեան, և որ ընդ խոնար-
հութեան ճաշակմամբ մարմնոյ և արեան կենարարին, մի-
աւորի, առաւել միաւորի: Արդ այնորիկ ասաց առաւել մի-
աւորեալն առաւել նմանէ նմա: Իսկ յորժամ անջատի 'ի
միաւորութենէ, այսինքն 'ի խոնարհութենէն, է աննման:
Իսկ յորժամ ամբարտաւանութիւ, և 'ի ճաշակմանէն հե-
ռանայ, է առաւել աննման. որպէս և դարձեալ ասէ, վասն
զի նմանք նմանութիւ եղանին նմանք, և ոչ աննմանութիւ,
և դարձեալ ասէ, զի զնմ հաղորդեցուցանէ նմանութիւն.
որպէս և անջատեալն տարբերէ զնմանութիւն, քանզի որ կա-
միցի հաղորդիլ ընդ անմահական ճաշակմանն, պարտէ զնը-
մանութիւն նորին յինքեան ներբերեցուցանել, այսինքն
զխոնարհութիւ և զհեզութիւն, ապա թէ անջատեալ լիցի
յայսցանէաց, մի՛ մերձեսցի, զի զհոգին կիզանէ: Որ ան-
մահական ճաշակս զայս, կենացէ պատճառ, և առիթ փըր-
կութեն, որ զխոնարհս հոգւով կեցուցանէ, զի հեզութիւ
մատչին 'ի նա, և հաղորդին միաւորութիւ ընդ նմա. որպէս և
դարձեալ ասէ նոյն սրբազան, 'ի 26, զի որքան ըմբռնի
և պարփակի իւրաքանչիւրոք 'ի պատճառէն իւրմէ, լինի և
գոյ, քանզի հաղորդութիւս այս սոսկալի, Ածական պատճա-
ռէ հաղորդելեացն. զի որպէս Ած պատճառ գոլով ամ էից
պահպանէ զարարածս, նոյնպէս և սրբազան հաղորդութիւն,
միաւորելով ընդ ճաշակողսն, լինի պատճառ միաւորութեն
ընդ երրորդութեն, և պարփակի իւրաքանչիւրոք, 'ի պատ-
ճառէս յայսմանէ, 'ի միաւորութի Ածութեան: Որ որպէս և
դարձեալ ասէ, նոյն իմաստունն, յեօթանասունն, քանզի
ներգործողագոյնէ, գերագոյն պատճառս այս, զի 'ի հա-
ղորդեալսն նախ ներգործէ. քանզի այնքան ներգործողագոյ-
նէ, մինչ զի զխոնարհաբար ճաշակօղսն, Ածացուցանէ. զի
թէպէտ հայեցողսն յարեգակն լուսաւորի, հաղորդութիւ
նորին, այլ ոչ լինի արեգակն: Իսկ զանմահական խորհրդոյս
հա

հաղորդողին լինի Ա՛ծ. Յայնմ ես ասացի թէ Ա՛ծք իցէք, կամ՝ որդիք Ա՛յ. վ՟ասն որոյ ասաց ներգործողագոյնէ զերագոյն պատճառն այս, զի ՚ի հաղորդեալսն այսպէս ներգործէ. քանզի այսէ կամք նորին, զի զամենեսեան հաղորդեցուցանէ իւրում բարութեն. որ և ասէ նոյն իմաստունն, 127, զի այս են ըստ բնութենէ, որ ծայրագոյն բարութին զոր ինչ և ունի զայլս հաղորդեցուցանէ, զոր օրինակ արեգակն որ ծայրագոյն լուսաւորէ, հաղորդս առնէ ինքեան, զլուսաւորս ամ՛, զաստեղս բովանդակ, և զլուսին, և զայս բացողաց, ընդդէմ ինքեան, և յոչ ոք խնայէ և խորէ: Այսպէս իմաստասիրելէ, և կամք արարչին զի զամենեսեան հաղորդեցուցէ իւրում բարութեն. որ և դարձեալ ասէ, 122, նոյն իմաստունն պրոկլոս զի նախկին էակին հետևեալքն ամենեքեան էութի առնուն. քանզի նախնիքն ճշմարտապէս ՚ի դրախտին, զկենդանական էութին կորուսին, և ՚ի ներքոյ անկեալ մահուանն գրաւեցան. վ՟որոյ և որք այժմ հաղորդութեն հետևին, նոյն էութին դարձեալ առնուն, զկենդանական և անմահական հետապնդելով նմին. որ և դարձեալ յայլ գերագոյն փառս վերափոխելով, բացերևեացէ, հանգոյն մարգարէից և առաքելոց. զի մարգարէն որ ասաց, Ա՛ծք լինիցիք, և որդիք, և առաքեալ ասաց, յորժամ նա յայտնիցի, նման նմա լինելոց եմք. և սա են իմաստասէրս, ըստ բնականի ենթադատելով, 189 ասէ, զի հաղորդութին նմանեցուցանէ ըզ հաղորդեալն հաղորդելոյն, և բնակից նմա առնէ. տես թէ և ընդ ԱՆ որքան համաձայնի, զոր ասէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ և ես ՚ի նմա, զի նա ասէ բնակից նմա առնէ, և ԱՆ ասէ, յիս բնակեսցէ, և ես ՚ի նմա, ուրեմն բնականն, և շնորհականն, են համաձայն. զի շնորհականն խոնարհութբ հպուամբ ազդ առնէ, և բարութբ և սրբմամբ մեղաց, ըստ այնմ՝ փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա ՚ի հացէ անտի կերիցէ, և ՚ի բաժակէն արբցէ, զի որ ուտէ և ըմպէ անարժանութբ դատաստան

ան

անձին իւրում ուտէ և ըմպէ։ Իսկ ըստ բնականին նոյն իմաստասէր ասէ, 114, թէ վատթար 'ի գալուստ Աստուածայնոյն արգելցի, զի յաջողակ լիցի հաղորդութեան. և թէ օտար յԱստուածային լուսոյն, աներևոյթ եղիցի, և լուսաւոր եղիցի համանգամայն, զի մշանջենաւորէ Աստուածայինն, և հրջրագոյն և պաշտպանողացն. վատթարէ և վատթարագոյն, հպարտութիւն և անհնազանդութիւն, որ արգելու զԱստուածային հաղորդութիւն, ով հոգւոյն որ շիջուցանէ զլոյս ճրագի, վառեալն նշուլիւք. վասն որոյ 'ի գալուստ Աստուածայնոյն լուսոյն, պարտ է 'ի բաց բառնալ, զհոգւոյն հպարտութիւն, զի յաջողակ լիցի հաղորդութեան. քանզի հոգին է իբրև ըզ պատրոյգ, և անմահական խորհուրդն իբրև զլոյս. որ վառէ զպատրոյգն, վասն որոյ որ կամի վառել զճրագ մարմնոյ իւրոյ, և զպատրոյգս հոգւոյ իւրոյ, պարտի զգուշանալ 'ի հոգւոյն անհնազանդութենէ, և հալածել զնա, զի մի շիջուցէ, և օտարն այն յԱստուածային լուսոյն, աներևութեցուցէ և յայնժամ յաջողակ լիցի ասէ հաղորդութեան. քանզի մշանջենաւոր լոյսէ, անեղ Աստուածութեան, զանմահական խորհուրդս. որ զմատչօղս լուսաւորէ, ըստ այնմ մատիք առ նա, և առէք զլոյս, և թէ նշոյլէ, մշանջենաւոր լուսոյն. և թէ ճանաչէ Աստուծոյ զօրութեան, և ծագումն ճշմարիտ փառաց ամենակալին. վասն այնորիկ և ոչ մի ինչ պղծեալ խառնի 'ի նա. քանզի արդարև, և ոչ մի ինչ պըղծեալ հոգի անհնազանդութեան, և հպարտութեան խառնի 'ի նա. Թէպէտ և ճաշակէ զնա հաղորդութեան, Ըստ ներհակքին խոնարհութեան Քրիստոսի. և անհնազանդութեան բանսարկութիւն և որ յաճախի 'ի մինն, շիջուցանէ զմիւսն։

Իսկ յորժամ այսպէս լինիցի, արգիլցի թէպէ Աստուածայինն։ Իսկ յորժամ արգիլցի ապականել զհոգին, բոլորովին լինի, ով ասէ նոյն իմաստունն, պրոկլոս. 149։ Իսկ մինչ արգելցի յԱստուածականացն, ապականեալ եղիցի բոլորովին, և փոխարկեալ յոչ էութեան աներևոյթ եղիցի յըմբռնողացն իւրոց մինչ պակասելով. քանզի ով ասացաւ, թէ ոստոց

պահ

պահպանիչ և ըմբռնօղ է արմատ նորին։ Իսկ յորժամ հաւա-
ցի · բանի պահպանողականն զօրութի, և այնու հետև ըզ-
գենու զապականութի, զի գօսանայ և չորանայ, և 'ի տե-
սակաւորութենէն յայնմանէ, զոր ունէր, և 'ի պտղաբե-
րութենէն անկանի, և փոխարկի յայնմանէ յայլ. և ապա-
կանի տեսակաւորութին զոր ունէր, և փոխարկի յոչ էու-
թի, յըմբռնողացն իւրոց միշտ պակասելով. և զայս ասե-
լով, ոչ զնիւթականն ասէ փոխարկութի, և լինիլ ոչ էու-
թի, այլ զտեսականն, զի 'ի բաց բարձումն տեսակա-
կանինէ, և ոչ նիւթականին, զի նիւթն միշտ է, և ոչ փո-
խարկի երբէք։ Իսկ տեսակն ցանկ փոփոխի, և աներևոյթ
լինի, և յոչ էութի դառնայ։ Եւ արդ խոնարհութին թէ-
պէտ է պատահական, և ոչ գոյացական. սակայն իբրև ըզ
տեսակաւորութի, իմն համարեալ է, աշակերտացն Քի,
որոյ 'ի բաց բառնիլն, անկանի յաշակերտութենէն նորին,
և լինի այլոյ ումեմն. որպ նա ասէ, ուսարուք յինէն, զի
եմ հեզ եմ, և խոնարհ սրտիւք. և հակ սորին, բարբառի և
բանսարկուն, ուսարուք յինէն զի եմ հպարտ եմ, և անբար-
տաւան սրտիւ, և այսու ապականի տեսակաւորութիւնն
Քի, բանի, և փոխարկի յոչ էութի, յըմբռնողէն իւ-
մէ 'ի Քէ միշտ պակասելով։ Զի նաև պատճառ ամի
կեցչութե, որով կեայ հոգին 'ի տեսակաւորութին Ած-
ային. 'ի նմանութի և 'ի պատկեր նորին, և նովաւ 'ի հա-
ղորդութի կենարարին։ Զի ճշմարտագոյն ճաշակումն այս
է որպէս միացուցիչ զօրութի ըստ Գրիգորիսի, 'ի վերին
կոյս ձգտեցուցանելով զմեզ պարզէ, և դարձուցանէ առ
ժողովողին հօր միաւորութի, և Ածաբար պարզութի. քան-
զի խոնարհութինէ իբրև միջնորդ իմն՝ մեր և Այ հա-
ղորդութեն, և անմահականն ճաշակման, և յորժամ խո-
նարհական հոգւով, ճաշակեալ լինի, բարձրացուցանէ, և
ձգտեցուցանէ, 'ի վերին կոյս որպ ող ընդ գլոշեաց միաց-
եալ, որ բարձրացուցանէ, և դարձուցանէ առ ժողո-
վողին հօր միաւորութի։ Զոր օրինակ և մեզ, որ 'ի յերկրէ

գոյացեալ, միանայ ընդ յօդոյ, և վերացեալ բարձրանայ, մինչև հրայինն գօտի, և 'ի մերձիլն լինի հուր, խառնի ընդ նա, և միաւորի ընդ նմա: Այսպէս և սրբազնագործ հաղորդութիւն, յորժամ ընդ խոնարհութեան միացեալ ճաշակի. վերանայ և բարձրանայ, առ ծովավողին հօր միաւորութի, և Ածայինն ասէ պարզութի. որպէս և ջուր որ պարզեալ և միացեալ ընդ օդոյ, վերանայ. զի թէպէտ ջր բնութեէ, վայրաքարշ, սակայն ընդ պարզիլն, և ընդ միացումն յօդոյն, 'ի վերինն կայս ձգտի, վերանայ և բարձրանայ, որպէս կենդանական մարմին կենսաբարին. զի թէպէտ էր երկրային, և 'ի հողոյ վայրաքարշութենէ, սակայն ընդ Ածութեն միացմամբն, սլացաւ և բարձրացաւ և վերացաւ 'ի բարձունս. և գործոյս զնա առ ծովակողին հօր միաւորութի, և Ածաբար պարզութի: Այսպէս և ճաշակողքն նոյն մարմնոյն, խոնարհութբ միանան ը նմա. և վերանան և բարձրանան, և սլանան 'ի բարձունս, և նովաւ դառնան առ ծովավողին հօր միաւորութի, և առ նորին Ածաբար պարզութի:

Եւ որպէս Ած պարզէ, յամ նիւթականաց. նոյնպէս և միացեալքն ընդ նմա, ճաշակմամբս այսու խոնարհութբ, պարզի յամ նիւթականաց հեշտութեց և մեղաց, և դառնան առ ծովավողին հօր միաւորութի, որպէս ասացն Ճշմարտութի, դու հայր յիս և ես 'ի քեզ, զի և նոքա 'ի մեզ իցեն:

Եւ երանելին Գրիգորիոս ասէ, որով առ ըսկզբնալոյն հայր, զմատչելն ընկալաք. քանզի որպէս ասացաւ, անճառելին էր հողոյ մասանց, ըստ ինքեան վերացումն, եթէ ոչ միացմամբ ընդ օդոյն. այսպէս անճառելիներ 'ի հողոյ գոյացեալ մարմնոյս վերացումն, թարց Այ միաւորութբն: Այլ յորժամ ճաշակեալ նովաւ առ ըսկզբնալոյն հայր, ընդ մատչելն ընդունիմք. որպէս և դարձեալ ասէ նոյն երանելի, ոչ կարելի է մեզ ձգտիլ առ աննիւթոյն նմանութի, եթէ ոչ նիւթական առաջնորդութբ. քանզի այսու ծանուցանի, թէ կամք Այ այսէր, զի հողեղէն բնութիս միաւորիցի ը Ածութեն. որպէս բոլորակ գիծ, որ միանայ ընկիցքն ընդ

վեր

վերջնոյն, ըստ նոյն Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ. ոչ կարէր
այլում լինել. վ̃ն այնորիկ հաճեցաւ մարմնանալ, և մարմ-
նովն այնու ճաշակմամբ, միջնորդիւ առ անձինն Ա̃ծու-
թեան վերացոյց, և միաւորեաց, վ̃ն այնորիկ և առաց նոյն
առաքեալն, նիւթական առաջնորդութբ հպեցաք առ ան-
նիւթն, նիւթականէ մարմին կենարարին, և անձինն Ա̃ծ-
ութեն. վ̃ն որոյ սովաւ առ նա միաւորեցաք. քանզի ամ՛
ինչ, որ ունի միաւորութե միջնորդաւ ունի, որպէս զայս
արեգական, 'ի միաւորու աչացն, որ միջնորդութբ օդոյն,
զի թէ օդն ոչ իցէ միջնորդ, անկարելի է ներգործութե
ներգործողին, և կրողին. այսպէս և ներգործութե անմա-
հական խորհրդոյն 'ի մեզ, թարց միջնորդի խոնարհութե.
նոյնպէս և միաւորութե Ա̃ծութե թարց միջնորդի կեն-
դանարար մարմնոյ և արեան, կենարարին. այլ և դարձեալ
ասէ Երանելին Գրիգորիոս, որ ոչ կարէ անմիջաբար յի-
մանալ էութեան արծալիլ, և կարող է ընտանի և բնակից
խուրեան վեր ամբարձութե այք զհասանելիս մեզ կերպա-
րանս զերաբնից էութեանց առաջի դրնին: Անկերպէ ան-
հասանելի Ա̃ծութեն, վ̃ն զի ոչ էսանի, մասն աչաց
էութենց, և անիմանալի յամ՛ էութենց, որ ոչ սահմանի,
'ի սահմանելեաց անսահմանն էութբ, այլ որով արդէօք
պարտ է յանդիմանել էութե, և որոյ վեր ամբարձութբ
ամփոփեալ ասէ թարց միջնորդի անկարելի, և թէ անկա-
րելի, ուրեմն հարկաւոր է կարօտութե միջնորդի, որոյ ըզ
վեր ամբարձութեն առ ընկալցի. յաննիւթ և յան կեր-
պարանէութե. յաղագս այսորիկ շնորհեցաւ միջնորդ մեզ
և Ա̃ծութեն միաւորութե զանմահական ճաշակս զայս որ է
երկնային մարմինն և արիւն Տ̃րունականն, Ք̃ս այնմ՛ մէ միջնորդն
Ա̃յ և մարդկան մարդն Յ̃ս Ք̃ս, որ ետ զմարմինն և զա-
րիւն իւր 'ի փրկանս բազմաց. վ̃ն որոյ պարտէ ճաշակողացն
և հաղորդողաց ընդ Ա̃ծութեն, որ նախ ունիցին զյատ-
կութին Ք̃սի, միջնորդ իւրեան, և անմահական խոր-
հրդոյն, զխոնարհութին, և զհեզութին Ք̃սի, և սո-

վաւ

փառ ապա մերձիլ 'ի սոսկալի ճաշակումն. և ապա զանմա-
հական ճաշակն միջնորդ ունել, և նովաւ ելանել ապա 'ի
միաւորութիւն Ծնութեան: Ապա ուրեմն այսու համանե-
լեօք, ըստ Դիոնեսիոսի, որ է Ծնդական խորհուրդս ան-
հասանելոյն հասեալ հաղորդիլք միաւորիլք և միանալք ընդ
նմա. և վ̅ա այնորիկ ասաց, միջնորդէ, որ զկերպարանս
անկերպելիցն որ էր Ծնութին, և անծանօթիցն ծանօթեց,
տաւղի գնին, և յայնժամ որբազանաբար միացուցութեն,
որ էր երևելի խորհուրդն, յանմահական մարմինն և արիւնն
Քրիստոսի, յԾնութին վերանալք. և ընդ նմա միանալք, ըստ
երանելոյն Դիոնեսիոսի. ոչ որք 'ի հաւատացելոյն, լինիցին
անհաղորդ բոլորովին նոցա բարուոյն, այլ ճշմարտապէս ամե-
նեքեան, միատեսակքն, որքէն բարբառելինքս, բանականքս,
նմա միայնոյ փափագելն. բայց հաղորդ լինին ոչ միապէս
միոյ; և նորին զօրէն. քանզի են որք ծայրագոյն սրբազնու-
թեամբ մերձենան, յանմահական ճաշակումն, ոմն երջանիկ լու-
սաւոր հոգւոյ, որ 'ի մեծն հաւմ, զսրբազնագործութեն
կատարէր. էջ եօթն լուսեղէն կամարն, և շրջապատեալ
զերանելեաւն, և այնպէս զսրբազնագործութեն կատա-
րեալ, հաղորդեցաւ յանմահական խորհրդոյն, ուստի արե-
գակնակերպ պայծառացեալ երեսք նո̅ր, 'ի հիացումն սըր-
բազան պապուն և հայրապետին, և ինքնակալ կայսեր և
թագաւորին Տրդատիոսի, և զերկրպագութեն ապա մա-
տուցին իբրու Քրիստոսի կերպի: Եւ են որք միջակօրէն
ճաշակեն, արժանաւորապէս, և ոչ այնպէս հրաշափառա-
պէս: Եւ որք ոչ այնպէս և ոչ այսպէս, այլ հաղորդ բան-
սարկուին, հպարտութեամբ և ամբարտաւանութեամբ, և պղծովք
լի չարութեամբ, վ̅ա որոյ և խեղդն դատապարտին, ըստ առա-
քելոյն, դատապարտութիւն անձին իւրում ուտէ և ըմպէ.
վ̅ա այնորիկ ասաց երջանիկն. թէպէտ հաղորդին ամենե-
քեան, բայց ոչ միապէս, այլ ոմն Ծայլինն լուծ բաժա-
նից, իւրաքանչիւր ումեք, ըստ արժանաւորութեն զկրումն:
Արդ այսու բացատրութեամբ երկակի ցուցանէ մեզ բացերև-
ութի

ուն, ներգործողին, և կրողին, զի մի ոք տարակուսեսցի թէ Ըստէ ժամ, յաջորդութիւն յաջորդեցելոցն, այլ ոչ թուոյ ուղղականի, զայսպիսիս խորհողացն. այլ պարտ է երկակիս մտախոհ լինել կրողայն, և ներգործողին, զի երանելին միայն զմինն բացերևոյթ. այսինքն ներգործութիւն զկրօղն, զի ոչէ բարուոք իմաստասիրելի, եթէ առ ընչականն զմինն բացերևեցոյց, և միւսն ընդ նմա ոչ իմաստասիրեցի. զոր օրինակ յորժամ ասասցի հայր, ընդ նմին և զորդին ոչ իմասցի, քանզի կապակցեալքն միմեամբք, զի հայր որդւոյ է, թէպէտ ոչ բացայայտեսցի որդին: Այնպէս և ներգործութին կըրողին է յայտնաբանութիւն, վասն այնորիկ առաց երանելին Ըծայինն լուծ բաժանեաց իւրաքանչիւր ումեք ըստ արժանաւորութեան զլուծն: Տեսանեմս արդեօք, թէպէտ ըստ քննականին բացատրելով խօսի զբանն: Զոր օրինակ յորդահոսան յաղբերէ, ընտրոք զոր ինչ ամանն և մատուցանէ, իւրաքանչիւրոք ըստ արժանաւորութեան առնու զլուծն. զի ով աս մատուցանի և առնու, նոյն քանաքար և տուողն տայ, և լնու. և այսու օրինակաւ իմաստասիրեա և զԸծայինն: Զի թէ երանելին, ներգործողինն յայտնեաց բանս, պարտէ խուզողայն, զմիւսն որ էր կրողին, իմաստասիրել բան: Նա զներգործութին արեգականն, բացատրելով, թարց կրողին ոչէ. զոր օրինակ ասասցի, արեգակն լուսաւորէ, իսկապէս զլուսաւորեալն բացերևեցէ: Ըրդ՝ ով աս առնու, նա նոյնպէս տայ, եթէ առաւելաբար, և եթէ նուազաբար, և որպէս իւրաքանչիւրոք պատրաստեալ ունի զինքն, նոյնպէս և առնու. սոյնպէս և տուողն, իւրաքանչիւր ումե՛ք, ըստ արժանաւորութեան բաժանէ: Այնպէս և Ըծայնոյս հաղորդութեան ըստ արժանաւորութեան բաժանէ, իւրաքանչիւր ումեք հաղորդողացն, որքան ոք պատրաստեալ զինքն ունի. ով և դարձեալ ասէ, նոյն սրբազան, թէ ոչէ ամ՝ ոք սրբազան, եթէ ամենեքեան միապէս հաղորդիցին. այլ թէպէտ հաղորդօղն մի և նոյնէ, որ յիւրումն կողմանէ, միաբար տայ, և ոչ այլայլաբար, սակայն ընդունողքն ոչ.

ոչ. զոր օրինակ արեգակն, յիւրում կողմանէ միաբար և
նոյնաբար տայ զլոյս իւր. սակայն ընդունողքն ոչ. զի որք
առողջ ունին զակն, գերազանցապէս ընդունին, և որք
միջակօրէն, միջակօրէն առնուն. և որք բժտեալքն են,
ցաւագնաբար, և այսպէս զանազանութիւն առնողայն են, և
ոչ տուողացն: Նոյնպէս և սրբազանութիւն սրբազնագործ և
յանմահական խորհուրդս է տեսանել, որ կրողինէ զանա-
զանութիւն, և ոչ տուողին և ներգործողին. յաղագս այնո-
րիկ ասաց երանելին, թէ ոչ միապէս հաղորդին, վ̅ն զի
ոչէ նմ̅ որք սրբազան, և ոչէ ամենեցունց ասէ գիտութիւն.
վ̅ն զի գիտութիւնս, խոնարհութե̅ ճաշակի, զի ո̅ր խոնար-
հութիւնէ անդէ, և գիտութիւն. արդ՝ յորժամ գիտութիւնս
այսու, 'ի սրբազնագործութիւն մատչիցի, սրբազնագոյնէ.
քանզի յայսպիսի գիտութիւնս հանգչի Ս. Ծ. որ էր խոնար-
հութիւն. վ̅ն այնորիկ ո̅ղ նախնումն ասացաւ քահանայա-
պետքն պարտին առաւել ցուցանել զգիտութիւնս զայս,
հայելով յանկ 'ի կարգակիցս իւրեանց, 'ի դասս աթոռոցն,
յորս հանգչի անմահ Ս. Ծութիւն: Ով ասէ երանելին Եզե-
կիէլ թէ իւրաքանչիւրոք 'ի նոցանէ, չորք թևք ունէին,
որ նշանակէր զքառանի առաքինութիւն, որովք իւրու-
թևովք 'ի վեր առ Ս. Ծ համբառնային. յորոց առաջինն է
խոհեմութիւն, յորմէ ծնանի խոնարհութիւն: Երկրորդ ար-
իութիւն, յորմէ ծնանի հեզութիւն: Երրորդ ողջախոհու-
թիւն, յորմէ ծնանի, բարոյական չափաւորութիւն: Եւ չոր-
րորդ արդարութիւն, յորմէ ծնանի հաւասարաբաշխութիւն.
և այսու քառանի առաքինութբ, 'ի վեր առ Ս. Ծ համբառ-
նային, և նոյն ամենամբ երրորդութիւն 'ի նմ̅ հանգչիւր:
Եւ ոտք 'նց ասէ կճղակաւորք էին, ո̅ղ զորթաց. զի որպէս
որդն սատակէ զօձ, 'ի մէջ կճղակացն, նոյնպէս և նոքա:
Իսկ յաղագս խոնարհութե 'նց ասէ, յոր կողմն դիմէր հող-
մն գնային, և յետս ընդ դէմ ոչ դառնային ասէ. այս-
ինքն կամքն Ս. Յ, յոր կողմն դիմէր, ըստ կամաց և ըստ հա-
ճոյից նմ̅ գնային, և յետս ընդ դէմ ոչ դառնային, որպէս
բան

բանսարկուն ընդ դէմ դարձաւ և եղև սանդարամետական։ Եւ այսպէս մեք կաթոլիկեայք, պարտին ՚ի նմ̃ հայել սրբազնաբար, և առաքինութիւնք ն̃ց, և խոնարհութիւն յանձինս ն̃ց տպաւորել զնախնկին աստացեալսն․ քանզի հայելիք սրբազան կաթողիկեան, Ա̃յ անարատ ազդեցութեն, յորս աչք ամենեցուն ՚ի նա հայեն, զի ներքնագոյնքն և խոնարհագոյնքըն, որք ՚ի նմանէ հաղորդին, և ՚ի ձեռս նր, շնորհացն Ա̃յ արժանաւորին, ցանկ ՚ի նա հային, և զոր ինչ նա ունի, խոնարհագոյնք օրինակ զնա ինքեանց առնուն, մանաւանդ զԱ̃ծ ՚ի նմին տեսանելին, և նովաւ զնա ճանաչեն և թէ խոնարհութիւն տեսանէ նմա, խոնարհ զնա իմանան, ապա թէ քաւ և մի լիցի ամբարտաւանութի, ամբարտաւան և զնա կարծեն․ քանզի ոպ̃ ՚ի հայելւոջ երեսք տեսանի, այսպէս և ՚ի սրբազան կաթողիկոսան, զԱ̃ծ միշտ տեսանի, վ̃ո այնորիկ ասաց տ̃րն, տեսէք զինչ արարից ձեզ, տ̃րս ձեր, և վարդապետս․ քանզի ծայրագոյն խոնարհութի եցոյց․ քանզի Ա̃ծ էր, և քահանայապետս, և զի այսպէս վայելէր քահանայապետին Ա̃յ․ և թէ այս․ ապա և սրբազանդ պարտիս զնոյն ցուցանել, զի ասաց օրինակ մի ետու ձեզ։ Արդ որովհետև զկերպարանս նր ունիս, ուրեմն պարտիս նոյնպէս գնալ, ոպ̃ և նոյն գնաց․ զի նա ասաց ո՞վ է մեծ, բազմեալն՝ եթէ ըսպասաւորն, ոչ ապաքէն բազմեալն, այլ ես եմ՝ ՚ի միջի ձերում, իբրև ըսպասաւոր մի․ ոչ հասարակ ըսպասաւոր, այլ յամի յետնեալ ըսպասաւոր․ զի մեծ ըսպասաւոր զբազմելոյն, ձեռին մատուցանէ ջուր ՚ի լուացումն։ Իսկ սա ոտից մատոյց և լուաց, վ̃ո որոյ և յետնեալ, ոչ ոք ՚ի սպասաւորաց, զփածնու դենձանկ, և սրբէ զձեռս լուացողաց, իսկ սա ըսվածու և ինքնին սրբէր զոտս ն̃ց, և ոչ զձեռս, ուրում՝ ահա յետնեալ յամենեցունց։ Արդ ոպ̃ սա քահանայապետ ճշմարիտ վըկայեալ ՚ի մարգարէից և յառաքելոց, և դու ես սրբազանդ, զնոյնն ունիս քահանայապետութի, պարտիս զնոյն օրինակ ցուցանել ՚ի քեզ․ զի նշանաւ այնու ճանաչիցիս, որպէս

աս

ամացն առաքեալ, նմանողք ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի, և միւսն ասէ օրինակ առէք, ողջամիտ վարդապետութեան տն: Նա էր ծայրագոյն և գերազանցեալ յէական, նոյնպէս և գործն իւր՝ այնքան ծայրագոյն եցոյց, ով սրբազան հայր, նոյնպէս և դու որ յեկեղեցիս ծայրագոյնես, զի ոչ ոք գըլխանի վեհափառ քան զքեզ, նոյնպէս պարտիս նորագոյն և վեհագոյն խոնարհութիւն ցուցանել 'ի քեզ, զի սքանչելի երևիցիս, որպէս արարն լուսաւորն հոգւոց. երանելին Ներսէս կլայեցին, որ հրաւիրէր զաղքատսն 'ի ճաշ, իբրև ելանէին, յանձանձմս լեալ նոցունց, դնէր զգլուխ իւր 'ի սեամս տանն, և աղաչէր զի կոխեալ անցցեն: Տեսէր արդեօք, թէ որպէս վայելչացոյց զքահանայապետութիւն, ընդ քահանայապետին Քրիստոսի. քանզի որքան մեծախոհ լինէր թերևս զայն ծայրագոյն խոնարհութիւն ինչ, որ ինքեան ըստեղծուածոյ վայելչացի, ոչ երբէք եգիտ, վասն որոյ ըզ ծայրագոյնս զայս արար, և եցոյց. և զայն ևս ոչ համարձակէր ըստ գործոյ տն համեմատութեանց. որ նա Քս և ծայրագոյն, յոլի մարդկութենս, և յեսանեալ ըստեղծուածոյ եցոյց. զանձնառելի խոնարհութիւն: Իսկ սա համանմանից եցոյց, և համարձակութենակցաց, ոչ համեմատի և բաղդատի, վասն որոյ և դու ով սրբազան, 'ի կարգակիցս քո, պարտիս հայել ցանկ, 'ի Քս 'ի դասս աթոռոց, և 'ի սրբազան կաթողիկոսսն, 'ի քաջագոյնն Գրիգորիոս, և յաջորդսն նր. և նորայոյն, և նորանմ խոնարհութիւն ցուցանել 'ի քեզ, որ ոչ այլ ոք փորձեալ իցէ, և յայնժամ ըստասցես զօրհնութի, և երևիցիս հրեշտակաց 'ի Սիոն իբրև զՔս. ըստ մարգարէին, զօրհնութիւն ըստասցի որ զօրհնս դնէ, գնասցէ նա 'ի զօրութենէ 'ի զօրութիւն և երևիցի Քս հրեշտակաց 'ի Սիոն: Սիոնէ եկեղեցի, հրեշտակքն 'ի նմա քահանայք, և պաշտօնեայք. և յորժամ երանելի կաթողիկոսն, նորանմ օրէնս խոնարհութեան և առաքինութեան դնէ ինքեան, յայնժամ գնայ 'ի զօրութենէ 'ի զօրութիւն, որպէս երջանիկն Յոհաննէս ոսկեբերանն, յետ աստեացս փոխեցաւ 'ի կա-

Ճնաւս սերովբէից․ և երևեցաւ իբրև զԱ՟ծս հրեշտակաց պաշտօնէից եկեղեցւոյ, ո՜վ Տ՟րն 'ի մէջ ըստացուածոց իւրոյ․ քանզի նա Ա՟ծ գոլով, այսպիսի նորաձև գործ ըսքանչելեաց եցոյց, ուստի հիացեան պետութիւնք երկնային զօրացն, և ըսքանչացեալ աղաղակէին ասելով, ըսքանչելի ես, ըսքանչելի են գործք քո․ և թէ մեծ են գործք քո Տ՟ր զօրութեանց, զի որքան ծայրագոյն էր 'ի բարձունս բնութ՟ե, այնքան բարձրագոյն գործ եցոյց, որով արարածք հիացեալ ըսքանչացան․ զի ոչ համեմատնից, այլ զի Ա՟ծ արարածոց, և ըստեղծող, ըստեղծուածոց․ մեր արդեօք համասահմանութեամբ, և համահաւասարութեամբ, ոչ 'ի մեք, և ոչ երբէք, յաղագս այսորիկ պարտիս յամի և դու ո՜վ սրբազան, և հաղորդ Ա՟ծութեան, 'ի սա հայիլ, և օրինակս սորին վարել․ վ՟ս զի աչք ամենեցուն 'ի քեզ ո՜վ յառաջնագոյն առաջի հային․ և պարտիս որ Ա՟ծ անուանեցար, տալ ն՟ց կերակուր 'ի ժամու, խոնարհութեան կերակուր, հեզութեան, և զանազան առաքինութեան, որով կեցցէ հոգին, բանալով զձեռսըդ զանազան գործոց, և լցուցանելով զն՟ո երանգ երանգ առաքինութեամբ, և զարդարելով զն՟ո, պէս պէս գունագոյն վարուք․ քանզի հովիւս յամ ծաղկանց, նկատողաց և տեսողաց․ զի ո՜վ աչք որակաւ 'ի գունոց ծաղկանց, այսպէս և աչք հայեցողաց, 'ի պայծառագոյն վարս քո․ որականայ 'ի տեսութենէ մտաց ն՟ց, խոնարհութեան քո և հեզութեան, և այլագոյն առաքինութեանցն․ և յայնժամ քև, և 'ի ձեռս քո վերաառաքեսցի գոհութիւն 'ի բարձունս, ըստ այնմ փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինս է․ տեսանելով ըզ գործս ձեր բարիս, ո՜վ և 'ի Ք՟ս տեսանելով, փառաւորելին, նոյնպէս և 'ի քեզ տեսանելով փառաւորեսցեն․ այլ թէ ցուցցես ծայրագոյն խոնարհութիւն, ոչ են ըսքանչելիք, զի համառեստակաց քոյ, և համագոյակցաց քոց առնես․ զի նա մարդ և դու, կենդանի և դու, բանական և դու, և զայս գոյացական և յատկական, որով խելք նա․ և դու․ և ոչ ինչ հիացական, եթէ ցուցցես զգործ խոնարհութեան։

Ապա

Ապա թէ ոչ, ապա հիմ՞ արդեօք մեծարանիս 'ի վն խոնար-
հագունիցն, թերեւս գոնեայ, պատահականաւ. արդ պա-
տահեալդ յորմէ արդեօք ընկալար, 'ի քահանայապետէն
ՔՏԷ, ուրում՝ պարտիս յար և յաւէժ, 'ի նա հայել. որ
ետ քեզ զփառսդ զայդ. քանզի նա որ ըստեղծողն է քո և
գոյացուցիչ, ոչ մարդ զինքն վարկանի, ըստ այնմ՝ այլ ես
որդնեմ՝, և ոչ եմ՝ մարդ, նախատինք մարդկան և արհա-
մարհանք ժողովրդոց. ամենեքեան որք տեսանէին զիս, ար-
համարհէին. և Եսայի ասէ, տեսաք մեք զնա, և ոչ գոյր
նր տեսիլ, այլ տեսիլ նր անարգ նուաղեալ քան զամ՝ որ-
դիս մարդկան: Արդ եթէ նախատիպն քո, և գաղափար
այսպէս, ապա և դու երանելիդ պարտիս լինիլ այսպէս.
զի որ զնա տեսանէր, 'ի դառնագոյն երեկոյին, մինչև 'ի
միւս երեկոյ անարգէին, հայհոյէին, և արհամարէին, թը-
քանէին 'ի սուրբ յերեսս նր, յորմէ սերովբէքն թեւա-
քողէին. ապտակէին, և կոփէին, ծաղէին և այպանէին,
և նա իբրև զգառն անմեղ, և անմռունչ ընդունէր զամ,
ող և մարգարէին ևս զարմանար, ըղքանչանայր և ասէր,
թէ զոր օրինակ ամքն զարմացին 'ի վն քո, այսինքն 'ի վն
փառաց Ածութեան, որ ոչ կարէ միտք զննել, և ոչ ծայ-
րագոյն իմաստութիւն քննել, և խոհականութիւն մակացութեան
իմաստասիրել, այնպէս անշքեացի տեսիլ քո 'ի մարդկանէ,
և տեսիլ քո յորդւոց 'ի մարդկանէ. որ ոչ 'ի մէք բանական
միտք, և իմաստութիւն ծայրագոյն, և գերազանց խոհակա-
նութիւն կարէ հասանել նորայն անարգութեան և կամ՝ ճառել.
թէ ո՞րքան և որպիսի էր, և կամ՝ թէ օրինակ ինչ մատու-
ցանել: Եթէ կարող իցէ ոք, զփառս Ածութեան նր ճառիլ,
նա և զայս կարասցէ. վն զի ոչինչ եգիտ մարգարէն հա-
մեմատ, այնմ անարգութեան բայց միայն զփառս Ածութեան,
որ հակառակէն բացատրեաց նոյնագոյն չափով, որ համա-
կշիռ եդ, և նովաւ զհակն չափեաց: Օի ուր ոչինչ միտք,
և ոչինչ լեզու, զփառս նր կարէ իմանալ և չափել, և
կամ՝ ճառել, նոյնպէս և ոչ անարգութիւն, զի անհաս-
նե

նելի եղոյց, արարածական բնութենս: Եւ արդ՝ ով սրբա-զանդ գլուխ, եթէ որդի քո և գլուխ, յայսքան յանարգու-թիւնս խոնարհեցոյց զանձն իւր, և դու ևս պարտիս նմա նմանիլ, զի յայնժամ ապա լինիցիս նմին նմա. երանելի, եթէ ոչ կատակեալ իցէ զքեզ ամբոխն, քանզի և գլուխն քո փառաւորիլ կրեաց, վ՟ն այնորիկ ասաց վ՟ն ն՟ր առաքեալ, երանելին և միայն հզօրն, որ հզօր զօրութի՟ տարու յամի. յաղագս որոյ և դու որքան առաւել խոնարհեցուցանես զան-ձըն քո, այնքան առաւել բարձրանաս ՚ի փառս. ով և վ՟ն գլխոյ քոյ ասէ առաքեալ, խոնարհեցոյց զանձն լինել հը-նազանդ, մահու չափ և մահու խաչի. վ՟ն որոյ և Ա՟ծ զնա առաւել բարձրացոյց, և շնորհեաց նմա անուն որ ՚ի վերէ քան զամ՟ անուն, ըստ մարդկութեն վ՟ն այնորիկ և խոնա-րհութիւնն ասէ, ՚ի խոնարհութե կալ զանձն քո, և առաջի Տ՟ն գտցես զշնորհս, քանզի պիղծ է ասէ առաջի Ա՟յ ամ՟ մե-ծամիտ. և դարձեալ ասէ առաջի երթայ խոնարհաց փառք. քանզի որքան որ խոնարհագոյն է, առաւել փառաւորի, քան-զի փառքն խոնարհագունիցն, առաւել հետևի. ով և ասէ Ա՟ծաբանք, խնդրեսցէ զքեզ փառքն, յորժամ փախիցես, նա հետևի քեզ. և յորժամ դու հետևեսցիս, նա փախիցի ՚ի քէն: Որ օրինակ յորժամ հետևիցիս ՚ի ստուերին քո, փախիցէ ՚ի քէն, և յորժամ դու փախիցես, նա հետևիցի քեզ. սոյն որայ օրինակ պարտիս կացուցանել զքեզ. խո-նարհագունիցն, զի յորժամ տեսցեն զգերագոյն փառաւո-րեալդ այսպիսեօք բարգաւաճեալ, նմանելով քեզ ուսա-նիցին զգործս քո ցանկալիս. զի կարասցես ասել յայնժամ, զգործն քո զոր ետուր ինձ կատարեցի, և ըստ առաքելոյ, զգործն կատարեցի, այսուհետև կայ և մնայ ինձ արդա-րութեն պսակն, զոր հատուսցէ ինձ տ՟ր յաւուր յայնմիկ, արդար դատաւորն: Եւ թէ և արդ՝ փառաւորես զիս, առ ՚ի քէն փառօքն զոր ունէի ձնշակնամբ մարմնոյ քո և ար-եանդ: Եւ յայնժամ լուիցես քաղցրագոյն բարբառ ն՟ր, եկ ծառայ բարի և հաւատարիմ՝ որովհետև ՚ի սակաւուդ հա-

Հաւատարիմ եղեր, զի օրինակ խոնարհութե զանձն քո ցու-
ցեր, 'ի վ(ե)ր բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութի-
ն տն քոյ. քանզի բարձեր զքաղցրիկ լուծ իմ, և տարար թե-
թևագոյն բեռնեմ, եկ և բազմեաց 'ի սեղան հօր իմոյ, և ես
պաշտեցից զքեզ. քանզի զեկեղեցկացուցեր զտունս յոթնա-
նս իմն և հօր իմոյ, մատուցելոցս առ քեզ. այսուհետև դու-
յիս և ես 'ի քեզ հանգեայց: Ապա թէ ոչ այսպէս այլ բա-
րձրայօն շլինցէ, կամելով զարհամարհեցուցանել զորս են ընդ
ձեռամբ զմեծագոյնս և զփոքրագոյնս խորովելով և այրելով
և զնծեցուցանելով, զամենս զանելով և հարկանելով ատե-
լով և տառապեցուցանելով, և կամ հրամայելով, 'ի վեր քան
զչափն, և զամենայն հրաւիրելով 'ի գերագրական փառս, և
յառաջնմանս և 'ի պատիւս առ 'ի յայրել, և 'ի խորովել. զաղ-
քատն հոգւով, յաջ և յահեակ խառնմամբ, ոչ ապաքէն
վկայութիւն ցուցանի: Նա արդ յոտս անկեալ աղաչեմ, զի
հայեսցիս 'ի սրբաչափ զարարողներս որ կարծեմ թէ զաղա-
րիցիս յաւելովդ, և մտախոհ լինելովդ, որ 'ի ներքոյ ունիս
զձեռսդ, որ զբեկումն և զկապումն նորին ցուցանէ, զի ա-
ռաց որ սուր առնու սրով անկցի. և առաքեալ ասաց պարտ է
եպիսկոպոսին լինել ցած հեզ, մի թշնամանող, մի հարկա-
նող, մի կռուող, այլ հանդարտ. քանզի այսպիսի մեղաւորա-
ցն գործք, ըստ այնմ՝ սուր հանին մեղաւորք, և լարեցին
զաղեղունս իւրեանց, հարկանել զաղքատն և զտնանկն ըս-
պանանել զայն որ խոնարհ էր սրտիւ. այլ զինչ նորին ասէ
կատարած, սուրք նոցա մտցեն 'ի սիրտս նոցա, և աղեղունք
նոցա փշրեսցին. քանզի զանելն և հարկանելն մարմնաւորա-
ցն է և ոչ հոգևորաց, հեթանոսաց ոչ Քրիստոսի աշակերտաց:
Եւ ուր ընթերցեալ լինի, եթէ զոք հարեալ իցէ Քս, այլ
մանաւանդ ինքն, հարեալ ինքն ձաղեալ, ինքն կափահա-
րեալ, և ապտակեալ, յերեսն թքեալ, և գան հարեալ,
'ի խաչն բարձրացուցեալ. և գայլիւք բևեռօք 'ի փայտին
բևեռեալ, բարձրացեալ և նախատեալ: Մի թէ ոչ կարեր,
ով ինքն ասէր, իջուցուցանել զգունդս հրեշտակաց, և

սա

տապալել զնա, ով միով անհասիւ, զզօրս ուխտակաց, զոր օրինակ միով ձայնիւ յետս յետս չուան, և զարկան զգետնի: Այլ ով ինքն ասաց, զբաժակ խոնարհութեն և չարչարանաց, զոր ես ինձ հայր ոչ ըմպիցեմ, ապա զիրդ լնուցուն գիրք մարգարէից, որք պատմեցին զանձնա խոնարհութենէ իմմէ, և զհեզութենէ. որպէս առաքեալն ասաց Պետրոս, որ բամբասեալ, և ոչ փոխարէնն բամբասէր. չարչարեալ և ոչ պահէր զսպառնալիս. և իրաւամբք մատնէր դատաւորին, որ զմեղս մեր իւրով մարմնովն վերացոյց 'ի խաչափայտն: Այս տն, և գլխոյդ քո գործ, որոյ աշակերտեցար զնոյն առնել, և գործել, որ յայսմ ծանիցիս յամենեցունց թէ նր ես. և ոչ այլոց, զի այսէ դրոշմ նր և կնիք. ով և հեռացեալ սիրելին, ես եցոյց յինքեան զնշան վրդովմանն, որով և աշակերտեցաւ նմին, ով և ինքնին խոկ յայտ առնէ, եթէ վտանգիւք առաւել, եթէ գանիւք ևս առաւել եթէ մահուամբ բազումանգամ, 'ի հրէից հնգիցս քառասուն միով պակս առբի, երիցս ձաղկեցայ, միանգամ քարկոծ եղէ. երիցս նաւակոծ եղէ, զտիւ և զգիշեր յանդունդըս տառապեցայ. 'ի ճանապարհս բազումանգամ, վիշտս 'ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս հեթանոսաց. վիշտս 'ի քաղաքի, վիշտս յանապատի. վիշտս 'ի ծովու, վիշտս 'ի սուտ եղբարց, 'ի ջանս և 'ի վաստակս, տքնութիս բազումանգամ, 'ի քաղց, և 'ի ծարաւ, 'ի պահս բազումանգամ, 'ի ցուրտ, և 'ի մերկութե, թող զայլ նեղութի, և զի հանապազ զխուժանն 'ի վր իմ կուտէր. 'ի դամասկոս ազգապետն արետայ արքայի պահէր զքաղաքն դամասկացւոց, ունել զիս, և ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ, ը պարիսպն, և փախեայ 'ի ձեռաց նր Տեառնն ով սրբազան հայրապետ զկաթողիկոսիս գործ, որէ կարգակից քո, զայս տմ ըստ տն իւրում կրեաց, և ոչ մի ինչ հատոյց ումեք, և որբոյց, քանզի այսէր գործ աշակերտուին Քի, և վս այնորիկ զայս եցոյց, յանձնին իւրում և նմանեաց տն իւրոյ, ով և. սասյն նմանողք ինձ եղ

եղերուք, որպ և ես Քի, ապա այնուհետ հաւատասցանէ, և ոչ
կրէ, զինչ զնա առ կոչեցից. ոչ գիտեմ՝ զինչ ասասցեմ, խոյ
եթէ պատճառեսցես ինձ յաղագս ըստահակութեան հայրն և
գանեցի, բարւոք ասես, տեսցուք ինձ մտրդ քո արդ ընդ
բանահալ, բայց ուր և դու. զի՞նչ ստուգագոյն քան ըզ
յուդայ, որոյ զգործսն պատմեցանէ սրբազնագոյնն աւե-
տարան, և ոչ զմի ինչ յայտնեցանեաց հարոյց նմա Յն
բան. այլ մանաւանդ նախկինն 'ի նա եցոյց, զխոնարհու-
թի, լուանալով զոտս նոր: Նոյն նա փոխանակ այնմ մատ-
նեայ զնա, և 'ի խաչ հան բարձրացոյց, և ես ըսպանանել
զխոնարհն սրտիւ և հոգւով: Այնպէս և երանելի աշա-
կերտն 'ի ստահակէն Աղեքսանդրոս եցոյց, յորժամ բա-
զումանգամ արտասուօք խրատէր, կողկողագին պաղատա-
նօք կրէր 'ի նմանէ զվէրս, շողեալ յերկաթոյն, և երա-
նելին ոչ ևս դադարէր, այլ ցուցանէր յինքեան զխոնար-
հութեան հեզութի. այլ դու սրբազանդ, զի ոչ յումեքէ
զայսպիսիս կրես, ըստահակեցելոց, որպ Քս, և նորին
աշակերտ: Այլ թէ և կրես ևս, նոցին նմանիս, յորոց ա-
շակերտեցարդ, ապա թէ ոչ կրեցեր մինչև 'ի մահ ըստա-
հակութե նոցին, և դու գանհարկանես, խոցես, վիրաւո-
րես և վէրս 'ի վր եդեալ թողուս կիսամահ, զի՞նչ ասասցես
Տն քում պատասխանի. յորժամ նա զգործս իւր ցուցանէ,
և դու զքոյդ, որ հոկ և հակառակ երեսին յամի:
Այլ զայս աղերսեմ, յառաջ սրբազանիդ անկեալ մի կա-
րասցես զվայելչապէսդ, ծաղիկ խոնարհութեանդ, որով նը-
մանիս Տն քոյ. քանզի մարմնաւորքն, որք զայսպիսի 'ի կիր
արկանեն, մեռեալքն հոգւով. այլ դու Քրիստոսէրդ որ-
դէգեալ Քս ունիս 'ի քեզ, կենդանիես կենդանեաւն, և
հոգևոր հոգևորաւն, վասն որոյ հոգևորացն զհոգևորս պար-
տիս համեմատել, և տեսանել թէ ո՞րք ըստամբակ ինչ
իցէ, աղաչել, աղերսել, և խրատել, և յուշ առնել ըզ
քաղցր խոնարհութեան Քսի, և հեզութեան, և նմա-
մարզել ըստ սրբազանին Պօղոսի, որ աղաչէր և աղերսէր,

զԱղէքսանդրոս, գոնեայ դարձցի, և երանելի աւետարանիչն Յովհաննէս զերիտասարդն որ տուեալ էր զանձն յաշակերտութենէն յաւազակութն, և ընթացեալ զհետ, այնքան արտասուաթոր աչօք, յիշեցուցանելով զփառս և ըզպատիւս երանելեացն, և զդառնութիս դժոխայնոցն, մինչև դարձոյց զնա: Այսպէս և դու սրբազանդ, որ 'ի վեհագոյն պատիւ առաքելոցն հրաւիրեցար նմանեաց ն̃ց, աղերսելովդ, և արտասուաթոր պաղատանօքդ, և մի զանելով, և սարսափեցուցանելով, քանզի ազատամիտ է սիրտ մարդոյ, քաղցրութեամբ առաւել անսայ, քան դառնութեամբ. վ̃ զի ա̃մ որ բնութիւ զքաղցրութին զհեզութին և զխոնարհութին սիրէ, զոր օրինակ զառն տեսանելով, և շուն կատաղի առաջնոյն առաւել ցանկայ, և ըղձայ, քան երկրորդին, զի ա̃մ որ բնութիւ փախչի՝ 'ի նմանէ, նոյնպէս եթէ տեսանիցէ ոք զօձ, և զաղաւնի, երկրորդին փափագի, և յառաջնոյն փախչի. վ̃ այնորիկ Ք̃ս ըստ օրինակի զառին եկն յաշխարհ որով այնքան ցանկացան, ազգ մարդկան, մինչ զի զա̃մ ինչ թողին, և զհետ նր̃ չոգան, ըստ երանելոյն, ահաւասիկ մեք թողաք զա̃մ՝ զկնի քո եկաք. և այլքն կամեցան վասն անհասանելի քաղցրութե նր̃, թագաւորեցուցանել զնա: Եւ հոգին Ա̃Ծ յաղագս այսորիկ, աղաւնակերպ երևեցաւ, և ոչ օձանման, որոյ յերևմանէն և 'ի տեսութենէն, այնքան քաղցրացան ազգք մարդկան, մինչ զի 'ի միոյ բարբառոյ Պետրոսի երանելւոյ, երեք հազար յարեցան յաշակերտան, հաւատացեալ 'ի Ք̃ս նոյնպէս թողլով զառանս և զբռնացուածս, և դու ես երանելիդ պատուիս ըստ սորանի զառին, և զաղաւնոյ ցուցանել 'ի քեզ, զքաղցրութին Ա̃Յ 'ի քեզ, և քաղցրութբդ դարձուցանել, զբռնահակս և զմոլորեալս. ըստ մարգարէին, քաղցրեա դու տր̃, և քաղցրութբ քով, ուստի ինձ զարդարութիս քո: Այլ թէ խստութիւ վարեսցես զուցէ ոչ հնազանդեսցի, այլ ապստամբիցի, և յարուցէ ցաւս, ընդ վիրին, և տր̃ւ լիցի պարտաւոր. քանզի ըստ եղծօղն զա̃մ եակս,

էակս, զոր ըստեղծ, յաղագս մարդոյն, և մարդն յաղագս իւր, և թէ մինն 'ի նոցանէ կորիցէ, զի՞նչ կարիցեմք տալ պատասխանի. վ՟ա այսորիկ կարի զգուշութեան պարտի. և զԱ՟ծ անդադար աղաչել, զի անպարտ մնասցուք. վ՟ա այսորիկ ես անարժանս ըստ բնութեան բարուց, հարցանեմ զքեզ վեհափառդ, դու որ ընդ ձեռամբ արարչին ես, ընտրեալ յերկնացունցս, զմինդ, լաւ է քեզ ըստեղծողիդ քո, քարոզութիւ խրատել զքեզ, եթէ դառնութիւ, աղաչեմ զքեզ տուր զիրաւն, և գիտեմ զի զառաջինն ընտրեսցես: Արդ եթէ դու այսպէս, ապա և խոնարհագոյնն քեզ, ըստ քեզ. վ՟ա այսորիկ ասաց առաքեալ, ներելով արուեստիք զպատուհասն, գիտասջիք զի և ձեր տ՟ր գոյ յերկինս, և Ա՟ծաբանք ասեն, ոչ կամիս լինել Ա՟յ ընդ քեզ, այնպէս լեր և դու ընդ խոնարհագունին քոյ, զի ըստ բնութեանէ ոչ և տ՟րն ես առէ, ոչ կամիք թէ արասցեն ձեզ մարդիկք, այնպէս արարէք և դուք ն՟ց. արդ՝ ոչ կամիս, հեզութիւ և խոնարհութիւ խրատեսցէ զքեզ և քաղցրութիւ, եթէ սաստկութիւ, գանիւ, և հարկանելով, և 'ի մէջ բազմաց խայտառակելով, և զամօթալի զքեզ ամենեսեան ցուցեալ նշաւակելով, և գիտեմ զի զառաջինն ընտրեսցես: Արդ ոչ դու վեհագոյնդ, յայնսմիկ հաճեցար, վեհագունին լինել ընդ ըստորնագունիդ. նոյնպէս և վեհագոյնդ լեր ընդ ըստորնագունիցդ քոյ: Օ՟ի ասաց տ՟րն, յայս խիկեն օրէնք և մարգարէք, և 'ի սոյն իսկ կախեալք կան: Եւ այսպէս 'ի քեզ հայելով, և զիրաւունս պահելով, յայնժամ ըստ սրբազանիցն գնդից, արժանաւորիս երկնաւորին ճաշակման, և հաղորդութեան, և տն քոյ համանմանութեան. քանզի որքան գահափառես, այնքան 'ի մեծագոյն վտանգ շրջիս. և որքան վեհագոյնես, այնքան վեհագոյն խոնարհութիւ և խոնհականութիւ պարտիս զքեզ քննել, 'ի հաղորդութիւն երկնաւոր սեղանոյն, մի գուցէ ումեք յ յեսմոգդ Յ՟ի, այսպիսեօք ինչ անիրաւեալ իցես. և որքա խոցեալ իցեն 'ի քէն, բանիւ և կամ գործով, վ՟ա զի յոնդամեց խոցումն գլխոյնէ.

ոչ

ոդ և քոյդ մարմնոյ, զի և նոքա մարմինք են ՚ի մարմնոյ Ք՛ի· Թէպէտ Տ՛րդ զերապանցագոյն, այլ ըստ խոցուածոյն հաւասարագոյն, ըստ սրբազանին յորժամ վշտանայ ինչ մի անդամ, նմանապէս ամենեքեան. վ՛ն այսորիկ պարտիս Տ՛րդ զցաւս և զխոցուածս յանդամոցն Ք՛ի սարսափանալ որոց և իցէ, որ քեզ իցէ. և ապա ՚ի սոսկալի յայն մասին խորհուրդ, զի անկիզանելի եղցես ՚ի յահեղագոյն հրոյն։ Աղաչեմ զորդեակդ, զի մի ատեցես ՚ի սրտի քում թէ զի՞նչ իցէ նա, որոյ զայս մատուցից, զի ՚ի Ք՛ն Յ՛ս մի են ամենքն, և ոչ գոյ խտրութիւն ըստ բարբառելոյ առաքելոյն. զի ամենքն զմի հոգի արբին, և ամենեքեան զմի և նոյն, կերակրոյն վայելեմք. եթէ գլուխ, եթէ անդամքն, որ իմաս-հայրենիքնեն, քան զորքաշանդ: Արդ՝ որպէս գլուխն միշտ զանդամսն, այսպէս և Տ՛րդ միշտ զանդամսդ քո պարտիս հոգալ և զցաւս և զխոցուածս նց բառնալ. քանզի ոչ ոք գլուխ զյետնեալ անդամն խոտէ, և զցաւս նց ինքեան ոչ համարի. այլ որքան նա ՚ի վիշտս և սուգ, և որքան նա ՚ի ցաւս և սուգ, և որ ինչ նմա, և սմա նոյն. և ոչ ՚ի միք կարէ ասել, չես ինձ պիտոյ: Նաև յորժամ այսպիսի մտախոհութեամբ բարցես խանդաղկութեամբ զցաւս և զխոցուածս յանդամոց քոց, յայնժամ անփորձ եղցես ՚ի հրոյն, պայծառացեալ ո՛պ զոսկի ՚ի հուր: Նաև ըստ սրբազանից առաքելոյն լուսափայլեսցի զոսկիդ քո, զոգիդ. քանզի անաչառ է հուրս այս, ոչ ՚ի մեծագոյնս հայի, և երկնչի, և ոչ ՚ի փոքրագոյնս և ՚ի փառաւորս և աղքատս, այլ որ տոչորելի է տոչորէ. և որ պայծառանալի է, պայծառացուցանէ. վ՛ն այսորիկ մեծագոյն վտանգէ, առանց փորձելոյ, մտցէ ՚ի հուրս այս. քանզի կարէ զպաշտօնութիւնն առաքեալ, փորձեսցէ ասէ մարդ զանձն իւր, և ապա ՚ի հացէ անտի կերիցէ. վ՛ն զի հուր ծա[...], ըստ այնմ Ա՛ծ մեր հուր ծախիչ է: Դարձեալ պարտ[...]թողիկոսին, քննել զինքն, զի մի անիրաւ անձամբ, զոր իցէ բանադրեալ, նզովեալ, և կամ անիծեալ. զի բանադրութիւն միայն հերետիկոսաց է, և

զն

խոստովանաց եկեղեցւոյ, միայն հասանի, և զայս ևս յետ բազում խրատուց, զոր օրինակ ասնէր Տ.Ն Կիւրղոս, ընդ ՚Նեստորի. որպէս աւանդեաց Տէրն, և ուսոյց աշակերտացն, թէ ասասցիր, յորժամ դու և նա միայն իցէք, և թէ ոչ լուիցէ, երկրորդումբ ասասցիր և թէ և նոյ ևս ոչ լուիցէ. յեկեղեցւոջն ասասցիր. և թէ լուիցէ և դարձցի, յամ հերձուածոյ իւրոյ, շահեցար։ Նա թէ ոչ յանձնամաւ զօրէնս զոր ունիս հաւատս յանդիմանեցն ՚Ք.Սի. և թէ ոչ պարտէ հաւանել երանելւոյն սա ցուցանէ ՚Դիոնէսիոս, նախ առ հայր պահօք և աղօթիւք, զի յայտնեսցէ թէ շարժումն այն, համաձայնական իցէ, թէ ոչ, քանզի խորհուրդք մարդկան զան-գիտաղքեն, գուցէ ոչ իցէ հաճոյ, կամացն Ա.Յ ըմպանութիւն այն. քանզի սոսկալին ըմպանութիւն է. վ.Ս զի հոգւոյ է, և ոչ մարմնոյ։ Օհ որ զմարմինն ումեք ըմպանանէ, դողայ և սարսափի ողբան ես հոգւոյն, զի մարմնոյ ըմպանեմն ասաց Ա.Ծ զարիւն նր ՚ի ձեռաց գազանաց խնդրեցից. և փոխանակ արեան արիւն նր հեղցի, և անձն անձին տացես, ապա հոգին որ պատկեր է Ա.Յ, որչան տուժանս ունիցի, յորժամ ըմպանցի։ Այսուհետև ասաց երանելին ՚Դիոնէսիոս, յորժամ հայրն երկնաւոր ազդեսցէ, և Տր հոգին Ա.Տ յայնժամ զսուրն շողացուսցէ, և կտրեսցէ ՚ի յանդիմանեցն ՚Ք.Սի որպէս յայտնեցաւ երանելոյն Պետրոսի հայրապետին Աղեքսանդրու, յաղագս Արիոսի, որոյ հերձաւ փորն, և եղեալ նշաւակի ատանեցաւ։ Այլ թէ կամիցիս ով որազին, նմանապէս շարժիլ, նախ ժողովել պարտիս զգիտնականս, և սրբ հանճարեղս, և ունողս զխղճմտանս, և հաւատով զարդարեալս, և իմաստութեամբ յղփացեալս, և անխտրոգախս, և նոքօք խորհեսցես, և զինաս պատժապարտին, յայտ յանդիմանել, առաջի ամենեցունց բայերեցես, և յետ վկայութեան ամենեցունց, ապա զսուրն սոսկալի, ՚ի գործ ածցես, որպէս արար ժողովն յեփեսոսի։ Ապա թէ ոչ այլապէս, զի յետոյ դարձուցես, զի ասաց Տէրն, որ սուր առնու սրով անկցի, քանզի անպարտ շարժումն, առ շարժումն

ժողն դառնոյ, ո՛ւր ձ՛նձղուկ 'ի բունն իւր, ըստ իմաստնոյն։ Օ՜ի անխրատ անէծք, և զուր նզովք ոչ կատարին, որպէս երանելոյն Պետրոսի, որ 'ի դառն երեկոյին, 'ի տան քահանայապետին, որ անէծ և նզովեաց զի՛ր, ոչ 'ի միք կատարեցաւ, (թէպէտ էր քահանայապետ կացուցեալ, ո՛վ ասայն տաց քեզ զփախանս արքայութեան, զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս։ Նոյնպէս և երանելի սրբազանդ, (թէպէտ ըստ նմա քահանայապետս, և զնորայն ունես իշխանութի, զի ո՛վ նա 'ի զուր նզովեաց զՔ̄Ն̄ ոչ կատարեցաւ. այլ մանաւանդ դառնագոյն խոցուածով վիրաւորեցաւ. և թէ տրն ոչ էր ձգեալ զձեռն, և կալեալ ողորմութ̄ իւրով, փագու ես սուզեալ էր 'ի յանցանս յայնս։ Այնպէս և սրբազանդ յորժամ այսպիսեաց յաւելցես 'ի վր̄ նոյն տն Յ̄ի Ք̄ի անդամոցն, անէծիւք և նզովիւք, սրբազանն Պետրոս 'ի վր̄ Ք̄ի բարբառեաց զանէծս, և զնզովս, վ̄ զի 'ի զուր էր, ոչ եւ ա- նա, այլ մանաւանդ յինքն դարձաւ, և խոր խոցեաց, մինչ զի արտասր նո̃ յարիւն փոխեցաւ, և ապա ողջացաւ։

Այնպէս և սրբազանդ յորժամ 'ի զուր յաւելցես 'ի վր̄ նոյն տն Ք̄ի յանդամոցն, ոչ եւանէ և կատարի, այլ զերանելիդ 'ի խոր խոցէ. մի թէ ըստ երանելոյ վիմին, զզղջմանք արտասուքս, յարիւն փոխարկիցի. քանզի անշուշտ տաց, որ ատացն, որ սուր առնու, սրով անկցի, և թէ սուրք նց մտցեն 'ի սիրտս նց, և աղեղունք նց փշրեսցին, քանզի ո՛վ անմեղին Ք̄ի, ոչ եւ սուրն այս, զոր առեալ էր քահանայապետին Պետրոսս, և ունէր պատրաստաբար, զոր և ձըգեաց 'ի Ք̄Ն̄, սակայն ոչ կարաց զնա խոցել. այլ ա՛ն նոյ յինքն դարձաւ և խոցեաց, նոյնպէս և սրբազան քահանայապետդ. թէպէտ ունիս ըստ նմա սուր ընկալեալ 'ի տնէ, սակայն յանմեղ անդամս Ք̄ի ոչ եւանէ, այլ յետս դառնայ. վ̄ այսօրինակ կարի զգուշութի պարտի, և պիտոյ. յաղագս այսօրինակ երանելին Գրիգորիոս ասէ զգուշ լեր. նախ բաշում ազօթիւք և պահօք զհայր աղաչես, զի թէ

հա

հաճոյ իցէ ըստ կամաց իւրոց. յայտնեսցէ, և մարգարէա-
կան հոգւով, որպէս սրբոյն Պետրոսի, յաղագս Սիմոնի, որ-
դին ՚ի ձեռն առաքելոցն, աղբեւոյ. և մե հոգին յորժամ
վկայեսցէ, յայնժամ՝ շարժեայ զսուրբ, որով և օրինակա-
րանելին Դիոնէսիոս բացերևեսցէ, զյայտնութիւն վի-
մին, որով և զերանութիւն ընկալաւ, թէ երանիէ քեզ Սի-
մոն որդի Յովնանու զի մարմին և արիւն ոչ յայտնեաց
քեզ, այլ Հայր իմ՝ որ յերկինսն է. քանզի նմ՝ այսպիսի
յայտնութիւն, ունի երանութիւն, եթէ դաւանութիւն, եթէ
անխծագրութեն: Իսկ թէ ոչ այսպէս շարժեսցի ոք, որպէս ա-
սէ նոյն Ս. ծաղան, աղդուցանէ սատանայական, որպէս և եղև
առ նոյն սրբազան, քանզի գիտէր նախատեսութ՚ իւրով ըզ-
նա, որ զկին զայն կրելոյներ, որ ՚ի սատանայէ շարժե-
լոցէր, ՚ի նշոյն. վ՚ այնորիկ ասաց ցուակ ցաքար, Սիմե-
ոն, Սիմեոն; ահա սատանայ խնդրեաց խաղալ զքեզ
իբրև զցորեան, այլ ես աղաչեցի զՀայր վ՚ քո, զի մի պա-
կասիցին հաւատք քո: Ահա այսու ծանուցանի, նմ՝ որ ոչէ
յայտնութիւն Հօր և որդւոյ, և հոգւոյն սրբոյ, է անխրա-
ութիւն, և նմ՝ անխրատութիւն է խռովութիւն ՚ի սատանայէ, վ՚
այնորիկ խաղալի ՚ի նմանէ. վ՚ այնորիկ աղաչեմ զսրբա-
զանդ մեծա, երկիր՝ պագեմ վ՚ քո ոչ աղաչեսցէ, որպէս վ՚
նր. զի որ վ՚ նր աղաչեաց գիտէր զի անգիտութ՚ եր զար-
ծելոց, այլ դու որ գիտութ՚ լժուի թէ ոչ աղաչէ. յա-
ղագս այսորիկ կարի երկիւղ կայ առաջի. վ՚ այնորիկ որ
զաթոռոյն ունիս կարգ և զաստիճան ըստ նց փնտացես, զի
ասաց երանելին Եզեկիէլ, յոր կողմն դիմէր հոգին, դի-
մային, և յետս ընդդէմ ոչ դառնային: Արդ հողմն էր մե
հոգին Ս՟բ ըստ մն, հողմ՝ ուր կամի շնչէ, և որպէս աստիճա-
նակիցքն քո սրբազան դասքն աթոռոյս, դիմեն միշտ ՚ի հո-
գին Ս՟բ, և ՚ի հաճոյս կամացն նր, ուր նա շնչէ նոքա դի-
մեն, և յետս ընդդէմ ոչ դառնան, հակառակ կամացն Ա՟յ.
այսպէս և սրբազան կաթողիկոսիդ միշտ պարտիս ՚ի կամս
Ս՟բ պետականին հայել, յոյս նա ածէ ալաացէ զնայ, և
յետս

յետս ընդդէմ ոչ դառնամ, 'ի աղօթից, և աւուրց հեծեծել
զի որ 'ի նմ ոչ խնայեաց, դուցէ և 'ի քեզ ոչ խնայես-
ցէ, քանզի նոքա ազնուագոյնքն, զի հրեղէնքն և լու-
սեղէնք, և դու սրբաղանդ տարրեղէն, և հողեղէն:
Որ եթէ յանցուցելոյ 'ի նոցանէ, ոչ խնայեաց, որք ընդդի-
մացան կամացն նորա, ինչպէս իմա զի և 'ի քեզ դուցէ ոչ
խնայեսցէ. յորժամ ընդդէմ դառնայցես. ով աւէ երանելին
Դիոնէսիոս, յաղագս Կարպոսի երանելւոյ, եթէ ոմն անհա-
ւատ 'ի մոլորութեն էած զոմն հաւատացեալ, և նա տրտմէր,
և աղօթս առ Ած մատուցանէր, յաղագս երկոցունցն կոր-
ծանմանն, և 'ի մէջ գիշերի մինչ աղօթէր եսես զձեղուն տա-
նըն բացեալ, մինչև հաստատութին, և յՔՍ կայր 'ի վր ողինն
պատուաէցելոյ, և ԾՃմ` բազմութիւն զօրացն երկնաւորաց,
'ի ծառայութիւն ՔՆ առհեղ և զարմանալի տեսլեամբ. և դար-
ձեալ նայեցեալ 'ի խոնարհ, եսես զերկիր բացեալ, մինչև
յանդունդս դժոխոց, և բազմութիւն օձից անդր զետեղեալ,
և վիշապն ահագին, զբերան իւր բացեալ, ըսպասէր եր-
կոցունցն անձանց. և նոքա մեծաւ դողութբ առաջին վե-
հերն կալով, մերձ անկանել. և օձն տատանէ և բերանով, շա-
տալ ուժգին փութելով, զի արկցեն 'ի վիհն, և եսես դարձ-
եալ զՔՍ յարուցեալ յօգնութիւն տառապելոցն, և կարկառ-
եալ զձեռս իւր, տարածեալ զի մի անկցին. և հեզ ձայ-
նիւ ասէր դադարեա, և մի Ը դիմամարտ կամաց իմոց. զի
կամիմ միւսանգամ չարչարել, վՐ մարդկան զի մի ոք կո-
րիցէ. և զայս տեսեալ, ասէ պատմեաց սրբազանն Կարպոս,
և ծանեան զծայրագոյն զգթութիւն ԱՅ, զոր ունի առ իւր
արարածս: Ածորդին հրամայեաց օրհնեցէք զանիծիչս
ձեր, և աղօթս արարէք 'ի վր նեղչաց ձերոց. քանզի երա-
նելին յակոբոս զայնպիսի բերան և լեզու, մահաբեր և
թունաւոր կոչէ ասելով, զի լեզուք մարդկան, ոչ ոք կա-
րէ հնազանդեցուցանել. զչարն, և զանկարգ. և զլի թու-
նօք մահաբերին, նովաւ օրհնեմք, զԱծ, և զՀայր, և նո-
վաւ անիծանեմք զմարդիկ, որք ըստ նմանութեան ԱՅ արա-
րան:

րան: Ի նմին բերանոյ ելանէն, օրհնութիւնք և անէծք. ոչէ պարտ եղբարք իմ այդմ այդպէս լինել. մի թէ աղբիւր ան-գամին, 'ի միոյ ականէն բղխիցէ քաղցր և դառն. մի թէ մարթ ինչ իցէ եղբարք իմ, 'ի թզենւոյ ձէթ բերել, կամ յորթոյ թուզ. և ոչ աղտաղտին աւազան, ջուր քաղցր առ-նել: Եւ ըստ այսմ խրատու, մի վաղվաղակի զոք անիծա-նել, և կամ նզովել, զի այնքան պարտէ սանձահարել, ըզ-բերան, և զլեզուն, զի զոր ինչ արտաբերեսցէ կատարիցի: Օի զորբազանդ զոր եդ Ք՟ս յեկեղեցւոջ իւրում, 'ի շի-նել եդ, և ոչ 'ի քակել. ըստ առաքելոյն: Վ՟ն այնորիկ գը-լուխդ, պարտի միշտ հայել յանդամս, և զամենեւեան շի-նել և ուղղել, այլ թէ յանդամոցդ քոյ, ոմանք ունիցին ցաւս ինչ, առաւել դու պարտիս ցաւիլ, որպ՟էս ն՟մ գլուխ զանդամս հոգան, զվէրս նոցա հարին բուժել. զցաւս բառ-նալ, զթարախն սրբել, ըսպեղանիս 'ի վ՟ր դնել, լուանալ, մաքրել, և զայլս այլնպիսիս փրծել. քանզի ոչինչ գլուխ, զանդամս մարմնոյն խոցէ, վիրաւորէ, և կամ հատանէ, քանզի ինքեան և իւրն շ՟ն, զի թէ բարին անդամքն, ողջ, և առողջ, իցեն 'ի վ՟ր, ապա թէ վիրաւորեալ և ոչ նոյնպիսի, ցաւն ն՟մ յինքն ժողովէ. ինքն առաւել ցաւի, քան նա, ինքն գլուխն առաւել տրտմի, քան նա. քանզի ն՟մ զգայութիւք 'ի նմին են, վ՟ն որոյ ն՟մ ցաւք և ուրախու-թիւք, վէրք, և ողջութիւք նմանեն, և ողջութիւք, և ոչ ան-դամոցն, որպ՟էս և գերագոյն գլուխն մեր, Ք՟ս Յ՟ս, այսպէս ն՟մ յինքն ժողովէր. ըստ մարգարէին, նա զցաւս մեր բառ-նայ, և վ՟ն մեր չարչարի, և դու որպազանդ պարտիս 'ի գը-լուխս քո հայել. զի որպ՟էս նա, նոյնպէս և դու արասցես: Եւ տես թէ որպ՟էս ցաւէր. և 'ի ծայրագոյն խոցուածս, ոչ ինչ հոգայր վ՟ն իւր. և ոչինչ աղաչէր, յաղագս իւր, այլ հոգայր զանդամս իւր, և վ՟ն նոց աղօթէր, 'ի քաւութեան նո. հայր թող դոցա, քանզի որպ՟էս ասացի, ոչ միայն զգայութիւքն են անդ, այլ և բանականութիւն, վ՟ն որոյ խոկումն ն՟մ անդամոց նմանէ. նոյնպէս և ն՟մ խոկումն, խոնարհականա-

զու

ջունիցն երանելոյ կաթողիկոսինն. և ոչ յեսանոյն, յաղագս որոյ միշտ ցաւել պարտէ ՚նց. արթուն աչօք հոկել, և զն-նել զանդամսն, զի մի տիրեալ ինչ իցէ ՚ի նո աղտեղութի, քանզի ովք իցէ ՚ի մարդկանէ, որ հայիցի ՚ի ձեռս իւր, և այն իցէ աղտեղեալ՝ և ոչ լուասցէ, և մաքրեսցէ, և հակ ամին, ովք տեսանիցէ ՚ի մատունս ձեռաց իւրոց յեռեալ մատանիս ոսկեփայլս ականէք զարդարեալ և ըստ խակու-թին ձեռին և կարմրութի ընդ նմին շողշողեալ, ոչ բեր-կրիցի և զուարճասցի. քանզի և անբանն, այսպիսեօքս ևս զուարճանայ, թող թէ բանականն. քանզի և ձի յորժամ տեսանիցէ, զինքն զարդարեալ, և յամ՛ անդամս իւր, հայ-եցեալ բերկրի, և զուարճանայ. նոյնպէս և ամ՛ անդամոց, զայն խոկայ զլուխ, և ոչ այլ ինչ. և ոչ որ բանական և անբան զանդամս իւր հատանէ, և արտաքս ընկենու, այս-պէս և սրբազանդ զնոյնս պարտիս հոգալ. յաղագս անդա-մոցդ քոց, և ոչ անխնամ իւր նզովիւք, և բանադրանօք հատանիլ, կամ խոցել, և կամ վիրաւորել. այլ ո՟պ որոյ գլխոյ անդամ որ ոչ ունիցի վէրս յամ՛ երեկոյ լուանայ, և ըսպեղանիս ՚ի վր եդեալ բազմաւ զգուշութբ պարտէ, զի մի ներերևիցի նեխուածն: Նոյնպէս և սրբազանիդ պարտէ առնել, յամ՛ երեկոյ ՚ի ժամու ննջման, զարտասուս ըսպեղանիս կապել. նոյնպէս և զաղօթսդ, սրբափայլս, և լուանալ զամ՛ անդամ-սոց, և օրհնութի ըսպեղանիքն, ՚ի վր հեռաւորաց և մեր-ձաւորաց անդամոցն դնել. և կապել ՚ի խնամս Քի, և յանձնել ՚ի նա, զի մի ննջելդ առանց այցելութե մտա-ցին, և նեխիցին, ՚ի մեղս և յանցանս: Որ ո՟պ աչք ամ՛ կենդանեաց ՚ի գլուխ ունի, այսպէս և սրբազանիդ ակն պարտիս ցանդ ՚ի գլուխս ունել, և միշտ ՚ի նա հայել, և այնպէս պատուես զնա ո՟պ և նոյն զնոյց. մի զոք ձանձրա-ցուցանել, մի զոք վիրաւորել, մի զոք կեղեքել, և յափշտա-կել, այլ զամենեցունց զամ՛ յամի իւրն համարել, և մի իշ-խանաբար զվճռակս եպիսկոպոսաց, յափշտակել, իւրացու-ցանել և կամ այլոց ումանց տալ. քանզի ամ՛ իւրէ և ին-քեան:

քեան, ո՜վ և անցաւ, թէ՛ ինչ գլխոյն է։ Ապա թէ խոր-հեսցի գլուխն, զմի մատն հատանել ձեռին, և տալ աչա-ցըն, ասելով թէ տասն ունի, և ակն ոչինչ, ոչ ապաքէն անիրաւէ յանդամն, և կորուսանէ, ակամբն ոչինչ օգուտ լինելով, բայց հատմամբն կորուսանելով։ Այսպէս և երա-նելիս յորժամ զմիոյն զմինն հատցես 'ի վիճակաց, և տա-ցես 'ի քոյդ սիրելեաց, անիրաւութիւն է և անօգուտ. վա՛ որոյ յաղագս այնպիսոյն ասէ մարգարէն, ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, և սրբազանն ասէ, անիրաւք զար-քայութիւն Այ ոչ ժառանգէ։ Օ՜ն թէ ոչ ժառանգեն, ապա զի՞ արդ կարասցեն մերձենալ, 'ի սոսկալին յայն խոր-հուրդ, և ընդ Այ միաւորիլ. զի անիրաւութիւն 'ի սատա-նայէ է, և 'ի կամարարաց նր. և դու սրբազանդ որ կամիս կոչել 'ի քեզ զամենամեծ երրորդութիւն, ամենասրբազան ճաշակմամբդ, նախ զերրորդութիւնդ պարտիս սիրել, և ապա հրաւիրել։ Օ՜ն արդարութիւն և անիրաւութիւն, հակքեն միմեանց. յորս իցէ մինն, ոչ մնայէ միւսն, զի անկարելի է. ուրեմն զմինն արտահանել պարտիս, և ապա զմիւսն հրա-վիրել. ապա թէ կամիցիս զերկոսեանն, անկարելի է, և ար-տաքոյ բնութեան, որ ոչ կարէ լինել, զի անհաւանելի է բը-նութե, թէ զմի յանդամոյդ հատցես, և միւսոյն տացես, ո՜վ թէ զաչքոյ ակն սիրելով, զձախն հանցես տալով նմա, ո՞չ ապաքէն երկեակքն կորնչին, և միասին, զմինն հա-նելով, և միւսոյն սեղիք պատրաստելով, այլ իւրաքանչ-իւրն քոյ, ո՛վ պատուական գլուխ, ոչ կարես, զմինն սի-րել, և զմիւսն ատել, զմինն նախամեծար առնել, և ըզ միւսն արհամարհել, այլ երկոցունց նախամեծարութիւն, և արհամարհութիւն քոյ, և զորս 'ի սոցանէ, խեթմամբ ծա-կեսցես, և ոչ դու ցաւիցիս, և զորս դու փառաւորեսցես, որ ոչ դու ուրախասցես, այս ըստ բնութեան էր, որ անհաւ-անելի ցուցաւ։ Նաև ըստ վկայութեան սրբազանից գրոց, ա-սէ իմաստունն, որ քակէ զցանկ հայրենի, հարցէ զնա օձ. վնայարրին պարտէ, 'ի շաւիղս հարցն սրբոց ընթանալ, քան-

զի

զի և 'ի նմա գոյր հողի, ո՛չ ի լուսաւորն հոգւոյ. և յայլմ սրբազնագոյս, և ոչ յաջ և յահեակ խոտորիլ, քանզի որ այլ ընդ այլ գնայ, զարտուղի է, և զարտուղին, և ուղիղն՝ հակաքէն. և հանապազորեան մի մերձենար աղաչեմ, այլ նախ զմիտն բարձ, և ապա միւսոյն հաղորդեաց, զի զօկեալն 'ի ձե-նջ առէ աղաղակէ. և բոլոր նոր առէ եհաս յակամբս ոմն զը-րութեց. յաղագս այսորիկ 'ի մտածանել քո զսրբազնա-գործութին, յիշեա թէ որք ունիցի, խելթ ինչ զքէն, նախ զայն բարձ, և ապա զխորհուրդն սուրբ կատարեա, զի ա՛մն տո՛ն անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունիցի ինչ խելթ զքէն երթ նախ հաշտեաց ընդ նմա, և ապա եկեալ մատուցիր ըզ-պատարագն: Արդ որո՛յ պատարագի վասն առէ զայս տէ՛րն, ոչ ապաքէն անբանից, արդ եթէ անբանից պատարագին, այս-քան զգուշութի՛ն պիտոյ է, ապա անմահ զենմանն, որքան: Եւ մի ասասցէ սրբազանդ, զի մարդ՝ անկ և պատշաճ է խո-նարհիլ գլխոյն ոտին: Հայեաց 'ի գլուխ քո Յս, զայդ կարծիս բարձցի 'ի քէն. զի և նա գլուխ գոլով, խոնարհե-ցաւ յոտս աշակերտացն, և ասաց, օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես արարի, և նոյնպէս և դուք առնիցիք:

Եւ յորժամ զայս արասցուք, նման նմա լինիցիմք, և թէ ո՞չ, հարկաւորի նմանութի միւսոյն. յորժամ ասասցէ նա, զի՞նչ լիցէ նա զի խոնարհեցայց. աղաչեմ բարձ զայդ զի առոց մարգարէն, զաչս ամբարտաւանից, դու խոնարհեցու-ցանես, և դարձեալ թէ դու խոնարհեցուցանես, ո՛չ զմե-րաւորս զամբարտաւանս, քանզի ամն զամբարտաւանս նախ նետիւք իւրովք վիրաւորէ, և ապա խոնարհեցանէ 'ի դը-ժոխս, ըստ յոբայ, մերժեցեր զլոյսն յամբարշտաց, և ըզ-բազուկս ամբարտաւանից խորտակեցեր, քանզի ամբարտաւ-ան ոգին, որ զայս առէ թէ նա զի՞նչ իցէ, որ ես նմա խոնարհեցայց, ես գլուխ, և նա ոտն, ես տէր և նա ծառայ, ես տիրող, և նա տիրեալ, ես իշխող, և նա իշխեցեալ: Եւ յորժամ այսու միտք, առցէ 'ի ձեռս զսրբազանն Ած, և ասասցէ սրբութի՛ սրբոց իւրոյն զՔնի լոյս շնորհաց 'ի

հո

հոգւոյ նր, և խորտակին բազուկքն, որ ունին զբարձօղն
աշխարհի. ով և զարմացեալ ասէ յոյժ, առաքեա զհրեշտակս
բարկութե՛, և զամ՝ հպարտս խոնարհեցո՛, և զիշխոյ զամբար-
տաւանս, և լից զերեսս նց արգահօք. և սաղմոս երգուն ասէ,
լից զերեսս նց անարգանօք, և որն ասէ ոչ գիտեմ՝ ուստի
էք, ՚ի բաց կացէք յինէն ամենեքեան որք գործէիք զանի-
րաւութի. քանզի Ած զոր ետ զուխտ թլփատութե Աբ-
րահամու յաղագս որոշելոյ այլոց էր, և որ զայն նշանս ու-
նէր, ճանաչէիր, և որ ոչն ունէր ոչ ճանաչէիր, ով և
այժմ զմկրտութեն, և զդրոշմն. և ՚ի հանդերձելումն,
զխոնարհ հոգին ճանաչէ, և որ զնշան զազանին ունի ոչ
ճանաչէ. վն այսորիկ ասելոցէ յաւուր յայնմիկ, ոչ գիտեմ
զձեզ, զի զնշան խոնարհութե իմոյ ոչ ունիք ՚ի ձեզ:
Աւլ ով բացատրեսցէ, յաղագս աթոռոցն քահանայապե-
տութե, թէ կծղինաւորք էին, որ նշանակէ զսրբազանն կա-
թողիկոսքն, որ պարտէ ՚ի մէջ երկուցն կծղակաց, այսին-
քըն հոգւոյ և մարմնոյ չախչախեսցէ զգլուխ ամբարտաւա-
ն վիշապին, ով որթն ՚ի մէջ կծղակայ, զգլուխ օձին, զի
գլուխ նր է ամբարտաւանութին, զի յորժամ չախչախեսցէ
սատանային ամ անդամք նորա, վն զի բոլոր մարմինն գլխով-
նէ կենդանի, զի գլուխն Քս ոչ այլ ինչ առաւել գովէ,
բայց ՚ի խոնարհութենէն, ոչ զարմանալք զԱծութե գոր-
ծըս նր, և զայլս զորս գործէր, այլ ամ նահատակութիք
երկնայնոցն, և երկրայնոյ, ընդ խոնարհութե նր սքան-
չանան: Եւ թուի թէ ասիցէ Քս յայսմ ծանիցեն ամե-
նեքեան թէ իմ աշակերտքէք. յորժամ զխոնարհութիս իմ
ունիցիք. և հակ սորա սատանայ բարբառէ, յայսմ՝ ճանի-
ցեն թէ իմ աշակերտքէք, եթէ ունիցիք զնշանս իմ, որէ
ամբարտաւանութին. քանզի ասէ որն վն նց ՚ի բերանոյ
մարգարէին, զգեցցին զամօթ և զանարգանս, որք մեծա-
բանէին ՚ի վր իմ. զի որ ՚ի վր անդամոցն մեծաբանի, իս-
կապէս զգլխոյն համարի, և որ զգլխոյն իսկապէս ամօթ կը-
րեսցէ, և հատուցանի նմա ըստ ամբարտաւանութե նր, թէ
մաք

մարգարէին հասո զհատուցումն ամբարտաւանից. քանզի ասաց զոր ինչ արարիք միում ՚ի փոքրկանց ինձ արարիք, եթէ խոնարհութի, և եթէ ամբարտաւանութի, զի յաղագըս առաջնոյն ասէ, ուր եմնեմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. և յաղագս երկրորդին ասէ, ամաչեցին ամբարտաւանք, քանզի որքան խոնարհութիւն բարձրացուցանէ, այնքան ամբարտաւանութիւն խոնարհեցուցանէ, զի վն առաջնոյն ասէ, փառք իմ, և բարձրացուցիչ գլխոյ իմոյ: Իսկ յաղագս երկրորդին ասէ, զաչս ամբարտաւանից դու խոնարհեցուցանես, և խորտակեցի բազուկք ամբարտաւանի, քանզի ով խոնարհութիւն չլախտր առնէ զնմ ամբարտաւանութիւնս ըստ ածայնոյն, այսպէս ամբարտաւանութիւն զնմ առաքինութիւնս, և ով կմէլթանեն, ՚ի բաց հանէ զհեղեղեալս ՚ի վն, այսպէս ամբարտաւան հոգին զնմ զշնորհսն: Զի թէպէտ այլ մոլութիւն, մեղքն, և մահացուցիչք սակայն սա գլուխ, վասն այնորիկ հրամայեցաւ ըսպանացես գլխոյն, վասնորոյ մերձեցելոցն, յահաւոր խորհուրդ պարտէ սրբել ՚ի մեղացս մեծաց, և ապա ձըշակել ՚ի սեղանոյն Տ՛՚ զկենդանարարն խորհուրդ: Զի ոչէ ակնառութի առաջի նր, զի զմեծամեծս և զփոքունս ինքն արար, և ըստեղծ, յաղագս որոյ յորս գտանէ. գլուխս այս, ոչ ՚ի միք խնայէ, այլ վաղվաղակի հակառակ կայ, և հատուցանէ: Զի թէպէտ սրբազանդ մեծես առաջի խոնարհագունիցն քոց, սակայն. այնքան փոքրագոյնես առաջի ըստեղծողին քոյ: վնայնորիկ նա ՚ի սիրտըդ հայելով. ըստ որուն հատուցանէ, և յորս գտանէ ՚ի նոյնս դատէ, ՚ի խոնարհս բնակի. և փառաւորէ, և կեցուցանէ, ըստ այնմ զխոնարհս հոգւով կեցուցանէ. և թէ խոնարհ եղէ մինչև յոյժ տր կեցո զիս: Իսկ զամբարտաւանս վիրաւորէ, խռովեցուցանէ, և ամաչեցուցանէ, ըստ այնմ ամաչեցին ամբարտաւանք, և թէ հասո զհատուցումն ամբարտաւանից: Եւ դարձեալ ասէ յաղագս քերովբէից, թէ ոտք նց թևաւորքէին, առ ՚ի յայտնել թէ ոչ ՚ի միք երբէք ծանուցման, մեծապէս մեղք ամբարտաւա-

նաւ

նութն, և թէ կայծակունք թօթափէին 'ի նոցանէ. այս-
քինքն որբէս պխոնից, ամբարտաւանութն, զի բնութին հը-
րոյն, որ ոչ թուլացուցանէ, պխոյից ինչ մերձիլ յոսկին,
այնպէս և 'ի նոսինս այսպէս պարտէ և 'ի սրբազանեց,
այնքան խոնարհութե կայծակունք սարափայլէլ, որ ոչ 'ի
միք երբէք ախտ մեղաց և ամբարտաւանութե մակերևի-
ցի. այլ զգլուխ և զգոյնչն, ամբարտաւանութեան առջո-
րեցէ, և այրեսցէ, և զխոնարհագոյնս ինքեան, 'ի նոյնս
փառեսցէ: Օ՛ր ոչ ինչ առաքինութի այնքան կարէ առջո-
րել զսատանայ, որք խոնարհութին, և ոչինչ առաքինու-
թի այնքան փառէ, զԱ՛ծայինան, որք զնա, վա այնորիկ լաւ-
ագոյնէ սրբազանից, զայսպիսի կայծակունս թափել 'ի քէն,
քան զփառաւորն, զի արժանացուցանողն ճաշակմանց,
նոէ, քան թէ սա. վա այնորիկ սաստուս մի ամբարտաւա-
նէք, այլ է խոնարհս զմնանելիք. ընդէր, վա զի որ բարձ-
րացուցանէ զերգելիսր փոյի, ըստ այնմ զերգելի մեղաւորաց
փրեսցես. զի բարձրէ եղջիւր արդարոյ: Ո՛րդ ըստ այսմ
երկանի ձմնոշի եղջիւր, ամբարտաւանութե և խոնարհու-
թե, զի որ 'ի դաշամթանն ունի փափկացեալ խորտակի, և
փշրի, որք եղին, այլ որ 'ի խոնարհագոյն քան զգլուխն
ունի, ոչ 'ի միք պարտի, այլ պարտէ. ոչ փշրի, այլ փշրէ.
ոչ խորտակի, այլ խորտակէ. որք զերգելիսր մի յերգելիքն,
որ է բարգաւաճն, զի 'ի ներքոյ գլխոյն գագաթանին ու-
նի. և այնքան յաղթողագոյնէ, մինչ զի և փիղք ասպին
և սատանին, յարժամ զնա տեսանեն, զոր և անարժանս
աչօք խմիլք տեսի: Ո՛րդ՝ եթէ փիղք, խոյ ապա այլ կեն-
դանիք, որքան գոլան և սատանին, վա այնորիկ խոնարհա-
գոյն եղջիւրն, զբարձրացեալ եղջիւրն, 'ի վր գագաթանն
խորտակէ, յաղագս այնորիկ ասաց, բարձր առնէ զեղջիւր
օծելոյ իւրոյ: Օբս արդեօք պարտէ իմանալ զեղջիւր օծե-
լոյն, ոչ այլ ինչ՝ բայց 'ի խոնարհութենէ. զի խոնարհու-
թի օծելոյն, զամ եղջիւրս որքան զգագաթն բարձրացեալէր
այսինքն 'ի վր գիտութե Ա՛յ խորտակեաց; ըստ առաքելոյն
և

Եւ սաղմոս ասէ, Տէր արդար է, և զարս մեղաւորաց խորտակէ Տէր, և զամբարտաւանից. վ͞ս զի որ զեղջիւրս ամբարտաւանութեան բարձրացոյց ՚ի վե͞ր Ա͞յ, թէ հրեշտակացն, և թէ հողեղինացն, ոչ մնացին թարց վնասու. քանզի միայն ամբարտաւանն է, որ ընդ դիմանայ Ա͞յ, և որ ընդ դիմանայ վաղվաղակի խորտակի. քանզի բնութիւն ենթադատի, զի ՚ի հողոյ գոյացեալ անձն, ՚ի հարկանել վիմի, վաղվաղակի մանրի և փշրի, որ͞պ և տեսաց Տէրն, յաղագս ամբարտաւանութեան բաջանապայապետիցն հրէից, որք ամբարտաւանեալք էին, և հպարտացեալք ՚ի հպարտութեանն, որք նախ ողջոյնս խնդրէին ՚ի հրապարակս, և զնախ աթոռս ՚ի ժողովուրդս և զբարձր երեսս յընթրիս, նոքա աւելի դատաստանս ընկալան, քան զա͞մ՝ մեղաւորս, և այսպիսի ամբարտաւանութեամբ, որք եղջիւրաւորեալք էին, յորժամ հարան յեղջիւրն Ք͞Ի այսինքն ՚ի խոնարհութիւն նորին, առ ժամայն, փշրեալ բեկան, ըստ այնմ՝ որ հարցի ՚ի վէմս յայս փշրեսցի, և յոյր վերայ անկցի հոսեսցէ. քանզի այնքան կարծր և հոծ է, վէմս այս, որ ոչ ՚ի մեք վնասի, ՚ի խորտակելն զայլս, ՚ի փշրել և ՚ի հոսելն: Եւ վ͞ս այնորիկ ասացաւ մարգարէիւն եդից ՚ի հիմունս Սիոնի, վէմ պատուական, արդ՝ հիմն նշանակէ, զխոնարհութիւն շինուածոյն. զի ա͞մ շինուածոյն խոնարհագոյնն է հիմն, և Ք͞Ս որ էր վէմն այս, խոնարհագոյնն եղաւ տեղի, և վ͞ս այնորիկ պատուական եղև: Եւ թէ սա Ա͞Ծ գոլով, ՚ի ծայրագոյն բարձրութենէն, այնքան խոնարհեցաւ, մինչև յետին ծայրն որ էր հիմն, զի շինուած Ա͞յ է արարածս, ուրեմն արարածոցըս այնքան յետին եղև, մինչ զի ոչ գտանի քան զնա յետնեալ ինչ, որ͞պ շինուածոյն, ՚ի բարձրութենէն մինչի յետին հիմն, ոչինչ երևի խոնարհագոյն, զի նա միայն է յետին, և խոնարհագոյն յամի, որ͞պ և վկայեաց սրբազանն առաքեալ, խոնարհեցոյց զինքն, լինել հնազանդ մահու չափ և մահու խաչին, վասն որոյ և Ա͞Ծ զնա առաւել բարձրացոյց, որ գլուխ անկեան եղև. տես զի նախ խոնարհութիւն

թին երևեցոյց մեզ այս, որ հնազանդեցաւ շինուածոյն, և ապա բարձրացաւ, որ գլուխ անկեան եղև, ըստ այնմ, զոր եղև գլուխ անկեան: Արդ գլուխս այս, եթէ ոչ էր խոնարհեալ, և հիմն լեալ ոչ էր բարձրացեալ, և գլուխ անկեան եղեալ. ուրեմն ամ՛ իրաց, նախ խոնարհութիւն է, և ապա յետ այնորիկ բարձրութիւն. որպէս ինքն տ՛րն, յամի խոնարհեցաւ, մինչև 'ի մահ չափ, և ապա բարձրացաւ, մինչև Աստուածութեան չափ, ըստ յատկութեան, կատարեալ մարդկութեան. քանզի այսպիսիք, ամ՛ կատարեալ մարդկութեանն է յատկութիւն, և ոչ կատարեալ Աստուածութեան. քանզի որք յերկնից կատարելոց իմանի Ք՛ի միաւորեալ, նոյնպէս և յերկրաւորաց, կատարելոց յատկութիւն, ցուցանեն Աստուածայինքն. զի մի շփոթութիւն և փոփոխումն լինիցի, այլ կատարեալ Աստուած, և կատարեալ մարդ, նոյն մի անձն, Աստուածային իմասցի միաւորեալ անշփոթաբար: Արդ՝ մի անձնս այս Աստուածային կատարելութիւն, և մարդկայնոյն կատարելութիւն, նախ խոնարհեցաւ, և ապա 'ի վեր քան զամ՛ շինուածս բարձրացաւ, որպէս և առաքեալն, շնորհեաց նմա անուն, Ա՛ծ, զի յանուն Յ՛ի Ք՛ի ամ՛ ծունր կրկնեսցի, երկնաւորաց, և երկրաւորաց, և սանդարամետականաց. և ամ՛ լեզու խոստովան լիցի, թէ տ՛ր է Յ՛ս Ք՛ս 'ի փառս Ա՛յ հօր:
Տեսէք թէ ո՛ր տարաւ կացոյց խոնարհութիւն, յենեալ յամի բնութիւն, որ յետին ծայրագոյն, խոնարհութիւն, որ հիմն եղև, այնքան բարձրացաւ, մինչ զի յանուն նր, ամ՛ ծունր կրկնի, երկնաւորաց, և երկրաւորաց, սանդարամետականաց ասէ: Եւ դու սրբասէրդ որ աշակերտես հեզութեան այսորիկ, և խոնարհիս, պարիսպ հանգոյն ամին առնել, և գործել և խօսել, և բարբառել, և մի ասեր թէ ով իցէ նա, որ խոնարհեցոյց նմա, զի անկարգութիւն է մեծին խոնարհիլ փոքրագունին, և վ՛ն յանցանաց ինչ մեղաց գործել առ նայ, և զինքն պախաս և նուաստագոյն երևեցուցանել, և յայնժամ ամ՛ն որք ընդ ձեռամբն, ամենհար լինելն, և այնու հետև ոչինչ համարեսցեն զխոնարհութիւն

և

և զկարգ, և զպատիժն: Արդ այսու և ես քեզ, նախ ըզ գործմն Քի, առաջի քո դնեմ, մի թէ կարգ և պատիժն քո՛, մեծագոյն է, քան զՏն Յի, որ տրնէ փառաց. զի թէպէտ դու տր, այլ ոչ փառաց տր, զի թէպէտ դու տր, այլ ոչ զօրութեց, և պետութեց տր, ով և մնր աւելն, հրեշտակացն դասապետութիք տր զօրութեց, սա ինքնէ թագաւոր փառաց, այլ ծառայ նր, եթէ ցուցցես 'ի քեզ ըզ նշան նր, ըստ նմա առասցես, ոչ ծառայ այլ յեսանեալ ծառայ, ով նա մր ինքեան ասաց, բերանով մարգարէին, ոչեմ՛ մարդ, այլ որդն, նախատինք մարդկան, և արհամարհանք ժողովրդոց. յայնժամ՛ պարծիս ով նա, անկաւ 'ի ծունկս յեանեալ աշակերտին, որ էր Յուդայ իսկարիովտացին, և այսու մեռանելն, ոչ ամնհար եղեն Քի, այլ իբրև 'ի նմանէ չողաւ առ գլուխն, և պեան առաքելոց, և զարհուրեալ դողացաւ, և սարսափմամբ պատասխանեայց, ոչ լուացես զոտս իմ՛ յաւիտեան, և դու սրբազանըդ յորժամ՛ այսպէս զխոնարհութի ցուցցես, ընդ վերապատւելոյն, յայնժամ՛ թուի թէ, ոչ մտածութն քոյ լեցի, այլ ամենևրեան զարհուրեցին, և ըզքանչացին 'ի գործքո սոսկալի. ով մեծն հաւատոյ 'ի գործսն Քի. զի խոնարհութի գործոյն, տեսն առաւել ըզքանչանան, քան ամբարտաւանութե, զի խոնարհութին առաւել վերէ, և մարէ զմիտս և զսիրտս ըստահակեցելոցն, և ամբարտաւանից քան ամբարտաւանութին, զի խոնարհութին առաւել ամաչեցուցանէ, կակղացուցանէ և զամօթի առնէ, զյանցաւորս, քան խրոխտական բարբառն, ըստ Ոծագունից, կամիս խոնարհեցուցանել զամենեսեան քեզ, խոնարհեա զքեզ. քանզի թուի ինձ, թէ ոչ միայն մարդ խոնարհէ խոնարհին, այլ թէ ոչ իցէ յանդգնութի յասելս թուի թէ, Ած ես խոնարհի խոնարհին, ով և Մովսէս յորժամ՛ խոնարհեցոյց զգլուխ իւր 'ի ծունկս իւր, և լռելեայն աղաչակեայց առ տր, և նոյն ժամայն խոնարհեցաւ տր յաղաչանս նր և ասաց, զի՞ գոչես առ իս: Եւ Յեսու յորժամ

ան

անկաւ ՚ի վէր երեսաց իւրոց, նոյն ժամայն եւեթ զզօրավար զօրութե՛ն, զո՛ր մեր Յս Քս ՚ի կերպարանս զօրավարի, կանգնեալ առաջի իւր, եւ ասաց, այժմ՝ եկի օգնել քեզ: Նոյնպէս եւ մեծն Պաւլիթ յորժամ՝ ասաց զի՞նչ եմ ես, եւ զի՞նչ տուն հօր իմոյ, յայնժամ խոնարհեցաւ ած, առ ած նա եւ ասաց, ահա գտի այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամ զկամս իմ: Եւ Սողոմոն նոյնպէս ՚ի գուձս անկեալ խոնարհեցաւ, եւ խնդրեաց յԱյ զխնդրելիս իւր, նոյն ժամայն էջ առ նա Աճ, եւ ասաց նմա զոր ինչ ասացն. եւ խոստացաւ նմա զոր ինչ եւ խնդրեացն: Այնպէս եւ Եղիայ, եւ այլք ՚ի մարգարէիցն. եւ գլխաւորագոյնն երանուհի կոյսն, յորժամ՝ անճառելի խոնարհութեն եցոյց ՚ի պատասխանատրութի հրեշտակապետին, եւ ասաց, ահաւասիկ կամ աղախին տն, նոյն ժամայն էջ բանն Աճ յարգանդ նորին, եւ էառ մարմին, եւ զրե թէ ամենայն երրորդութեն, տաղավարեցաւ ՚ի նա, թէպէտ բանն միայն մարմնացաւ:

Նոյնպէս եւ մեծ Մկրտիչն, Յովաննէս, յորժամ ասաց, ոչ եմ՝ արժանի թէ լուծից զխրացս կօշկաց նր, առ ժամայն խոնարհեցաւ ՚ի նա բանն Աճ, եւ խոնարհեցուցեալ՝ խոնարհին, զգլուխ Աճութեն իւրոյ, եւ մկրտեցաւ ՚ի նմանէ, եւ ոչ միայն բանն խոնարհեցաւ ՚ի խոնարհութի նր, այլ եւ Հայր, եւ Հոգին Աճ, յորոց երրակաց անձանցն, միոյն մկրտեցան, միւսն բարբառեալ, իսկ միւսն աղաւնանման սլացաւ: Եւ այսպէս մի ըստ միոջէ յորոց, ՚ի սրբոցն ծայրագոյն խոնարհութե խոնարհեցոյց զինքն, ծայրագոյն խոնարհեցաւ յինքն: Որդ եթէ Աճ խոնարհի, խոնարհիցելոյն, ո՞ր թէ արարածական բնութիւնք, հրեշտակք, եւ հողեղէնք, սէրք եւ ան սէրք, թագաւորք, եւ ռամիկք, իշխանք եւ իշխեցեալք, ամէն խոնարհին խոնարհիցելոյն:

Իսկ ամբարտաւանիցն ջոկք, եւ հպարտիցն կաճառք, վերըին, իսկապէս եւ մանրին, ՚ի ներքոյ ոտից խոնարհացն. ԸԷ այնմ՝ մանրեցից զնա ոչ փոշի առաջի հողմոյ, ոչ կանգնեհաց կոխեցից զնոսա՝ վա զգեցուցեր ինձ զօրութի ասէ,

վն

վասն այնորիկ զյարուցեալսն 'ի մեռելոց, ներքոյ իւր արարեր, զօրութիւն է իմաստութիւն Քրիստոսի, որ յարուցանէ զտառապեալսն յաղքատաց, և զյարուցեալսն ներքոյ առնէ, և մաքրէ ըստ զփուշն, և կոխէ ըստ զկամագործենաց, և կարգեցի զլուխ հեթանոսաց, այսինքն, այս որ չարաց, զի ըստ նոքա զլուխ զօրով ամբարտաւանութեամբ անկան, նոյնպէս և սոքա խոնարհութեամբ բարձրացան, ըստ այնմ խոնարհ առնէ զամբարտաւանս մինչև յերկիր, և բարձր առնէ զտառապեալսն յողբոց: Զի թէպէտ յամենայն իրողութիւնս երևի գործն Այ, սակայն առաւել յայս, զի միշտ զամբարտաւանսն խոնարհեցուցանէ, և զտառապեալ խոնարհս բարձրացուցանէ, վասն որոյ պարտ է սրբազանին, այսպիսի երկիւղ և կարծիս 'ի բաց ձգել, և հայել 'ի Քրիստոս, ըստ նոյն արար և գնաց, սրբասցես և գնասցես և դու: Նա որ յայսմ աշակերտի, զԱծ յինքեան տանի, որպէս սրբազան աշակերտն Պօղոս, որ զՔրիստոս յինքեան տարեալ ունէր, զոր բազմախոնարհութեամբ, անորդ զինքն համարէր, որ յերևիլ ամենեցուն ինքեան, առէր իբրև սնարգի միջ երևեցաւ և ինձ, զի ես իսկ եմ տրուպն առաքելոց, որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ: Նա գործեալ ասաց, Յիսուս Քրիստոս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս որոց զլուխն ես իսկ եմ, քանզի բնութեան յորժամ ոք զանփոր իւր զոր ունի, խոնարհեցուցանէ զբերանն ընդ դէմ հեղեալ ջրոյն. նմանի, ապա թէ բարձր՝ ոչ. այսպէս սրբազանս այս աշակերտն և կաթողիկոս, հեզոյն և խոնարհին, որ այնքան խոնարհեցոյց զինքն, այնքան լցաւ, մինչ զի խոսեցոյն անօթ ընտրութեան եղև. և թուի թէ բան մարգարէին, 'ի սա յանկել և կատարեցաւ, թէ բաց զբերանս քո և լցից զդա. որ մինչև 'ի կատարած աշխարհի, գնայիւք գետոց բղխեցելոց 'ի բերանոյ սորա, սրբուցանէ զեկեղեցին Քրիստոսի: Արդ՝ սրբազանդ յորժամ այսպիսեօք բացցես զբերանդ, լցցես ձնշախմամբք, ըստ զնա. զի ոչ է անհնարութիւն առաջի նորա, վասն այնորիկ առաց իմաստունն, 'ի բարձրանալդ 'ի խոնարհութեան կալ զանձըն

ձըն

ձըն քո, և 'ի տանէ ընկալցիս զշնորհս. և որն եւս յորժամ ըստ կատարելոյ մարդկութեան խոնարհեցոյց զանձն, ընկալաւ զշնորհս, ըստ այնմ՝ մանուկն աճէր և զօրանայր, լի շնորհօք. և սրբազանն ասաց, որ 'ի կերպարանս Այ էր, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ լինել հաւասար Այ. այլ զանձն ունայնացոյց, և զկերպարանս ծառայի էառ. արդ եթէ ըստեղծողն յանի, այսքան, և այսպէս խոնարհեցոյց զանձն, ապա որքան ըստեղծուածդ, զի նորոյն սարսափելի, և քոյդ ոչ նոյնպիսի. վն որոյ ըստ նր խոնարհեաց, զի ըստ նմին բարձրասցի. քանզի նախ խոնարհութիւն է, և ապա բարձրանալ և շնորհս պտղաբերիլ:

Եւս են որք 'ի մեծաբանիլն, և յարձակիլն 'ի վր խոնարհագունիցն առնուն զկարգս, և որոշին 'ի պաշտպանութեանցն Այ ասելով, թէ ես ետու և ես առնում, արդ՝ ով տալն ունիմ իշխանութիւն, սոյնպէս և առնուլն:

Արդ՝ ո՜վ սրբազան, զայդպիսիդ բարբառ, և ոչ Քի արտաբերեայց. ո՜հ, անպատշաճ և անմտութի բարբառոյս, քանզի թէպէտ երկնայինքն յանդգնեցան. այլ ոչ այնքան անզգամեցան, Ածային փառացն ցանկացան, և նմանութե նորին բաղձացան, այլ ոչ զդատաստանս յափշտակել կամեցան, և զառատատուր ձեռն նր որ հեղեալ յաստիճանս դասաւորութեանցն ձեռամբ ոց, և նորօք հեղեալ 'ի կարգս և յաստիճանս, 'ի սորինայնոցն, ոչինչ յանդգնեցան առնուլ, ընկալելոյն ոց. այլ սոքա զայս նորագոյն, ձայնս բարբառեն, և անդրմանս արտաբերեն, թէ ով ունէի իշխանութի 'ի տալն, նոյնպէս ունիմ և յառնուլն: Արդ եթէ քո է իշխանութի 'ի տալն և յառնուլն, ապա Ած պետական իշխանութի, 'ի սպասաւորութի իշխանութեանդ պաշտօնատար կաց. որոց հրամայես տալն տաս, և որոցն ոչ, ոչ. և որոց հրամայես շնորհել շնորհէ, և որոց հրամայես առնուլ, առնու: Եւ երբ և յորժամ կամիցիս ընձեռել բաշխէ, և երբ, և յորժամ կամիցիս մերժ և թափուր առնել արասցէ. այսու երևի քո զօրութի, քո կարողութի, և քո հնարաւորու-

րութիւն, և 'ի վեր քան զՔս, իշխանութիւն քո, որ դու ունիս զայսպիսիս, և նա ոչ, որ Այ զօրութիւնք, և Այ իմաստութիւն, քանզի նա ասաց, ոչ կարեմ ես առնել յանձնէ և ոչինչ. և դարձեալ թէ ոչէ իմ տալ, այլ որոց պատրաստեալ է 'ի Հօրէ իմմէ, և այսու յայտնապէս երևի, թէ մեծ է իշխանութիւն քո, քան զՔսի, որ նա ոչ ունի իշխանութիւն տալոյ, և առնելոյ, և դու ունիս: Մի խաբեր ով սրբազան, զի վն Քսի ասաց մարգարէն, մեծ է իշխանութիւն նր, և Պաւղոս ասաց, մեծութեան նր ոչ գոյ բաւ. և Դանիել ասաց, իշխանութիւն նր իշխանութիւն յաւիտենական. և թէ դու բեթղեհէմ, ոչինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ, 'ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զիսրայէլ. և ելք նր իսկզբանէ աւուրց աշխարհի, և Պաւղոս ասէ, իշխանութիւն քո իշխանութիւն յաւիտենից. և թէ իշխանութիւն նորա 'ի բարձունս փառաւորի. և թէ որ կանգնելոց է իշխան Յուդայ, 'ի նա հեթանոսք յուսասցին: Եւ առաւել քան զայս, է 'ի գիրս ճշմարտութեան. և այսպիսի իշխանութեան տր ասէ, ցորդիս զեբեդեայ, ոչէ իմ տալ զհայցելիս ձեր, այլ որոց պատրաստեալ է, և դու սրբազանդ ասես, ես եմ՝ և ես առնեմ:

Այլ և ես անարժանս յանդգնիմ, թէ և անզգամութիւնէ, Ած որ է ստեղծ զարարածս, ոչ կարէ առանց հրամանց, և պատճառանաց, առնուլ զկարգս և զաստիճան, զորս տուեալ է, թէպէտ անհունէ զօրութբ: Զոր օրինակաւ ցուցից քեզ, սահման մարդոյն, զոր ունիմք առէր, յուսուցչէդ եթէ կամիս առնուլ զայն, և ունայն և թափուր զնա առնել, ոչ կարես. այլ միշտ է 'ի նա տպաւորեալ զկենդանի բանական. և յանդգնեցայց ես, զի Ած ևս ոչ կարէ, քանզի այնքան մակրդեալ է, որ անճարինէ յամենայնի, տարաբառնելն, զի թէպէտ և յանուն և հունաւորեալ զօրութենէ և 'ի կարողութենէ ձմեսցի: Այսպէս իմա և սրբազան կարգն, որ որքան դու անպատշաճաբար բարբառեսցես, անխափանելի, այլ զկարգն զորս ընկալեալ է, յԱծ

պէտ

պիտանացանէն միջնորդութեան քում, ոչ լուծանի, և ոչ սարսա-
բանի, ըստ այնմ՝ զոր Ա͞ծ զուգեաց մարդ մի՛ մեկնեսցէ․
յորժամ այսորիկ, արդար երևի բան առաքելոյն, թէ իշ-
խանութիւն ետ ինձ Տէր ՚ի շինել և ոչ ՚ի քակել․ քանզի զոր
օրինակ, ունիս իշխանութիւն ուսուցանել ինձ բան, բայց
ոչ ունիս իշխանութիւն լուծանել և քակել զայն յինէն․ վ͞ա
այնորիկ ասաց, ունիմ՝ իշխանութիւն շինելոյ, այլ քակելոյ
և տարալուծանելոյ, զկարգըս կարգաւորաց ո՛չ, ոչ ուրա-
ցութեան, ո՛չ և ոչ Պետրոսի, ոչ պոռնկութեան, որպէս և ոչ
Դաւթի, և ոչ այլ ինչ ՚ի մեղաց, ո՛չ և են զանազանք ՚ի
սրբոցն․ որք յորժամ՝ վերաբերեալք եղեն, յանկման ինչ,
կրկին հաստատեցան: Արդ այսորիկ ըստ այսմ՝ վկայութեց,
և բնականին առաքինութեց, ծանուցեալ թէ տալն ունիս իշ-
խանութիւն, իսկ առնուլն ոչ․ յորժամ այսորիկ աղաչեմ՝, մի
բարբառեսցես զայդպիսիդ բարբառ․ որ անպատշաճագոյն է․
քանզի և բնութիւն ես ուսուցանէ, թէ ով իցէ թագաւոր,
որոյ իցէ անտես, և ումեք կամիցի շնորհել ինչ ձեռամբ
և միջնորդութեան անտեսին տացէ և բաշխեսցէ:
Արդ ասա ինձ ով սրբազան դու, մինչեք շնորհ ինչ ու-
նիցի անտեսին, որ զգործս զայս գործեաց, թուի թէ
ասասցես և ոչ ՚ի միք և զայս ես աղաչեմ՝ զի ասասցես, եթէ
կամիցի անդրէն յետ առնուլ, կարէ արդեօք եթէ ո՛չ զի-
տեմ՝ զի ճշմարտապէս ասասցես թէ ո՛չ: Արդ եթէ մարմնա-
ւորն այսպէս, ապա հոգևորն, որքան ևս, վ͞ա որոյ թէպէտ
հաճարապետ իցես խորհրդոյն ա͞յ, այլ աղաչեմ՝ մի քեզ
համարեսցես զտալն և զառնուլն, վ͞ա զի կարի յիմարութեն-
ցասելն, ես ետու, և ես առնում՝, յորժամ այսորիկ հա-
րցից և ես անարժանս, դու ունէիր, և ՚ի քէն ետուր, թէ
յայլմէ ընկալեր և ետուր, և զխնդիմ՝ զի ասասցես զճշմա-
րիտն, թէ յայլմէ․ այսինքն յԱստուածութենէն, և թէ յա-
յլմէ, ընդէր, քեզ ինքեան վարկանես, և ոչ երկնչիս, աղա-
չեմ՝ հայեաց ՚ի գլուխս քո, և տես, ո՛չ նա արար, և գործ-
եաց․ ո՛չ և ասացն․ ոչ իմ տալ, նոյնպէս և անտեսիդ ա͞յ,

պաք

պարտէ զայս առնել և բարբառել․ և ոչ յանձնէ ինչ փոր-
կանել այլ հրամանաւն Տն̄ և Նորին ազդմամբ։ Եւ յորժամ
այսպէս, յայնժամ զօրն, ծառայ բարի և հաւատարիմ զի
սրբար զՏէր զՀրամայեալսն, տայն և առնուլն նմա վարկա-
նել, և յորժամ ըստահակութեն ինչ լինիցի․ ամպետակա-
նին յանձն առասցէ, և աղօթս երկրպագիցս առ ամենայն
երրորդութեն մատուսցէ, յայնժամ ազդմամբ Նորին զանաս-
տութեն ՚ի գործ արկցէ, ապա թէ ոչ դադարել պարտէ,
՚ի պատուհասահործութենէն․ քանզի այսպիսիս բազումս
տեսանի ՚ի ժամանակս մեր, որք յուսացեալքն ՚ի զօրութիւ
իւրեանց, առանց ազդման, և զոր ինչ ախտք իւրեանց հրա-
մայեն զայն գործեն, ուրեմն զախտս այնպիսիսն տեսա-
կացուցանեն, և նման միայնոյ ծառայեն, և ոչինչ Յի̄ Քի̄,
զիւրեանց խնդրեն և ոչ Յս̄ի Քս̄ի ըստ առաքելոյն։

Արդ զայսպիսի զօրս բացատրեցաւ հանճարատարքն, պարտէ
երանելւոյն զՏէր անխրատութիւ հանդերձ տեսակօքն իւրովք
զՏէր ՚ի բաց ձգել, և ապա մտանել ՚ի սոսկալի և յահաւոր
խորհուրդն․ յայնժամ հուրս այս, պայծառացուսցէ զմա-
կիդ և լուսաւորեսցէ զհոգին, քանզի տեսականութեն
ծածկայինն միանայ, և միաւորի ընդ Նիւթոյդ․ որ է բնա-
կան հոգին, և մարմինդ, և յայնժամ երջանկաց
ուցանէ բոլորովիմբ զանձն քո
ծածկաբանս գործելով։

## Գլուխ ՆԸ

Ցուցանէ թէ որպէս Եպիսկոպոսունք՝ պարտին հնազանդութեամբ խոնար-հել Կաթողիկոսաց մատչել ՚ի ատեան և յատեան խորհրդոց, չէ ընդ որպէս Կաթողիկոսացն ուսուցանելոյն ։

Այնպէս և սրբազան եպիսկոպոսունքն՝ որք ունին զկարգս քերովբէիցն որ լի են աչօք, այսինքն ան-սութեամբ մնայ, որ լիութիւն գիտութեան թարգմանի, և իմաստութեան. քանզի ոչ թագաւորին իշխանք, և կուսակալք, զինուորք, և զինուորականք, կառավարեն զաշխարհս, այս-պէս և ԱԾ պետական քահանայապետութիւն ասոքօք կա-ռավարէ զեկեղեցի իւր ։ Արդ՝ ոչ բացատրեցաւ թէ պար-տէ կաթողիկոսին միշտ հայել ՚ի գլուխ իւր ՔՍ. և յա-շակերտսն նր, այսինքն յառաքեալսն. թէ ոչ նորա, և նա փայէ. Նոյնպէս և սրբազան եպիսկոպոսացն, պարտէ միշտ, ՚ի սրբազան կաթողիկոսն հայել, եթէ յանի լիցի ար-դար, արդարութեան նր հետևել, և ապա ՚ի նա հաստատել, ոչ նա յԱԾ, ըստ այնմ՝ ապա խմանոյն ՚ի գլուխ իւր, զոր-ինչ նա արդարապէս, և իրաւաբար հրամայէ, հպատակա-բար կատարեսցէ. որպէս անդամք գլխոյն խոնարհին ըստ առհմանելոյ սրբազան գլխոյն, հպատակ լինել, մի իբրև ա-կամայ այլ կամաւ ըստ ԱՅ, մի զօշաքաղութեամբ, այլ յօժա-րութեամբ. մի իբրև տիրելով վիճակին, այլ լինել օրինակ հօտին, զի յերևել հովուապետին, ընդունիցիք զանթառամ պսակն. քանզի բազումքն, որք հակառակին ընդ արդա-րոյդ վերահասու իրաւանց սրբազան կաթողիկոսին, և հպարտութեամբ, և ամբարտաւանութեամբ ընդ վզին, և անդամք գոլով անջատականք, հատանեն զինքեանս ՚ի գլխոյ եկե-ղեցւոյն, անհպատակ գոլով իշխանութեան ։ Մի թէ ոչ լուար ով սրբազան ՚ի սրբազանէն որ ասացն, և որ ենն յԱՅ կարգեալ են. և որք հակառակին կան, ԱՅ հրամանին հա-

կա

կառաւէ կան, և որք հակառակ կան, անձանց դատաստանս ընդունին, զի ոչ փոյթապար ածեալէ, սուսեր հոգւոյն սըրբոյ, որէ բանն Ա՟Յ ընդ մէջ իւր, որ հատանէ քան զամ՟ սուր երկսայրի, և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ, և հոգւոյ և յօդից, և քննիչ մտաց, և խորհրդոց սրտից. և ասացին ընտրեալ աշակերտքն, ահա աւիկ են աստ երկու սուրք. որ զմինն կապելոյ և մինն արձակելոյ ունէր զխորհուրդ. ո՟պ և ասաց տ՟րն բաւական են. և թէ որ ունի սուր բարձցէ, և որ ոչն ունի վաճառեսցէ զձորձս իւր, և գընեսցէ իւր սուսեր. քանզի ո՟պ 'ի հինումն օրէնի անհնազանդ քարամբք բարկոծ լինէր, սոյնպէս և 'ի նորումս սրով միահատանի ը՟ մէջ, այսինքն բաժանի 'ի խորհրդաւոր մարմնոյ եկեղեցւոյ, ո՟պ մարմին մարդոյն բաժանի 'ի հոգւոյն, քանզի ասաց Ա՟Ծ 'ի հինումն, 'ի խորհուրդ նորոյս, մի հայհոյեսցես զԱ՟ծն քո, քանզի ո՟պ յեկեղեցիս անդրանկաց, ամենասուրբ երրորդութիւն է Ա՟Ծ, և կառավարիչ ա՟մ դասապետութեանց, այսպէս և յեկեղեցիս Ք՟ի, կաթողիկոսն է Ա՟Ծ և կառավարիչ ամենեցուն: Ով ո՟պ յԱ՟Ծ պետականէն իջանին շնորհք 'ի խոնարհագոյնսն, այսպէս և 'ի սըրբազան կաթողիկոսէն, յա՟մ յեկեղեցականս. վ՟ն որոյ ո՟պ վերնագոյնքն, իրաւադատ, և իրաւագործ, Ա՟Ծ պետականին խոնարհին, և հնազանդին, և զվառս նմա մատուցանեն, նոյնպէս և եպիսկոպոսացն դասք, և ա՟մ եկեղեցականք, իրաւասէր, և արդարադատ կաթողիկոսին, միայնոյ պարտին. զփառս և զպատիւս մատուցանել զի եղիցի Ա՟Ծ ա՟մ յա՟մի. և ոչ միայն մեհազունին, և էլթ, այլ և յեկեղեցւոյն ևս քան զինքն, զնոյն խոնարհութիւն ցուցանել. քանզի և տ՟րն քո և պարիչ, ոչ միայն հոր բնութեամբ մարդկայնոյ խոնարհ եղև, այլ և յեկեղեցին, այսինքն հոգևորնայ, ո՟պ և սրբազանն ևս քան տ՟ն իւրոյ բարեբաւ, եւ ծառայ ձեզ, և ոչ միայն Յ՟ի Ք՟ի, ո՟պ և յա՟մ որախ իւր, հոգևոր շնորհին գրէ: Ով թէ միայն մեհազունին քան զքեզ խոնարհ իցես, ո՞վ շնորհէ քեզ, զի և հեթանոսք զնոյն

քնոյն առնեն, այլ յորժամ խոնարհականագունիցն. և իբ-րև խոնարհագոյնքն, տեսանիցեն զսքանչելի խոնարհութիւն քո, փառաւորեսցեն զՀայր քո որ յերկինսն է, ըստ Տեառն. Քանզի պարտ է եպիսկոպոսին, զորինչ յայլս պահանջէ, յինքեան ներբերևեցուցանէ, մի զոք տրտմեցուցանէ մի զոք վիրաւորեսցէ, մի ամբարտաւանիցի, և բարձրայօն ջքիցի. այլ յամի հեզ, ըստ սահմանելոյ առաքելոյն, որ ապտակեսցէ զծնօտն, մատուսցէ զմիւսն, ըստ բարբառոյ Տեառն, մի բարկասցի, և մի սրտմտեսցի, այլ ընդ խոնարհս զիջանիցէ, խաղաղարար, հեզ, ցած, դիւրահաւան բարուք, և զայլս զորս առաքեալ, բացերևեսցէ, զի կարասցէ տալ պատասխանի Աստուծոյ, բարւոք վերակացութեան, քանզի Աստուած մնասէ յորմէ պահանջէ զնմ՝ բարեգոյն մնասութեն ըզ գործոն: Եւ ոչ տամ՝ մնաս զգուշանայ տամ բարեաց Տեառն իւրոյ, զի մի ինչ վասիցի, այսպէս և որքազան եպիսկոպոսին պարտ կայր զգուշութի, զի մի ինչ վասնեսցէ Տեառն իւրոյ, քանզի Տէրն սաէ երկիւր լսի իւրով:

Օ՜ն ոչ մարմնաւոր թագաւոր, զանձանան յաղագս տեսչութեն խոնարհագունիցն է կացուցեալ, զի մի ինչ ուրուք պակասիցէ, այսպէս երկնաւոր թագաւորին զեպիսկոպոսն. Նախ պարտ առնն իւրոյ հոգալ, ըստ բարբառելոյ առաքելոյն, զորս ընդ ձեռամբն ժողովեալ եղբարք, զտրտմեալսն ուրախացուցանել, զվիրաւորեալսն ողջացուցանել, զբեկեալսն պատել, զգայթակղեալսն ուղղել. զնկլմեալսըն վերածել. զկորուսեալսն գտանել, զգտեալսն պահել, զապեղանիկս իւրաքանչիւրոյ, խոցուածոյն, հանճարեղապէս պատրաստել, զխաղաղութի քաղցրաբար յամ՝ երեկոյի պահանջել, զի գիտասցի թէ ո՛ ի նոցանէ, յորոց իցէ առաւել փորձեալ, ի սատանայէ ի մարմնոյ, եթէ յաշխարհէ, յաղթեալ իցէ ի նոցանէ, եթէ յաղթիցեալ. եթէ յաղթեալ իցէ քաջալերեսցէ, և թէ յաղթիցեալ տամ խոցուածք ճարտարապէս ըսպեղանեաւ բանիւն բժշկեսցէ, արկանելով ի վէր ձէթ որ է անուշահոտ պալասանեաւ մեռոնն

որ

որ հաշմեալ լինի 'ի զանազան ծաղկանց, որք ապաշխարութեան հաշմեալ 'ի զանազան առաքինութեանց, յորմէ յեւղցս յայսմանէ, բաղնին ամ սաստկաչափք, զեռանք. ըստ երանելոյն Գրիգորի Նարեկացւոյն. որ ասէ քանզի զամ զունդս չարութեան բանսարկուին զօրաց, սակաւ մի արտօսր կաթուածոյ աչաց, իբր զճճիս զեռուն բազմաստանիս խղխայթից յերկրի տկար խլրտմանց անկեալ 'ի վր ծորումն ձիթոյ ցամաքեցուցանէ, և սատակէ. և յետ այնորիկ արկանէ 'ի վր զգինւոյն, որք արիւն կենարարին, և լուանայ և քան զձիւն ըսպիտակացուցանէ, ըստ այնմ ցօղեա զիս մշտիկաւ, և մք եղէց. լուա, և քան զձիւն ըսպիտակ եղէց, զի մշտիկս զայս նշանակէ, զմարմինն Քսի որ բոլորեցաւ 'ի բազից նիւթոյ, և միաւորեցաւ ընդ բանին Այ, յորմէ ցօղեցաւ իբրու 'ի մշտկէ զցօղ գինի արեանն:

Եւ զայսոսիկ իբրև զլապտերանի եղեալ 'ի վր խոցուածոյ, վիրաւորեցելոյն, և հանճարեղապէս պատելով. և այսպէս վիրաւորելոցն, առաւել հետևելով, քան ողջոցն, և առողջոցն. զի ոչ ասէ, Պետրոս բժիշկ ողջաց, այլ հիւանդաց: Մի անհնանուլ ումեք, յիւրաքանչիւրոց, յիւրն ժողովելոցն, այլ հաւասարապէս զամենեսեան խնամել. և տածել, և զկարիսն լցուցանել, և դարմանել. ըստ հաճոյից կամացն Այ. զամ ինչ հասարակ ունելով, և ոչինչ առ անձնապէս, ըստ այնմ էր ամ ինչ նոցա հասարակ:

Խոնարհագունիցն, մի 'ի վեր քան զչափն ինչ հրամայել, և զորինչ յեղբարցն պահանջել, զնոյնն յինքեան ներբերեեցուցանել. զհաւատ, զյոյս, զսէր, զպարտաստս, ըզ գետնախշտութիս, զառանձնակեան, և զհասարակական, զաղօթս. զօրն առանց արտասուաց, ոչ անցուցանել, և յատուկ ինչ ունելով ըսքանչելի, զգործս ինչ զարմանալի. 'ի պահս և յաղօթս, 'ի հսկմունս, յաղագս մերոց յար 'ի տրտմութիւս, և 'ի ոխրութիւս, մի 'ի ծաղրս, և ի կատակերգութիւս, քանզի ասացաւ վայ ձեզ որ ծիծաղիք այժմ; զի լայցէք և սգայցէք. և թէ երանի որ լան այժմ զի

ծի

ծիծաղելին, քանզի և տէրն որքան էնց, 'ի հովիտս տրտմութեան ոչ 'ի մեք երբէք ծիծաղեցաւ, այլ մանաւանդ յամարէք լալոյ, և արտասուաց, 'ի վս Երուսաղէմի, 'ի գերեզմանին Ղազարու, և 'ի դառնութե երեկոյին, ուժգին գոչմամբ: Որ թէպէտ որքան աւետարանիչն, յաղագս քրտանցն ասէր, իբրև զկայլակս արեան իջանէր, այլ ինձ թուի արտասուքն ևս, զի ուժգինին զայն ցուցանէր, թէ իբրու արիւնախառն էր. քանզի 'ի շնչմանէն, յորժամ ուժգնակի գոչէր, վայրն ծմ՝ արտասուալից լինիւր, և ցաւակից, և հայր հոգւով անդր հասանէր, և բազմութի երկնային զօրութեանցն, ողբակցէր ընդ ասսուելոյն, երկրպագեցին, և զօրացուցին զնա ծմ՝ հրեշտակք Ն.Յ:

Արդ ըստ այսմ պահանջել մարթէ, և պարտէ 'ի Քրիստոսանգիցելոյն, և 'ի գումարեցելոյն 'ի տան նր, և յորժամ այսպէս բարւոք վերահասցու լինիցի տանն իւրոյ, յայնժամ տեսչութի եկեղեցւոյ, այսինքն, ժողովրդեանն, ոչ դադարել երբէք, զմի մի յիւրաքանչիւրոյ, 'ի խրատել, և յուսուցանել, զթիկունս դնել 'ի ներքոյ բեռանց նց, և բառնալ զմեղս, և վերացուցանել զանօրէնութիւն, որպէս և արար տէրն ըստ այնմ՝ նա զմեղս մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ, և նորին որդւոցն ասաց աշակերտն, ոչ դադարեցի զերեամ մի, խրատելոյ իւրաքանչիւրոք 'ի ձէնջ, արտասուօք. քանզի այսէ գործ տեսչութեան որ միշտ զթարախ վիրաց մեղաց ժողովրդեանն, լուանալ, և սրբել. և 'ի ջուրս հանգստեան տածել և սնուցանել. որպէս և ասէ տէրն, ըստ այնմ՝ տր հովուեսցէ, և ինձ ինչ ոչ պակասեսցի, 'ի վայրս դալարւոյ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս. դարձոյց զանձն իմ՝ առաջնորդեաց ինձ 'ի շաւիղս արդարութե, և ոչ միայն զայս և եթ, այլ և զանձն ևս դնել, ըստ այնմ զանձն իմ՝ դնեմ, 'ի վս ոչխարաց: Եւ յորժամ զայսպիսի բարւոք վերակացութիւն կատարեսցէ, և ասասցէ ահաւասիկ ես և մանկունք իմ, յայնժամ կարասցէ բարբառել զբարբառն զայն, զնմանութեան կա-

տա

տարեցի, այսու հետև կայ և մնայ ինձ արդարութեան պսակն. քանզի պարտական է եպիսկոպոսն, յիւրաքանչիւր յերկուցունս, այսինքն տանն իւրոյ. և եկեղեցւոյն զգործ ծառայութեան տն իւրոյ, յամի ներբերեցուցանել. և ապա զնոյն ամենեցունց մատոյց սպասել, և ապա ըստ երանելոյ աւետարանչին, ասել, զմատակարարութիւն զոր ընկալայ կատարեցի: Եւ 'ի վր այսու ամի, դարձեալ փեղքարն յորդորել 'ի սէր առ միմեանս, 'ի խոնարհութի, 'ի հնազանդութի, փոքրագոյնքն մեծագունիցն. և մեծագոյնքն զփոքրագոյնսն իբրև զորդիս սիրելիս ընդունել. և կրթել յերկիւղն Այ. և թէ յաղթմունք չարին, շփոթ ինչ և կագ, և կռիւ, և ըստահակութի և գժտութի ինչ ներբերիցի, 'ի խաղաղականի ժամու բարձցի. զի կատարիցի բան սրբազանին, թէ մի մտցէ արեգակն 'ի վր բարկութեան ձերոյ: Եւ 'ի սեղանս հացին հասարակաց հրամայեսցէ, գլխակոր, և հեզաբար ճաշակել. և մի 'ի միմեանս հայեցմունս, և մի յաստակ ինչ մինն 'ի վր միւսոյն, բայց հիւանդացն, զի պարտէ հիւանդաց, զկարգս բնականս թուլացուցանել. չմոլով ճաշակել, և չափով ըմպել. քանզի կենդանիք դեն, և ախտքն մեր: Եւ այսու ամի, մի խռովել զորովայնն, պարարտութեա մսով, և գինեաւ, այլ զհոգևպահն բաւական համարել, և 'ի ճաշակելն մի առանց գրոց ընթերցման. զի հայն զմարմինն բուծանէ, բանն զհոգին կեցուցանէ, ըստ աւետարանին: Եւ յետ յառնելոյն, իւրաքանչիւր ընթեանս իւր, փութացուսցէ, զի մի ոք բանիւք ինչ յանցանիցէ, զի որ բանիւ ոչ յանցանիցէ նա է կատարեալ. որ և ասացեալ է, և 'ի հառնելն յօթևանս. խոկոյն գործել զձեռագործս, կամ ընթեռնուլ, և կամ աղօթել, և յայլինչ գործըս բարիս վճարակիլ: Եւ յորժամ զայս ամ կատարեսցէ, երանելի եպիսկոպոսն. յայնժամ ասասցէ ծառայ անպիտանեմ զոր պարտէի առնել արարի, և յայնժամ դարձեալ յորժամ յիւրում տանն, այսպիսի բարուք վերակացու լիալ իցէ, դնի 'ի վերայ աշտանակի եկեղեցւոյ, զի լուսաւորէ.

բերցէ լոյս նմ զժողովուրդն Այ, և հոգասցէ զնա: Նաև զքահանայսն, յերկիւղն Այ կրթեսցէ, 'ի խոնարհութիւն, 'ի հնազանդութիւն, և 'ի վերակացութիւն, մի երկբայս լինել, և մի դատարկակեացս. այլ միշտ անձնինջ արթնանոք զհսկումն Քմի հոգալ, և անհանգիստ տքնութք, և արտասուօք քարոզութք, զփառս արդարոց, և զատանջանս մեղաւորաց յուշ առնել, և դարձուցանել զանուղղսն, և ժողովել զցրուեալսն, մխիթարել զտրտմեալսն, բժշկել զվհատեալսն. և համառօտաբար ասացից զցաւս ամենեցունց 'ի յոյս իւր բառնալ, որք ինքնին երբեմն էին. ըզ խաչն 'ի վր ուսոյ իւրոյ, յորոյ վերայ բևեռեաց զմեղս մեր. և յաւուր իւրում երբեմն, զնա՝ զյանցանս, զտրտմութին, զխորհութին որ յաղագս մեղաց նախահօրն Ադամայ. նոյնպէս և որպէս աշակերտն ասէր, և առնէր և գործով կատարէր. ո՞ հիւանդանայ, ես ոչ հիւանդանամ. ո՞ գայթակղի ես ոչ տապանամ: Եւ Մովսէս ասէր, եթէ թողուս դոցա, թող, ապա թէ ոչ և զիս ջնջեա 'ի դպրութենէդ յորս գրեցեր: Եւ Եսայի յաղագս այն ասէ, նա զցաւս մեր բառնայ, և վա մեր չարչարի, քանզի վա ժողովրդեանն փրկութեան սպառէ զարիւնն իւր հեղուլ, և վա նոյն չարչարիլ և մեռանիլ, զի օրինակ տայր այն, առաջ և կառարեաց, թէ հովիւ քաջ զանձն իւր, դնէ 'ի վր ոչխարաց. և այսպէս սպառէ եպիսկոպոսին, 'ի յոյս իւր բառնալ զցաւս ժողովրդեանն, և յանձնեալս յինքեան հօտին. ըզ մեղս և զյանցանս և զանօրէնութիւնս և արեամբ չափ պատերազմիլ, ընդ թշնամին, մի զօրութբ իւրով, այլ Աւ, բառ այնմ՝ որջնեցից Աւ խնամ զբանս իմ, և մի յանդգնապէս արձակել, այլ սերտմբ, աղաչելով, աղերսելով, և զարտասուս հեղլով, առաջի խելթացելոյն, զձեռս 'ի վր կործելոյն դնելով: Եւ յայնժամ այսու դարձուսցէ զատահակսն, և ժողովեսցէ զցրուեալսն: Դարձեալ մի ագահեսցէ զինչս ուրուք, և մի առաւել քան զհրամայեալսն պահանջել, և մի առաւել քան զհարկն, անխիժ իւք, նզովիւք,

և

և բանադրանօք, զի այնպիսին է իբրև զմի բռնաւորաց հե-
թանոսաց, և ոչ ճշմարտութեան աշակերտաց. այլ զոր ինչ
տայցեն ոչէ պարտ ամօթով յետս դարձուցանել, և լի առ-
նել ամօթալ. զերեսս տնանկաց, ըստ առաքելոյն, այլ
գոհանալ, օրհնել զտուողս, զանդս, և զանդաստանս, և
զարտօրայս, զշարժունս, և զանշարժունս, և զամ՛ զկայ-
սըս, զորդիս և զդստերս, զհոգիս, և զմարմինս, զկեն-
դանիս, և զ՛նշէմըս, զի զտրիտուրն հատուցեալ լիցի։
Պարձեալ մի մոռանել ՚ի վիճակս այլոց, իբրու տիրելով,
բայց միայն քարոզելով յուղարս. և մխիթարելով. քանզի ով
միոյ կնոջ, մի այր, այնպէս և միոյ եպիսկոպոսի, իւրն
վիճակ հրամայեցաւ ունել. այլ թէ երկու կամ երրեակ,
և կամ աւելի շնորհի համարիցի. և մի կաշառօք զայլոցն
յափշտակեսցէ, այլ զոր ինչ ընդ ձեռամբ ունիցի բաւա-
կան համարեսցի. քանզի սպասաւորանի առլցէ յամի, և ո՞ր-
քան փոքունց, այնքան թեթևագոյն. զի որքան բեռն ա-
մեք թեթևագոյն իցէ, այնքան թեթևագոյն ընթանայ։
Նաև յորժամ այսպիսեօք կենցաղավարութեամբ, և իրաւապէս
իշխանութեամբ ուղղեսցէ զինքն, յայնժամ մատչել ՚ի սե-
ղանն յահաւոր բարւոք լուսաւորի, և ճաշակմամբն միաւորի
ընդ գլխոյն Քրիստոսի. և լինի տեղի և օթևան ամենասուրբ եր-
րորդութեան։ Իսկ թէ ոչ, ընդ վզեալ ապստամբապէս առ
վեհագոյնս և առ իշխանագոյնս, անպիտանս այնպիսին
համարիցի, և պատուհաս ընկեցցի, իբրև աղ անհամ, ըստ տէ-
րունական հրամանին, և կամ իբրև զկերիչ ցաւս, զի մի և
այլ անդամքն ապականեսցին. և ըստ հրամանի սրբազանին,
թէ փոքր մի խմոր զամ զանգուածն խմորէ. զի որ ընդ ձե-
ռամբն են զնոյնն ուսանին. քանզի ըստ բնութեան,
որոյ մերձ լինիցին բարիք, և ՚ի բացեայ լինիցին չարք, և որոյ
մերձ լինիցին չարք, և ՚ի բացեայ լինիցին բարիք։
Իսկ արդ՝ տեսանեմք զի իշխանութեան բարիք և ցանկալի,
և ՚ի բացեա լինելն չարէ, և գարշելի, նոյնպէս և ամբար-
տաւանութեան և հըպարտութեան մերձ լինելն չարէ, և ՚ի
բա

բարեաց լինելոյ բարիք, և զովելի, վասն որոյ լիակատար Եպիս-
կոպոս, որ ըստ քերովբէիցն, վեհանձնեցար աղաչեմ, զի թէ
ոչ բազմաց, այլ գունեաց միով ակամբ, այսինքն հոգւով
հայեցող յերկնային յիրս յայս, այսինքն ՚ի խոնարհութիւն, և
յամբարտաւանութիւն, թէ ո՛ ՚ի նոցանէ է հաճելի Տ՟ն, և
հաղորդութենս սոսկալւոյ, մերձաւորիչ, և հրեշտակաց և
մարդկան գովելի, և ընտրելի, և ո՞ր գարշելի, և ամենե-
ցունց ատելի, միայն հաղորդել, և միւսոյն ո՞չ, քանզի բը-
նութիւն զայս ուսուցանէ, որ խոնարհէ և հեզ, է ցանկա-
լի, և որ հպարտն է և ամբարտաւան դնէ զինքն, և զիւրսն
՚ի բերան մարդկան վասն այնորիկ միշտ խածատի ատամամբ իւրոց.
և ոչ ՚ի մարդկանէ և թէ, այլ և ՚ի դիւաց և ՚ի դժոխայ-
նոց, միշտ պատուի, և հանդերձեալն ՚ի գեհեանն, զետե-
ղի զի ուր ասաց որդին ուր եմ ես, անդ և պաշտօնեայն իմ
եղիցի. կարէ և սատանայ ևս ասել, ուր եմ ես. անդ և
պաշտօնեայն իմ եղիցի:

Եւ արդ՝ ով սրբազան ասա ինձ թէ զի՞նչ շահ եղև, որ
ոչ հայեցար գունեօք, միով ակամբ, ՚ի կատարումն. վասն
այնորիկ գրէ սրբազանն, զգուշացուցանելով, մի մատուցա-
ունէք, զի մի հպարտացեալ ՚ի դատաստանս սատանայի,
անկանիցի: Եւ այսու թուի թէ, զոր ինչ այսու է սերով-
բէիցն դասք, որք այսպիսիք ընդ նմին են դատապար-
տելոց. ընդ վզեալքն ամբարտաւանութեան, և թուի թէ և
մարգարէն ևս, յաղագս ամբարտաւան հոգւոյ նոցին ասէ,
դու փշրեցեր զգլուխ վիշապին, այսինքն ամբարտաւան
հոգի եպիսկոպոսին, և ետուր զնա կերակուր զօրայն Եթով-
պայ. այսինքն զօրացն դիւաց, որք և գրեալ է յաղագս մի-
ոյ եպիսկոպոսի, թէ յետ բազմօգունի երևմանց, և ահա-
գնայոյն տեսլեանց թերևս զգուշացայց, իւր՝ զինչ այժմ,
յաւուր միում՝ մինչ դեռ նստէր, ինչ թէ յանդորրութեան,
յանկարծակի դիմեալ մինն առ նա խրոխտ զինուորք ա-
գաւորք ՚ի թագաւորէ, և ասեն, արի կոչէ զքեզ մեծ թա-
գաւորն, զի տացես պատասխանի, իշխանութեանդ և հօտիդ
Ք՟ի,

Ք՟ի, և նա 'ի զարհուրմանէն, մինչ դեռ այսր և անդր փախչիլ և զերծանիլ կամէր, էհա՛ զգլուխ իւր 'ի սիւն տանն, և ջնջեալ զուղիղ գլխոյն մեռաւ, և պաշարեալ 'ի դիւացն, 'ի դժոխս դատապարտեցաւ: Արդ եթէ խոնարհեալ էր սա Ա՟ծայնոյն աւանդութեանց, ոչէր փշրեալ ըզ գլուխն, և կերակուր լեալ դիւաց, և ոչ 'ի դժոխս մատնեալ. այլ խոնարհութեամբ ընդ հեզոյն Յ՟սի, հաղորդեալ. զի ով ամբարտաւան հոգին, նմանէ կերակրոյ, որք զորքէն ջնդկաց. սոյնպէս և խոնարհ հոգին, հեզոյն Յ՟սի:

Եւ այս երեւեցաւ, զի հակքէն ողքա, և ներհակք, և զի ներհակն է ապականիչ ներհակին. վ՟ն որոյ ամբարտաւանութիւն, թէպէտ է պատահումն իմն, սակայն այնքան ապականէ զէնթակայն, մինչ զի բառնայ զտեսակաւորութի հոգւոյն, որ է Ք՟ս. ըստ այնմ՝ հոգի երեսաց մերոց Տ՟ր Ք՟ս. զի ով հոգին զմարմինն կենդանացուցանէ, և է տեսակ նորին, որով ներգործէ, սոյնպէս և Ք՟ս է տեսակաւորութի հոգւոյն, որով կեայ կենդանին. և նովաւ ներգործէ զԱ՟ծայինսն, ը՟ս այնմ՝ առանց իմ ոչինչ կարէք առնել. և թէ ոչ ոք կարէ գալ առ հայր, եթէ ոչ 'ի նև:

Եւ արդ՝ ով ասացաւ, թէպէտ հպարտութիւն և ամբարտաւանութիւն է պատահումն, որոյ գոլն ոչ զէնթակայն գոյացուցանէ, և յոչ գոլն ապականէ, սակայն որակութի սորին, այնքան դժընդակագունէ մինչ զի տեսակաւորութի հոգւոյն տարրբաժանէ, և անտեսակ զհոգին առնէ. քանզի ով մանչ անկեալ 'ի մէջ մարմնոյն և հոգւոյն, և տարրբաժանումն առնէ, 'ի մէջ երկակից գոյացութեց. սոյնպէս և մեղքս այս մեծագոյնս ըստ մարգարէին, անկեալ 'ի մէջ հոգւոյն բանականի, որ է նիւթ, և 'ի մէջ Ք՟սի որ է տեսակաւորութի մեկնէ և տարրբաժանէ 'ի միմեանց երկակիէութիւնսն, և առնէ զնիւթն զայն առանց տեսակաւորութե. և որպէս սուրն որոշէ զմարմինն 'ի մարմնոյ, այսպէս ամբարտաւանութիւն, որոշէ զՔ՟ս 'ի մարդոյն, և ով խաւարն մթացուցանէ զաչսն, և նսեմացուցանէ, այսպէս և

ամ՝

ամբարտաւանութիւն զբանական հոգին, և զմիտսն. և որ-
պէս ճառագայթ արեգականն արգելեալ անպտղաբեր լինի
երկիր, այսպէս հպարտութք և ամբարտաւանութք արգե-
լեալ զճառագայթս Ա̃ծութեն որ է Ք̃ս՝ լոյս այնմ որ է
ճառագայթ փառաց, և նկարագիր էութե ն̃ր, հեռացեալ
'ի մարդոյ, անպտուղ մնայ երկիր ն̃ր, յԱ̃ծային պտղաբե-
րութեց: Եւ համառօտագոյնս ասացից, թուի թէ՝ ոչ
առաքինութն հոգւոյ, խոնարհութք տեսակաւորութիւնէ
Ք̃ս, այսպէս հպարտացելոց և ամբարտաւանից հոգւոյ,
տեսակաւորութիւնէ ստ̃նյ. զի ոչ նա շարժի, նովաւ, սոյն-
պէս շարժի սա, սովաւ. զի ոչ նա լուսաւորէ, և ճառա-
գայթաձայլս գործէ, և հակ նորին, սա նսեմացուցանէ,
և խաւարեցուցանէ. զի ոչ նա պտղաբերէ, և դալարուղ
պահէ, և հակ նորին սա անպտուղս առնէ, և ցամաքեցու-
ցանէ: Եւ ահա երկեակք գոյակ, և երկեակք էակք, և
ներհակք, հարկաւորի յոլոց և հաղորդի, հաղորդեալն մի-
ոյն 'ի նոյանէ, տարաբաժանիցի. վ̃ս որոյ ո̃վ սրբաղձն,
յորժամ կամիցիս յԱ̃ծայն սեղանոյն հաղորդիլ, և Է̃ տե-
սակին Ք̃սի որ տեսակաւորութի է հոգւոյն, միաւորիլ,
և միանալ, պարտիս 'ի միւսոյն, 'ի տար անդր բաժանիլ և
հեռանալ. զի յաջողակ լինիցի հաղորդութեդ, և միաւո-
րութեդ ընդ տեսակաւորութեն. վ̃ս զի անկարելի է, եր-
կակաց ներհակաց 'ի մի ժողովիլ:

Պարծեալ պարտէ լինիլ անյիշաչար, առ խոնարհագոյնսն,
և մի զոք 'ի քահանայից դատապարտել. ոչ սովորեն ոմանք,
որ 'ի մէջ բազմաց խայտառակեն, զկարգն առնելով, անի-
ծանելով, և բամբասելով. և յետ ոչ սակաւ աւուրց շնոր-
հելով, և զնոյն պատժապարտեալն դարձեալ 'ի գործն սու-
կալի, և յահաւոր մասնուցանելով, և հրամայելով, ուստի
լինի թերութի գեղջացն, և գայթակղութի, և պէս պէս
մնախոհութի. վ̃ս այնորիկ ասաց առաքելն, յերկիցուէ ըզ
չարախօսութի մի ընդունիցիս. քանզի բազումք լինին
թշնամիք, այլ թէ ըստահակութի ինչ յայտնիցի յերից
ուէ,

ուէ, պարտէ ծածկաբար խրատել, և յորժամ յետ բազում խրատուց, ոչ զգուշասցի, ապա յայնժամ առաջի կարգակցացն յանդիմանեսցէ, ըստ խրատու առաքելոյն, զի մի ըզ սրբազան խորհուրդ կարգաց հայհոյեսցի. և 'ի յանդիմանելն մի ոխակալութեամբ, և մի նենգութեամբ, վասն զի եղբայրք և կարգակիցք. այլ յաղագս զղջմանն նորուն գործեսցէ, զի թերևս ուղղեսցի: Ապա թէ անպարտ զանպարտսն խայտառակեսցէ, յաղագս նենգութեան և նախանձու, սրտի խորոյ, և ամբարտաւանութեան մտաց իւրոյ, և հպարտութեան սրտի, ոչ կարէ տալ պատասխանի, յաւուրն յահեղի, զի ոչ իրաւամբք գործէ զոր ինչ և գործէ. և որ այսպիսեօք ախտիւք, իցէ պարաւանդեալ, լաւէ ոչ մերձենալ 'ի սուկալին, յայն խորհուրդ: Եւ թէ սա ոչ եթող պարտապանաց իւրոց, և ոչ իւրեան թողեալ լիցի. և թէ սա ապա որպէս կարասցէ իշխել՝ մերձենալ, 'ի յահաւոր սեղանն. որ՝ եթէ մեղանչողացն, որ ոչ թողցէ, և ապա մերձենայցէ, մեծագոյն վտանգէ. իսկ անմեղացն ոչ ասացի ապա ըզքան. վասն որոյ պարտէ մերձեցելոցն 'ի նա սրբութեամբ մատչել, զի ընդ սրբափայլելոյ պնդիցն պսակիցի և փառաւորիցի. և լուսաւորեալ յարութեան ընդ նոսին տեսլեանն արժանաւորիցի: Ապա թէ յանդգնաբար, և ժպրհաբար յանդգնիցի, թող թէ զներհակեանն առ ընկալցի, որք ընդ բազմելոյն Յուդի, զի թէպէտ մերձեցաւ, ընդ երջանկայելոյն, և հաղորդեցաւ ընդ նոսին, սակայն պարտեցաւ, և արտաքս ել 'ի գնդէն սրբազանից. և փոխանակ առ ընկալաւ ողբալի. վասն որոյ առ սոսա անկեալ սրբազանիցդ, աղերսեմ և աղաչեմ, նախ յիմ զինից բանաւորականն, մաքրեցէք, և ապա 'ի խորհուրդն յահաւոր մատիջիք:

Այսպէս և զքահանայսդ աղաչեմ, զի ամենեքեան զնոյն տեսակաւորութին Քի որ է խոնարհութին 'ի միմեանս ցուցջիք, զգլուխս ձեր խոնարհեցուցանելով, զլոյն ձերոյ, և զիմ իմասնս և զարդարութին զհրամանս կատարել, և մի ինչ ընդ դիմանալ, ոչ միայն եպիսկոպոսաց, և

վե

վեհագունիցն քան զինքն այլ և ընկերակիցացն, և խոնարհա-
գունիցն, ընկերացն զսէր ցուցանել. լալ ընդ լալն, և
խնդալ ընդ խնդալն, ըստ առաքելոյն, և թէ զնոյն միմեանց
խորհիցիք. մի զրկել զմիմեանս, և մի ամբարտաւանել:
Զանձն 'ի վերայ հատին Քրիստոսի դնել, իւրաքանչիւր 'ի ժողո-
վրդոյն, խրատել և ուսուցանել, և 'ի կրթութիւնս Աստուած-
պաշտութեան մարզել. արթուն ակամբ զնոսա պահել, և հո-
գալ. որպէս Տէրն և արարիչն արթուն ակամբ ըստ մարգարէին,
որ ոչ նիրհէ, և ոչ 'ի քուն երթայ պահապանն Իսրայէլի, և
յար և յաւէժ յընթերցմունս պարապել. 'ի սաղմոս երգու-
թիւնս. 'ի հսկմունս, 'ի պահս, և յաղօթս, զի այսու աղն քա-
հանայից, և կենդանաւորաց ԺԲ [illegible] Տեառն, և յորոց այսոցիկ
պաշտօնէիցն անհամին, և ընկեցեալ լինին արտաքս, և կոխան
լինին յամենեցունց: Այլ պարտ է, ամ՛ յամի լինել, զի կա-
րող լիցին տալ պատասխանի, յաւուրն դատաստանի, զի
թէ դժուարութի ընդ ընկերսն հանդիպեսցի, մի նեղեսցին,
մինչև հաշտիցին. ընդ այնմ՛ մի տայք տեղի սատանայի,
որ զողանայր մի ևս զողասցի, այլ մանաւանդ աշխատեսցի
ձեռօք իւրովք: Եւ մի մեծարանիցին 'ի վերայ միմեանց. որ
յոյժ հեռի է յաշակերտացն Քրիստոսի. զի ասաց Տէրն ամենեքեան
դուք եղբարք էք, այլ որ մեծարանիցն, պարտ է լինել ամե-
նեցուն ծառայ. զի ասաց որ կամիցի մեծ լինել, եղիցի
ամենեցուն ծառայ. ըսպասաւոր, և կրտսեր. և պաշտօ-
նեայ, որպէս որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշ-
տել: Եւ այսպէս յոյժ զգուշացեալ, սրբեալ և մաքրեալ,
և զնոյնս Տէրունեան յինքեան ներբերեցուցեալ, և ա-
պա համարձակիցի, 'ի սեղանն սուրբ, և 'ի խորհուրդն
սարսափելի. որպէս եցոյց Տէր զօրինակն նախ զմաքրութիւն ա-
շակերտացն, և ապա զբաշխումն մարմնոյ և արեանն, քան-
զի ըստ բնութենէ, որ կամիցի 'ի լոյս արեգականն հայել,
պարտի նախ զաչն սրբել, զի թէպէտ լոյսն բարի է, բայց
բժտեալ աչացն չար, զի խոկոյն խաւարեցուցանէ:
Այսպէս թէպէտ մարմին և արիւն կենդանարարին Աստուածացեալ
և

և Քնէ, յերկնից իջեալ և անմահական, կենաց տուող, և կեանքէ, սակայն մեղսամածիցն, և հպարտացեալ ամբարտաւանիցն, մահէ և ապականիչ: Ո՜վ ընտելութիւն որ համատեաւոր ընտելութիւքն միանան և միաւորին ընդ միմեանս, որպէս հուր ընդ այնմ հրոյ . այլ ներհակքն և ոչ ՚ի միք երբէք · քանզի հեզն, և խոնարհն Յս, ընդ խոնարհացն և ընդ հեզոցն, միաբանի, և միանայ, իսկ ընդ ամբարտաւանիցն, և ոչ երբէք · որպէս ասաց, գայ իշխան այսորիկ, և յիս ինչ ոչ գտանէ, յիւրոցն, հպարտութեանցն, և ամբարտաւանութեանց, այսպէս պարտ է համարձակապէս բարբառել, որով հետև զքեզ տր հրաւիրեմ յիս, գայ իշխան այսորիկ, յիս ինչ ոչ գտանէ յիւրոցն, այլ զի ծանիցէ խոնարհս, թէ սիրեմ զքեզ Քս, և որպէս պատուիրեցեր ինձ, այնպէս առնեմ: Եւ յայնժամ խոնարհեցի առ նա ճշմարիտն Յս, որպէս առ երկիս մանկունս, ՚ի ծնողին և ասացէ, ծնարի գնացուք աստի, ՚ի խաւարէ ՚ի լոյս, ՚ի մահուանէ ՚ի կեանս, յապականութենէ յանապականութիւն, ՚ի ստոյ առ ճշմարտութիւն · յաշխարհէս ՚ի հայրենականն գաւառ · ՚ի սարինայնոցն յերկնայինս · ՚ի հողեղինաց ՚ի հրեղէնսն ·
որպէս անէնն, Ը երկնայինան պարել զհոգեղէն զպար:

Այնպէս և սարկաւագացն, պարտ է զնոյն կերպարան ցուցանել, խոնարհութեան Յսի յինքեան · զի մի այլանեսակ երևիցի ՚ի ծառայութեան, և ՚ի հարսնութեան խորհրդոյս · այլ նախ սրբել պարտ է, և ապա մատչիլ, որպէս երանելին Ստեփաննոս · պահօք և արտասուօք կրթել, և ՚ի ծոց եկեղեցւոյ մարզել, մեծագունից և փոքրագունից հլու և հպատակ կալով, և ապա ՚ի սուսերի, և յահաւոր խորհրդոյն մերձենալ, և մի ժպրհեսցի անարժանապէս մերձիլ ՚ի հուրն տէրունի, զի մի կիզեալ լուծցի:

և այն ամենի, ոչ յիշխանս, և 'ի բանաւորս, ոչ 'ի մեծատունս, և ոչ 'ի փարթամս, և յնչաւէտս, այլ յամենեսեան միապէս հայի, և հատուցումն առնէ. վ̅ն այսորիկ ամենեցունց պարտէ երկնչել, մանաւանդ թագաւորաց և իշխանաց, որ և տեառն Սողոմոն, մեծագունիցն մեծագոյն քննութի, լինելոցէ, և հատուցանէ իւրաքանչիւր զգործս իւր: Եւ վ̅ն այսորիկ զայս տմ՝ պարտէ տմ՝ թագաւորաց, 'ի միտ առնուլ, զի մի ամբարտաւանիցին. քանզի իբրու բնութբ իմն զհետ երթայ մեծագունիցն ախտս այս, որ 'ի բարձրագոյն տեղւոջ հողմն, վ̅ն այսորիկ պարտէ խոնարհել զի մի լինիցէ հողմն այն, յորժամ՝ սաստկացեալ որ և ընկէց զառաջին ամբարտաւանն, իբրև զփայլակն, ահեղ որոտմամբ, որոյ անկանելն զդառնապետութիւն սատանեցոյց. զարհուրեցոյց, և սասանեցոյց. և երկուանք կալազամենեսեան, քանզի հողմն այս՝ սաստիկ փշրէ զնաւս որք դիմեն 'ի Թարշիս. Նաւէ անձն մարդոյ, ծով կենցաղս, հողմ ամբարտաւանութիւն, Թարշիս մեծութի կենցաղոյս, և որք դիմեն 'ի սա, վերամբարձութիւն մեծութեան, փաղփաղուկ փշրին, հողմով հպարտութեան և ամբարտաւանութեան. յաղագս այսորիկ ասէ առաքեալ. իսկ որք կամին մեծանալ, անկանին 'ի փորձութիւն և յորոգայթս, և 'ի բազում ցանկութիւնս անմիտս և վնասակարս, որ ընկղմեն զմարդիկ, 'ի սատակումն, և 'ի կորուստ, վասն որոյ և մարգարէն զարմանալով ասէ, յաղագս անուանց այսորիկ; թագաւորութիւնք երկրի ժողովեցան և անցին 'ի միասին, ինքեանք տեսին այսպէս զարմացան, խռովեցան, սասանեցան, և դողումն կալաւ զնոսա. քանզի տմ՝ մեծութի, պատիւ, և վեհափառութի, իբրև զերազ թռչուցեալ անցանէր, որ և ունայնութեանցն մի ըստ միոջէ յոյժ յանդիման խոստովանէր, և ամենեքեան զայս տմ՝ ունայնութիւն տեսեալ, որ անցանելով հեշտացուցանէր, զխաբէականն, վ̅ն որոյ զարմացան 'ի վ̅ր վաղվաղակի անցմանն, խռովեցան 'ի վ̅ր անկմանն, սասանեցան 'ի վ̅ր կործանմանըն,

նըն, և դողումն կալաւ, թէ զի արդ տայցեն պատասխա-
նի, մնաց խաբմամբն: Յաղագս որոյ պարտ է ինձ թագաւ-
որաց նախ քան զանցանելն զայս ինձ մտախոհ լինել, և
զինքն խոնարհեցուցանել և դողալ, և սարսափել, 'ի սոյն
պատասխանւոյն, քանզի ոչ այլ ինչ է միջոց ներկայ կեն-
ցաղոյս եթէ ոչ մանգ, 'ի յոր ոչ ումեք թոյլ տուեալ լինի
սակաւ մի հանգչել, և կամելով երթալ, այլ նեղին զմեզ
միապէս շարժմամբ երթալ. արդ եթէ այսպէս, ապա ըն-
դէր պարտ է հոգւով հպարտանալ, և կամ փքքանալ, և
կամ ամբարտաւանել, որ յետ սակաւ պայթուցեալ կորն-
չի, և ոչ ևս գտանի տեղի նր. զի գերեզմանք տունք նց,
եղիցին յաւիտեան, փոխանակ զոսկէ զոծ ապարանացն, և
ականակից ճաճանչափայլ արծաթապատ տանցն, և անդ
կորդացեն, անուանք նց 'ի հողս իւրեանց. զի ոչ եթէ ասէ,
'ի մեռանելն իւրում առցէ ընդ իւր զամ, զ թագս և ըզ
պսակս ընդելուզեալս ակամբք պատուականօք, և յեռեալ
մարգարտօք, ոսկէ թել պաճուճեալ ըզգեստս, բեհեզս, և
ծիրանիս, զծառայս ոսկեբանձակս, և զաղախնայս, ոսկէ
զարդս, և զմանկունս բողբոջազարդս. երանգ երանգ, գոյ-
նափայլս, երգեցիկս գեղեցկաձայնս, նուագարանս, ըզքան-
չականս. զինուորացն ջոկք, արեգակնազանս, մարտակցա-
կան գունդակնականս, ապարօշափայլ կինս, շողշողականս,
ծիրանածին փայլունահեղ, զարդափայլ դրօշերս, ըզքան-
չելաթեւսն, փայլայուն, հրամանակատարս, ոսկիապատակ,
մատղաշնակս, խանձարոց, ոսկիափայլ և արծաթամա-
տոյց քաղցրութիւն, զբոսաւէտ ծաղկապանծ երանգ երանգ,
փողթալիթիկ փայլս. սրբաջրակիր, աւազանս, և հեզիկ
ընթացս ջուրս, քարաշար զառուս, հանդարտալիք. պըղ-
պջակափայլս, զծառս շարահարս միջաւէտս, և երգեցիկ-
տեսակ, զհաւս, գեղեցկաթեւսն, և զփայլեցաքեղ պան-
ծափայլ թռչունս, և զայլս այսպիսիս, զի ոչ իք թէ 'ի
մեռանիլն իւրում առցէ ընդ իւր զամ, այլ զհակս, որ 'ի
մեռանիլն իւրոյն վաղվաղակի ընկանի հատիլ, որդնիլ, շա-
րաւ

բաւիլ. յորմէ հօսի, այնքան գարշագոյն, մահացուցիչ հոտ, յորս թէ յամենայ ոք 'ի հոտումն, սարսափելի մահ կրէ. քանզի այնքան գարշագոյնէ տղմալիր հոտ մարդոյ, յորոյ հոտոտելն մահ ածէ. և զնոյն զգայարանս տաղտկացուցանէ, և անբուժելի ցաւ, և հիւանդութիւն 'ի վերայ ածէ. և յետ այնորիկ ծորումն և հոսումն շարաւոյն, և համակումն որդանց և խշրտմանք կերչաց, փոխարկումն փայլուն երանգ պեղոյն, 'ի գարշատեսակ, և տաղտկացուցիչ հայեցմունս. ցանկալւոյ տեսութիւն, 'ի տեղի շարաւահոտ, ուր եռան, սարսատեսակ որդունքն, յորմէ հօսի, զազրատեսակ շարաւն. յորմէ ամենագարշ տեսչութենէն, և զազրահոտ բուրմանէն, տեղի տան սիրելիքն, փախնուն նազելիքն, խոյս տան որք ծնանն. ծնանողք տարախաղչին, ծառայքն, և ծառայակիցքն, նաժիշտք, և նաժշտակիցքն, սիրելիքն և բարեկամքն, և գրեթէ ամենեքեան, իսկ փութացուցանեն, զբարձումն դիականցն, և զծածկումն պարշութեան, 'ի գլապումն, տղմակիժութեանց, 'ի պարափակումն, դամբարանաց, և յարգիլ նսեմագոյն, տապանաց, և տալ փոխեալ մխրոյն, 'ի կերակուր հողոյն:

Արդ եթէ այսէ վախճան և կատարումն ամ մարդոյ, թագաւորաց, իշխանաց, մեծամեծաց և ռամկաց, ապա որո՞վ հպարտանաս, և ամբարտաւանիս. աղաչեմ զի հայեսցիս 'ի քեզ, և մտախոհ լինիցիս այսորիկ. և զխոնարհութիւն Քրիստոսի, 'ի քեզ երևեցուսցես. որ թէ թագաւոր իցես, քան զՔրիստոս մեծագոյն ոչ ես, զի նա թագաւորէ թագաւորաց, և կացուցիչ թագաւորութեանց, և մանաւանդ էացուցիչ, և գոյացուցիչ: Եւ թէ իշխանես, քան զՔրիստոս բարձրագոյն ոչ ես. որոյ իշխանութիւն 'ի վերայ քան զերկինս, և իշխանութեան նորա չիք սահման, և ելք նորա ի սկզբանէ աշխարհի. և թէ մեծատունես քան զնա ոչ ես, զի ասաց մարգարէն, մեծութեան նորա ոչ գոյ չափ, և թէ մեծ է, և գովեալ յոյժ. և թէ մեծ է տէր, և օրհնեալ յոյժ. որոյ յաղագս ասաց, ազգ և ազգ, զմեծ վայելչութիւն փառաց քոյ խօսեսցին:

ցին։ Արդ՝ հայեցարուք ամենեքեան ՚ի սա և տեսէք թէ յոր խոնարհութիւն մատոյց զանձն. որոյ վ՟ զարմանայ և ըմբռնչանայ, մարգարէն, զոր օրինակ զարմացին բազումք, ՚ի վ՟ քո, այնպէս անշքեալ տեսիլ քո յորդւոց ՚ի մարդկանէ. և նուաղեալ քան զամ՛ որդիս մ՛րդկան. և թէ տեսիլ նր անարգ նուաղեալ, և թէ տեսաք զնա, և ոչ գոյր տեսիլ, և ՚ի դիմաց Ք՟ի ասէ, նուաղեցաւ սիրտ իմ, և թէ կցեցաւ ոսկր իմ ՚ի մ՛րմին իմ, նմանեցայ ես հաւալուսան յանապատի. և թէ եղէ ես ոպ բու յաւերակի, և այլս սոյնպիսիս, որ ինչ յետինն էր դառնագոյն, և դժուարութիւն ՚ի յետին խոնարհութիւն զայն կրեաց և եցոյց յինքեան. վ՟ այնորիկ և Ա՟Ծ յաղագս խոնարհութեն նր, ըստ մարդկութեն առաւել, զնա առաւել բարձրացոյց. և շնորհեաց նմա անուն որ ՚ի վերէ քան զամ՛ անուն, զի անուն հօր, որ էր որդին և բանն, շնորհեաց մարդկութեն, այսինքն զոր ինչ հօրն էր յատկապէս, ետուր մարդկութեն յատկութիւն, զի անուն հօր, էր որդին սեպհաբար, ետուր նոյն որդին, մարդկութեան, սեպհաբար. Ա՟Ծ էր որդին և բանն, ընդ հօր հաւասար, նոյնն ետուր մ՛րդկութեն, ընդ մարդկութեն հաւասար. նոյն որդին և բանին, ընդ հօր համագոյն, նոյնն շնորհեաց մարդկութեն, որ յարգանդի անարատուհւոյն, եղև համագոյն. ը մարդկութեն, նոյն անունն որդի և բան, որ ընդ հօր համագոյ, անժամանակաբար, նոյն անունն որ էր որդի, և բան միշտընդունաւորաբար և ժամանակապէս, եղև համագոյ ընդ մարդկութեն: Նոյն անուն որդի և բան, որ նախ ընդ այմէ հօր, փառաւորեալ և երկրպագեալ, յամ՛ եղականաց, նոյնն ընդ մարդկութեն միաւորեալ և երկրպագեալ, միաւորութեն անբաժանապէս, և անշփոթաբար: Նոյն անուն որդի և բան, ՚ի հօրէ փառաւորեալ յառաջ և նախ քան ըզ յաւիտեանս, և զեղականս, ըստ այնմ՝ թէ փառաւորեա զիս հայր առ ՚ի քեն փառօքն զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի, առ ՚ի քէն, նոյն անուն որդի և բան, Ը

մարդ-

մարդկութեան փառաւորի 'ի հօրէ, զի այնմ թէ եկն յերկ-
նից բարբառ 'ի հօրէ, թէ ուղ փառաւոր արի, յառաջ քան
զլինելն յաշխարհի, եւ եղականաց, համարնութեանապէս եւ
համագոյաբար, այսպէս փառաւորեցից զքեզ, միաւորու-
թբ, ընդ մարդկութեանդ, յորս միացար, միաւորութբ միշ-
տնջենաւորաբար: Նոյն անուն որդի եւ բան, որ 'ի հօգ-
ւոյն որոյ փառաւորի, անժամանակապէս, նոյն անուն որդի
եւ բան, շնորհեաց մարդկութեանս, որ փառաւորի մարդկու-
թեին միաւորութբն ընդ նմա, ըստ այնմ նա զիս փառաւո-
րեսցէ, եւ կատարեցաւ մարդկութեին, որ ասայն ըստ բա-
նի քում իմաստուն առ զիս. որ արդար եւ այնքան բարձ-
րացաւ, խոնարհութբ մարդկութեին Քի. մինչ զի եղե-
նման միաւորութբն ընդ բանին իմաստունն. քանզի ըստ,
պէս լոյ, եւ զոյս առէ մարգարէն, թէ որպէս բանն քո է
իմաստութի քո, նոյնպէս եւ արս մարդկութին, յոր միա-
նայ եւ միաւորի. ընդ իմաստութի քո. քանզի նոյն մարդ-
կութե բնութբն զոչէ մարգարէն, յորս միաւորեցաւ ընդ
անուանն բանին, եւ որդւոյն Յի: Օր անուն բան եւ որ-
դի, միանոյն էութիւն ծանուցանի, ով եւ առէ, թագաւոր
եւ հերման յանուն քո ցնծասցեն. զի անունն Յս, բան եւ
որդի մարմնացեալ աշխարհասցն եցոյց, զփառս Յսութեն,
որ շնորհեալ էր մարդկութեն, միաւորութբն, որ արտա-
փայլեցաւ մարդկութին, անուանքն Յս, այսինքն որդւ-
ոյն Յս, 'ի առաքել աշակերտացն, եւ մարգարէիցն որոյ ցան-
կային, 'ի լեառն թաբօր: Իսկ անտի նշոյլ եւ լոյս Յսու-
թեն, որ միացեալ եւ միաւորեալ էր ընդ մարդկութեն,
յարտափայլելն ծագեցաւ 'ի հերման, եւ երկուքեան լեառնս
այսորիկ, ցնծացան 'ի պայծառակերպելն, անուանն եւ որ-
դւոյն Յս. եւ արտափայլութն, ճառագայթից Յսութեն,
որ շնորհեալ էր մարդկութե. եւ վն այնորիկ ասաց որբա-
զանն, շնորհայ կատարեալ մարդկութե, հայլն զանուն
էր, այսինքն զորդին իր եւ բան, որ 'ի վերէ քան զամ
անուն. զի յանուն Յսի Քսի ամ ծունր կրկնեսցի.

երկ

երկնաւորաց, եւ երկրաւորաց, եւ սանդարամետականաց։ Օ՜ անուն այս սքանչելի, որ պատմեցաւ Յակոբայ, 'ի գօտէ մայրին, նախ քան զմիաւորիլն ընդ մարդկութեան օրհնեալ էր, եւ երկրպագեալ յամ մարգարէից, բայց այնմ եղիցի անուն նր օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարեւ անուն նր. եւ թէ օրհնեալ է անուն տր փառաց նր յաւիտեան, եւ թէ բարձրացաւ անուն նր, միայն խոստովանութի նմա յերկինս եւ յերկրի։ Եւ յաղագս անուանս այսորիկ ասաց առաքեալն, շնորհեաց նմա անուն, որոյ սակս ամ ծունր կրկնեսցի։

Եւ արդ՝ որով շնորհեցաւ, այս աղգի մարդկան, եւ յետնեալ բանեղծուածոյն, եթէ ոչ անճառելի խոնարհութեն, որ այնքան խոնարհեցաւ, Քն բան առեցելոյն, մինչ զի յետին եղեալ յամի, եւ ապա բարձրացեալ յամի, վն այսորիկ որքանզամն նախ զխոնարհութի զգործոն սպասէ, եւ ապա զբարձրութեն բարբառէ, թէ վն որոյ եւ Քս զնա առաւել բարձրացոյց, ընդէր, զի զանձն ունայնացոյց, եւ կերպարանս ծառայի էառ, եւ այսու մի դիցես անձն կատարեալ մարդկութեան, եւ այն անձն բանին, եւ կատարեալ մարդկութին որ այնքան անճառաբար, խոնարհեցաւ Քսայլն կատարեալ անձամբն, խոնարհեցաւ անճառապէս. վն որոյ եւ առաւել բարձրացաւ Քսապէս. քանզի այնքան անպատմելի էր խոնարհութի նր, մինչ զի ասէր 'ի դիմաց նր մարգարէն այլ ես որդն եմ, եւ ոչ եմ մարդ, նախատինք մարդկան, եւ արհամարհանք ժողովրդոց։ Եւ անճառելւոյ խոնարհութես այս, ոչ միայն անունն Յի շնորհեցաւ նմա, այլ եւ ձեռն, եւ աջն Յի, բայց այնմ եղիցի ձեռն քո 'ի վր առն, աջ քո 'ի վր որդւոյ մարդոյ։ Եւ արդ՝ այսու մի ասասցէ, Նեստորիոս, 'ի վր առէ, այլ ոչ միաւորեալ եւ միացեալ առէ, այլ 'ի վր առելոյն զանչփոթութեն յայտ առնէ, որ եւ յայլում ընդ մեզ առէ, բայց այնմ է մանուկ, որ թարմանի ընդ մեզ Քս, եւ այսոքիւք զունայնախոհութեն եւտիքեայ ես անդր նահանջէ։ Իսկ լիանն մածեալ, առե

ասելովն, և բանն մարմին եղեն, զանձառ միաւորութիւն յայտ առնէ. պատասխանի անխարշտութեան Նեստորի. և յայժմ վայրի, ՚ի վ՟ր ասելովն, թէ ով քո ՚ի վ՟ր որդւոյ մարդոյ զանշփոթութիւն երկուց բնութեանց ՚ի միաւորութիւն եկեղեցւոյն. զմի որդի, և զմի անձն, մեզ բացերևոյցէ, վ՟ր որոյ որդւոյ այս, անուն և բան, խոնարհեցաւ, և բուռն եհար զզաւակէն Աբրահամու, և բարձրացոյց զխոնարհն բնութիւն, բարձրեալն բնութիւն, մինչ զի նման ինքեան արար, և գործեաց. քանզի այնքան խոնարհեցաւ, բնութիւն Ադամայ. մինչ զի հաւասարեցաւ անասնոց, անբանից և նմանեցաւ նոցա, պատկերն և կերպարանն Ա՟յ, վ՟ր այնորիկ յոյժ առնէ, և յետ խոնարհութեան առնէ, կեցո զիս ըստ բանի քում. զի ով ստացաւ, ըստ այն, պէս լսի, այսինքն հաւասարիլ անասնոց, անբանից, և նմանիլն նոցա, ըստ նմանութեան բանի քոյ, այս և գործեա. զի ով բանն քո, այնպէս այս և մարդկութիւն, որ միացեալ և միաւորեալ է ը՟ նմա. զի ով նա բնութեամբ Ա՟ծ, և սա միացմամբ և շնորհիւ Ա՟ծ. ով ոսկի ընդ հրոյ, զի ոսկին ոչէ բնութեամբ հուր, այլ միացմամբ, և միաւորութեամբ ասի հուր:

Ով ով նա իմաստութիւն Հօր, և սա. զի ով նա աջ և ձեռն Հօր, նոյնպէս և սա. զի ով նա բնութեամբ ստեղծող, և սա շնորհօք և միաւորութեամբ. զի ով նա բնութեամբ զոր ինչ կամէր առնէր, և սա միացմամբ ընդ նմա, զոր ինչ կամի, և առնէ. զի ով նա անուն, Հօր բնութեամբ, և սա անուն Հօր շընորհօք, և միաւորութեամբ. ով ասաց ինքն, Հայր փառաւորեա զորդիդ քո և զանուն, եկն բարբառ յերկնից, և փառաւոր արարի նախ քան զյաւիտեանս անժամանակապէս, համագոյապէս, և համաբնութենապէս, ով անուն բան և որդի, և գործեալ այժմ ևս փառաւ[illegible]եցից, միաւորութեամբ միացմամբդ, մարդկութեանդ և [illegible]նաւորիդ, ով անձն մի որդի, իմ և կուսի, համագոյ ինձ համախառն, և հաւասար, ըստ մարդկութեան: Ով ով նա առաջօք ընտրելոյն դասուց մարգարէից, ընդ Հօր և ընդ Հոգւոյն, ըստ այնմ

իմա

խոնարհութիւն ոչ տայր, առաքելոց առ ձեզ, խոնարհութեան և մարգարէս ըստ ճշմարտութեան. նոյնպէս և սա, այսինքն կատարեալ մարդկութիւնն, միացմամբն ընդ Աստուածութեանն ոչ, քանզի և որդւոյն առաքէ զառաքեալս, և զաւետարանիչս, ըստ այնմ՝ ահա առաքեմ զձեզ իբրև զգառինս 'ի մէջ գայլոց։ Եւ զայլս բաշխումն զշնորհաւորս. գիրս շնորհեցաւ յոյժ կատարեալ մարդկութեանն Քրիստոսի, միացմամբ և միաւորութեամբ ընդ անուանն, քանզի և որդւոյն ոչ անձնաւորի խոնարհութեան վասն այսորիկ տայց խոնարհ էղէ, մինչև յոյժ որ կեցո զիս ըստ բանի քում։ Օ՜ի այնքան շնորհեալ է խոնարհութիւն, որ ոչ միայն զայսոսիկ, զորս բացատրեցաւ գործէ, այլ և զոլինչ ունի հայր. նմա շնորհէ, հակառակ և ներհակադար յառաջնոյն Ադամայ. զի որ զնա միայն, ընդ նմանութեան էր ըստեղծեալ, և ոչ միաւորութեամբ և միացմամբ ընդ նմա, հպարտութեամբ և ամբարտաւանութեամբ կորոյս։ Իսկ այժմ նորոյս Ադամայ, խոնարհութեամբն, միացաւ և միաւորեցաւ մարդկութեան, ընդ Աստուածութեան. և եղև կատարեալ մի, հաւասար, և համախառն համանգոյն, ըստ Գրիգորի Աստուածաբանին, վ՟ զի երկոքեանն մի, խառնելովն, Ա՟յ մարդանալոյն, և մարդոյ Աստուածանալոյն։ Եւ նորոյն Ադամայ շնորհեցաւ զանազան շնորհս հոգւոյն, և զայն կորոյս ամբարտաւանութիւն, և հպարտութիւն. իսկ նորոյս Ադամայ յաղագս կատարեալ խոնարհութեան, շնորհեցաւ, ոչ զանազան շնորհս հոգւոյն, այլ նոյն ինքն անձնաւորութիւն հոգւոյն. ըստ այնմ՝ թէ տեսանէի զհոգին զի իջանէր իբրև զաղաւնի, և հանգչէր 'ի վ՟ նր՟. և թէ լցցէ զնա հոգւով Ա՟յ. և թէ հանգիցէ 'ի վ՟ հոգի Ա՟յ։

Եւ ահա զայս ամ՟ ունէր հայր, ետ երկրորդին Ադամայ յաղագս անձնաւէլոյ խոնարհութեան, յորժամ ասէր ես հեզեմ և խոնարհ սրտիւ, և թէ ես եմ 'ի մէջ ձերում իբրև ըսպասաւոր մի. և թէ առեալ կոնք, և էարկ 'ի նա ջուր, և առեալ զենձակ մի ընդածու, և սկսաւ լուանուլ զոտս աշակերտացն, և սրբէր զենձակաւն զոր ընդա-

ծէ

ծեալն էր: Տեսանեմ արդ էօք, և զարմանամ, զի ինքն եբեր
կոնք, և ինքն էարկ ջուր, և ինքն ըմփածու դենձակ, և
ինքն լուայ, և ինքն սրբեր. և զայսօրին յեռանեալ գործ,
խոնարհութեն, որ զոմ ինքնին կատարեաց, և գործեաց.
և վասն այսորիկ ասաց, ես եմ 'ի միջի ձերում, իբրև պաշտօ-
նեայ մի: Ով թէպէտ այժմ ես գլուխ եկեղեցւոյ զնոյն
խորհուրդ, խոնարհութեն կատարեմ, այլ ոչ իսկապէս որպէս
նա, զի այլ բերող կոնքի, և այլ հեղող ջրոյն, և այլ սըր-
բող ոտին, և զայլս կատարիչ գործոյն. բայց նա որ կա-
տարեալն էր յամի, զոմ ինքեամբ կատարեաց Ա՟ծն բան,
կատարեալ մարդկութեն, վասն որոյ նա միայն առաւել
բարձրացաւ կատարեալ մարդկութեն, և շնորհեցաւ նմա,
զոր ինչ ունէրն հայր իսկապէս: Նոյնպէս շնորհելոյն,
որք նովին հոգւով ընան, և նովին շաւղօք շրջին, զի այն-
քան և նորա բարձրանան, մինչ զի և մարմնոյ և արեան նո՟ր
ճաշակմամբն, զոմ զ յառաջ ասացեալսն յինքեանս կրեն,
և լինին նմանս նմա, ըստ այնմ յորժամ նա յայտնեսցի նմանս
նմա լինելոց եմք, վասն այսորիկ պարտ է ամենեցուն, ուր 'ի
նա հայել, եթէ թագաւորէ, եթէ իշխան, եթէ մեծա-
տունն, և եթէ ռամիկ, 'ի թագաւորն թագաւորաց, և
յիշխանն իշխանաց, և 'ի մեծատունն մեծատանց, 'ի Տ՟ր
մեր Յ՟ս Ք՟ս, որ եռ զանձն իւր 'ի փրկանս յաղագս բազ-
մաց. քանզի ը՟ բնութեն, յորժամ ոք թեթևանայ, բարձ-
րացեալ վերանայ, զոր օրինակ աղաւնոյ, յորժամ ծանրա-
գոյն քար ինչ կապիցի յոտիցն, եթէ յօդս կցէ ելեալ իջա-
նէ, և խոնարհեալ յերկիր սատակի. և յերկրի տատանեալ,
ոչ թռչի. այսպէս եղև սատանայ, որ 'ի բարձանս շրջէր,
և ընդ սերովբէսն թռչէր, և յորժամ, հպարտութեն քարի-
կապեալ զոտս իւր, և զթև, նոյն ժամայն ծանրացեալ
իջ երկիր, և միայն կապեալ յերկրի, և այլ ևս չկարէ
թռչել յերկինս. և թէ արձակեսցէ, զծանրացեալ քարն
զայն, որ ընկէց զինքն յերկիր, թէուի թէ նոյն ժամայն,
թռուցեալ վերանայ դարձեալ բարձրացեալ, որպէս ասաց

Տ՟ն

մըն Մարալինոս, ցնա, եթէ կարէիր ունել զճշմարիտ զղջումն, հաստատէիր և թողութիւն։ Իսկ թէ առանձին այն կապեալ ծանրութեան, ընկեսցի 'ի ծով, առ ժամայն յատակս իջեալ, յեղձանի. այսպէս եղև և փարաւոն, զի կապեալ կապարաւ հպարտութեան, էջ 'ի ջուրս սաստիկս. ընդ այնմ առաքեցեր զհողմն քո, և ծածկեաց զնա, ընկղմեցան, և իջին որպէս կապար 'ի ջուրս սաստիկս։ Այլ երկակացն ընդդէմ, նախ Աբրահամ, որ այնքան թեթևացաւ 'ի հպարտութենէ, և յանձնարտաւանութենէ, մինչ զի հող և մոխիր զինքն անուանէր՝ և կոչէր, և այսպէս տարալուծեալ՝ վերացեալ բարձրացաւ, մինչ զի հայր ԱԶ մարմինոյ վերջին անուանեցաւ, և զօգ արքայութեան, և հանգստարան երանելեացն, որով խոնարհութիւն իբրև զաւանի թռուցեալ, 'ի բարձունս ընդ սերովբէսն յեղյեղէ զսրբասացութեն նուագ։ Այսպէս և երկրորդն որդին նո, որ այնքան խոնարհեցուցանէր զանձն, մինչ զի ոչ ինչ զինքըն վարկանէր, յերևելոյն, որ 'ի մորենւոջն, որքան նա կամէր բարձրացուցանել, սա զինքն խոնարհեցուցանէր, ուստի յայնպիսւոյն վիճմանէն, ծուխ խնկոյ անուշահոտութե բարձրացեալ դիզանայր, առաջի Այ, և հոտոտէր Տր 'ի հոտ անուշից։ Զի այս ևս ըստ բնութե, յորժամ խունկ արկեալ, 'ի հուր, բուրումն, տարածանի յամ 'ի վայրս, 'ի բարձունս, 'ի ստորինս, 'ի յաջ, և յահեակ, յառաջ, և յետոյսն, այսպէս և բուրումն, խոնարհութե սրտի սորա, ելանէր 'ի բարձունս, ուստի հոտոտիւր Տր Ած 'ի հոտ անուշից. և բորբոքէր զայն բազմագունի, խոսակցութե, զի ծուխ խոնարհութե առաւել տարածիցի և բարձրասցի, ուստի այնքան հաստատեցաւ, մինչ զի աղաղակեաց հեզէ ծառայն իմ Մովսէս, քան զամ մարդիկ, որքեն 'ի վր երկրի։ Տեսանեմ արդեօք թէ որքան բարձրացաւ, արձակեալ աղաւնիս այս, և է հաս 'ի ծայրս կամացն Այ կատարման, և կայն թեթևացեալ, 'ի ծովն կարմիր, ձագուքն իւրովք, որդւովքն իսրայելի։ Իսկ հաւ սորին թէ-

պէս

պէտ էր աղանի, ըստ բնութեան նորին ըստեղծեալ՝ սակայն այնքան մեծագոյն վիմաւ կապեալ էր մինչ զի, յորժամ կամիցաւ, ըստ ինչ, ծագովք իւրովք, ըստ ինչ թռչմամբ, անցանի ընդ ծովս կարմիր, նոյն ժամայն ծանրութեամբն իւրին 'ի խորս նորին, ըստ այնմ ծով ծածկեաց զնոսա, ընկալան յանդունդս խորոց իբրև զվէմս։ Այնպէս է տեսանել 'ի Դաւիթ, և 'ի սաւուղ, յորոց մինն այնքան ծանրացաւ, ամբարտաւանութեամբ, մինչ զի իբրև զնետ եմուտ 'ի սիրտ նոր պարերգութեամբ գովաբանութեան կանանց որ յաղագս, որդւոյն Յեսսեայ. ուստի ջանայր, բառնալ զնա, որոյ գըլուխն բարձեալ եղև զխորհեցեալն իւր, ըստ այնմ՝ զուբն զոր փորեաց, և պեղեաց, 'ի նոյն անկցի զոր և գործեաց։ Իսկ Դաւիթ յաղագս խոնարհութեան սրտի իւրոյ, և հեզութեան արձակեաց յինքենէ զծանրութի, հպարտութեան, և ամբարտաւանութեան, իբրև զաղաւնի սլացաւ 'ի բարձունս. որոյ աղօթքն իբրև զխունկ առաջի Այ ելանէր, և 'ի զհամբարձումն ձեռացն, իբրև զպատարագ ընդունելի, որով և համարձակապէս գոչէր, յիշեա տէր զԴաւիթ և զամ՝ հեզութիւն նր, և հակ սովին որդի նորին, որ ոչ խոնարհեցաւ 'ի հրամանս, նորին, Ածային, վս որոյ և ասացաւ պատառելով պատառեցից զթագաւորութիւն քո, որ եղև որդւոյն, վս ամբարտաւանութեան և հպարտութեան սըրտի նորին, որով պատառեցաւ թագաւորութիւն, 'ի տանէ Դաւթի, և մնաց երկուս գաւազանս յաղագս խոնարհութեան և հեզութեան սրտին Դաւթի, և 'ի պատիւ երեսաց նր։ Այնպէս և փայլուն է տեսանել, որք թեթևացան յամբարտաւանութենէ, և յախտից յայսցանէ, վերասլացան 'ի բարձունս, և որք ծանրացան նոքա, մնացին 'ի ստորև. վս այնորիկ սրբազանն առաքեալ գրէր առ Տիմոթէոս, մեծատանցդ որքեն յայսմ աշխարհի, պատուէր տուջիր մի հըպարտանալ, և մի յուսալ 'ի մեծութիւն մնոտի, այլ Ած, որ տայ մեզ առատապէս, 'ի վայելել զամ, զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան, առատս, սիրուն, հաղորդս

լինել, գանձել անձանց, զհիմն բարի, 'ի հանդերձեալսն, զի բուռն հարկանիցեն զճշմարիտ կենացն: Ո՜վ ով մեծութի աստի կենացս ըստուերքն, որք փութով անցանեն, և որք դառնան 'ի սին, նմանին անմնացորդն ապաւուց, որք առեալ զնկոյզս, և զայլ ինչ 'ի կերակրոց իւրեանց, թաքուցանեն 'ի մէջ հողոյ, ունելով նշան զամայս, և կամ ըմտուէր ինչ, այլ յորժամ միոյ ակամն թօթափելոյ անցանի ամսն, կամ ըստուերն, կորուսանէ զկերակուրն այսպէսևս որ յուսայ 'ի մեծութի սնոտի կենցաղոյս, եթէ թագաւորէ, և եթէ իշխան, և եթէ մեծատուն յուսալով 'ի սնոտիս, և թաքուցանեն 'ի հող մարմնոյն, որ փոքր անցեալ ոչ ևս գտանէ, ո՛չ մեծատունն որ 'ի դժոխս, ոչ ըզ մարմինն, և ոչ զգանձն, և զմեծութին յորս թաքոյց. զի աստ մարգարէն ասութք իմ ո՞ւր հոլանի անցին, և ահա ոչ էր, խնդրեցի, և ոչ գտաւ տեղի նր. քանզի ո՞ւր արդեօք իցեն այսքան թագաւորք, իշխանք, և մեծատունք, որք իբրև ըստուերք անցին, և իբրև զծուխ սպառեցան, որ և բնաւ տեղի նց ոչ գտանի, զի գերեզմանք նց, եղեն տունք նց, և անդ յարկք նց, և կարդասցեն անունք նց 'ի հողս իւրեանց. և ըստ յոբայ կատարեցին 'ի բարութն ըզ կեանս իւրեանց, և 'ի կէսն իջանեն 'ի դժոխս:

Ո՞ւր արդեօք խրոխտալի բռնութիւնք նց, և բուռն իշխանութիւնք, և վերամբարձ ամբարտաւանութիւնք. որ թէ ոք բացցէ զգերեզմանս գանձեալ մարմնոց նց, գտանէ և ոչ ինչ, և կամ գտանէ տիղմ՝ մահահոտ, և զազրալի, և կամ գտանէ զոսկերս, չորացեալս, և ցամաքեալս, որք փութապէս անցեալ թողին զմն, և ինքեանք 'ի հող դարձան, և յորդունս հանմկեցան, Որ ասաց սաղմոսերգոյն, զի ոչ թէ 'ի մեռանելն իւրում՝ առցէ ընդ իւր զմն՝ և ոչ թէ իջցէն փառք տան նր ընդ նմա. և ո՞ւր ասէն բացցէ զաչս իւր և ոչ ինչ գտցէ, յայնժամ ծանիցէն զբարի աստի կենացս ընդունայն լեալ, որ անցանելով հեշտացոյց. զի լաւագոյն պատասխանեաց Քս խաբեալ մեծատանն, որ ասաց

սաց 'ի սրտի իւրում, ո՛ւր ժողովեցից զարդիւնս իմ, զի ոչ գոյ տեղի, գիտեմ՝ զի՛նչ արարից, քակեցից զշտեմարանս իմ, և ևս մեծամեծս շինեցից, և ասացից ցանձն իմ, ունիս բազում բարութիւնս հանգիր, կեր, արբ, և ուրախ լեր: Ասաց ցնա Ած՝ անմիտ յայսմ գիշերի զհոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցերն ո՞ւմ լինիցի: Յաղագս այսորիկ ասաց տրն, մի՛ հոգայք վս վաղուեան, և մարգարէն ասաց, ընկեա 'ի տր զհոգս քո, և զլուխն առաքելոց ասաց զամ՝ հոգս ձեր ընկեցէք 'ի նա, զի նա է որ հոգայ վս ձե՛ր, քանզի ո՞ր որդի իցէ, որ ոչ հոգայցէ հայրն նր: Արդ՝ եթէ յուսով դնիցիք առ նա, ինքնին զամ՝ հոգայ, վս մե՛ր. ո՛չ ասաց տրն, հայեցարուք 'ի թռչունս երկնից, ոչ վարեն, և ոչ վաստակեն, այլ հայրն ձեր երկնաւոր, կերակրէ զնս և տայ կերակուր ձագուց ագռաւուց որք կարդան առ նայ. զի էգք նց յորժամ ծնանին, ըսպիտակ ծնանին, վս որոյ կարծիս առեալ հայրն և մայր, զուցէ օտարք իցեն, զի ոչ են իբրև զինքեանս սևաւ, և Ած կերակրէ զնս. և յետ երից աւուրց, դարձեալ զան և տեսանեն, սևացեալ և կերակրեն. արդ եթէ Ած զձագս ագռաւուց կերակրէ, որք անբանքեն, և ոչ պատկեր Այ, որչափ առաւել ևս զմեզ. որք պատկերեմք. քանզի ախտք ամբարտաւանութե 'ի մեծութենէ առաւել ծնանի. վս որոյ զխոտս զայս, միշտ պարտէ արտաքս խլել. քանզի ասաց տրն, վայ ձեզ մեծատանցդ, զի ընկալայք զմխիթարութի ձեր. քանզի դիւրինէ ասէ, մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան արքայութի Այ մտանել, ընդէ՞ր, զի մեծութի եղջիւրս, բարձրացուցեալ է, և վս այնորիկ ոչ կարէ մտանել. քանզի ոչ եթէ մեծութինէ չար, այլ ամբարտաւանութին. զի թէ սա ոչ իցէ ընդ նմա, ոչ կարէ լինել չար. քանզի Աբրահամ յոբ, և Դաւիթ, և այլք 'ի սրբոյն, կարի մեծատունք էին, այլ ոչ ինչ զծնաց 'ի նս չարն, և զի այնքան բարձրացան, մինչ զի արքայութին Այ զոգ Աբրահամու անուանեցաւ. և երա-

նե

Նեղին Պաւլի, այլ ըստ սրտի Տ.Յ, և Յոյժ արդար, զստեալ յամ՛ իրաց չարեաց, ահա սոքա գլխաւորք մեծատանց, և թագաւորաց, և իշխանաց, բայց անքան խոնարհք մինչ զի հող և մոխիր զինքեանս վարկանէին, Ըստ այնմ ես հող եմ և մոխիր. և միւսն ասէր մինչ հող խոստովան առնիցի առ քեզ. և թէ իբրև զմնացուն համարեցայ առաջի քո, ահա որքան սոքա մեծացան, և բարձրացան, այնքան և խոնարհեցան, և որքան խոնարհեցան, այնքան և հաճոյացան այ, ուրում ոչ մեծութին. այլ ամբարտաւանութին եղև առիթ կորստեան, որք նոյնաւ վարեցան. քանզի գլուխ մեծատանց, թագաւորաց, և իշխանաց, նծէ, որք և վկայեացն և ասաց որ մեծատուններ, վա՛ մեր աղքատացն, և թէ մեծութենն նա ոչ կայ չափ, և թէ մեծ է տր և օրհնեալ է յոյժ, և թէ թագաւորն թագաւորաց, և տրն տէրանց, որ միայն ունի զանմահութի բնակեալն ՚ի լոյս անմատոյց, և թէ տր թագաւոր յաւիտեանս յաւիտենից, և այլն. և թէ օրհնեցէք նմ՛ արարածք. զարարիչն արարածոց, զթագաւորն թագաւորաց, զտրն տէրանց. և զայլս որ բաջայայտէ, ոչէ չար այ այլ նմի բարութի ուրումն յայտնի եղև, ոչ մեծութին այլ ախտ հպարտութն և ամբարտաւանութենն է չարագոյն չար, որ ոչ ունի հաղորդութի ընդ այ, և ունայնացեալ սրձալի յոյսմ՛ կենցաղոյս, ըստ երանելւոյն զմեծատունք արծակեալց ունայն. և ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց, և քակեաց զհզօրս յաթոռոց, և թէ տր խոնարհեցուցէ զամբարտաւանս, մինչև յերկիր. քանզի բնութենէ որ ընդ դիմանոյ ստահակութենից, և հզօրագունից վնասից ոչ կորնին, և որք խոնարհին հաստատին: Եւ որ ընդդիմանայ հարմանի կռանի՝ փշրփշրանի խորտակի, ոչ քար, և որ ոչն ընդդիմանայ և ոչ ՚ի մէջ մտանէ, զոր օրինակ ասր որ տայ տեղի, ըստ այնմ՛ հողմ՛ մեծագին, որ զերկինս քակեցէ, և զվէմս խորտակիցէ առաջի տն, քանզի մեծատունք, որք կարծրացեալքն ամբարտաւանութբ, յորժամ՛ յարիցէ հողմ՛ բարկութե ՚ի տէ. փշփշանի փշրին, վամ նորին ասաց մար-

գա

զարէն, խորտակեցեր զգլուխս մարդկան ամբարտաւանից, մինչև յանդունդս ծովու ընկղմեցան, և թէ մեղք բերանոյ նոցա, և բանք շրթանց նոցա, ընկալցին նոքա յամբարտաւանութեան իւրեանց. քանզի ամբարտաւանութիւնք մեծատանց, որք ամբարտաւանինն և խրոխտան, այնքան երկիծուցանեն զաղքատս, և զտնանկս մինչ զի այրեալ խորովեն. Եւ այնմ յամբարտաւանել ամբարշտին, այրի աղքատն այլ յորժամ խլթանաւմաշուն ծանրից. եղանէ նմ հուր՛, որ 'ի նմանէ. և ինքն դառնայ յոչինչ, 'ի պայթնուլն և կործանի տեղին նր, ըստ Յակոբայ. այսուհետև մեծատունք լացէք, և ողբացէք 'ի վր թշուառութեանց որ գալոց է 'ի վր ձեր. զի մեծութի ձեր ոչինչ է, հանդերձք ձեր կերակուր ցեցոյ, արծաթ ձեր և ոսկի ժանգահոր, և ժանգ նց լինիցի ձեզ այն 'ի վկայութի, և կերիցէ զմարմինս ձեր, իբրև զհուր զանձեցեալք յաւուրցն յետնոց. փափկացայք 'ի վր երկրի. և զբօսայք, սնուցէք զսիրտս ձեր, իբրև աւուր ըսպանման:
Եւ Յոբ ասէ, կատարեցին 'ի բարութեն զկեանս իւրեանց, և 'ի կէտն իջանէին 'ի դժոխս, ընդէր զի հպարտութե և ամբարտաւանութե ասիցէ յոր, զճանապարհս քո ճանաչել ոչ կամիմ. և վասն այնորիկ զինչ նմա պատասխանի. ասէ ճրագ ամբարշտաց շիջուցի, և եկեսցէ 'ի վր նց կործանումն, երկունք կալցի զնս, 'ի բարկութենէ, և եղիցին իբրև զյարդ առաջի հողմոյ, և կամ իբրև զփոշի. զոր տարաւ մրրիկ, ըսպառիցին ինչք զորդիս նր, տեսցեն աչք նորա ըսպասումն իւր, և 'ի տէ մի ապրիցի, փոր նր լի է ճարպով, ուղեղ նորա զճեսցի, և վախճանիցի 'ի դառնութի անձին. ոչ ինչ կերեալ 'ի բարութենէ, և դարձեալ ասէ մեծատունն նչ եանց, և ոչ յաւելցի յառնել. զաչս իւր եբաց. և ոչ ևս իցէ, պատահեսցեն նմա իբր զջուր ցաւոք գիշերի՝ ծածկեաց զնա մութն. առցէ զնա խորշակ և գնասցէ, և հոսեսցէ զնա, 'ի տեղւոջէ իւրմէ:

Եւ վր այսորիկ զգուշանալ պարտ է, թագաւորաց, իշխանաց, և մեծատանց, զի մի հպարտասցեալ, 'ի պատիւ. և 'ի

փա

փարթամութեանս յիշխանութեանս յոսկի և յարծաթս իւր հայեցի, և զարարիչն իւր մոռանայցէ։ Եւ միշտ և հանապազ զանցեալ մեծութիւնս հայելով. որք իբրև զգէտ հոսանուտ, անցեալ գնացին, 'ի շարաւս և 'ի թարախս համակեցան, և որդունք զնոյն մաշեցին, ո՞ւրեն փառք խրախուգոյն թագաւորաց, և ո՞ւր զանձք ոսկւոյ և արծաթոյ ն̃ց. ո՞ւր երգեցիկք, և երաժիշտք ն̃ց, ո՞ւր ամենալիր սեղանք ն̃ց, ուր ծառայից ամենակատար հրամանատարութիւնք ն̃ց. ո՞ւր նաժշտաց, և աղախնեաց հպատակութիւնք ն̃ց, ո՞ւր անուշահամ խորտիկք և ոսկէ մատոյց բաժակաւ գինին ն̃ր ո՞ւր երգոյց և փողոց հնչմունք որ յընթրիս, և 'ի ձայն նոցա, ոչ ապաքէն նոյն 'ի հող դադարեցաւ, և 'ի գերեզմանի ծածկեցաւ, և ո՞րպէս ծուխ 'ի հողմոյ, ցնդեալ ապականեցաւ. յայնժամ ծանիցեն զբարիս սուտ 'ի կենացս ընդունայն լեալ. որ անցանելով հեշտացուցանէր։ Իբր ընկալանիցին զասացեալսն, խոստմանցն բարբառել, զի՞նչ շահ եղև մեզ հըպարտութիւն, և զի՞նչ մեծութիւն համբարտաւանութեանն իւրէ, մեզ նպաստաւոր, և իբրև զնաւ սահեալ 'ի վ̃ր ջրոց կատակեալ, զորոյ իբրև անցանիցէ, ոչ գոյ զհետսն գտանել և ոչ զշաւիղս գնացից ն̃ր 'ի մէջ ալեաց և կամ իբրև զհաւու թռուցելոյ յօդս. որոյ ոչ գտանի, նշմարանք գնացից, բախելով մարկացն, պատառեալ զհողմն թեթևս, և հեծեալ բռնութեամբ ընդ ոլորտս մտեալ, յածել թևոյն յառաջադէմ պանայ, և յետ այնորիկ ոչ գտանի, նշանակ բանալոյ նորա։ Կամ իբրև 'ի նետէ ձգեցելոյ, 'ի նպատակ, կտրեալ զօդն փափաղէլի, յինքն կարկատեալ, առ 'ի չգիտելոյ զանցս ն̃ր. նոյնպէս և մեք եղեալք պակասեցաք, և առաքինութեան զնշանակ ոչ կարացաք ցուցանել. բայց 'ի չարիս մեր մաշեցաք։ Զայսպիսիս ասասցեն 'ի դժոխս, այնոքիկ ոյք մեղան. զի յոյս ամբարշտի, իբրև զփոշի յառուցեալ 'ի հողմոյ, և իբրև զեղեամն 'ի մրրկէ հալածեալ մանր, և իբրև զծուխ մաշեալ 'ի հողմոյ, կամ իբրև զյիշատակ իջաւորի միոյ աւուր գնացելոյ։ Տեսանէք ո՞վ ծաղկապանձք

պանծք, թէ յոր թշուառութիւն հասեալ առաջին, և բարբառեցին զայսոսիկ, որք ոչինչ օգտեցան, վասն որոյ աղաչեմ, զայս ամ՛ յիշելով և մտածելով. բարձէք ՚ի ձէնջ զզարշելի, ամբարտաւանութիւն և հպարտութիւն: Եւ ոչ այսու միայն, այլ և ՚ի քեզ հայելով, ըստ առաքելութեան հայեաց ՚ի քեզ, գուցէ մոռանայցես զի՞ր ամ քո: Նախ հայեաց յամենազարշելի, ըմբիշն քո որ յաղտեղի և յամենազզուելի սերմանէ, և ծայրագոյն յաղտեղի, յարենէ դաշտանեանէ գոյացար յորոյ մի ՚ի սոցանէ հանդերձի ուրուք անկցի, ծայրագոյն գարշեցուցանէ: Եւ ՚ի ներքոյս քո հայեաց և ՚ի մէջդ, որ գարշելի աղտառաւես լցեալ, իբրև զքսակ ինչ աղբալից, միշտ ընդ քեզ կրելով զժահահոտութիւդ: Եւ յամ՛ ըզգայարանացդ արտաքս ելանեն, խոնարհեցուցանողք աչացդ, ականջացդ, ըռնգացդ հոտոտելեացդ, բերանոյդ, և մանաւանդ յորովայնէդ, զորս ոչէ յիշելի, և այլականս յանդամոցդ, զհամունսն զորս ոչէ յիշելի, և բոլոր մարմնոյդ, թէ այդքան գարշեցուցիչս, աղտեղութիւ արտաքս զեղանի, ը մարդարէին, խոնարհութիւն քո ՚ի միջի քում: Եւ յառաջայսա հայեաց՝ մտացս աչօք, ով թագաւոր, իշխան, և մեծատուն, եթէ զինչ լինելոց ես, զի յելանել հոգւոյդ խկոյն ապականիս նեխիս. և որդունք եռան ՚ի քեզ. զարիւնդ, և թարախ, և դարշահոտութիւնքդ զգացցես ՚ի սոր անդր փախուցանեն, զհայր քո և զմայր, զկին քո ցանկալի, և զորդիս քո սիրելի, զազգականսդ քո բաղձալի, և զդստերսդ քո ըղձալի. և այսպէս ամ՛ հեռաւորք և մերձաւորք, զմեծամեծս և զփոքունս, սարսռալով զազրացուցանես: Ուր գնաց ասա ինձ ով պանծալի, ամբարտաւանութիւդ զյափշտակութիւդ, ՚զերկրեղոյն զձայնդ, զկերակրումդ, ըզ զրկումդ, պախպալով Ջեմըդ, ահաւոր բարբառդ, բարձ՚րանայն խօսսդ, զարհուրեցուցիչ զդէմդ, բարձրաբերձ պարանոցդ, զոսկեխեծյլ, և արծաթաշողող անկողինս զպանծապանծ, զհանդրադարձ յեռեալ մատանեօք, ակամբք մեծագունօք աստղատարս զմատունսդ, որ ՚ի շարժելն,

ժեղն, շողշողեցուցանէիր և փայլեցուցանէիր, զտեսողսն զարմացուցանելով: Ո՜վ որ յայնժամ, ՚ի վեր փառաւորեցուցեր, այժմ զաղքատութեանդ զամենեսեան զորմացուցանես: Ո՛ւր գնաց երանգորակ, պճնազարդ պալարակապ ողապարին ոսկիապաճոյճ, խնկերագոյն, հողմաթափ երկնրոր ոսկեպաճոյճ պատուաճանդ, կամարակապ ոսկեթել արծաթաշար, շարունակագործ գօտիդ. անուշահոտ ծանելիսդ, ցանկալի փափկութիդ: Ուր այժմ եռան որդունքն, ՚ի ժահահոտ փորադ, և ուտեն զցանկալին, և ընպխաղկափայլ, մարմինդ, որ և ոչ մի ոչ հանդուրժիր: Ո՜վ արդէ կարկառեալ սնրերասարաս լեզուդ, որ զմեծամեծս, և զփոքունս իբրև զոճի մահացուցանէիր, ընդ այնմ սրեցին զլեզուս խորեանց ոճ զոճի. ուրէ փայլուններն զուշմդ, որ աստ և անդ շրջեցուցանէիր զաչսդ և իբրև զքարբի ըստղանանէիր, և երգեծուցանէիր զայրն, և զաղքատն, և զանանկն: Ուր սարսեցուցիչ զայնսդ, յորս հայէիր, հաշէիր և մաշէիր: Ուրէ հզօր բազուկդ, և վերուցուցիչ ձեռադ, յորս տարածանէիր խողխողէիր: Նու զի՞նչ են ասացից. ուրէ վարդաւոկդ, և ծաղկազայն դէմս անձինդ, զի արդ թառամեցար, դեղնեցար և զարհուրատեսակեցար: Ուր կորեաւ և դադարեցաւ վարդաթիթթ փայլչութի գեղոյ քո. վ̄ այսորիկ ասաց Եսայ մարգարէն, գոչեա, և նա ասէ զի՞նչ, և ասէ գոչեա զի ամ̄ փառք մարդոյ, իբրև ծաղիկ խոտոյ, ցամաքեցաւ խոտն, և թօթափեցաւ ծաղիկն նր̄: Նու ժողովողն ասէ, յիշեա զարարիչն քո յաւուր մանկութեն քո, մինչև հասեալ իցեն քեզ աւուրք չարութեն որք մնջի, և ժամանեցին ամք յորս ասիցես ոչէն կամք իմ ՚ի դոսա, մինչև խաւարեալ իցէ արեգակն և լուսինն, որէ երկադիմանակ աչքն. զի սէնէ իբրև արեգակն, և յաճեալն իբրև զլուսին, և աստեղք ամ̄ անդամքն, որք նորքս լուսաւորին, ընդ այնմ եթէ ամ̄ն քո աստ ամ̄ մարմինդ լուսաւոր եղիցի: Ո՜վ ով յերկինս ամ̄ աստեղք յարեգակնէն լուսաւորին, այսպէս ամ̄ անդամք

դանք մարմնոյն անկանիք: Եւ դարձցին ամպք զկնի անձրեւաց, այսինքն հոգին բանական, զկնի հրեշտակին, յաւուր յորում շարժեսցին պահապանք տանն, տունն է բոլորն ամբողջական, և պահապանք տանելեաց զգայութիւնքն, և միտքն, և խորհուրդքն, կամքն, և իմացումն, և այլքն ևս, շարժին զհետ անձրևին, և ոմանք միան ընդ մարմնոյն, և ոմանք գնան ընդ հոգւոյն: Զի որք զօրութիւնքնեն, որպէս տան զգայութեանց տեղիքն, ապականին ընդ ապականելն մարմնոյն: Իսկ որք ներգործութիւննեն ոգւ իմացումն, և զխոհութիւնք նոքօք գնան ընդ հոգւոյն բանականի, զկնի հրեշտակին, և թխուրիցին որք զօրութեանց, այսինքն ցամաքատեսակն, և ցանկականն, որք կարգեալ քեն իբրև զգինուորս, ի պահպանութեան մարդոյ. ընդ այնմ ունին ընդդէմ զինուորս. և այսոքիկ թխուրին ի մահ մարդոյն: Եւ դատարկասցին աղօրիքն ասէ, զի նուազեցին, աղօրիքեն ատամունք մարդոյն, որով աղայ զճաշակելիսն. այսոքիկ դատարկանան, և ոչ ևս գործեն զգործս իւրեանց, զի նուազեցան ի մէջն, և խաւարիցին որք տեսանեն ընդ ծակս, այսինքն երկոքեան աչքն խաւարին, որք տեսանեն ընդ ծակս, ի նուազել կերակրոյն: Եւ փակեսցին զդրրունս ի հրապարակս, այսինքն ևս դրունք զգայութեց, որք հրապարակեսք էին, յորժամ ձայն աղօրոյն պակասեցին, դրունքն այնոքիկ փակին, զի արտաքին հինգ զգայութիւնքն, են իբրև դէտք, որք զխտեն, և ազդասանեն ներքնոյն, և յորժամ ձայն աղօրոյն պակասի, ինքեանք փակին, որք հրապարակս էին, այսինքն արտաքինքն և ներքինքն. խափանին ընդ փակել դրանցն, և յարիցեն ի ձայն հաւուն, հաւէ հրեշտակ մարդոյ ոգւ ի ձայն հաւուն, ամենեքեան թօթափին ի քնոյն, և ընթանայ իւրաքանչիւր ի գործս իւր, զի մերձեալ է յելս արեգական, այսպէս ևս մարդ ի ձայն հրեշտակին, ընթանայ իւրաքանչիւր զկնի գործոյ իւրոյ, և մարմինն ի հող, որէ գործ իւր ուստի ստեղծաւ. և հոգին ի կայանս իւր: Եւ այնժամ ասէ

նկուն

նկուն եղիցին դստերք երգոց, այսինքն են զգայարանքն, որք երգիչք էին ամենայնական բոլորին։ Եւ ՚ի բարձանց տեսցեն, այսինքն յորժամ վերասցի բնական հոգին, տեսցէ զամ՝ զգործս իւր, զոր ինչ և գործեաց ՚ի կենօս իւր. և յա-յնժամ՝ ապշեսցի ՚ի կնաւն ՚ի ճանապարհն յայն, որ ոչ է եր-բեք տեսեալ ու անդառնալին է, մեղաւոր զարհուրի, և արդարն զուարճասցի։ Եւ ծաղկեսցի ասէ նշենին, զի որք իբրև զծառս նշոյ ծաղկեսցին, ըստ այնմ արդարքն, որ զա-րմանելի ծաղկեսցին։ Եւ թանձրասցի ասէ մարախն, զի ՚ի ճանապարհին յայնմիկ ապշութեն մեղաւորաց հոգւոց հա-սանին այսքան պնդիք, իբրև զմարախ։ Եւ տարածեսցի կա-պարն. այսինքն մարմինն տարածեսցի, և բաժանեսցի յիւ-րաքանչիւր նիւթս, ուստի գոյացեալն է։ Զի գնաց ասէ մարդ ՚ի տուն իւր յաւիտենից, այսինքն մարմինն ՚ի հող, և ՚ի գերեզմանս, ըստ այնմ՝ գերեզմանք տունք նոցա եղիցին յաւիտեան, և հոգին ՚ի տեղի իւր, յոր պատրաստեալ է յԱծ։ Եւ շուրջ եղեն ՚ի հրապարակս կոծողք, և յոր-ժամ՝ այսպիսի քակումն լինիցի, յայնժամ՝ կոծողքն շուր-ժեսցին, այսինքն են՝ սիրելիք ՚ի հրապարակս. մինչև կործանեալ իցէ լար արծաթոյն, և խորտակեալ մանեակ ոսկւոյն, և մանրեալ սափորն յաղբիւրն, և ընկրկեալ ա-նիւն ՚ի գուբն, այսորիկ մարմնոյն զօրութիւք, նախկին երկեակքն հոգւոյն, որ է իբրև զլար արծաթոյ, և մա-նեակ ոսկւոյ հոգին։ Իսկ սափորն և անիւն, որ յայլմէ շարժի, է մարմինն որ ՚ի հոգւոյն շարժի. սափորս այս ման-րի, ՚ի մէջ հողոյն, որ է իբրև աղբիւր, և դառնայ յոչինչ. զի յաղբիւրէ գոյացեալ, այսինքն ՚ի հողոյ, և դառնայ դար-ձեալ հող. նոյնպէս և անիւն, ընկրկեսցի ՚ի գուբն, այս-ինքն մարմինն ՚ի հող գերեզմանին. զի գուբ է գերեզմանն, և անիւ մարմինն. որ հոգւով բանականաւ շարժի, ուր ա-նիւ. ուր և ասէ հետագոյն, դարձցի հողն յերկիր, ուր և էրն, և հոգին դարձցի առ Ած որ ետ զնա։ Արդ՝ վն այ-սորիկ այսպէս երկարագոյնս, բարբառեաց Ածայինն Սո-

զոմն, զի ինքն փոքր առեալ է, կամի և փորձանաւորացս օգնական լինել, և յաղագս այսորիկ զգուշացուցանէ, զի մի յաղթիցուք, զի իբրև զծաղիկս փառք աշխարհիս այսորիկ, որս ժամանակ մի պայծառապէս երևեալ, և ապա ապականեալ, ոչ և ասի, թէ սա երբեմն առեալ սերմն ծաղկին այնորիկ, որ ասի նանիր, և յառաւօտուն պահու սերմանեաց, որ մինչև յերրորդ ժամու աւուրն, աճեաց, և ՚ի հասարակիլ աւուրն պայծառապէս ծաղիկ արձակեցաւ: Իսկ յինն երրորդ ժամուն թառամեցաւ, և յերեկոյին անկեալ կործանեցաւ. վ՟ն այնորիկ ասաց հայրն իւր, թէ մարդ նմանրոյ նմանեաց: Եւ դարձեալ ասաց, մարդոյ ոչ խոտոյ են աւուրքն իւր, և ոչ զծաղկի վայրի, այնպէս ծաղկի, շնչէ ՚ի նմա հողմ՝ ոչէ և ոչ ևս երևի տեղի նր: Եւ Եսայի ասէ, և կոխան լիցի պսակն հպարտութե, և եղիցի ծաղիկն յուսոյ թօթափեալ, ՚ի փառաց անտի, և իբրև զվաղահասուկն թզոյ, զոր տեսեալ ուրուք, մինչչև ՚ի ձեռն առեալ կամիցի կլանել: Եւ Յակոբոս ասէ, պարծեսցի եղբայր խոնարհ ՚ի բարձրութի իւր, և որ մեծատունն իցէ ՚ի խոնարհութի իւր. քանզի իբրև զծաղիկ խոտոյ անցցէ, զի ծագեաց արև հանդերձ խորշակաւ, և ցամաքեցոյց զխոտն, և թօթափեցաւ ծաղիկն նր, և կորեաւ վայելչութի յերեսաց նր. նոյնպէս և մեծատունն, հանդերձ շահիւքն իւրովք թարշամիցի: Եւ երանելին Պետրոս ասէ, քանզի ամ՟ մարմին խոտ է, և ամ՟ փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ, խոտն ցամաքեցաւ, և ծաղիկն թօթափեցաւ: Եւ արդ՝ ով թագաւորք, իշխանք և մեծատունք, զայսոսիկ, լուարուք և զարհուրեցարուք աղաչեմ, մի յուսայք ՚ի մեծութի անտի, և նովաւ ամբարտաւանիցիք, այլ զայս ամ՟ լսելով, և ՚ի միտ ածելով զարհուրեցարուք, և խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Ա՟յ, և զի ամ՟ բարձրութի, խոնարհութիւն է. վ՟ն այնորիկ պարտ է, նախ խոնարհութիւն և ապա բարձրութի ըստանալ: Ապա թէ հպարտացեալ ամբարտաւանութբ, փայփայակին լինելոց անկումին

մէնոց։ Ո՜վ այսորիկ զեղ մարդկային փրկչմանն, զայսոսիկ զօրս քաջալերեցաւ ցուցին, թէ ո՛վ մարդ հայեաց ՚ի քեզ, զի մի յաղթեցեալ լուծցիս, ՚ի մեղս և ՚ի ծաղկընկէց, փառաց կենցաղոյս, որ անցուցանելով հեշտացուցանէ. վա՜յ այնորիկ ասեն Ծաղունք, որով հպարտանա և ամբարտաւանին, վա՜յ էր փքանաս ո՛վ մեռեալ մարդ, ո՞ր ապագաւ ապաշաւես զքեզ, ո՛վ գարշահոտ շարաւ. ահա իշխան քո Ծ խոնարհ, և դու ամբարտաւան։ Եւ մանրաքինին անուշութիւն ուղղեա զքեզ, զի մի երբեք հարցես ըզ քաղի զոան քո. և ոչ ուսոյ եկեալէ մարմին քո, և զամնթի հար, թէ որով լրեալես. և յագուոց հան թէ յո՞ երթաս, և յորս գնխս. և դողա՜յ, զի վաղձաննոյ մահէ հայր քո, մայր և քոյր քո՝ երր։ քանզի խմասութեղայ թագաւորն Աղէքսանդրոս, յորժամ հայեցեալ եսես, զմեծափայելուչ փառան իւր, որ զնամ զթագաւորութիւս գրաւեաց, իբրև հիւանդացաւ, հայեցեալ եսես զի ոչ ինչ օգուտ քերէն նմ՝ փառք թագաւորութեան նո՛ հրամայեաց ամխաւ կըտաւ մի բառնալ ՚ի վե՛ ձողոյ, և շրջեցուցանել ընդ մէջ քաղաքին, և քարոզ կարդալ, թէ ոչ ինչ տանէ Աղեքսանդրոս, յուռ... յայտմանէ. Եւ թուի թէ զայն ես ոչ տան, այլ վա՜ զի յորժ զարհուրելի լինի անսողըմն, և վա՜ այնորիկ ամխաւ տան. այնու պատանեին, զի մի ահ ընկէց լեցի անսողըմն։ Արդ՝ ո՛վ մեծամեծք, իշխանք և թագաւորք, եթէ այսպէս իցէ կատարումն. ծաղկընկէց կենացդ, ապա վա՛ էր ամբարտաւանեալք. յափշտակէք զունայն և խոնարհացեալ հպարտութիւն զրկէք զաղքատն. տուն առ տուն, և ագարակ առ ագարակ մերձեցուցանելով. քանզի վա՜յ ասէ մարգարէն յանձանց նոցա, վայ այնոսիկ որ յարեն զտուն ՚ի տուն, և ագարակ առ ագարակ մերձեցուցանելով, զի զընկերին հանիցեն, մի թէ միայն բնակեցուցիցէք յերկիր, և ՚ոց ինքնին մարգարէն տայ պատասխանի, նա ասանիկ ազդեցոյ յականջս նոն զօրութեանց. զի թէ եղիցին տունք բազումք, սակայն յաւէր դարձցին, և եթէ մեծամեծք և

գե

գեղեցիկք իցեն ոչոք իցէ որ բնակիցէ 'ի նմ, և մին սակ
Թողեալ լիցին ձեզ տուն աւերակ, ոչ միայն զտուն, այլ և
զինչս յափշտակելով, և զորբ այրիս զրկելով, անդ է գործ այս,
և այգեգործացն, սերմանողացն, և հնձողացն, ուր սակ յա-
կոբոս, աղաղակին վարձ մշակացն առ ձեզէն, զրկեալն
'ի ձէնջ աղաղակէ, և բողոք հնձողացն հասանէ յականջս տ̄ն
զօրութեանց: Եւ զարմանալ սակ, շնացողք, չգիտէք զի սէր
աշխարհիս այսորիկ թշնամութիւն է. առ Ա̄ծ, զի որ սիրէ
զաշխարհ թշնամի առնէ զանձն իւր Ա̄յ: Եւ Յովհաննէս
ասէ մի սիրել զաշխարհ և մի որ ինչ յաշխարհի է. եթէ
ոք սիրէ աշխարհ, ոչէ 'ի նմա սէր Հօր, զի ա̄մ որ ինչ աշխա-
րհի է, ցանկութիւն մարմնոյ, և ցանկութիւն աչաց և ամ-
բարտաւանութիւն աստի կենացս որ ոչէ առ 'ի Հօրէ, այլ
յաշխարհէ աստի է, աշխարհս անցանէ՝ և ցանկութիւն, իսկ
որ առնէ զկամս Ա̄յ, մնայ յաւիտեան: Այլ վ̄ն այսպի-
սեացս ինքն յառնէ 'ի պատ լաւագունին և գոյացուցին
յանի. ըստ սաղմոսին, վ̄ն տառապանաց աղքատին, և հե-
ծութե անանկին, այժմ յարեայց ասէ Տ̄ր, եդից զփրկու-
թի իմ, և համարձակեցայց 'ի նմ: Տեսանես ով թագաւոր
իշխան, և մեծատուն, թէ ո̄ր սորա զրկումն յափշտա-
կումն, զոքայսք, և զկէին նր զեղարէլ, որք յափշտակեցին
զայգին Նաբովթայ, յեզրայելացւոյ, ինքն սրայսպ իւրե-
ցաւ 'ի պատերազմին, և լիզեցին խոզք և շունք զարիւն
նր, և բոզք լուացան յարեանն. և կին նր, և եօթանա-
սուն որդիք նր, ըսպանան յաւուր միում: Իսկ յեզաբել
կին նր, արկաւ 'ի պատուհանէն 'ի վայր, և յայտեցաւ
յարենէ նր զորմովն, և կախեցին զնա առ աթուր, և իւ-
րև չոգան թաղել զնա, և ոչ ինչ գտին 'ի նմանէ բայց ըզ
գագաթն, և զոտսն և զթաթս ձեռացն, ըստ ասացն Եղի-
այ, 'ի վիճակին իզրայէլի, կերիցեն շունք զմարմին յեզա-
բելի, և եղիցին դին յեզաբելայ, որպէս զաղբ 'ի վ̄ր երե-
սաց անդաստանի 'ի վիճակին: Արդ՝ այսք կատարումն զրկո-
ղաց, ինքն սրով անկանի, և որդիքն սրով մաշին, և կերա-
կուր

կուր լինելին շանց, և խոզից, 'ի կենդանութեան այսպիսի օտա-րելի, և դառն կենօք ելեալք, և համբերձեալն զգեհեանն ժառանգեալ· զի՞նչ շահ եղև· վ՟ս այսորիկ առ որս ան-կեալ, աղաչեմ զձեզ ո՛վ թագաւորք, իշխանք, և մեծա-տունք, յիշեցէք զի՛ս ձեր, 'ի հոգւոյս արտմութեան զի ոչ ունիմք քաղաք որ աստէն մնայցէ իսկ, այլ զհետինն խնդ-րեմք, ըստ առաքելոյն, վ՟ս որոյ և մարգարէն ասէ, երա-նեալ է որ յիշէ եդ 'ի մահ խորհուրդ, 'ի հոգւոյս արտմութեան, 'ի տեղւոջ յորում ուխտեալ: Արդ՝ այսուհետ յայտնի եղև, թէ ո՛վ այսպիսիք պտկանքեն չարեաց· ո՛վ լի դառնու-թեամբ, և թունօք մահաբերաւ: Իսկ ճշմարտութիւն կենաց հաց-ին, է քաղցր, և քաղցրացուցիչ· ո՛վ ասացին, ճաշակեցէք զի քաղցր է· ապա զի արդ կարացէ, որ դառնութեամբ ա-սա իսկ լցեալ և թունօք, ճաշակել զքաղցրութեան որոյն, զի մինչ դառնացուցիչ, իսկ միւսն քաղցրացուցիչ· և երկեակքն հակք և ներհակք, և միաբանութիւն անկարե-լի, և հաղորդութիւն անհնարին· ուրեմն պարտ այնոցիկ որք ճաշակել կամիցին զքաղցր ո՛րս զայս: Նախ արտաքսա-նել հակ և ներհակս կայս, որ է դառնագոյն զղուխ օձին, և թիւնօք լցեալ մահաբերին, և ապա մերձիլ 'ի քաղցրու-թեան մարմնոյ և արեան կենարարին, և հաղորդիլ 'ի կենաց նորին· քանզի սա կենացէ պտուղ, և նա մահու, և բնու-թիւ զի ո՛վ կենդանի, ցանկալ կենաց, և ոչ մահու· կեց-չութեւ, և ոչ մահացուցչութեն· վ՟ս որոյ ո՛ւնէն ցանկան, յարատեւութեն, և ըստ Սողոմոնի, եթէ տեսանիցեն զինքեանս նուաստ ինչ, ո՛վ կերպիւ խնդրեն զկազդու-րութիւն· արդ եթէ այլ կենդանիքն այսպէս, ապա որքան բանականն անկ և պատշաճ, և մանաւանդ թէ հոգևորա-գոյն կենաց փափագումն, վ՟ս այնորիկ մարգարէն, ողբեր-գական ձայնիւ, գոչէր առ ո՛ր ասելով, մի հաներ զիս 'ի կէս աւուրց իմոց· քանզի կէսն է համբերձեալն ընդ կենաց, որ է ընդ Այ, և կէս կեանս այս ի՟ աշխարհենկիս այսորիկ· վ՟ս որոյ յաղագս սորա լայր, թէ վայ ինձ, զի ընդ երկար եղև

եղև պանդուխտ իմ, 'ի բնակելն իմ 'ի վրանս Կեդարու։ Յիս դարձեալ կողկողաբար ասէր, Տէր հան 'ի բանդէ զանձն իմ; իսկ յաղագս նորա ասէր, մի հաներ զիս 'ի կէս աւուրց իմոց, ընդէր զի բնաւ լին կեանքէ, անփոփոխական, որ ոչ երբէք անցանի, վ՟ այնորիկ հաղորդութիւն այս կենդանարար, շնորհեցաւ մարդկայինս բնութեան, զի նմա հասցուք, և ընդ նմա միայնոյ միասցուք, որ ոչ հասցեն առ մեզ չարքն, և տանջանք մի մերձեսցին 'ի յարկս մեր. քանզի ինքն ճշմարտութիւն ասաց որ անշուշտ է, թէ ես կենդանի եմ՝ վ՟ հօր, և որ ուտէն զիս, և նա կեցցէ վ՟ իմ, և թէ այսէ հացն, որ յերկնից իջեալէ, և կեանս տայ աշխարհի. այսու յայտէ թէ ուրում՝ մեռեալէ աշխարհս այս, և որք կան 'ի նմա. և վ՟ այնորիկ տուաւ ճաշակս զայս, զի յայսմանէ փոխիցուք յայլ. յաղագս այսորիկ ասաց Տէրն, յետ ճաշակման այսմ՝ խորհրդոյ, որքապան աշակերտացն, արիք երթիցուք աստի, և վ՟ սորա մաղթէր և երջանիկն, մի՝ հաներ զիս 'ի կէս աւուրց իմոց, Տէր տանելոյն ես զիս ընդ քեզ, ճաշակմամբ կենարարիդ, և հաղորդմամբ անմահականիդ, վ՟ զի յաղթէ յոգզեն ամէ քո, որ ոչ բնաւ անցանէ, և ոչ երբէք փոփոխի, և կամ այլ այլէ: Տեսանես ով պանծալի թագաւոր, և շքեղազարդ իշխան, և պերճաբան մեծատուն, զի երջանիկս այս ևս թագաւորէ իբրև զքեզ. և իշխող, և մեծատուն, գերագոյն քան զիմ՝ պերճացեալ, և գերանդր բարձրացեալ, յամենայնի, զայս կեանս որէ կէս աւուրց իւրոց, իբրև աղբ անպիտան համարեալէ, դարձի 'ի սմանէ, իբրև 'ի դարշեցուցչէ, և մեծաւ բաղձանօք զայն հայցէ, թէ մի հաներ զիս յայնմանէ, որոյ հաղորդութիւնէ ճաշակմամբս այսու, որով մերձիլս բարի լինի ինձ, ըստ այնմ՝ ինձ մերձենալ առ Ա՟ծ բարիէ, և դնել առ Տէր զյոյս իմ. քանզի յայսմ՝ կենցաղոյս յուսով մերձենամք, և մեք 'ի ճաշակումն յոյս, և հաւատով միաւորիմք, և ընդ ծածկելն, իսկապէս միանամք հոգւով և մարմնով, և լինիմք իբրև զնա Ա՟ծս, և կամ իր-

եր

րև որդիք բարձրելոյն, ոչ իբրու բնութբ, այլ իբրու շնորհօք ճաշակմանն, և սրբիմք յամ՛ մեղաց, ըստ այնմ արիւնն Յսի որդւոյ նր սրբէ զմեզ յամ՛ մեղաց. և թէ նաև քաւութի ամ՛ մեղաց մերոց. և ոչ միայն մերոց, այլ և ամ՛ աշխարհի: Եւ տրն ասաց, արբէք ի սմանէ ամենեքեան, այսէ արիւն իմ որ վս բազմաց հեղանի, ի քաւութի և ի թողութի մեղաց, քանզի ճաշակմամբ մեղաց, և ի պտղոյ դրախտին, թոյն մահաբերին մածեաւ յարիւնս մեր, և քաղցրագոյն արիւնն մեր, դառնացոյց և սևացոյց, վս որոյ և մահացոյց, քանզի բնութբ քաղցրէ արիւնս մեր, որով շարժիմք, և մնամք կենդանի. այլ յորժամ խածանի յօձէ, թոյնն խառնի, ընդ արեանն քաղցրագունի, և զի ծայրագոյն դառն, վս որոյ և քաղցրութի նր, փոխարկէ ի դառնութի, և սևացուցանէ, ուստի իբրև զախի ուռի, և իբրև զբուշտ լցեալ հողմով, վքայեալ լնանի, վէրանայ և բարձրանայ քան զայլ անդամսն, և ինքն չարչարի, և դառնանայ, և զայլ անդամսն նմանապէս դառնացուցեալ վշտացուցանէ, և միջնորդութբ շարժմանն, արեանն երակացն, և հասանէ յայնոսիկ որք ոչ էին հարեալք և խածեալք, մինչև հասանէ ի սիրտն, որ է աղբիւր երակացն, և ենթակաց կենդանութեացն, և դառնացեալ իսկոյն մեռանի կենդանին: Այսպիսի էր մարդկութիս որ բնութբ քաղցրագոյն ունէր զարիւնն, յանդստէն ըստեղծմանէն, որով կայր և շարժիւր, պահէր զպատուիրանն, և գործէր զարդութի, այլ յորժամ հարեալ եղև յօձէն ընկալաւ զդառնութին, և դառնացաւ և ուռաւ, հողմով հպարտութե և ամբարտաւանութե, Ածանալոյն. և իբրև տարածմամբ արեանն, ե հաս մինչև ի սիրտն, անզղջական, որ հարցաւ ի տնէ թերևս զղջասցի, ոչ զիջաւ յուռուցմանէն. քանզի բարձրացեալ էր հողմով, հպարտութեն և ամբարտաւանութե, որ ոչ կարաց զիջանիլ և խոնարհիլ, զի բնութենէ ուռուցմանն, ոչ երբէք տեղի տալ ցածուցման. վս որոյ և նա որ հարմամբ օձին, ուռուցեալ և բարձրացեալ էր, ոչ ետ տեղի

խո

խոնարհութեն հալոյմանն, և ցածութի խօսակցութենն, թէ֊
րևս ընկալեալ էր դեղ միրաւորութեն. այլ թունաւո֊
րեալն և դառնացեալն, թունոք, և դառնութի եւ զպա֊
տասխանին, և հողմով լցեալ հպարտութի և ամբարտաւա֊
նութի ասաց, կինս այս զոր ետուր ցիս սա ետ ինձ։
Տեսանես արդեօք, թէ որքան խստութի լի է բանս այս,
դառնութի, և թունոք, և ուռուցեալ հողմով հպարտու֊
թե, ընդ նմ քաղցագոյն հարցանողին, և հեզագոյն բը֊
ժշկին, վ՛ որոյ յոյժ զարմացեալ որ ըստեղծն, թէ որքա֊
ներ ուռուցեալ, և բարձրացեալ ՚ի հարմանէ օձին, որ և
ոչ գտաւ տեղի ինչ, որ ոչէր ուռուցեալ և բարձրացեալ,
փքով թունոյն, և հողմով լցեալ բշտոյն, և տկոյն. վ՛
որոյ և կարի զարմացմանէն ասէր, որով եղև այդ քեզ, և
հիմ՛ այդ քան դառնացեալ փքացար, և հողմով լցեալ ու֊
ռար, որ թուն դառնութեդ, ՚ի վ՛ իմ՛ ածես, և պատճառ֊
մեղացդ զիս կացուցանես, մի թէ կերար ՚ի պտղոյն, և ճա֊
շակեցեր ՚ի դառնութենէ թունոյն, և վ՛ այնորիկ այդ֊
քան ուռար, և իբրև զսին պարզեցար, ՚ի չարագոյն խած֊
մանէն, գազանին, որ և ոչ բնաւ գտանի տեղի ՚ի քեզ ցա֊
ծութեն. և պատասխանատուութի խոնարհութեն, թէպէտ գո֊
նեայ փոքրին զղջմութի քո. վ՛ որոյ արի եկ և ել ՚ի դը֊
րախտէդ, յորս վայելչանօքս. քանզի մինչ կենդանի էիր,
փափկանայիր ՚ի փառաւկենդաղ փափկութեդ, այլ յորժամ
այժմդ մեռար ՚ի թունից խայթմանէդ, այսու հետև պար֊
շութի ելանէ ՚ի քէն, ոչ և ես զզայի, յայտուցմանէդ.
արի ել զի մի ապականեսցես, արի ել զի ընդ դարձցիս ՚ի
հող. ուր ըստեղծար. արի ել զի յայտուցմանէդ յորժամ
պայթնուցուս հողմ՛ ամբարտաւանութեդ մի զուգեսցի, ՚ը
հողմոյ խոնարհութեդ և հանդարտասէր հեզութե որ ունի
վայրս այս։ Արի ել զի մի գարշահոտութեդ առաւել սփ֊
ռիցի, և ժանտացուսցէ զքաղցրաշունչ յոդս, որ ՚ի դը֊
րախտիս, և զտազցուսցէ զծառս և զտունկս, որք վայել֊
չացեղ պանծապանծ պայծառանան։ Եւ այսպիսի ողոր֊
մա

մաքրին ցաւովք, և այրուցեալ ուռուցմամբ, հանեալ արձակեաց 'ի վայրենացն վայելչութեց, և յՄ. ծառոց երևմանցըն, և նա լցեալ այնպիսեօքն այրուցմամբ, պայթուցեալ, արտաքոյ դրախտին, և ծածկեցաւ հողով լալագին, և իւրև զծառս պտղաբերս, նոյն այրուցումն տարածեցաւ 'ի բնութիւն, որով ամենքն նովին թուով մահացան. վս որոյ քաղցր կեանքն, և անմահութին պտուղն, եմուտ 'ի բնութիւն, և մնացոյց, ընդ ինքեան, և արտաքեղոյց զմահառիթն, մահացուցչութեն. և դարձեալ քաղցրացոյց, ըզ քաղցրագոյն արիւնս մեր, զոր խառնեալեր 'ի թունոյն լայնմանէ. քաղցրագոյն արեամբն իւրով, և որբեաց և մաքրեաց, յաղագս այնորիկ ասաց, արիւն որդոյ նր, սրբէ զմեզ յամ մեղաց մերոց. և ինքն ասաց, ով ասացեալն, հեղանի 'ի քաւութի մեղաց, և թէ նաէ քաւութի և թողութիւն մեղաց մերոց: Վս որոյ ով Մ.ծանելիք որք հաղորդիք ընդ արեան այսորիկ, և արտաքեղոյք զդառնագոյն թոյնն զայն, մի դարձեալ 'ի նոյնս դարձջիք և ուռուցեալ և այրուցեալ նովին անկանիցիք, և լցեալ հողմով, և օդով ուռուցեալ անդամօք, 'ի վն այլ անդամոց՝ դուք խորովեալ թունոքն այնու, չարչարեալք և լլկեալք՝ յայսոցն չարաց, չարչարէք և զայլ անդամսն. քանզի բնութեէ ըստ առաքելոյ, յորժամ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան ամ՝ անդամքն ընդ նմա: Որդ եթէ թագաւոր ոք, իշխան, և կամ մեծատուն ոք, յորժամ հարցի թունաւս այսորիկ, փափկացակի ուռի, և լնանի հողմով, և ցաւի անասելի, և անպատմելի տագնապաւ. և բոկանի անմարթելիս բարբառել, ես աշխու, և ցեղմայրն իւր և ցմիւս անդամն, դու ոչ այսպիսի: Ես մեծատուն զաւակ, դու ոչ նոյնպիսի: Ես կարեգոյն խիզախ, և բանակալագոյն, դու ոչ նոյնպիսի: Ես իմաստուն, և հանճարեղագոյն, և դու ոչ նոյնպէսի: Ես ազգաւ հարբ և մարբ, եղբարբ և քերբ, և հարազատովք, պանծալի, և զահերեց՝ և դու ոչ նոյնպիսի: Ես այսքան, և այսքան ծառայիվ և աղախնեայց

զան

գանձուց ոսկւոյ, և արծաթոյ, ապարանից, աշտարակաց, բրգուց, գեօղից, և ագարակաց, մարգարտոց, և ականց պատուականաց, ձիոց, և ուղտուց, եզանց, և կովուց, ոչխարաց, և նոխազաց, զինուորոյ, և զինուորաց, և զինուորականաց, պաշտօնէից, և պաշտօնականաց, ըսպասաւորաց, և գործակալաց, և այլոց սոյնպիսեաց տէր, և դու ոչ նոյնպիսի: Նա այսպիսեօք, և առաւել քան զսոսա, 'ի հարմանէ ածէին այնուիկ, և յայտուցմանէն, և յուռուցմանէն, մեծացմանէն, և 'ի փքացմանէն, ինքն գեր քան զչափն ցաւի, տանջի, սաստիկ տագնապի, վտանգի, և տառապի, ընկըճմի սըփռել զայսուիկ և յայլ յանդամն, որք ոչ իցեն հարեալք, և զնմ ևս ըստ ինքեանց ցաւեցուցանել, փըքացուցանել, այտուցանել, և զամենեսեան ըստ իւրում օրինակի, տագնապեցուցանել, և տառապեցուցանել. անհնարին ցաւովք, և առանց բժշկութե զամենս օրինակաիւրեանն, և զամենս երգեծուցանելով ընդ ինքեան, և ոչ մնայ տեղի ինչ ողջ, յանդամոյն, այլ ամն նովիմբ անկեալ օրինակաւ մահանայ, ըստ այնմ ամենեքեան մեղան. և թէ ամն խոտորեցան, 'ի միասին և անպիտանացան, ոչ ոքէ որ առնէ զբարի, և չէ ոք մինչև 'ի մի. քանզի ամենեքեան միմեանց անդամքեմք, հաւատացեալք 'ի Ք՟Ս. յորժամ հարցի ոք յանդամոցս 'ի գլխոյ ածին, հպարտութբ և ամբարտաւանութբ այլ անդամքն զնոյն առնուն, որ և ցուցաք ըստ բնականին, թէ յորժամ միոյ գլխոյ, մի անդամն հարցի 'ի գլխոյ ածին, յայնժամ խայթուածն այն, և թոյն, միջնորդութբ երակացն շարժմանն, սըփռի յայլ անդամսն, ուստի և ամն ընդ նովին օրինակաւ մահուամբ անկանեն, այսպէս լինին և անդամքս Ք՟Սի:

Վասն որոյ աղաչեմ և պաղատեմ կողկողագին արտասուօք զգլուխսդ, որ գլուխդէք անդամոցն Ք՟Սի, թագաւորքդ, իշխանքդ և մեծատունքդ, որք ճաշակէք յամենահամանս սեղանոյս, և հաղորդ լինիք հոգւոյն սրբոյ, և գեղեցիկ բանին Ս՟Յ ճաշակս ճաշակէք, ըստ սրբազանին առաքելոյ, մի

տայք

տայք դարձեալ տեղի թունից օձին այնորիկ, զի մի դար-
ձեալ իբրև զանկ ուռուցեալ և պայթուցեալ գտանիցէք։
Ո՜վ վշ այնորիկ խառնի, արիւն կենարարին, ընդ արեան
ձերոյ, զի յամ յերակս ընթացեալ, զամ զթոյնս նր որ
յամ արեանս որ 'ի ձեռն երակացն ընթացեալ էր, և մա-
ծուցեալ զարիւն, զի մի շարժեսցի յերկիւղ, և 'ի խոնար-
հութիւն Քսի, ըստ այնմ թէ մածեան որպ կաթն սիրտ
նց բարձյէ, զի մի դարձեալ մահացուցեալ, ըսպանցէ, քան-
զի կեանքէ և կենդանարար, արիւնն այն Ածարար, և կե-
ցուցանէ յաւիտենականաբար. ըստ այնմ՝ որ ուտէ զմարմին
իմ՝, և ըմպէ արիւն իմ՝, կեցցէ յաւիտեան. քանզի նա մա-
հացուցանէ՝ և սա կենդանացուցանէ. զի թոյն այն՝ մահ է,
և մահու ախտ. յաղագս որոյ որ զմիտս ունի, և կատա-
րեալ է բանականութբ միշտ պարտէ զսոսա ընտրել. քանզի
և աներանք, որք թէպէտ ոչ ունին զբանականութիւն. սա-
կայն 'ի սատակչականէն, և 'ի մահացուցչէն, օձ անդր տա-
րափախչին, և խնդրեն զյարմարութիւն, և զհաշտու-
թիւնն, մանաւանդ թէ և բանականքն ես. քանզի ով է
այնքան անմտագոյն լինէ, որ կամիցի հարկանիլ յօձէ, և
յայլոց մահարաց թունաւորաց, տուժիլ, ցաւիլ և տառա-
պիլ, և մանաւանդ մահանալ եւ՝ ոչ մի, և ոչ որ, յաղագս
այսորիկ որն ճաշակողացն, զփրկական մարմին և զարիւնն
իւր, եւ իշխանութի կոխել զօձս և զկարիճս, և զամ զօ-
րութիւն թշնամւոյն։ Ո՜վ կարողութիւն յորժամ միանայ մք
ընդ նմա, որ զօրութիւնէ Այ, ըստ այնմ՝ զՔսն Այ
զօրութիւն, յայնժամ խորտակեմք զզօրութիւն աներևոյթ
թշնամւոյն, այսինքն զօրութբ զզօրութին։ Ո՜վ նաէ զեն
զինուորաց, որպ ասացն մարգարէն, առ զզէն և զապար
քո, և արի յօգնել ինձ։ Սուրբ պատերազմողաց, ըստ այնմ,
հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց։ Նաև ընդդէմ
թշնամեաց, ըստ այնմ՝ նետք քո սրեալէն հզօր. և թէ
նետք սղայոյ, եղեն վէրք նց. սղայքեն ճաշակողքն, որք
իբրև զողջոյս անմեղացեալքեն, 'ի ձեռն խոստովանութե.
և

և ապաշխարութեն, և տուր առեալ զնետս զայս, այսինքն, զմարմին և զարիւն կենարարին, մարմին անեղն, և արիւն զնման, զարիւնս հեղուն թշնամեաց, հարկանեն, և վիրաւորեն: Աշհանէ Յեսուայ, որ մարտեաւ ընդդէմ Գայեայ, փառեաց, և այրեաց զքաղաքս ն͞ց հրով: Սուրէ որով զայլազգ գլխատեցաւ, և Հոլեփեռնէս յաղթեցաւ: Թոշակէ, որք ճանապարհորդեն ’ի կեանս: Ջուրէ սպառեցելոցն և ծարաւեցելոցն, որ տանէ ’ի կեանս: Դեղէ որ զհիւանդութիս մեր բառնայ; Կենդանութի որ զմեզ ’ի մահուանէ ’ի կեանս ածէ: Լոյս, որ ’ի խաւարէ ’ի լոյս ածէ:

Հառագայթ որ զնսեմութիս բառնայ: Ճանապարհ, որ անմոլար յարկսն յաւիտենականս տանի, ըստ այնմ՝ թէ ես եմ ճանապարհ: Բալեղանիք, որ դնի ’ի վէր վիրաց:

Պտուղն, որ մուծանէ առ Ա͞ծութին: Բանալի, որ բանայ զփակեալ դրունս արքայութեան: Միացուցիչ զօրութի որ միացուցանէ զմարդ ընդ Ա͞ծութեն: Հուր, որ ծախէ ըզ նիւթս մեղաց և անօրէնութեանց: Գանձ ծածկեալ յագարակի մարմնոյն: Մարգարիտ պատուական, ցանկալի վաճառականաց հոգևորութեանց: Ուռկան, որ հանէ զժողովուրդն Ա͞յ յերկրայինն ծովէս յերկնայինն գաւառ:

’Ի խոնաւութենէ, անջուր յանապատ. ըստ այնմ՝ ծով երկիր անապատ, և անջուր որ ոչ գոյ ’ի նմա ճանապարհ բանսարկուին. այսպէս ’ի ս͞րբս երևեցայց քեզ տեսանել ինձ զզօրութիս քո և զփառս քո: Սաէ զօրացուցանող տկարաց, ’ի յնթացս յասպարիսին կենաց: Սա նըպաստակ առիթն պսակաց: Սա բազմածօղ, զայլ այլ ակն ’ի մի:

Սա զօրացուցանող մարտիրոսաց, և քաջացուցանող նահատակաց: Սա համբերութի ճգնաւորաց, և զօրացուցիչ կուսանաց: Սա ամուր պարիսպ հաւատացելոց, և նշանակ զինուորեցելոցն: Սա պահպանիչ հօտին Ք͞ի, և ժողովող ’ի մի փարախն բաղձալի: Սա ցանկալի մարգարէիցն, և բաղձալի առաքելոցն, ըստ այնմ՝ բազում մարգարէք և թագաւորք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ, և ոչ տեսին,

սին, և լսել զոր լսէ բդ և ոչ լռեան, քանզի բազում ընծիւ-
փափագին, զմարմին և զարիւն կենարարին, տեսանել և ճա-
շակել, և ոչ տեսին և ոչ ճանաչեցին և լսել զբարբառն
ցանկալի թէ բաշխի, և հեղանի ՚ի քաւութի և ՚ի թողու-
թի մեղաց. և ոչ լուան: Սա քակէ զդաշն սատանայի, և
աւար հորկանէ զամուրս նր, ըստ այնմ՝ թէ առ աւար բաշ-
խեաց պարգևս և ետ որդւոց մարդկան, և թէ յորժամ՝ հը-
ջոր փառեալ պահէ, և յորժամ՝ հզօրագոյն ՚ի վր եկեալ
յաղթեսցէ, զըսպառազինութի նորա հանէ յոր յուսա-
ցեալ էր, և զաւար նորա բաշխեսցէ, քանզի այնքան հըզօ-
րագոյնէ սա, որ սատանայ բազմաւ ժամանակաւ, բազմա-
ցուցեալ էր ՚ի մարդն, զմեղս, և զյանցանս, և զանօրէ-
նութիս որք երբեք զլեառնացեալ էին, անկարելի ՚ի բաց
բարձմանն, և յանճարին ՚ի տեսանողայն, ՚ի հասանել հը-
զօրագունիս այսորիկ, երբեք զմոմ հալի առաջի հրոյ, ըստ
այնմ՝ որպ հալի մոմ առաջի հրոյ, այնպէս կորիցեն մեղքն
յերեսաց Տ՟Ի, և թէ փոփոխեաց զլերինս որպ ճնճղուկ:
Սա է հաւատն որ տանի մեզ ՚ի տնէ, որով յորժամ՝ ոք,
կատարելապէս ունիցի, փոխէ զլերինս, մեղաց, յանցա-
նաց և անօրէնութեանց: Սա է բանալի դրանյն արքայութն,
որպ խոստացաւ ինքնին տրն տաց ձեզ զփականս Արքայութի,
յորժամ՝ փակեսցէ, ոչ ոք իցէ որ բանայցէ, և յորժամ՝ բաց-
ցէ, ոչ ոք իցէ որ կարասցէ փակել. որ արդար և եղև, և
կատարեցաւ, զի Արքայութ նշանակէ զՔս, բանալին նր,
մարմին և արիւն նր. զի յորժամ՝ ոք սարսափմամբ, և սըր-
բութե ահիւ և դողութե մերձենայ ՚ի սա, ըստ սրբազա-
նիցն դասուց, բանին դրունք թագաւորութեն Տ՟Ի ընդ-
դէմ՝ նց, որ ոչ ոք կարասցէ փակել, զոր օրինակ բազմօրի-
նակ ջանայ սատանայ, ճաշակողայն զկենդանարար խոր-
հուրդն, փակել ընդդէմ՝ նց զդրունսն, զոր բացեալ է տրն
և ոչ կարաց. որպ Պետրոսի վիմին հաւատոյ, երկիւղ ընկղ-
մամբ, յուրացութեն, և յայլոց աշակերտացն, զխոյա-
տալն և փախչիլն, և որքան զուն գործեաց, բանսարկուն,
եթ

Թերեւս գտանիցէ փակեսցէ , ընդդէմ բացիցելոյն , որ մարմ-
նով եւ արեամբ կենարարին , եւ ոչ կարծեաց , նոյնպէս եւ Հա-
կառակ փակեաց , ընդդէմ յուդայի . յորժամ լրբութեամբ , եւ
անզգամութեամբ , եւ ձեռամբ պղծութեամբ մերձեցաւ ՚ի սոսկալին
խորհուրդ , յոր առժամայն եմուտ ՚ի նա սատանայ , եւ ոչ
եք կարաց բառնալ ընդդէմ փակելոյս այսորիկ , զի հակառա-
կաբար գործեցաւ , զոր ինչ եւ գործեցաւ . ընդդէմ սրբա-
զանից ճանաչողացն : բացաւ , եւ ոչոք կարաց փակել . եւ ընդ-
դէմ անպարտազան ճանաչողին փակեցաւ , եւ ոչոք կարաց բա-
նալ , ընդդէմ երկրորդին . բացաւ նովաւ դրունք դժոխոցն ,
եւ ոչոք կարաց փակել . եւ ընդդէմ առաջնոյն փակեցաւ եւ
ոչոք կարաց բանալ : Նոյնպէս եւ այժմ լինելոց է , որք ար-
ժանապէս մերձենան , բանին ընդդէմ նոցա դրունք արքայու-
թեան , բանալեաւս այսուիկ , եւ ոչոք կարէ փակել , եւ փա-
կի սովաւ ընդդէմ անարժանիցն , եւ ոչոք կարասցէ բանալ :
Եւ հակ օրէն բանի սովաւ , դրունք դժոխոցն , ընդդէմ
անարժան ճանաչողացն , եւ ոչոք կարասցէ փակել . եւ փակի
սովաւ ընդդէմ արժանաւորապէս ճանաչողացն , եւ ոչոք կա-
րասցէ բանալ . Թէ եւ անհուն հոյլք դիւացն գուն գոր-
ծեսցեն , եւ ջոկք անկելոցն դասուց , համօրինաբար . յա-
ղագս այսորիկ ասաց , երանելին Սիմէոն , եւ ահա սա կայ ,
՚ի կործանումն , եւ ՚ի դլորումն բազմաց ՚ի մէջ իսրայէլի , եւ
մարգարէն ասաց , վէմ անկեան շինման , եւ գլորման :
Եւ վէմն հաւատոյ , երջանիկն Պետրոս ասէ , եթէ ճաշա-
կիցէք քաղցր է Տր , քանզի կայ իսկ ՚ի գրի , թէ ահաւա-
սիկ դնեմ ՚ի սիոն , վէմ ընտիր գլուխ անկեան , պատուա-
կան , եւ որ ՚ի նա հաւատասցէ , մի ամաչեսցէ . ձեզ այսու-
հետեւ հաւատացելոցդ վէմ պատուական , իսկ անհաւա-
տիցն վէմ զոր անարգեցին շինօղքն , նա եղեւ գլուխ ան-
կեան . եւ վէմ գլորման , եւ վէմ գայթակղութեան , որք գայ-
թակղին , ապըստամբեալքն ՚ի բանէն յոր եդան :
Տեսանեմս արդեօք , թէ որքան զօրութիւն ունի , կենդանա-
րար մարմինն , եւ արիւն կենարարին որ է բանալի եւ վէմ պա-
տու-

փառական, որ արժանապէս մերձեցելոյն բանիս զգրոցս արքայութեն այսինքն, Առիւծն, որ դասուց ընտրելոց փոքու հօտին, և նոյն ինքն փակէ ընդդէմ անարժանից, որ յուդայի, և նմանեաց նորին: Զոմանս կանգնէ 'ի գլորմանէ. այլթաքողին, որ պետն ընտրելոց, և զոմանս գլորէ 'ի վիճս, կորուսեան, որ յուդայ, և նմանք նր. և վ̃ այնորիկ ասաց, սա կայ 'ի կանգնումն, և 'ի գլորումն, բազմաց 'ի մէջ իսրայէլի, և 'ի նշան հակառակութե, զի հակառակաբար գործ երևի, զոր ինչ գործի, զի զոմանս տանէ, 'ի մահուանէ 'ի մահ, և զոմանս տանէ 'ի կենաց 'ի կեանս, զոմանս տանէ կենաց, 'ի մահ, և զոմանս 'ի մահուանէ 'ի կեանս. Արդ՝ առաջինն է անշէջ ճաշակողն, որ 'ի մեղս մեռեալ է, և մեռանի, երկրորդ մահուամբն 'ի դըժոխս: Երկրորդն հակ սորին, որ ասա կենդանիէ, գործով հաճութբն Ա̃յ, և յետ արժանապէս հաղորդութեն ճաշակման, մտանի 'ի կեանսն յաւիտենականս:

Երրորդն է որ կենդանիէ ըն̃ առաքինութե̃, և ապաստան եղեալ յանձն իւր, և հպարտացեալ փքացմամբ, զինքն միայն տեսանիցէ, և բարբառ ըստ փարիսեցւոյն արձակեսցէ, յորժամ 'ի սա մերձեսցի, տանի 'ի կենաց 'ի մահ:

Չորրորդն որ ըն̃ մոլութե̃ մոլեալ իցէ, և յետոյ զղջացեալ 'ի ձեռն մաքրագործ ապաշխարութե, և լուացեալ 'ի ձեռն ապաշխարութե արտասուաց, ըստ մարգարէին, ըն̃ առաքելոյն, ըստ մագդաղենացւոյն, և ըստ մաքսաւորին, սոյն ճաշակմամբ հրաւիրի 'ի մահուանէ 'ի կեանս:

Այս է նշանն հակառակութե̃, որ 'ի ձեռն ճաշակման մարմնոյ և արեան կենարարին: Այս է գինին որ արկաւ 'ի սամարացւոյն, 'ի վր̃ վիրաց խողխողելոյն, և նովաւ եդաւ 'ի վր̃ գրաստու կենաստու քառաթևին, և ածաւ 'ի պանդոկ եկեղեցւոյ դրախտին: Այս է նաւ 'ի մէջ ծովու աշխարհիս, որ ուղղապէս տանէ 'ի հայրենականն գաւառ, և ազատէ յամ̃ նաւակոծելեաց, և զերծուցանէ 'ի ծփանաց:

Այս է սանդուխտ որ կանգնեցաւ յերկրի, առ 'ի բարձրա-

ցու

ցուցանել զմարդիկ յերկինս, խաչաչարչար կենցաղավա-
րութի: Այս է մանանայն որ տուաւ նորոյս իսրայէլի, որով
զմարդիկ յերկինս աւետեաց ուղղին: Այս է հացն հրեշտակ-
ացելոց, որով զմարդիկ գերաշխարհիկ, զինուորութիս փոխա-
դրին, և լինին Ա՟ծս, և կամ որդիք բարձրելոյն:
Այս է տապանակ ուխտին կտակարանաց, յոր Ա՟ծախօսու-
թիւն լինիւր, և 'ի նմա բնակէր, ըստ այնմ՝ այս է հանգիստ
իմ, 'ի սմա բնակեցայց, զի հաճեցայ ընդ սա:
Այս է սափորն լցեալ մանանայիւ, այսինքն Ա՟ծութիւն, զի
սափորն ոսկի նշանակէր զմարմինն տրուանական, և մանա-
նայն զԱ՟ծութիւն, որ միացաւ մարդկութեան ընդ Ա՟ծու-
թեան, որ կերեալ լինի ճաշակմամբ հաղորդութեան, և երկ-
նային զմայլմամբն: Այս է բուրվառն պղնձի, որ 'ի ձեռն
Ա՟հարոնի դարձաւ յասկն. զի Ա՟հարոն նշանակէր զքահա-
նայն, և բուրվառն զհացն նշանական, պղինձն զբնութիս
նիւթական, և յորժամ՝ քահանայն 'ի ձեռն առեալ, ասա-
ցէ զբարբառն Ա՟ծային, այս է մարմին իմ, և այս է արիւն
իմ; յայնժամ՝ ընդ լինել բարբառոյն, փոխի մարմին Ա՟ծ-
որդւոյն, և յարիւն տեառն գինւոյն, ոչ ձեռն հօր, ըզ
բնութիս մարդկայնոյն. զի մինչդեռ ոչէր առեալ ձեռն
հօր զբնութիս, էր անասնասարաս, և անբանից հաւասար,
ոչ բուրվառն պղնձի, այլ յորժամ՝ կառ 'ի ձեռս Ա՟հա-
րոն, նոյն ժամայն, փոխարկեցաւ յասկն. այսպէս ձեռն հօր
և այլ յորժամ՝ բուռն է հար զզաւակէն Ա՟բրահամու, նոյն
ժամայն Ա՟ծացոյց միացմամբն, նոյնպէս, ոչ Ա՟հարոն. և
Ա՟ծն բան: Ա՟յսպէս և Ա՟ծունակն քահանայն յորժամ՝
առնու զհացն նշանական, փոխի 'ի ձեռս նո՟ր մարմին և ա-
րիւն Ա՟ծային, բնութի գոյացական, և անմահական. մինչ
զի ոչ մնայ անդ բնութի հացին, գոյացական. այլ պատա-
հումն լոկ քանակական, և նկատումն գունոյն որ աչական:
Եւ արդ՝ 'ի կատարումն երրակացս, պարտէր և զչորրորդն
եղանակ 'ի ներքս ածել, և զՄայնորեկ բաշխեաց և բո-
լոր բնութեան զի և նոքա փոփոխիցին, զի կատարեսցի բանն,
որ

որ ասացն եղիցին մի, որպէս և մեք մի եմք: Սակայն զաւազանն Ահարոնի, որ ծաղկեցաւ 'ի ձեռն նորին: Իսկ այսէր նշանակ և օրինակ դարձեալ Ա՟յ բանին, յորժամ 'ի ձեռն է առ զընութիւն մարդկային, միացմամբ, և միաւորութեամբն, չորացեալն և զօսացեալն, ծաղկեցաւ: Արդ որպէս Ահարոն և ձեռն Ա՟յ, այսպէս և քահանայն յորժամ առնու 'ի ձեռն զհացն և զգինին, նոյն ժամայն ընդ բարբառել բանին ծաղկի Ա՟ծութեամբն ըստ այնմ՝ հանգիցէ 'ի վ՟ն նր՟ հոգի Ա՟յ, և զայլն: Սովաւ լինի զատիկ տն՟, ըստ այնմ որ նշանակեցաւ 'ի հնումն, որպէս հինն խորանէլ, նոյնպէս և նորս խորանէլ. որպէս նորա յեգիպտական ծառայութենէն և 'ի փարաւոնէ, սոյնպէս և նորս խորանէլ, 'ի դժոխանոյն, և 'ի սատանայական ծառայութենէն ազատեալք, ընդ ծով աշխարհիս անցին. և ծովահեղձ զփարաւոն առնեն:

Սակ մանանին վասն որ ոչ այլք, սոյնպէս և մարմին և արիւն կենարարին վասն Ա՟ծային միաւորութեան և ոչ այլ հացն, և գինին, և ճաշակողք նորին, նովաւ վասնն, և ոչ այլին: Սովաւ ըսպառազինի և մարտնչի ընդ գողիադու, այլազգւոյ, որպէս Դաւիթ որ անուամբն Ա՟յ իսրայէլի, սոյնպէս և ճաշակողք սորին, ըսպառազինին սովաւ ընդդէմ սատանայի, զի որպէս նա անուամբն Ա՟յ մարտեաւ ընդ նմա, և է հատ զգլուխ նր՟. սոյնպէս և ճաշակողք այսմ խորհրդոյ, ըսպառազինեալ հատանեն զգլուխ սատանայի, և կամարարաց նորին: Արդ որպէս նա 'ի բաց եդեալ զզէնս և զըսպառազինութիւն սաւուղայ, և ապա յաղթեաց և է հատ զգլուխ նորա, այսպէս և ճաշակողք այսմ սոսկալի խորհրդոյս, պարտին 'ի բաց դնել զմարմինականս. և ապա մարտնչիլ զի կարասցեն յաղթել. զի որպէս նա քարիւ, և պարսաքարիւ, սոյնպէս և ճաշակողք այսու խորհրդոյս քարիւ, կենդանականի, որէ Ք՟Ս, ըստ այնմ վէմն էր ինքն Ք՟Ս, զի որպէս նա սորին, այսպէս և ճաշակողքն սրովն Բ՟ի, որ կենդանի է և հատու քան զամ՟ սուր երկսայրի, և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ, և ոգւոյ, և օդից.

ռելից, և ուղղայ, և քննիչ մտաց և խորհրդոց. և թէ սուր, երկսայրի, եւ 'ի ձեռս նոցա առնուլ զհատուցումն հեթանոսաց, և թէ նետք քո սրեալ են հզօր: Ասէ վէմն հատեալ առանց ձեռին, 'ի լեռնէ Ածայինն, որ հարկանէ զպատկերն բազմագունի, և առնէ փոշի. կոխան ճաշակողի մարմնոյ և արեան կենարարի: Ասէ հացն հաստատիչ մարդոյ սրտի. զի ոչ հացն զգալի, է հաստիչ մարդոյ սրտի, սոյնպէս և ճաշակումն այսմ՝ խորհրդոյ է հաստատիչ հոգւոյ մարդոյ. ըստ այնմ՝ հաց հաստատէ զսիրտ մարդոյ:

Ասէ գինին որ ուրախ առնէ, ըստ այնմ՝ գինի ուրախ առնէ:

Արդ այնորիկ ոչ նազելի և ցանկալի թագաւորք, իշխանք և մեծատունք, յորժամ կամիք ճաշակել զճաշակս զայս, հետ արարէք 'ի տանց ձերոց, զխմորն զարշելի, որէր հըպարտութիւն և ամբարտաւանութիւն. զի ասացաւ հնոյն Իսրաէլի, 'ի բաց արարէք զխմորն 'ի տանց ձերոց, զի զատիկ Տնէ, և թէ ոք կերիցէ խմորուն, սատակեսցի անձն այն յիսրայէլի, և 'ի ժողովրդենէ իւրմէ: Արդ՝ ոչ ասացաւ խմորէ հպարտութիւն, որ ընդ հնոյն Ադամայ միացաւ և միաւորեցաւ, 'ի խածանմանէ օձին, և թոյն նր մածաւ ոպ կաթն 'ի սիրտս մարդկային, որով մեռան ամքն և ուռուցեալ հարմամբ նորին, և պայթուցեալ կորեան նովին:

Եւ յաղագս այսքան անտանելի վտանգի, եկն որդին Այ, անուն, և բան, և ձեռն նորին, արար նոր զանկուած և շինեաց նորագոյն. ըստ այնմ՝ արասցուք տօնս, մի 'ի խմորն հին, և մի 'ի խմորն չարութեան, և անըզգամութեան, այլ յանխմորն ըստուգութեան և ճշմարտութեան. և դարձեալ ասէ որբեցէք 'ի բաց զհին խմորն, զի եղիջիք նոր զանկուած, ոպ էքդ անխմոր, քանզի զատիկ մեր զենաւ Քս:

Արդ եթէ ազատութիւն նորովս եղև զանկուածով, ապա պարտէ մեզ զի զհինն 'ի բաց, և 'ի տար անդր ձգեսցուք. զի երկակի ներհակքն, անյարմարինէ համանգամայն, 'ի միասին զետեղել. զի հին զանկուածն որէր Ադամայն, ամ-

բար

ճարտասանութիւն և հպարտութիւն էր, խմորեալ, 'ի խայթմանէ օձին. ուստի ամենայն ուռուցմունք և փքացմունք յառաջեալք լինէին. քանզի բնութենէ զօրս և խայթէ անիծեալն օձ, այնքան ուռի, մինչ զի իբրև զտիկ պարզի, որպէս առացեալ եղև նախնումն, և ուռուցմանէն յայնմանէ, խափանին ամենայն զգայարանքն. աչքն յոքնակի ուռուցմանէն ծածկի, որ և ոչ երբէք կարէ տեսանել, բազում անգամ 'ի բաց ել ուստի, 'ի սաստկագին փքացմանէն, որպէս և միոջ եղև յաւուրս մերում, զի թովիչ մի ունելով, զօձս խաղալիկս, որոյ ոչ հաւատացեալ թէ կապեալ իցէ մերձենայ յօձն ասելով, թէ բնութիւն ունի ոչ խայթելն, նոյն ժամայն ընդ խայթելն, սաստկապէս ուռաւ ասեն, մինչ զի 'ի սաստկութենէն, երկոքեան աչքն 'ի բաց ոստեան, 'ի տեղւոջէ իւրմէ, և ընդ երեսօքն կախեցաւ, և այս այնքան ասեն սաստկապէս ուռուցեալ, մինչ զի իբրև զտիկ ուժգին փչեալ լարեցաւ, և ոչ 'ի միք զգայութի ինչ երևէր, զի զականջսն խցեալ ռունգունքն հոտոտելիքն, ճաշակելիքն, լեզուն 'ի մէջ բերանոյն. նոյնպէս և հասարակն զգայութիք, ձեռքն և ոտքն, այնքան լարեցան մինչ զի անշարժ եղև, կրկնուածն դուզնաքեայ ինչ, և այսպէս չարաչար վախճանեալ ել 'ի կենաց: Սոյնպէս եղև զանգուածն առաջին հինն մարդ. յորժամ հարեալ եղև յանիծեալ օձէն, 'ի սաստիկ փքացմանէն խափանեցան ամենայն ըզգայարանքն, որպէս ասաց տէրն, աչք գոն, և ոչ տեսանեն, ականջք են, և ոչ լսեն, նոյնպէս և ամենայն զգայարանացն հասարակաբար ասաց, ոչ իմանայք, և ոչ 'ի միտ առնուք. քանզի և նոքա դեռևս, հին զանգուածովքն էին, խըմորեալք: Իսկ յորժամ զատիկն մեր զենաւ Քրիստոս 'ի վերայ քառաթևին, փոփոխեցաւ զանգուածն հին, և բարձաւ չարն 'ի միջոյ, թոյնն մահաբեր հպարտութեան և ամբարտաւանութեան, և եղև բնութիւս նոր զանգուած: Խոնարհութիւն և հեզութիւն Քրիստոսի: Օր որպէս նա ճաշակմամբ սրտոյն, անիծեալ եղև յամի 'ի պտղոյ իւր, այսպէս և մեք, որք նոր զան-

զանկուած եղաք, ճաշակմամբ մարմնոյ և արեան կենարարա-
րին, որ զենեցաւ բնութիւս մեր, յանձն 'ի գործս իւր:
Եւ արդ՝ որով հետև ազատեցաք, 'ի չարալիր թունից, և
'ի թունալից զանկուածոյն, աղաչեմ մի դարձեալ դարձուք
յայն, քանզի հինն էանց, և արդ նոր եղև: Այսու հե-
տև արասցուք տօնս, մի 'ի խմորն հին, ասաց առաքեալ և
մի 'ի խմորն չարութեան և անզգամութեան այլ յանխմորն ըս-
տուգութեան, և ճշմարտութեան: Եւ թէ սրբեցէք 'ի բաց,
զհին խմորն, զի եղիջիք նոր զանկուած, որպէս էք անխմոր,
քանզի զատիկ մեր զենաւ Քս: Եւ դարձեալ ասէ հրապար-
տութեան զնոյն 'ի բաց ընկեցուք, և զմեղս կարևորս, համ-
բերութեամբ ընթասցուք, ոչ հինն խորանէ, յորժամ ուտէին
զզատիկն զուշս 'ի ճանապարհ ունէին, յելս յեգիպտոսէ,
ժամանել յերկիրն աւետեաց: Եւ վ̄ այնորիկ ցուպ 'ի ձե-
ռին ունէին, որ նշանակէր զխաչն տէրունական, որ պար-
տէ ճաշակողացն, յանմահական խորհրդոյն, զխաչն Քի
ունելով, այսինքն զչարչարանս նր, և կօշիկն յոտս, որ
նշանակէր զբանս աւետարանականս, զի ոտն նշանակէ ըզ
միտսն, կօշիկն զբանն կենաց. զի ոչ ուտէին 'նց, ոտք 'նց
կօշկաւորեալ էր, նոյնպէս և որ այժմս ճաշակէ, զկենդա-
նարար խորհուրդն միշտ պարտէ 'ի միտ ունել, զբանն կե-
նաց, որ իբրև զճրագի լոյս տայցէ, 'ի խաւարչտին տե-
ղւոջ, մինչև տիւն լուսաւորեսցի ըստ առաքելոյն. և մար-
գարէն ասաց, ճրագ է բանք քո ոտից իմոց. տես ահա ոտն,
զմիտ, և ճրագ զբանն, որ միշտ լուսաւորէ զմիտս ճաշա-
կողին, և վ̄ այնորիկ հրամայեցաւ կօշիկն յոտսն ճաշակել
ջնոյն խարանելի, և նորայս խարանելի զբանն կենաց 'ի միտսն:
Եւ գոտի ընդ մէջ. գոտի զառաքինութիւս արխականս, և
հեզարարս, ուստի ծնանի խոնարհութիւն. մէջ զսիրտն նը-
շանակէ, ուստի յառաջեկեալ գնին տմ՝ բարութիւք, և զնմ
պարտէ ճաշակողացն, պնդապէս կապել, յանձն իւր, և
զխորհուրդս չարութեան որ 'ի սրտէն յառաջեն, 'ի բաց ըն-
կէցել, ըստ այնմ՝ սկիզբ մբ հայրենայես Տ̄ծ, և տէրն ասաց,
երանի

Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք զի նոքա զԱ՟ծ տեսցեն, Եւ այսու պատճառաւ, ով նազելիք և պանծալիք որք կամիք ճաշակել զօրութիւն, ընդ Ա՟ծութեն, պարտիք զյառկութիս զայսոսիկ, 'ի սրբազան, և յամենօրհնեալ յանձինս ձեր ներբերևեցուցանել. և յամենօրհնեալ խորհրդոյս ճաշակման, ապա մերձ լինի. քանզի ոչ այլ ինչ է ճաշակումս այս, եթէ ոչ ամփացուցիչ: Մ՟որոյ սրբեալ անձամբ, պարտ է մերձիցելոյն, մերձիլ զի ինքնին ասաց եղերուք սբք, զի ես սուրբ եմ: Եւ առաքեալ ասաց, սրբեցէք զձեռս ձեր մեղաւորք, և եսայի ասէ, լուացարուք, սրբեցարուք, ընկեցէք զչարիս յանձանց ձերոց. և դաւիթ ասաց, լուացից սրբութեամբ զձեռս իմ, և ապա շուրջ եկեց ըզսեղանով քով Տր' և սրբազանն ասաց պօղոս, սրբեցէք զխիղճս ձեր 'ի խղճէ չարաց, մկրտեալ զմարմինս ձեր 'ի ջուրս սրբութեան: Եւ Ա՟ծ ասաց ցմովսէս, լուացէք զձորձս ձեր. այսինքն զմարմինս որ է ձորձ հոգւոյն, և դաւիթ ասաց, լուա և քան զձիւն ըսպիտակ եղէց: Եւ յորժամ այսպիսաբար մերձենայ ոք, յԱ՟ծաճաշակ խորհուրդս, խնկապէս, և աներկբայաբար Ա՟ծանայ, և ընդ յԱ՟ծ միանայ: Իսկ որք ընդ մեղօք շաղախեալ, ոչ բարւոք շահին: Օվ ով ասեն Ա՟ծայինք, մեղքն է վիրաւորիչ Ա՟ծային մեծութեն, և տգեղացուցիչ Ա՟ծային պատկերին որ 'ի մեզ: Այդ Ա՟ծային մեծութին է կենդանարար մարմին և արիւն կենարարին. ով ասաց մարգարէն, համբարձաւ մեծ վայելչութին քո 'ի վերոյ քան զերկինս. զի նոյն մարդկութին որ է մեծ վայելչութի Ա՟յ որ անցեալ է և վերացեալ քան զերկինս, և համբարձեալ անդր քան զամ դասաւորութիս հրեշտակաց, նահապետութեանց, և նստեալ ընդ աջմէ հօր, մտեալ 'ի ներքին կողմն վարագուրին, նոյնն աստ պատարագեալ, և մատչողքն, երկակի մատչին. են որք արժանաւորապէս, և ցաւակցաբար, և են որք ոչ նոյնպէս, և խոցողաբար, յորդոր առաջնոյն ասէ, կերէք մերձաւորք իմ և արբէք, ընդէր, զի մերկացար զպատմուճանս մեղաց, որ 'ի դրախտին ըզգեցար.

ցմր. զխայթեալն, և զվիրացեալն. սատուցեալն, վերա-
ցեալն, և բարձրացեալն, հպարտութիւն և ամբարտաւանու-
թիւն, և լուացեր զոտս քո 'ի յընթացս 'ի ճառն աղօթեղա-
ցուցմր, և փոխանակ ձգելոյն քո զձեռս 'ի կռթել, ըզ
պտուղն անօրէնութեան և մեղաց, այժմ կթէ զմտաւ, այսօ-
րինքն զդառնութիւն ապաշխարութեան, քանզի բնութիւն ըղմը-
ռոյն, է դառնագոյն, և պահէ զիրն անապական, այսպէս և
ապաշխարութիւն, զղջումն, և խոստովանութիւն, և զդարձ
փոխարինին. մի այնորիկ առէ մատուցք լըցոն զըմռսաւ,
զի մատուցք ձեռին տասնեն, նոյնպէս և զգայութիւնք մար-
դոյ տասնեն, և սորա մին լըցան զըմըռսաւ, այսինքն
դառնագոյն ապաշխարութիւն, ահն, դառնագոյն արտասու-
օք, ով մեղգաղենացին, Պաւլիթ, և պետն առաքելոց, և
այլք: Ներման խոստովանութիւն և օրհնութիւն ԱԾ. ուն-
կըն լսելոյ զբանն կենաց, որք զդառնագոյն ապաշխարու-
թին քարոզեն: Հոտոտելիք, որ զհոտ դարշութին մեղաց,
անարգելոյ, և զցանկալի հոտ արդարութեան և Քրիստոսի առըն-
չոյ, ըստ այնմ՝ հոտ անուշելիք Քրիստոսի առ ԱԾ. Նոյնպէս և
համարակ զգայութիւն, առնախայութիւն, ծնրադրութեամբ,
պահօք, և աղօթիւք, և այլ ինչ խըստակրօն վարուք. Նոյն-
պէս և ներքին հինգ զգայութիւն, նախ համարակ զգա-
յութիւն, որ զնոյն արտաքին հինգ զգայութեց զառնագոյն.
քինքն լըցեալ, տացէ երևակայութեան, որ երևակայու-
թիւն զփառս արդարոցն, և տանջանս դժոխայնոցն, ճշգր-
տիւ տեսանիցէ, և զզուարճութիւ և զանպատում ուրա-
խութիւ, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ
մարդոյ ոչ անկաւ. զոր պատրաստեաց ԱԾ սիրելեաց իւ-
րոց. Նոյնպէս և հակն, առելեաց իւրոց, տացէ տրամախո-
հութեան, որէ 'ի մէջ փորուածոյ ուղիղն, զի որոնես-
ցէ, և զնոյն դառնութիւն, ապաշխարութեան, տացէ
կարծեացն, առ 'ի խոկալ, և խոկմանքն տացէ վերջաւորին
յիշողութեան. և այսպէս տասներումբք, մատամբք,
այսինքն տասն զգայութեամբք, լըցեալ իցէ դառ-

Նախնոյն զըմպանս ; ասէ կերէք և արբէք, մերձաւորք իմ, որք չարչարակիցք եղէք: Ով յանդգամ իմանէ որդին Ա՟Յ, 'ի պարտէզ այնպիսւոյ հոգւոյ. ընդ այնմ իջցէ եղբօր որդին իմ 'ի պարտէզ իւր, 'ի ծաղկոց խնկոց, հովուել զբուրաստանս, և ժողովել զշուշանս, ծաղիկ, այսինքն անձն արդարոց: Սոյնք այսինքն, աղօթք, ընդ այնմ ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո Տ՟ր, բուրաստան բանական հոգին, շուշան, զԱ՟ծային, և զմարդկային առաքինութիւնս: Եւ այսպիսի մերձաւորութեամբ, և հաղորդութեամբ միաւորեալ ընդ փեսային հարսնացեալ եկեղեցի, ասէ ես եղբօր որդւոյ իմոյ, և եղբօր որդին իմ ինձ, որ հովուէն 'ի մէջ շուշանաց: Իսկ յաղագս երկրորդին ասէ, որք խօսողքեն, Ա՟ծային մեծութեան, զի զոր դու հարեր հալածեցին, և վէրս ցաւոց իմոց յաւելին: Ըստ այս մարդկութեան և ադամայինն բնութեանն ասէ Ք՟Ս առ հայր, թէ զոր դու հարեր 'ի դրախտին, ճաշակմամբ պտղոյն, զնոյն հարեալն զոր ես առի, և միաւորեցի ընդ Ա՟ծութեանս, հալածեցին ճաշակողքն, անարժանապէս, և վէրս ցաւոց իմոց զորս կրեցի 'ի վ՟ր խաչին, մեղաւոր ճաշակողքն յաւելին. յաղագս որոյ ասէ, դիր զմեղս 'ի վ՟ր մեղաց նց, այսինքն մեղքն զորս ունէին և ճաշակմամբն այնու յաւելին, այլ և ս մեղք, այսինքն, անարժանութեամբ, յաղագս յաւելման մեղացն, այսինքն, վիրաւորելոյն զիս, որ դառնագոյն մեղքէ, քան զառ՟ն մեղս, դիր 'ի վ՟ր մեղաց նց, զի մի մտցեն յարդարութի քո: Արդ՝ այսպէս մեղօք մեղաւ Արիոս, որ եցոյց տ՟րն որդւոյն Մեռլոսի, պատառեալ զպատմուճանն: Եւ այսպիսի մեղօք մեղաւ Նեստորիոս, յորժամ ետես ըզ պատկեր երանուհւոյն՝ ասաց մի պարծիր ով Մարիամ, եթէ զԱ՟Ծ ծնար, այլ զի դու մարդ ես, և մարդ ծնար: Այսպիսի մեղօք մեղաւ, և Մակեդոն որ զհոգին Ա՟Ծ, ըստեղծիչն, և գոյացուցիչն նմա օտար յԱ՟ծային բնութենէն և սպասաւորական ասաց. վ՟ս այսպիսեացս ասէ, որ ճաշակէին անարժանութեամբ, և աններելի մեղօք, և ճաշակմամբ

բըն

բըն եւ յաւելուլն, ասէ, դիր զմիտս ’ի վե՛ր մտաց քոց, զի մի մնասցես յարդարութեան քո, ջնջեսցին նոքա ’ի դպրութե-նէ բուսեալ կենաց, և ընդ արդարս քո մի գրեսցին. քանզի մարմին կենարարին է իբրև զկաղամար, և զարիւնն իբրև թանաք, որովք գրեն սուրբքն, ’ի դպրութեան կենաց, և ան-սուրբքն ջնջին ’ի դպրութենէն կենաց. ո՞չ յուդաս, և վերոյ ասասցեալքն ըստ այնմ՝ ջնջեսցին նոքա ’ի դպրութենէն կե-նաց, և ընդ արդարս մի գրեսցին: Նոյնպէս և այլ մեղաւորք որք անպէտք միան ’ի չարիս իւրեանց, և յետ վերաւորութ նմայն մեծութին, որէր կատարեալ մարդկութ կենարարին, անարժան ճաշակմանն և մեղօք հպմանն տգեղացուցանէ զպա-տկերն որ ’ի մեզ. ո՞չ ադամայն եղև, որ ըստ պատկերի ա՞յ արարաւ. անմահ, թագաւոր և իշխող, անձն իշխան, ինքն-ակամ, կարող, հզօր, և յամի ո՞չ ած, այլ յորժամ մեղաւ, յայնց յամէ ունայնացաւ, և այսպէս տգեղացաւ նմային, պատկերն որ ’ի նմա:

Նաւ յաղագս այսորիկ պատկերն արարչական, խառնեցաւ ի նիւթականս և եա մեզ զի նորոգեսցէ զնոյնս նիւթական մարմնով և արեամբն իւրով նմականաւ. քանզի ընութեամբ մարգարիտ իմն պատուական, յորժամ անկանիցի, յաղբիւս, որաւուր զոյնն փոփոխի, յորակութենէն այլայլի, տգեղա-նայ, սևանայ, այլափոխի: Նաւ յորժամ ’ի կորուսէն գտանի, լուանի և մաքրի, և զետ աղտեղութիւն բառնի, դարձեալ յածի յառաջինն պայծառութիւն: Նոյնպէս արար որ ըն-տեղծն զընութիւնս, զի էր որպէս զմարգարիտ պատու-ական, ըստ խոտել փայլուն, շողշողեալ պաղպաջուն, և լուսատեսակ. և յորժամ անձն իշխան կամք. կորոյս զայն մարդն հին, յամէ մերկ և թափուր գտաւ, և անկաւ ’ի յաղբիւս մեղաց և այլափոխեցաւ, ըն..., և այլադրու-նեցաւ. ըստ այնմ՝ զի հայիք յիս և սեւ սևացեալ, և դարձեալ թէ սեաւ եմ ես: Նաւ լուաց զայն ’ի յորդանան, և մաքրեաց և ’ի վերնատանն, զմիաւորեալ ընդ Ածու-թեն, չնորհեաց մարդկանս, զի կեցի ած յամէ. զի բոլոր

նա

ծնողակիցքն լինիցին Ածացեալք, հաղորդութիւն Ածու-
թեն. և յայնժամ պայծառացեալ, լուսատեսակաւորեալ
մարգարիտն այն, որէր մարդկայինս բնութի, ոչ և առաջ
ի նքենին ոչին, նմանէ արքայութեան երկնից, առն վաճառա-
կանի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս. և գտեալ մի
պատուական մարգարիտ, երթեալ վաճառեաց զամ զոր ինչ
ունէր և գնեաց մարգարիտ: Այսէր ինքն Յս Քս, որ
եղև իբրև վաճառական, որ յերկնից էջ յերկիր, և 'ի հայ-
րական ծոցոյ խոնարհեցաւ 'ի մարդկային բնութիւս, և գը-
տեալ զմարգարիտն, որէր մարդկայինս բնութի երթեալ
վաճառեաց զամ՝ զոր ինչ ունէր, այսինքն չոգաւ 'ի գող-
գոթայ, և վաճառեաց զամ՝ զոր ինչ ունէրն, զի մարմինն
ետ 'ի կերակուր, և զարիւնն ըմպելի, զհոգին 'ի գին, ըզ
ջուր կողին 'ի լուացումն: Զբոլոր անձն 'ի փրկանս, ըզ
համբերանս խաչողացն, զպատմուճանն վիճակ արկողացն,
բոլոր մարմինն Յովսեփայ, զմայրն Յովհաննու, և զաշա-
կերտսն Հօր Այ, ըստ այնմ Հայր սբ, պահեա զնս յանուն
քո. զբոլոր մարդկութիւն 'ի պատարագ Այ, ըստ այնմ՝
յայնժամ՝ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե, յոր-
ժամ՝ ուխտեալ զուարկն ելցէ 'ի սեղան քեզ պատարագ.
զբոլոր Ածութեն եւ մարդկութիւս ըստ սրբոյն Կիւրղի,
բոլորն ընդ բոլորումն միաւորեալ, այսինքն բոլոր Ածու-
թին որէր անձն բանին, ընդ բոլոր մարդկութիւս որէր
մարդկութեն բնութի: Եւ սոսա զամ՝ զոր ինչ ունէրն,
վաճառեաց վաճառականն Քս, և գնեաց զայն պատուա-
կան մարգարիտ, որէր բնութիւս մարդկային: Եւ դարձեալ
էր իբրև զգանձ ծածկեալ, զբնութիւս մարդկային, 'ի բա-
սորինս յագարակի, ոչ առաջ ուէրն, զոր գտեալ մարդոյ
թաքոյց, և 'ի խնդութենէ անտի, երթայ վաճառէ, զամ
զոր ինչ ունի, և գնէ զագարակն զայն: Արդէ կատա-
րեալ բնութիւն մարդկային, բանն Ած ըստեղծիչն ամն.
ապարանի աշխարհնէ, գանձ ծածկեալ բնութիւս մարդկայինս
որ ունէր զտիպ, և զկնիք, Ածայնոյն պատկերին, և գը-

դեալ Ա՟ծն կատարեալ, և մարդն կատարեալ; Ա՟յ Հօր որդին, Թարգյ յանձն Ա՟ծային, յորժամ միաւորեաց ընդ իւրում Ա՟ծութեան, և 'ի խնդութենէ անտի, ասէ երեմիայ փախնաւէ զնամ զոր ինչ ունի, և գնէ զագարակն զայն. քանզի այնքան փախնաւէնց, զնամ զոր ինչ ունէր որդին Ա՟յ, մինչ զի Ա՟ծն յանի եղև մարդ յանի անփոփոխարապէս:

Տէրն յանի եղև ծառայ, զի ծառայն յանի լինիցի Տէր յանի: Ա՟ծն յերկնից էջ յերկիր զի մարդն բարձրացուսցէ, յերկրէ յերկինս: Ա՟ծ եղև որդի մարդոյ, զի մարդն արասցէ որդի Ա՟յ: Անմահն եղև մահկանացու, զի մահկանացուքն լինին անմահ: Մեծատունն յանի եղև աղքատ, զի զաղքատսն փարթամացուսցէ: Նսեմացաւ լոյսն, զի զմեզ լուսաւորեսցէ. քաղցեաւ հացն, զի զմեզ յագեցուսցէ. ծարաւեցաւ աղբիւրն, զի զպապակեալսն արբուսցէ:

Տրտմեցաւ ուրախութիւն, զի զտրտմեցեալսն ուրախացուսցէ: Երկնչէր համարձակութիւն, զի զերկչոտսն, և զերկիւղալիսսն զօրացուսցէ, վտանգեցաւ ճանապարհն, զի զվտանգեալսն, 'ի ճանապարհս մեղաց, և յանօրէնութեանց, և ուղևորեալն 'ի դժոխս, երկնայինս արասցէ և ուղղեսցէ. բարձրեալն 'ի խաչին բարձրացաւ, զի բարձրամտեալն ամբարտաւանութիւ, և խոտորեալն հպարտութիւ, բարձրացուսցէ: Զրկեաց արարիչն, զարարչական զձեռն, 'ի ծառն և 'ի փայտն զխոտութեն, և 'ի ծառն մահու, կենդանիս արասցէ, և զործեսցէ. բևեռօք խոցեցաւ, բարձաւղն խոցուածոց, զի բևեռեալ մեղս և յանցանս որ 'ի ձեռն նախաստեղծին, կթմանմ պտղոյն, և յոտս նորին, 'ի վաշխաչէլ ձորակ նորին, արտաքս խլեսցէ. զոր օրինակ բևեռն բևեռօք, արտաքս հանի: Արտևք, և կողիւք կցեցաւ, զի զկողինն լուասցէ զյանցանս, և մաքրեսցէ զթարախ մերոցն: Արբուցաւ զպատմուճանն, և զհանդերձն, զի ըզզգեցուսցէ, մերկացելոյն և կողոպտելոյն: Մեռաւ կեանքն, զի զմահացեալսն կեցուսցէ, ըստ այնմ, տեսանիցես ըզկեանս քո կախեալ առաջի աչաց քոց, և 'ի Մովսէսի ասէ:

ԱՃ

Այն էջ 'ի գերեզման, ընդ մարմնոյն ; և 'ի դժոխս ընդ հո-գւոյն, զի զերկակի թագուցեալսն վերաբերեսցէ, 'ի հողոյ և 'ի դժոխոյն, զոր օրինակ դաշնական մի ոսկի, միացեալ ընդ հրոյ. և 'ի համանեղն ընդ մէջ, բոլոր հուրն ընդ եր-կակին տեսանի, և կամ` լար աղեղան, հատեալ ընդ մէջ, բոլոր աղեղն, ընդ երկոսեան հատեալսն տեսանի :

Այսպէս և կատարեալ Աստուածութիւն, ըՆ երկակի կատարեալ-ոցն տեսանիւր. ընդ բոլոր մարմնոյն, 'ի գերեզմանս, և բոլոր հոգւոյն 'ի դժոխս : Եւ այսպէս կատարեալ մարդ-ոյս, զնոյն զայսոսիկ, զոր ինչ ունէրն, ոչ ասացաւ ըստ Աստուածութեան, և ըստ մարդկութեան վաճառեաց, և գնեաց զագարակ աշխարհիս, ուր ծածկեալ էր գանձն Աստուծոյն, այսինքն, բնութիւն մարդկային, և ուր ծածկեալ էր դաշ-կան զսպասկերս ունող տիրականին : Մանաւանդ եթէ զոր-ինչն ես է հեղ, յորդորս Նորին : Կեանք ետուր փոխանակ Նորին : Զնծութիւն 'ի գին, յաղագս Նորին. այսինքն ան-ձըն բանին, 'ի մահ Նորին, ըստ եսայեայ անձն Նր 'ի մահ վարեցաւ : Եւ կեանքն 'ի դժոխս մերձեցաւ, ըստ մարգա-րէին, և ընդ այնոսիկ համարեցաւ որ 'ի գուբ իջանեին :

Մատնեցաւ ոտնացւոյ ալեզատսի, աչք Նր տեսարացան, լերու աղքատի. լցաւ չարչարանօք անձն Նորին :

Եղև ըստ եղծոցն, ոչ զմարդ առանց օգնականի, Ածըն բան, հասանիչն երկնի, և ոչ զվիրաւորս, որ 'ի գերեզմանս ննջեն :

Եւ արդ ով Ճաշակող` և հաղորդ Աստուածութեան, տես թէ որո՞վ գնով գնեցար, և որո՞վ արդեամբք ազատեցար. ուրախ լեր և ցնծա՛յ, զի զԱստուածութիւն տուաւ 'ի գին քո, և կատարեալ մարդկութիւն Նորին, 'ի փրկանս քո : Արիւն Նորին յարբու-մըն քո, ըստ երանուհոյն անգնեա՛յ, որ առայն արիւն Նր զարդարեաց զծնօտս իմ : Եւ մարմին Նր 'ի կերակուր քո : Եւ արդ հիմ հանդուրժիս, և զի մրդ ոչ պարծիս, զի յա-ղագս սերկեանս առաջ առուր երջանիկն մարգարէ, ծափ-հարէք ամ հեթանոսք, և ստեա Ճաշակմանս այսորիկ, հրա-

մայ

մոյեաց, աղաղակեցէք առ Տ՟ր ՚ի ձայն ցնծութեան. վասն որոյ ո՛վ հարսնացեալ հոգի, մեծային քո որ այսքան շնորհս պարգեւաց քեզ, եւ մենամարտ պատերազմաւ ընտրեաց ընդ քեզ, մի՛ հանդերձիւք, մի՛ զարդուք, այլ փող հար հոգւոյդ, ծափս հար ձեռամբդ, տմբկս տամբդ, պարես մարմնովդ, ցնծա անձամբդ, զուարճացիր հոգովդ, ուրախ լեր մարմնովդ, գովեա բերանովդ. եւ տուր զփառս եւ որհնութիւն լեզուաւդ, եւ համբարձմամբ ձեռացդ. տուր գոհութիւն. զի ազատեցար ՚ի թագաւորութենէն սատանայի, ոչ հինն խորանէ ՚ի թագաւորութենէն փարաւոնի. եւ թագաւորէ ՚ի վ՟ր քո տ՟րն, եւ բարձրեալն, որ զգեցեալ է զվայելչութիւն, այսինքն, զմարմին քո եւ զբնութիւն: Եւ ազատեցար ՚ի դժոխական ծառայութենէ, ոչ հինն խորանէ, ՚ի յեգիպտականէն. եւ ՚ի գործոյ խիստ կաւոյն, աղիւսարկութենէն, որ նշանակէր զքառանիւթեայ գործոյ կաւոյ մարմնոյն, զի քառանկիւնութիւն զայս ցուցանէր. որ քառանիւթեայ, տապականութիւն զգործն վարէր. հողն, որ փայրաքարշութիւն զծուլութիւն. ջուրն, զլղջախոհ ցանկութիւն. յարդն, զյանդգնութիւն հպարտութեան:

Տես թէ որո՞վ գնով գնեցար, եւ որով արդեամբք ազատեցար. ուրախ լեր եւ ցնծա, զի զՏ՟ր տուաւ ՚ի գին քո, եւ կատարեալ մարդկութիւն նորին, ՚ի փրկանս քո:

Տ՟րւն նորին յարութիւն քո: Եւ այնպիսի աղիւսարկութենէն ազատեցար, եւ միայնոյ սարգոյն բանեցողին քոյ, եւ արտաքսագործողին թագաւորութեան պարպարեցար, եւ պարտախակեցար, ուրեն անպատում փառք, եւ անճառելի խնդութիւն, անպատելի զուարճութիւնք, եւ անսպառ եւ մշտնջենաւոր ուրախութիւն որոց անցանէ, եւ զկալ:

Եւ վ՟ր այնորիկ ասաց մարգարէն, ասացէք ՚ի հեթանոս թէ տ՟ր թագաւորեաց, հաստատեաց զաշխարհս զի մի սասանեսցի, եւ յայնժամ ուրախ եղիցին երկինք, եւ ցնծասցէ երկիր, զուարճասցի ծով լրիւ իւրով, ցնծասցեն դաշտք, եւ ա՟մ որ ՚ի նմ: Եւ Զաքարիաս ասաց, ուրախ լեր յոյժ

դուստ

դուստր սիովնի, զի ահա թագաւոր քո գայ առ քեզ. նոյն հեզ, և Հինն աւուրց, թագաւոր մեծ, ՚ի վերայ ամ երկրի, ապա ուրեմն յաղագս պսպղանելոյս ուրախանալ պարտիմք մեք ճաշակողք, որդւոցն թագաւորք, և Այ ընկալ իշխանք, և պանծալիք մեծատունք, զի Ածութեան լինիք հաղորդք, և հօրն երկնաւորի յորդեգիրք, և սրբոյ հոգւոյն տաղաւարք, և Քսի Այ մերոյ անդամք՝ տաճար, և բնակարան. Վն այնորիկ տրն յետ ճաշակմանս այսորիկ, ասաց որքապանիցն, ձեր արիք գնասցուք աստի, և ելին ՚ի լեառն ձիթենեաց. որ նշանակէր զԱծութիւն՝ զի բարձրութի լերինն, զԱծութի՛ն նշանակէր, ձիթենին՝ իւղ ողորմութն նր:
Զի ոչ նորա յելանելն, ոչ ինչ բարձին յերկրաւորացս, զկնի ճաշակմանն, յելանելն ՚ի լեառն ձիթենեաց, նոյնպէս և ձեզ որբազանից, պարտէ ճաշակմամբս այսու, զամ մեղս ՚ի բաց ձգել, ոչ օձն զխորգս իւր, խաւարամտութե և ապաշխարութե. քան զի և որբազանն Եղիա յորժամ բարձրանայր, և վերանայր, ՚ի բաց ընկէց զմաշկեակն իւր, որ իւր էր երկրաւոր, և այնպէս մերկ և թեթև, յամ երկրաւորաց վերացաւ, և բարձրացաւ. նոյնպէս և ամ որբազանքն առաքին, յորժամ յայս յանմահական խորհրդոյս ճաշակս ճաշակեցին, մերկացան զմարմինս, և զամ զգործս մարմնոյն, ոչ արարն երանելին Բարդուղիմէոս, որ ՚ի բաց ընկէց զխորգս մարմնոյն որ հանաւ տիկ ՚ի ամաառկոյ: Եւ Տէրն և սուրաւորս, թօթափեաց յինքենէ, զգանալից մորթ մարմնոյն, և այլքն զգործս մարմնոյն, ոչ երջանիկքն մարտիրոսք, և երանելի նահատակքն, և ցանկալիքն կուսանք, և բաղձալիքն ճգնաւորք, որոց յիշատակն օրհնութե եղիցի, և բարեխօսութբ Ածն յամի Տրն մեր ՅՍ ՔՍ մեզ ողորմեսցի: Եւ այսպէս ամ նազելիքն, և պանծալիք, մերկացան զմարմնական գործս, և ապա ճաշակեցին, և վերացան և բարձրացան, անձամբ փառս Ածութեան: Վն այսորիկ աղաչեմ յերեսս անկեալ զորբազանդ քդ յիշեսջիք թէ ոչ եղև մուտն ձեր յաշխարհ, մերկ, ե-

թէ

թէ ըզզեստաւորեալ ելեր յորովայնէ մօր քոյ, ոսկեաւ և արծաթով, եթէ մերկ և թափուր, ակամբք և մարգարտաւ, եթէ ունայն և դատարկ. իշխանազունք, և պալատակապ երիվարաւ, և զօրու բազմաւ, ապարանօք, և բուրաստանօք, պեօղիւք և փառաւորօք, ծառայիւք, և աղախնեօք, գահորարան մահճօք, և յատակափայլ զարդիւք, որգովք, և գառեօք, կնաւ, և բազմածախ հանդերձիւք. փողովք և քնարիւք, երանգ երանգ ծաղկօք, և զանազան օծանելեօք, և անուշահոտ ծխանելեօք. խրախճական հըրամանօք. եթէ վիրաւորիչ, սուր երկայրի լեզուօք, և այլովք այսպիսեօք, եթէ յամէ յայսցանեանց ունայն և թափուր: Արդ եթէ մերկ մըտեր յաշխարհս, և ոչ ինչ յայսցանեաց ընդ քեզ, մի խաբիր, զի նոյնպէս մտանելոցես յորովայն մօր քոյ, 'ի հող. ուստի ըստեղծար, եթէ ո՞ր և եցես, որ ելեր յառաջնոյ մօրէդ, մերկ, դարձեալ երաթիցես մե՛րկ, որ եկիրդ, և ոչ ինչ առցես 'ի փառաւորեցդ, եթէ երթայցէ զհետ քո. 'ի ձեռին քում. սակայն և այն ախտ չարէ. զոր օրինակ եկիր, նոյնպէս և երթիցես. և ոչ ինչ օգուտ քեզ, 'ի վաստակոյն զորս ջանաս հողմոյ. և որպէսզանն ասաց առաքեալն, ոչ ինչ բերաք յաշխարհս, և ոչ ինչ կարողեմք տանել: Եւ յոբ, Ա, մերկ իսկ եկի ես յորովայնէ մօր իմոյ, և մերկ անգամ դարձայց անդրէն. քանզի երբեք նմանեցաւ կեանս այս: Արդ՝ եթէ սոյն, ապա զարի աշխատութիւնէ որ խաբի յայսցանեաց, և զինի յայնցանեանց զորս բացատրեցաւ. քանզի բազում՝ անգամ՝ խաբի ոք յերազոյ, զոր տեսանէ զանձ ոսկւոյ և արծաթոյ գտեալ, և զարդարեալ ոսկւով, և արծաթով, ականք և մարգարտովք, ուտելով և ըմպելով, 'ի բազմահամ սեղանս, յոքներանգ զունով զինեաւ, և անուշահամ կերակրովք, և զայլս այսպիսեօք, իբրև յառնէ ոչ ինչ 'ի ձեռին գըտանէ, որ մեծատունն խարոխակէր, այլ յամէ մերկ և ունայն. այսպիսի է մեծութիւն կենցաղոյս, և ամբարտաւանութիւն աստի կենաց, ըստ մարգարէին, զի մարդ եղեն

աւեր

ւեր յանկարծակի, սաստկեցան, սասանեցան, կորեան, վասն անօրէնութեան իւրեանց, և եղեն այս երազք զարթուցելոց: Եւ Եսայի ասէ, և եղիցին իբրև որ յերազի քաղցեալք իցեն, և ուտիցեն, և իբրև յառնիցեն զուր է անձին, և զոր օրինակ ծարաւի որ իցէ, յերազի ըմպիցէ, և յառնիցէ և դարձեալ ծարաւի իցէ, 'ի զուր յուսացաւ անձն նորա. և յոբ ասէ, և որք գիտէին զնա, ասասցեն թէ ուր է իբրև զերազ թռուցեալ, ոչ գտցի. թռեաւ իբրև գիշերական: Արդ եթէ բարձրամտեսցիս, և խաբիցիս յերազոյդ, և ամբարտաւանիցիս, ոչ ապաքէն կարի անխելանայցիս, քանզի ոչ ինչ կայ այժմ 'ի ձեռին, զոր ինչ տեսեր և ունէիր, յերազին. արդ եթէ այնպէս ապա ընդէր խաբիս և խորհիս զանուղղս: Աղաչեմ՝ խորհեա զպատրաստեալ սեղանդ, որ առաջի նազելեաց և պանծալեացդ եդեալ կայ: Գառն ոչ մարմնականն, այլ Աստուածայինն և անմահականն: Հացն որպէս և կենդանականն, ոչ երկրաւորականն և ապականականն, որոյ յուտելն միւս անգամ՝ քաղցնու, այլ յագեցուցիչ յաւիտենականն, և անփոխադրելի և անսպառականն: Գինին ուրախարարականն, և զմայլեմին մշտնջենաւորականն, որոյ ճաշակմանէն արտաքարձումն, խոլ ցաւոյ, ոչ մարմնականաց և ունայնականաց, այլ անմարմնականաց և հոգևորաց, և նորա հրաւիրումն 'ի կեանս, և միաւորութիւն ընդ երրորդութեան, անճառելի Աստուածութեն բարձումն մեղաց, և մերկացուցումն յանցանաց, զոր օրինակ յորժամ՝ արբեալ էք, ըստամոքն առողջացուցանէ, ըստ առաքելոյ, ջուր և եթ մի ըմպիցես այլ սակաւ մի գինի խառնեսցիր, վասն ըստամոքին և բազում հիւանդութեան, և յըմպելն ջերմանայ, այսպէս եղեն Առաքեալքն, որոց ըմպելն, այնքան ջերմացան 'ի սէրն Աստուծոյն, մինչ զի, 'ի բաց անդգամ՝ զտկարութիւնս մարմնականս ընկեցին: Եւս ճաշակողքըն քրմերն, 'ի ջերմացուցչէն ըմպելոյ, և 'ի բաց մերկացան զհանդերձս, այսպէս արարին որբասցան ճաշակողքըն, որք յետ ճաշակմանն, յանմահական խորհրդոյն, զ յանկա-

ար

արիւնն հնոյին ; և մերկացեալ զհին բնաւից հանդերձն , այսինքն զմարմինն որ է հանդերձ հոգւոյն , և զնոյն զգործս մարմնականս : Նոյն յարութեան բաժակին , ՚ի ներս ածել ա-րիութեն , որ է առաքինութեան զանազանութեանն . վ՞ս որոյ յորժամ որ , յայսպիսւոյ սեղանոյ ; ճաշակս ճաշակէ , ոչ ևս ճաշակէ յերկրաւոր սեղանոյն , որ ապականեալ լինի . յաղագս այնորիկ ասաց մարգարէն , հոգւոյ սեսութեան ուրախութեան և զուարճութեան պատրաստ արարեր առաջի իմ զսեղան . և սրբազանն ասաց առաքեալն՝ ունիմք մեք սեղան , ուստի ոչ ունին իշխանութիւն ճաշակել որք սպասեն զպաշտօն խորանին , քանզի հինն մարմնականն էր , որ յանասնոյն մատչէր , և յանիրաւէից : Իսկ նորս հոգևոր , որ յորդւոյն Այ , յանարատ զառնէն մատչի , և ՚ի բանէն Այ :

Վ՞ս այնորիկ ասաց ոչ ունին իշխանութիւն որք մարմնական և փոփոխական սեղանոյն ճաշակեն . այսինքն մարմնոյն հետևելով , և զ ցանկութիւնս նր կատարելով . եթէ կարիցեն կերակրել , ՚ի հոգևոր սեղանոյս . զի ասաց Տէրն , ոչ որ ըմպէ զհինն , և կամիցի զնորն , զի ասէ թէ հինն քաղցրագոյն է : Արդ՝ հին է , հին մարդ՝ և հին օրէնք . նորն է նոր մարդ Քս , և նոր օրէնք . հինն զպղծութիւն կատարէին , ոմ Աստուածն , և ջրհեղեղաւն , յորոց միայն եղբայրասպանութիւն . և միւսոյն զղիջական ցանկութեն ապականութիւն գործէին . նոյնպէս և օրինականքն , որք ՚ի տաճարին , զպղծութիւն գործէին , ըստ մ՞ն ձայնին այսպիսւոյ որք ադամանդ լինէին և չտային օրինացն , ոչ կարեն ասէ ճաշակել . զի զկարծիս մարմնոյն կրօնին , վ՞ս այնորիկ ասէ հինն քաղցրագոյն է , և ոչ կամին ճաշակել զնորն , որ հոգևորն է , և անապական , և դառնութի , և նեղութի ըղձեալ . քանզի ոմ առաքառանութեան դառնութիւն առնէ զնոսն , յապականութեանն է , ոմ դառնութի զծոյն , և ոչ քաղցրութիւն , ոմ ողջ չէր , որք ապականին , վ՞ս այնորիկ որք մարմնաւորքն են զհեշտութիւն և զքաղցրութիւն աշխարհիս սիրելով զհինն կամին ըմպել ըստ բաժակ , և ոչ զնորն , որ դառնութեամբ և նեղութեամբ ունի

զօ

փոխութեն: Արդ այսպիսույս անդամոյ ասէ ոչ ունին իշխա-
նութիւն ճաշակել, որք պաշտեն զպաշտօնս խորանին, այս-
ինքն մարմնոյն, զի խորան հոգւոյն է մարմինն. այնորիկ
որք Ադամայինքն են, և պաշտօնեայք Հնոյ խորանին, ոչ
կարեն զճաշակս զայս ճաշակել. զի ասաց Տ՟րն որէ նոյն
Ադամ, այսէ բաժակ նոր ուխտի իմովս արեամբ, զայս ա-
րարէք առ իմոյ յիշատակի: Տեսանեմս արդեօք, զի ասէ
բաժակս իմ, որ կամի արբենալ, հեղումն արեան պարտի
ըմպանիլ, և յանձն առնուլ, զի այսու կատարի յիշատակն
իմ. այլ զայս ոչ կարեն ճաշակել, որք պաշտեն զպաշտօն
խորանին, այսինքն մարմնոյն, այլ որք հոգւոյն, զի զհո-
գևորս ընդ հոգևորս համեմատութիւն, ըստ սրբազանին
ձայնի: Վ՟ այնորիկ սրբազանն Պետրոս, մինչ ոչէր ճաշա-
կեալ զնորին. այլ միայն զհինն, ընդ դիմանայր Հնոյն ճա-
շակմանցն, նորոյն՝ և ասէր կաղելով, մի լիցի Տ՟ր քեզ
զայդ, և նորն Ադամ՝ պատասխանեաց ասելով, երթ
յետս իմ սատանայ, զի ոչ խորհիս դու զԱ՟յ բաժակին,
և սեղանոյն, այլ զմարդկայինս, այսինքն, Հնոյն Ադամայ,
և բաժակի նորին, և Հնոյն խորանի, և բաժակի նորին:
Արդ՝ զբաժակս զայս, որ 'ի հօրէ տուաւ ինձ, ո՞չ ըմպի-
ցեմ զսա, որ նորոգիչնէ և կենդանարար, որ անապականնէ,
և անապականարար, որ Ա՟ծայիննէ և Ա՟ծարար, որ սրբազան-
նէ, և սրբազանարար, որ նորէ, և նորոգարար. որ երկ-
նայիննէ, և երկնարար. որ ս՟բէ, և սրբարար, որ անփո-
փոխնէ, և անփոփոխարար. որ լոյսէ, և լուսարար. որ Ա՟յնէ,
և Ա՟ծարար. որ կեանքէ և կենդանարար. որ նորէ, և Հնոյն
պատասխանարար: Արդ՝ որ այսքանեաց. բարեաց է պատ-
ճառ, երթ յինէն յետս, զի ոչ խորհիս դու զայսոսիկ, որ
Ա՟յնէ այլ զներհակն, վ՟ որոյ երթ յետս իմ սատանայ,
այսինքն հակառակ որ ոչ կամեցաւ նա զԱ՟յն, այլ ըզ
մարդկայինն ախորժակ, որով դիւրաւ խաբեցաւ հինն
մարդ. որովհետև և դու զնոյն հեշտութիւն, և զհան-
գստութիւն, և զհանդարտութիւն, և զփառս սնոտի կենցա-
ղոյս

գոյս կամիս, հակառակ բաժակին Այ երեւի. և զնոյն մարթ, և տեղի ծնոյն մարդոյն, և ծնոյն օրինացն ունի. վն որոյ ոչ համեղանայ քեզ, նորա գինի. որ ունիս զպաշտօն խորանին, և զտիկն հին. այլ որ կամի զայս ըմպել գինի, պարտի նորոգիլ. և նորանալովն ըմպել զնորս գինի, զի մի պայթուցեալ գինիս նոր, զտիկդ հին, որ երկրայունց կորուստ հասանի. քանզի բաժակն այն, որ 'ի դրախտին միջնորդութբ օձին, ընծայեցաւ 'ի բանսարկուէն ապականեալ և ապականարարէր. վն որոյ արբեալ քն 'ի նմանէ ապականեցան, ոգին, և պղծեցան. ըստ այնմ՝ և ապականեցաւ երկիր առաջի Այ, և լցաւ երկիր անիրաւութեք, և եւես Տր Ած զերկիր և էր ապականեալ, զի ապականեալ էր ամ մարմին, զճանապարհս իւր 'ի վր երկրի:

Եւ ասէ Տր Ած ցնոյ, ժամանակ ամ մարդոյ հասեալ է, առաջի իմ, զի լցաւ երկիր անիրաւութեք 'ի նոցանէ, և ահա ես ապականեցից զնս, և զերկիր. և սաղմոսն ասէ, ապականեցան, և պղծեցան յանօրէնութե իւրեանց, և ոչ գոյ որ առնէ զքաղցրութիս. ամենքն խոտորեցան 'ի միասին և անպիտանացան. ոչ գոյ որ առնէ զբարի, և չէ որ մինչև 'ի մի: Իսկ այս բաժակ, որ միջնորդութբ իմով տամ ձեզ հայրն իմ. լուծիչ է ամ ապականութեց, և նորոգիչ ամ անապականութե, վն որոյ հայրն իմ նախ ինձ ետ, ըստ մարդկութիս ըմպել, և ապա 'ի ձեռն ձեզ. վն որոյ յորժամ և դուք 'ի նմա ըմպիցէք. զմահն բարերարին պատմիցէք. զի այսէ բաժակն փրկութե զոր ընկալայ 'ի հօրէ իմմէ. զինչ ասես ով Դաւիթ, ո՞չ ըմպիցեմ զսա, որ փրկութեան: հաւ և ներհակ առաջնոյն, կորուսչին:

Զի արբումն նորին, մահու եմոյծ, 'ի լինութիւն մարդկային, իսկ արբումն սորին կենդանութի. նորին պատահաս պարկութե, իսկ սորին հաշտութի, փրկութն. նորին ամբոխումն, սորին խաղաղութն. նորին հեռացումն Այ, սորին միացումն ընդ Այ: Նորին մերժումն, սորին յաջեցումն. նորին ելումն, 'ի փառաւորնցաղ վայելչութեց,

և

և արտաքսումն 'ի դրախտէն, սորին դարձեալ մուծումն, և վայելումն: Նորին տառապանք և փառանք: Սորին փա-ճումն ամի. Նորին լաց և արտասուք, արտմութիւնք և ողո-րութիւնք, սորին 'ի բաց բարձումն: Նորին մեղք, և սո-րին օրհնութիւն: Որդ՝ ոչ որբից զան, սակս այսորիկ առաջ մարգարէն, պատրաստ արարեր առաջի իմ զսեղան, ոչ ասացեալ յոր եղեալ կայ կերակուր, զհացն որ յերկնից իջեալ, և կեանս տայ աշխարհի: Զգառն խորովեալ, որ բառնայ զմեղս աշխարհի: Բաժակն անապակ յարբու-ցումն, յուրախութիւն տրտմեցելոյն, և ցնծութիւն սփոփե-լոյն, զուարճութիւն սրտաւորացն, և յարութիւն մեղուցելո-ցն. յաղագս առաջնոյն ասէ, հացիւ երկնից լցոյց զնո, և թէ հաց Ո.Յէ որ իջանէ յերկնից, և կեանս տայ աշ-խարհի, և թէ զհաց հրեշտակաց կերին մարդիկք, և թէ կերէք 'ի հացէ իմմէ: Իսկ յաղագս երկրորդին ասէ, զգառն խորովեալ ուտիցէք, և թէ ահաւասիկ [illegible] գառն Այ որ բառնայ զմեղս աշխարհի, և թէ պարարակք իմ զենեա-լ են, եկայք և կերէք, պարարակ զիրացելոյն ասէ, ի՛ այնմ՝ ածէք զենէք զեզն պարարակ. կերիցուք և ուրախ լիցուք: Եւ յաղագս երրորդին ասէ, զինի ուրախ առնէ, և թէ արբէք զգինի իմ, և թէ բաժակ 'ի ձեռին Տն. գինի լի անապակ արկեալ, և թէ բաժակ քո, որ անապակ արբե-ցոյց զիս. և թէ ընկալեալ զբաժակ, օրհնեաց, և ետ նց և ասէ, առէք զայդ և բաժանեցէք 'ի ձեզ: Եւ արդ՝ ան-մահական սեղանս, այսպիսի ուտելեօք, և ըմպելեօք է պատրաստեալս, և պաշտօնեայ սմին, ինքն միածինն, ըստ այնմ՝ բազմեցուցից 'ի սեղան Հօր իմոյ, և անցեալ պաշտե-ցից: Եւ հայրն երկնաւոր, կոչող և յօրինող, զարդա-րող, և հրաւիրող, այսմ՝ պատրաստութեան: Եւ ամենազօր Սբ հոգին, հաս անուշութեան, և բուրումն անուշահոտութեան, որ զուարճացուցանէ զբազմականսն, և ուրախացուցանէ ըղ հաստատողն: Եւ երգիչք սորա, և փողահարք, ամենայն ա-սացք, և նուագողք, սերոբէք և քերովբէք, որք անլը-

ալ

ռելի Տիշմանք երգեն ; զերգս նորանմանս, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ զայնպիսի քաղցրաձայն եղանակս, և ակն ոչ ետես այնպիսի պայծառ սեղանս, որոյ ձայնէ և որբացմանէ, թնդեալ զմայլեցաւ, և ասաց ոչ կարէ մարդ պատմել, և կամ խօսել, վա՟ն զի անճառելի է. քանզի ոչ պատրաստոյն անճառելի, նոյնպէս և պատրաստելոյն : Եւ պարողք սորին որբաշխարհին պատրաստեալ սեղանոյս, կուսանոյն դասք, նուագելիք, և պանծալիք, ունելով ընդ թմբուկն, երգելով զերգս, որոց առաջնորդ գոլով, մայրն Ա՟յ, երանուհին Մարիամ, ամենօրհնեալ Ա՟ծածին. և զհետ նորա նուագելիքն կուսանք, և պանծալիքն պէսպէսավայելք, ըստ այնմ՝ տարցին թագաւորի կուսանք զհետ նր՟, և զընկերս նր՟ տարցին նմա, ածցեն ցնծութեամբ և ուրախութեամբ, և տարցին ՚ի տաճար թագաւորի : Եւ բազմաստորք, և մատրակք, արքունականքն առաքեալք, ուր մատուցանեն զամենահնազանդ զխորհուրդն, լուսաւորիչք մերոց, և պայծառացուցիչք անձանց : Եւ այսպիսի Ա՟ծանուն սեղանոյս, և Ա՟ծապատրաստ խորհրդականս, շուրջ կան զօրք անմարմնոց, անպատմելի խնդութեամբ, և անճառելի, զուարճութեամբ, ՚ի սպասու խորհրդոցն և ՚ի զմայլումն ներկրողացն որ ոչ կարէ միտք մարդոյ բաւել. և կամ լեզու ճառել. յանպատում վայելչութեանն նր՟ :

Աստ որոյ յերեսս անկեալ յառաջ սրբազան խորհրդոյդ, խոնարհել, և մտօք աչօք հայել, ՚ի պատրաստեալ սեղանոյդ ցանկալի զուարճութիւն, և զմայլելի զխորհրդականն, որ առաջի պանծալեաց առաջի եդեալ կայ, մի ասացաք. գառն, խորովեալ ՚ի վր՟ խաչին. ոչ մարմնական, այլ Ա՟ծային, և անմահական : Հացն սրբազան, ոչ երկրաւոր, թէպէտ երկրաւոր, այլ յերկնից իջեալ և երկնաւոր, որոյ ճաշակէն յաւիտենական յագեցումն, և անփոփոխելի յարատեւութիւն : Գինին անապակ և ուրախական, և զմայլումն ճաշակմանն մշտնջենաւորական, և նոյնս հրաւիրումն ՚ի կեանս, և միաւորութիւն ընդ. երրորդութեան : Նորածնումն

մն

մեղաց, և փարատումն յանցանաց, վն որոյ աղաչեմ, ըն-
կալջիք և տեսջիք ով Ած ընկալ իշխանք, և որբացնա-
վայր մեծամեծք և Ածանման թագաւորք, թէ զինչ ինչ
էգեալ կան առաջի· քանզի Ած եղեալ կայ 'ի ծոցակ, ամե-
նասուրբ երրորդութիւն՝ միացուցանողակ անմահից գա-
ստուածութիւն, ընդստառորեալք· վն որոյ 'ի փայլումն,
նշուլից սորա, որբացնողացն լուսաւորին, մեղաւորքն
զղջացեալք, և աղաչխարեալքն անձնաւոխան փառաւորա-
ցեալ թէ պղ՛նեալ զորդարին· անկեալքն կանգնին, խօ-
ցեալքն բժշկին· վիրաւորեալքն կազդուրին, մեռեալքն
հոգւով կենդանանան, խոլխողեալքն պատին, տոտմեալքն
ուրախանան, տխրեալքն զուարճանան, 'ի սեղանս անմա-
հի, քաղցեալքն կերակրին, պապակեալքն արբենան,
Եւ սա՝ դասաւորութիւք, անմահիցն հրեշտակաց, յերկնից
ծառայելն, 'ի պաշտօն սեղանոյս, երգս անճառելիս յօրի-
նեն, եղանակս քաղցրանուագս, և անհպատանելիս դրուա-
տին ուստի ճաշակողքն և լսողքն, զմայլեալ բերկրին·
որոյ ոչ փոփոխումն, և ոչ լպառումն մահերերի:
Սուրբ այնորիկ դոհանոյ մարգարէն, փոյապլսի սեղանոյս
պատրաստողէն, և ասէ գոհանամ զքէն, զի պատրաստ արա-
րեր առաջի իմ զսեղան այն հանդիման նեղչաց իմոց,
օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո ոմղ անապակ արբեցոյց
զիս· և Սողոմոն սպաս պատրաստեաց սեղան, եգեն զգինիս
և խառնեաց զգինի իւր, և առաքեաց զծառայս իւր կոչել
բարձր քարոզութեամբ 'ի խառնիլս իւր, և ասէ եկայք կերէք
'ի հացէ իմմէ, և արբէք զգինի իմ զոր խառնեցի: Եւ Տրն
ասէ, նմանեցաւ արքայութիւն Այ, առն թագաւորի, որ արար
հարսանիս որդւոյ իւրում, և առաքեաց զծառայս իւր, կոչել
զհրաւիրեալսն, 'ի հարսանիսն: Եւ 'ի տեսիլն Յովհաննու
ասէ, երանելի են ամէն որք կոչեցեալքն յընթրիս հարսա-
նեաց գառինն: Արդ՝ որքան մարգարէք, նահապետք, թա-
գաւորք, իշխանք, և արդարք, յանկացան Ածապատրաստ
սեղանոյս, վայելման, և ճաշակման· և հարսանեացս պէ-
րա

բազմութեան, ոչ տեսլեան, և երանական ձայնին, որ ասէ, առէք կերէք, և արբէք ՚ի քաւութի և ՚ի թողութի մեղաց, ոչ լուսոյ, և ոչ տեսլեան. այլ երանի աչաց ձերոց զի տեսանեն, և լսեն, և ճաշակեն ասաց Տրն: Եւ արդ՝ եթէ այսքան երանութի ՚ի սմա անբաւական տեսանի, ապա աղաչեմ՝ մի խաբիցուք, ՚ի ծաղկելեաց և երաշտահանգոյն կենացս, և ՚ի հրաւիրմանէ հարսանեացս, զոր հայր արար որդւոյ իւրում, և մի վերջացուք ՚ի հրաւիրմանէս, իբրև զայնոսիկ որք պատճառաբանեցան, և մի ասասցէ իւրաքանչիւրոք եթէ ագարակ գնեցի և կին առի, որք հեշտ ախտութե, և սոքօք արգելեալք լինիցիք, Ըստ ընկալ սեղանոյս, և թէ լուծս հինգ եզանց, այսինքն հինգ զգայութիւք արտաքին, և սոքօք արգելեալք լինիցիք Ըստ աշէն խորհրդոյս: Այլ զզուշասցուք միմեանց յորդորմամբք սիրոյ, զի մի արտաքս մնասցուք ըստ չիմաստն հինգ կուսանաց, և ունայն գտցուք, ՚ի պարուց, և յերգոց, և յուրախութեաց, անճառելւոյ հարսանեացն, վ՞ այնորիկ ասաց, թողէք զանզգամութի և կեցջիք, խնդրեցէք զիմաստութի. զի ապրիջիք, և ուղղեցէք զխոհութի զհանճար, և ուղիղ ճանապարհաւ իմացարուք զխորան: Զաղագս այսորիկ պարտ է զհպարտութի, և զամբարտաւանութի, և զբարձրամտութի և զնոյն զմեղս կորուսիչս, ՚ի բաց ընկենուլ, և զառաջի երգեալս խոնարհութի և հեզութի հայել, և նկատել, և ապա ահիւ և դողութի մատչել և ճաշակել զի տեղի երանութե և օթևան ճշմարտութե լիցուք. քանզի հպարտութիւն, զհրեշտակս ՚ի բարձրութենէ ընկէց. զԱդամ զրկեաց, զմարդիկք հսկայք ջրհեղեղաւ կորոյս, զաշտարակն փլոյց. զլեզուս բաժանեաց. զփարաւոն և զզօրս իւր հեղձոյց ՚ի ծովն կարմիր: Զդաթան, և զաբիրոն, անդունդք ծերանափառաց կլլին. զերիքով, և զադամանդեայ պարիսպն, և զբանաւեալ թագաւորին կորոյս. զսաւուղ այսահարեաց արար, և զհոգին բարձաւ: Ղուկիթ պատուհասած եղև և վ՞ նր անկաւ ՚ի ժողովրդենէն, յառաջաւոտէ մինչև ՚ի ճա-

Հա

չաժամ եօթանասունք, Է այր, և ասաց Դաւիթ, ես մե-
ղայ, ես հովիւս յանցեայ, և դոքա ոչխարքդ զի՞ արարին,
եղիցի ձեռն քո յիս, և 'ի տուն հօր իմոյ. և յորժամ խո-
նարհեցաւ, և անկաւ 'ի վր̅ երեսաց իւրոց, յայնժամ լու-
աւ տր̅, և արգելաւ սուրն, և սատակումն յիւրաւէլն:
Եւ ասաց տր̅ ցսատակիչն շաւէ, և արդ ամփոփեա զձեռն
քո: Որովհետև պատուեաց զցեղսն իւրաւէլի, յորժամ ամ-
բարտաւանութե̅ ասաց ցծերսն իւրաւէլի, եթէ ճկոյթն իմ
ըստուարէ, քան զմէջ հօր իմոյ և արդ հայր իմ, եդ 'ի
վր̅ ձեր անուրծանս, և ես յաւելից յանուրծն ձեր, հայր
իմ խրատեաց զձեզ, գանիւք, և ես խրատեցից զձեզ, քը-
քոլբ. և պատասխանի ետ ժողովուրդն, զի՞նչ բաժին կայ
մեք ընդ Դաւթի, և ոչ գոյ մեր ժառանգութի̅, ընդ որ-
դւոյ Յեսսեայ, և արհամարհեաց իւրաւէլ զտունն Դաւթի
մինչև ցայսօր: Օաքայաբ, և զեզաբէլ, աւար ձորան սր-
բոյ, և զորդիս նոցա ընդ նմ̅, և խոզք կերին զնմ̅, և բողբ-
ջուացին. ամբարտաւանութիւն զՕզիայ բորոտեցոյց, և վս̅
նր̅ զԵսայի արգել 'ի մարգարէութենէն, ըստ այնմ, և իբ-
րև զօրացաւ, բարձրացաւ սիրտն նր̅, և անիրաւեցաւ 'ի
Տր̅ ԱԾ իւր, և եմուտ 'ի տաճարն տն̅, ծխել խունկս 'ի
վր̅ սեղանոյ խնկոցն, և ահա բորոտեցաւ ճակատն նր̅, և
երևեցաւ բորոտութի̅ 'ի ճակատն նր̅, յանդիման քահա-
նայից 'ի տան տն̅, 'ի վր̅ սեղանոյ խնկոցն, քանզի և ինքն
փութացաւ ելանել, զի յանդիմանեաց զնա տր̅. և էր զօ-
զիայ արքայ բորոտեալ, մինչև յօր վախճանի իւրոյ, և 'ի
տանն առանձինն նստէր բորոտեալ: Եւ զգանձն եզեկի-
այի, տարաւ 'ի բաբելոն, որ ասացն Եսայի, լուր զբան
տն̅ ահա աւուրք գան, և առցի ամ̅ որ ինչ 'ի տան քում է,
և զոր ինչ գանձեցին հարքն քո, մինչև ցայսօր, և երթի-
ցէ 'ի բաբելոն, և մի ինչ մնասցէ, զի բանէ զոր խօսեցաւ
տր̅. ամբարտաւանութիւն, զՀողեփեռնէս գլխատեաց, և
զզօրս նր̅ խողխողեաց. և զամ̅ զփառս նր̅ յաւար դարձոյց,
ըստ այն Տր̅ ԱԾ երկնից առ ամբարտաւանութիւնս, և

ողոր

տարմեաց խոնարհութեան ազգիս մերում: Ամբարտաւանու-
թիւն կախեաց զհամեմն 'ի փայտէ, ըստ այնմ՝ յորժամ գի-
տաց համանն եթէ ոչ պագանէ նմա երկիր մուրդքէ, բար-
կացաւ յոյժ, և խորհուրդ արար, զի կորուսցէ զՀրէայսն,
որք թագաւորութեան արտաշէսի իցեն, և ինքն կախեցաւ ըզ
փայտէ: Ամբարտաւանութիւն արար զարքայն Նաբուգոդո-
նոսոր անասուն, և գազան, ընդ առնելն զպատկերն ոս-
կւոյ, և հրամայեաց երկիրպագանել. մինչ դեռ 'ի վր̅ տա-
ճարի թագաւորութեան իւրոյ ճեմէր, 'ի բաբելոն խօսել
ըսկսաւ, թագաւորն և ասէ, ոչ այս այն մեծ բաբելոնէ,
զոր ես շինեցի 'ի տուն թագաւորութեան հաստատութբ̅ զօ-
րութեան, 'ի պատիւ փառաց իմոց, և մինչ դեռ բանն 'ի բե-
րանէ իւրում թագաւորին ձայն եղև յերկնից, քեզ ասի Նաբու-
գոդոնոսոր, թագաւորութիւն քո անցեալ է 'ի քէն, և 'ի մարդ-
կանէ հալածեսցեն զքեզ, և ընդ գազանս անապատի բը-
նակութիւն քո, և խոտ իբրև արջառոյ. ջամբեսցեն քեզ, և
եօթն ժամանակ փոխեսցին 'ի վր̅ քո. մինչև ծանիցես թէ
տէր բարձրեալն, թագաւորութեան մարդկան, և ում կամի
տացէ զնա. 'ի նմին ժամու բանն կատարեցաւ 'ի վր̅ Նա-
բուգոդոնոսորայ, և 'ի մարդկանէ հալածեցաւ, և խոտ իբ-
րև արջառ ուտէր. և վարսք նր̅ իբրև առիւծուց մեծացան,
և եղունգունք իբրև զթռչնոց: Նոյնպէս և բաղտասար որ-
դի նր̅. և թէ ամբարտաւանութեամբ զի՞նչ գործեաց ընդ ըս-
պասու տաճարին տն̅, գրեալ է 'ի Դանիէլի: Նաև ամբար-
տաւանութիւն սենեքերիմայ. և ռափսակայ, ոպ̅ և գրեա-
լ է Եսայեայ և Մնացորդաց, և թէ ոպ̅ ամբարտաւանու-
թիւն. անտիոքու և նիկանորայ, մաշեցին զնս̅ և ցաւովք
անճարիւք և սուսերբ անողորմելովք, զրաւեցան:
Արդ այսպէս ամենեքեան պարտիմք հայել 'ի սոսա, յամե-
նեսին. կաթողիկոսք, եպիսկոպոսք և քահանայք, յառա-
ջին յերրեակ դասն, ոպ̅ յառաջնումն ասացաւ, զի ոչ
խնայեաց Ա̅ծ, որք հպարտացեալք ամբարտաւանեցան.
նոյնպէս և յամ դասաւորութիւս. նոյնպէս և դասք որոցն,
որք

որք ամբարտաւանեցան վաղվաղակի պատժեցան. եթէ նա-
հապետացն, եթէ մարգարէիցն, եթէ թագաւորաց, եթէ
՚ի սրբոցն, և եթէ յառաքելոցն. ոչ ումեք խնայեաց արդա-
րադատն Ած, այլ իրաւամբք դատապարտեաց. քանզի ըզ
մեծն և զփոքրն ինքն արար, և ըստեղծ. վն այնորիկ յան-
ցաւորացն ոչ ումեք խնայէ. այլ զամբարտաւանս ընկենու,
և դատապարտէ, և զխոնարհս հոգւով կեցուցանէ, ըստ
մարգարէին:

Եւ ոչ այս չափ միայն, այլ և ամ անէծք թէ Ածայինք,
և թէ մարդկայինք, ՚ի վր հպարտից և ամբարտաւանից դա-
տեցին, որպէս ասէ մարգարէն հատո զհատուցումն ամբար-
տաւանից, և թէ ամաչեսցեն ամբարտաւանք, որք ՚ի տա-
րապարտուց անիրաւեցան, և թէ դու խոնարհեցուցանես
որ զվիրաւորս զամբարտաւանս և ՚ի զօրութեան բազկի քո
ցրուեցեր զթշնամիս քո. և թէ ամբարտաւանս անիրա-
ւեցան յիս յոյժ: Եւ յոր ասէ առաքեա զհրեշտակս բար-
կութեան, և զամ հպարտս խոնարհեցո, և զիջո զամբարտաւա-
նս. և դարձեալ ասէ և մերժեցեր զյոյն յամբարշտաց,
և զբազումս ամբարտաւանից խորտակեցեր, ընդէր ամ-
բարիշտք կենդանիք եղեն ծերացեալք և ՚ի մեծութեան են.
սերմանք նոցա ըստ միտս, և որդիք նոցա առաջի աչաց. տունք
նոցա յաջողեալք, և երկիւղ և ոչ ուստեք, և տանջանք ՚ի
տեառնէ չեն ՚ի վր նց, արջառ նց ոչ սխալեցաւ ՚ի ծննդենէ.
ապրեցաւ յղի նոցա, և ոչ վրիպեցաւ. և կան իբրև զխա-
շինս յաւիտենականս, մանկունք նց խաղան առաջի. առեալ
սաղմոսարան, և քնար, և ուրախ լինին, ձայնիւ երգոյ.
և յետոյ ասէ կատարեցին ՚ի բարութեան զկեանս իւրեանց,
հանգստեամբ իջցեն ՚ի դժոխս, Ճրագ նց շիջցի, և եկե-
սցէ ՚ի վր նց կործանումն, երկունք կալցին զնս. ՚ի բար-
կութենէ, եղիցին իբր զյարդ առաջի հողմոյ. կամ զփոշի
որ տարաւ մրրիկ, տեսցեն աչք նր, զսատակումն իւր, և
՚ի տեառնէ մի ապրեսցի, և մեռցի, ՚ի սատակութեան անզգամու-
թեան: Եւ Եսայի ասէ, զի օր տն զօրութեան, ՚ի վր ամ հը-

պարտ

պարտից, և անիրաւութենէ. և 'ի վէր նոր բարձրացելոց, և
վերացելոց, և խոնարհիցին, և խոնարհեցի նոր մարդ՝ և
անկցի հպարտութիւն մարդկան. խոնարհեցան փառքն նո-
ցա, և անմիտ երեւաց նց ծածկեաց զնա. և դարձեալ ասէ
փոխանակ էր հպարտացեալ դասերքն սիոնի, և գնացին, 'ի
բարձր պարանոց, յոնաք ակն արկեալ, և 'ի գնալս իւրեանց
քարշելով, զքղանցսն իւրեանց, և ոտիւք կաքաւէին, և
խոնարհեցուսցէ Տր զիշխանս դստերաց սիոնի, և մերկասցէ
Տր զզարդ նց: Եւ դարձեալ ասէ, և աչք ամբարտաւանք
խոնարհեսցին. և դարձեալ ասէ, լուաք զամբարտաւանու-
թիւն մովաբու. զի հպարտացեալ էր յոյժ, հպարտութիւն նր.
և ախտակալութիւն և ամբարտաւանութիւն, քո բարձի 'ի
քէն: Եւ դարձեալ ասէ, իջցէ 'ի դժոխս փառք քո, և բա-
զում ուրախութիւն քո, 'ի ներքոյ քո մեջս տարածիցէ, և
'ի վր քո որդն յարիցէ: Ո՛ր արդ անկաւ յերկնից արու-
սեակն, որ ընդ առաւօտն ծագէր, անկաւ յերկիր խոր-
տակեցաւ, որ առաքէր առ նմ ազգս, դու ասէիր 'ի միտս
քում, ելից յերկինս 'ի վերոյ քան զաստեղս երկնից, ար-
կից զաթոռ իմ, նստայց 'ի լերինն բարձու. 'ի վր լերան-
ցըն բարձանց, հիւսիսոյ, ելից 'ի վեր քան զամպս, եղէց
նման բարձրելոյն: Տես ով նուաստելի, թէ զինչ յետոյն
ասէ, արդ աւագիլ 'ի դժոխս իջցես, և 'ի հիմունս երկը-
րի, որք տեսանիցեն զքեզ զարմասցին, 'ի վր քո և ասաս-
ցեն, այս այն այրէ որ դղրդեցուցանէր զերկիր. շարժէր
զթագաւորս, որ առնէր զնմ տիեզերս աւերակ. և քակէր
զքաղաքս նց: Եւ դարձեալ ասէ, լուաք զամբարտաւանու-
թիւն մովաբու. և դարձեալ ասէ, վայ 'ի պսակն հպարտու-
թեն, և կոխեսցի լեցի պսակն հպարտութեն. և դարձեալ
ասէ, սպառեցաւ անօրէնն, և կորեաւ ամբարտաւանն:
Եւ Երեմի ասէ, այսպէս ասէ Տր, այդպէս ապականեցից
զհպարտութիւն Յուդայ, և զհպարտութիւն Երսղմի, և
զինչ ասէ, և ցրուեցից զդոսա, և զեղբայր իւր, և ըզ
հայր, և զորդիս իւրեանց, 'ի միասին ասէ Տր. ոչ գթա-
ցայց,

ցայց, ոչ խնայեցից. և ոչ ողորմեցայց. ապականել զդոսա. լուարուք, և ունկն դիր լերուք, և մի հպարտանայք: Եւ Սողոմոն ասէ, խիստն և յանդուգն, և հպարտն ժանտ կոչի: Եւ դարձեալ ասէ, ծնունդ չար, ամբարտաւան աչս ունի, և արտևանամբք իւրովք, հպարտանայ: Եւ դարձեալ ասէ որ ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց, և թէ անէծք որ 'ի սուտս ամբարշտաց, և յառաջին Թագաւորութեանց ասէ, մի պարծիք և մի խօսիք զամբարտաւանս, և մի ելցէ մեծաբանութիւն 'ի բերանոյ ձերմէ. զի Ա՟ծ գիտութեանց Տր և Ա՟ծ պատրաստէ զպատուեալս իւր աղեղունք հզօրաց տկարացան, և տկարք զգեցան զօրութիւն. լցեալք հացիւ նուաղեցին, և քաղցեալք ընակեցան յերկրի: Տր աղքատացուցանէ, և որ մեծացուցանէ: Խոնարհեցուցանէ, և բարձրացուցանէ կանգնէ յերկրէ զտնանկն, և հարուցանէ զաղքատն յաղբեաց. նստուցանէ զնա ընդ զօրաւորս ժողովրդեան, և զաթոռ փառաց ժառանգեցուցանէ նոցա. զի ոչ իւրով զօրութեամբ զօրանայ այր հզօր, որ տկար առնէ զհակառակորդս իւր որ Տէր է:

Մի պարծեսցէ իմաստունն յիմաստութիւն իւր և մի պարծեսցի հզօրն, 'ի զօրութիւն իւր, և մի պարծեսցի մեծատունն 'ի մեծութիւն իւր. այլ այնու պարծեսցի, որ պարծիցին, իմանալ և ճանաչել զՏր: Եւ Դաւիթ ասէ, զաչս ամբարտաւանից դու խոնարհեցուցանես. և դարձեալ ասէ, ամաչեսցին ամբարտաւանք, և դարձեալ ասէ զաղեղունս փշրեաց զզէնս խորտակեաց, և զասպարս այրեաց հրով:

Եւ դարձեալ ասէ ամ՛ արք 'ի մեծութիւն ձեռաց իւրեանց, 'ի սաստէ քումմէ Ա՟ծ Յակոբայ ննջեցին և որք հեծեալ էին 'ի ձիս: Եւ դարձեալ, դու խոնարհեցուցանես ո՞վ զվիրաւորս զամբարտաւանս, և թէ ամբարտաւանութիւն ատելեաց քոյ բարձցի հանապազ, և թէ յամբարտաւանել ամբարշտին այրի աղքատն: Եւ որ ասէ որ խոնարհեցուցանէ զանձն բարձրասցի, և որ բարձրացուցանէ, խոնարհիցի. և երանութեան ասաց զրուեաց զամբարտաւանս

մոք

մտօք սրտից իւրեանց, և քակեաց զհզօրս յաթոռոց. զխո-
նարհս բարձրացոյց, զկարօտս ելից բարութեամբ, և զմեծա-
տունս արձակեաց ունայնս. և սաղմոս ասէ, ոչ բնակէր
'ի մէջ տան իմոյ, որ առնէր զամբարտաւանութիւն. և դար-
ձեալ մի համբառնայք 'ի բարձունս զեղջիւրս ձեր. և թէ
զամ եղջիւրս մեղաւորաց փշրեսցեն, և թէ ըստ չարութե
նց, կործանեսցէ զնս Տր Ա.Ծ մեր: Եւ Յակոբոս ասէ,
և արդ՝ պարծիք յամբարտաւանութեան ձերում, ամ այսպի-
սիք պարծանք չարութեան են: Եւ Յուդայ ասէ, սոքա են
տրտնջօղք. և շոգմոգք, երթեալք ըստ իւրեանց ցանկու-
թեանց. և բերանք նոց զամբարտաւանս բարբառեն. սոքա են
նշաւակեալք շնչաւորք, որք զհոգին Այ ոչ ունին:
Եւ տեսիլն Յովհաննու ասէ, և որչափ փառաւորեաց զին-
քն, և խայտաց, այն չափ հատուցէք նմա զտանջանս. զի
'ի սրտի իւրում ասէր, եթէ յամ ժամ նստայց ես թա-
գուհի, և այրի ոչ ես եղէց, և զսուգ ոչ ես տեսից. վն
այնորիկ 'ի միում աւուր, եկեսցեն 'ի վն դորա, հարուածք,
մահ, և սուգ. և սով, և 'ի հուր այրեսցի, և ասասցեն,
վայ, վայ քաղաք մեծ, որ զգեցեալ էիր զբեհեզս և զծիրա-
նիս, և որդան, և ոսկեզօծս, և զքարինս պատուականս, և
մարգարիտս, զի 'ի միում ժամու ապականեցաւ, այս չափ
մեծութիւն քո, և ամ նաւավար, և ամ որք 'ի տեղիս տեղիս
նաւէին, 'ի հեռաստանէ կայցեն լալով, և արկցեն հող ըզ
գլխով իւրեանց, և գուժալով ձայնիւ մեծաւ լալով. և ըս-
գալով ասասցեն, վայ, վայ քաղաք մեծ, որով ամենեքեան
մեծանայիք, որք ունէին զնաւս 'ի ծովու, վն պատուակա-
նութեն քոյ. զի 'ի միում ժամու ապականեալ կործանե-
ցար: Եւ Ածաբանք եկեղեցւոյ ասեն. ըստ բնական բանա-
կանութեն, որպ հողմն շիջուցանէ զլոյս, և ցամաքեցուցա-
նէ զցօղն. այսպէս և հպարտութիւն սրտին, շիջուցանէ ըզ
լոյս շնորհացն, և ցամաքեցուցանէ զաղբիւրն գթութե.
և որպ պղպջակն և փրփուրն, փութով անցանի, նոյնպէս
և հպարտութիւն և ամբարտաւանութիւն մարդն, և որպ բարձունք
փու

փութով ցամաքին. և հոլովոյ ջրային լինին, այսպէս շը-
նորհքն 'ի բաց հանին 'ի հպարտից, և տնանկ լինին խո-
նարհայն: Եւ ուր խոնարհութիւն յաղթող առնէ զնա մե-
ղութիւս, այսինքն, և հպարտութիւն զնա տարփինութիւս, և
ուր կամեցեալ էին 'ի բաց հանել զհեղեղեալն 'ի մէջ նոր, այսպէս
և հպարտութիւն զշնորհսն: Պարծեալ ասէն վկայութիւն
մնայն է որդիք աշխարհութեան, զոր օրինակ յորժամ զը-
լուխն սաստուցեալ իցէ երեսքն, աչքն 'ի տեսանելոյ ար-
գելանի, և ականջն 'ի լսելոյ, քիմքն 'ի հոտոտելոյ. և բե-
րանն 'ի ճաշակելոյ, և լեզուն 'ի խօսելոյ: Պարծեալ հը-
պարտութիւն նման է ծխոյ, որ որչափ առաւել բարձրանայ,
այնչափ փութով պակասի, ըստ սաղմոսին, 'ի փառաւորելն
և 'ի բարձրանալն իւրեանց պակասեցին, որպէս ծուխ զի պա-
կասի: Պարծեալ նման է յեռանդեան ջրոյ, որ մինչ դեռ
եռեալ անձեռեալ, նուազի: Պարծեալ նման է բշտոյ, լցեալ
հողմով, որ դառնայ յոչինչ ընդ պայթնուլն:
Պարծեալ ասէն հպարտութեան մի տայցես թոյլ, որպէս
երբէք զդայութեանց քոց, զի նա է առ ընկերին քոյ 'ի
կորուստ: Պարծեալ հպարտութիւն է իբրև խորշակ հողմ,
որ ցամաքեցուցանէ յինքեան զաղբիւրն գիտութե, և զհո-
սանս շնորհաց: Պարծեալ ասէն, խոնարհութիւն մեղաւո-
րին է կերակուր Այ, իսկ հպարտութիւն առաքինացուցին:
Պարծեալ ասէն դեղ մարդկային փրկութեան է խոնար-
հութիւն Քի, անմահ է մարդն լինել հպարտ զի
խոնարհեցաւ Այ: Պարծեալ ասէն որքան յառաջանաս
'ի ճանաչումն քո, այնքան մօտիս 'ի ճանաչումն Այ:
Սբ զի որքան նկարագրեն, նկատես այնքան բազում զար-
շութիւնս պատանես 'ի քեզ: Սբ Այնովրի ասէն ճշմարիտ
Այ ծառայք, ոչ խնդրեն տեսիլս կամ մարգարէութիւն, այլ
միայն, զի ճանաչեսցեն զմեղս իւր, ուր և դարձեալ ասէն,
ով անզգոյշ կենաք, զքանիս խաբեցեր, զքանիս կուրա-
ցուցեր, յորժամ ճանաչեալ լինիս ոչ ինչ ես, ոչ աւրինեն
զքեզ, ոչ ծանաչեն զքեզ, և որք իմանան խոտեն զքեզ:
Պար

Դարձեալ ասեն, արդ նա զդժուարաշար կենայ որ հայելով ի կարծութիւն այսր կենացս, ոչ նկատէ ի վայելչութիւն նորա, այլ ի վախճանն, զի ի վախճանէն իմացի ոչինչ գոլ, որ անցուցանելով հեշտացուցանէ։ Եւ դարձեալ ասեն զտէր զիմաստութիւն, եթէ ողբասցես զմեղս առաջին կենացն, եթէ անգոսնեսցես զցանկութիւս աշխարհի, եթէ յաւիտենական երանութեանն բովանդակին բաղձանօք փափագիցես, գտար զիմաստութիւն, թէ առնուս զհամ՝ իւրաքանչիւր սոցա, ում և դարձեալ ասեն, եթէ որ բերանով սրտին ճաշակեսցէ, թէ զի՞նչ քաղցրութիւն երկնային վարձուցն, և զի՞նչ ողջախոհ ընկերակցութիւն հրեշտակացն, և զի՞նչ անհպանելի տեսութիւն ամենասուրբ երրորդութեանն. նա որ ինչ յաշխարհի է, դարձցի նմա ի դառնութիւն։ Եւ դարձեալ ասեն վ̅ էր փքանաս, ով մարդ մեռեալ մարդ, վ̅ էր պանծուցես զքեզ ով գարշահոտ շարան։ Դարձեալ ասեն հպարտութիւն հետևի գովութեանն և գովութիւն վայելչի ի նմանէ, ում յանարժանից։ Դարձեալ ասեն հպարտութիւն դնէ զինքն և զիւրսն ի բերան մարդկան, վ̅ այնորիկ միշտ խածատի ատամօք նոցա։ Դարձեալ ասեն որ երկնչի յանկմանէ, պարտէ երկնչիլ ի բարձրագոյն տեղւոյէ, և որ երկնչի ի գործելի հիւանդութենէ, պարտէ խորշել ի պատճառաց հիւանդութեանց։ Դարձեալ ասեն տես թէ ուստի գաս, և զամօթի հոր թէ ուր ես, և հոգւոց հան թէ յո երթաս և դողա, թէ ի մեծ ահեա, ուստի եկեալ է մարմին քո. գտանիցես զի յապականութենէ, և ի դըտութենէ. զի յաղտեղութենէ ծնանիմք, և ի խաւարին սընանիմք։ Դարձեալ ասեն, որքան որ ի բարձրագոյն տեղւոջ կացուցեալ, այնքան ի մեծագոյն վտանգս շրջի։ Դարձեալ ասեն երկու փառք դնեն առաջի մարդկան, ընդունայն և ճշմարիտ. զի որ զմինն սիրէ, պարտէ զմիւսն ատել։

Իսկ իմաստասէրք արտաքնոցն ասեն, մեծ խոհեմութիւն է առն ճանաչել զինքն։ Դարձեալ ոչ գոյ թշուառականագոյն քան զայն որ ոչ ճանաչէ զինքն թշուառութիւն։

Դար

Դարձեալ ասեն թէ բարեգոյն է հպատակիլ տէրութեան, քան
լինել տէր և բռնաւոր: Դարձեալ ասեն բարեգոյն է լաւա-
պէս մեռանելն, քան ամբարտաւանապէս կեալն:
Դարձեալ ասեն որ առնէ զշնորհս ամբարտաւանից, նը-
մանի այնմ որ սնուցանէ և կերակրէ զշուն օտարաց, որ
զկնի յագեցման հաչէ՛ ընդդէմ նմին: Դարձեալ ասեն
լաւագոյն է աղքատութիւն ընդ խոնարհութեան, քան ամբար-
տաւանութիւն ընդ ընչաւէտութեան: Դարձեալ ասեն ոչ կա-
րէ մարդ ծառայել փիլիսոփայութեան և ամբարտաւանութեան,
զի մինն խնդրէ անզբաղ կեանս, իսկ միւսն զսնոտի փառս:
Դարձեալ ասեն երկու իրք զարմացուցանեն, առաջին թէ
ընդէ՞ր տգէտն, 'ի գովաբանելն բերկրիցի, և երկրորդ թէ
ընդէ՞ր իմաստունն, 'ի պարսաւելն տրտմիցի: Դարձեալ ա-
սեն իմաստունն մինչ պարսաւի, ոչ տրտմի, զի ոչ ունի
ամբարտաւանութիւն, և մինչ գովի ոչ հպարտանայ:
Դարձեալ ասեն երանի զաւառին յորում բնակեն խոնար-
հագոյն իմաստունք, և յորում տիրեն ճշմարտաբանք, և վայ
որ հակառակն են: Դարձեալ ասեն, որ ոչ կարէ կառավարել
զինքն, այն ոչ կարէ կառավարել զայլս: Դարձեալ ասեն
մարդ բազմիցս պարտի ակն արկել 'ի հայելին, առ 'ի տե-
սանել զերեսս իւր, զի եթէ իցէ գեղեցիկ. ամաչեսցի գոր-
ծել զտգեղութիւն: Իսկ եթէ իցէ տգեղ, ամաչեսցի բար-
դել զտգեղութիւն տգեղութեան: Դարձեալ ասեն բոլոր
իմաստութիւն է հիմնեցեալ 'ի վերայ խոնարհութեան:
Իսկ բոլոր տգիտութիւն, 'ի վերայ հպարտութեան և ամբար-
տաւանութեան: Դարձեալ ասեն, յամենայն կերպարանութեան
կալ 'ի ձեռին քում կշիռ, զի առ այս եկիր յաշխարհ առ
'ի նկատել թէ 'ի նոցանէ, յարգագոյն է. այսինքն խոնար-
հութիւն և ամբարտաւանութիւն: Իսկ սրբազան հարքն ա-
սեն, ըստուգապէս մեծ նաւէ, որ խոնարհութեամբ մերձաւոր
Աստուծոյ իցէ, քան հպարտութեամբ և ամբարտաւանութեամբ հե-
ռաւոր: Դարձեալ ասեն ոչ ոք կարէ ըստանալ զԱստուած,
բայց միայն ջանիւք, քրտամբք խոնարհութեամբ, և միշտ աղօ-
թիւք:

թիւք: Դարձեալ ասէ ոչ իւիք կարէ ընտանալ ոք օգնական զԱ̃յ, բայց միայն խոնարհութիւ: Դարձեալ ասէ, եթէ որ ճաշակեսցէ զքաղցրութիւն խոնարհութեան Ք̃ի, առեսցէ նա միանգամայն, զկենցաղոյս այսմիկ, զհպարտութիւն և զամբարտաւանութիւն զոչ ախորժելիս:

Դարձեալ ասէ որ լիջցէ խոնարհութիւ մինչև ՚ի խորս դըժոխոց, մինչև յերկինս բարձրասցի, ընդ Ք̃ի, որ խոնարհեցուցանէ զանձն բարձրասցի, և թէ բարձրասցի ամբարտաւանութիւ, մինչև յերկինս՝ մինչև ՚ի դժոխս ներքինս լիջցէ, ըստ այնմ՝ որ խոնարհեցուցանէ զանձն բարձրասցի: Դարձեալ ասէ իմաստասէրք իմաստասէր կոչեմ՝ ես, ոչ զյոքնագէտն, և ոչ զայն որ կարող գոյ բազում ինչ առնուլ ՚ի բերան, այլ զայն որ ամբիծ և անարատ վարքս ընտացեալ ունի, յինքեան խոնարհութիւ և հեզութիւ, տեղի չտալով հպարտութեան, և ամբարտաւանութեան:

Դարձեալ ասէ, իմաստասիրութիւ է նմանութիւն Ա̃յ, [illegible] հեզութեան և խոնարհութեան, ըստ Ք̃ի, ես հեզ եմ, և խոնարհ սրտիւ. և թէ արա առ մեզ ըստ հեզութեան քում:

Դարձեալ ասէ իմաստասիրութիւ է խոկումն մահու, այսինքն խոկալ զմահ հպարտութեան և ամբարտաւանութեան, և զայլ խէնէշացուցչաց. քանզի այնէ ճշմարիտ իմաստասէր, որ զամ փառաւոր մեղութիւս մահացուցանէ՝ զմեղս, և ըզ յանցանս: Եւ հանապազօրդս ասացից, ով և մարգարէն կնքելով, եղբայրացուցանէ ասելով, թէ սաստեցեր ամբարտաւանից, անիծեալ ոյք խոտորեցան ՚ի պատուիրանաց քոց. և Սողոմոն ասաց անէծք Տ̃ն ՚ի տունս ամբարշտաց. և թէ այսպիսեօք ամբարտաւանն պարգևակէլի, անիծիւք Ա̃յ, մարգարէից, առաքելոց, Ս̃բ հարանց, և ամ իմաստնոց, ապա զի՞ որդ կարասցէ որք այսպիսեօքս պատեալ իցեն, հըլովիլ, և մերձենալ, յաճախ, և ՚ի սոսկալի խորհուրդն. յաղագս որոյ ասաց մարգարէն, ընդ այնպիսոյն և հաց ոչ ուտէի: Եւ Ա̃ծ ասաց, ոչ բնակէր ՚ի մէջ տան իմոյ, որ առնէր զամբարտաւանութիւն, չէր յաջողեալ նմա առաջի

աչաց

աչաց իմոց. վ՜ որոյ յոտս սրբազան ճաշակողացդ անկեալ աղաչեմ, նախ սրբել զանձինս, յայսպիսոյ աղտոյ, և ապա մատչիլ 'ի ճաշակումն խորհրդոյս. քանզի ոչ ինչ հաղորդութիւն Ք՜ի ընդ բելիարայ. վ՜ զի հպարտութիւն զխաւ և գործէ բանսարկուին: Իսկ խոնարհութիւն Ք՜ի. վ՜ որոյ երկաքի ներհակ քս, ոչ միաբանին ընդ միմեանս:

Եւ դու ով սրբազանդ, որ կամիս Ք՜ի հաղորդս 'ի վեր ելանել, ուրեմն պարտիս 'ի միւսոյն 'ի տար անդր խոտորել. զի յաջողակ լինիցի հաղորդութեանդ, ը՜ պրոկղի. քանզի այսու զանազանի, և ճանաչի, քրիստոնեայքն, և բելիարեանքն: Յաղագս այսորիկ որ ունի զնշան գազանին, 'ի ճակատն իւր, և 'ի ձեռին իւրում, ոչէ պարտ հուպ լինիլ. քանզի յորժամ յանդգնիցի առ ժամայն առն լինի, և տեղի բեեղզեբուղի, ո՜պ Յուդայ, որ ընդ մերձիլն, խոկոյն եմուտ 'ի նա սատանայ: Իսկ որ ոչն ունիցի, զնշանն զայն, այլ զՔ՜ին, ընդ սրբազանից զնդիցն պսակի. և հոգւոյն սրբով լնանի: Ըստ այնմ թէ ամենեքեան լցան հոգւոյն սրբով, և ընկան խօսել յայլ և յայլ լեզուս ո՜պ հոգին տայր նոցա բարբառել, վ՜ որոյ աղաչեմ և աղերսեմ; մի տայցէք տեղի սատանայի. այլ հեզոյն Ք՜ի. զի ասաց, ես յո՞ հանգեայց եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս, և դու ով սրբազան ճաշակող, որ կամիս հրաւիրել 'ի քեզ, զարքայն երկնից, հան զբանսարկուն. զի ոչինչ հաւասարութիւն է, տաճարի Ա՜յ մեհենից. զի բնութիւն է որ ամենայն ինչ լցեալ իցէ, իւրք ինչ ոչ տանի այլ ինչ. վ՜ որոյ պարտ է հեղուլ զայն, զի լցցէ միւսոյն, ո՜պ և ասէն ա՜ծ բ՜նք, հանդերձեալս լինել բարեահեղ զչարն, մեղու կամի լինել 'ի քեզ ա՜ծ, այլ թէ դու լցեալ ես լեղեաւ, ո՞ր դիցէ զմեղրն. յաղագս այսորիկ, պ՜տրաստեա զանձինս քո, հեզմամբ հպարտութ՜դ և ամբարտաւանութ՜դ, զի լցցիս մարմնով և արեամբ ա՜ծ ու՜ն, և արտափայլիցի, հոգիս քո անճառ փառաց ա՜ծ ու՜ն, ո՜պ երանելի և երջանկափառ Ա՜ծազան առաքեալքն, փառաւորելով զՀայր և զՈրդի, և զՍ՜բ Հոգի, այժմ և յանընդհատ յաւիտեանս ամէն:

Եւ

## Գլուխ ԼԹ։

Եւ թէ պարտ ճաշակողն ի սոսկալի խորհրդոյն՝ խոյզ առնել և որոնել ըզ քէն և չխորհրդակցել յամ նենգութենէ, և յոխակալութենէ. և ի չարաւ թենէ նախանձու, և ապա մերձել յՍ. ճաշակութեան։

Եւ յետ այնորիկ պարտ է ճաշակողին յանմահական խորհրդոյն, քննել զինքն, զի մի իցէ յինքեան ոխս ինչ և կամ՝ նենգութիւն ընդ ումեք. զի ըստ բնութեանն, ուր իցէ ոխ, ոչ անցանէ ընդ այն աղաւնին, և կամ՝ բնակի. և ուր դառնութիւն՝ քաղցրութիւն. և ուր խռովութիւն, խաղաղութիւն, և զայլս. քանզի ճաշակումն այսէ հաղորդութիւն լուսոյ. ապա զիա՞րդ մարթի մերձիլ խաւարեալն լուսոյս։
Եւ վն այսորիկ 'ի նմանութեան աղաւնոյ, երևեցաւ Տէր Հոգին Սբ, 'ի վր մկրտեցելոյ Բանին, զի յայտնեսցէ թէ որ ոչ ունի դառնութիւն նախանձու, և նենգութեան, նա կարէ հպիլ 'ի հաղորդութիւն սոսկալի խորհրդոյս։ Եւս և զի ունի սա, զզօրութիւն սիրոյ, որ զմոլորեալն դարձուցանէ. քանզի հակադարձաբար է, և ներհակօրէն, որ նա դառնաշնչութեամբն իւրով, զորս տարափախուցանէ, սա շողոքորթելով դարձուցանէ. և զորս տարագիր առնէ 'ի տանէ, և սա քաղցր ձայնիւ հրաւիրէ 'ի տուն՝ նա զորս դառնութեամբ ըսպանանէ, և սա քաղցրութեամբ կեցուցանէ։ Եւ այսպէս նոյն՝ նախանձոտ և նենգաւոր ունի զնմանութիւն օձի, որ յար և յաւէժ, հալածէ զՀոգին Ս̄ Սբ. 'ի դրանէ, և 'ի սենեկէ իւրմէ. զի ունի զտեսակաւորութիւն իժի, զի ըն- նութենէ նորա, որ 'ի յղանալն, զհայրն ըսպանանէ, և 'ի ծնանելն զմայրն. քանզի հայրն զսերմն ընդ բերան 'ի գլին ածէ, զոր ընդ հեղուլն, խեղդի մեռանի, և էգն ընդ առնուլն յղանայ, և 'ի ծնանելն, վն զի ոչ ունի իգական որովայն, ծակեալ զկուշտս մօրն ելանէ, և նա և անդէն

մե

մուտն։ Եւ այսպէս ոչ հայրն, և ոչ զմայրն խնայէ, ՚ի ըսպանմանէն. յաղագս այսորիկ սրբազանն Մկրտիչ, նմա զհրէայսն նմանեցոյց, որք զմարգարէս յիսկզբանն ըսպանին, որք սերմանէին ՚ի նոսա զբանն կենաց, ըստ այնմ այլ է որ սերմանէ, ես առաքեցի զձեզ հնձել, զոր ոչ դուք սերմանեցիք, այլք սերմանեցին, և դուք ՚ի վաստակս նոցա մտիք. այսինքն սրբազան մարգարէքն։ Իսկ մայր սրբազան առաքեալքն, որք ծնանէին զնոսա բանիւն ճշմարտութեան։ Այսպէս հրէայքն, զհայրն և զմայրն ըսպանին։

Վ̄ այնորիկ ասաց Ո․ծակիցն, ծնունդք իժից։ Այսպէս և նախանձոտն և նենգաւորն, և ոխակալն, նմանապէս օձ, և ծնունդ, իժից կոչեցաւ զհրէայսն, որն՝ ոչ և ասայն, հայրքն ձեր կոտորեցին զմարգարէսն, և դուք զչափս նոցա լցիք։ Եւ զայս ամ՝ հոգևորապէս առնուլ լինի, զի օձ և իժ զսատանայ նշանակելով և զնենգաւորս, զի որդ նա է առաջնոյ մարդոյն, նախանձելով եհար զնա, և եսպան, սոյնպէս և նախանձոտ հրէայքն, ընդ երկրորդ մարդոյն, զոր հարին և ըսպանին, յաղագս առաջնոյն ասէ, Ած ըզ մահ ոչ արար, այլ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ։ Եւ յաղագս երկրորդի մարդոյն ասէ, զխաչ պիղատոս, եթէ նախանձու մատնեցին քահանայապետքն, որք և զամենայն հաւանեցուցին, զի ըսպանցեն զնա. վ̄ այնորիկ բարւոքապէս ասաց որն, ցհրէայսն դուք ՚ի հօրէ սատանայէ էք, զի նա մարդասպան էր ՚ի սկզբանէ, և ՚ի ճշմարտութեան ոչ եկաց, զի ոչ գոյ ճշմարտութիւն ՚ի նմա, և դուք ես կամիք զչափն լցուցանել, զի խնդրէք զիս ըսպանանել, զայր մի որ ձեզ զճշմարտութիւն խօսեցայ։

Օհ որդ նա նախանձեցաւ ՚ի վերայ Ադամայ, առաջնոյ մարդոյն, նոյնպէս և դուք կամիք զգործս նր և զթերին լցուցանել, զերկրորդ Ադամ ըսպանանել, հայրն ձեր ըզ հայրն հասարակաց եսպան, և որդիքդ զորդին նորուն կամիք ըսպանանել, առաւ ըսպանմանն գործոյ վկայէք զանձանց, եթէ որդիք էք նորա։ Եւ այս ըստ կարգի բնութեան

եր

երևի 'ի ձեզ, որ որդին չարի. չարագոյն քան զծնօղն լի-
նի. նոյնպէս և դուք չարագոյն, քան զծնօղն լինիք, ո՜վ
իժիւն ցուցաւ, զի նա մարդ և եթ եսպան: Իսկ դուք
մարդ կատարեալ, և Ա՜ծ կատարեալ կամիք սպանանել:
Վ՜սորոյ Երաւի ասաց. ծնունդք իժից, որ զչարագունու-
թիւն բացայայտեաց: Եւ ես և նոյնպէս իրաւարար ասա-
ցի, օձք և ծնունդք իժից. որ նշանակէ թէ նա մինէր, և
միայնաբար, ընդ միոյն պատերազմեցաւ և նախանձեցաւ և
եսպան: Իսկ ես ոչ միայն մարդեմ՝ կատարեալ այլ և Ա՜ծ
կատարեալ որ երկաքումբք ընդ երկաքումբքս նախանձիք,
և կամիք սպանանել, այսինքն զկատարեալ Ա՜ծութիւն, և
զկատարեալ մարդկութիւն. զի առաջ օձ, որ զառաջնոյ նը-
շանակէր, օձն առաջին, և ծնունդք նորին, որ էք դուք.
ահա հայրն ձեր, և դուք ծնունդք նորին, կամիք երկո-
քումբք սպանանել զիս, որ և իսկապէս սպանին:
Եւ երկոցունցս այսոցիկ սպանութիւն, այսինքն, առաջ-
նոյն մարդոյն, և երկրորդին զինչ գործեաց, և 'ի կիր է
արկ. եթէ ոչ նախանձն չար: Վ՜ասորիկ և նախանձոտն,
և նենգաւորն նմանի այսոցիկ, այսինքն, առաջնոյն Ա՜դա-
մայ սպանողին, և երկրորդին Ա՜դամայ: Վ՜սորոյ յար և
յաւէժ, նախանձոտ, նենգաւորքն մարդասպանք կոչին, ըստ
այնմ՝ որք արիւն ահեղք և նենգաւորք մի համարեսցին
զաւուրս խուրեանց, այլ լիցուցես զնմ՜ 'ի դուռ ապականու-
թե՜ն, և այլ մի ևս կարասցեն համատիլ. քանզի նախան-
ձոտն, և նենգաւորն, յար և յաւէժ մարդ սպանանէ. զի
կամ՝ մոօք սպանանէ, և կամ՝ խորհրդով, և կամ՝ բանիւ, և
կամ՝ գործով: Ա՜ռաջինն, ո՜վ եսաւ զՅակոբ, խորհրդով,
ո՜վ մեռաւան նահապետքն զՅովսէփ, բանիւ ո՜վ փենինայ
զաննայ, գործով, ո՜վ կայէն զԱբէլ. և այնպիսիքն այս-
պիսեօք, միշտ վարելով նմանիւն նոցա, յորժամ՝ տեսանեն
զոք 'ի փառս, և կամ՝ յառաջադիմութիւն և 'ի պատիւս, և
յայլ ինչ ճոխութիս զբարեկին զայն զնախ ատացեալն,
կատարեն, ո՜վ յաղագս յառաջնոյն ասէ. և ասէր եսաւ 'ի
մտի

ձորի խրում, Մերձեցին առաւելք կարեաց հօր իմոյ, զի ըսպանից զԱբէլ զեղբայր իմ: Եւ յաղագս երկրորդին ասէ, տեսին զնա եղբարքն յառաջագոյն, 'ի հեռաստանէ մինչեւ 'ի մօտ եկեալ էր առ նս, զխորհուրդ վատ 'ի մէջ առին, ըսպանանել զնա: Եւ վս երրորդին ասէ, եւ ասէ կայէն ցԱբէլ եղբայր իւր, եկ երթիցուք 'ի դաշտ, եւ եղեւ իբրեւ չոգան, 'ի դաշտն անդր, յարեաւ կայէն 'ի վս Աբէլի, եղբօր իւրոյ, եւ եսպան զնա: Եւ յաղագս չորրորդին ասէ, խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ, եւ բանիւ անօրէնութեան պաշարեցին զիս, եւ թէ սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, եւ թոյնք իժից 'ի ներքոյ շրթանց նոցա: Եւ սակս այսորիկ ասաց մարգարէն, զայր արիւնահեղ եւ զնենգաւոր պիղծ առնէս դու տէր: Արդ՝ եթէ պիղծ եւ ըսպանող իցէ, զի՞նչ արդ որ զայսպիսի ախտս ունիցի, եւ հաղորդական սոցին, զի՞ արդ առաւ կարասցէ հաղորդիլ յանմահական խորհրդոյն: Ըստ այնմ խօսեցաւ ասէ մարգարէն, 'ի դիմաց Քի, թէ բերան մեղաւորի, բերան նենգաւորի բացաւ 'ի վս իմ. եւ հայրն երկնաւոր ասէ, գազան չար եկեր զորդի իմ: Պարծեալ նախանձոտքն եւ նենգաւորքն, զնմանութիւն սատանայի բերեն յինքեանս յառակապէս, զի որպէս տէրն ասաց, յայսմ ծանիցեն ամ թէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս, եւ հակ սմին սատանայ եւս կարէ ասել, յայսմ ծանիցեն թէ իմ աշակերտք էք, եթէ ատիցէք զմիմեանս. քանզի միշտ անօրէնութին սատանայի է նմանութիւն եւ յաւակնութի. որպէս տէրն Քս ասէ. վս այնորիկ ասաց առաքեալ, իսկ պտուղ հոգւոյն այս է, սէր, խաղաղութիւն, եւ այլն, եւ պտուղ սատանայի, հակ սորին, վս զի անօրէնութիւնք կուրացուցիչ մտաց, ըստ այնմ թէ նախանձն կուրացոյց զաչս նոցա, զի մի տեսցեն աչօք, եւ իմասցին սրտիւք, եւ դարձցին եւ բժշկեցից զնս. քանզի որ ամ թոյնք, ունի հնարաւորութիւն բժշկելոյ, բայց իժի եւ քարբի ոչ երբէք. այսպէս ամ մոլութեանց, ունի երբեմն բժշկութիւն, բայց նենգութիւն եւ ոխակալութիւն, եւ ոչ երբէք. ըստ

ըստ այնմ սրտմտութեան իմիք անճարելին առանց բժշկութեան ։ Օհ այնքան սրտմտութբ, և խղճմտաբար խածանէ զոգւոյս, և սաստկաբար հեղու պղթունս իւր, մինչ զի ոչ երբէք մայ թոյլ, հասանիլ բժշկական դեղոց գոնեայ տարաբաղ-ձյէ զբանն, այլ խոկոյն ընդ հորձանելն ըսպանանէ, վասն այնորիկ անճարելին լինի բժշկութիւն ։ Նայելի էր թոյնն առաջնոյ օձին, որ եհար զմարդն առաջին, զի խոկոյն ը հարկանելն ուժգնապէս մեռաւ, ոչ սակայն յուսով յա-րաւ ուտիցես մահու մեռանիցես ։ Նա այնպէս փողփողա-կի և փոյթ ընդ փոյթ մեռաւ ՚ի հարկանելոյն, մինչ զի ոչ մնաց նշան ինչ կենդանութե, զի ՚ի հասանիլ և ժամանել բժշկապետին, թերևս ողջութի ինչ գտանէր, այլ իբրև ժամանեաց Ճարտարագոյն բժիշկն Ն՟Ճ, և մնաց նմա զնմ զարուեստ իւրոյ բժշկութեն, ոչ ազդեաց ՚ի մէջ նմա, վ՟ն որոյ մեռեալն հրամայեաց ՚ի բաց տանել. և առ հողն հողոյ, ըստ այնմ՝ հող էիր և հող դարձցիս ։ Օհ ո՜վ սովորութիւն մեռեալն. արարքս տանել ՚ի տունէ, զի մի զարշադագոյն հոտն նոր, ժխտեսցէ ուժգ, որպէս արար և Ն՟Ճ և ընդ մեռելոյն Ն՟դամայ, հանեալ արձակեաց զմե-ռեալ դին, ՚ի տանէ խուղէ յանմահութենէ, զի թաղեսցի ՚ի հողն ուստի առաւ ։ Արդ եթէ նախաստեղծն ՚ի հար-ման իմիք յայնմանէ, ամենայն երրորդութիւն ոչ կարաց զնա բժշկել, ապա զի մարդ կարասցէ ամենայն մարմին և արիւն որդւոյն Ն՟Յ, Ճաշակմամբ զնա բժշկել. այլ մա-նաւանդ առաւել ևս սպանել, ո՜վ Յուդայն, որ մինչև ոչ էր հաղորդեալ, ՚ի թիւս երջանիկացն էր համարեալ, և հա-մարեալ, այլ յորժամ թունիւն, այնու էր հարեալ, առ-ժամայն ընդ Ճաշակելն, եմուտ ՚ի նա սատանայ, ո՜վ Ն՟դամ ՚ի դրախտին էր, այնպէս և սա ՚ի թունոյն, սրբաշնորհից էր ։ Օհ ո՜վ նա խոկոյն ընդ Ճաշակելն մեռաւ. նոյնպէս և սա ընդ Ճաշակելն, ո՜վ և սատանայ չոգաւ և խեղդեցաւ, և հե-ղաւ ամ փորն ։ Նայպէս լինելոյ և այնոցիկ, որ թունոյն այնու ինչն հարեալ. Ճաշակելոյն զկենդանաբար մար-

մի

մին և արեան որդւոյն Ա՟Յ. յաղագս այնորիկ ազդարարէ տ՟րն ահաւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ՚ի սեղանս, այսինքն, ահաւասիկ ձեռն հարեալ ; յիշեն որ անարժանինէ բժշկութեն, ընդ իսէ ՚ի սեղանս. Ամէն այնպիսոյն, որ այնպիսեօք արկանէ զձեռն ՚ի սկաւառակս, այսինքն, խորհրդմանն, առնուլ զհացն Ա՟Յ, և ՚ի սկիհն առնուլ զարիւն խմ՟անրին Ա՟Յ, լաւ էր թէ ձէր ծնեալ մարդն այն, քան թէ այնպիսի համարձակ արձակեալ էր զձեռն ՚ի սեղանս յայս, և ՚ի սկաւառակս: Որդ այսու չարագոյն թուի, սա քան ըզ Յուդայ, զի նա թէպէտ մատնեաց զնա, սակայն քահանայապետիցն և իշխանաց տաճարին, և ըսպասաւորաց տանն Ա՟Յ, և յաղթին խորանելի: Իսկ որք նենգութեամբ, և ատելութեամբ, մատնեն զնա ՚ի ձեռս սատանայի և դիւաց նորին: Նա եարկ զնա ՚ի բանդս Ա՟ծապաշտից, և պաշտօնէից օրէնացն Ա՟Յ: Իսկ սա արկանէ ՚ի բանդս սատանայի, և դիւաց նորին, և Ա՟ծապաշտից ետ թքանել և հարկանել, ապտակել, ծաղրել, այպանել, և զայլն: Իսկ սա սատանայի և դիւաց նորին, վ՟ն որոյ թուի թէ սորա առաւել եղեն չարագոյնք, քան զնա. յաղագս այնորիկ ասաց տ՟րն, որդի մարդոյ երթայ որպէս և գրեալ է վ՟ն նորա, բայց վայ մարդոյն այնմիկ, յոր ձեռս որդին մարդոյն մատնիցի. այսպիսեացս լաւ էր թէ չէր ծնեալ մարդն այն, և ձնշակեալ, քան թէ ծնեալ և ձնշակեալ. և յայնպիսեաց նախատեսցն մատնել: Եւ յաղագս այսորիկ ասաց մարգարէն, եղիցին սեղան նոցա առաջի նոցա յորոգայթ, և ՚ի գայթակղութիւն, խաւարեսցին աչք նոցա զի մի տեսցեն, և զթիկունս նոցա հանապազ կորացո. արկցես ՚ի վ՟ր նոցա զբարկութիւն քո, բարկութիւն սրտմտութեան քոյ հասցէ ՚ի վ՟ր նոցա, եղիցին բնակութիւնք նոցա աւերեալք և ՚ի յարկս նոցա մի ոք իցէ որ բնակիցէ. զի զոր դու հարեր հալածեցին և ՚ի վէրս ցաւոց իմոց յաւելին, վ՟ն որոյ դիր զմեղս ՚ի վ՟ր մեղաց նոցա, զի մի մտցեն յարդարութիւն քո. ջնջեսցին նոքա ՚ի դպրութենէ քումմէ կենաց, և ընդ արդարս քո մի գրեսցին:

ընդ

ընդէր ։ Ո՛չ չարագոյն դատաւ քան զմատնելն Յուդայի, վ̅ն նախ ասացեալ պատճառանացն, վ̅ն այնորիկ ասաց, ճարտարագոյն բժիշկն, տեսնելով չարագոյն թշուառութիս զայս թէ յորժամ կամիցիս հաղորդիլ, ՚ի սրբազնագոյն խորհրդոյս և հպիլ ՚ի սեղանս Ա̅յ, և անդ յիշեսցես բազմայոյշ քննութ̅ եթէ ունիցի եղբայր քո ինչ խէթ ըզ քէն, թող վաղվաղակի զպատարագն քո ՚ի վ̅ր սեղանոյն, և երթ նախ հաշտեաց, և ապա եկեալ մատուսջիր․ քանզի դու հարեր զնա, և նա ՚ի քէն խեթեալ, վ̅ն այնորիկ դու ինքնին, պարտիս դառնալ, և բժշկել զնա․ զի դու երևեցուցեր և ներածեր զթոյն իժին յանձն նորա․ վ̅ն այնորիկ դու վաղվաղեա ։ Ապա թէ ոչ երբեմն նա բժշկի, որպէս Ադամ, բայց դու վիրաւորողդ, ոչ երբէք․ ապա թէ դու դարձցիս, և զխայթեալն քո բժշկեսցես, եղիցիս դու և նա ազատեալ ։ Պատրաստեալ նմանի իժի և քարբի, զի պատմի յաղագս քարբի, թէ հայելովն միայն ըսպանանէ զկենդանիսն, նոյնպէս և նենգաւորն, միայն հայելովն ՚ի մարդ, ըսպանանէ զհոգիս․ զի այնքան ամբոխէ զնա մտօք, խորհրդով, բանիւ, և գործով, մինչև կարէ որպէս ըսպանեալ առոյ կերակուր նախատալաւարին իւրոյ, այսինքն, առաջնոյ քարբին, վ̅ն որոյ անճարին լինի, և առանց բժշկութեն ։ Այլ յորժամ զանիպ նմանութեն Քր̅ի, անոխակալին, և աննենգ բնութեն, յայնժամ զօրացեալ նովաւ, կոխեսցես զզօրութիս նր̅, ըստ այնմ ՚ի վ̅ր իժի և քարբի գնասցես դու, առ ոտն կոխեսցես․ և այսու որով, այսինքն ողորմական Քր̅ի, և քաղցրութ̅ նորին, զոր ասացն թէ ունիցի եղբայր քո, խէթ ինչ զքէն, այսինքն, խայթուածս և խոցուածս, և վիրաւորութի, բարձ զայն, և ապա եկեալ հուպ լեր ՚ի սեղան Տն̅, և ճաշակեա, զոր ինչ եդեալ կայ ՚ի նմա ։ Օ՜ փառն խորովեալ․ զհացն Ա̅ծ ընկալ, և զգինին Ա̅ծացեալ ։ Արդ եթէ այսպէս մերձիցիս և հպիցիս, ընդ սրբազանիցն պատկիցիս․ զքարբն կոխեսցես ։ Պատրաստեալ ունին սոքա և այլ ևս ինչ յանկութ̅, որով

որով սրտմտութիւն նոցա, լինի առանց բժշկութեան, զի յորժամ թուլիցէ կամիցի թողել, առժամայն դնեն զմի ունկն ՚ի վր գետնոյ, և ՚ի միւս ունկն մածանեն զտուտն, զի մի լուիցեն զձայն թովչին. և ՚ի նոցանէ կայլցին, ըստ մարգարէին խցեալք զականջս իւր, զի մի լուիցէ նա զձայն թովչին, ճարտարի, և մի առցէ դեղ ՚ի դեղատուէ իմաստնոյ: Որդ իժ և քարբէ նենգաւորն, և նախանձոտն ոխակալն. և ճարտար թովչիչ Ք՜Ս և առաքեալք նորին, որ միշտ քարոզութեամբ և ամենայն վարդապետութեամբ կամին թողել, և ըմբռնել բանիւ ճշմարտութեան. և նոքա ոչ կամին լսել, եթէ ըմբռնիցին ՚ի ճշմարտութենէն. այլ դնեն զմի ունկն, ՚ի վր հողոյ, այսինքն ծանրութեան, ըստ այնմ՝ ականջօք իւրեանց ծանուծեա լուան, և զտուտն ՚ի միւս ունկն, այսինքն, յուսահատութիւն, որէ կատարումն և յետին չար, և այսպէս ոչ լսեն, թովչին ճարտարի, զի մի առցեն դեղ ՚ի դեղատուէն, այսինքն բժշկութ, ՚ի բժշկապետէն, վ՜որոյ լինի առանց բժշկութեան, վ՜որոյ որ ունի զայս ախտ, և նմանութիւն, ոչէ պարտ մերձիլ ՚ի սոսկալին յԱ՜յն խորհուրդ, այլ պարտէ լինիլ իբրև զաղաւնի միամիտ, երամասէր, ընկերասէր, մոլանելոց դարձուցիչ, գրգող, աչօք գեղեցկադոյն, և բարձրաթռիչ, որ ընդ թռչելն ծափս ծափի հարկանէ, տիրասէր և զօթևանս տ՜ն իւրոյ սիրող, և զայլ ընկերս ՚ի նա ածող. և զայլս զօրս յաղթութինէ, և առաւ հպիլ, ՚ի ճաշակումն յահաւոր խորհրդոյն: Վարձեալ ոխակալութեան և նենգութեան, է կուրացումն մտաց, ըստ այնմ՝ թէ նախանձ կուրացոյց զաչս նոցա, զի մի տեսցեն աչօք, և իմասցին սրտիւք, և դարձցին, և բժշկեցից: Ով ո՜ր չորացեալ ծառն անպտղինէ սաղարթանալ, և պտղաբերել. այսպէս և նախանձոտայն, և նենգաւորացն, անպտղինէ սաղարթելոս բարութեան, և առաքինութեան, բուսաբերել: Ով որքան առոգեսցի, և մշակիցի, անօգտութիւն ներբեիցի. զոր օրինակ տ՜րն հրեից, և Յուդայի վերբերեցոյց: Ով որքան զբժշկութիւնս և զհրաշագործութիւնս ցուցանէր,

նորա ըմպանանել խորհէին, և կամէին, և ընեղ զերուղ 'ի նմին աւէին, և իշխանութիւն դիւաց զըմբռնելոյն, և ըզ զարմանալիսն բաց երևեցին. նմանապէս և Յուդաս, որ զմեզս հօր և մօր իւրոյ եհեղ, և յառաջելական սպանիւ, զնա վերանորոգեաց, և յորդեաց քան զամենեսեան, որ և նզ՟ քան զամենեցունց, նախ զոտս լուաց, և զայլս բարութիւնս, բայց նա ոչ դարձաւ յետս 'ի չարեաց իւրոց, և նենգու-թեց, մինչև մատնեաց զնա 'ի ըմպանութիւն, ըստ այնմ, զի՞նչ ինչ պարտէր առնել, և ոչ արար, բայց նա ոչ սա-ղորթացաւ, և պղտորեցաւ. քանզի այնքան ապակա-նեալ է ըստ Ծագմանէ նախանձոն, մինչ զի զարշահո-տութիւն անուշահոտութիւն է, և անդրադարձապէս, լոյսն խաւար, և անդրադարձապէս, բարին չար, և անդրադար-ձապէս, և զայլն. յաղագս որոյ զոսկի ոսկերաց ասի նա-խանձն: Որդ ո՞րպ ցեց ոսկերայն, սաստկագոյնէ քան զա՟մ ցեցս, ո՞րպ յայտէ յառաջնացաւորյն, այսպէս և մոլութիւն այս է սաստկագոյն քան զայլս. քանզի նմանի մահուան, որ 'ի մէջ մարմնոյն և հոգւոյն, անկանելով, բաժանումն առ-նէ. այսպէս ատելութիւն, նախանձն, և նենգութիւն, 'ի մէջ աշակերտացն Քրիստոսի անկանելով, զօր որոշումն առնէ, ընդ անդամոյն Քրիստոսի, այսինքն, աշակերտեցելոյն:

Օ՜ր ո՞րպ յոդեալքն սիրով միան 'ի գլուխն, այսպէս աշա-կերտեալքն Քրիստոսի, և ճշմարտութեն, 'ի գլուխն Քրիստոս. քան-զի նմանի նախանձն, նենգութիւն և ատելութիւն, սլաքի 'ի վերի, ո՞րն նա որ արգելեալ իցէ, որքան ըսպեղանիք դե-ղնիցի անօգուտ է և անշահ: Ս՟ զի ոչ բժշկի, որքան է 'ի մարմնի սլաքն, այսպէս և նախանձն, որքան է հոգիս և 'ի սիրտս հաւատացելոյն, ոչինչ առաքինութիւն առնէ օգուտ ինչ. եթէ աղօթք, եթէ ողորմութիւն, և եթէ պահք. այլ եթէ նախ հանցի, և ապա օգտեսցի: Ս՟ որոյ որ կամիցի ըզ կենդանարար մարմին և արիւն կենարարին ճաշակել, նախ ջանասցի զոխս զայս հանել, և ապա զկենդանարար ըն-պեղանիս 'ի վէր դնել, զի զա՟մ զվէրս մեղաց, և զխոցու-

ածս

ածս անօրէնութեանց բժշկիցի։ Որդ պարտէ գիտել թէ ուս֊տի եւ յորմէ ծնանի մեղքս այս, եւ ոլոք։ Մայրէ սորա ա֊տելութիւն, եւ հայր ամբարհաւանութիւն, զի ոչ կենդանի 'ի հօրէ եւ 'ի մօրէ, այսպէս եւ նախանձն, ոխակալութիւն, եւ նենգութիւն 'ի նոցանէ։ Որդ եթէ բարձցին ծնօղքն, ընդ նմին եւ ծնեալքն, զի ընութեաէ յորժամ տարաբառնի պատճառն, բառնի, եւ պատճառեալն․ քանզի նմ ըսպա֊նութիւնք եւ արեանց հեղմունք, տրտունջք, եւ բամբասանք, եւ այլք այլ այպանիք 'ի սոցանէ յառաջեալք լինին, ոչ ըս֊պանումն կայենի, հերովդի, յուդայի, եւ հրէից, եւ վա֊ճառումն եղբարցն Յովսեփու․ եւ զմարտս թագաւորաց, եւ պատերազմունք իշխանաց, եւ կռիւք եւ կռիւք արուեստա֊ւորաց, եւ զշփոթս եւ զաղաղակս կարգաւորաց, եւ կրօնաւո֊րաց, եւ այլոց սոյնպիսեաց, յայսցանէ լաց, յայսց ծնողաց ծնանի։ Վասն որոյ պարտէ ճաշակողացն, յԱծայնոցն խոր֊հրդոյս, տարաբառնալ զծնօղսն, զի եւ ծնեալքն տարա֊բարձցին։ «Քանզի անպատեհ որ ունիցի զգլուխն Քն, սոցանց հետեւեցի, որ չարինէ գլուխ, յորոց փրկեսցէ զմեզ ամենազօր Տրն։

## Գլուխ ՂԹ։

Յաղագս ինքնիշխանութեան Բն՝ ուշէ դարձ այսու անդէն վերեւել, հոգւոյ 'ի սահմանի խորհրդոցն։

Սէ ըստ եղծողն նմ էիր, եւ զփառս զոր ետուրն ինձ, ետու նոցա, եւ առաքեալ նորին սաց, զոր ընկա֊լայ, զայն ձեզ աւանդեցի։ Եւ ըստ բնականին, նմ իր, յորս ինչ կարգեալքն, զնոյնս յայլս մատակարարեն, ան նախանձաբար։ Զոր օրինակ արեգակն, 'ի լուսաւորել եւ 'ի ջերմացուցանել, նոյնպէս եւ այլ լուսաւորքն յորս հաս֊տատեալքն 'ի հաստչէն, զնոյնն լուրեանցն զոր առեալ է֊տան

տան այնոցիկ, որք ոչն ունին, այսոքիկ զգալիսն, իսկ իմա-
նալիքն որով իմացեալ իմանալորիք: Ըստ աթոռոյն դասք,
նախկինաբար հաղորդին, յԱ՟ծպետականէն, և զոր ինչ
առնուն, զնոյնն ներքնոյն, հեղուն աննախանձաբար, և
այսպէս յամ դասուէ տեսանել յինքեանս, մինչև զվստա-
հար տեսակն, նախախնամութեան հեղանի շնորհ:
Նոյնպէս և յեկեղեցականսն տեսանել, որք պարոյն առա-
ջինքն, զոր ինչ առեալ ունին յԱ՟ծպետականէն զնոյնն
աննախանձաբար մատակարարեսցեն ներքնոյն իւրեանց,
զոր օրինակ որոց Տրն, զոր ինչ ըստ մարդկութեան ընկա-
լեալ էր յԱ՟ծութենէն զնոյնն ետ իւրոց ընտրեալ Տր և
երջանկայելոցն աշակերտացն, վասն այնորիկ ասաց ցհայրն,
թէ ես զփառսն զոր ետուր ինձ ետու նոցա. քանզի կա-
տարեալ մարդկութիւն, զոր էառ ՚ի մաքրագունեայն, ոչ
ունէր բնականն փառս Ա՟ծութեան. այլ յորժամ էառ ըզ
նոյնն բանն Ա՟ծ, և միաւորեաց ընդ իւրում Ա՟ծութեան,
զամ զփառս իւրոյ Ա՟ծութեան ետ մարդկութեան ամ լրա-
պէս. վասն այնորիկ ասաց առաքեալ, ՚ի նմա բնակէ ամ լը-
րումն Ա՟ծութեան, այսինքն անձն բանին ամ լրումն իւ-
րով, և փառօք, զոր ինչ ունէր ըստ Ա՟ծութեան ՚ի հօրէ.
զնոյնն ետ մարդկութեան ՚ի հօրէ. զի կատարեալն կատա-
րեալ մարդկութեան շնորհեաց լրապէս, և անպակասաբար.
անձն, բնութիւն, և փառքն: Ըստ անձն մարդկութեան
կատարելութեան ետ էնթակայ, քանզի կատարեալ մարդ-
կութիւն ոչ ունէր զմարդկային անձն, այլ զԱ՟ծայինն.
վասն որոյ մի անձն որ Ա՟ծ բանինէր, էնթակայացեալ եղև,
անձն մարդկութեան: Աստուստ յայտնապէս ցուցաւ, թէ
նոյն անձն բանին, եղև մարդկութեան անձն. ուստի յայտ-
նապէս ցուցանի, այնու զոր կատարեալ մարդկութիւն դա-
ջէ, անձն իմ ոչ երկիր ծառայի առ քեզ. և թէ անձն
իմ յոյժ խռովեցաւ, և թէ անձն իմ խռովեալ է, որդ այ-
սոքիկ ամ մարդկութեանն է գործ, և յաւելութիւն, և ոչ Ա՟ծ-
ութեան, քաղցնուլն, ծարաւելն, վաստակելն, չարչարելն,
մե

մեռանելն, և զայլս. Այլ յորժամ ենթակայացեալ եղև անձն բանին մարդկութեամբ, ամ ինչ նոր ինքեանէ. վասն այնորիկ մարգարէն զարմացմամբ ասէր, անձն նոր 'ի մահ վարեցաւ. քանզի թէ մարդկային անձն լինէր վարեալ 'ի մահ, ոչ պատմէր զարմանալ, վասն զի բնութեան նորին, 'ի մահ վարիլ, այլ Այն անկարելի: Արդ յորժամ ետես զայն անկարելին 'ի մահ վարեալ, ըսքանչանայր, և զարմանայր, և ասէր տեսաք մեք զնա, և ոչ գոյր նմա տեսիլ, և զայլս որ 'ի կարգին թուէ, և յետ այնորիկ ասէ թէ անձն նոր 'ի մահ վարեցաւ: Ապա ուրեմն յայտնի եղև թէ անձն բանին Այ, որ առեալ էր մարդկութեան, միաւորութեամբ բնութեան, մեռաւ և մահացաւ մարդկութեամբն. վասն այնորիկ ասէր կատարեալ մարդկութեամբն, թէ զոր ետուրն ինձ, այսինքն կատարեալ անձն Աստուածային, այս ըստ անձին: Իսկ ըստ բնութեան, այնքան են կատարեալ մարդկութեան, և միացոյց, և միաւորեաց ընդ Աստուածութեան, մինչ զի զոր ինչ նա՝ և ս, եղև, ոչ այլայլութեամբ, և փոխատրութեամբ, և շփոթմամբ ոչ և աքեաց թուեցաւ, այլ միաւորութեամբն: Ով այնքան Աստուածաւ կատարեալ մարդկութեան, որքան կատարեալ Աստուածութեան մարդացաւ, զի ոչ կարելի ըստ որքանցն աւետարանին, ասել բանն մարմին եղև, կարելի և անդրադարձապէս ասել, թէ մարդկութիւն Աստուած եղև: Ով ոչ նա ան այլայլապէս, ասի, և ան. զի ոչ նա ան շփոթաբար ասի. զի ոչ նա անփոփոխապէս և ան. և ունի զոր ինչ նմա ասի, և սմա ասի, ոչ հոգի է մարմնոյ միաւորեալ, որպէս և բանն Աստուած ընդ մարմնոյն, և անդրադարձապէս. զի ոչ հուր ընդ երկաթոյ, նոյնպէս և այն, և անդրադարձապէս. ոչ հոտ վարդի ընդ յոդոյ, և լոյս ընդ յոդոյ, և այն ևս նոյնպէս, բայց ոչ այլայլեալ, և ոչ փոփոխեալ, և ոչ շփոթեալ, այլ միաւորութեամբն յանկութեան մնացեալ ըստ սրբոյն Դիոնէսիոսի. և այսպէս է երկրորդին խնացեալ, որ մարդկութեան ասէ Քրիստոս, զի փառսն զոր ետուր ինձ: Իսկ երրորդն է փառք Աստուածութեան. և այսու խնայեալ լինի

նի, թէ տամ փառս Ածութեան, բնութենապէս եւ մարդ-կութեան. զի այսէ լոյս բնութեան. զոր օրինակ հուրն, որ տայ զհրութիւն իւր երկաթոյն, զի որ ինչ նաէ, կարէ և խաչապէս նմա եւ ասել. լուսաւոր, այրեցող. բայց յայտ-կութեանց, որ ոչ նա զթեթեւութիւն, և ոչ սա զծանրու-թիւն կորեայ. զի թէպէտ անբաժանելի միացան, և միաւորե-ցան: Այսպէս խնամատարելի և միաւորութիւն Քրիստոսի, որ բնութիւն Ա.Յ, ընդ բնութեան մարդկայնոյն, այնպէս միացան և միաւորեցան, յանձն բանին, մինչ զի որ ինչ նմա կարէ, և ամա ասել, և զայն անդրադարձապէս ևս, զի Ածայնութեան սորայն, թէ այնքան միաւորութիւն է անդ, զի զորինչ ասի, որդւոյն Ա.Յ, ասի, և զորդւոյ մարդոյ, և անդրադարձապէս ևս: Ուստի սա խնայեալ լինի, թէ մի-աւորութիւն այս առաւել է քան զամ միաւորութիւն. զի այլն միաւորութիւնք և են, ոչ նիւթոյ, ընդ անձանց, կամ ան-մարմնոյ, ընդ մարմնոյ, և յայլ ինչ միաւորութեանց, ոչ կա-րեն համարձակիլ, զի ոչ կարէ ասել նիւթոյն անձինն, և անդրադարձապէս, ոչ կարէ ասել որդւոյն Ա.Յ, որդի մար-դոյ, և անդրադարձապէս: Նա ոչ կարէ ասել հոգւոյն մարմնին, և անդրադարձապէս, ոչ բանին Ա.Յ կարէ ասել մարմին լեալ, և մարմնոյն Ածայեալ: Նոյնպէս և բազա-դրեցելոցն, ոչ կարէ ասել ջրոյն հաց լեալ, և անդրա-դարձապէս, որպէս կարէ ասել ի մէջ Քրիստոսի, տէրն ծառայ լեալ, և ծառայն տէր: Մեծատունն աղքատ, և աղքատն մեծատուն, հզօրն տկար, և անդրադարձապէս. ուստի գե-րագոյն այս միաւորութիւն քան զամ միաւորութիւն:

Կարծեալ տամ միաւորութիւն, շաղկապութիւն, և բաղադրու-թիւն ունին երբեմն, և տարաբաժանութիւն, ոչ նիւթն ի տե-սակէն, և հոգւոյն ի մարմնոյն, և տարերքն ի տարերաց: Բայց այն միաւորութիւն որ Ա.Յ, և մարդկութեան, և ոչ եր-բեք զի անձնարինէ, թէ անտանուորութիւն այն որ անձն բանին, տարաբաժանիցի ի նիւթոյ մարմնոյն, և ի բնա-կան հոգւոյն, քանզի է անքակ և անբաժանելի ոչ լոյս ա-

րէ

րեգական 'ի նիւթոյ նորին: Եւ արդ այսու անճառելի միաւորութեամբ եւ մարդկութիւն զոր ինչ էր անճառելի Ա՟ծութեան. վ՟ն այնորիկ ասաց մարդկութիւն, ա՟մ ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ իմմէ: Արդ՝ տալս այս զայն յայտ առնէ, թէ էր երբեմն որ ոչ ունէր, և յետոյ տուաւ. արդար և այսպէս, զի մարդկութիւն 'ի նախնումն ոչ ունէր, զմիաւորութեան զփառս Ա՟ծութեան, և յետոյ տուաւ, և առ ընկալաւ. զի ոչ միայն զբնութիւն Ա՟յ տուաւ մարդկութեան, այլ և զա՟մ զոր ինչ ունէր Հայր, լրմամբ եւ միաւորութեան Ք՟սի, ո՟ւստի ասաց ա՟մ ինչ տուաւ ինձ, 'ի Հօրէ իմմէ:

Արդ ա՟մ զբոլորն ունի զնշանակութիւն, և ոչ ըստ բոլորէ, ըստ արիստոտէլի, որ 'ի պէրի արմէնիաս, զի ուր ա՟մ ասի, աննուազապէս լրման ունի առնուլթի, զոր օրինակ ասասցի, ա՟մ մարդ կենդանի է, այսու ոչինչ զոյ արտաքոյ, և արտաքս մնացեալ: Իսկ ըստ բոլորէն, զոր օրինակ ասասցի, մարդ կենդանի է, կարէ իմանիլ թէ ո՟մն մարդ, ոչէ կենդանի. զի ոչ ունի զա՟մն, վ՟ն որոյ ոչէ բոլորէ, ո՟ւստի ա՟մն, որ զբովանդակն պարփակէ, այլ ը՟ս բոլորէ, իբրու թուի թէ զբովանդակն ցուցանէ, բայց ոչէ. քանզի բառն նման ասի, իբրու թուի թէ նմանէ այնմ որ ասի թէ ա՟մ մարդ կենդանի է. այլ ոչէ. զի ա՟մն ոչ ունի, 'ի նախադասութեան: Այսպէս իմա և զասացեալն Ք՟սի, թէ ա՟մ ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ իմմէ, զայս ասելով, զբոլոր և զբովանդակն նշանակէ, զի ունի զա՟մն 'ի նախադասութեան:

Աստուստ յայտնապէս երևի թէ ա՟մ ասելով, ոչինչ արտաքոյ երևի, 'ի տալոյն, իբրու թէ ճշմարտապէս զա՟մ զոր ունէր Հայր, եւ մարդկութեան Ք՟սի սեփականապէս, զոր ոչն ունէր նախկնապէս: Նախ և առաջին, անձն բանին իւրոյ, յինքնակայութիւն նորուն, որ նմա միայնոյ ենթակացաւ, և ոչ բազմաց՝ ըստ երանելւոյն Կիւրղի որ առ Սեկունդոս: Երկրորդ զբնութիւն Ա՟ծութեան, որ համապատկաբար երից անձանցն էր, եւ 'ի միաւորութիւն ընդ բնութեան մարդկոյնոյն, ո՟ւստի ասէ նոյն Ա՟ծաբանն, որ առ Յովհաննէս

եպ

եպիսկոպոս, քանզի յերկուց բնութեանց եղև միաւորութիւն, և բնութիւնք միաւորեցան երկուքն, և թէ բոլորն ընդ բոլորումն միաւորեալ ասեմք. խոսու թէ ճշմարտապէս բոլոր բնութիւն, որ միենոյնէ, հօր և որդւոյ, և հոգւոյն սրբոյ: Նոյն բնութիւն լրման, միաւորեցաւ բանն Ա͞Ծ ը մարդկութեան բնութեան, զոր նորագոյն ըստեղծ, յարգանդի յանարատուհւոյն և միաւորեաց ընդ իւրում Ա͞Ծութեան և եղև Ա͞Ծն կատարեալ, մարդ կատարեալ. ըստ Ա͞Ծութեան, նոյն ինքն համագոյ հօր, և ըստ մարդկութեան, նոյն ինքն համագոյ մեզ, և այս ոչ ըստ փոփոխման ժամանակաց, այլ համանգամայն, ընդ իջանել բանին, և ընդ միաւորել բընութեան, կատարեալ մարդ, վ͞ս այնորիկ զարմանալի և ըսքանչանան Ա͞Ծաբանք, որ խոկոյն է անդ բաժանումն արեան, նա և թանձրանալն, ձևանալն և հոգևորելն, և Ա͞Ծանալն: Ս͞ռ այնորիկ ասի յուղղափառաց, եղև Ա͞Ծն կատարեալ մարդ կատարեալ: Երրորդ համանգամայն զփառս Ա͞Ծութեան, եւ մարդկութեան, զոր միաւորեաց ընդ իւրում Ա͞Ծութեան. այսինքն, զօրութիւն կարողութեան, հզօր զօրութիւն ըստանչելագործութեան, և զամ՛ զներգործութիւն յորոց էր յոյժ թափուր և ունայն մարդկութիւն. և զամ՛ զոր ինչ էր 'ի փառս Ա͞Ծութեան, անպակաս և լրման, եւ նմա. ո՞չ ասացն զփառս զոր ետուր ցիս. ուստի կարէ ասել, ըստ սրբութեան, մարդկութեան ըստեղծօղ, արարիչ էացուցիչ, և գոյացուցիչ ըստ Ա͞Ծայնութե վարդապետին հռովմայեցւոց, զոր ասէ յառաքինութեանցն, 'ի ձեռն յուսոյեանց, լինի 'ի տեսութեանէ մարդեղութեան Ք͞Սի, այսինքն տեսանելով զմարդն, որէ ըստեղծօղ մարդոյն:

Եւ ըստ Կիւրղի որ 'ի սրամ բանութիւն Ներեմիայի, որ ասէ զորուղղապործելն Ա͞Ծաբար, մարդկութեան ոչ ասցէ և ոչ երբէք, ապա զի արդ կենդանացուցանէ ո՞ք Ա͞Ծ:

Եւ գործեալ ասէ, և 'ի նորոյայն հաստատցեալ անձնաքար, ո՞չ անպատմելի միացեալ ընդ նմա: Եւ գործեալ ասէ, նմա հեռացուցանեմք զԱ͞Ծականութիւնն: Եւս յա-

ղագս

զայս անճառ միաւորութեան, կարէ առնուլ մարդկութիւն Քսի, յերկնից իջեալ, որպէս և ինքն իսկ ասէ, այս է հացն որ յերկնից իջեալ, և թէ հացն զոր ես տաց մարմին իմ է, և թէ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ, որ էն յերկինս, ոչ ապաքէն քաջայայտ ամենեցունց, զի զմարդկութիւն ի կուսէն էառ, և ոչ յերկնից բերաւ, այլ յաղագս անճառ միաւորութեան զմասս զայս ևս ես մարդկութեան, այսինքն. յերկնից իջանել, զի Ածայինն է մարդկութիւն. և որպէս Ած յերկնից էջ, և երկնայինն է, նոյնն ևս մարդկութեան, վասն այնորիկ ասաց երկնային, և յերկնից իջեալ: Նաև կարէ առնուլ, նմանաւ գոյացեալ և էացեալ, որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի, ըստ որբոյն Կիւրղի որ ասէ, Աստուածայնոյ խորհրդոց, քահանայագործօղն, Հզօրն Քսին ասէ եղեալ վասն ի գոյութի, և որբոյն Պօղոս ասէ, յաղագս մարդկութեան որ է պատկեր աներևութին Այ, անդրանիկ ամ արարածոց. պատկեր վասն այնորիկ ասէ, զի ասաց որ ասացաք մարդ ըստ պատկերի մերում: Եւ անդրանիկ վասն այնորիկ ասաց, զի անդրանիկէ ի մէջ եղբարց բազմաց, ըստ առաքելոյ. և ըստ մարգարէին, և առաջին պտուղ ննջեցելոց: Եւ ապա ասէ նովաւ հաստատեալ ամ, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի. որք երևին, և որք ոչն երևին, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, և եթէ իշխանութիւնք, ամ ինչ նովաւ, և ի նոյն հաստատեցաւ: Եւ նաև գլուխ մարմնոյ եկեղեցւոյ, որ է սկիզբն անդրանիկ ի մեռելոց. զի ի նմա հաճեցաւ ամ լրումն Աստուածութեան բնակել: Աստուած երևի, յայտ սրբազանն Արիսի, որ ոչ հայեցաւ սկիզբն և ի վերջն բանիս, այլ ի մէջ բանին Այ ասաց, զայս բան և իմացաւ, և արարած կոչեաց զբանն: Զի սրբազանն առաքեալ. սկզբամբն, և վերջնովն կնքէ թէ յաղագս մարդկութեանէ զանդրանիկն ամ արարածոց. քանզի սկիզբն բանիս ասէ, որով ունիմք զփրկութի արեամբն նր, և զթողութի մեղաց մարմնովն նորա, ապա ասէ որ է պատկեր

աներ

աներևութին Ա՟Յ, անդրանիկ ամ՟ արարածոց: Նաև վերջ-նում նորա, նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ, որ է ընկերքն: Եւ թէ ընդէր ասէ կատարեալ մարդկութեան ընկերքն. և այս յաղագս յարութեան, որ և ինքն ասէ. առաջին պտուղ ննջեցելոց: Օ՜ ով ընկերանայ, նախկին մարդոյն մահ, նոյնպէս և երկրորդիս մարդով, յարութիւն մեռելոց. վասն այնորիկ որ նա ասի ընկերքն, որպէս և սմա ասի ընկերքն բնութեան: Եւ զի ասէ ի նմա հաճեցաւ լրումն Ա՟ծութեան բնակել, այսու ևս բաջաղօրն յայտ առնէ, թէ սակս մարդկութեանն բանս, յորս բնակեցաւ ամ՟ լրումն Ա՟ծութեան: Եւ տես ով ալևազգի, թէ ով զգուշութեամբ բան բացատրէ. որքաղին առաքեալ, նախկին մարմին և արեանն ասէ, և յետ այնորիկ բնակել լրումն Ա՟ծութեան, և այս մէջն դնէ, անդրանիկ ամ՟ արարածոց, որ պարտէ նոյն ինքըն մարդկութիւն նմանեալ, որ ամ՟ պատիւ Ա՟ծութեան ետ մարդկութեան. այսինքն լսանեղծագործութեան. որ և առաջ կատարեալ մարդկութեան, զփառսն զոր ետուրն ինձ, վասն այսորիկ ասաց տէրն Կիւրղոս, Յ՟սի Ք՟սի, եկեալ զամ՟ ի գոյութի: Եւ դարձեալ ասէ նոյն սրբազան առաքեալ Փիլիպեցւոց, վասն որոյ և Ա՟Ծ զնա առաւել բարձրացոյց, և շնորհեաց նմա անուն, որ ի վերոյ քան զամ՟ անուն, զի յանուն Յ՟սի Ք՟սի, ամ՟ ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց, և սանդարամետականաց, և ամ՟ լեզու խոստովան լիցի թէ տէր Յ՟ս Ք՟ս ի փառս Ա՟Յ Հօր:

Արդ եթէ զբանս զայս դարձեալ ի վ՟ր բանին առասցի յոյժ յիմարութիւն, քանզի յորժամ էր, որ ոչ երկրպագանէր բանն յամ՟ ստացուածոց իւրոց, ընդ Հօր, և ընդ Հոգւոյն. այլ այժմ ասէ երկրպագցին, ուրմ՟, անուն Յ՟սի Ք՟սի առեալին զկատարեալ մարդկութիւն բացերևոյթ. զմիաւորեալն ընդ բանին, որոյ յաղագս երկնաւորացն ասէ, երկիրպագցեն նմա ամ՟ հրեշտակք Ա՟Յ. և յաղագս երկրաւորաց ասէ, երկիրպագցեն նմա ամ՟ որդիք Ա՟Յ, և յաղագս սանդարամետականաց ասէ, իբրև եսես ընթացայք երկիր

եւ

եպաց նմա և ասէ, աղաչեմ զքեզ, մի յառաջ քան զժա-
մանակն տանջեր զմեզ. և զայն թէ ո՛վ լեզու խոստովան-
լիցի թէ տէր Յ՟ս Ք՟ս ՚ի փառս Ա՟յ Հօր:

Ո՛րդ այսպէս եւ փառս մարդկութեան իւրոյ միաւորու-
թեանն ընդ նմա բանն Ա՟ծ, մինչ զի ո՛վ երկրպագութի՟ նմա
մատուսցի, և խոստովանեսցի զնա տ՟ր. ՚ի փառս Ա՟յ Հօր:
Ա՟ռ լրմն Ա՟ծութեան ՚ի նմա բնակելոյն, միացելոյն, և մի-
աւորեցելոյն ընդ նմա. վ՟ս այնորիկ կատարեալ մարդկու-
թեան ասաց, զփառսն զոր ետուր ինձ: Եւ դարձեալ ասէ
զամ՟ զոր ինչ ունի Հայր իմ, և թէ ո՛վ ինչ տուաւ ինձ ՚ի
Հօրէ իմմէ, ՚ի Հօրէ տուեալ կատարեալ մարդկութեանն, կամև
որէ խոնարհս զՀօրն ո՞ւ ա՟ծ իմանալ. զի նոյն անձնաւորութ՟
Հոգւոյն, լրմամբն և կատարելութ՟ բանն Ա՟ծ, զոլովեալն ՚ի
Հօրէ, փառաւորեց, և էանց իւր, եւ նախ իւրոյ մարդկութեանն,
ըստ այնմ բղխեալ զաւազան յարմատոյն յեսսեայ, և հանգ-
չեցէ ՚ի վերայ նորա Հոգի Ա՟յ. և դարձեալ ասէ լցցէ զնա
Հոգւով: Եւ դարձեալ Հոգւով շնորհաց իւրոց սատանայե-
ցէ զամբարիշտ. և դարձեալ թէ Հոգի ո՞ւ ՚ի վ՟ր իմ, վ՟ս
որոյ և է օծ իսկ զիս: Ո՛չ նախնիքն մարդ. ոչ ունէր ըն՟
կատարեալ անձնաւորութ՟ Հոգւոյն, այլ զամ՟ զշնորհս նր՟,
զեօթն արփեանն, և զերկոտասանն. և զայն կոչոյս պղտ-
ղոյն ճաշակմամբն: Իսկ երկրորդին Ադամայ, տուաւ ըն՟
նոյն անձնաւորութ՟ ո՞ր Հոգւոյն, հանդերձ նոքօք ըստ
այնմ յորոյ վ՟ր տեսանիցես զՀոգին զի իջանիցէ, և հանգ-
չիցի, նա է. և ես տեսի և վկայեցի թէ սա է որդին Ա՟յ.
վ՟ս զի կատարեալ մարդկութեան վ՟ր էջ, անձնաւորութ՟
Հոգւոյն, և ոչ բանին Ա՟յ միաւորեցելոյն ընդ նմա. վ՟ս զի
յորժամ էր, որ ոչ էր Հոգին Ա՟ծ ընդ բանին զի անբաժա-
նելիէ երրորդութ՟ն. վ՟ս այնորիկ կատարեալ մարդկութ՟ն
ասէ, ո՛վ ինչ տուաւ ինձ ՚ի Հօրէ իմմէ: Ո՛րդ ո՞վ ասելոցն
զայն յայտ առնէ, թէ անձնաւորութ՟ Հոգւոյն, կատա-
րեալ լրմամբն, և զոր ինչ ունէրն, զամ՟ անկեալ տուաւ
մարդկութեանն: Եւ զայս ես պարզ իմաստասիրեմ. թէ

Է էր

Ըէ՞ր բանն ոչ ասաց, ես եմ նա, քանզի ասաց զամ՝ զորինչ ունի հայր իմ է, այլ այսու յայտ առնէ, թէ ոչ ելանէ անձն հոգւոյն յորդւոյ իբրու բղխիցն նորա, այլ ելանէ բանէն որպէս հօրէ առեալ; վասն այնորիկ ասաց հոգին որ ելանէ և զամ՝ զորինչ ունի իմ, և զայն կատարելապէս տուաւ մարդկութեան Ք՟սի. արդ տալս այս զայն յայտ առնէ որ կատարեալ մարդկութեան տուաւ զոր ոչն ունէր. վասն այնորիկ ասաց կատարեալ մարդկութիւն, զամ՝ ինչ տուաւ ինձ, վասն զի մարդկային բնութիւն ոչ ունէր, և թէ ունէր ինչ, ընդ շնորհացն ունէր, մասամբ ինչ, և զայն ես հայրս, այլ սա երկրորդիս ադամի, զամ՝ անթերի և անմնացապէս լրմամբ տուաւ: Զանձն բանին ենթակայ երկուց բնութեանց միացելոյն, և միաւորեցելոյն: Զանձն հոգւոյն ենթակայ ամ՝ հրաշագործութեանց, և սքանչելեացն, բաւոյն ամ՝ թէ հոգւոյն այս հանեմ՝ զգես. ուրում՝ ամ՝ լրմամբ, զունայն և զկատարելն ի հօրէ լցաւ. վ՟ այնորիկ ասաց տուաւ ինձ զամ; Եւ թէ տուաւ ինձ զամ՝ իշխանութիւն յերկինս և յերկիր: Եւ վ՟ այնորիկ ասաց շնորհեաց նմա անուն, այսինքն մարդկութեան ամ, զի ամ անուն ի վերէ քան զամ՝ անուն, զի յանուն Յ՟սի Ք՟սի որ է Ա՟ծ, ամ՝ ծունր կրկնեսցի, որպէս միածնոյն Ա՟յ: Եւ դարձեալ ասէ, և ահա ընդ ամպս երկնից, իբրև որդի մարդոյ գայր և հասանէր մինչև հինաւուրցն, և մատուցաւ առաջի նորա, և նմա տուաւ իշխանութիւն և պատիւ, և արքայութիւն, և ամ՝ ազգք և ազինք, և լեզուք նմա ծառայեսցեն. իշխանութիւն նր իշխանութիւն յաւիտենական. որոց անցանէ, և թագաւորութիւն նր ոչ եղծանիցի: Եւ միքիայ ասէ, ի քէն ելցէ ինձ իշխան իսրաէլի, և ելքն նր ի սկզբանէ աւուրց աշխարհի: Զայս ամ՝ տուաւ ի հօրէ կատարեալ մարդկութեանն Ք՟սի, յորժամ միացաւ և միաւորեցաւ ը՟ անճառապէս Ա՟ծութեն: Վասն որոյ այնքան բարձրացաւ, ճոխացաւ, և փառաւորեցաւ մինչ զի և կատարեալ մարդկութեանն Ք՟սի, տուաւ և ճանաչումն, իսկականութեանն հօր. զի ամ՝ հայր զմարդկութիւն զայն

զայն ճանաչէ, նոյնպէս և մարդկութիւն Բանին զնա ճա-
նաչէ, իբրև զոր և է, ըստ այնմ՝ ոչոք ճանաչէ զՀայր, ե-
թէ ոչ Որդի. և ոչոք ճանաչէ զՈրդի, եթէ ոչ Հայր: Եւ
այսու յայտնապէս ցուցանի թէ իբրև Ած փառաւորեալ
մարդկութիւն այն, որ միայն Հայր գիտէ զփառս նորա, որ
միաւորեցաւ ը Ածութեն, ըստ առաքելոյն, եթէ պարտ եւ
էր ծանուցեալ, ոչ պարգևօք զՏէրն փառաց ՚ի խաչ հանէին.
այլ Հայր և եթ ծանեաւ զնա, որ վկայեաց ՚ի յորդանան
և ՚ի թաբօր, թէ դա է Որդի իմ սիրելի: քանզի անճառելի էր
միաւորումն, որպէս ասաց Սբն Կիւրեղ, անճառելի և անպա-
տում միաւորութիւն, վասն այնորիկ Հայր միայն ծանեաւ զնա,
անճառելի էր, և բանին Ածոյ մարմին լինել, և մարդկութեն
Ած լինել: Վն այնորիկ ոչ ոք ծանեաւ, բայց միայն Հայր,
և այսպէս զի ում՝ մի ըստ մի ոչէ, պարտէ խոստովանել, և
զծանաչումն այսպիսոյս, ում՝ կամի որդին տալ. որ քն՝ նախ
մարդկութեանն որէ որդին մարդոյ տուաւ ծանաչումն խոր-
հրդութեանց Հօր: Որ իբր զոր Հայր զմարդկութիւն զայն ծանա-
չէ, նոյնպէսն և մարդկութիւն Բանի զնա ծանաչէ, զոր
և է, ըստ այնմ՝ ոչ ոք ծանաչէ զՀայր, եթէ ոչ Որդի, և ոչ
ոք ծանաչէ զՈրդի, եթէ ոչ Հայր, և ում՝ կամի տայ Որդի.
ուրքն՝ նախ որդւոյ մարդոյ տուաւ, և ապա նովաւ ում կամի
տայ: Եւ այսու մի համարեսցես երկուս որդիս, կամ երկ-
ուս բնութիւնս որպէս թուեցաւ Նեստորիոսի, այլ միոյ, և
նորին բնութեն և որդւոյ զամենայն առեալ, և հաւատամք ըստ
երանելւոյն Աթանասի, որ ասէ խոստովանիմ՝ զնա որդի Ածոյ
և Ած ըստ Հոգւոյ, և որդի մարդոյ ըստ մարմնոյ. ոչ երկուս
բնութիւնս զմի որդին, մինն երկրպագելի, և միւսն աներ-
կրպագելի, այլ մի բնութիւն բանին Ածոյ մարմնացելոյ, և եր-
կրպագելի համագունակ մարմնովն իւրով, միով երկրպագութբ:
Եւ Սբն Կիւրեղ, 38 ասէ ՚ի գիրս պարապմանց, և յերկուց
չարաւութենէ ՚ի միութիւն անբաժանելի, և դաւանել ասէ
զմիևնոյն խոստովանիմք որդի, ՚ի մի իմն յերկուց իրաց ան-
ճառապէս եկեալ, ըստ միաւորութեն: Եւ առ անհունդօս

գրէ յառաջին գլխն և 'ի Թուղթն, զնոյն ինքն Ա՟Ծ համանգամայն և մարդ, ոչ այլոք և այլ, այլ մի և զնոյն, զայս և զայն գոլ խմանամբ: Դարձեալ ասէ, իսկ յետ միաւորութեանն, ոչ երկուս որդիս համարիմք զմինն՝ և զանբաժանելին: Դարձեալ ասէ ասեն ամենք, որք ընդ ուղղափառութեան մարտնչին, եթէ մի բնութիւն բոլորն, զիարդ մարդացաւ: Եւ յերկրորդ Թուղթն ասէ, ասեն հակառակորդքն եթէ մի բնութիւն բանին մարմնացելոյ, հարկէ նմանել շփոթութիւն ունել, և խառնակութիւն. որ ծախիցելոյ և 'ի ներքոյ դողացելոյ մարդկայնոյն բնութեան 'ի նմա, և անգիտացան դարձեալ որք զուղիղն խորհին, թէ ըստ ճշմարտութեան մի բնութիւն բանին մարմնացելոյ: Եւ դարձեալ ասէ անճառելի և անպատում միաւորութեան մի եցոյց մեզ զորդւոյ բնութիւն. քանզի ոչ միայն 'ի մէջ պարզիցն ըստ բնութեան մինն ասի ճշմարտապէս, այլ 'ի մէջ այնոցիկ որք ըստ շարադրութեանն ժողովեալք, որպիսի ինչ էէ և մարդն, 'ի հոգւոյ, և 'ի մարմնոյ, քանզի այլատեսակքեն այսոքիկ, և միմեանց ոչ համագոյք, սակայն միաւորեալ մի բնութիւն մարդոյն կատարեն: Եւ բազումքեն այսպիսիք վկայութիւնք, յորոց հեռանի արտաքանն եկեղեցի, և հաստատէ մի որդի, մի անձն, և մի բնութիւն, անշփոթաբար:
Սակայն թէպէտ որդի Ա՟Յ, և որդի մարդոյ, զնա ասեն, Ա՟ծային ասացեալք, բայց ոչ որոշեալք և զանազանեալք, բաժանեալք և անջատեալք, որ Նեստորի թուեցեալք. այլ զյատկութիւն Ա՟ծութեան և մարդկութեան մեզ յայտնեալ, որ կատարեալ Ա՟Ծ է և կատարեալ մարդ: Որ երկակի ծննդեամբ զմիածնութիւն յայտնաբանեն, յաղագս միոյ բնութեանն, քանզի ո՟մ ուրեք ոչէ բաշխայայտ, որ ասեն Ա՟Ծ երկակի ունի զծնունդն զԱ՟ծայինն և զմարդկայինն:
Բայց միածինն ասէ յԱ՟ծայնոյն, որ և սրբազնագոյնն ասէ աւետարան, տեսաք զփառս նր զփառս իբրև զմիածնի առ 'ի հօրէ լի շնորհօք, և ճշմարտութեամբ: Արդ որ ասէ երկակի ծննդեամբն զմիածնութիւն, յաղագս միոյ բնութեանն

յայտ

յայտնեաց, նոյնպէս և անդ որդւոյն Ա՟յ և որդւոյ մար-
դոյ առաջելովն զանշփոթելի երկուց բնութեանց, 'ի միաւո-
րութեան եկելոցն և մնացելոց յատկութեանցն. յայտնեցին Ճ՟շ-
մարտանքն. վ՟ս այնորիկ աներկբայաբար և անխտրաբար որդի
մարդոյ, և որդի Ա՟յ պատմարանի 'ի Ք՟սէ, և յընթերցողաց
նր, զի յայտնիցի զյատկութիւն, որ ոչ եղև շփոթումն,
'ի միութեան: Նոյնպէս և յերկաբնութեանէն, զմիաբնու-
թիւն յայտնեցին, զի մի մածցի անդ տարաբաժանումն.
վ՟ս այնորիկ և մեք հետևելով Ա՟ծայնոց և Ք՟սակրացս, ըզ
յատկութիւն պահելով, զփառս Ա՟ծութեան և զմարդկու-
թեան յիշեցաք, որ 'ի միոյն տնեալ եղև, որ էր սեպհակա-
նապէս ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ. և միւսոյն ընկա-
լեալ, որ ոչ ունէր մի ինչ ըստ բնութեան. վ՟ս այնորիկ պար-
տէ ուղղափառացն իոհականապէս իմաստասիրել, թէ ուր
և յիշի զտալն, Ա՟ծայնոյն յատկութիւն, և ուր և յիշի զտա-
նուլն, զմարդկութեան յատկութիւն, և յայտնութիւն. այլ և
զերկոսին 'ի մի և 'ի նոյն տեղւոջ, զերկակին զայսորիկ յատկու-
թիւն բացափայլապէս յայտ առնէ ասելով, զմեր դատաստան
ետ որդւոյ իւրոյ, այս զկատարեալ մարդկութեան յատ-
կութիւն, որ ոչ ունէր տալն. և թէ իշխանութիւն ետ նմա
դատաստան առնել. և եզրակացուցանելով. ինքնին ասէ,
և զի որդի մարդոյ է, զի զարմանայք. իբրու զայն յայտ
առնէ, թէ զմ այսպիսիք որդւոյ մարդոյ է զի զարմանայք.
Իսկ զայն զոր ասէ, զի այլ հայր յարուցանէ զմեռեալս, և
կենդանի առնէ, նոյնպէս և որդի զորս կամի կենդանի առ-
նէ, զի ամէն պատուեսցեն զորդի, այլ պատուեն զհայր.
որ ոչ պատուէ զորդի, ոչ պատուէ զհայր զառաքիչն նր.
և թէ յորժամ մեռեալք լուիցեն ձայնի որդւոյն Ա՟յ, և
որք լուիցենն կեցցեն. ահա այսորիկ ամ Ա՟ծութեան յատ-
կութիւն և յայտնութիւն, վ՟ս որոյ և մեք սմն հետևելով և սըր-
բազանիցն նր, զկատարեալ մարդկութիւն յիշեցաք, զոր
ինչ տուաւ նմա, ըստ միաւորութեան ընդ բանին, զոր ոչն
ունէր յանդատին. և զկատարեալ Ա՟ծութիւն որ առաւել
ընդ

ընդ Հօր և Հոգւոյն, ըստ համաբնութեան, և համագոյութեան. վասն այնորիկ զայս եւ նոյնպէս պարտ է խոստովանիլ որ ասացն զփառսն զոր ետուր ինձ, զկատարեալ մարդկութեան յայտնաբանութիւն: Դարձեալ այնքան փառաւորեցաւ մարդկութիւն միաւորեալն ընդ բանին, մինչ զի ըստ պատկերի, և ըստ նմանութեան Հօր եղև. վասն զի զոր ինչ ունէր Հայր ըստ բնութեան զնոյնն ետ մարդկութեանն լրմամբ, միաւորութեամբ, և միացմամբ ընդ բանին. զի բնութեամբ իւրէր անձն բանին, զնոյնն ետ կատարեալ մարդկութեանն, կատարեալ միէր բնութեամբ ընդ բանին, կատարելապէս միաւորեաց ընդ մարդկութեանն բնութեամբ ՚ի մի. քանզի մարդկութիւն Քրիստոսի, այնքան միաւորեալ եղև ընդ Աստուածայնոյն բնութեանն մինչ զի որպէս նա մի է բնութեամբ, ընդ համագոյակցին, նոյնպէս և մարդկութիւն այնքան միաւորեցաւ մինչ զի մի բնութիւն անշփոթելի, Հայր բնութեամբ մի ընդ բանին, ըստ համագոյութեան, իսկ մարդկութիւն մի ընդ բանին միաւորութեամբ: Ուստի բանն որքան հաւասարէ ընդ Հօր ըստ համագոյութեան, նոյնպէս և մարդկութիւն հաւասարէ ընդ բանին միաւորութեամբ ընդ նմին. մինչ զի կարէ ասել ընդ բանին նախ քան զյաւիտեանս, ըստ որբոյն Կիւրղի, որ ՚ի տրամաբանութեան Երեմիայի. թէ և ոք ասիցէ զՅիսուս Քրիստոս նախ քան զյաւիտեանս, ոչ մեղանչէ ճշմարտութեան, և առաքեալ ասէ, մի Տէր Յիսուս Քրիստոս որով ամենայն: Սր այնքան միաւորեցաւ մարդկութիւն ըստ բանին, մինչ զի որպէս առօղն, նոյնպէս և առեալն եղև. մինչ զի որքան մի է ընդ Հօր, ըստ բնութեան, նոյն քանաքար մի է ըստ մարդկութեան միաւորապէս, Ուստի որպէս բանն ընդ Հօր, Աստուած համագոյապէս, նոյնպէս և ըստ մարդկութեան, մարդ կատարեալ միաւորապէս, վասն այնորիկ ոչ մեղանչէ որ ասէ մարդկութեան Քրիստոսի, նման Հօր և պատկեր: Ուստի զոր ինչ նա ունի ըստ բնութեան լրապէս, և սա ունի ըստ միաւորութեան լրապէս. վասն այսորիկ ասաց առաքեալ, արարածական բնութեան պատկեր Աստուծոյ, և անդրանիկ ամենայն արարածոց: Ուստի յԱստուծոյ Հայր վերաբերելով, ասաց

մարդ

մարդկութեան պատկեր, և նման նմա, որ ունի զանձն բա-
նին, միաւորութեամբ Ա՟ծութ՟ն, ոչ զնմա: Ա՟ս զի քան զամ՟
արարածական բնութիւն 'ի վեր է անց, մարդկութիւն Ք՟սի
զի միաւորեցաւ ընդ Ա՟յ: Պարծեալ ունի զնմանութիւն
Հօր, մարդկութիւն Ք՟սի, զի ոչ նա խոկապէս ունի զՀօ-
գին Ա՟ծ, խոհակից, և համագոյակից, և սա զնոյն ունի
լրմամբ, բայց միաւորութեամբ որ ընդ բանին, ոչ և առ Հօ-
րին Ք՟սի, բայց այնմ որ զհոգին Ք՟սի ոչ ունի սա չէ նր՟:
Որ ոչ նա տայ ուժ և կամս, նոյնպէս և Ք՟ս տայ ուժ
և կամս. զի ոչ Հայր փչեաց զնոյնն յառաջին մարդն, նոյն-
պէս և զնոյն Ք՟ս փչեաց 'ի մ՟ք յառաքեալսն, բայց այնմ
որ առէ փչեաց 'ի նս՟ և ասէ, առէք հոգին ս՟բ:
Եւ այսպէս լծուի լծէ Ա՟ծային գիր, յաղագս մարդկու-
թեան Ք՟սի ասաց, արասցուք մարդ ը՟ս պատկերի մերում,
և ըստ նմանութեան, որ այնքան բարձրացաւ մարդկութիւն
Ք՟սի որ ըստ նմանութեան հաւասարեցաւ Հօր. զի զոր ինչ
նա լրմամբ ունէր, ըստ բնութեան, սա լրմամբ ունի ըստ
միաւորութեան. բնութեամբ: Նա ունէր բնութենապէս և սա
ունի առընչութենապէս. և վ՟ս այսօրինակ ասաց տ՟րն զամ՟
զոր ունի Հայր իմ է. այսինքն կատարեալ անձնաւորութ՟բ
բանին միաւորապէս, և կատարեալ անձնաւորութ՟բ հոգ-
ւոյն, բնակողապէս: Որ զմի անձն ունի, մարդկութիւն
միաւորեալ ընդ նմա, և մի անձն ունի կատարելապէս բը-
նակեալ 'ի նմա, իբրու նո՟ հօրն, ը՟ երանելւոյն Կիւրղի որ
ասէ, քանզի տայ մկրտելոց տ՟րն մեր Յ՟ս Ք՟ս ոչ զիւր
հոգի հօրն. քանզի Հայր զնա տայ, ոչ զիւր եղելից, և
համագոյակից, և յինքենէ բղխեալ: Իսկ Ք՟ս տայ զնա
ոչ միջնորդ, բայց այնմ մէջ միջնորդն Ա՟յ, և մարդկան,
մարդն Յ՟ս Ք՟ս, որ 'ի հօրէ ընկալեալ, զկատարեալ անձն
հոգւոյն, ոչ զիւր տայ միջնորդապէս. քանզի այնքան լը-
մամբ ունի զանձնաւորութ՟բ հոգւոյն մարդկութիւն Ք՟սի,
որքան հայր ունի, և այնքան իւրն է, որքան հօրն է:
Տայց նմա համագոյապէս իւր: Իսկ սմա ընդունողապէս

իւր

իւր: Զի նոյնապէս անձնաւորութի հոգւոյն, յերկնաւոր-
րն, այսինքն ՚ի հայր, և ՚ի մարդկութին Քսի:
Բայց ՚ի նա համագոյապէս, իսկ սմա ներ ընդունողապէս,
ըստ միոյն մի և նոյն ըստ բնութե: Իսկ միւսոյն մի և նոյն
ժամանակապէս: Զի մինն ունի կատարեալ լմանք զնա,
անժամանակապէս և նոյնաբնութենապէս: Իսկ միւսն ու-
նի ժամանակապէս: Ս՟ որոյ ունելն նոյնպէս, տալն նոյն-
պէս, շնորհելն նոյնպէս, փչելն նոյնպէս: Բայց համաբը-
նութին, համագոյութին, համահաւասարութին ոչ նոյն-
պէս: Զի հայր ունի այսպիսեօք: Իսկ մարդկութին Քսի
ունի ոչ այսպիսեօք: Զի նա անժամանակաբար, իսկ սա
ժամանակաբար: Նա բղխող փառակցաբար, սա առող ան-
ձնառաբար: Ս՟ այնորիկ ասաց մարդկութին, ամ ինչ տու-
աւ ինձ ՚ի հօրէ իմմէ: Ով զարմանալեացս: Ով ըմբռնչե-
լեացս, որ այնքան ճոխացաւ մարդկային բնութի, որ մի-
աւորութի ընդ բանին, եղև նման հօր, զոր ինչ նա ունի,
և սա ունի: Ս՟ այնորիկ ՚ի հիացումն հրէից, պատասխա-
նէր նոցին, որդի մարդոյէ ընդ այն զի՞ զարմանայք. քանզի
անգէտ հրէայքն, ՚ի վր զարմանալեացն և ըմբռնչելեացն,
զարմանայքն որ Ած գործէր զամ զգործսն: Բայց յորժամ
լսէին թէ ես և հայր իմ եմք, կատաղէին, և քարկոծ առ-
նել զնա կամէին, որք յառաջագոյն նախատեսայն, աշա-
կերտէին, թէ այսքան բարձրութի ելանելոյ մարդկու-
թեն Քսի, և աննախանձաբար ընդունելոյ զնախատա-
ցելոյն: Եւ թէպէտ իմանալեքն են զարմանայքն, թէ ոչէ
գս, այլ յորժամ ՚ի նմանէ խորհրդածածք լինէին, զօրհն-
ութիւ ՚ի վեր առաքէին: Եւ մեք եւ ըստ նոցա օրհնաբա-
նեսցուք, որ ետ պարգևս զայս բնութեա. այլ և ասաց զար-
մանագործողն, ես զփառս զոր ետուր ինձ ետու նոցա.
պատու յոյս առնէ, զմիջնորդութին իւր, որ ընդ Այ, և
ընդ հասարակաց մարդկութեն, մարդկութին Քսի:
Զի կատարեալ մարդկութին այն, զոր ինչ ընկալաւ յԱյ
հօրէ, զնոյնն աննախանձաբար, ետ մարդկութեա բնութե:

Զի

Զի նա որդիէր՝ ընդ բնութիւն որդւոյն միաւորեալ, և մեք եմք որդեգրութեան շնորհաւ։ Նա ժառանգ հօր, և մեք եմք զժառանգակցութիւնն։ Վն այսորիկ ասէ և գիրք դուք որդիք, առաքեաց Ած զհոգի որդւոյ իւրոյ ՚ի սիրտս մեր, որ աղաղակէ Աբբայ հայր։ Եւ յաղագս երկրորդին ասէ, ժառանգ Այ, և ժառանգակից Քսի։ Եւ ս և որպէս նա Ածացեալ միաւորութեամբ ընդ բանին, նոյնպէս և մեք նոյնա Ածացեալք, հաղորդմամբ մարմնոյ և արեան նորին, վն այնմ ես ասացի թէ Ածք իցէք, կամ որդիք բարձրելոյ։
Եւ որպէս զոր ինչ ունէր հայր, ընկալաւ և մարդկութիւնն, միաւորութեամբն ընդ բանին, այսպէս և մեք ընդունելոցեմք, հաղորդմամբ մարմնոյ և արեան նորին. քանզի զկատարեալ բանին. որ է ենթակայ մարմնոյ և արեան կենարարին, ընդունիմք հաղորդմամբ նորին։ Նոյնպէս և զշնորհս հոգւոյն, շնորհիւ իւրով. որ կատարեցնէ խորհրդոյն, ընդունիմք հաղորդմամբ երկնաւորին հացին, որպէս ՚ի վերնատանն դասք մետասանին։ Մարդկութիւն Քսի ՚ի սկիզբն յղանալոյ բանին, յարգանդի ամենամաքուր կուսին, ընդ այնմ հոգին սբ եկեսցէ ՚ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն. և թէ որ ՚ի նմայն ծնեալ է, ՚ի հոգւոյն սրբոյ է։ Իսկ մեք ՚ի հաղորդութիւն կենարար խորհրդոյն, վն այնմ թէ լցեալն հոգւովն սրբով։ Եւ որպէս մարդկութիւն Քսի պայծառացաւ ՚ի Թաբօր, միաւորութեամբ Այ բանին, այսպէս և մեք պայծառանալոց եմք, ՚ի հանդերձեալ յարութեանն, հաղորդմամբ անմահականին, ընդ այնմ յայնժամ ծագեսցեն արդարքն, իբրև զարեգակն, յարքայութեան երկնից։ Եւ որպէս մարդկութիւն Քսի, գնայր ՚ի վն ծովուն, միացմամբն ընդ բանին, և ոտք նորա ոչ թանային ՚ի ջրին, սոյնպէս և մեք միացմամբ ընդ կենարարին հաղորդմամբ նորին, գնամք ՚ի վն ջրոց ծովուս և ոտք մեր, ոչ թանանին, ընդ այնմ որդիքն իսրայէլի գնացին ընդ ցամաք ՚ի մէջ ծովուն. զի անցք Փրկչին նշանակեր նոցայ, զի որպէս նոքա զգառն ուտելով անցին. նոյնպէս և մեք զգառն Այ, որ բառնայ զմեղս աշխարհի։
Եւ

Եւ ով մարդկութիւն Քսի, միացելովս ընդ բանին, ըզ
կոյրս լուսաւորեաց, զկաղս գնացոյց, զմեռեալս կենդա-
նացոյց, զբորոտս սրբեաց. զհիւանդս բժշկեաց. զցաւս
եբարձ, և զայլ ամ ախտս փարատեաց. այսպէս և մեք ճա-
շակմամբ և միացմամբ ընդ անմահական խորհրդոյս, մեք
լուսաւորիմք, ըստ այնմ Տր բանայ զաչս կուրաց, զկաղս
գնացուցանէ, այսինքն, յընթանալն մեր յերկնային գա-
ւառ. ըստ այնմ՝ փութացարուք մտանել յայն հանգիստ. զի
ոչ ունիմք քաղաք որ աստէն մնալոց իցէ մեզ, այլ զվե-
րինն խնդրեմք, և թէ երբեքիցէ երևեցայց երեւացդ Քս։
Զմեռեալս կենդանացուցանէ հոգւով ըս այնմ՝ այս է հացն
կենաց, որ յերկնից իջեալ և կեանս տայ, և թէ դուք մե-
ռեալքն էիք, կենդանացոյց։ Զբորոտս մեղօք սրբէ, հո-
գւով, մտօք, և խորհրդով։ Զհիւանդութիւս բժշկէ, ըստ
այնմ՝, զհիւանդութիւս մեր վերացոյց. և զցաւս մեր եբարձ,
և թէ ողորմեա ինձ Տր զի հիւանդեմ ես, բժշկեա զանձն
իմ խռովեցան ոսկերք իմ։ Եւ զայլ ամ ախտս մեղաց և
յանցանաց, և անօրէնութեանց փարատէ, ըստ այնմ՝ և ընդ
արեւուն մտանել, ամենեքին որոց էին հիւանդք ՚ի պէսպէս ցաւս
բերէին զնս առ նա, և իւրաքանչիւր ումեք դնէր ձեռս
և բժշկէր զնս. ըստ այլաբանութեան արկէ Քս, յորժամ
մտանէ ՚ի մեզ ճաշակմամբ մարմնոյ արեան և իւրոյ զամ
զպէսպէս ցաւս բժշկէ. դնելով զձեռս հայրական ՚ի վր
իւրաքանչիւրոց յօդուածոց։ Եւ ով մարդկութիւն Քսի,
միաւորութբ բանին, ՚ի վր քառաթեւին, աւանդեաց ՚ի
ձեռս Հօր, զբանական հոգին, ըստ այնմ՝ ՚ի ձեռս քո աւ-
անդեմ զհոգի իմ. այսպէս և մեք միացմամբ նովին, ճաշակ-
մամբ կենսատուին ՚ի ժամու մահուան գոչեմք, դու ես
պաշտպան իմ Տր, ՚ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։
Եւ որպէս մեռելութիւն մարդկութեան կենարարին, այսինքն
բաժանումն հոգւոյն ՚ի մարմնոյն, արեգակն խաւարեցաւ,
և լուսինն նուաղեցաւ, և աստեղք նսեմացան. այսպէս և
մեք ճաշակմամբ կենարարին և միացմամբ ընդ նմին, յոր-
ժամ

ժամ մեռանելոյն ծմ ախորժ մեր խաւարի արեգակն, այսինքն բնեեղ զերբուղն, և լուսինն որէ լեգոմն, և աստեղք որք են գիտականն գունդք, ծմքն խաւարին և նսեմանան, ի այնմ 'ի գալս խնում անմշեցին հրեշտակք չարին: Եւ որպէս յայնժամ վէմք պատառեցան. երկիր շարժեցաւ, և գերեզմանք բացան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան, և յետ յարութեն նորա մտին 'ի քաղաքն ՍԲ և երևեցան բազմաց. այսպէս և մեք յորժամ միանամք ընդ մարմնոյ և ընդ արեան կենարարին ճաշակմամբ, 'ի յաւանդեւն զ հոգիս մեր, երկիր շարժեսցի, այսինքն, գժոխք, և 'ի հիմանէ քակտեսցի, և վէմք անդամանդեայ պատառեսցի, այսինքն, զբռնութիւն սատանայի, ով երկնքով և հողիցի, և բազում մարմինք ննջեցելոց յարիցեն, և միեալ ընդ յաւաջ միացելոյն, ընդ կենարարին, ով երանելոյն Պօղոսի անապատականի, և որբոյն Ներսէսի. և յայնժամ մտցեն 'ի քաղաքն ՍԲ, այսինքն, 'ի վերինն Երուսաղէմ, և երևեցին բազմաց, այսինքն, ծմ հրեշտակաց դասուորութեանց, և մանաւանդ ամենայն ՍԲ երրորդութեան, ով աստղն անատոլիայ, յորդորս ՏՆ խւոյ, և նա ասաց յառաջ քան զամենեսեան այրն քո Անդրիանոս երանեցաւ ՔՍի:

Եւ ով մարդկութեան ՔՍի միացմամբ և միաւորութեամբ Է բանին համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ հօր. այսպէս և մեք ճաշակմամբ կենարարին, և միաւորութեամբ նորին, համբառնամք յերկինս, ըստ այնմ ովէն ասէ լիքև զաւանիս ձայնիւ խառն թռուցեալ երամովն կան առ և, և լեռ կացուսցէ զոգին ընդ աջմէ իւրմէ, և ասասցէ, եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւն իսկզբանէ աշխարհի:

## Գլուխ ԼԳ։

[illegible]

Եւ այսպէս զնոյն զփառս զոր առեալ է, մարդկութիւն Քրիստոսի ժամանակաւորապէս տայ իւրոցն, որ և ասացն, զնոյն զփառսն զոր ետուր ինձ, ետու նոցա. այսինքն նախ ետ մարդկութեան իւրոյ. միաւորմամբն ընդ նմա, որպէս և ճառեցաւ, և ապա մարդկութեան ամենեցունց ճաշակողաց, զմարմին, և զարիւնն իւր, միաւորութեամբ ընդ ինքեան։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և զնոյն զփառս, զոր ինքն միայն ունէր ըստ Աստուածութեան, զոր ետ մարդկութեան զնոյն տայ նոցա, ճաշակմամբ կենդանարար խորհրդոյն, այլ և զկարգըս հրեշտակականս. մինչև յաթոռոցն լրապէս ընկալեալ։ Վասն որոյ ոչ նոքա զընկալեալն աննախանձաբար շնորհեն, երկրորդաց իւրեանց, և Աստուած պետականն զիւրն ոչ պարտէ, սոյնպէս և ամենայն կարգաւորաց եկեղեցականաց զոր ինչ ունին. շնորհեսցեն յետնոցն աննախանձաբար։ Ապա թէ ոչ՝ զանգս անկելոցն, կրեսցեն։ Վասն զի սատանայ այսպիսեօք ախտիւք անկաւ, որ ոչ կամեցաւ, զժամանակաւորութիւն զոր ընկալաւ, ոչ վերնոյն. ներքնոցն, և ոչ ներքնոյն վերնոյն ժառանգին։ Վասն որոյ բարկացեալ Տէր սատանութեան ի վերայ նոցա, ահեղ թնդմամբ և որոտմամբ, իբրև զփայլակն ընկէց զնա։ Վասն որոյ աննախանձաբար պարտէ տալ և հեղուլ ի յարժանաւորս զընկալեալսն զշնորհսն, որովք նմանեսցի Աստուծոյ պետականին. որ և ասացն, զփառսն զոր ետուր ինձ, ետու նոցա։ Եւ արժէլի աշակերտացն նորան ասաց, զժամանակաւորութիւն զոր ընկալայ կատարեցի։ Եւ յայնժամ այսու նմանեցի Հօրն իւրոյ, և սրբազան ընտրելոց նորին. և երջանիկ երկնայնոցն քահանայապետութեանց։ Իսկ որ արգելու նախանձաբար ատելութիւս ունելով.

լով. և կամ ոխս, և նենգութիւնս, անկեղծն նմանի ում և աղաւնւոյ: Մ̃ այնորիկ անվայելուչ է, սրբազանից քահանայապետից. եթէ ունիցին ինչ այսպիսեաց. քանզի միջնորդքեն կարգեալք, 'ի մէջ Ա̃յ և մարդկան: Մ̃ որոյ ում Ա̃ծ աննախանձաբար տայ և բաշխէ. նոյնպէս և քահանայապետիցն, պարտ է լինել առ ներքնագոյնս իւր. քանզի թէ որոց հաճեսցի, և կամիցի նոցա միայն հեղուցնուլ, և տացի, թարց նախանձու և նենգութե, ոչէ. այլ այնքան, աննենգ, և անխարդախապէս, պարտ է մատակարարել. մինչ զի մաւանց ակնառութե զընկալեալն, մատակարարել. ոչ 'ի դէմս հայել ում ասացն Սամուէլն, յաղագս եղբարցն Դաւթի, այլ 'ի սիրտս. և եթէ կարծիս ինչ ունիցի, զԱ̃ծ աղաչեսցէ, արտասուաթոր մաղթանօք, և խոնհարհ հսկմամբ, զի նա իսկ յայտնեսցէ, ում սրբազանիցն գնդից, յայտնեաց յաղագս մատաթիայն: Սոյնպէս և ոչ յազգականս զթափ հարազատութե, զի մի զհեղեալն կորեսցէ անցք, և ոչ յազնուատոհմս և յիշխանս. այլ հասարապէս որոց կարողութի իցէ շնորհեսցէ, զի մի ակնառութի մուծցի, քանզի և Ա̃ծ պետական քահանայապետութի, ամենամբ երրորդութին, որոց կարողութի իցէ; ըստ իմաստութե և կարողութե առաքինութե շնորհէ. ումանց առաքելութե, ումանց մարգարէութե, ումանց վարդապետութե, և զայլս զորս թուէ առաքեալ. յաղագս որոյ որոց որ ինչ պիտոյնէ, և պատշաճն պահանջէ, զնոյնն մատակարարեսցէ, ոչ զնոյնս ամենեցունց տացէ, զի ոչ օգուտ բերէ, և ոչ զնոյնս յարմանաւորացն, արգելցէ, կըրողացն, և տանողացն. զի են ումանք, որք յոքնագոյնս, և են որք սակաւագոյնս տանել ունին կարողութի: Մ̃ որոյ ճշգրտագոյն խոկումն պարտ է արժան, յիրողութիս յայս, զի յոքնակի զննութե բարձրէ բեռն 'ի վ̃ր բարձողացն. զիմի ծանրն 'ի վ̃ր նուաստագունիցն, և թեթևն 'ի վ̃ր բաղմակրողացն բարձցէ, յաղագս նախանձու ինչ. այլ հասարապէս զպատշաճն, ում որ ինչ պիտոյն իցէ. զի մի ըղ

ամն,

ռին, զբազում շնորհելով, ծանրաբեռնեալ ընկղմիցի, և զոմն թեթևացուցանիւք յարաբերեալ ծփիցի. և երկոցուն-ցըն վաղվաղակի կորուսանն հասցէ: Եւ այսպիսի իրողու-թի յաւէտ նենգաւորացն տեսանի, որ որպէս առ մարդն առաքին. այլ պարտ է անաչառապէս, իւրաքանչիւրոյն, ըստ կարողութեն շնորհել. զիմաստունս, զառաքինիս, զխոհե-մականս, զխոնարհս, հոգւով՝ յարգել, և մեծարել, պա-տուել, և փառաւորել. և զնուաստագոյնս խնամել, քաղց-րութեամբ ըմբռնել և մխիթարել. և զամենեսեան 'ի կրթու-թիս Ա̄ծայինս մարզել. որ Ա̄ծ պետական քահանայապե-տութիւն, հասարակաբար հեղու զլոյս արեգականն, անձ-րև, յող, և ջուր բղխական, որք իւրաքանչիւրոք, ըստ կարի իւրեանց վայելելովք գոհանան: Սոյնպէս և քահանայ-ապետն, պարտ է զընկալեալն, աննախանձաբար հեղուլ, մինչև ցյետնագոյնսն: Ո՛չ յոմանց արգելուլ, և մի ումանց շնորհել, յորոց ինքն հաճեսցի. այլ անաչառապէս հե-ղեսցէ, և ընդունողքն ուղղ և իցէ ըստ իւրում կարի առնու. Եւ դարձեալ մի թաքուսցէ զայն, որ ունի զլոյս գիտու-թեն, և յորդեսցէ զայն, որ ունի զխաւարն անգիտութեն, քանզի ասաց Տ̄րն, ոչ ոք լուցեալ ճրագ, դնէ ընդ գրուա-նաւ, այլ 'ի վ̄ր աշտանակի, զի թէպէտ առ նախանձու-ումանց ծածկի, սակայն Ա̄ծ յայտնէ և բարձրացուցանէ. որ երանելի լուսատուն հոգւոց, թէպէտ վիրապաւ ծած-կեցաւ, և նսեմական խաւարաւ պարափակեցաւ, սակայն այնչափ ճառագայթափայլեցաւ, մինչ զի գրուան ազգն և լուսաւորեցան: Եւ դարձեալ զառաքինեան յետս ձգեսցէ, և զմոլին մեծացուսցէ. զի թէպէտ ժամանակ ինչ, առ նախանձու ծածկի, այլ սակայն վաղվաղակի յայտնիցի, զի այնմ չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնիցի, որ և բազմաց սըր-բոց եղև: Այլ պարտ է որբազանից քահանայապետից, զա-ռաքինիսն յարգել, և ըստ արժանոյն բարձրացուցանել, զի և այլքն 'ի նոյնս փութասցին, որ յար և յաւէժ առ-նէ Ա̄ծ: Եւ զբստահակն աղաչել, և կրթել 'ի կրօնս ա-

ռա

ռաքինութեն, և զնոյնս ընդ նոսին հաղորդեցուցանել, քանզի և մրն որ քահանայապետներ, յաւիտենից, զայս այսպէս առնէր, զի զԱհաննէս որ առաքինութբ էր զարդարեալ, և զՄատթէոս որ մաքսաւորութբ, զերկոսեան 'ի մի հրաւիրեաց. և 'ի ճաշակումն հաղորդութեն իւրոյ, Ածայնոյ մարմնոյ և արեան, արժանացոյց. որք 'ի միասին փայլեցին, յանմահական սեղանոյն, և պարգևաց հոգւոյն։

Եւ այսու յայտնապէս երևեցաւ անաչառութի, նոյնոյն 'ի բաշխումն. զի ոչ նա և սա էառ, զոր ինչ և էառ։

Այնպէս և պարտ քահանայապետին, զի նմանէ նմա և զնորուն ունի տեղի. եթէ անուանն հաղորդի. պարտ է, և գործոյն. ըստ այնմ պարտ է գնալ, ոչ նոյն գնաց։

Եւ դարձեալ պարտ սրբազան քահանայապետին, զի մի ընչիւք ինչ, զոր ունի յԱծպետականէն բաշխեսցէ. այլ պարտ է զծրի առեալն, ծրի տայցէ. օրինակ ունելով զերկնային քահանայապետութիւն, զի զոր ինչ 'ի նմ հեղանի յԱծուստ, զնոյնն մատակարար լինի խոնարհագունիցն. քանզի վն այնորիկ առնուն զոր ինչ և առնուն. որպէս և արեգակն, զոր ինչ ընկալեալ է, զնոյնն արտազեղու. յոչ ումեք նախանձաբար, և յոչ ումեք սիրալրաբար. այլ հաւասարապէս յիւրոյն կողմանէ. ոչ և մրն եցոյց 'ի հաղորդութի իւրոյն խորհրդոյ. զի ոչինչ խտրութե եցոյց, յասելն առէք կերէք. և արբէք 'ի սմանէ. այլ աննախանձաբար շնորհեաց, յիւրոյն կողմանէ, սիրելոյն Յոհաննու, և ատելոյն Յուդայի. բայց ընդունողքն յիւրեանց կողմանէ, զանազանեցան. զի մինն փառաւորեցաւ։ Իսկ միւսն պատժեցաւ. և այնքանէ ծրի բաշխումն այս, որ ոչ երբէք ընթերցեալ լինի, թէ որ զսա ընչիւք ինչ ստացեալ իցէ։

Զի ոչ սա անգինարին, նոյնպէս և տմ շնորհաց Ածայնոյն պարտ է լինել անգինարին. զի մի երբէք ինչքն, 'ի ներքոյ մուծցի, և սիրելութի, և ատելութի, բացառիցի։

Այլ պարտ է աննախանձաբար, և առանց ընչից, զնոյնն զոր ունի բաշխիցէ. քանզի Ածայինէ զոր ունի, և ոչ իւր

ին

ինքեան ։ Այլ երբեւ մխիթարդ իցես, յայլս առնել, յայլս մատուցանել · քանզի ընդունելութիւն եթէ նենգեսցէ պատժիցի · ով թագաւոր որք, դահեկան մի տացէ ծառայի իւրոյ, զի տացէ այլոց · արդ եթէ նենգեսցէ, ոչ ապաքէն պատժիցի, իբրեւ աւազակ եւ գող · եւ նենգող ։ Այսպէս եւ քահանայապետն, ծառայէ քահանայապետին Քրիստոսի, զոր տուեալ է դահեկանն իւր ՚ի նա, զի այլոց մատակարարեսցէ · ապա թէ նենգեսցէ, նախանձու ՚ի մէջ, եւ կամ ատելութեան, ոչ ապաքէն զնոյն անցս կրեսցէ · քանզի խոկալէս սխմանականութիւն, որ ընչիւք տացէ · եւ որ ընչիւք գնեսցէ · քանզի Սիմոնն մոգ, յորժամ կամեցաւ ընդունել, զշնորհս ՚ի հոգւոյն, խոստան գանս, եւ յընդրելոյն դասուց արհամարհեցաւ · ով ասաց Պետրոս եկեղեցւոյ, արծաթ քո ընդ քեզ լիցի ՚ի կորուստ · զի զպարգեւն Այ համարեցար ընչիւք ըստանալ, ոչ գոյ քեզ մասն եւ վիճակ ՚ի բանիդ յայդմիկ, քանզի սիրտ քո ոչէ ուղիղ առաջի Այ · քանզի դառնութեան մաղձի եւ կնճռան անիրաւութեան տեսանեմ զքեզ · եւ սաղմոս ասէ, խառնեսցին այնոքիկ որք ընտրեալքն արծաթով ։

Եւ քահանայապետին պարտ է, զի միապէս յամենեսին հայեսցի · ՚ի խնամարհագոյնս, ոչ զոմն սիրեսցէ, եւ զոմն նենգեսցէ, քանզի ամենքին իբրեւ անդամքն իւր · եւ ինքեանն, ով աչն աջոյ, եւ ձախոյ, վասն զի ոչ ոքէ, որ զձախու աչն առէ, եւ աջն սիրէ, զի երկոքեան անդամքն, այլ միապէս պարտէ սիրել, եւ խնամ արկել, վասն զի ոչոքէ որ զահեակն արտաքս իլէ, յաղագս աջոյն, զի առաւել փառաւորիցի ։

Այսպէս իմա որ սիրելին, իբրու աջոյ աչն, յաղագս հըպատակութեան, եւ յահեակն ատելի, յաղագս ըստահակութեան ինչ · ոչէ պարտ խլել զնա, այլ առաւել պարտ է դարմանել · վասն զի բնութեամբ է յանդամոյն, յորս իցէ ցաւ ինչ, առաւել խնամարկի եւ դարմանի, յաղագս ցաւոյն որ ՚ի նմա ։

Արդ որ ցուցանեալ է, յար եւ յաւէժ առաքելութիւնն խըռովեցուցանէ, տրտմեցուցանէ, վշտացուցանէ, առաքեցուցանէ, ՚ի պահս կրթէ, զի մի ցաւն յաւելցի, զըսպե-

զա

զանխս պատրաստէ, տուժի, և վտանգի, նուաղի, և ցամա-
քի, հալի, և մաշի, թերևս յապահովեալ կազդուրիցի:
Այսպէս և քահանայապետին պարտէ որ ձախու ակնէ ե-
ղեալ ըստահակնէ, ժառանգաւորայն եկեղեցւոյ, և աշ-
խարհականաց գեղջկաց, թէ արանց, և թէ կանանց, յորոց
և իցէ, ցաւս ըստահակութեն նոցին, յանձն առնուլ, և
զնմ զնախատացեալսն յինքն կրել, զի բժշկեսցի, և ոչ ար-
տաքս խլել, զի ոչէ որ յաղագս ցաւոց, զձախուակն արտա-
քըս խլեսցէ. վն այնորիկ սրբազանն ասաց առաքեալ, ո՞
հիւանդանայ, ես ոչ հիւանդանամ, ո՞ գայթակղի ես ոչ
տապանիմ. և յաղագս տն ասէ, վն մեղաց մերոց մատնե-
ցաւ, և վն մեր չարչարի, և վն մեղաց մերոց պատժեցաւ,
և թէ նա զհիւանդութիս մեր վերացոյց, և զցաւս մեր
եբարձ. և այնքան ցաւեցաւ, յաղագս ձախու ականն անձն
նր, մինչ կի ոչ գոյր նր տեսիլ, և ոչ փառք, այլ տեսիլ
նր անարգ նուաղեալ քան զամ որդւոց մարդկան. և թէ
ես ոչեմ մարդ, այլ որդն, և թէ ձայն տացէ որդն 'ի փայ-
տէ. և այնքան պահօք ճնշեաց, զանձն յաղագս ցաւոյն
յահեալ ակամն. մինչ զի զքառասուն տիւ, և զքառասուն
գիշեր ոչինչ ճաշակեաց. ոպ ասացն յաղագս այսորիկ մար-
գարէն, ծունկք իմ տկարացան 'ի պահոց. և մարմին իմ
այլագունեցաւ յիւղոյ: Եւ Ածաբանք ասեն, վն մերոյ
հիւանդութեանց Քս էառ զդեղն, քանզի բժշկեաց զմեզ
անսուաղութեն, յորժամ պահեաց զքառասուն տիւ քըր-
տամին, յորժամ եղեն քրտունք նորա, իբրև զկայլակն ա-
րեան ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր: Երակ հատանելոյն,
յորժամ բևեռօք և գեղարդեամբն խոցեցաւ, ըմպելեաւն
յորժամ ճաշակեաց զքացախն ը լեղւոյն. ըսպեղանեաւն,
յորժամ երեսք նր թքով մածեցան. յօշարականն և մա-
ճունաւն, յորժամ զմարմինն և զարիւնն ետ աշակերտացն
յետ ընթրեացն, և մարգարէն ասաց, յոտից մինչև ցգը-
լուխ չիք 'ի նմա առողջութի. և թէ ոպ վիրաւորս որք
ննջեն 'ի գերեզմանս, և զայլս այսպիսիս կրեաց, զի ա-

ռող

առողջացուսցէ զձախու աչն, որ էր մարդկայինս բնութի, որ մեղօք, և անօրէնութբ աղտեղացեալ էր. ոչ եհան, և ընկէաց յինքենէ, զտկարացեալն, և զաղքատացեալն, ըստ այնմ՝ աչք իմ՝ տկարացան յաղքատութենէ. այլ շնորհօք ողորմութե իւրոյ, այնքան գուն գործեաց, մինչև ողջացոյց զնա: Այս է գործ քահանայապետին, ըստ այնմ՝ թէ այսպիսի վայելէր մեզ քահանայապետ, որ զանձն ոչ խնայեաց, այլ յաղագս ամենեցուն մատնեաց. Նոյնպէս և քահանայապետին պարտ է նմանօղ նմա լինել, որպէս ասաց քահանայապետն, առ քահանայապետսն նմանօղք ինձ եղերուք, որպէս և ես քահանայապետին, Քի. որ բամբասեալ, և ոչ փոխարէն բամբասէր, չարչարեալ, և ոչ սպառնէր զըսպառնալիս: Նոյնպէս պարտ է ամ՝ քահանայապետին, թէպէտ չարչարիցին, ՚ի ցաւագնեալ յահեկէ աչացն, սակայն ոչէ պարտ պահել ոխս նենգութի, և զըսպառնալիս, որպէս և ասացն թէ համբերիցես, թէ ոչ կարեմ՝ աղաչել ըզ Հայր իմ՝, և հաստուցանիցէ ինձ այսր աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց. այլ զնախ ասացեալսն զամ՝ յանձին իւր ցուցանել. ըստ նմանութե քահանայապետին իւրոյ. զի որպէս նորա մկրօքն զմարդկայինս բժշկեցաւ բնութի, որ աղտեղացեալ աչն էր, որ բժոտեալ, և ցաւագնեալ. նոյնպէս և նորայս մկրօքն, սա բժշկիցէ: Ահեակ աչնս ցաւագնեալ յանձնեալսն ՚ի նա. մի̅ որոյ ոչէ սպառ, զինչ առնել առ նօքօք, այլ պահօք և անսուաղութբ, գետնախշտութբ, և զանազան առաքինութբ, սրտառուչ մաղթանօք, և ցաւագնեալ անձամբ, ըստ նմանութե տն իւրոյ, գուն գործեսցէ, հայթայթանօք զի առողջացուսցէ, և ոչ արտաքս խլեսցէ. քանզի կարի յիմարութիւն որ կամիցի հանել զաչս, յաղագս ցաւոց, թէ և խստագոյն ևս իցէ ցաւն, որպէս ասացն, զհիւանդացեալսն ՚ի հաւատս ընկալարուք:

## Գլուխ ԼԸ։

Յաղագս թէ ոչէ պարտ քահանայից և քահանայապետաց զոք բանադրել, վասն զի Տէրն հերձուածողաց հրամայեցաւ որք վնասակարքն եկեղեցւոյ, այլ թէ ոչ անէծքն յինքն դարձցի, ըստ այնմ թէ ասաց նոցա խաղէն ՚ի վերայ նոցա, և թէ որ սուր առնու սրով անկցի։

Սոյնպէս և եպիսկոպոսաց և քահանայից պարտ է անդուլ հոգւով և մտօք ցանկ հոգալ զխոնարհագոյնս, քանզի անդամքն քահանայապետին Քրիստոսի, որպէս նա յաղագս յանցանաց և ցաւոց նոցա, ոչ նենգեաց, և ոչ արտաքս եհան, նմանապէս և սոցա, ոչէ պարտ զնոսա նենգաւորաբար խոցել. այլ որպէս նա դարմանեաց, նոյնպէս և սոքա պարտին դարմանել և խնամել, և զցաւս նոցա ինքեանց համարել. քանզի ոչ ոք որպէս առողջ, զանդամն իւր նենգութեամբ խոցէ. թէ և չարագոյն ևս ոք իցէ։ Սոյնպէս եպիսկոպոսք և քահանայք, ոչ պարտին ընդ ումեք, ոխս նենգութեան, և ատելութեան ունել. այլ որպէս քահանայապետն մեր, յերկնից խոնարհեցաւ, յաղագս փրկութեան հոգւոց մարդկան, նոյնպէս և սոցա պարտ է զնոյն գործել. զխոտորհակացելոց զանդամն դեղօք բժշկել. և ըստ պէտս ամենայն բանիւ վարդապետութեան բժշկել, և ոչ անիծանելով և բանադրելով, քանզի և Քրիստոս ոչ իւիք ինչ այսպիսեացս ներգործեաց։ Այլ թէ որ ինչ այսպիսեացս արասցէ, արտաքոյ վարդապետութեան նորա է, և նշանակութեան հակի նորին, որովք գործովք զերկնաւորն ճանաչի, օրհնութեամբ, և անիծանիւք. զի մինն ասէ օրհնեցէք զանիծիչս ձեր, և թէ աղօթս արարէք ՚ի վերայ այնոցիկ որք լլկեն և հալածեն զձեզ։ Եւ յաղագս միւսոյն ասէ, անիծիւք, և դառնութեամբ և նենգութեամբ լի է բերան նորա, և ՚ի ներքոյ լեզուի նորա ցաւք և վաստակք. և ախտակալութեամբ, և նենգութեամբ իւրով, նրատի դարանեալ ընդ մեծամեծս, այսինքն է բնեղ չարոյն·

որ

որ դարմանալութիւն իւրով, տեսեալ նորա քարշեաց զեր-
րորդ մասն աստեղաց, ոպ̄ ասէ 'ի գաղտնիս ըսպանանել զան-
բիծն, տես զի առնելն զայն, ոչ լցաւ քաղցն նր̄, և ծա-
րաւ․ այլ և դարմանալով եղև արեան ամբծին, մինչև զնա
ևս քարշեաց, 'ի փառաւէնցաղ դրախտէն, և աչք նր̄ եղև
'ի դարանս զոր ետ եղբօրն, ըսպանանել զեղբայրն, և այն-
քան եհեղ զարիւն, մինչև ջուր ջրհեղեղին, ոչ կարաց լու-
անալ զնա․ քանզի ոչ բաւականացաւ աղքատացուցանել,
և 'ի տանէն ձգել, այլ իբրև զառիւծ 'ի մորւոջ իւրում
այսինքն 'ի դժոխս դարանակալ եղև, աղքատին, և տնան-
կին, ըստ այնմ՝ աչք նորա 'ի տնանկս հային, դարանի 'ի
գաղտնիս, ոպ̄ զառիւծ, 'ի մորւոջ իւրում․ դարանի յա-
փշտակել զաղքատն, և ձգել զնա։ Արդ որ սմին աշակեր-
տի, որ անիծիւք և դառնութե̄ լցցէ զբերան իւր, և բա-
նադրէ և կապէ զոք, որ անդամքեն Քս̄ի, և 'ի սատա-
նայէ յափշտակեալ, և աղքատացեալ զանազան մեղօք, զոր
ձգեաց զնա թշնամին այր, և փոխանակ ըսպեղանեացն, և
կամի ի̄ն նմա յորոգայթ իւր խոնարհեցուցանել զնա, այլ
զի՛նչ ասէ վն̄ նորա, և սորա, ինքն խոնարհեցի, և անկցի
'ի տիրելն իւրում 'ի վր̄ տնանկաց․ և ոպ̄ նա 'ի դարանէն
իւրում անկաւ, նոյնպէս և լինելոցեն աշակերտեալքն, զի
ասաց մարգարէն․ վն̄ նենգութե̄ նոցա, տարագիր արաս-
ցես զնս̄․ քանզի եպիսկոպոսաց, և քահանայից․ և ա̄մ ժա-
ռանգաւորաց եկեղեցւոյ, անուանք գրեալեն, զ գիրն կե-
նաց․ ըստ այնմ՝ խնդացէք, զի անուանք ձեր գրեալեն
յերկինս․ այլ յորժամ նենգութե̄, սխալականութե̄, և ա-
տելութե̄ վարեսցեն, տարագիր նոյն ժամայն լինին, ոպ̄
ասայն տարագիր արասցես զնս̄, կործանեսցես զնս̄ յանօ-
րէնութե̄ իւրեանց․ քանզի այսքան կործանումն որ 'ի բն-
նութիւն եմուտ, ո՞չ ապաքէն 'ի նենգութենէ էր․ որ 'ի ներ-
քոյ լեզուի ունէր զ ցաւս և զվտանգ, որ յայտնեաց առ-
աջի մարդն, որ նախ զ քաղցրութիւն եդ առաջի անմե-
ղին, և ապա կալաւ զնոսա ոպ̄ զառիւծ, ըստ այնմ հա-
մա

մարթացան ինձ ո՜վ զաւակ իմ զի պատրաստի յորս, ո՜վ կորիւն առիւծու, զի նստի դարանեալ. քանզի անուն քաղցրութին ես առաջի, այսինքն, Աճանայն, և ապա ցուք և վաստակքն յայտնեցան, ո՜վ ասացն 'ի ներքոյ լեզուի նո՛, ցուք և վաստակք. և դարձեալ ընդ իս զխաղաղութի խօսելն, և ինքեամբ բարկութեան զնենգութեն խորհէին: Իսկ սոցին իսկ նմանին, որք զհետ շաւղաց նոցա, ընթանան, անիծիւք և դառնութեան բանան զբերանս իւրեանց, և ոչ Ք՛ի, որ յաղագս չարչարողացն աղօթս և պաղատանս մատուցանէր, և զխոցողս իւր օրհնէր, և յաղագս նոցա, զթողութին խնդրէր, ուրում յայտնի եղև, զի երկեակք, այսոքիկ հակքեն. արդ որ միոյր միայնոյր ծառայէ, հարկիւ 'ի միւսայն 'ի բաց կայ. քանզի ոչ 'ի միք 'ի մի ժողովին և զետեղին, երկեակքն ներհակք: Արդ՝ ասա ինձ, ո՞ 'ի նոցանէ թուի քեզ, մերձաւոր լինել բնութեան, քև զայլս իմաստասիրեա աղաչեմ, որհնողն զքեզ սիրես եթէ անիծանողն. մատնիչն, եթէ՞ աշատիչն, ըսպանողն, եթէ կեցուցիչն: Եւ այսպիսեօք պարտէ ճաշակել, զաշակերտսն Ք՛ի, որ զչարչարիչսն օրհնեաց, զմեղս թողեաց, զկապանս լուծեաց. ընդ յանցանս տարաքարձեց. քանզի նա զայս ամ՛ արար, և աշակերտացն ուսոյց, թէ յորժամ ծանիցեն, թէ իմ աշակերտքէք, ո՜վ ես զանդամալուծին, նախ զյանցանս թողի, և ապա բժշկեցի, 'ի մեղաց լուծի, և ապա ասացի արի առ զմահիճս քո, և երթ 'ի տուն քո. այսինքն զլուսեղէն պատմուճանդ, զոր մերկացար 'ի փառաւորենցդ դրախտին, և երթ 'ի տունն յորմէ եղեր. քանզի անդամալուծն նշանակէր զԱ՛մ, մահիճն, զլուսեղէն պատմուճանն, և տունն զդրախտն: Արդ սատանայ զսա մեղօք կապեաց, և Ք՛ս արձակեաց, ո՜վ ինքն ասաց առ ախտացեալն, թէ ընդ սա կապեաց սատանայ, ո՞չէր արժան արձակել 'ի շաբաթու. անօրէնութեամբ նա պարափակեաց, և սա տարալուծեաց, մերկացոյց նա, և սա զգեցոյց. նա արտաքսեաց, և սա եմոյծ, նա զպուանիկն շաղախեաց 'ի մեղս, և սա ազնուեաց. Ը՛

այնմ

այնմ թողեալ լիցին քեզ մեղք քո. երթ 'ի խաղաղութիւն.
որ և ինքն իսկ ասաց, սա դուստր Աբրահամու էր. Աբ-
րահամ նշանակէր զՀայր Այ, իսկ դուստր նր զԵւա. որ
անդամալուծն Ադամ, և երկոքեանն արձակեցան, և 'ի փառա-
ցըն հրաժարեցան: Եւ այսպէս նա 'ի տանջանս, 'ի կապանս
և 'ի ցաւս, շարաչարեալ: Իսկ տէրն յամէ յայսոսիկ ելոյծ:
Նոյնպէս և զՂազարոս, 'ի մեռելութենէ 'ի կենդանութիւն
հրաւիրեաց. զոր նա 'ի կենդանութենէ 'ի մեռելութիւն. Ըստ
այնմ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ. քան-
զի և սա նշանակէր զԱդամ, զոր սատանայ ջամբելով ըզ
պտուղն, մահացուցիչ եղեան, ըստ այնմ յաւուր յորում
ուտիցես մահու մեռանիցիս, և Քս զսա կոչեաց, 'ի մա-
հուանէ 'ի կեանս, ըստ այնմ եղ մեռեալն ոտիւքն կապե-
լովք, և ձեռօքն երիզապնդօք, և երեսօքն վարշամակա-
պատօք. և ասաց լուծէք զդա և թողէք երթալ. զի գե-
րեզմանն նշանակէր, զդժոխս, ղազարոս զԱդամ, ձեռսն
և զոտսն կապեալ, մեղքն, և անօրէնութիւն, վարշամակն
երեսացն, զտգիտութիւն, և զանիմաստութիւն, չորեք
օրեայ մեռելութիւն քառանիւթեայ մեռելութեան յարու-
թիւն, վէմն զխստասրտութիւն, և յայոցանեաց յամենե-
ցունց, ասաց լուծանել, և թողուլ երթալ 'ի կեանսն:
Ձի միտք նր նշանակէր զմարդկային միտս, ըստ այնմ Ճր-
րագէ բան քո ոտից իմոց, զոր կապեաց սատանայ, զի մի
խոկասցի զԱյսն. զի որ բոլոր անձն ոտիւք գնայ և ըն-
թանայ, նոյն և բոլոր հոգին, և ամ զգայութիւք, միտք
շարժի, ձեռքն կապեալ երիզապնդեալ, զբանականութիւն
նշանակէր, երեսք զպատկերն Այ նշանակէր զոր կապեաց
սատանայ, նախ աստեղովքն, յամէ արձակեաց Քս:
Եւ տիրեալ այլ ևս բարերարութիւքն, որ եղ 'ի նմանէ, զոր
'ի սատանայէ անիրաւաբար, էր հեղեալ, յամէ զներհակս
նր արար և գործեաց, և ելոյծ զգտեալ չարիս նր:
Եւ այսպէս պարտէ արքայունից քահանայապետից, յոր և
կայէ հայել 'ի քահանայապետս յայս, և զնորայն երթալ
պա

պողոտայ, և ոչ յաջ և յահեակ խոտորիլ, որ նա ոչ որինչ առնէր, և ուսուցանէր, քան զորջնելն, և զբարիս առնել չար առնողացն. և ոչ զոք բանադրանօք, և անիծիւք հատանել յանդգամոցն Քսի. քանզի չարագոյն զինուորքն պիղատոսի, ոչ համարձակեցան պատառել զպատմուճանս նր, և որքան դառնագոյնք էին, անբարիշտք, և անգութք, որք զմարմինն Քսի վիրաւորեցին, խոցեցին, և զկողս նր բացին, մինչ գրեթէ յոտից մինչև ցգլուխ չիք ՚ի նմա առողջութի, բայց յանդգամոց նր ոչ ոք իշխեաց հատանել, և կամ զպատմուճան նր պատառել, ուրեմն չարագոյն քան զայնոսիկ երևի որ զայնոսիկ ի կիր արկանէ. քանզի զսուրն զոր ետ Քս, ոչ յաղագս հատանելոյ զանդամս իւր ետ. այլ զմեղս և զանօրէնութիս հատանելոյ, քանզի հաւատացեալք՝ անդամքն ձեռք, անդամք ոտք, անդամք աչք, անդամք ունկն, և այլք: Արդ ո՞վ իցէ որ զառն անմեղ, սպանանիցէ, ընկեանիցի զակն հանել, և զունկն հատանել, և զայլ մասունս յանդգամոց նր, համաւամբ բառնանել. արդ եթէ համաւամբ դառանցն անբանից, զայսպիսի մասանցն սպառումն ունի, որքան զառլինն Այ. պարտիմք խնայել, հատումն յանդգամոցն, և սարսափել ՚ի մասածումն: Վս որոյ աղաչեմ զսրբազանոդ, մի յաւելուցուք դնել ցաւս ՚ի վր ցաւոց նորա. քանզի կատաղի հրէայքն, և չարագոյն զինուորքն պիղատոսի, խնայեցին, աղաչեմ զի և դու խնայեսցես, զի մի յաւելցի ցաւս ՚ի վր ցաւոց նորա. այլ թէ յանդգնիցի, և ըսպանցէ զոք յանդգամոյն, նենգութբ, և կամ ատելութբ, նզովիւք, և կամ անիծաբանութբ, լինին այնուհետև ըսպանողք և դահիճք:

Բայց սակայն բազում անգամ՝ ըսպանողքն դատապարտեալք լինին, և ըսպանեալքն երջանկացեալք. որպ Աբէլ թէպէտ ըսպանեալ եղև, ՚ի նենգաւոր յեղբօրէն, սակայն երջանկացաւ, իբրև զհոտ անուշից ՚ի բուրումն Այ. այսպէս և Տրն թէպէտ և ըսպանաւ, ՚ի նենգութենէ չարագոյն հրէիցն, սակայն ըսպանումն նորին, փրկութիւն

գոյ

գործեցաւ. և ծնրեանք, դատապարտեցան: Վ̄ս այսորիկ
աղաչեմ զօրքաշանսդ, զի նրբաքննին խոհականութ̄բ զըննեսջիք. զի ասացաւ յօրէնսն, անձն ընդ անձին, և յատեանս կենցաղոյս, սոյնպէս վարքս. արդ՝ եթէ դու սրովդ
հոգւոյն, անձն մի ըսպաներ, պարտիս ը̄դ դատաստանի ա̄յ,
և աշխարհի զանձն քո նմին. զի երկինք և երկիր, անցցեն
և բան իմ ոչ. զի ո՞չ դու սրովն Ա̄Յ զնա ըսպանէր, նոյնպէս և դու պարտապան նմին եղէր հատուցման, զի դատաստանն Ա̄Յ, արդար երևիցի: Արդ՝ եթէ նա զնմանն
եսպան, նմանոյն պարտապան եղև, և եթէ զանդամն Ա̄Յ.
ապա զի՞նչ ինչ նմա հատուցի. քանզի ոչէր հաւասար.
եթէ զանձն քո, և կամ զանդամոց տայցես փոխանակ, զի
իրաւունք դատաստանին յայտնիցի. զի յանհասանելւոյն,
հասանելին ոչէ հակ: Վ̄ս որոյ ոչէ հատուցումն, եթէ
այն քո՝ փոխանակ անկանի նորին տայցես, նոյնպէս և զայլսըն. յաղագս որոյ է յոյժ սարսռումն, յիրողութիս յայս.
քանզի վ̄ս այսպիսեացն ասաց մարգարէն, ով դու մարդ
հաւասար իմ, առաջնորդ իմ, և ծանօթ իմ. քանզի 'ի հօրէ լուսոյ, առաջնորդէ 'ի վ̄ր անդամոյն Ք̄ի, որ համբնութ̄բէ. այլ յորժամ խողխողեսցէ, զի՞նչ տացէ պատասխանի, զի յաղագս այնորիկ կացուցեալ եղեր, զի ը̄դ
նոյն կերակուր քաղցրացուսցես, քեզ, և անդամոյն Ք̄ի,
զոր օրինակ յետագոյ բանիւն յայս առնէ, ապաքէն 'ի
նոյն քաղցրացուցեր ինձ և քեզ կերակուր, յորժամ աննենգաբար ճնշակեսցի, քաղցրանայ մարմինն Ք̄ի ինքեանց, և անդամոցն Ք̄ի, յորժամ զնայ միաբանութ̄բ
'ի տանն Ա̄Յ: Եւ եթէ ոչ այսպէս, այլ նենգութ̄բ և բաժանմամբ, և պատառմամբ, անիծանելով, կապելով, և բանադրելով. զի՞նչ վ̄ս նոցա ասէ. եկեսցէ մահ 'ի վ̄ր նոցա,
և կենդանւոյն իջցեն 'ի դժոխս, զի չարութիւնք, 'ի բնակութե̄ նոցա, և 'ի մէջ նոցա: Ո՛ի խոտորեցան, և անիրաւութ̄բ, ոխս պահելին, և ոչ պախուսեալ 'ի հրապարակաց
նոցա, վաշխի և նենգութե̄: Եւ յետ այնորիկ վ̄ճիռ հա

տու

տուցանելով եղերեցուցանէ, դու Ած խնամեսցես զնոսա ՚ի գութ ապաշխարութեն, որք արիւնահեղք և նենգաւորք մի հասարակեսցեն զաւուրս իւրեանց. վն զի ասէ դարձեալ զայր արիւնահեղ և նենգաւոր պիղծ առնես դու Տր. և զի այսպիսիքս, ՚ի վաստակս Այ ոչ են, և ոչ մարդկան, վն այնորիկ ասէ, և ըստ մարդկան ոչ տանջիցին. քանզի ոչ ասացաւ նախնումն թէ Ածասպանին ոչ իցէ հաւատարմութիւն ընդ այլսն, ապաքէն՝ ոչ ընդ ումե՛ք: Զի ոչ ոչէ վաստակաւոր ընդ մարդկան, այսինքն օրհնաբանիչ, և դարմանիչ, այլ դահիճ, յաղագս խողխողելոյ զանդամն Այ, ոչ տանջեցի ընդ նոսա. այլ որպէս ասացաւ ասէ մարգարէն, վն նենգութեն նոցա տարադիր արասցես զնս, կործանեսցես զնս վն անօրէնութեն իւրեանց. քանզի արդար և այնպիսիքնեն անօրէնք, և առաւել քան զանօրէնս:

Զի որ անօրէն կարէ զայս Այ հանել, և զունէն, և ըզ ձեռսն և զոտսն հատանել, ո՞չ նոքա որք ՚ի վաստակս մարդկան չեն, այլ թէ առաքեալս, թէ ապա ընդէ՞ր առաքեալ զկորընթացի երիտասարդ, մատնեաց սատանայի. ասեմ տերանցդ՝ զի նա զմայր իւր կենարար, որէր կին հօր իւրոյ, զի թէպէտ ոչէր ՚ի նմանէ ծնեալ, այլ զի կիներ հօր իւրոյ, մայր համարիւր, ՚ի հաւատացեալս և յանհաւատս. վն այնորիկ ասաց թէ այնպիսի գործեաց, որ ոչ և ՚ի հեթանոսս, ո՞չ թէ զկին հօր իւրոյ ունել: Արդ յաղագս այլոց պատճառաց, գրեաց չհաղորդիլ ընդ նմա. այլ սակայն փաղփաղեաց, թէ մի իբրև զթշնամի ունիցիք զնա, այլ հաստատեսջիք ՚ի նա զսէրն, զի մի առաւել տրտմութենէն ընկղմեսցի: Տեսանե՞ս ո՛վ սրբազան, թէ որքա՛ն երկիւղ ունի, որ զխիւրս բիւրոց, ՚ի հաւատս էած, ո՞չ ինքն իսկ վկայէ, թէ յԵրուսաղէմ մինչև ՚ի լիւրիկէ լցի զաւետարանն Քի. և ՚ի վն միոյն ծայրագոյն, անօրէնութեն գործողին, այնքան ցաւի, կսկծի, և մրմռի. ապա դու սրբազանդ, որ ոչ ՚ի միք ածեր, զանէր՝ և ածեր ՚ի հօտըն Քի, զո՞ր պատասխանի տացես յանձնողին ՚ի քեզ

ցիւրան

զհուրան, որ ըմպառես անհեծանելք, և պէտղէս չէկանօք. և ոչ ցուցակցաբար բառնաս զցաւս և զհիւանդութիւն ախտացել յոչխարացն, զոր օրինակ առնէր սրբազանն ում և ասէր, ո՞ հիւանդանայ ես ոչ հիւանդանամ, ո՞ գայթակղի ես ոչ տանջանիմ: Եւ ո՞րն թէ՝ ո՞րքան աննենգաբար զանձն իւր եդ ՚ի վ՞ր ոչխարաց, և զկորուսելոյն դառնալ՝ եդ ՚ի վ՞ր ուսոց իւրոց խնդալով և դնաց ՚ի տուն իւր, և արար ուրախութիւն, ցնծութիւն, և զուարճութիւն յերկինս ընդ բարեկամս իւր, և ասաց ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկորուսեալ. մ՞ն այսորիկ յոտս անկեալ սըրբազանիցդ արտասուալից պաղատանօք, նմանօղք լերուք տ՞ն ձերում, և իւրոյն օծարանի առաքելոյ. զի կարողաջիք, և դուք ասել ահա ես և մանկունք իմ անպակաս, զարդարեալ և պայծառացեալ ողջութ՞բ, և բարեգոյն բարեբարութ՞բ, զոր ետուր ինձ. յայնժամ լուիցես զքաղցրալուր բարբառն ն՞ր, արի եկ մերձաւոր իմ, որովհետև ՚ի սակաւուդ հաւատարիմ եղեր, այսինքն ՚ի սակաւ ժամանակումդ, որ էայ գնաց, այսու հետև ՚ի վ՞ր բազմաց կացուցից զքեզ. այսինքն, յայնմ ժամանակի, որ ոչ երբէք անցանի, եկ և մուտ յուրախութի տ՞ն քոյ: Օհ զհօտն զոր ետու ՚ի ձեռս քո ոչ զոք կորուսեր, ոչ ումեք նենգեցեր, և ոչ զոք յանդամոցս հատեր, այլ արածեցեր ՚ի վայրի դալարուոյ, և ՚ի ջուրս հանգստեան սնուցեր. վայր զԱ՞ծութիս իմ, դալարի զմարմին և զարիւն իմ, և ջուր հանգստեան զմկրտութիւն իմ, զոր ես մկրտեցայ, և զոր ինչ պարտէր առնել արարեր. եկ զի ահա յայսմ հետէ կայ և մնայ քեզ արդարութեան պսակն, մ՞ն զի նմանօղ ինձ եղեր: Օհ ով հայր իմ զգործն զոր ետ ինձ կատարեցի. նոյնպէս և ես քեզ զոր ետու կատարեցեր. ահա յայսմ հետէ զփառս անճառս եկ և վայելեա. զի զփառսն զայն զոր ետ ինձ հայր, և ես քեզ աննուազապէս տամ: Մատիր մատիր, ազնիւ բարեկամ իմ, և ոչ ծառայ՝ զի ծառայն ոչ գիտէ զի՞նչ գործէ տ՞րն ն՞ր. որ ՚ի փոքրուդ հաւատարիմ

եղ

եղեր, լիցիս ունել իշխանութիւն ՚ի վր՟ տասն քաղաքի. այս-
ինքն, ՚ի վր՟ տասն բանականաց դասուց, ինն անմարմնից, և
միոյն մարդկանց. որ լինի տասն: Եւ այսու տասն պայծա-
ռութբ՟ հաղորդեաց ընդ մարմնոյ և ընդ արեան իմոյ. և
հաղորդեաց ընդ անմահական սեղանոյ, և հաւասարեաց ը՟
գլխոյս, և գնայ միաբանութբ՟ ՚ի տանն Ա՟յ, ը՟ որբագնա-
գունիցն դասուց. և տեսլեան լուսափայլ յարունս իմոյ.
ընդ մաքրագունիցն դասուց. քանզի այսպիսեօք անունենք,
և անխարդախ ճաշակմամբք հրաւիրեցեր ՚ի քեզ, զամենա-
մբ Երրորդութեն: Եւ ահա յայսմ հետէ ուրախ լեր, ա-
ռատապէս, որ ոչ երբէք սպառի, և զուրախութի քո ոչ
ոք հանէ ՚ի քէն. քանզի այսպիսոյ ճաշակումն, է մեղաց
լուծումն, չարեաց բարձումն, անօրէնութեց քակումն,
հիւանդութեց փարատումն, դրանց երկնից և արքայութե
բացումն. վիրաց պատումն, հաւատոյ հաստատումն, խոզխո-
ղանաց բաժանումն, յուսոյ անտրտում՝, սիրոյ հաստա-
տումն, առաքինութեց կազդուրումն, խաւարի փարա-
տումն, խոհեմութե կատարումն, արիութե զօրացումն,
ողջախոհութե կազդուրումն, արդարութե զարդարումն, և
բոլոր անձին, զվերոյն խոկումն, աստուածականութե տեն-
չումն. և աստուածականութե, ոպ՟ լուսոյ ընդ օդոյ, ը՟ Ա՟ծ-
ութե միացումն, և ոպ՟ հուր ընդ երկաթոյ, ընդ արարչին
համաշուգումն, մտաց ուղղումն, խորհրդոց մաքրումն:
Եւ այսպէս ամենևին, զՔ՟նոյն մարդոյն մերկացումն, և
նորոյն զգեցումն, և Ա՟ծացեալ ընդ Ա՟յ միաւորութիւն:
Քանզի յիրաղութիւս յոյս, պարտէ սպարզութի յանձի, ու-
րում ոչ միայն այսու պտուխք զգուշանալ, այլ և ատե-
լութիւն մեղաց, զի մի ոխս ինչ, և կամ նենգութիւն ներ-
երևիցի ՚ի հաղորդեալսն, և ՚ի հաղորդեցուցչէն արտաքս
ընկեցեալ գտանիցի, քանզի բնութբէ պատշաճն ը՟ պատ-
շաճելոյն համաշուգի, զոր օրինակ լոյս ընդ յօդոյ, և ոչ
ընդ խաւարի միանայ, և ջերմութի հրոյ ընդ երկաթոյ
կարելի է միաւորիլ, և ոչ ընդ ձեռն, զի պատրաստն ընդ
պատ

պատրաստելոյն հաղորդեցաւ, և ոչ ընդ անպատշաճին. և այսպիսիս կարևորագոյնէ: Նոյնպէս և հաղորդողայն, ո՛ որ և իցէ որք կամին միաւորիլ ընդ հաղորդելոյն, պարտին յոյժ զանձինս պատրաստագոյն ներերևեցուցանել, զի համանմանիցին ընդ հաղորդելոյն: Որդ՝ հաղորդութիւն այս, որ է միաւորութիւն ընդ Ածութեն, է ծայրագոյն բարի, և անոխակալ բնութիւն, և աննենգ էութիւն, ըստ Սողոմոնի, զի ճանաչէ ԱՅ զօրութեն ըստ այնմ՝ Քսի ԱՅ զօրութիւն, և ծագումն ճշմարիտ փառաց ամենակալին, վա այնորիկ և ոչ մի ինչ պղծեալ խառնի 'ի նա, ուրեմն որ կամի հաղորդիլ ընդ նմա, պարտի ըստ նմին աննենգ լինիլ. ոպ ասէ պրոկղոս, պարտ է հաղորդեալն, նմանիլ հաղորդելոյն, զի նոյթըն պատրաստագոյն լինիցի: Եւ զի՞նչ պատրաստութիւն իցէ, զի թէ մարդկօրէն ինչ յանցումն իցէ. առ միմեանս թողուլ. և շնորհել իրերաց, ըստ առաքելոյն, որպէս Ած Քսիւ շնորհեաց մեզ. քանզի ով իցէ 'ի մսեղեացս, որ ոչ սխալիցի, կամ բանիւ, կամ գործով, և կամ խորհրդով. յաղագս որոյ որ սխալինն, առ ընկերս, և կամ առ կարգակիցս, վաղվաղակի պարտին փութալ պահել զմիաբանութիւն, որ է սէր հոգւոյն, յօդիւ խաղաղութեն:

Զի յորժամ զժտուքն ինչ տարաբաժանեալք իցեն յօդոյն, միասցին խաղաղութբ 'ի ձեռն հաշտութե սիրոյ. զի մի մնացէ արեգակն արդարութեն Քսի և աներևութասցի 'ի մէնջ, և կամ անյայտ լիցի ըստ առաքելոյն: Վա այնորիկ և տրն ասաց, 'ի մատուցանել զպատարագն, եթէ հաշտեաց ընդ այնմ, որ ունի զխէթ ինչ զքէն. վա զի յայսպիսեացս, ոչ միայն Քս որ արեգակնէ արդարութեն սայ սերի այլ և ամենազօր սբ հոգին Ած, խոյս տուեալ այսպիսոյս փախչի, ըստ Սողոմոնի, զի սբ հոգին իմաստութեն փախիցէ 'ի նենգութենէ, և հեռասցի 'ի խորհրդոց անմտից. ոպ և գործով ևս ցուցաւ, 'ի ժամանակս Ածակրացն. յորժամ եղբայր ումն խնդրեալ կոփիչ յումեմնէ, և նա ոչ ետ, և գնաց տրտմեալ, և 'ի կիւրակէն մինչ դեռ զպատարագմատոյց

խոր

խորհուրդն կատարէին, ոմ՛ սովորութիւն էր հոգւոյն Ս.Յ, իջանել ակն երև, աղաւնակերպ 'ի վ̃ր սոսկալի խորհրդոյն, ոչ եւս, իբրև ամենեքեան զարհուրեցան, և ահիւ պակեան, ասէ քահանայն ցսարկաւագն, զի հաւատովն ներ երևեցի, զի կամ յաղագս իմէ, արգելուամ այս, և կամ վ̃ս քո. արդ՝ եւ դու, զի հաւատացի, և իբրև եւ, առ ժամայն, էջ Ս.Ճ հոգին, 'ի վ̃ր սրբագործութեան, և իբրև կատարեցաւ խորհուրդն, ասէ քահանայն ցսարկաւագս, ասա ինձ զակն, զի՞նչ ինչ գործեալէ քո, որոյ յաղագս արգելաւ հոգին Ս.Ճ յՍ.Ճագործութենէն: Եւ նա դողալով ասէ, ոչինչ գիտեմ խիղճ զանձնէ, բայց զայս և թէ, զի յեռանդեանն եկն առիս եղբայրն, և խնդրեաց զայս ինչ, և ես ոչ ետու, և գնաց տրտմեալ, յայնժամ ասէ արդար և 'ի տրտմութիւն եղբօրն, արգելաւ հոգին Ս.Ճ: Արդ՝ ով որբաշխանք եթէ դուզնաքեայս զայս, արգելու ըզ հոգին Ս.Ճ, որ 'ի սակի տրտմութենէ, ապա զմեծամեծս որքան ևս. քանզի զոր ինչ և գործէ, խոցօղ ներնգաւորն ոչ ինչ օգուտ բերէ, ոմ՛ և ասենն Ս.Ճաբանք ըստ բնականին, ոչ պահք, ոչ աղօթք, ոչ ողորմութիւն, ոչ կուսութիւն, և ոչ այլ ինչ առաքինութիւն, և մանաւանդ թէ և մարտիրոսութեան արեան հեղումն, ոչ բերէ օգուտ ինչ, ոմ՛ և եղև և ցուցաւ, զոր ոմն 'ի քահանայից, անտանելի կարծրագոյն տանջանաց համբերեալ, և յաղագս ոխակալութեան որ ընդ ումեմն, 'ի ժառանգիլ պսակին, զրկեցաւ, յաղագս այսորիկ ա՛յ տէրն, խորհեա թէ եղբայր քո, ունիցի ինչ խեթ զքէն երթ նախ հաշտեաց և ապա եկեալ կատարեա զպարիսդ զոր խորհեցեալդ էս: Օվ թէպէտ բարիքն այն իբրև ըսպեղանիքնեն, յաղագս խոցուածոց, զորս կրեմք 'ի սատանայէ, 'ի մարմնոյ, և յաշխարհէ. սակայն թէ սլաք նետի, թշնամւոյն է 'ի մարմնոյ մերում, ոչինչ օգնեն ըսպեղանիքն. վ̃ս այն հրրամայեաց տէրն նախ զսլաքն հանել, և ապա ըսպեղանին 'ի վ̃ր վիրին դնել զի ողջասցի. վ̃ս այնորիկ ըստ բնականին խօսելով տէրն, ասէ հան նախ զխեթն, որէ սլաք նետին

քոյ

քոյ, որ հարեալես 'ի սիրտ եղբօր քոյ, և ապա զառաքի-
նութեան գործեա, զի մի լինիցի ան օգուտ: Ապա թէ այ-
նոքիկ, որք և ոչ միով եղանակաւ, իցեն խոցօղք, և հա-
լօղք նեղիչք, զսիրտս եղբօրն, զի՞նչ ինչ գեհեան ընկալ-
ցի զայնպիսին, որ ոչ նախ մեկնի և ապա մերձի:

Զի թէպէտ և պատարագեսցէ որ ծագ ամ առաքինութե-
ցէ սակայն ոչ ինչ օգուտ բերէ ինքեան, և կամ այլոց.
յայնպիսեացն, ոչ միայն հոգին Ած արգելցի, և մտցէ
արեգակն արդարութեն, այլ ո՛չ ասէ Եսայի, եթէ այնպի-
սին մատուցանիցէ զեզն պատարագ, այնպիսին, ո՛չ թէ ոք
հարկանիցէ կառափ մարդոյ, և որ մատուցանիցէ զոչխար
պատարագ, այնպիսին է ո՛չ թէ զշուն ոք մորթիցէ, որ մա-
տուցանիցէ ոք նաշիհ, այնպիսին է, ո՛չ թէ հեղուցու ոք
զարիւն խոզի, և որ տացէ զկնդրուկ, 'ի խունկ յիշատա-
կաց, այնպիսի իցէ ո՛չ հայհոյիչն: Նա դարձեալ ասէ, զի՞
կայ իմ և յաճախելոյ, զոհից ձերոց ասէ Տր. յագեալ եմ
ողջակիզօք, խոյոց ձերոց. և զճարպ գառանց և զարիւն
ցլուց, և նոխազաց, ոչ կամիմ, և ոչ թէ գայցէք յանդի-
ման լինել ինձ, ո՞ խնդրեաց զայդ 'ի ձեռաց ձերոց, կոխել
զգաւիթս իմ, մի յաճախէք. թէ մատուցանիցէք ինձ նա-
շիհ, զուր է. խունկ ձեր պիղծ է ինձ, զգլուխ ամսոց ձե-
րոց. և զշաբաթս, և զօրն մեծ, ոչ առնում յանձն, ըզ
պահս և զդատարկութիւս, և զամսագլուխս ձեր, և զտօնս
ձեր ատեաց անձն իմ, յագեալ եմ ձեօք, ոչ ևս ներեցից
մեղաց ձերոց. յորժամ համբառնայցէք զձեռս ձեր, դար-
ձուցից զերեսս իմ 'ի ձէնջ. և թէ յաճախիցէք յաղօթս,
ոչ լուայց, ընդէ՞ր, ասէ զի ձեռք ձեր լի են արեամբ. ո՛չ և
սաստ կանէնի, արիւն եղբօր քոյ գոչէ առ իս: Այլ զի՞նչ
ասէ, ոչ այնպիսին ընտրեցի ես ասէ Տր, այլ լոյծ զկըն-
ճիռն անիրաւութե. քակեա զխարդախութիւդ, և զամ
մուրհակս անիրաւութե պատառեա, յայնժամ ծագեսցի
կանուխ լոյս քո. և բժշկութի քո վաղվաղակի հասցէ:

Տեսանես արդեօք, թէ ո՛չ ըստ բնականին խօսի Ած, ո՛չ

առ

ասացին Ածաբանք, թէ որքան է սլաքն ՚ի մարմնի, ոչ ներգործէ ըսպեղանին վիրին, վս այնորիկ ասաց Տրն, հան զխէթն, ՚ի սրտէ եղբօր քոյ, և ապա մատո զոր ինչ և մատուցանես: Վս այնորիկ գարշեալ ասէ Եսայի, ոխակալութիւն. և ամբարտաւանութիւն, բարձ ՚ի քէն. վս զի այնքան դառնագոյնէ. որ իբրև զատամունս օձի. համարեալ է. քանզի ող ամբարտաւանութիւն և հպարտութիւն գըլուխէ կամակոր օձին. սոյնպէս և սա ատամունք, այսինքըն, նախանձն, ոխալութիւն, նենգութիւն, ատելութիւն, գրգռութիւն, բամբասանքն, յորոց և ծնանի և զրպարտութիւն, մատնութիւն, և չարախօսութիւն, դատարկաբանութիւն, աղաղակն, վճեան մահու, արեան հեղումն, ըսպանումն, և մաշն գլխովին. քանզի թէպէտ ամբարտաւանութիւն և հպարտութիւն գլուխէ կամակոր օձին, այլ այսորիկ ատամունքեն նմին. յորմէն ամ պատճառք մահու, քանզի թոյն օձին, յատամունս է նորին: Որպէս և ամ թոյն, մահացուցիչ հոգւոյն, յայսոսիկ են զետեղեալ, իբր այնմ Ած զմահ ոչ արար, այլ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ, վս զի յորս ՚ի սոցանէ մերձենայ ոք մահացուցանէ, ող և օձին, յորոց և ատամանց խածանիցէ, ՚ի մեռեղնեաց, և մնացէ ՚ի մարմին, առ ժամայն ըսպանանէ: Յաղագս այսորիկ ասաց մարգարէն, ՚ի դիմաց տն, ՚ի նեղութեան իմում ես առ տր կարդացի, և լուաւ ինձ տր, փրկեաց զանձն իմ ՚ի շրթանց նենգաւորաց, և ՚ի լեզուաց չարէ. քանզի տրն ոչ ինչ մեղաւորաց, այնքան զզուէր, և վիրաւորիւր, ող յամբարտաւանից, և ՚ի նենգաւորաց. վս զի ընդ ամենեսեան հաղորդիւր, ճաշակէր, և սեղանակից լինիւր, հացակից ուտակից, ճանապարհորդակից, և բնակից և այլոց ամենեքումբք, ող ընդ մաքսաւորս ճաշակէր, և սեղանակից լինիւր. նոյնպէս և ընդ շնացողս, ընդ պոռնիկս, ընդ գողս, և ընդ աւազակս, որք խաչակիցք եղեն, ընդ ծոյլս, և ընդ պղերգս, և ընդ այլ և այլ չարագոյն մեղաւորս, բայց ոչ երբէք ընթերցեալ լինի թէ

ընդ

ընդ քահանայապետս երբէք նըստաւ, և եղ, եկեր և էարբ, և կամ՝ ընդ նմ 'ի խորհուրդ ինչ եմուտ․ ո՛վ աստղն 'ի խորհուրդս ամբարշտաց ոչ գնաց․ և յաթոռս ժանդից ոչ նըստաւ, և կամ՝ հացակից, սեղանակից և բնակից եղև նոցա, որք անբարտաւանք էին, և ոխակալք, որք արեան էին ծարաւիք, և ըստանութեան փափագիչք, և լեզուք նոցա ո՛վ սուր սուսեր որեալ, 'ի հեղումն արեան, Ը այնմ սրեցին զլեզուս իւրեանց ո՛վ զօձի, և թոյնք իժից 'ի ներքոյ շրթանց նոցա։ Նու յայսպիսեացս նեղութեց, աղաղակէր, և վաղվաղակի փրկէր, 'ի շրթանց նենգաւորաց, և 'ի լեզուաց չարեաց։ Ամ զի այսպիսիքս, զի՞նչ և տացեն Տ.Յ, եմ՝ անընդունելի լինի, եթէ աղօթք, եթէ պահք, և եթէ ողորմութի, և զոր ինչ և իցէ․ ո՛վ յառաջնումն աստացաւ, ո՛վ և աստ դարձեալ մարգարէն, զարմացմամբ, զի՞ տացի քեզ, և կամ՝ զի յաւելցի լեզու նենգաւոր, իբրև թէ զի՞նչ ինչ տայէ քեզ լեզու նենգաւորին, որ հաճոյասցի քեզ, և ոչ խոցեսցէ․ քանզի այնպիսին, յորժամ՝ յաղօթս կայցէ լեզուաւ առ Տր, լեզու օձից, վաղվաղակի խոցէ, և վիրաւորէ, ո՛վ աստղն, այս վէրքն զորս վիրաւորեցայ 'ի տան սիրելւոյ իմոյ, և եթէ ողորմութի առ կարօտեալն մատուցէ, ձեռն լի է արեամբ, զի արդ՝ շաղախեալ արեամբ, առ ընկալցի, և կցորդ լինի արեան ստարոյ, զի փոխատու Տ.Յ, որ եղբարց նր մատակարարէ․ ըստ այնմ՝ զոր ինչ 'ի փոքրկանց արարիք, ինձ արարիք, և զպղ բարութիւն սեսանել․ ո՛վ և աստ աղօթք նր 'ի մեղս դարձցի․ քանզի արդարև այնքան դառնէ, թոյնս այս, մինչ զի եմ՝ ինչ քաղցրագոյն, 'ի դառնութի փոխարկէ․ ո՛վ աղօթք որ քաղցրագոյնէ, քան զեմ՝ առաքինութիւն, զի խօսքէ ընդ Տ.Յ, այնքան դառնացուցանէ, մինչ զի 'ի մեղս դառնայ։

Ո՜վ այնքան զայրացուցանէ զՏ.Ծ, որ սաստկապէս ապաշաւէկէ արարիչն թէ բերան մեղաւորի բերան նենգաւորի բացաւ 'ի վր իմ։ Նու խօսեցան առ ինձ, լեզուաւ նենգաւորաւ․ և այսպէս որ ինչ պարտի, տալ Տ.Յ, այր նենգաւոր

որ

որ, եմ՛ բովանդակապէս ՚ի մեղս դառնայ, և խոցէ զան-
հուն քաղցրութիւն, և դառնացուցանէ. վ՟ զի բնութիւն,
որ կարաս մի լցեալ գինեաւ, դուզնաքեա դառնութի ինչ
օձին, արկեալ զամ դառնացուցանէ. նոյնպէս և մասն մի
դուզնաքեայ յանդամոցն հարեալ դառնացուցանէ և մա-
հացուցանէ զբոլորն: Վ՟ այնորիկ ասաց մարգարէն, զի՞նչ
ինչ տացէ քեզ նենգաւորն որ հանճարեսցի քեզ. և ոչ խօ-
ցեսցէ. Իբրու թէ զի՞նչ ինչ տացէ մարդոյ օձն, որ ոչ
մահացուցանէ յատամանցն, այլ ոչ՟ ասացեալքն ասեն, որ
ինչ տայցէ, է որպէս համբոյր, կամակոր օձին, զոր օրինակ
համբոյրն Յուդայի, և ողջոյն նորին, վ՟ այնորիկ պատաս-
խանեաց նմա Տ՟րն համբուրելով մատնես զորդին մարդոյ,
քանզի օձն յորժամ տեսանիցէ զմարդն, զաղերսն ցուցա-
նէ նմա, յորժամ հանէ զլեզուն և շարժէ, զի այսէ բնու-
թիւն նորին. այլ բարերարն Ա՟ծ խայթառակեաց զծած-
կեալ նենգութիւն նո՟, որ երկճիղի արար զլեզու նո՟, զի
յայտնեալ խայտառակիցի, զնենգաւոր բարս նո՟, որ եր-
կճղի արար զլեզու նո՟, որ այլ է սիրտ նո՟, ՚ի լեզուէ նո՟.
զի թէպէտ լեզուաւն աղաչէ, և աղերսէ, զի մի ըսպանցի,
այլ ՚ի սիրտն հաստատեալ ունի, զի գտցէ դիպող ժամ,
փաղփաղակի հարցէ և ըսպանցէ: Այսպիսի նենգաւորն,
ըստ նմանութե Յուդայի, զի թէպէտ նա համբուրեաց
զվարդապետն իւր, զգործս աշակերտութե ցուցանելով,
և զմիաբանութի, սակայն ըսպանութիւն ունէր ՚ի մտի և ՚ի
սրտի. որ կամէր հեղուլ զարիւն անբիծ. վ՟ այնորիկ ոչ
օձն խայտառակեաց Ա՟ծ, երկճղի առնելով զլեզուն, սոյն-
պէս և զսա խայտառակեաց ասելովն Յուդայ համբուրե-
լով մատնես զորդին մարդոյ: Նախկին օձին զբարս ՚ի քեզ
ցուցանելով, զի ոչ նա առ հինն Ադամ, մատեաւ ՚ի համ-
բոյր, որ յորժամ եղեն մահացաւ. նոյնպէս և դու առ
երկրորդս Ադամ, որ համբուրելովդ կամիս ըսպանանել զնա:
Օ՟ ոչ առաջինն օձ, նոյնպէս և դու երկրորդ օձ. զի
ոչ բնութիւն նորա, որ լեզուաւն զմիաբանութի ցուցանէ,
և

և զսպանութիւն, նոյնպէս և դու․ նա ՚ի սիրտն ունելով զսպանութիւն, և երևելի ցուցանելով զմտերմութիւն լեզուին շարժմամբ, նոյնպէս և դու երևելի զհամբոյրդ ցուցանես, և ՚ի ծածուկ զսպանութիւնս ունիս, ըստ այնմ ընդդէս զխաղաղութիւն խօսէին, և ինքեանք բարկութեան զնենգութիւն խորհէին լսպանութեան․ վասն այնորիկ ասաց, զինչ տացի քեզ, և կամ զինչ յաւելցի քեզ, լեզու նենգաւորաց։ Նմա ասէ արկցես ՚ի վերայ նոցա բարկութիւն սրտմտութեան քոյ, հասցէ ՚ի վերայ նոցա։ Եղիցին բնակութիւնք նոցա աւերակ, և ՚ի յարկս նոցա մի ոք իցէ որ բնակիցէ։

Եւ դարձեալ ասէ, արկցես ՚ի վերայ նոցա կայծակունս հրոյ, և ծործանեսցես զնոսա, ՚ի տառապանաց մի կարասցեն կեալ։ Որպէս արդարև կայծակունս հրոյ, կուտեցաւ ՚ի գլուխս առաջին նենգաւորին, և որոց և նմին, իսկ գործակիցք եղեն։ Ոչ զնա չարիս զոր արար բանսարկուն, նմին կուտեցաւ ՚ի գլուխ նորա, և ՚ի վերայ գագաթան նորա, անօրէնութիւնք իւր իջցին․ զի զորոգայթն զոր թագոյց, ըմբռնեաց զոտս նորա․ և վասն այնորիկ ասաց դարձեալ, յորոգայթ հասցէ ՚ի վերայ նոցա, յորոգայթ զոր ոչ գիտացին, և որսն զոր թագուցին առցէ զոտս նոցա։ Եւ Սողոմոն ասաց, որ փորէ խորխորատ, յաղագս այլոց, ինքն անկցի․ և դարձեալ ասաց, դարանակալ լիցուք արդարոյն, զի դժպհի եղև մեզ, և հակառակ կայ գործոց մերոց։ Ծանրէ մեզ և տեսանել զնա, և յետ յամի ասէ, զայս արարին, և փախեցան, զի կուրացոյց զնոսա չարութիւն իւրեանց․ քանզի այնքան ծանրագոյն, չարութիւն մեղս այս մինչ նմին առաջնոյ օձին առնէ, որ նախանձու բնութեամբ իւրով, եսպան առաջնմին այսու ըզ նախաստեղծն Ադամ․ նոյնպէս և զՔրիստոս էր, և զայլսն զորս ոչ երկարաբանեմ, և զկնոյին զորն ամենեցուն․ որք և հասանէաւ իսկ և իսկ ծանեաւ պիղատոս, զթոյնս առամենց այսորիկ․ որ իսկոյն ըսպանանէ, զոր օրինակ ասաց սրբազանն առաքեալն, զի գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա քահանայապետքն, որք և զամբոխն հաւանեցուցին,

զի

զի ըսպանիցէն զնա . քանզի այնքան սրեալ էին զատամունս իւրեանց , այսինքն , զնենգութիւս և զոխակալութիւս մինչ զի անողորմին ևս յայտնագոյն ցուցանէ զանագղդային նոցա գործ . ուր և ասացաւ 'ի դիմաց տ̃ն 'ի մարգարէէն , ար-համարհանօք կրճտեցին 'ի վ̃ր իմ զատամունս իւրեանց . և թէ ըմպասէ մեղաւոր արդարոյն և կրճտէ 'ի վ̃ր նորա զա-տամունս իւր , այլ տ̃ր ծիծաղեսցի զնովաւ : Ոչ ո՞ր բը-նութեան չարագոյն օձին , որ կամիցի փաղփաղուկի ըմպանա-նել զոփ , ջուր ոչ արբենայ ժամանակ ինչ , զի թիւնաւոր լիցի ատամունքն իւր , որ ընդ խայթելն փաղփաղուկի կո-րուսցէ , այսպէս և նախանձոտ նենգաւորն , ոչ կամի ըմ-պել ջուր 'ի հոգևոր վիմէն , զի մի թուլասցի թոյնն այլ պահէ զատամունս թունալիր , այսինքն , զնախանձն նեն-գալիր , և ոխալիր , զի փաղփաղուկի ըմպանիցէ զհարեալն , որպէս հրէայքն ոչ կամեցան ամենևին ըմպել 'ի ջրոյ հո-գևոր վիմէն , որպէս ասացն որ ըմպէ 'ի ջրոյն զոր ես տաց , մի ծարաւիցէ յաւիտեան , այլ եղիցի նմա աղբիւր ջրոյ , բղխեցելոյ 'ի կեանսն յաւիտենից : Ոչ ջուրք նո̃ր սէրն զոր աղբիւրաբար բղխէ 'ի կեանս , և ատամունք և թոյնք բան-սարկութիւն , զնենգութիւն , և զոխակալութիւն . զի որ ըմ-պէ 'ի ջրոյն յայնմանէ , խակապէս և տիրապէս լուանայ ըզ-թոյնս նորա , և յորժամ բարձեալ լինի խակապէս կեանքն յաւիտենական , որով զգօնանայ : Եւ որք ոչ արբենայ , 'ի ջրոյն յայնմանէ , և լուանի 'ի թունից նո̃ր , զի ուր տ̃րն հակառակէ ամբարտաւանից , նոյնպէս և սորա սատակիչ , որպէս ասաց մարգարէն , սատակէ տ̃ր զշրթունս նենգաւորս , և զլեզուս մեծաբանս . և դարձեալ թէ զատամունս մե-ղաւորաց փշրեսցես . վ̃ն զի թէպէտ ամբարտաւանին , հա-կառակի տ̃ր , առ 'ի խոնարհեցուցանել զնա ջանայ . այլ ընդ ատամունս այս , որք նախանձն և ոխակալութիւն , և նենգութիւն , այնքան պատերազմի , մինչև սատակէ , որպէս ասացն սատակէ տ̃ր զա̃մ շրթունս նենգաւորս , և թէ զա-տամունսն փշրեսցես : Քանզի այս ևս ըստ բնութեան , զի

ԶԼ

գլուխ օձին, թէպէտ կենդանի իցէ առանց ատամանց, ոչ ինչ փնասել կարասցէ, և կամ մնհացուցանել, նոյնպէս և հպարտութին և ամբարտաւանութին, թէպէտ գլուխէ կամակոր օձին այլ ոչ կարէ թարց ատամանն փնասել. ապա թէ ը գլխոյն շարայարեալ ունիցի զատամունս զմիւսսին, զամենեսեան զօրս և զանձնէ ըսպանանէ. ահա քահանայապետքն որք կատարելապէս, ունէին զգլուխս զայս կենդանի, և 'ի նմա շարայարեալ, զատամունս զայսոսիկ թունաւորս. վճ այսոցիկ որք համագուգեալ քեն, յաղագս համագուգելոյն առէ, սատանիէ ոդ զմամ՝ շըթունս նենգաւորս, և զլեզուս մեծաբանս: Նոյնպէս և այժմուս որ 'ի դասուց սրբազնագործողացնեն, եթէ ունիցին ողջ զգլուխս զայս՝ շարայարեալք ատամամբք, անկարելիէ ոչ համոցուցանելն. այլ յոր և յաւէժ, թունոք մնհացուցանեն, ատամամբք ըսպանանեն. սրախք անիծանեն, բերանոք հայհոյեն. լեզուօք խածանեն, ձեռօք հարկանեն, շրթամբք բամբասեն, մնոք չարիս խորհեն, լեզեաւ դատանման, լերդիւք դըղըալեն, թոքխ նեղաշնչին, աչօք նենգեն, ունկամբ լսասեն, մնօք փարշահօտին, հոգւով մոլին, մարմնով սիրին, ոսկերօք մաշին, ուղղիւք հալին, մորթովք սևանան, դունիւք դեղնին, երակօք անդամանան. աղիւք հալին, ծարպով մաշին, գծիւք կորանան, մակերևութիւն նեղին, բարուք վշտանան, բանականութը կորանան, իմաստութը խաւարին, գիտութը նսեմանան, ծանուցմամբ կուրանան, խիղճ մտացն լառնին, և անիրաւութը առատանան:

Այսօրիւք գլուխն ատամամբքս զարդարին. և պայծառանան 'ի գործս բանսարկուին. քաջանայ և արխանայ, մտանայ ուտել զհաց, ը նմանուն հրէից, որք եղին ուխտ, նզովեցին զանձինս, ոչ ուտել և ոչ ըմպել, մինչև հեղցեն զարիւնն Պօղոսի: Որդ որք զայսպիսիս գործեն, իսկապէս և նոցին աշակերտին, ապա զի որդ կարասցեն զամենայն ծառայել զմիածին, որ ատամունքն լիէ թունոք մնհարերաւ, և ըմպել զարիւն նը. և ոչ լսել զձայնն սոսկալի ահա ձեռն

մա

մատնչի ընդ իս 'ի սեղանս, այլ որդի մարդոյ երթայ յեր-կինս, և նստի ընդ աջմէ հօր, ուրէրն յառաջինն, ըստ իւ-րում բանի. բայց վայ մարդոյն այնմիկ յոյր ձեռս մատ-նիցի, ոչ տալով 'ի ձեռս քահանայապետացն հրէից, այլ այսականաց, և ոչ տայ տաճարին տն իշխանաց, այլ լե-գէոնին դիւաց. ոչ զօրացն պիղատոսի, հարիւրապետաց և հազարապետաց. այլ զօրացն խաւարասիրաց, քանզի իսկապէս որ ենգս անուանեալ իցէ, և առաջնորդ, հայրապետ և տե-սուչ, և այսու ախտիւք ըմբռնեալ, ոչ ապաքէն ձեռն մա-տնչի է նր, որ 'ի սկաւառակս, այսինքն՝ 'ի մաղզմայն հա-ղուցանէ, զերէ ձեռն տն, այսինքն, կատարեալ Քն, կատարեալ Ածութիւն, և կատարեալ մարդկութիւն:

Եւ յայնժամ մատնէ զնա 'ի ձեռս նախ ասացելոյն. բայց տրն թէպէտ զայսոսիկ զտմ՝ կրէ, ձեռամբ մատնչին իւրոյ, որ թշուառականագոյն երևի, քան զյուդայ, որ թէպէտ նա մատնիչ՝ այլ ոչ այսականացն գնդին. ուրում՝ թշուա-ռականագոյն քան զնա, պատժապարտի: այլ ոմ ասաց տրն, որդի մարդոյ երթայ ուրէրն առաջինն, այսինքն ընդ աջմէ ծնողին, բայց վայ մարդոյն այնմիկ ասէ յոյր ձեռս որդին մարդոյ մատնիցի: Զի թէպէտ մատնեցաւ, և զտմ զաման-ջանս կրեաց, այլ հարեաւ յաւուր երրորդի, և համբար-ձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ հօր. բայց վա՜յ այնմիկ, յոյր ձեռն մատնեցաւ: Նոյնպէս և այժմ, որք նոքին հոգ-ւով վարին, և նոքին շուրջք գնան, թէպէտ մատնեն զնա 'ի ձեռս իշխանին խաւարի, որ տանջի 'ի բանդին մեղաւոր հոգւոյն, հարկանի ապտակի, թքանի, ձաղի, և կատարի, 'ի մէջս և յանօրէնութիւն խոցի, և վիրաւորի, յաշխարհի, այսինքն, յանձին նենգաւորի, որ դառնագոյնէ սատրչին, քան զառաջինն, սակայն յետ երից աւուրց յառնի, այս-ինքն յետ երրակաց ամանակաց, և բարձրացեալ նստի ընդ աջմէ հօր. ուրէր յառաջինն այսինքն նախ քան զպատա-րագինն. բայց վա՜յ մարդոյն այնմիկ, յոյր ձեռն զայսոսիկ գործիցի, և կատարիցի: Վն այնորիկ, ըստ որում ասէր Ածայ-ինն

րինն Սողոմոնի, ոչ ծանեան զպատիւ անարատին. քանզի այսէ պատիւ սորա, որ կամի մերձել 'ի նոսա խորհեսցի նա 'ի տուէ և 'ի գիշերի զի մի գուցէ ունիցի ոք խեթ ինչ զնմանէ, և ինքն ոչ ունիցի ոխ ինչ զումեքէ, և կամ ըզ նենգութի, այլ 'ի յերկուց կողմանց, մաքուր լեալ բարձցէ զայն, և սրբեսցէ զանձն յախտէն յայնմանէ, և ապա պատիւ սորա, արձակեսցէ և ձեռնարկեսցէ յիրողութիս յայս, և յԱստուածագործութի, և յայսպիսեօք մերձեցելոցն, բարի առնէ տր, և բազմեսցի արդարութբ և սրբութբ փառաւորիցի, ընդ ըստեղծողին, և հաւասարիցի գնդին հրաշազանից, որք տարան յինքեան, զտրն ցանկալի, 'ի սենեակս իւրեանց անմեկնելի, և ինքեանք ևս 'ի նմանէ տարեալ եղեն ուրինքէ, ըստ այնմ ուր ես եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի: Զի ով նա որջնաբանի հրեղինացն գնդին, նոյնպէս և սա, քանզի ընդ նմայ դասեալ և հաղորդեալ, վն որոյ և ընդ նմա Թագաւորեալ, ըստ այնմ մեր հաղորդութին լիցէ ընդ հոր, և ընդ որդւոյ իւրում Յսի Քսի. քանզի այսէ տրի տուր փոխարինին, յորժամ զնա այսպիսեօք պատուեսցեն, յայնժամ և ինքեանք 'ի նմանէ պատուեսցին: Արդ՝ ահաւասիկ, երկեակս զայս ճանապարհ, առաջի դնեմ ձեզ ամենայ սրբազանիցդ, և զորս կամիք ընտրեսջիք, եթէ զնախանձս, զնենգութիս, և ոխակալութիս և ատելութիս կամիս, աղաչեմ մի հպիր 'ի խորհուրդս, սոսկալի, զաղէտն յուդայի կրեսցես. որոյ եղերումն և վաղձանախեղդն եղև, և հեղումն աղեանց, և զարշահոտութի վայթմանցն, և պաշարումն սատականացն, որ թէպէտ մեղայ ևս գոչեաց, զղջմամբ մեծաւ, սակայն ոչ ինչ օգտեցաւ, այլ մանաւանդ ծայրագոյն պատժապարտեցաւ: Ապա թէ միւսոյն զոր ասացն առաքեալ, նախանձեցարուք շնորհացն որ լաւնեն, մատիր, և հուպ լեր, ճաշակեա և վայելեա, զի ընդ սրբազանից դասուց պսակելոցես և զհոգին Ածյ ընդունելոյ. քանզի նախկինցն ով ասացն Սողոմոն, որք նոցա, 'ի չարիս ընթանան, և երագունքեն հեղուլ

ղուլ զարիւն: Սոյն նշանակէ զմիտսն, զի որ̃ բոլոր մարմինն, ուրուքն ընթանայ, սոյնպէս և բոլոր անձն մտօքն, և ասէ թէ ոտք այնպիսեացն, միշտ 'ի չարիս ընթանան, և երագանան հեղուլ զարիւն: Եւ ասէ դարձեալ որդեակ մի խաբեսցեն զքեզ այնպիսի ամբարիշտք, և մի ախորժեսցես եթէ կոչեսցեն զքեզ, և ասասցեն եկ ընդ մեզ, կըցցորդ լեր արեան, ծածկեսցուք յերկրի զայր արդար 'ի սարապարտուց, կլցուք զնա կենդանւոյն իբրև դժոխք, և բարձցուք զյիշատակս նո̃ յերկրէ, և զըստացուածս նորա պէսպէս ըմբռնեսցուք. որդեակ մի՛ երթար ճանապարհ ը̃ նո̃, խոտորեա զոտն քո 'ի շաւղաց նոցա: Ա̃ զի գանձեն անձանց իւրեանց չարիս. և յետ այնորիկ ասէ, ապա թէ ապախտ առնէք զբանս իմ, և յանդիմանութեանց իմոց ոչ անսայցէք, ես ծիծաղեցայց զկորըստեամբ ձերով, և յորժամ՝ գայցէ ձեզ նեղութի̃ և պաշարումն, զի կործանումն 'ի նմանութի̃ մրրկի գայցէ, այսուհետև կերիցեն զպտուղս ճանապարհաց իւրեանց, և իւրեանց ամբարշտութե̃ն յագեսցին. փոխանակ զի զրկէին, զտղայս կոտորեցին, և կընտամբութի̃ զամբարիշտս սատակեսցէ: Ոչ թիւրեն ճանապարհք իւրեանց, և կամակոր շաւիղք նոցա: Եւ սաղմոս ասէ, մի նախանձիր ընդ չարս, և մի ընդ այնոսիկ որք գործեն զանօրէնութի̃. զի որ̃ խոտ վաղվաղակի ցամաքեսցին, և որ̃ զդալարի խոտոյ վաղվաղակի անցցին. և հանգիր 'ի սրտմտութենէ, և մի նախանձիր ընդ չարս. զի չարք վաղվաղակի սատակեսցին. ընդէ՞ր, զի ասէ Եսայի, ձեռք նոցա լցեալ են արեամբ, և մատունք նոցա 'ի մեղս, շրթունք նոցա խօսին զանօրէնութի̃, և լեզուք նոցա խոկան զանօրէնութի̃. չիք ոք որ խօսի զարդարութի̃, և ոչ գոն իրաւունք ճշմարտութե̃ն. զի յղացան զցաւս, և ծնանին զանօրէնութի̃, զձուս քարբից ծակեցին, և զոստայն սարդից անկանին, և որ կամիցին ուտել 'ի նոցանէն, ծակեալ, երաց և եգիտ զջուր, և 'ի նմին քարբ: Բարք օձին այնորիկ ասի, որ հայելովն միայն ըսպանանէ, որ նշանակէ, զխա-

կալ

կալ ննջաւորն, որ հայելւոյն միայն ըսպանանէ, ձուք նո-
ցա, գործք նոցաեն, զի ոչ ձուք նոցա, բացցի, ոչ այլ
ինչ ելանէ, բայց միայն քարըռ, այսինքն, յորժամ գործք
ննջաւորաց յայանիցի, ոչ այլ ինչ ճանաչի, եթէ ոչ ըս-
պանութի՛ և մահ։ Եւ զի ասաց զոստայն սարդից անկա-
նին որ կամիցին ուտել 'ի նոցանէն, քանզի յորոգայթ ննջ-
աւորին, իբրև զոստայն սարդին, որ 'ի ցանցս իւր ըմբռ-
նէ զմիամիտսն. ոչ առաջին ննջաւորն, զառաջին մար-
դըն, և երկրորդ ննջաւորն, զերկրորդն մարդ։ Եւ որ
կամիցի ուտել 'ի ձուոց նո՛, ծակէ և բանայ, և գտանէ ջուր,
և քարը 'ի նմին, ջուրն նշանակէ զհեղել չարին, որ 'ի
գործոց նոցա, իբրև զքարը սատակէ զունօղսն և զլսօղսն։
Մ՟ այնորիկ հեստագայիւն ասէ, ոտք նոցա, այսինքն, միտք
նոցա 'ի չարիս ընթանան, փութանեն հեղուլ զարիւն ան-
պարտ. և խորհուրդք նոցա, խորհուրդ անզգամաց. բե-
կումն և թշուառութի՛ 'ի ճանապարհս նոցա, և զճանա-
պարհս խաղաղութե՛ ոչ ծանեան, որէ Քս՟, ոչ ասացն,
եսեմ՝ ճանապարհ և ճշմարտութի՛։ Եւ ոչ գոն իրաւունք
ասէ 'ի ճանապարհս նոցա, քանզի հակնէ որէ սատանայ. զի
ոչ ճանապարհ ճշմարտութե է Քս՟, նոյնպէս և անիրաւ-
ութե ճանապարհ հակառակէն։ Եւ մի հասցէ ասէ, առ նմ
արդարութի. մինչ դեռ ակն ունէին լուսոյ, եղև նոցա
խաւար. և մինչ դեռ ըսպասէին նմա, ընդ մութն շրջեցան.
խարշափեսցեն զորմս իբրև զկոյրս, և իբրև զաչացուս խար-
շափեսցեն, և գլորիցին 'ի մէջ օրէի. իբրև հասարակ գի-
շերի։ Օի ոչ արեգակն 'ի մէջ օրէն առաւել լուսաւորէ.
այլ թէ ոք 'ի ննջութիս և յոխակալութիս գնայ, այնպի-
սի խաւարի, ոչ 'ի մէջ գիշերի, և այնպիսին մինչ դեռ
ակն ունիցի լուսոյն որէ արեգակն, արդարութե, ոչ ինքն
ֆոլ ասայ, եսեմ լոյս աշխարհի, որ գայ առ իս 'ի խաւարի
մի մնասցէ, որք աշակերտեալքեն սմա, խոտեն, սիրով
կապակցեալք, և լուսաւորեալք։ Իսկ որք նախանձու, հե-
տևեալք, և լուսաւորեալք, այսպիսիք, և հաւ-
ատս և ննջութեն ակն ունին լուսոյս ...

տառեալ քեն, 'ի մտօ եթէ լուսաւորեալ քեն, և կամ ձա-
շարժմամբ կենդանարար խորհրդոյն լուսաւորին, այլ խնկա-
պէս խաւարեալք գտանին 'ի մէջ լուսոյն: Վ̃ զի նոքա
որք սիրեցին, և հաղորդին 'ի կենդանարար խորհրդոյն,
իբրև 'ի մէջ օրէն կան, և լուսաւորեալք պայծառանան:
Իսկ որք յայնպիսի ախտսեն, թէպէտ 'ի մէջ օրէայեն այս-
լինքն, 'ի քրիստոնէութիս, և կամ' յաստիճանս կարգաց,
սակայն 'ի մէջ նսեմութեան, և 'ի խաւարի, ո̃պ 'ի մէջ
գիշերի. վ̃ այնորիկ ասեն խաւարեալք, զի ասաց խաւար
նմա ոչ եղև հասու: Զի անկարելի է թէ խաւարս հասցէ
լուսոյն այնորիկ որ է խաղաղութիւն մեր, որ զմիջնորմն քա-
կեաց, այսինքն զթշնամութիւն: Վ̃ զի երկեակքս այսո-
րիկ, այնքան ներհակքեն միմեանց, մինչ զի տարաբաժանին
'ի միմեանց. զի նուաստ և ակարն, 'ի հզօրագունէն, ո̃պ
խաւարն 'ի լուսոյ: Որպէս և նենգաւորքն և ոխակալքն,
նմանին նսեմութեան և խաւարի. և յորժամ մերձենան, խո-
կոյն և խաւարուն, որէ ուսուցիչն սատանայ, տարաբաժա-
նի, և լուծանի: Վ̃ այսորիկ աշակերտեալք լուսոյս այսո-
րիկ, պարտին զխաւարն զայն, նհանջել յինքեանց. զի մի
արգելումն ինչ լինիցի, հասման լուսոյս այսորիկ:
Ապա թէ խաւարեալ և նսեմացեալ իցէ, հիմ' արդեօք կա-
րասցէ հասու լինել. զի անշուշտ ասաց բերան, խաւարն
նմա ոչ եղև հասու: Զի և ըստ բնականին, ևս անկարե-
լի է, թէ խաւարն լուսոյն հասցէ. և նենգաւորն, և ոխա-
կալն չարեօք, աննենգ և անոխակալ բնութեան. քանզի ո̃պ
նա, նոյնպէս և սա հակքեն, և հակառակք միմեանց. և
ապականիչք իրերաց: Նա այս ևս անկարելի է, թէ լոյսն
'ի խաւարէն յաղթահարեսցի, այլ միշտ խաւարն 'ի լուսոյն.
զի եթէ 'ի տան մեծագունի, որ բովանդակն խաւարաւ ըմ-
բռնեալ իցէ, յորժամ ճրագ մի ածցի անդ, ամէն հալածի,
որ դուցնաբէս ինչէ առ տունն, զամ' փայլն լուսաւորեալ
պայծառացուցանէ, և բովանդակ խաւարանայն, ոչ կարէ
կեալ ընդ դէմ: Որպէս թէպէտ բազմագունիւք, չար
նա

նախանձուն, բայց ոչ կարէ կեալ ընդ դէմ դուզնաքեայ լուսոյն Քի: Ած որոյ պարտ է լուսաւորեցելոյն, տեղի տալ յայսմ խաւարի, զի անըստուեր լոյսն Յի, լուսաւորեսցէ զճաշակողս մարմնոյ և արեան նր: Յաղագս այսորիկ յոտս սրբազանիցդ անկեալ աղաչեմ, զի յորժամ կամիցիք մերձենալ, 'ի սոսկալի խորհուրդս, մանաւանդ լինիցիք բազմաւ քննութեամբ, թէ ունիցի եղբայրն խէթ ինչ, և կամ դու ընդ նմա նենգութիւն, բառնալ զայսպիսի խաւար, և ապա մերձիլ, զի մի զանգս աղէտիցն յուդայի մտցէ 'ի յարկս ձեր, ըստ այնմ՝ չարք մի մերձեսցին 'ի յարկս քո. այլ ընդ սրբազանից ճաշակողացն, ոպ հոգին Ած մտցէ 'ի մեզ: Եւ զայս ես հայցեմ, մի ասիցէ մեծապոյնն, հիմ արդեօք ես խոնարհեցոյց նմա, այլ յորժամ պիտոյ այս, բանսարկուլին նեղեսցէ զքեզ, աղաչեմ հայեաց 'ի ըստեղծօղն քո Յի Քի, որ յանճառ յԱծութենէն խոնարհեցաւ, 'ի ծունկս աշակերտացն, և յոտս հողեղինացն, և լուաց զոտս նոցա, և մատնչին: Արդ դու ես սրբազանդ, յորժամ զայս յիշեսցես, և խոնարհիցես փոքրագունին քո, յայնժամ տն քո նմանիցես. որ անճառելի խոնարհութեամբն լուաց, բարձրացոյց զապականեալ բնութիւն ազգի մարդկան, 'ի մոլորութեան ճանապարհէն խորթէ. և լինիցիս այնու հետև, բերան ամենակալին Յի, յորժամ դարձուցես և դու զմոլորեալն, 'ի գիւտս չարին, 'ի փարախն Ածային. եթէ այս այսպէս եղիցի, շահեցար զեղբայրն քո ըստ ասացելումն. ապա թէ ոչ դու զպարտս քո լցուցեր. առ նենգաւորն, ոպ տրն առ Յուդայ: Եւ ես դու 'ի կողմանէ քումմէ, ջանայիր, զի մի ոխս 'ի քեզ հաստատեալ ունիցիս, ոպ զոլաք վիրի, այլ զայն բարձ 'ի քէն, և ապա զխէթն յեղբօրէդ, յայնժամ լուսատու լիցի քեզ Քս, ըստ առաքելումն, ճաշակմամբդ մարմնոյ և արեան փրկչին. քանզի ոպ դուք սրբազանքդ, հայրապետք, և քահանայք, և այլ յաստիճանաւորք, գլուխք գոլով հասարակաց ժողովրդոց, յաղագս այնորիկ աչք ամենեցուն 'ի ձեզ հային, զի 'ի ձէնջ ուս-

ցին

ցին. և յորժամ դուք միմեանց, զայսպիսի զանուշահոտութեն բուրումն, բուրեսջիք միմեանց, որով դուք և արարիչն, հոտոտեսցի ՚ի հոտ անուշից յանարատ վարուց ձերոց, յայնժամ՝ և ներքնագոյնքն, այսինքն խառնի ձայնանձ՛ն ժողովուրդք, և զնոյնս գործեսցեն և ուսուսցեն, զոր ինչ դուքդ առնէք, և գործէք: Ս՟Ձ այսորիկ ասաց առաքեալ, հոտ անոյշեմք Ք՟սի առ Ա՟Ծ. ումանց հոտ ՚ի մահուանէ ՚ի մահ, և ումանց հոտ ՚ի կենաց ՚ի կեանս: Ս՟Ձ զի յորժամ բուրումն սիրոյ, և խաղաղութեն ցնծեսցի ՚ի ձէնջ, և սրբաբազան հոգւոյդ բուրեսցի, ումանց լիցի առ ինն կենաց, այսինքն Ա՟Ծասէր ժողովրդոց, և խոնարհագունիցն դասուց, և ումանց հոտ մահու, այսինքն. բանսարկուին, և աշակերտելոցն նորին, որք կործանին վաղվաղակի ՚ի հոտոյս բուրմանէ անուշահոտութե. քանզի ոչ ինչ այնպէս փշրէ զատամունս չարագոյն օձին, որպ սէր և խաղաղութի, վ՟ն զի սէրն է զէն Ք՟սի, որով վիրաւորի սատանայ. և փշրի նովաւ զատամունս նր, ըստ այնմ, որպէս զէն շուրջ եղիցի զքև ճշմարտութի նր. և յորժամ զէնս այս շուրջէ զորբազանովքդ անձամբ. ոչ ատամունք նր ՚ի ձեզ հասանին, և ոչ վիրաւորեն, և կամ մահացուցանեն. այլ մանաւանդ նա զէնու այսու, սատակի գլխոյն ջախջախմամբ. ըստ նմանութե Թէոդորոսի, երանելւոյ վկայաւորի, որ երևելեօք զաներևութին խորտակեաց զզօրութի, և ջախջախեաց ըզ գլուխ. և ինքն իբրև զնդունելի պատարագ բոցակիզեալ մատուցաւ, ՚ի հոտ անուշից Ա՟Յ: Յաղագս այսորիկ աղաչեմ զնազելիսդ, զի հայեցեալ նկատեսջիք, զառաջինսն, թէ որպ այսու հոգւով հաճոյացան Ա՟Յ, և ՚ի ներկայս ձեր յօրինեսջիք զքաղցրագոյն կեանս ձեր յանկալի. և զհետ երթիջիք սիրոյն Ա՟Յ. և եղբօրն, և խաղաղութե նորին, զապագայիցն լինիջիք նշաւակք, և առիթ փրկութեան, և այսու լինիջիք օրինակ վարուց նոցա, որք ՚ի ձեզ հային, և ՚ի ձէնջ ուսանին. քանզի առաւելագոյն պարտաւանէք այնոցիկ, որք ՚ի ձեզն հային, քանզի նոքա իբրև կոյրքեն,

և

և դուք կալջիք ձեռաց նոցա և առաջնորդք: Արդ յորժամ դու սրբազնագոյն առաջնորդդ սխալեսցիս, ոչ ապաքէն և առաջնորդեալքդ: Արդ զի՞նչ, վ͞ս նոցա ասէ տ͞րն, վա՜յ ձեզ առաջնորդք կոյրք, որք նախ զձեզ, և ապա առաջնորդեալքըն 'ի ձենջ, կորուսանէք: Եւ Եսայի ասէ վա՜յ որ դնէ յորոգայթ կուրին. քանզի զերագոյն յորոգայթէ, որ դնէ առաջնորդն առաջնորդելոյն, զորոգայթս անհլութեան, նենգութեան, և սխալութեան, և զնա ուսուցանէ առաջնորդելոյն. քանզի այսու ևս նմանի այնպիսին Յուդայի, որ եղև առաջնորդ ունելեացն Յ͞սի: Զի ոչ զինուորեալքն պիղատոսի, նորա առաջնորդեցան, և կալան զՅ͞ս և ըմբռնեցին. այսպէս և զինուորեալքն եկեղեցւոյ այսինքն ժողովուրդն՝ նենգաւոր սխալիւ և արհամարհել, առաջնորդաւն առաջնորդեալ լինին, 'ի նենգութիւս, և յախակալութիւն, և 'ի ըմբռնումն յանդգնման Յ͞սի: Եւ թուի թէ այսպիսիքն ևս չարագոյն լինին քան զՅուդա, զի նա ըզնա մատնեաց 'ի սպանումն որ յետ երից աւուրց յառնելոց էր: Իսկ սոքա զայնպիսիս ըմբռնեն, որք ոչ են յառնելոց, ոչ ասեմն Ածարանք, աւելի վնասեն նենգաւորքն, անդամոցն Ք͞սի, որք ըմբռնեն զայնպիսիս, որք նենգութիւք հարկանեն և խածանեն քան զՀրէայսն, որք ըմբռնեին զմարմինն որ յառնելոց էր, քանզի նենգաւորն, երեք կերպիւ ըմբռնանէ զնա, յորժամ ունի զնախանձն չար, այսինքն, զյայտնի բարին նուաստեցուցանելով, և զգաղտնիսն ուրանալով, և սուտ մեղս 'ի վ͞ր դնելով, զոր օրինակ մարգարէն բազմաւ հառաչմամբ ասէ, փրկեա զիս 'ի զրպարտութենէ մարդկան. և դարձեալ թէ յաղթէ որ ոչէ Տ͞ր, 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս. քանզի նենգաւորն և նախանձոտն, այնչափ ապականեալ է, մինչ զի զըրին զբարի և տեսանէ յայլս, չար երևի: Զոր օրինակ ոք, կապուտակ ակնոցիւ եդեալ 'ի վ͞ր աչաց իւրոց, և զոր ինչ և տեսանի կապուտակ տեսանէ. յաղագս այնորիկ ասէ Ա͞ծ-այինն Սողոմոն, ումէ վայ, ումեն խռովութիւնք, ումեն գա-

տաս

տառատանք, ունին դժնդակութիւնք, և վարանք, ունին վէրք
տարապայրուց, որպէս կապուտակ ականողէկ: Ով քաղց-
րութիւն դառնութեան երևի, լոյս խաւար, ճշմարտութիւն
ստութիւն, իմաստութիւն տգիտութիւն. հանճարն, յիմա-
րութիւն. արդարութիւն, յանիրաւութիւն. խոհեմութիւն, ան-
զգամութիւն, արիութիւն և հեզութիւն, յանդգնութիւն, ըզ
մեծահոգութիւն, փոքրահոգութիւն, ազատականութիւն,
անազատականութիւն. առաքինութիւն չարութիւն. պահքն և
աղօթքն, այսահարութիւն, արտասուքն կեղծաւորութիւն, և
այլ համ բարիքն մոլութիւն չարութիւն, Որ օրինակ հրէայքն
զՏէր ասէին, դև գոյ ՚ի նմա, զի՞ լսէք նմա, և փա-
րիսեցիքն ասէին, բէեղզեբուղ գոյ ՚ի նմա, և իշխանաւն
դիւաց հանէ դա զդևս. և իւրքն ելին ունել զնա զի հա-
մարէին թէ մոլեգնեալ իցէ, այսպիսի նախանձն անի-
ծեալ. որ ոչ զիւրն խնայէ, և ոչ յայլոյն. ոչ ՚ի քահա-
նայս, և ոչ ՚ի քահանայապետսն. ոչ ՚ի պահապանող օրինա-
կանսն, և ոչ յաշնուագոյնս. ոչ յիշխանս, և ոչ յիշխե-
ցեալս. ոչ ՚ի ժողովուրդս, և յոչ ընտանիս, այլ զամենե-
սեան միապէս տեսանէ, որպէս ասացն Սողոմոն, վասն զի ունի
կապուտակ աչս ՚ի կողմն, ՚ի մէջ աչացն, և միապէս զամե-
նեսեան հարկանէ, և թունալից ընդդիմանայ: Սա այնորինակ
ասի յաղագս նոցա, ՚ի փաղձանի իբրև զօձահար լինիցի.
քանզի ոչ օձ այնքան չարագոյն կարէ ըմպանանել, որպէս նա-
խանձն զհոգին, որ է ասամ չար վիշապին. որպէս և դարձեալ
ասէ, իբրև իժի թոյնք սրխաեսցին, քանզի համ թոյնք ու-
նին երբեմն և ելումն. այլ իժին և ոչ երբէք. որպէս և
Մովսէս ասէ, անճարին առանց բժշկութեան. զի համ
մեղք, և անօրէնութիւնք բառնին յորժամ դարձցին.
որպէս ուրացութիւն Պետրոսի, և յանցումն Դաւթի,
և յափշտակութիւն Զաքէոսի, մարտուրութիւն Մա-
թէոսի. մեղքն Մագդաղենացւոյն, և ըսպանութիւն
Պօղոսի, բայց նենգութիւն մատնութեան Յուդայի, և ոչ
երբէք: Սոյնորինակ անճարին առանց բժշկութեան: Ով սխրա-
մէ

մըտաւն նորա, իբրև իմիք առանց բժշկաւն. յաղագս այնո-
րիկ ասէ դարձեալ, խրատելով իբրև հայր. գործակցութ,
որդեակ մի նախանձիր ը̄ չարս, և մի ցանկասցիս լինել ը̄ նմ
զի զստում խորհի սիրտ նոցա, և զցաւս խօսին շրթունք նոցա։
Եւ դարձեալ ասէ մի մատուցաներ զամբարիշտն յարօտ ար-
դարոց։ Տեսանես ով սրբազան, զի այնպիսին որ լի է նախ-
անձու սրտմտութ ասէ, ընդ նմա մի ցանկասցիս լինել, և մի
յարօտ արդարոյ մատուսցես, այսինքն ՚ի ճաշակումն մար-
մնոյ և արեան, ուր կերակուր մարդոց անարատից, քանզի ան-
արատէ իբրև զգառն. Ա̄ծային, որ զմարմին անարատ դատին
ճաշակին։ Իսկ ամբարիշտն է իբրև զգայլ արբանցի, որ յոր
և յաւէժ զխորհուրդ քրիստոնէութեանս սպառնալ խորամանկ
նենգութեամբ իւրով։ Այլ այսպիսի ախտաւորս պիղծ համա-
րեալ է, որք և մարգարէն վկայեաց, զայլ նենգաւոր պիղծ առ-
նես դու սոն, և պիղծն արգելեալ լինիւր յօրինացն, ՚ի սըր-
բութեցն։ Եւ Մովսէս ասէ, պղծութ զայլ ժանտագործ աղ-
տեղի առնէ։ Եւ արդ եթէ անարատ, չգուցէ լինել, այլ
պիղծ յաղագս նենգութե. ապա զի արդ կարասցէ մատնել յա-
րօտ անարատից. ՚ի ճաշակումն մարմնոյ և արեան կենարա-
րին. որք ասէ իմաստութն պեղատոն, ամենին ՚ի տես հայիլ և
մերձենալ, ոչէ իրաւ, և բարւոք։ Զի թէպէտ այլ մեղքն են
պիղծք և ժանտայուցիչ, այլ այսէ իբրև ատիչ և ըսպանիչ,
որ զամ զշնորհս ամ այինս և զմարդկայինս սպականացանէ,
և ըսպառէ. որպէս զ.քարցկեղ, զայր, և որք որդն զփայտ,
և որք հուր, զխոտիմ, և որք զժանգ, զերկաթ, և ոչ ջուր զհող,
և որպէս կայծակն, զկենդանիս, և որք լեղի զքաղցրութի դառ-
նացուցանէ. և որք ըստուր որ զմարմինս որոշէ, և սա զանձինս
աշակերտեալոցն ՚ի զկնոյն։ Եւ որք մահ ՚ի կենդանութենէ
տարորոշէ. և որք դարշահոտութն զանուշահոտութն տարամեր-
ժէ. և որք հիւանդութն զմարմինս տկարացուցանէ, և որք զլոր
որ ՚ի մարմնի բընաւորեալ զոսկերս բեկանէ, զդէմս թիւրէ,
զկերպարեալ զանդամսն, ՚ի միմեանց տարալուծանէ։ Եւ այ-
սոքիկ ամ յաշակերտեալսն, առաւել գտանի, քան յայլսն։

Միայնորիկ զորբաշանող, առաւել աղաչեմ, զի մի ինչ երեւիցի, 'ի ձեզ զայթակղութեան ինչ. զի մի խոնարհագոյնքն ուսեալ, կրկնակի միասիցեն։ Քանզի իբրեւ նշանակէք, բարձեալ 'ի ձողոյ, զի յամենեցունց տեսանիցի. խնամատարիցի, եւ ուսուցէ. Ընդ այնմ նշանակ եղէ ես բազմաց. եւ թէ եղին զիս նշանակ իւրեանց։ Արդ ով ինքն եւ 'ի բարձրաւանդակս զի յամենեցունց տեսանիցի, նոյնպէս եւ որբաշանող, եդ 'ի վերայ աշտանակի, եւ 'ի վերայ ձողոյ, զի յամենեցունց տեսանիցի։ Օր ով 'ի Քրիստոսէ նոյնպէս եւ 'ի ձենջ ամենեւին ուսանիցեն։ Միայնորիկ պարտէ առաւել զգուշանալ, զի մի չարիս այսորիկ այլ սիրոյն Քրիստոսի լինիցիք նշանակք, զի զնուարեալքն մի սխալիցեն, 'ի նպատակացդ։ Օր զձեզ 'ի սէրն Աստուծոյ տեսանելով, եւ 'ի սէր ընկերին, 'ի խաղաղութիւն Աստուծոյ այլին, տեսանելով, եւ միմեանց 'ի քաղցրալիս, եւ զչարիս խորհելն միմեանց, եւ զյառաջադիմութիս 'ի մեծութիս, զգերազանցութիս, զիմաստութիս, զգիտութիս, զշնորհս, զպատիւս, եւ զայլս սոյնպիսիս, ուրախացեալ, այլ ոչ նախանձեալ, ուրախանան եւ նոքա, եւ զնոյնս միմեանց կամեսցին, եւ արասցեն, յայնժամ առաւել բարձրագիք, եւ փառաւորեալք, ընդ այնմ որ արասցէ, եւ ուսուսցէ նա մեծ կոչեսցի. քանզի սատանայ թէպէտ ետ մեղացէ բարբառիչ, այլ առաւել սնա, զի յառաջ նա սովալ ծանուցեալ լինի. որ յառաջ Քրիստոսի սիրովն։ Արդ որոյ աշակերտեալքդ սորա, զնորայն ապաւել պարտին տարամերժիլ յինքեանց, զի Քրիստոսի միայն ներքեւ իցի, որով հաղորդիցուք նմա, եւ արժանապէս ճաշակեսցուք. եւ Աստուծոյ ամենասուրբ երրորդութեան հաղորդութիւն 'ի վեր ելցուք, շնորհօք ճաշակմանս այսորիկ եւ Տեառն որբաշանիցն ընդ իւ հանգուցինցուք, եւ լուսաւորեալք, 'ի լուսաւոր գալստեան Տեառն երեւիցուք,

փառաւորելով զՀայր եւ զՈրդի, այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

# ՎԵՐՋ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм.ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գլուխ Համար.

Յաղագս թէ պարտ է ճաշակողն 'ի սոսկալի խորհրդոյն մաքրել և սրբել զմիտս և զխորհուրդս . . . . . . . . . . . . ԼԲ . . . 349

Յաղագս եկեղեցականաց թէ ոչ է պարտ այսու ախտիւք վարելով հպել 'ի սոսկալի խորհուրդն . . . . . . . . . . . . . . ԼԳ . . . 359

Յաղագս թէ քահանայապետից, պարտ է առանց ընչից մատակարարել զոր ինչ տայ այլոց . . . . . . . . . . . . . . . . ԼԴ . . . 377

Յաղագս թէ ոչ է պարտ քահանայից և քահանայապետից զոք բանադրել . . . . . ԼԵ . . . 384

« Զատն մեռանի՝ դարձեալ նոր յառնէ.
« Ոմանց բաշխի կեանք՝ ոմանց մահ առնէ։

